Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ

ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ԱՄՊԱՍԱԿ

Վ. ԼԵՍԿՈՎ

ԳՄԴ 84Ռ7
Լ 412

Ռուսերենից թարգմանեց Վ. Կ. Խաչատրյանը

Լեսկով Վ. Ա.

Լ 412 *Սպարտակ (Ռուս. թարգմ.՝ Վ. Կ. Խաչատրյանը) — Եր.։ Հայաստան, 1987, 472 էջ, 16 թ. նկ.։*

Հին Հռոմի ստրուկների ամենախոշոր ապստամբության առաջնորդի կյանքի և պայքարի մասին է կենսագրական բնույթի այս պատումը, որի հիմքում ընկած են ընթերցող լայն շրջաններին քիչ հայտնի պատմական նյութեր և փաստաթղթեր։

Հասցեագրված է ընթերցող լայն հասարակայնությանը։

Լ $\frac{4702010200}{701\ (01)-87}$ 141—87 ԳՄԴ 84Ռ7

© Издательство «Молодая гвардия», 1983.
© *Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1987*

Գլուխ առաջին

ԹՐԱԿԻԱՆ՝ ՍՊԱՐՏԱԿԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Վաղուց ի վեր Իտալիայում հռչակված էր հարուստ ու արգավանդ Կամպանիա մարզը։ Իտալիայի բոլոր ցեղերը, այդ թվում և հռոմեացիները, սարսափելի նախանձով էին լցված կամպանացիների նկատմամբ, որոնք ապրում էին մեծագույն լիության, հարստության ու շքեղության մեջ։

Այդ մարզում 73 թվականի խոր աշնանը իր ճամբարն էր խփել գլադիատոր Սպարտակի հաղթական բանակը, որը տոնում էր պրետոր Պուբլիոս Վարինիոսի զորքի դեմ տարած լիակատար հաղթանակը...

Անդադրում երգում էին ծղրիդները։ Օրվա ընթացքում տաքացած օդում տարածվել էր հողի և կանաչի տոիպ բույրը։ Մոտակա ագարակների գյուղացիներն ու ստրուկները վերադառնում էին արտերից և խաղողի այգիներից՝ ծանրաբեռնված աշնան շռայլ բարիքներով։

Հարևան բլուրների վրայից ապստամբների ռազմական ճամբարի տարածքը՝ իր խրամատով և հզոր հողապատնեշով գոտևորված քառանկյունին, երևում էր ինչպես ափի մեջ։ Հողաթմբի երկայնքով և դարպասների մոտ.կանգնած էին թեթևազեն պահակները. նրանց պարտականությունն էր հսկել ճամբարը թշնամիների հանկարծակի հարձակումներից։

Ամբողջ բանակատեղով մեկ խարույկներ էին վառվում։ Ռազմիկներն ընկերներով նստոտել էին կրակի շուրջը։ Նրանց հետ կանայք կային՝ տեղացիներ և նախկին ստրկուհիներ։ Բոլորն ուտում-խմում էին՝ խաղաղության ու անդորրության բերկրանքով լեցուն։ Ռազմիկները հաճույքով տեղական գինի էին խմում, հիշում իրենց սխրանքները և սխրանքները մտերիմ ընկերների։ Ոմանք գլուխ գովելու առիթը բաց չէին թողնում։ Զհավատացողները բարեսրտորեն ծաղրում էին նրանց։

Ռազմական տրիբունների՝ երեսուն տարին դեռ չբոլորած ջահել զորականների, վրաններում առավել աշխուժություն էր տիրում։ Ջրույցների արանքում երգչուհիները երգում էին, մընջակատակները ծփծաղաշարժ տեսարաններ էին ներկայացնում, մարմնամարզիկներն ու աճպարարները իրենց շնորհքն էին ցուցադրում...

Բարձրագույն հրամանատարները, սովորականի պես, հավաքվել էին Սպարտակի վրանում։ Նրանք ջանում էին իրենց զուսպ պահել, այդ էր պահանջում առաջնորդի ներկայությունը և իրենց բարձր դիրքը։ Լեգեոնների պետերը, այրուձիու, հետախուզության, զորապետների պահակախմբերի հրամանատարները նույնպես վերհիշում էին անցած ճակատամարտերը, կատարված քաջագործությունները, արժանին մատուցում զոհված հերոսների հիշատակին, խոսում լանիստ Բատիատոսի գլադիատորական դպրոցի մասին, իրենց հույսերի մասին։ Ոմանք մտաբերում էին իրենց տունը, լքված ընտանիքը, իրենց դեգերումները օտար երկրներում։ Ռազմավանի ամենալավ աեղը երգում էր ամենահասարակ զինվորից մինչև ամենանշանավոր զորապետի հոչակոր մեծագույն դանձարանի՝ Հոմերոսի «Իլիականից», ընտրովի հատվածներ...

— Մեր Սպարտակը, անկասկած, հերո՞ս է,— բացականչեց Կրիքսոսը, երբ աեղը վերջացրեց երգելը։— Ե՛վ նա, և՛ Թրակացիների այրուձին արիության համար ամենաբարձր գովեստին են արժանի. այրուձին դաժան մարտում հաղթեց հռոմեական հեծելազորին, իսկ Սպարտակը մենամարտի բռնվեց հռոմեացի պրետորի հետ, բազում ռազմիկների աչքի առաջ գետնեց նրան, խլեց ձին և Վարինիոսը հազիվհազ փրկվեց գերությունից...

— Փա՜ռք Սպարտակին։ Փա՜ռք մեր քաջարի առաջնորդին,— գոչեցին շուրջբոլորը։

Կրիքսոսը ձեռքը բարձրացրեց, կոչ անելով բոլորին լռել։ Երբ ընկերները հանդարտվեցին, նա շարունակեց իր ճառը.

— Երջանիկ է այն հողը, որը նման հերոսներ է ծնում։ Սպարտա՜կ, պատմի՛ր քո հայրենիքի մասին, քո մասին։ Քեզ համար էլ հաճելի կլինի վերհիշել այն երկիրը, որտեղ ծնվել ես։

— Պատմի՛ր, Սպարտա՜կ, պատմի՛ր քո և Թրակիայի մասին,— իմբուվին խնդրեցին հավաքվածները։

Սպարտակը, որն ընդհանրապես թաքցնում էր զգացմունքները, իր խոսքն սկսեց այսպես.

— Իմ թանկագի՛ն գինակիցներ, հրաշալի՛ մարդիկ, քա՜ջ զորապետներ։ Իմ հայրենիքի մասին պատմելը դժվար է։ Թրակիան շատ մեծ է. հյուսիսից նա սահմանակից է Իստրոսին, արևելքում նրա ափերն են ողողում Եվքսինյան Պոնտոսն ու Եգեյան ծովը, արևմուտքում իլիրիացիներն են, հարավում՝ հույները։

Մեր Թրակիան թեժ արևի, քամիների ու խստաշունչ սառնամանիքների երկիր է, լեռների ու մթին անտառների, կիրճերի և արգավանդ հովիտների, բազում խենթ գետերի ու լճերի, բազմաթիվ գյուղերի ու ծաղկուն քաղաքների, քաջ ու ազնիվ մարդկանց երկիր է, մարդիկ, որոնք աստվածներ են սիրում, պատերազմներ, խրախճանքներ, գինի, կանայք, նվիրատվություններ, ձիեր ու ոչխարներ են սիրում, բայց ամենից շատ սիրում են ազատություն։

Թրակիայի լեռները բարձր են, կարող են համեմատվել միայն Ալպերի հետ։ Դրանց մեջ ամենաբարձրերն են՝ Ռոդոպները՝ Գեմը, Դունակը, Ռիպեյան ու Սկոլյան լեռները, Օրբելը, Պանգեյը։ Դրանք բոլորն էլ աչքի են ընկնում զանազան հարստություններով, գովերգված են ամենապոետիկ ասքերում։ Թրակիայի առասպելներից մեկը պատմում է, որ մի ժամանակ ապրել է գեղեցկուհի Ռոդոպան՝ Ստրիմոն գետի աստծո դուստրը։ Նա հավերժահարս էր և ուղեկցում էր Պերսեփոնե աստվածուհուն։ Եվ՝ գեղեցկուհին, և՝ նրա ամուսինը աստվածների հետ մշտական շփումից ժամանակի ընթացքում այնքան գոռոզամբտացան, որ իրենց աստվածային մեծարանքներ վերապահեցին։ Զայրացած երկնաբնակները դրա համար նրանց լեռներ դարձրին։

Իսկ որքա՜ն հետաքրքիր զրույցներ կան մեզ մոտ, որոնք պատմում են Արես սիրակալի՝ ռազմատենչ, ամրոցակործան աստծո մասին։ Արեսը Թրակիան իր հայրենիքն է համարում։ Իր որդի Սարսափի հետ Արեսը պատերազմի է գնում եթերների ու ֆլեգիացիների ցեղերի վրա, նրանց ստիպելով կռվի դուրս գալ միմյանց դեմ, փոխնիփոխ հաղթանակներ պարգևելով նրանց։

Թրակիայում ցեղեր շատ կան. ագրիաններ, աստեր, բեսեր, բիսալտներ, կիկլոպներ, կիկոններ, միտեր, օդրիսներ, պեոններ, սատրեր... բոլորին չես թվարկի։ Իստրոսից այն կողմ բնակվող ցեղերը նույնպես Թրակացիներ են։ Թրակացիներ են նաև Մա-

կեդոնիայում ապրող մակեդոնացիները։ Նույնիսկ հերոս սկյութներն էլ մեր ասքերում թրակացիներ են համարվում։

Հարթավայրային Թրակիան հարուստ գյուղատնտեսական և արհեստավորական երկիր է, հիանալի քաղաքների երկիր։ Դաշտերում առատ հացահատիկ է աճում՝ ցորեն, գարի, աշորա, կորեկ։ Ի՞նչ պտուղ ասես չի աճում մեր հողերում։ Սև թզից անուշաբույր հյութ է ծորում, խնձորի ու տանձի կարմրությունը աչք է շոյում։ Ծառերից քաղված մրգի կույտերն արևի տակ ոսկեզօծ փայլ և խենթացնող բուրմունք են արձակում։ Ծանոթ են մեզ և սալորը, բալը, ընկույզը, թութը, սերկևիլը։ Ջիթապտուղ էլ ունենք։ Իսկ սքանչելի խաղողը, մի՞թե կարելի է մոռանալ։ Հսկայական ողկույզը տեսնելիս, ուզում ես ամեն մի հատիկը համբուրել և երախտագիտությամբ փառք տալ Դիոնիսոս տիրակալին՝ խաղողի ու գինու հովանավորին։

— Օ՜, Դիոնիսո՜ս,— ջերմությամբ գոչեց Թրակացի Միլետոսը։— Ի՞նչ ասես, որ չեն պատմում նրա մասին։

— Այո՛,— համաձայնեց Սպարտակը,— Եվրոպայում և Ասիայում Դիոնիսոսը շատ հին աստված է։ Դեռ մինչև Տրոյական պատերազմը նրան ճանաչում էին տրոյացիները։ Հեփեստոսը, իբրև բարեկամ, կերտեց նոր աստծո հրաշալի պատկերը, դրեց իր ձեռքով պատրաստած սքանչելի զարդատուփի մեջ և հանձնեց Զևսին։ Ի նշան բարեհաճության՝ Շանթարձակը զարդատուփը նվիրեց իր որդուն՝ Դարդանոս արքային, (որ տրոյացիների նախահայրը դարձավ) և պատվիրեց ցույց չտալ օտարներին։ «Ով տեսնի Դիոնիսոսի պատկերը, կխելագարվի»,— նախազգուշացրեց նա։ Սերնդեսերունդ Հեփեստոս աստծո հրաշք զարդատուփը փոխանցվում էր տոհմի ավագին։ Վերջապես այն ընկավ Էնեասի ձեռքը։ Երբ Իլիոնն ընկավ Աղամեմնոնի աքայացիների պատերազմի ժամանակ, հույները զարդատուփը մնացած ավարի հետ վիճակ գցեցին։ Եվ այն բաժին ընկավ Թեսալիայի արքա հերոս Եվրիպիլոսին՝ Եվմոնեսի որդուն։ Տարաբախտ Եվրիպիլոսը, Զևսի նախազգուշացմանն անտեղյակ, բաց արեց զարդատուփը, տեսավ Դիոնիսոսի պատկերը և իսկույն խելքը գցեց։ Դելֆիքի պատգամախոսի աստվածային գուշակությանն անսալով՝ մեծ դժվարությամբ բուժվեց Եվրիպիլոս արքան։

— Սպարտա՛կ, իսկ ինչպիսի՞ եղանակ է լինում ձեզ մոտ՝ Թրակիայում,— զրույցի ընթացքը շեղեց գերման Նիտիմը։—

Մեզ՝ գերմաններիս, կլիմայի առումով հավանաբար, ամենավատ տարածքներն են բաժին ընկել։ Ահա թե ինչու են գերմանները հաճախակի տեղափոխվում...

— Մեզ մոտ՝ Թրակիայում, Նիտի՛մ, ամենախիստ եղանակը ձմռանն է,— պատասխանեց Սպարտակը։— Ամբողջ հողը թաքնվում է խոր ձյան տակ։ Ցրտից ապառաժները ճաքում են։ Միայն առվակների ու աղբյուրների ջուրն է դեռ երևում, նույնիսկ դաժան սառնամանիքը չի կարողանում նրան սանձել։ Տներում ամենուրեք թեժ օջախներ են վառում։ Բոլորը ոչխարենիներ են հագնում, երկարաճիտ տաք կոշիկներ և աղվեսի մորթուց գլխարկներ դնում։ Կանայք մանում են վուշ, ոչխարի բուրդ կամ էլ կարճ ժամանակով դուրս են գալիս ընտանի կենդանիներին կերակրելու։ Ամառային ու աշնանային աշխատանքից ազատ հողագործներն ու հովիվները ուրախությամբ նստում են տանը։ Ձմեռը թռչունների ու գազանների համար է ծանր։ Կերը քիչ է, և նրանք համարձակ մոտենում են մարդու կացարանին։ Հաճախ կտեսնես, թե աղավնիները, սև կեռնեխները և մնացած թռչունները ինչպես են հաճույքով կոցահարում պատատուկի խոշոր պտուղները...

— Փոխարենը, Թրակիայում գարունը հրա՜շք է,— բացականչեց Թրակացի Սիտալկոսը։

— Այո՛,— կրկին համաձայնեց Սպարտակը,— նույնիսկ չգիտեմ ինչպիսի՜ բառերով նկարագրեմ գարնան սկիզբը, երբ արևն իր կենարար ջերմությամբ ոչնչացնում է սոսկալի ցուրտը։ Ծառերի ու թփերի վրա կանաչ է հայտնվում, գետնին՝ թարմ խոտ։ Խիտ թավուտներում զրնգուն երգում են թռչունները։ Ամենուրեք թռչում են մեղուները՝ օդը լցնելով միալար բզզոցով։ Բլուրների վրա գարնան արբունքից խենթացած առույգ տրտինդ են տալիս ոչխարներն ու խոյերը։ Հովիվները հոտերը ջշում են արոտավայրերը։ Նրբաժպիտ և գեղեցկուհի աղջիկները ծաղկեպսակներ են հյուսում իրենց սիրեցյալների համար և պսակում նրանց գլուխները։ Խաշնարածները մաքրած եղեգները մոմապատելով՝ փչում ու փչում են նոր շվիների վրա։ Հովիվները խմբված, կաթ ու դինի են խմում, անվերջ ասում-խոսում են իրենց հոգսերի և հույսերի մասին։ Հետո նորից ճանապարհ են ընկնում, և նրանց առջևից թռչկոտում են անտառային ոգիները՝ գվարթ սատիրները, և կարելի է տեսնել հովիվների, ձրկնորսների, որսորդների հովանավոր Պան աստծուն իր հավեր-

ժահարսերի և բաքոսուհիներին՝ մեծն Դիոնիսոսի շքախմբին, իսկ անտառներում դրնգաձայն անտառահարսերին՝ ծառերի տիրուհիներին, որոնք ապրում ու մեռնում են սրանց հետ միասին։

Օ՜, Դիոնիսո՜ս, քո անունը մեծարվում է ամենուր. մեր Թրակիայում, Հելլադայում, Փոքր Ասիայում, Լիդիայում, Եթովպիայում, հեռավոր Հնդկաստանում։ Դո՜ւ, որ անձամբ իջել ես մռայլ ու սարսափազդու Հադես, որպեսզի այնտեղից փրկեիր մորդ՝ Սեմելեին։ Օ՜, սարսափելի խանդոտ Հերայի խարդավանքներ։ Դո՜ւ, Դիոնիսո՜ս, Թեբեացո՜ց աստված, մեզ բոլորիս գարուն ես բերում։ Թողնելով հեռավոր Նիսան ու Եթովպիայի հողերը՝ բաքոսուհիների ու սատիրների խելահեղ շքախմբով հայտնվում ես Տմոլի ափերին, լիդիացիների ոսկյա Պակտոլի մոտ, մեր Ստրիմոնի մոտ։ Այդժամ ամենուր դիոնիսոսյան խրախճանքներ են անում։ Դու մարդկանց ստիպում ես պարել մոլուցքի աստիճանի։ Քեզ համար են երգում զվարթ թռչունները, քեզ համար են կանաչում և քաղցր բուրում մարգագետինները, իսկ հողը՝ զարդարվում ծաղիկներով, լեռներում տղամարդիկ տարբեր կենդանիների ձայներ նմանակելով՝ քո գալուստն են ավետում։ Մի ժամանակ ճիշտ է ասել քո մասին Եվրիպիդեսը.

Երջանիկ ես դու, երբ մասնակից ես
Մայր Կիբելի խրախճանքներին։
Երբ որ ցնցելով թիրսդ սրբազան —
Ցուպդ՝ պսակված բազեղով կանաչ,
Ծառայում ես դու Դիոնիսոսին։
Դուք աստծուն մեր մեծ և աստծո որդուն
Դիոնիսոսի տո՜ւնն առաջնորդեք...
Առա՜ջ, օ՜ն, առա՜ջ բաքոսուհինե՜ր...[1]

Մեր հարևան Եգեյան ծովն էլ գարնան օրերին հավաքում է սառցե իր ծածկոցը։ Այն ժամանակ կրկին կարելի է տեսնել ծովահարսերի, խումբ-խումբ հավերժահարսերի և մեծն Պոսեյդոնին՝ ծովերի տիրակալին, Զևս-շանթարձակի եղբորը, նրան, ով որ Պելոպս պատանյակին սովորեցնում էր մարտակառքով սլանալ ծովի ալիքների վրայով, ով որ նրա համար հարսանյաց երգեր էր երգում և հավերժահարսերի շուրջպարով հարսանեկան մահիճ պատրաստում, որտեղ ընկողմանեց նա՝ Պելոպսը գեղեց-

[1] Այս և մնացած բանաստեղծությունները թարգմանել է Հ. Հարությունյանը։

կուհի Հիպոդամիայի՝ ձիարշավում զոհված Էնոմայոս արքայի դստեր հետ։

— Սպարտա՛կ,— թրակացի Աստերոպեոսը դիպավ առաջնորդի ուսին։— Մանրամասն պատմիր մեր աստվածների մասին։ Հարևանները մեր մասին ասում են. «Թրակացիները աստվածավախ ժողովուրդ են, նրանք նախանձախնդրությամբ են վերաբերվում իրենց հավատին»։

— Անտարակույս, այդպես է, Աստերոպեոս,— համաձայնեց Սպարտակը։— Մեզ մոտ աստվածներին, ինչպես և մեծագործ քաջությամբ հռչակված հերոսներին, պաշտում են։

Հերոսներին մեծարանքներ են մատուցում, արձաններ կանգնեցնում հասարակական վայրերում, խրախճանքի ժամանակ պատվավոր տեղ նստեցնում, պատվավոր ուտելիքներ մատուցում, մահանալիս նրանց համար պատվավոր թաղումներ են կազմակերպում հասարակության հաշվին։ Աստվածներին զոհեր են մատուցում, հեղումներ կատարում, նրանց համար զոհասեղաններ և տաճարներ են կառուցում, խունկ ծխում, սրբազան հողեր հատկացնում, հիմներ ստեղծում, խոնարհումներով, շուրջպարերով ու երգերով հարգանք մատուցում։ Աստվածներին հավատալը բոլոր ժողովուրդների մոտ բարեպաշտության նշան է։ Ի՞նչ է աստված։ Աստված մի կատարյալ ու վեհ էություն է, մատերիայի սահմաններից դուրս, անշոշափելի։ Ժամանակից ու հավերժությունից հզոր է նա, ավելի հին է, քան երկիրը, երկինքը և արևը։ Մարդն ի վիճակի չէ ըմբռնելու նրա էությունը։ Բայց մարդը երկրպագում է նրան իր տարբեր դրսևորումներով. ոսկու և արծաթի, փղոսկրի տեսքով, գետերի, լեռնադագաթների, աղբյուրների, բույսերի, կենդանիների, թռչունների, նույնիսկ միջատների տեսքով։ Եկեք չվիճենք աստվածների մասին։ Թող յուրաքանչյուրը մնա իր համոզմունքին։ Անհրաժեշտ է հարգել մյուսների կարծիքը, միևնույն աստծու տարբեր անունները։

— Ինչպես լսել եմ, նախկինում դուք ուրիշ աստվածներ եք պաշտել,— զրույցին խառնվեց Կրիքսոսը։

— Այո՛,— պատասխանեց Սպարտակը,— մեր ամենահին պաշտամունքները, ինչպես ասում են ծերունիները, կապված են աստված-տիտանների՝ Երկինք-Ուրանոսի, և Երկիր-Գեայի զավակների հետ՝ Օվկիանոսի, Կեանոսի, Կրիեմոսի, Քրոնոսի, Հիպերիոնի, Հապետոսի և սրանց եղբայրների՝ կիկլոպների ու հարյուրձեռքանի հսկաների՝ հեկատոնքեյրների հետ, որոնք

ապրում են Թեսալիայի Տիտանոս լեռան վրա։ Տիտան-աստվածների պաշտամունքը թրակացիների մեջ տարածում էին հզոր ու հարուստ պեռնները՝ Մակեդոնիայից և Թեսալիայից եկածները։ Դարերի ընթացքում մենք հաճույքով ընդունում էինք տարբեր աստվածներ շատ ժողովուրդներից, այդ թվում և հելլեններից, շատերին էլ մեր աստվածներն էինք տալիս։

Մենք՝ թրակացիներս, սիրում և պաշտում ենք աստվածներին, հաճույքով հաղորդակից ենք լինում պաշտամունքի բոլոր գաղտնիքներին։ Մեր ամենահարգի աստվածներն են Դիոնիսոսը, Պանը, Արեսը, Հելիոսը, Դեմետրեն, Ասկլեպիսը, Սալմոկսիսը, Բենդիսը, Հեծյալ-Պոսեյդոնը (հելլենները նրան հաճախ «Թրակացի հեծյալ» են կոչում, նույնիսկ արձաններում պատկերում են մարտակառքով և Իստմոսում նրան զոհեր են մատուցում)։ Ինչո՞ւ չհավատանք աստվածների գոյությանը, եթե նրանց միշտ հավատում էին ամենամեծ այրերը՝ մեզ մոտ Օրփեոսը, Թամիրասը, Մուսեոսը, հելլենների մոտ՝ Հոմերոսը, Հեսիոդոսը, Հերոդոտոսը, Դեմոսթենեսը, Թուկիդիդեսը և էլի շատ ու շատ ոչ պակաս փառավոր այրեր։

— Արդար է ասված, Սպարտա՛կ, թե «աստվածների պարգևները սքանչելի են և գերազանցում են մեր բոլոր հույսերը»,— կրկին խոսակցության մեջ մտավ Կրիքսոսը։

Վիտուլոսը և Դեկորատոսը՝ երկու գալլեր, հետաքրքրասիրությամբ հարցրին.

— Սպարտա՛կ, իսկ որո՞նք են ձեր գլխավոր աստվածները։

Սպարտակը պատասխանեց.

— Յուրաքանչյուր ցեղ իր աստվածությունն ունի։ Մեզ՝ մեդերիս, ինչպես և բոլոր պեռնների համար ամենագլխավորը Հելիոսն է։ Նրա կուռքը՝ ձողի վրա ամրացված ոչ մեծ սկավառակն է, Արևի այդ պաշտամունքը մենք փոխառել ենք եգիպտացիներից։ Մեդերի մյուս գլխավոր աստվածներն են՝ Ստրիմոն գետը և Արես-մարդաջարդը։ Պաշտում ենք նաև Հերմեսին՝ առևտրի աստծուն, չէ՞ որ մենք՝ մեդերս, առևտուր ենք անում տարբեր երկրներում։ Մեզ մոտ բարձր համարում ունի Դիոնիսոս-Զագրեսը՝ գինեգործության աստվածը։ Նրա պատվին մենք կազմակերպում ենք տոնախմբություններ՝ Մեծ և Փոքր դիոնիսիաները։ Այս դեպքում մենք ոչնչով չենք տարբերվում աթենացիներից՝ մեր արյունակից եղբայրներից։ Իսկ գետեսները մեծագույն աստվածներն են համարում իրենց Իստրոս գետը,

Արեսին և մեկ էլ Սալմոկսիսին։ Ասում են, որ մի ժամանակ Սալմոկսիսը եղել է մեծ փիլիսոփա Պյութագորասի սաբուկը, ազատություն է ստացել և գալով գետեսների մոտ, նրանց օգտակար օրենքներ է սովորեցրել։ Դրա համար սովորական ձևոք բարձրացնելով, ինչպես մեզ մոտ ընդունված է քվեարկելիս, դասվել է տեղական աստվածների շարքը։

Հելլեններն ասում են, թե Ելևսիս քաղաքում էր, որ Դեմետրեն կրկին գտավ իր կորած դստերը՝ Պերսեփոնեին, այդտեղ էր, որ նա սահմանեց խորհուրդները և աթենացիներին հաց պարգևեց, իսկ աթենացիները այլ հելլեններին ու բարբարոսներին պարգևեցին «համայն աշխարհի սրբավայրը»։ Մենք՝ թրակացիներս, համոզված ենք այլ բանում. ամենափայլուն սրբավայրը, որ բոլորին ակնածալի դող է ներշնչում, կաբիրների աստվածների հնագույն տաճարն է Սամոթրակե կղզում։ Ահա թե որտեղ են իսկապես զարմանալի իրադարձություններ կատարվում։ Այնտեղ աչք ու ականջ շոյող հրաշալիքները մրցում են միմյանց հետ։ Այդ կղզին սրբավայր է, որտեղ աստվածների քանդակները, նկարները, փողոցներում և տաճարներում ցուցադրվող զարդերը ոգու անդորր են բերում, իսկ խորհուրդներին հաղորդակից լինելը քաղցր հույս է պարգևում մահվանից հետո վերածնվելու և սքանչելի կյանքով ապրելու վերաբերյալ, ինչը չունեն անհաղորդները։

Սամոթրակեի չորս հնագույն աստվածները կոչվում են նաև «Արևելյան մեծ աստվածներ»։ Առօրյայում նրանք հայտնի են նաև Ադոնիս, Բահալ, Ապիս, Օսիրիս անուններով։ Նրանք նաև կանացի երկրորդություններ ունեն։ Նրանք համարվում են երկնքի ու ծովի, պտղաբերության և ընդերկրյա կրակի տիրակալներ։ Աստվածների իսկական կերպարանքները և անունները գաղտնի են պահվում։ Միայն քուրմն իրավունք ունի տաճար մտնելու։ Սակայն ասում են, թե առաջին երկու կաբիրները ձեռքները երկինք պարզած երկու մերկ տղամարդ են։ Կաբիրների պաշտամունքը ներմուծել են պելասգները՝ «ծովի ժողովուրդը»։ Նրանք այն տարածել են աշխարհի ամենահեռավոր անկյունները։ Կաբիրների մասին գիտեն, նրանց երկրպագում են նույնիսկ հեռավոր Բրիտանիայում։ Կաբիրներին, իրավամբ, մեծ հզորություն են վերագրում։ Նրանք հովանավորում են թագավորներին, ավազակներին, ծովագնացներին, փառք ու ավար

որոնողներին։ Փիլիպոս Մակեդոնացին և նրա կինը՝ Օլիմպիադան, դեռ երեխա ժամանակից հաղորդակից են եղել սամոթրակական գաղտնածիսություններին։ Հիմա կաբիրներին ամենից հաճախ նույնացնում են Դիոսկուրոս եղբայրների հետ։ Բայց պատահում է նաև՝ կուրետների, կորիբանտների, իդեյցանդակտիլների և տելխինների հետ։ Դիոսկուրոսները, եթե չգիտեք, ռազմիկների և ծովագնացների հունական հովանավորողներն են, նրանք Տինդարեոս արքայի և գեղեցկուհի Լեդայի որդիներն են։ Կուրետները՝ Ռեա աստվածուհու քրմերն են, կորիբանտները՝ Կիբելե աստվածուհու քրմերն են, դակտիլները՝ Թրակիայի Իդա լեռան դևերն են, Ռեա-Կիբելեի ուղեկիցները, տելխինները՝ ծովային դևեր են, Պոնտոսի և Գեայի որդիները, Պոսեյդոնի ուղեկիցները, նրանք հռչակված են իրենց հսկայական հզորությամբ։

Սամոթրակական գաղտնածեսերը սովորեցնում են առաքինի ապրել։ Բայց դրանք սովորեցնում են նաև մեռնել անվերապահորեն վերածնվելու հույսով։ Բոլորը խոստովանում են, որ գաղտնածեսերը հսկայական ներգործություն են ունենում դրանց հաղորդակից մարդկանց բարոյական մակարդակի բարձրացման վրա։

Սամոթրակական աստվածների պատվին տոնակատարությունների ժամանակ՝ մայիսին, օգոստոսին, սեպտեմբերին, շատ ու շատ մարդիկ են հավաքվում։ Նրանք միշտ իրենց անունները թողնում են սրբավայրերի մոտ դրված հատուկ քարերի վրա։ Կրոնական ծեսերի ժամանակ, ինչպես մեզ, այնպես էլ գերմանների մոտ, գլխավոր դերը կատարում են կին քրմերը։ Բայց աղամարդ քրմեր էլ են լինում։ Որպես մարգարե հանդես են գալիս նաև թագավորները։ Մեր քրմերը զբաղվում են նաև գիտություններով։ Նրանք պահպանում են ծածուկ գիտելիքները. զանազան մետաղների, ապակու ստացման, հին ձեռագրերի, օրենսդրության, Արևին ու Լուսնին հետևելու եղանակների, երկրաշարժերի կանխագուշակման և էլի շատ ու շատ գաղտնիքներ։

Մեր տաճարներն աչքի են ընկնում իրենց մեծ հարստություններով։ Հավատացյալները դրանք կախում են աստվածների պատկերներ կրող ընծայական սալիկների հետ միասին։ Դիոնիսոսի, Բենդիսի և մյուս աստվածների պատվին տոնակատարությունների ժամանակ միշտ հավաքվում են նրանց բազմաթիվ երկրպագուները։

Մենք՝ մեղերս, հաճախակի ենք լինում Աթենքում՝ մեծ քաղաքում, մեր փառապանծ նախնու՝ Մեղի հայրենիքում։ Առանձնապես սիրում ենք այնտեղ լինել Մեծ Պանաթենքյան տոնի օրերին։ Սքանչելի է այդ օրը։ Սրբազան եռաշարք թիանավը, որ աթենացիներն ուղարկում են Աթենաս աստվածուհու հետևից, դուրս է գալիս քաղաքային դարպասից և ցամաքով շարժվում է անիվների վրա։ Թիանավը դանդաղ ու վեհապանծ ընթանում է Կերամիկ թաղամասի Դրոմ փողոցով, սյունասրահների միջով, որտեղ աշխույժ առևտուր են անում աթենացիները և օտարերկրացիները, ուղղվում է դեպի Պալլասի տաճարը։ Նավ են լցվում քրմեր ու քրմուհիներ։ Տեղական երևելիները՝ ոսկեպսակներով, մնացած բոլորը՝ ծաղկեպսակներ դրած հետևում են թիանավին, որն Աթենքի ամենագեղեցիկ աղջիկների հյուսած նոր քողն է տանում աստվածուհուն։ Աթենքի քաղաքացիների սրբազան երգչախումբը երգում է Սիմոնիդեսի քեոսյան երգը։ Երգի հնչյունների տակ արձակում են կառանման ճոպանը, բոլորը համընթաց քամի են մաղթում սրբազան նավին։ Իսկ քամին անսալով ընդհանուր աղոթքներին, սկսում է ուժգին փչել և նավը մղում է առաջ։ Ատտիկյան սրինգները հնչում են սրբազան թիանավի հետևից, և հնչյունները, ինչպես քամին, ուղեկցում են նավի արագ վազքին։ Այն ժամանակ Հեսպերոսը՝ աստղերից միակը, օրը ցերեկով հայտնվում է Արևի կողքին և իր դյութիչ բոցն է վառում նավի գլխավերևում։ «Օ՜,— այդժամ բացականչում են հավաքվածները,— սքանչելի՜ լուսատու։ Դու մեզ ավետում ես ապագայի երջանիկ օրեր»։

Ահա՛ ամենակարևորը, ինչ վերաբերում է մեր կրոնին։

Ամեն տեղ մենք նշանակալից ձեռքբերումներ ունենք։ Մենք առանձնապես հպարտանում ենք անասնապահության մեջ ունեցած հաջողություններով։ Իզուր չէր դեռևս մեծն Հոմերոսը Թրակիան անվանում «ոչխարների երկիր», «ձի սանձողների երկիր»։ Այո՛, թրակացիները սիրում են ոչխարի հոտեր, կովերի նախիրներ, այծեր ու խոզեր, ձիերի երամակներ, ալեհեր լեռներ, հյութալի խոտով ու վառ ծաղիկներով կանաչ մարգագետիններ, քնքուշ ղեփյուռներ, որ բերում են հողի, ծաղիկների ու սաղարթի անկրկնելի բույրեր, թեժ արև, իրենց երգերն ու մեր աշխարհի մեծագույն երգիչների՝ արքաների ու քրմերի՝ Թամիրասի, Օրփեոսի և Մուսեոսի հիմները։ Ակնածալի լռությամբ են ականջ

դնում նրանց թրակացիները։ Անպատմելի է, թե ինչպես են հուզում, մարդու հոգու խորքը ցնցում այդ հիմները։

Մեր արհեստավորները շատ հմուտ են։ Նրանք կարողանում են անել ամեն ինչ, ես չեմ չափազանցնում. զանազան մետաղներ հալել, երկաթ, անագ, բրոնզ մշակել, ընտիր զենք կոփել (ձեզնից յուրաքանչյուրը համոզված է դրանում. չէ՞ որ հռոմեացիների դեմ մենք կռվում ենք մեր թրակացիների և գալլերի պատրաստած զենքով), զմայլելի զարդեր պատրաստել, փայտ և ոսկոր մշակել, հմտորեն շինություններ կառուցել, պատեր և սափորներ նկարազարդել, արձաններ քանդակել, հունական և սկյութական ամենաբծախնդիր պատվերները կատարել։ Բնակչությունը ապրում է և՛ գյուղերում և՛ քաղաքներում, գյուղերում՝ ավելի շատ։ Հելլադայի հետ առևտրով և մշակույթով սերտորեն կապված ցեղերի հարուստ մարդիկ ապրում են հույներին շատ նման։

— Դրանք հարթավայրերի՞ թրակացիներն են,— միջամտեց Կրիքսոսը,— իսկ լեռնցի՞ թրակացիները։ Նրանք այնպես չեն ապրում, ինչպես հարթավայրերում։

— Համաձայն եմ,— պատասխանեց Սպարտակը,— նրանց կենցաղը իսկապես ավելի պարզ է, իսկ սովորույթները՝ կոպիտ։ Նրանց տները բոլորաձև գերանակապ խրճիթներ են։ Կողքին անասունների համար գոմերն են և բանջարանոցները։ Նրանք ենթարկվում են իրենց տոհմական ավագանուն։ Ընդհանուր ժողովներ չեն անում, արքայական իշխանությանը ծանոթ չեն։ Հողը դրեթե չեն մշակում, ինչ որ ստանում են սերմը պարզապես շաղ տալուց, դրանով էլ բավարարվում են։ Անասուններ են արածեցնում, ապրում են ռազմական ասպատակությամբ։ Բայց նրանց արհեստներն էլ բարձրակարգ են։

Թրակիայի քաղաքները առևտրական և մշակութային կապեր ունեն Հելլադայի քաղաքների հետ։ Այդտեղից մեզ մոտ դաղութաբնակներ են գալիս։ Թրակիայի մերձծովյան քաղաքները շատ հարուստ են, հզոր ժողովրդական ժողով և ավագների խորհուրդ ունեն, իրենց նավատորմիղն ունեն, որը հեռավոր նավարկություններ է կատարում։ Թրակիայի առավել խոշոր քաղաքները դրամ են հատում և միմյանց հետ դաշինք կնքում։ Նրանց հետ հաշվի են նստում և օդրիսյան՝ Թրակիայի ամենաուժեղ արքաները։ Հունական Աբդեր, Իստրիա, Տոմա և մյուս

քաղաքները Թրակիայում տարածում են հունական լեզուն ու մշակույթը, ծանոթացնում են հելլենական աստվածների հետ։

Մեր տեղական երևելիներին Թրակիայում կոչում են «ձիբեռիդներ», այսինքն՝ «ամենապայծառափայլներ»։ Համայնական գյուղացիները անձնապես ազատ են, նրանք կարող են հեռանալ համայնքից, Աթենքի, Բութանիայի, Բոսպորոսի, Պոնտոսի կամ էլ Հռոմի զորքում վարձվել որպես ռազմիկ կամ հրամանատար։ Թագավորներին և ազնվականությանը գյուղացիներն ամենուրեք հարկեր են վճարում։ Անհավասարությունը խիստ զգացվում է շատ ցեղերի մեջ, և դա ընդհանուր դժգոհություն է առաջացնում։ Թագավորներն իրենց աստվածն ունեն՝ Հերմես-Սալմոկսիսը։ Նրանք մեծ շքեղության մեջ են ապրում, բազմաթիվ կանայք ունեն, ունեն հույն խորհրդականներ և թարգմաններ։ Երբ նրանք մահանում են, նրանց պատվին կազմակերպում են եռօրյա խրախճանքներ և մրցություններ։ Հաղթողներին շռայլ պարգևներ են հանձնում։ Մեր արքաները համարյա միշտ խիստ ռազմատենչ են լինում։ Նրանց ճնշող մեծամասնությունը նման է Թերես արքային։ Այդ երևելի քաղաքագետին և զորապետին են պատկանում հետևյալ խոսքերը. «Երբ ես չեմ պատերազմում, այլ ապրում եմ պարապ-սարապ, ապա հասարակ ձիապանից էլ վատն եմ թվում ինքս ինձ»։

Ժողովրդին ճնշող վատ թագավորներին մեզ մոտ բոլորն ատում են։ Ամեն կերպ ձգտում են ազատվել նրանցից։ Եվ նա, ով աջակցում է այդ բանին, մեծագույն հարգանքի է արժանանում։ Այդպիսին է առաջին հերթին Հերակլեսը՝ հունական հերոսներից մեծագույնը։ Նա մեր հերոսն էլ է։ Բոլորին հայտնի է, թե ինչպես նա պատժեց բիստոնների արքա, Արեսի և Ցիրենա դիցուհու որդի Դիոմեդեսին, որ օտարականներին նետել էր իր զամբիկների առաջ ի կեր։ Հերակլեսն այնպես հասցրեց կոպալով, որ նա մեկեն հոգին փչեց։ Զարագործը մեռավ, ինչպես իր զոհերը, կատաղած զամբիկները պատառ-պատառ արեցին նրան, իսկ Հերակլեսը ձիերին քշեց Եվրիսթեես արքայի ախոռները, որի մոտ ծառայում էր։ Ահա թե ինչու ամբողջ Թրակիայում պաշտում են Հերակլեսին, իսկ դրամների վրա դաջված է. «Հերակլեսը՝ թրակացիների փրկիչը»։

Տեղական արքաները խոշոր առևտուր են վարում, բոլոր կողմերից շատ նվերներ են ստանում։ Առևտրում, անշուշտ, առաջնությունը պատկանում է մեզերին և օդրիսներին։ Օդրիս-

ները նույնպես խոշոր նավատորմ ունեն, որը ցորենով և մեր արհեստավորների սքանչելի ապրանքներով բեռնված հեռավոր նավարկությունների է գնում։ Այդ նավերը պարբերաբար հեռանում են Թրակիայի ափերից, որտեղ ժայռաբեկորների շուրջը ջուրը սպիտակ փրփուր է տալիս, կատաղի ալիքները բարձրանում և հաղարակտոր փշրվում են ափին, որտեղ թեժ արև է լինում և միաժամանակ կատաղի քամիներ են փչում. չէ՞ որ հռչակավոր Բորեասը թրակական աստված է և միևնույն ժամանակ աթենացիների փեսան է համարվում, քանզի ամուսինն է հերոս Երեքթեոսի դստեր։

Թագավորական իշխանությունը Թրակիայի շատ շրջաններում, չեմ թաքցնի, գնալով ծանր է դառնում։ Արքաները բռնակալ են և ագահ, նրանք բոլորն էլ շատ են սիրում «նվերներ», որ կորզում են ամենանողկալի բռնությամբ։ Բոլոր արքաներն էլ ապրում են միանման. ամենօրյա անարդարության, մեծագույն երեսպաշտության, անհավատալի ցոփության մեջ, դժգոհների, արյունակիցների, եղբայրների և զավակների սպանությունների, հարևանների և հպատակների բացահայտ կողոպուտների, սարսափելի երդմնազանցության, ընտանիքի անդամների դավաճանության հետ կապված մշտական վախի ու վտանգի մեջ։ Ամեն օր հաշի ժամանակ թագավորները հակաթույն են կուլ տալիս, որովհետև վախենում են թունավորումից, և ամեն օր նրանք իրենց ասում են. «Ես հարուստ եմ, բայց ավելի հարուստ եմ ուզում լինել։ Ես փառահեղ եմ, բայց ուզում եմ խավարեցնել Ալեքսանդր Մակեդոնացու փառքը»։ Եվ նրանք փոքր դաղարնելով մշտապես պատերազմում են։ Նվաճված հողերում թագավորները ընակվում են ամրոցանման կալվածքներում։ Ապստամբության ահից նրանց ախոռներում ձիերը օր ու գիշեր սանձված են։ Անբարենպաստ պարագայում նրանք պատրաստ են քամուց էլ արագ փախչել զավթած երկրից։

Թրակացիները իրենց լավ ու վատ թագավորներին ենթարկվում են տարբեր կերպ. լավերին՝ հարգանքով, վատերին՝ միայն ուժի ճնշման ներքո։

Մեր ստրուկների մասին կարճ կխոսեմ. ստրուկներին մենք արագորեն արձակում ենք փրկագնով կամ ընդունում ենք համայնք հավասար իրավունքներով։ Մեր ստրուկները մեծ մասամբ կանայք են։ Նրանք արածեցնում են անասուններին, զբաղվում են տնային տնտեսությամբ։ Ամենադժվար ստրկու-

թյունը, անկասկած, օդրիսների մոտ է։ Գնալով նրանք ավելի են հրաժարվում իրենց նախնիների պատգամներից, ավելի շատ նմանվում հռոմեացիներին։

Մենք՝ թրակացիներս, շատ ենք պատերազմել և՛ միմյանց դեմ, և՛ արտաքին թշնամիների։ Պատերազմել ենք ինչպես բոլորը՝ թալանի, արոտավայրերի, փառքի համար։ Մեր թագավորները հիմա պատերազմում են հարկերի համար։ Պարտվածները պարտավոր են ճշտապահորեն վճարել դրանք։ Երկու անգամ թրակացիները ստիպված են եղել հետ մղել ուժեղ թշնամիների հարձակումները՝ պարսիկների և սկորդիսկ-կելտերի։ Դժվարությամբ, ծանր կորուստների գնով (նրանք երկար ժամանակ գրավել էին մեր շատ հողերը) հաջողվեց հետ մղել նրանց։ Հիմա թրակացիների դիմաց կանգնած է երրորդ, ամենաուժեղ թշնամին՝ հռոմեացիները։ Թրակիայում նրանց նկատմամբ միատեսակ վերաբերմունք չկա։ Մի մասը հռոմեացիների հետ դաշինք կնքելու կողմնակից է, մյուսները՝ անհաշտ պայքարի։ Քվիրիտների ժողովուրդը հերթով ջախջախելով իր թշնամիներին՝ հաջողությամբ առաջ է շարժվում և՛ դեպի արևելք, և՛ դեպի արևմուտք։ Եվ ամենուրեք հռոմեացիները հարազատ են մնում իրենց քաղաքականությանը. ամենուրեք ընտրյալ և ուժեղ մարդկանց պահանջում են համալրելու համար իրենց զորքը, երևելիների զավակներին պատանդ են վերցնում, բայց երեսպաշտորեն ասում են. «Մտադիր ենք նրանց լատիներեն սովորեցնել»։ Իրականում նրանցից պատրաստում են Հռոմին նվիրված կամակատարներ ու ծառաներ, իսկ հայրենիքի համար՝ երդվյալ թշնամիներ։ Հռոմեացիների մյուս «քաջագործությունների» մասին արդյոք արժե՞ խոսել։ Դրանք բոլորին քաջ հայտնի են. հռոմեացիները անհնազանդներին թալանում և սնանկացնում են, ավագանուն արտաքսում են տոհմական կալվածքներից, հասարակ մարդկանցից խլում են տները ու արտերը, բոլորին, նույնիսկ թագավորի ազգականներին, դարձնում են ստրուկ։ Կարելի՞ է նման բան հանդուրժել։

Ընդհանուր ձայներ լսվեցին.

— Երբե՞ք չենք հանդուրժի։

— Մե՞նք էլ հանդուրժելու միտք չունենք։ Մենք մեր դաշնակիցների հետ գրեթե ամեն տարի Մակեդոնիայում և Դալմատիայում գրոհում ենք նրանց զորքերի վրա։ Հարկավոր է

ամենուրեք հարձակվել նրանց վրա, որտեղ որ հնարավոր է, և այն ժամանակ մենք կհաղթենք։

Տեղական երևելիները բոլորն էլ զորական են։ Թրակացիների հասկացությամբ, ազնվածինը համարվում է նա, ով միայն զինվորական գործը գիտի և որին խորթ է ֆիզիկական աշխատանքը։ Ի դեպ, նման մտածողությունը, ինչպես գիտեք, հատուկ է շատ ժողովուրդների։ Գերմանների մոտ էլ փոքրոգություն ու ծուլություն է համարվում քրտինքով վաստակել այն, ինչը կարելի է ձեռք բերել արյունով։

Թրակացիները դարեր ի վեր ծառայում են որպես վարձկան զինվորներ ու զորապետներ ամբողջ Միջերկրականում՝ Բութանիայում, Լիդիայում, Պոնտոսում, Մակեդոնիայում, Կրետեում, Բոսպորոսում, Հրեաստանում, Եգիպտոսում, Հռոմեացիների մոտ։ Ամենանշանավոր տիրակալները՝ Փիլիպոս և Ալեքսանդր Մակեդոնացիները, Անտիոքոս III Մեծը, Պտղոմեոս Փիլոպատորը, Փիլիպոս V, Պրուսիոս IV, պարսից արքայազն Կյուրոսը, բոլորն էլ շատ էին գնահատում մեր ռազմիկներին և զորապետներին։ Պարսից արքա Դարեհ Կոդոմանոսի բանակի հրամանատարն իսկ, որ Գրանիկոն գետի ափին ճակատամարտ տվեց Ալեքսանդր Մեծի զորքերի դեմ, Թրակացի էր՝ Ռեսակոս անունով։

Թրակացիներն օտար երկրներում շատ հաճախ ամենաբարձր դիրքի են հասնում, դառնում են խոշոր զորահրամանատարներ, թագավորների մերձավորներ, որոնք ռազմական քաղաքականության, դինաստիայի հարցեր են վճռում։ Դա բնական է. չէ՞ որ նրանք շատ հաճախ արքայական պահակախմբի մեջ կարևոր դեր են խաղում։

Մեր ձիբեռիդներին միշտ շրջապատում են ընտիր, ռազմատենչ պատանիներ։ Խաղաղ օրերին նրանք սրանց հպարտությունն են, պատերազմի ժամանակ՝ հավատարիմ հենարանը։ Նման դրուժինաները ձիբեռիդներին մեծ հռչակ են բերում։ Ում դրուժինան ավելի հռչակված և ուժեղ է, նրա մոտ հաճախ են նվերներով պատվիրակություններ գալիս խնդրելու պաշտպանել այս կամ այն թշնամուց։

— Իսկ ինչպիսի՞ն են ձեր ամուսնական ծեսերը,— հարցրեց գերման Ցերուլեոսը,— հակասական բաներ շատ եմ լսել։

— Ամուսնական հարաբերություններում մեզ մոտ հետևյալ կարգն է գերիշխում,— պատասխանեց Սոլարտակը։— Կանանց

գնում են խոշոր գումարով կամ էլ առևանգում են արշավանքների ժամանակ և խստորեն պահպանում օտար ոտնձգություններից։ Աղջիկներին ազատ են պահում և չեն արգելում տղամարդկանց հետ մերձենալ։ Հարուստ մարդիկ մինչև երեսուն կին են ունենում։ Աթենացի բանաստեղծ Մենանդրոսը թրակացիների մասին միանգամայն իրավացիորեն ասել է (նա ինքն էլ կիսով չափ թրակացի էր).

Մեզ մոտ ամեն մեկը տասը կին է առնում
Եվ կամ տասնմեկը, ոմանք՝ դյուժինից շատ։
Իսկ ով չորս կին ունի, կամ հինգն ունի նույնիսկ,
Վերջ կտա իր կյանքին. մեզ մոտ կասեն, թե նա
Ո՛չ վայելքներ գիտի, ո՛չ երգ հարսանեկան։

Երբ ամուսինը մահանում է, նրա սիրելի կնոջն սպանում և թաղում են ամուսնու հետ միասին։ Մեծ պատիվ է մեռնել ամուսնու հետ, և դեպք չի եղել, որ մեկը ցանկանա խուսափել դրանից։ Իսկ ընդհանրապես, կանայք մեզ մոտ ապրում են հարյուր և ավելի տարի։

Թրակացիների ապրելակերպը, առանձնապես լեռներում, խիստ է։ Բայց թրակացիների մեծ մասը իրեն երջանիկ է համարում։ Մեր ռազմիկները, իսկ ռազմիկ և թրակացի՝ նույն բանն են, երջանկությունը պատկերացնում են այսպես. ամբողջ ժամանակն անցկացնել տոնախմբությունների և ավար ու փառք բերող ռազմական ասպատակությունների մեջ։ Լավ է շունչը փչել մարտի ժամանակ, մեծագույն փառք վաստակելով։ Պատահական հիվանդություններից մահացածները և ծերերը միայն ծաղրանքի են արժանանում որպես վախկոտներ։

— Իսկ ձեր մշակույթի նվաճումներն ինչպիսի՞ն են,— կրկին հարցրեց Կրիքսոսը։— Ձարակամներն ասում են. «Թրակացիներն անտաշներ են, կիսաբարբարոսներ»։

— Համաձայն չե՛մ,— դայրացած պատասխանեց Սպարտակը։— Մեր մշակույթը շատ բարձր է, և մենք ամաչելու բան չունենք, ում հետ էլ որ համեմատենք։ Մինչև վերջին ժամանակներս թրակացիները միանգամից օգտվում էին օտարերկրյա մի քանի այբուբեններից, հիմա ամենուրեք անցել են հունարենի։ Հունարեն այբուբենը հարմարեցրել են նաև մեր լեզվին։ Ընդհանրապես, Աթենքի հետ մեր կապերը շատ սերտ են. առևտրական, քաղաքական և ազգակցական։ Շատերը խոսում

են ատտիկյան բարբառով։ Աթենացիների հետ մենք մերթ պատերազմում ենք, մերթ հաշտվում։ Աթենքում լինում են կամ թրակացի շատ ստրուկ-ստրկուհիներ կամ վարձկան ռազմիկներ։ Աթենացիների նավատորմը համալրված է թրակացի նավագներով ու թիավարներով, նույնիսկ ներքին կարգ ու կանոնի և պահակազորի ռազմիկները թրակացիներ են։ Հույները մեզ մոտ գաղութներ են հիմնում։ Թրակական սյուժեներով թատերգություններ հաճախակի են բեմադրվում աթենական թատրոններում։ Փիլիպոս արքայի ժամանակներից սկսած՝ Մակեդոնիայի հետ էլ սերտ կապեր ունենք։ Նրա որդու՝ Ալեքսանդրի օրոք, պարսիկների և հնդիկների դեմ պատերազմի ժամանակ նրա մոտ էր, որ ծառայում էր մեր հռչակավոր Սիտալկոս արքան։ Ամբողջ Հունաստանից մեզ մոտ են ապաստանել հույն վտարանդի փախստականներ։ Մենք նրանց բոլորին ընդունում ենք և ոչ մեկին հետ չենք հանձնում։

— Սպարտա՛կ, պատմիր մեր գրականությա՛ն, առանձնապես Օրփեոսի՛ մասին,— խորհուրդ տվեց թրակացի Միլետոսը։

— Կպատմեմ և այդ մասին,— համաձայնեց Սպարտակը։— Թրակական գրականությունը Օրփեոս արքայի թագավորության օրից սկսած՝ հարուստ է, առանձնապես բանաստեղծության, փիլիսոփայության, կրոնական նկրտումների մարդում։ Ինքը՝ Օրփեոսը, ոչ միայն պոետ էր, ուղղաչափական արվեստի գյուտարար, այլև կրոնական բարեկարգիչ։ Աստվածների մասին նա, կամ գուցե նրա գաղանի հետևորդները, ոչ ոք չգիտի, գրում էր առանց որևէ մեծ ակնածանքի։ Աստվածապաշտ թրակացիներից շատերը նրա մասին վրդովմունքով են խոսում. «Նա աստվածներին վերագրում է մարդկային ամենաստոր կրքերը։ Մի՞թե փիլիսոփա կարելի է համարել մեկին, ով աստվածների մասին խոսում է ինչպես իր մասին»։

Բայց չկամների այդ կարծիքը գերիշխող չէ։ Ե՛վ Մակեդոնիայում, և՛ Թրակիայում Օրփեոսը մեծագույն հեղինակություն է։ Մակեդոնիայում՝ Օլիմպոսի ստորոտում, Լիբեթրա փոքրիկ քաղաքի մոտ կանգնած է նրա կիպարիսե արձանը։ Աստվածության անունից հավատացյալներին նա կարևոր նախանշաններ է հաղորդում։

Օրփեոսին մեծարում են նաև Հունաստանում։ Եթե մեզ մոտ ասում են, թե նա մեր գինեգործության աստված Զագրևս-Դիո-

նիսոսի և հռչակավոր երգիչ Թամիրասի (նրա, որն առաջինը պոեմ հյուսեց օլիմպիացի աստվածների և տիտանների ճակատամարտի մասին) դստեր որդին է, ապա հույները հավատացնում են, թե նա որդին է Ապոլլոնի և հիմների մուսա Պոլիհիմնիայի։ Ահա որքան բարձր են գնահատում հեղինակները Օրփեոսին։

— Իսկ օրփեոսականնե՞րը, Սպարտա՛կ,— ջերմորեն բացականչեց Աստերոպեոսը— Չմոռանաս հիշատակել օրփեոսականներին։ Թրակիայում նրանք շատ կարևոր մարդիկ են։

— Նրանց մասին էլ չեմ մոռանա խոսել,— պատասխանեց Սպարտակը— Օրփեոսականները, կարող է չիմանաք, Օրփեոսի գաղտնի ուսմունքի հետևորդներն են։ Ըստ նրանց հայացքների, բոլոր աստվածները երկսեռ են և պաղանակերպ։ Մեծ Դիոնիսոսին սպանում են տիտանները, և նա կրկին լույս աշխարհ է գալիս Թեբեի փյունիկյան ծագում ունեցող Կադմոս արքայի դստեր՝ Սեմելեի կերպարանքով։ Օրփեոսականները սովորեցնում են. մահ չկա, գոյություն ունի հավերժական վերածնություն, մարմինը՝ «հոգու զնդանն է» իսկ հոգին՝ «աստվածության մասնիկը»։ Արդարակեցության հասածների հոգիները հանգիստ են առնում աստղերի վրա, իսկ Դիոնիսոս աստծուց երես թեքած մեղսագործների հոգիներին պատիժ է սպասվում Հադեսում։ Ասենք,— ընդհանուր ծիծաղի տակ ավելացրեց Սպարտակը,— մի ուրիշ կարծիք էլ կա արդարակյացների մասին. ասում են, թե նրանք էլ կգնան Հադես և որպես պարգև, կդտնվեն հավիտենական հարբածության վիճակում։ Ինչ արած, Թրակիայում սիրում են զվարճանալ։ Եվ աշխարհով մեկ ասում են. «Թրակացիները ամենահռչակավոր քեֆչիներն են»։

Աստվածների և հերոսների գործերի վերաբերյալ բոլոր ավանդապրույցները մեզ մոտ մանրամասն գրի են առնված։ Ավանդազրույցներից շատերը շատ հին սյուժեներ ունեն։ Մեր գրառումներում ասված է, որ Բաբելոնյան նշանավոր աշտարակը կառուցող 72 այրերի մեջ էր նաև Թրակացի Տերեսը։ Հանրահայտ են Հերակլեսի՝ աշխարհի մեծագույն հերոսի, Թրակացիներին տեղական դաժան թագավորներից ազատողի վերաբերյալ ասքերը։

Լայն տարածում ունեն բժշկական գիտելիքները։ Թրակացի բժիշկները չեն զիջում այլ երկրների լավագույն բժիշկներին։

Թրակիայի բոլոր կողմերում շատ են սիրում երաժշտություն։ Մենք ենք հնարել սրինգը և մագիդիումը (սավզի մի տեսակ), կրոնական ու ռազմական բազմաթիվ պարեր։ Ամենքը կխոստովանեն, որ Պիերիան, Օլիմպոսը, Պամպիլան և Լիբեֆրոնը հնում Թրակիային էին պատկանում. այժմ սրանք դանվում են մակեդոնացիների տիրապետության տակ։ Հելիկոնը մուսաներին են ձոնել Թրակացիները։ Հնում ո՞վ էր զբաղվում երաժշտությամբ, Թամիրասը, Օրփեոսը, Մուսեոսը. դրանք բոլորն էլ Թրակացիներ էին։ Օրփեոսը՝ մեր մեծագույն տիրակալը, որ սահմանեց զոհաբերությունները, սրբազան ծեսերը, սովորեցրեց հոգագործության պարգևած բարիքներից օգտվել (հենց նրանից հետո բոլոր ժողովուրդները սովորեցին հոգագործություն), անշուշտ, մեծագույն երգիչն ու երաժիշտն էր։ Երբ Օրփեոսը աստվածային հնչյուններ կորզելով, կնտկնտոցով զարկում էր կիֆարային կամ քնքշորեն մատները խաղացնում լարերի վրա, երբ երգում էր Դեպֆիսին անպատասխան սիրահարված իմաստուն Ապոլլոնի տառապանքների, կամ Դիոնիսոս աստծու դեգերումների մասին, Արշալույսի սիրո մասին, իր որդի Իտիսի միսը ճաշակած Տերևսի հանցավոր խրախճանքի, այն մասին, թե ինչպես Բորեասը սիրով բռնվեց հերոս Էրեքտեոսի դստեր, Աթենքի թագուհի Օրիթյայի հանդեպ և ի սեր նրա լքեց Թրակիան, կամ այն մասին, թե ինչպես Իստրոսը սիրով բռնկվեց Բոսպորյան ծովի, իսկ Հռենոսը կելտերի ծովի նկատմամբ, մարդկանց հոգիները բոցավառվում էին։ Օրփեոսն իր երգով ու երաժշտությամբ հմայում էր մարդկանց ու գազաններին, և մարդիկ չէին կարողանում կտրվել նրա երգից, ինչպես սիրահարը իր սիրեցյալից, նրա երգով աբբեցած՝ քուն էին մտնում։ Օրփեոսի փառքը տարածվել է ամբողջ աշխարհում։ Նա աստվածային երգեցողության խորհրդանիշն է։

— Այժմ հասկանալի է, թե ինչու Հելլադայում Թրակացիների՞ց էին ընտրում նաև մանկավարժ-դաստիարակներին,— ոգևորված բացականչեց Միլետոսը,— մեզանից սովորելու բա՞ն կա։

— Այո՛,— նրա խոսքերը հաստատեց Սպարտակը,— բազմաթիվ հռչակված հելլեններ իրականում կիսաթրակացիներ են. այդպիսիք են, օրինակ, պատմաբան Թուկիդիդեսը, զորապետ և քաղաքագետ Քիմոնը, փիլիսոփա, ցինիկների դպրոցի հիմնադիր Անտիսթենեսը։ Մի մասն էլ մեծացել և դաստիարակվել

են Թրակիայում, ինչպես, ասենք, Արիստոտելը. նա մինչև տասնյոթ տարեկանը ապրել է Ստագիրա գաղութում։

Մենք՝ թրակացիներս, ուրախ և հյուրասեր մարդիկ ենք։ Գյուղերում և քաղաքներում տոնախմբությունների ժամանակ ուրախությունը եռում է։ Ամենուրեք երգ ու երաժշտություն է, տոնականորեն հագած-կապած բազմություններ։ Մեզ մոտ ով մահանում է ուտելիքների առատության մեջ, հաճախ համարվում է ամենաերջանիկներից։ Նույնիսկ մեր գերեզմանաքարերի վրա պատկերված են կերուխումի տեսարաններ։

Թրակացիներս շատ ենք սիրում ձիեր, խելահեղ ձիարշավներ։ Թրակական այրուձին ամենուրեք մեծագույն փառք է ձեռք բերել։ Զարմանալի չէ, որովհետև թրակացին ձիու հետ շփվում է համարյա մանուկ հասակից։ Հազիվ է երեխան քայլել սովորում, և հայրը նրան նստեցնում է ձիու վրա։ Երեխայի բոլոր հարազատների համար դա մեծ տոն է։ Մենք ձիեր սիրում ենք։ Մենք գիտենք, որ ձին շատերին է դարձրել բանաստեղծների կողմից փառաբանության առարկա. օրինակ, եթերցի Բելերոփոնին, Դարեհին ձին է դարձրել արքա, Ալեքսանդրը հռչակվել է իր Բուկեֆալով, Դիոմեդեսը զոհվել է իր զամբիկների պատճառով։ Նրանց նույնպես երգել են պոետները։

Ես չեմ ուզում ասել, թե Թրակիայում բոլորը հեշտ են ապրում, որ այնտեղ աղքատներ չկան։ Աղքատներ ամեն տեղ կան, և նրանց կյանքը հեշտ չէ, մանավանդ Հռոմում։ Զքավորները պետք է հաց ու հագուստ գնեն, տնտեսական իրեր, պետք է բնակարանի համար վճարեն։ Նույնիսկ ամենօրյա վառելափայտը նրանք փողով են ձեռք բերում։ Միայն օդն ու ջուրն են առայժմ ձրի։ Քաղաքում ազատ քաղաքացիները հաճախ աշխատանք չեն ունենում և ոչ մի հարմար դբաղմունք չեն գտնում, որպեսզի ապրելու անհրաժեշտ միջոցներ ձեռք բերեն։ Դրա համար էլ ձեռք են զարկում ամեն ինչի, նույնիսկ ազատ մարդու համար անպատվաբեր գործի։

Իհարկե, յուրաքանչյուրիս հետ շար ճակատագիրը իր խաղն է խաղում։ Ոչ մեկը ճշգրիտ չգիտի, թե իրեն ինչ է խոստանում մութ ճակատագիրը։ Ինչպես ասում են զիտակ մարդիկ, երբեմն գիշերով, քնի մեջ հնարավոր է իմանալ դալիքը, եթե բարի աստվածությունը մեզ իմաստուն երազ է ուղարկում։ Ո՞չ, ոչ թե դժբախտությունից ու սառապանքից պահպանելու համար. մահկանացուն անզոր է խույս տալ ճակատագրի որոշումից, այլ՝

տառապանքը առավել անսասանությամբ կրելու համար, որպեսզի անսպասելի դժբախտությունը մեր հոգին չնետի հուսահատության հորձանուտը։

— Դու հրաշալի պատմեցիր Թրակիայի մասին, Սպարտա՛կ,— խրախուսանքով ասաց Աստերոպեոսը։— Ես այդպես չէի կարողանա։ Հիմա մեր բարձրագույն հրամանատարներին պատմիր քո՛ մասին։ Ես գիտեմ, դու ասելու բան շատ ունես։

— Ես ծնվել եմ Թրակիայում, մեդերի երկրում,— իր պատմությունն սկսեց Սպարտակը։— Մեդերի երկիրը Թրակիայի հենց կենտրոնում է, Ստրիմոն գետի ափին։ Մեդերը մտնում են պեոն կոչվող ցեղերի հզոր միության մեջ։ Մենք ուրիշների առջև հպարտանում ենք նրանով, որ նախ՝ թրակացի ենք և հետո՝ որ մեդ ենք։

Մեր փառքը բավականաչափ հավաստել են նույնիսկ օտարները։ Այսպես, հույն հռչակավոր պատմաբան Հերոդոտոսը՝ «պատմահայրը», այդպես են կոչում նրան իրենք՝ հելլիններները, նկատում է. «Թրակացիները աշխարհում հնդիկներից հետո ամենաբազմաքանակ ժողովուրդն են։ Եթե նրանք միասնական լինեին կամ մեկ թագավորի իշխանության տակ գտնվեին, ապա ուղղակի անպարտելի կլինեին և ամենաուժեղը»։ Ահա մեկ ուրիշ հռչակավոր աթենացու՝ Իսոկրատեսի[1], կարծիքը. «Իշխանության ամենաընդունակ և առավել հզոր ժողովուրդներ են սկյութացիները, թրակացիները և պարսիկները»։

Արժե՞ խոսել մեր առհմաբանության մասին։ Այն ծագում է մեծ աստվածներից և հերոսներից։ Հռոմեացիներն ավելորդ կարո՞ղ են մեզ հետ մրցել։ Նրանց ակունքներում կանգնած են երկու անոք թափառաշրջիկներ՝ Հռոմուլոսն ու Հռեմոսը։ Նրանք ծնվել են ինչ-որ անհայտ խաբեբայից։ Հետագայում, խայտառակությունը նվազեցնելու համար, Հռոմուլոսը անամոթաբար իրեն հայր վերագրեց Մարսին, չնայած որ նա ամենևին ոչ մի առնչություն չուներ նրա հետ։ Իսկ հետո ինչպե՞ս դոյացավ հռոմեական ժողովուրդը։ Առաջին՝ հռոմեացիներն ընդունում էին ամեն տեսակի սրիկաների, խաբեբաների, մարդասպանների և նույնիսկ դավաճանների, որոնցից ամոթով ու սարսա-

---

[1] Իսոկրատես (436—338 թթ. մ. թ. ա.) — աթենացի քաղաքական հրապարակախոս և հռետորության ուսուցիչ։

միով հրաժարվում էին մերձավորները։ Եվ ահա շարագործների մութ հրոսակախումբը, հզոր էտրուսկների ձեռքի տակ վարժեցում ստանալով և նրանցից ինչ-որ բան սովորելով՝ այնուհետև իր բացառիկ հանցավորության և անազնվության պատճառով դարձավ բոլոր հարևան ժողովուրդների համար ամենասարսափելի խարազանը։

Օ՜, եթե հարևանները ժամանակին հասկանային, թե համընդհանուր դժբախտությունների ու պատերազմների ինչպիսի սարսափազդու ջահ է բռնկվել Տիբերի ափին։ Օ՜, եթե ժամանակին գլխի ընկնեին ու մարեին այն։ Որքա՜ն երջանիկ կապրեին այդ ժամանակ աշխարհի բոլոր ժողովուրդները։ Նրանք չէին տեսնի զարհուրելի ավերածություններ, ստորացուցիչ հարկեր, հռոմեացիների անսահման բռնությունները իրենց, կանանց ու երեխաների նկատմամբ, նրանք չէին ճաշակի տաժանելի սարկության ամենաանարգ լուծը։ Չկա այնպիսի ժողովուրդ, որին Հռոմը բարիք գործած լինի։ Սրիկաների ու հանցագործների ոհմակի մեջ, որոնք մարդկային արյունը հեղում են ջրի նման, որոնք գլադիատորների մենամարտերից բավականություն են ստանում, ազնիվ մարդ գտնելն այնքան դժվար է, ինչքան Արևն ու Լուսինը ցած բերելը։

Իսկ մենք, ի տարբերություն անսահմ հռոմեացիների, աշխարհում հայտնի մեդեր ենք։ Մեր բոլորի նախահայրը արքա և հերոս Մեդեան է։ Մեդեսը Աթենքի տիրակալ Էգևս արքայի և Կոլխիդայի արքայադուստր Մեդեայի որդին էր։ Իր հոգեհոր՝ Յասոնի հետ, որն արգոնավորդների պարագլուխն էր եղել, նա, ինչպես գիտեք, արշավեց Կոլխիդա՝ ոսկե գեղմը բերելու և հաջողության հասավ Մեդեայի օգնության շնորհիվ։ Մեդեսը մի շարք խոշոր և հաղթական արշավանքներ ձեռնարկեց Թրակիայում և Արևելքում։ Մեր Մեդեսի խորթ եղբայրն է Թեսեսը՝ մարդացուլ Մինոտավրոսին հաղթողը։ Նա այնքան մեծացրեց ու գեղեցկացրեց Աթենքը, որ հետագայում նրան կոչեցին Աթենքի իսկական ստեղծող։

Մենք՝ մեդերս, աշխարհի տարբեր ծայրերում ազգականներ ունենք, որոնք մեզ հետ մշտական կապ են պահպանում. Հունաստանում՝ Փոկիսում, Բեոտիայում (Մեդոն քաղաքը), Ակառնանիայում (Մեդիոն քաղաքը), Թեսալիայում, որտեղ դոնե Տրոյական պատերազմից սկսած՝ շատերը կրում են Մենելաոս անունը։ Մեդերը միշտ շատ են եղել Մակեդոնիայում, Փոյու-

գիայում և Կրետե կղզում (հայտնի հերոս Իդոմենևս արքայի կնոջ անունը Մեդա էր)։

Հիմա իմ մասին։ Իմ տոհմը շատ հայտնի է։ Մեդերի թագավորությունում նախնիներիս գահընկեց արել և իշխանությունից զրկել է Ալեքսանդրի հայրը՝ Փիլիպոսը։ Նոր իշխանություն ձեռք բերելու, հարստություն գտնելու համար նախնիներս ծառայել են Մակեդոնիայի բանակում և ձգտել բարձր դիրքի հասնել։ Նրանց սերունդները ծառայել և այժմ էլ ծառայում են Բութանիայի, Պոնտոսի, Հռոմի, Աթենքի բանակներում, Աֆրիկայում, Բոսպորոսում։

Կյանքում ես էլ եմ տեսել բախտի բոլոր քմահաճույքները։ Իսկ երիտասարդ տարիքից սովորել եմ այնպիսի գիտություններ, որ սովորեցնում են աղնվազարմ մարդկանց։ Ուսումնասիրել եմ փիլիսոփաների երկերը և Օրփեոսին, քաղդեական և եգիպտական իմաստություններ, կրթվել եմ Աթենքում, Փոքր Ասիայում, Հռոդոսում։ Ինքս իմ մասին ստիպված եմ ասել Սոֆոկլեսի խոսքերով՝ «Մենելաոսից».

Ճակատագիրս, ասես, արեգակին է լծված.
Պտտվում է, և ահա փոփոխվել է ամեն բան։
Այդպես լուսնի դեմքն է միշտ փոփոխուն ու հեղհեղուկ,
Երկու գիշեր չի կարող նա միևնույնը մնալ։

18 տարեկանից որպես զինվոր ծառայել եմ հռոմեական Մակեդոնիա պրովինցիայում, թրակական օժանդակ զորքերում։ Դիրքի չեմ հասել, թեպետ ուժի ու քաջության համար պատիվ ու հարգանք ունեի։ Հետո, առանց հռոմեական զեկավարության համաձայնության, լքեցի հռոմեական բանակի շարքերը։ Ինձ հետ միասին ուրիշ շատ թրակացիներ հեռացան հռոմեացիներից։ Մեր թշնամիները հետևից չարությամբ գոռում էին. «Դասալիքնե՛ր»։ Իսկ մենք ասում էինք և ասում ենք. «Սո՛ւտ է։ Մենք դասալիքներ չե՛նք, այլ՝ հայրենասերներ։ Եթե մեր մեդերը կրկին կռվում են հռոմեացիների դեմ, մեղ վայել է լինել մերոնց հետ, մարտնչել նրանց կողքին, ոչ թե նրանց դեմ։ Ցեղի հանդեպ պարտքի զգացումը բարձր է հռոմեական բանակի զինվորի պարտականությունից»։

Մենք համառորեն կռվում էինք թշնամու դեմ Մակեդոնիայի լեռներում, հետո՝ Թրակիայում։ Հռոմեացիները կատաղորեն այրում էին մեր շենները, թալանում ունեցվածքը, տղամարդ-

կանց, կանանց և երեխաներին քշում էին ստրկության... Բայց և այնպես հռոմեական լեգեոնները շատ ուժեղ են։ Մեր օրերում,— շարժե թյուրիմացության մեջ ընկնել,— նրանք աշխարհի ամենահզոր զորքն են։ Միայն սկյութները, գետեսները և մեկ էլ պարթևները՝ ուժեղ այրուձի ունեցող այդ ժողովուրդները կարող են դիմադրավել նրանց։

Մեր պատերազմն անհաջող եղավ։ Պատճառները շատ-շատ են, դրա մասին հիմա չեմ ցանկանում խոսել։ Հռոմեացիները հաջողությամբ լուծեցին իրենց դժվարությունները՝ ճնշեցին Սիցիլիայի ստրուկների ապստամբությունը։ Մեր պատերազմը կորցրեց իր հեռանկարները։ Մենք երկար ժամանակ մտածում էինք. «Հիմա ի՞նչ անենք»։ Տարբեր կարծիքներ եղան։ Ես վճռեցի համախոհներիս հետ գնալ Պոնտոս՝ Միհրդատ արքայի մոտ։ Պոնտոսում հնուց ի վեր երկար տարիներ սերենդեսերունդ ծառայում են թրակացի տարբեր ցեղերի ռազմիկներ, մեր տոհմից էլ այնտեղ կային։

Ինչո՞ւ գնացի Միհրդատի մոտ։ Հաղթական հռոմեացիների ձեռքից պրծնելու համա՞ր։ Ո՛չ։ Ես այլ նպատակ ունեի. Պոնտոսում դիրքի հասնել, արքայի մեջ միտք սերմանել հռոմեացիների դեմ պատերազմելու անհրաժեշտության մասին և նրանց հետ միասին պայքարը շարունակել։

Ինձ լավ դիմավորեցին։ Ինձ հովանավորում էր Դրոմիհետը՝ Միհրդատի խոշոր զորավարը, որը թրակացի,գետես էր։ Պոնտոսում 10 տարի մնացի, բարձր դիրքի հասա։ Մասնակցեցի Միհրդատյան առաջին պատերազմին... Հետո,— դրա մասին ծանր է հիշելը,— ամոթալիորեն կերի ընկա թշնամուն։ Օ՜, ինչ նենգ են հռոմեացիները։ Եվ մենք, որոնց նրանք բարբարոս են համարում, ինչքան պարզամիտ ենք։ Հռոմեացին չի կարող, նույնիսկ «հին ընկերոջ» կերպարանքով, իսկական ընկեր լինել օտարերկրացուն։ Կելտը, թրակացին, հույնը, սամնիտը, կապադովկիացին, կիլիկիացին կամ եգիպտացին, բոլորը նրանց համար բարբարոսներ են, ստրուկներ ու ծառաներ։ Հռոմեացիների հետ շփվելիս պարտադիր չէ խոսքի տերը լինել կամ դեկավարվել պատվախնդրության նկատառումներով։ Մենք այդ բանը երբեք չպետք է մոռանանք։ Ով մոռացավ՝ անպայման կզոհվի, նրան վիճակ կընկնի ստրուկի շղթաներ, ստրացում և ամոթ։ Այդպես էլ ինձ հետ պատահեց։

Եվ ահա մենք՝ հպարտ մեզնից, մեր ազդեցությամբ ու փառքով հանդերձ, սահիպված ենք կրելու հռոմեական ստրկությունը։ Հե՞շտ է արդյոք։ Մեզ՝ տղամարդկանց համար դժվար է, իսկ մեր կանանց ու աղջիկների համար միշտ առավել ծանրն է վիճակվել կրելու։ Եվ նրանք ակամա ստիպված են որպես սփոփանք կրկնել բանաստեղծի հայտնի խոսքերը.

Արքայական տոհմից եմ ես, ծնունդ նախնյաց մեծագարմիկ,
Քարշ եմ գալիս ստորացված, հրամանով խնդում, լալիս...
Ա՜խ, երանի չիմանայի, թե հայրս ու մայրս ի՞նչ են քաշում...

Կյանքի ծանր պահերին, բարեկամնե՛ր, մենք դիմում ենք անցյալին, առանձնապես, եթե հիշելու մի լավ բան կա։ Ես միշտ հոգեկան բավականությամբ եմ հիշում հարազատ ու սիրելի Մեդոնը։ Մենք երկու մայրաքաղաք ունենք՝ Մեդեան և Մեդոնը։ Առաջինը Մեդես արքան կառուցել է իր մոր՝ այդ մեծ կնոջ պատվին, երկրորդը՝ իր պատվին։ Մեր երկրի բոլոր քաղաքները շատ հարուստ են, հիանալի նախագծված ու կառուցված, զմայլելի զարդարված։ Բայց Մեդոնը ամենագեղեցիկն է։ Այն շրջափակված է հսկայական քարերից շարված հզոր պարիսպով։ Տներն այնտեղ մի քանի հարկանի են, փողոցները՝ ուղիղ, մեծ աստվածների բազմաթիվ տաճարներ կան, հավատացյալների նվիրաբերություններով հարուստ, աստվածների նկարներով և արձաններով։ Քաղաքը շրջապատում են սաղարթախիտ ծառեր, ծաղկուն թփուտներ և մարգագետիններ, ուր արածում են նախիրները։ Բանջարանոցներում ամեն ինչ կա. ղսնաղան բանջարեղեն, մբտենի, վարդ, նարգիզ։ Հողի ընդերքից ամենուր վճիտ աղբյուրներ են բխում, ոռոգելով ծառերն ու ծաղիկները, հողագործի բույսերը։ Բրիչները ձեռքներին՝ մարդիկ ջանասիրաբար աշխատում են դաշտերում։ Թրակիայի ժողովուրդը ոչ միայն շատ ռազմատենչ է, այլև աշխատասեր։ Ամեն ինչում մեր Թրակացիք հմուտ են. և՛ հողագործության մեջ (մեր ավագանին մեծ քանակությամբ հաց է արտահանում ուրիշ պետություններ), և՛ արհեստների, և՛ առևտրում։

Քաղաք մանելիս, դուք կտեսնեք, որ այն կորած է փարթամ այգիների և մարմարյա ջրավազանների մեջ (այստեղ ապրում են միայն երևելիները, ժողովուրդը՝ արվարձաններում է)։ Ամենուրեք աճում են հզոր սոճիներ, կեչիներ, սոսիներ, որոնց պարուրված են բաղեղներ ու բազարջուկներ։ Ծառերի տակ, եղեգ-

նաձողերին հենված՝ աչք են շոյում խաղողի վազերը։ Հյութեղ ողկույզների տակ խշմարներ են դրված։ Ծաղկանոցներում մանուշակներ են, նարգիզներ, հիացինտներ, վարդեր։ Պուրակներում ամենուրեք թռչուններ են ճախրում։ Սոխակները նուրբ դայլայլում են։ Թռչունների մեջ կարելի է նաև նշանավոր օտարերկրացիների տեսնել՝ թութակների, կարապների, սիրամարգերի։ Ինչպիսի՜ փառահեղ փետուրներ ունեն։ Սիրամարգի վերաբերյալ ճիշտ են ասել. փետուրներին ոսկի է շաղ տված, իսկ յուրաքանչյուրի վրա՝ մի աչք։ Աստվածային թռչուն է։ Նրան նայելիս սիրո արվեստը հասկացողի սիրտը երջանկանում է։

Գեղեցիկ է քաղաքի կենտրոնական փողոցը։ Այն սալարկված է, կրկնակի սյունասրահներով, շքեղ տաճարներով, բազնիքներով, հրաշալի առանձնատներով, սրանք բոլորն ապշեցնում են հարդարանքի ճոխությամբ։ Տների տանիքներից կախ փայտյա ծածկեր կան, որոնք անցորդներին պահպանում են անձրևից։ Չէ՞ որ աստվածները մեզ ուղարկում են և՛ հորդառատ անձրևներ, և՛ թանձր ձյուն, և՛ նույնիսկ կարկուտ. այդպիսին է մեր եղանակը։ Քաղաքում կա նաև այն ամենը, ինչը մեր կյանքին բավականություն է տալիս. թատրոն, որտեղ կարելի է հրաշալի երգիչների լսել, կիֆարայի և սրնգի վարպետների երաժշտական մրցություն։ Մեզ մոտ և՛ թատերական ներկայացումներ են լինում, և՛ մարզիկների մրցումներ։ Կենտրոնական հրապարակում՝ ագորայում, գտնվում է Դիոնիսոսի սքանչելի տաճարը։ Ագորան զարդարում են մարմարյա պատվանդաններով բրոնզյա արձանները։

Քաղաքը ջրառատ է, չէ՞ որ գտնվում է Սարիմոնի ափին, Թրակիայի ամենաարգավանդ հարթավայրի մեջտեղում։ Հարուստ ենք նաև աղբյուրներով։ Այդ պատճառով քաղաքում և տներում շատ ջրավազաններ կան։ Դրանց մի մասը գեղեցկության համար են, մյուսները՝ օգտագործման։ Մեր ընդհանուր ջրավազանների մոտ հրմշտոց չի լինում։ Այնտեղ չես լսի՝ «ես առաջինը պետք է ջուր վերցնեմ» բղավոցը, չես տեսնի տուրուդրմփոց, վնճ, կոտրված սափորներ։

Արքայական պալատը գտնվում է ամրոցում, որը շատ հարուստ ու գեղեցիկ է և զբաղեցնում է մի ամբողջ թաղամաս։ Ով չի տեսել, թերևս իմ խոսքերը հնարովի համարի։ Պալատը երկհարկանի է, սյուներով զարդարված, տանիքը ծածկված է պղնձով։ Պատերը զարդարված են բրոնզով, փղոսկրով, արքաների

որի ավարներով։ Տղամարդկանց և կանանց հարկաբաժինների կահույքը զարդարված է թանկարժեք փայտով, ոսկով ու արծաթով։ Ամենուրեք կախված են դեմքեր, ժանյակներ, նկարներ և ծածկոցներ։ Դրանց այուժեները վերցված են թրակական, հելլենական, միդիական դիցաբանությունից։ Այստեղ կարելի է տեսնել Դիոնիսոսին, Ապոլոնին, Պոսեյդոնին, Օրփեոսին, Թամիրասին, Մուսեոսին, Հերմեսին, Սալմոկսիսին, Հելիոսին, Թրակիա և Ռոդոպա հավերժահարսերին, մարտնչող Յասոնին, Մեդեսին և Քսերքսեսին, արգոնավորդների արշավանքը, տառապող Մեդեային, Թեսեսին և Մինոտավրոսին, զանազան երկրներ ու քաղաքներ, հրաշունչ լեռներ, արագահոս գետեր, դրանց մեջ առաջին հերթին Իստրոսը և Ստրիմոնը, ծովերով լողացող վաճառականական նավեր, խորամանկ Սիզիփոսին և էլի շատ բաներ։ Խճանկարներով և որմնանկարներով զարդարված արքայական ատյանի դահլիճում թափանցիկ տանիքի վրա կանգնած են աստվածների արձանները։ Նրանք ասես ճախրում են օդում, տեսնողներին զարմանք ու սարսուռ պատճառելով։ Դահլիճի կենտրոնում պաշտամունքի հարթակն է՝ զարդարված բուսական զարդանախշով։ Սրա վրա մարմարյա զոհասեղանն է՝ թրակացի հեծյալի պատկերով...

Աշխարհի ո՞ր քաղաքն է մեր Մեդոնից գեղեցիկ։ Նրա հավասարը չկա։ Դրա համար էլ մեզ մոտ ասում են՝ «Թողնելով Մեդոնը և ուրիշ քաղաք մեկնելով, դու կհիշես այն։ Իսկ ուրիշ տեղից այստեղ դալով շուտով կմոռանաս և՛ հայրենի երկիրդ, և՛ ծնողներիդ»։ Իսկապես, նման կարծիքը կեղծ չէ։ Մեդոնը մյուս քաղաքներից ամեն մեկին գերազանցում է մի բանով, մեկին՝ մեծությամբ, մի ուրիշին՝ հիանալի կլիմայով, ջրառատությամբ, աստվարների և շենքերի գեղեցկությամբ, երրորդին՝ օտարերկրյա գիտությունների նկատմամբ սիրով, չորրորդին՝ բնակիչների վարվեցողությամբ ու պերճախոսությամբ, հինգերորդին՝ հելլենական կրթվածությամբ։

— Միթե Մեդոնն, իսկապես, այդքան գեղատեսիլ է,— զարմացավ Կրիքսոսը։— Ուրեմն այն գեղեցիկ է մեր Բովիանումից ու Կորինթոսից՝ Հռոմի դեմ ապստամբած իտալիկների մայրաքաղաքներից։ Չէ՞ որ, մենք՝ սամնիտներս էլ, միշտ հարուստ ենք եղել և մտահոգվել ենք մեր քաղաքների գեղեցկությամբ...

Այստեղ Սպարտակը ժպտաց և, ասես, ներողություն խնդրելով, ավելացրեց.

— Աշխարհում գեղեցիկ քաղաքներ ու երկրներ շատ կան, Թանկագին Կրիքսոս։ Բայց յուրաքանչյուրի համար իր հայրենիքն ամենագեղեցիկն է։ Յուրաքանչյուրը ցանկանում է, որ այն բարգավաճի, հարստանա և ազատ լինի։ Մենք բոլորս այստեղ՝ Իտալիայում մարտնչում, արյուն ենք թափում, մեր կյանքն ենք զոհում ոչ միայն սեփական ազատության և հայրենի հողի ազատության, այլև ժողովուրդների անկախության համար, որոնց ստրկացրել և ճնշում են հռոմեացիները։ Ոչ ոք ճշգրիտ չդիտի՝ ինչով կվերջանա պայքարը, ինչպիսին է ճակատագիրը, որքան է աստվածների բարեհաճությունը։ Մի բան պարզ է, նույնիսկ մեր անհաջողությամբ, եթե դա է բաժին ընկել մեզ, մենք ժողովուրդներին ցույց ենք տալիս ազատության ուղին։ Մեր օրինակով ժողովուրդներին կոչ ենք անում չհնազանդվել և կատաղորեն պայքարել հռոմեացիների դեմ։ Ազատության ու անկախության գործը, սերնդեսերունդ փոխանցվելով, ի վերջո հաղթանակելու է։ Իսկ մեր գործերն ու քաջագործությունները կմնան երգերի, մարդկանց հիշողության մեջ։

Այդ երեկո այդպես ավարտեց իր խոսքը Սպարտակը։ Համերաշխ ծափահարություններով բոլորը համաձայնվեցին նրա հետ։ Իսկ հետո կրկին գինով լցրեցին գավաթները և միասին խմեցին։ Յուրաքանչյուրը մտովին աղոթք հղեց իր հայրենական աստվածներին, խնդրելով գործին հաջողություն և Սպարտակին՝ իրենց վստահելի ընկերոջն ու փայլուն զորապետին, երկար կյանք։

Գլուխ երկրորդ

ԻՏԱԼԻԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ

I

Մեր թվարկությունից առաջ 89 թվին ստրկավաճառները Սպարտակին բերեցին Հռոմ և ստրուկների շուկայում վաճառեցին։

Հռոմեական արիստոկրատական հանրապետությունն այն ժամանակ խիստ դասային հասարակություն էր։ Դասերի մեջ բարձրագույնը սենատականն էր (տարբերանշանը՝ լայն կարմիր շերտապծով սպիտակ պարեգոտ)։ Ձիավարական երեսնվեցների

խավից զինվորական և քաղաքացիական (նոբիլիտետ) այդ դասի մեջ մտնելը, որտեղ, հանուն բարձրագույն պաշտոնի, հայրը պայքարում էր որդու, հորեղբայրը՝ զարմիկի, եղբայրը՝ եղբոր համար, հասարակ մարդու համար աներևակայելիորեն դժվար էր։ Եթե բացառության կարգով այդ բանը հաջողվում էր (վառ օրինակ է Ցիցերոնը), ապա բախտավորին իրավունք էր վերապահվում սերունդներին թողնել իր մոմե կեղծարանքը, որպես բարձրագույն խավի պատկանելության խորհրդանիշ։

Հռոմեական պետության մեջ երկրորդը հեծյալների դասն էր (բնորոշ տարբերանշանը՝ ոսկե մատանի և նեղ կարմիր շերտագծով պարեգոտ)։ Այդ դասին պատկանելը որոշվում էր 400 հազար սեստերցի գույքով և եկամուտով։ Ի տարբերություն խոշոր հողատեր սենատորների, հեծյալների խավը զբաղվում էր առևտրով, վաշխառությամբ, արհեստանոցներ էր պահում, մասնակցում էր կապալային ընկերակցություններին։ Այդ դասին էր պատկանում հռոմեական բանակի հրամանատարական կազմի նշանակալի մասը։

Երրորդ դասը կոչվում էր պլեբս։ Այն բաժանվում էր երեք ենթախմբի՝ քաղաքացիներ, գյուղացիներ և ազատ քաղաքացի-լյումպենպրոլետարներ, որոնք ազատ քաղաքացիներ էին՝ արտադրության մեջ զբաղված չէին և ապրում էին հասարակության հաշվին (50—40 թվականներին նրանց թիվը հասնում էր 300 հազարի)։ Ցիցերոնն ասում էր, որ նրանք անընդհատ «համալրվում են ստրուկներից, օրավարձու բանվորներից, չարագործներից և աղքատներից»։ Իրենց տերերից անձնական ազատություն ստացած նախկին ստրուկները նույնպես ներհոսում էին պլեբսի մեջ։ Վերջին երկու կատեգորիաներն առանձին հարգանք չէին վայելում։ Ցիցերոնը նրանց արհամարհանքով կոչում է «խղճուկ ու նիհար ռամիկներ», «քաղաքի թափթփուկներ»։

Չորրորդ դասը «նոր քաղաքացիներն» էին՝ նոր հայտնված սոցիալական մի խմբավորում։ Իտալիկների այդ վերնախավը հիմնականում տեղական ինքնավարության երևելիներն էին, (մասամբ նաև գավառական ինքնավարության՝ Այսրալպիական Գալլիա, Իսպանիա և այլն), որոնք մշտապես ավելանում էին և ամուսնությունների շնորհիվ միաձուլվում նոբիլիտետին ու հեծյալներին։ Իտալիկների շարքային մասսան իր հերթին անընդմեջ համալրում էր հռոմեական պլեբսը։

Հռոմեական հանրապետությունում իշխող դասակարգը բաղկացած էր սենատական և հեծյալների դասից, տեղական ինքնավարության և գավառական երևելիներից, որոնք հռոմեական քաղաքացիական իրավունքներ ունեին։ Հենց նրանց էր բաժին ընկնում ամբողջ եկամուտը, որ ստացվում էր ստրուկների և սեփական աղքատ քաղաքացիների շահագործումից, գավառների կողոպուտից, հաճախակի կրկնվող արտաքին պատերազմներից։

Ստրուկները գտնվում էին հռոմեական դասերից դուրս և չունեին ոչ մի ձևական իրավունք (ո՛չ քաղաքացիական, ո՛չ քաղաքական)։ Նրանք ազատ քաղաքացիների նկատմամբ անտագոնիստական դասակարգ էին։ Նրանց քանակությունը, ինչպես նաև կազմավորման պոտենցիալը գնալով աճում էր։ Եվ զարմանալի չէ։ Ֆաբիոս Մաքսիմոսը գավթելով Տարենտոսը (մ. թ. ա. 209 թ.) այդ ազդեցիկ ու հարուստ քաղաքի 30 հազար ազատ քաղաքացիներին ստրուկներ դարձրեց, կոնսուլ Էմիլիոս Պողոսը կործանելով Էպիրոս քաղաքը՝ նույնկերպ վարվեց 150 հազար ազատ քաղաքացիների հետ։ Սկիպիոն Էմիլիանոսը հզոր Կարթագենը կործանելով՝ կենդանի մնացած բնակիչներին ստրուկներ դարձրեց... Այդ երբեմնի ազատ մարդիկ ստրկության մեջ, բնականաբար, ձգտում էին ազատագրվել։ Եթե նրանց չէր հաջողվում ստրուկի լուծը թոթափել թույլատրելի միջոցներով, ապա նրանք դառնում էին զանազան խարդավանքների ու խռովությունների սկիզբ տվողներ։

Ստրուկները (նրանց սովորական գինը 400—500 դինար էր) բաժանվում էին որոշակի կարգերի. 1) պետական ստրուկներ (մագիստրատների, զորապետների մոտ ծառայողներ, տաճարների սպասավորներ, գրագիրներ, բանտապահներ, դահիճներ, ասենք, սրանք համեմատաբար քիչ էին), 2) մասնավոր անձանց ստրուկներ. ա) արտոնյալ մաս՝ քաղաքային գերդաստան (տնային ծառայողներ, ասմունքողներ, հռետորներ, փիլիսոփաներ, քերականներ, ճարտարապետներ, քարտուղարներ, գրադարանավարներ, սղագրողներ, կատակերգուներ, դերասաններ և այլն), բ) արտադրողական աշխատանքով զբաղվող ստրուկներ (արհեստավորներ), գ) գյուղական գերդաստան (հողամշակությամբ զբաղվողներ, որոնք ծանր շահագործման էին ենթարկվում), դ) դատապարտյալ ստրուկներ (վերջիններս ջղթայակապ աշխատում էին հանքախորշերում, քարհանքներում,

դաշտերում, մի մասն էլ գտնվում էր գլադիատորական դպրոցներում և զորանոցներում)։

Որոշ հաշվարկներով, Սպարտակի ժամանակ Իտալիայում կային 8 միլիոն իրավահավասար ազատ քաղաքացիներ, 2 միլիոն ազատագիրներ և 4 միլիոն ստրուկներ։ Դրանից բացի, զգալի թվով օտարերկրացիներ էին ապրում։ Բոլոր այդ մարդիկ միմյանց նկատմամբ մրցակցության մեջ էին։ Պատմաբան Ապպիանոսը նշելով հռոմեական բարքերի այլասերումը (նա գրել է մ. թ. ա. 44 թվականին, սակայն նման իրավիճակը բնորոշ էր նաև ավելի վաղ ժամանակաշրջանին), նկատում է. «Բուն հռոմեական ժողովուրդը խառնվել էր օտարերկրացիների հետ, ազատագիր ստրուկը դարձել էր իրավահավասար քաղաքացի և ստրուկն էլ նույնպիսի տեսք ուներ, ինչպես որ տերը, քանզի, եթե բացառենք սենատորական հագուստը, մնացած զգեստավորումը և՛ նրանց, և՛ ստրուկների համար նույնն էր։ Դրանից բացի, միայն Հռոմում տեղ գտած սովորությունը՝ չքավորներին հրապարակայնորեն հացի բաժանումը, ամբողջ Իտալիայից դեպի Հռոմ էր հրապուրում անբաններին, մուրացկաններին ու խաբեբաներին»։

II

Պոնտոսի արքա Միհրդատի՝ Հռոմի դեմ վարած Առաջին պատերազմն ավարտվել էր։ Պարտված արքան թողնելով գրաված հողերը, վերադարձել էր Պոնտոս՝ հայրական տիրույթները, պարտավորվելով կատարել Դարդանոսի համաձայնագրի բոլոր պայմանները (մ. թ. ա. 85 թվականի աշուն)։

Սուլլան՝ սենատի խոշորագույն զորապետը, զորքով վերադարձել էր Իտալիա (մ. թ. ա. 83 թվականին), հաղթել էր մարիոսականներին, նրանց զրկել էր քաղաքացիական իրավունքներից, ունեցվածքից, իսկ շատերին նաև կյանքից, դարձել էր դիկտատոր[1] (82 թ. վերջը)։ Նա ստիպել էր պարտված Ասիային և Հունաստանին հավելումով վճարել Իտալիայի այն կորուստները, որ կրել էր դաժան երկպառակտիչ պատերազմի ժամանակ։

---

[1] Դիկտատուրա՝ հռոմեական արտակարգ բարձրագույն պաշտոն, որը մեկ մարդու լիազորում է բացարձակ իրավունքներով՝ պետության մեջ գործերը կարգավորելու համար։ Դիկտատուրան լիազորվում էր 6 ամսով։ Սուլլան առաջինը նշանակվեց անորոշ ժամկետով (նրան նշանակեց սենատի պրինցեպս Լուցիոս Վալերիոս Ֆլակոսը)։

Արդյունքը եղավ այն, որ Դելոս կղզում վերականգնված առևտրական գործողությունների շնորհիվ Իտալիան նորից հեղեղեցին հարյուր հազարավոր տարբեր մասնագիտությունների տեր ստրուկներ. հողագործներ, դարբիններ, դրվագողներ, ներկարարներ, օծանելիքավաճառներ, խոհարարներ, քանդակագործներ, գեղանկարիչներ, երաժիշտներ, լեզվաբաններ, ճարտարապետներ, ինժեներներ, գիտնականներ։ Նրանց մեջ կային թրակացիներ, կելտեր, իլիրիացիներ, հույներ, մակեդոնացիներ, գալատներ, ասիացիներ, կապադովկիացիներ, կիլիկիացիներ, սիրիացիներ, կային բազմաթիվ վարձկան-զինվորներ ու զորապետներ, որոնք զենքը ձեռքին մարտնչել էին հռոմեացիների դեմ և տեսել էին ռազմական բախտի բոլոր քմահաճույքները։ Հիմա նոր բերվածների առջև ծառացել էր դժվարին ընտրության հարցը. ի՞նչ անել այսուհետև. փախչել և Իտալիայի անտառներում ու ճանապարհների վրա զբաղվել թալանո՞վ, թե՞ ձգտել մոռանալ հեռավոր հայրենիքը, հնարավորին չափ ընտելանալ հաղթողների լեզվին և սովորույթներին, հարմարվել նրանց արատներին, ինչպես այն հազարավոր տևտոններն ու կիմվրներն արեցին, որոնք Սեքստյան Ակվայի (մ. թ. ա. 102 թ.) և Վերցելի (մ. թ. ա. 101 թ.) մոտ պարտություններից հետո գերի ընկան հռոմեացիներին։

Եվ տուն ու ազատություն կորցրած նոր ստրուկները ստիպված էին նոր կյանք սկսել։ Նրանք ծանոթանում էին մարդկանց հետ և գործերի ընթացքին, ուսումնասիրում էին իրենց տերերի թուլությունները։ Առավել ճարպիկ հույներն ու ասիացիները դառնում էին կառավարիչներ, գրադարանավարներ, գրագիրներ, թարգմաններ, խորհրդականներ, անատակության միջնորդներ։ Առավել գեղեցիկ կանայք դառնում էին հարճեր ու սիրուհիներ։ Ստրուկների մեծամասնությունը զբաղվում էր ֆիզիկական աշխատանքով, նրանք գորգեր ու կտորեղեն էին գործում, աշխատում էին արհեստանոցներում ու դաշտերում, կատարելագործում էին խաղողի ու ձիթապտղի մշակումը, անասուններ ու թռչուններ էին պահում։

Նրանց տերերը Միհրդատյան պատերազմի շարչարանքներից, մարիոսականների դեմ մղված դաժան պատերազմից ու պրոսկրիպցիաներից հետո վայելում էին շքեղության պտուղները, զբաղվում էին արվեստով ու գիտությամբ։ Նրանք քա-

դաքից դուրս ձեռք էին բերել ընդարձակ ամառանոցներ, Հռոմում՝ հսկայական վիլլաներ իրենց ընդունարաններով, հյուրասենյակներով, գրադարաններով, արձաններով, նկարներով, թանկարժեք սպասքով, ջրավազաններով, բաղնիքներով, ընտանեկան պերճաշուք հանգստարաններով։

Ունևոր մարդիկ իրենց տներն ու ամառանոցները կառուցելու և զարդարելու համար դրամ չէին խնայում։ Լ. Լուկուլլոսը Բայքի իր կալվածքի համար վճարել էր 10 հազար տաղանդ (մեկ տաղանդը 26,2 կիլոգրամ արծաթ է), Կվինտոս Ցիցերոնի տունը Հռոմում արժեր 1 միլիոն սեստերց, Մարկոս Ցիցերոնի տունը Պալատինում, որը ևս գնել էր իր «պատմական» կոնսուլությունից հետո, նրա վրա նստել էր 3,5 միլիոն սեստերց։ Մ. Կրասոսի կարողությունը համաքաղաքացիները գնահատել էին 200 միլիոն սեստերց։

Շքեղության ձգտումն ամենուրեք դառնում է ամենագլխավորը։ «Համարում են,— իր դժգոհությունն է արտահայտում նախնիների պարզության երկրպագուն,— թե դու դաստակերտ չունես, եթե դրա վրա չի փորագրված բազմաթիվ հունարեն բառեր, ընտոցով առանձին-առանձին կոչում են տարբեր տեղերը՝ պրոցետոն, պալեստրա, ապոդիտերիում, պերիստել, օրնիտոն, պերիստերոն, օպորոտեկա»։

Այդ դաստակերտներին ու վիլլաներին կից կային ընդարձակ ամբարներ, մառաններ, պահեստներ, ծաղկանոցներ, բանջարանոցներ, թռչնանոցներ, ձկների լճակներ, զրոսայգիներ, մարգագետիններ, անտառներ և արոտավայրեր։ Ստրուկների, ազատագիրների, ազատ վարձու բանվորների՝ կոլոնների, տնային ծառաների, զանազան սպասավորների քանակն այստեղ շատ մեծ էր։ Խոշոր մագնատների քաղաքային տներում ծառայանու պաշտոնների թիվը հաշվվում էր մինչև 150. լակեյներ, հրուշակագործներ, խոհարարներ, սուրհանդակներ, նոմենկլատորներ, դաստիարակներ, լուության պահապաններ, ծաղրածուներ, նկարիչներ, բժիշկներ, քարտուղարներ, քերականներ, փիլիսոփաներ, ընդօրինակողներ և այլն։

Քաղաքային այդ ստրուկների մեջ գոյություն ուներ որոշակի, շատ խիստ ստորակարգություն։ Ամենամեծ ազդեցությունն ունեին նրանք, ովքեր ավելի հաճախակի էին շփվում տիրոջ հետ և վայելում նրա վստահությունը՝ քարտուղարները, դանձապահները, բաղնիապանները, ննջարանապետները, սե-

դանապետները, վիլիկոսները՝ կալվածքների կառավարիչները, դոնապաններն ու պարտիզպանները։ Ընչին բացառությամբ դրանք բոլորն էլ հույներ էին կամ Փոքր Ասիայից բերված ստրուկներ։

Անտիկ դարաշրջանի հարուստ հռոմեացու տունը, ինչպես ասում է Պլինիոսը, քաղաք կամ նույնիսկ առանձին հանրապետություն էր հիշեցնում։ Այստեղ նույնիսկ կրքեր էին եռում՝ ատելություն, նախանձ ու փառամոլություն։ Այստեղ ձգտում էին վնաս պատճառել հաջողակ ախոյանին, ընդհանուր միջոցներով հուշարձան էին կանգնեցնում կառավարչին, եթե վերջինս արդարացի էր կառավարել։ Աղդեցիկ ստրուկին այդտեղ տեր էին կոչում, նրան շողոքորթում էին, աղոթում էին նրա առողջության համար։ Իրենց տեքերի տներում ստրուկները աղոթում էին նաև ընտանեկան օջախի հովանավորող ոգիներին, Ասիայի և Եգիպտոսի արևելյան աստվածներին։

Բայց Հռոմում ստրուկներն ու ազատագիրները բոլորից շատ աղոթում էին Երջանիկ պատահականության աստվածուհուն և Ֆորտունային, հույս ունենալով, որ նրանց շնորհիվ շուտափույթ կազատագրվեն և «մարդ կդառնան»։ Աղոթում էին նաև բարի աստվածներ Սատուրնին և Սիլվանին, ավելի հազվադեպ՝ Միներվային, Ցերերային, Հույսին, Երջանիկ Մերկուրիոսին, Կաստորին և Պոլուքսին, Հերակլեսին։ Հաճույքով դիմում էին բախտագուշակների, կախարդների, հարուսպիկների և քաղդեացիների ծառայություններին։

Սակայն ստրուկների բոլոր խավերում մրցակցության կողքին պատահում էր նաև մտերիմ ընկերության բազմաթիվ դեպքեր։ Անտիկ դարաշրջանի համար միանգամայն բնորոշ գերեզմանաքարերի վրա ոմն ազատագիր փորագրել է տվել այս տապանագիրը. «Երբեք մեր մեջ, թանկագին իմ ընկեր, ոչ մի տհաճություն չի ծագել, վկայակոչում եմ երկնքի և դժոխքի աստվածներին։ Մենք երկուսով միաժամանակ ստրուկ դարձանք, նույն տան մեջ ծառայեցինք, միասին էլ ազատագրվեցինք և առաջին անգամ բաժանվեցինք այն օրը, որը քեզ խլեց ինձանից»։

Հռոմեական ստրկության լուծը քաշելը ծանր էր, բայց ստրուկներին ոչինչ չէր մնում, քան համբերությամբ դիմելը և ամեն օր որպես ափոփանք Եվրիպիդեսի խոսքերը կրկնելը.

... անվան մեջ է, անվան մեջ
Անարդանքը ստրուկի, իսկ թե բարի է, ազնիվ,
Ազատին չի դիջի նա կյանքում և ոչ մի բանում...

Եվ, այնուամենայնիվ, թե՛ քաղաքում, թե՛ գյուղում ստրուկներն ամեն կերպ ձգտում էին դրամ հայթայթել, որպեսզի վճարեին իրենց ազատագրության համար։ Նրանք խնայողություն էին անում սննդի հաշվին, նվերներ էին ստանում տան այցելուներից, տիրոջից (եթե հաջողվում էր հաճոյանալ նրան), կաշառք էին վերցնում հարուստ խնդրատուներից՝ տիրոջ մոտ արտահերթ մտնելու համար, ուտելիք և գինի էին գողանում, խընջույքի մնացորդների առևտրով էին զբաղվում, ինչ-ինչ դրամ էին ստանում որպես ժառանգություն (ընկեր ստրուկների կամ տիրոջ մահվան դեպքում), մեծագույն խնամքով մշակում էին իրենց տրված հողակտորը և վաճառում էին ստացված բերքը, ամեն կերպ խնամում-պահում էին իրենց մեկ-երկու անասունը և այլն։ Վատ ստրուկի մասին հռոմեացիներն արհամարհանքով ասում էին. «Նա հոգեպահուստ մի կտոր արճիճ էլ չունի» այսինքն՝ ամենամանր մետաղադրամը։ Ցիցերոնը գտնում էր, որ հռոմեական պայմաններում ձեռներեց ստրուկը վեց տարում կարող է կուտակել իր ազատագինը։ Ճիշտ է, այս դեպքում էլ երբեմն բարդություններ էին լինում։ Ըստ հռոմեական օրենքների ստրուկին կարելի էր ազատագրել միայն 30 տարի հետո, բացառությամբ հատուկ դեպքերի (եթե ստրուկը տիրոջ որդին էր կամ դաստիարակը կամ էլ նրան ցանկանում էին կառավարիչ դարձնել)։ Կտրականապես արգելվում էր միանգամից 100-ից ավել ստրուկների ազատագրել։ Այնուամենայնիվ, հանրապետական ժամանակաշրջանի վերջում տարեկան մոտ 16 հազար մարդ էր ստրկությունից ազատագրվում։

Սուլլայի հաղթանակից հետո, նոր հարուստների շրջանում հայտնվեցին ամենատարբեր տիպի մարդիկ՝ հռչակավոր գիտնական և գրող Մ. Տերենցիոս Վարոնը, ապագա զորավարներ, Միհրդատի և թրակացիների հակառակորդներ Լուկուլլոս եղբայրները՝ Լուցիոսը և Մարկոսը, Պոմպեոսի ախոյան, համառորեն միլիոններ դիզող Մ. Կրասոսը, պերճախոս և ագահ Կվ. Հորտենզիոսը, Ցիցերոնի ապագա հակառակորդներ և խռովարարներ Կոռնելիոս Լենտուլլոս Սուրան և Լ. Կատիլինան, հռետորի փառքի ձգտող Մ. Ցիցերոնը։

Նրանց հետ շփվում էին իտալական քաղաքներից պետական պաշտոններ գրավելու և մոդայիկ ուսուցիչներ դառնալու նպատակով Հռոմ ժամանած հարուստ պատանիներ, զանազան ուղ-

զությունների պատկանող փիլիսոփաներ, սերը և քաղաքական բանասարկությունները իրար զուգակցող հռոմեացի ազնվազարմ կանայք, արևելցի և հույն գեղեցկուհի կուրտիզանուհիներ։ Հռոմեական հասարակությունում գնալով մեծանում էր կուրտիզանուհիների դերն ու քանակը։ Իսկական կուրտիզանուհին պարտավոր էր սրամիտ խոսել կարողանալ, փիլիսոփայություն գիտենալ, բանաստեղծություններ սիրել, պարել, լատինական, հունական, եգիպտական երգեր կատարել, երաժշտական գործիքներ նվագել և լավ գրել։

Այդ կուրտիզանուհիները հաղթողների շրջապատում բազմաթիվ երկրպագուներ ունեին, որոնց բնավ էլ չէին հետաքրքրում նախնիների բարոյական խիստ նորմերը։ Բազմաթիվ հարճերով շրավարարվելով, նոր հաճույքներ հետապնդելով՝ նրանք մեծագույն բավականությամբ գայթակղում էին ջահել ստրկուհիների, գեղեցկուհի աղատագիրների և սիրունատես պատանիների, ամբողջ երեկոներ ու գիշերներ էին անցկացնում միմոսների ու կիֆարահարների մոտ, հասարակաց տներում ու կեղտոտ դիներում։ Ազնվազարմ պարոնների կանայք իրենց ամուսիններից հետ չէին մնում և հաճույքով իրենց ուշադրությանն էին արժանացնում հասարակ մարդկանց, աղատագիրների, գլադիատորների և ստրուկների։

Բարքերի սոսկալի անկումը խոստովանում էին բոլորը։ Տարեց մարդիկ վրդովվում էին, երիտասարդությունը կատակի էր տալիս։ Մեծ մասսայականություն էր վայելում սրախոս մեկի աֆորիզմը. «Անառակացնել և անառակ լինել՝ նշանակում է դարին համընթաց քայլել»։ Օվիդիոսը փոքր-ինչ ավելի ուշ (արդեն Օգոստոսի դարաշրջանում) սանձարձակ երիտասարդության ընդհանուր տրամադրությունը արտահայտել է հետևյալ ծաղրական տողերում.

Նա, ով չի տանի կնոջ դավելը, ցանցառ է իրոք
Եվ մեր Հռոմի բարքերին բոլոր ծանոթ չէ կարդին։
Չէ՞ որ Հռոմի սկզբում եղան Մարսի որդիներն անօրինական.
Հռեան ծնեց Հռոմուլոսին, Հռեմոսին նույն Հռեան ծնեց։
Դե, գեղեցկությունն էլ ինչի՞դ է պետք,եթե փնտրում ես ողջախոհություն։
Այդ հատկություններն, հավատա դու ինձ, չեն համատեղվի երբեք իրար հետ։
Թե որ խելոք ես, կնոջդ հանդեպ եղիր միշտ ներող ու մի՛ նոթոտվիր,
Էլ գործի մի՛ դիր նրա նկատմամբ ահեղ ամուսնու իրավունքը քո։
Կնոջդ բոլոր լավ ընկերներին ողջունիր մեկ-մեկ (դե շատ են նրանք),
Դժվար բան չէ դա. կփոխհատուցվի դա էլ լիուլի։

Եվ մասնակիցը կդառնաս դու միշտ նորապսակի քեֆ-ուրախության։
Տունդ, իմացիր, ծախսեր չանելով, կլցնես հազար ու մի բարիքով։

Արիստոկրատիայի շրջանում քաղաքավարության նոր կոդեքս է ստեղծվում. անպայմանորեն նամակագրություն հաստատել նույնիսկ հանրապետության ամենահեռավոր վայրերում գտնվող բաբեկամների հետ, ճանապարհորդել ստրուկների բազմաքանակ շքախմբի ուղեկցությամբ (փաստաբանն ազդեցիկ չէր համարվի, եթե նրա պատգարակի հետևից չքայլեին առնվազն ութ ստրուկ, հինգից պակաս ստրուկներով փողոց դուրս եկած մագիստրատը ծաղր ու ծանակի կենթարկվեր), շտեսնված ճոխ թաղումներ կատարել, թանկարժեք սպասքեղեն, մարմարյա արձաններ, արծաթյա արդուզարդ, շքեղ հագուստներ ունենալ և, վերջապես, պարտադիր ուղևորություններ կատարել Հունաստան կամ Փոքր Ասիա կրթությունն ավարտելու նպատակով։ Արիստոտելին ջանասիրաբար ուսումնասիրելը դարձել էր մարդու կրթվածության չափանիշ։

Արիստոկրատական ընտանիքներում երիտասարդության դաստիարակման գործում վճռական դեր են ձեռք բերում հույն ստրուկներն ու ստրկուհիները, ուսուցիչներն ու ճարտասանները։ Դա առանձնապես գրգռում էր հնի ջատագովներին, և Տակիտոսը արտահայտելով վաղ կայսրության ժամանակի կարծիքը, վրդովմունքով գրում է. «Իսկ հիմա նորածին երեխային հանձնում են ինչ-որ հույն ստրկուհու խնամքին, սրան որպես օգնական կարգելով ուրիշ որևէ էական գործի համար ոչ պիտանի, էժան մեկ-երկու ստրուկի։ Նրանց բարբաջանքներով ու մոլորություններով տոգորվում են դեռևս շատ նուրբ և դյուրընկալ մանկական հոգիները, տան մեջ ոչ մեկը չի մտածում այն մասին, թե այդ ստրուկներն ինչ են խոսում կամ անում իրենց պատանի տիրոջ ներկայությամբ։ Հենց իրենք ծնողներն էլ իրենց մանկահասակ երեխաներին ոչ թե ազնվություն և համեստություն, այլ սանձարձակություն ու ստահոսություն են սովորեցնում, և աննկատելիորեն նրանց հոգիներն է սողոսկում անամոթությունն ու արհամարհանքը և՛ իր, և՛ օտարի նկատմամբ։ Եվ վերջապես, առանձնահատուկ տարածված ու մեր քաղաքը բնորոշող արատները՝ դերասաններով ներկայացումների, գլադիատորական խաղերի, ձիարշավների նկատմամբ կիրքը, իմ կարծիքով, դեռևս ծնվում են մոր արգանդում, իսկ դրանով առլեցուն հոգիներում

կգտնվի՞ արդյոք մի փոքրիկ անկյուն բարի բարքերի համար։ Ամբողջ տան մեջ կգտնվի՞ մեկը, որը խոսի մի այլ բանի մասին։ Ուսումնական շենքերում մենք լսո՞ւմ ենք պատանիների այլ խոսակցություններ։ Հենց իրենք՝ դաստիարակներն էլ, իրենց ունկնդիրների հետ ամենից հաճախ, շաղակրատում են այդ նույն բանի մասին և աշակերտներին նրանք գրավում են ոչ թե իրենց պահանջկոտությամբ ու խստությամբ, փորձով ստուգված իրենց ձիրքերով, այլ առավոտյան ողջույնի կեղծավոր այցելություններով և շողոքորթության խայծերով»։

Նոր հոգևոր հակումները և պահանջմունքների աճն արմատապես փոխեցին նոբիլիտետի երիտասարդ սերունդը։ Այդ բանը լավ երևում է նույնիսկ «նոր մարդու» ուղին բռնած Ցիցերոնի վաղ նամակներում։ Իր ընկեր Ատիկոսին ուղղված նամակում գրում է. «Ինչպես ինձ գրել էիր, մեգարյան մարմարից արձանի համար Լուցիուս Ցինցիոսին վճարեցի 20400 սեստերց։ Բրոնզե գլուխներով պենտելիկոնյան մարմարից քո հերմաները, որոնց մասին տեղեկացրել էիր, արդեն հիմա էլ սաստիկ հափշտակում են ինձ։ Ուստի, խնդրում եմ, հնարավորին չափ շատ ու շուտ ուղարկիր և՛ հերմաները, և՛ արձանները, և՛ այն ամենը, ինչ արժանի է և՛ այն տեղին, և՛ իմ ջերմեռանդությանը, և՛ քո նրբին ճաշակին, առանձնապես այն, ինչ հարմար կգտնես գիմնասիոնի ու քսիստի (այսինքն՝ ծածկած սրահի.— Վ. Լ.) համար։ Ես այնքան տարված եմ դրանով, որ դու պարտավոր ես օգնել ինձ, չնայած ուրիշների կողմից, թերևս, պարսավանքի եմ արժանանում»։

Սուլլայի կողմից սաստիկ թուլացված հեծյալների դասի շարքերում (չէ՞ որ օրենքից դուրս հայտարարելով՝ Սուլլան ոչնչացրեց նրանց վերնախավը) հաղթողների միջավայրից հայտնվում է գործարար մարդկանց նոր խավ։ Հենց այդ համառ ու ագահ, մեծ կապեր ունեցող, առևտրական գործարքներից աղնվականության նման խորշանք չզգացող մարդիկ Իտալիայում մեծ վերափոխություններ կկատարեն։

Հարուստ սեփականատերերը պարտք են տալիս կախյալ արքայությունների թագավորներին, սնանկացած քաղաքներին և արիստոկրատական գերդաստաններին։ Համոզվելով, որ Հունաստանը և Փոքր Ասիան պատերազմի բոլոր աղետներից հետո այլևս հարուստ ավարառումների աղբյուր չեն, նրանք սկսում

են խոշոր միջոցներ ներդնել (ինչը առաջ չէր արվում) իտալիկական հողերում։

Իսկ Սուլլայի բազմամարդ բանակի զինվորներն ու սպաները Ասիայում[1] լավ հարստանալուց, օրենքից դուրս հայտարարված մարիոսականներին թալանելուց հետո, արագորեն տնտեսություններ էին ստեղծում։ Նրանք բոլորն էլ սոսկալի պատերազմներից ու ճակատամարտերից հետո, որոնցում շատ անգամ տեսել էին իրենց ընկերների զոհվելը և իրենք էլ բազմիցս իրենց կյանքն էին ենթարկել վտանգի, այժմ ծարավի էին խաղաղության, անդորրի, գյուղական հանգիստ կյանքի։ Յուրաքանչյուրը գորովանքով էր հիշում գյուղում և բնության գրկում անցկացրած մանկության ու պատանեկության օրերը, հայրերի ու պապերի հողագործական խաղաղ աշխատանքը և այժմ ինքն էլ էր ցանկանում վերադառնալ այդ աշխատանքին, դա համարելով որպես պատիվ, որպես վաստակած հանգիստ։ Գյուղական կյանքը իսկապես դրախտային էր քաղաքի հետ համեմատած, որտեղ մարիոսականների և սուլլայականների միջև դաժան քաղաքացիական պատերազմից հետո, օրենքից դուրս հայտարարումներից և մատնություններից, փառամոլության կատաղի, ամենօրյա պայքարից և ուրիշի հաջողության վրա նախանձելուց հետո, ոչ մի սրբություն չէր մնացել։ Վարոնը իր «Վաղ արթնացողը» սատիրայում մի քանի բառով պատկերել է ոչ վաղ անցյալում շատերի համար այդքան գայթակղիչ թվացող այդ տեսարանը. «Երիտասարդներն իրենք են բացում անկողինները, որն աշխատանքից հետո փափուկ է թվում, իրենք են դրանց մոտ դնում ջրով լի դավաթներն ու լուսաջահերը։ Նրանց համար աղբյուրի սառնորակ ջուրն է որպես խմիչք ծառայում, ուտելիքը հացն է, սոխը՝ համեմունքը։ Տանը և դաշտում ամեն աշխատանք հաջող է ընթանում։ Տունը բնավ էլ աչքի ընկնող մի կառույց չէ, բայց ճարտարապետը դրանով կարող էր ուսումնասիրել համաչափության օրենքները։ Հոդում են, որ դաշտերը անմաքրու-

---

[1] Պատմաբան Սալյուստիոսն այսպես է բնութագրում նրանց. «Այստեղ (այսինքն՝ Ասիայում,— Վ. Լ.) առաջին անգամ հռոմեացի զինվորները սովորեցին խմել, սիրահետել, արձանների, նկարների, սկահակների նկատմամբ սեր հանդես բերել, գրանք գողանալ ինչպես մասնավոր մարդկանցից, այնպես էլ գանձարանից, պղծել ամեն ինչ, առանց տարբերություն դնելու աստվածային և մարդկայինի միջև։ Ինքնին հասկանալի է, որ նման զինվորները հաղթանակից հետո ոչինչ չէին թողնի պարտվածներին»։

թյունից և անխնամությունից չվերածվեն աղբանոցի և ամայության, փոխարենը երախտագետ ցերեկան այստեղ աճող բույսերից այնպես է հեռացնում հիվանդությունները, որ հետագայում բարձր դեզերը ջերմացնում են հողագործների սրտերը։ Այստեղ դեռևս հարգի է հյուրասիրությունը. ցանկալի հյուր է յուրաքանչյուրը, ով սնվել է մայրական կաթով։ Հացի շտեմարանները, գինու տակառները, ձողից կախված երշիկների շարանը, բոլոր բանալիներն ու կողպեքները միշտ ճամփորդի տրամադրության տակ են, և նրա առջև բլուր են կազմում համեղ ուտելիքների բուրգերը։ Հետո գոհ ու կուշտ հյուրը նստում է խոհանոցի օջախի մոտ և հայացքն այս ու այն կողմ չի տանում, այլ հանդիստ գլխով է անում։ Նրա համար անկողին են գցում ամենատաք ոչխարենին՝ կրկնակի մորթով։ Այստեղ մարդիկ որպես լավ քաղաքացիներ դեռևս հարգում են արդարացի օրենքը, որը անբարյացակամության հետևանքով չի հետապնդում անմեղներին և գթասրտության պատճառով չի ներում մեղավորներին։ Այստեղ մերձավորի մասին վատ չեն խոսում։ Այստեղ ոտքերով չեն տրորում սուրբ օջախը, այլ՝ աղոթքներով ու զոհաբերություններով մեծարում են աստվածներին։ Ընտանեկան ոգու համար մի կտոր միս են դնում համապատասխան անոթի մեջ, իսկ երբ մահանում է տանտերը, նրան թաղում են նույն աղոթքով, որով թաղել էին նրա հորն ու պապին»։

Ա՛յ, մոտավորապես նման կյանքի էին ձգտում վերադառնալ միջին կարողության տեր սուլլայական ռազմիկները։ Ընդ որում տնտեսության կազմակերպման հարցում նրանք չէին հետևում միայն հռոմեական գյուղատնտեսության նշանավոր գիտակ ծեր Կատոնին։ Մեծ ճանաչում էր վայելում Սաղերնայի ագրոնոմիական տրակտատը. Սաղերնայի գալլիական կալվածքը հռչակված էր հացահատիկի բերքի առատությամբ (200 յուգեր, այսինքն 50 հեկտար տարածությունում աշխատում էին երկու զույգ եղան լծասարքեր և ութ ստրուկ, որոնցից երկուսը վար անող էին, իսկ վեցը՝ դաշտային բանվորներ)։

Սակայն հարուստ սեփականատերերին այլևս չէին բավարարում ո՛չ Կատոնի բազմաճյուղ տնտեսությունը (նա նկատի ուներ միայն Լատիումը և Կամպանիան, որտեղ աճեցնում էին հացահատիկ, ձիթապտուղ, խաղող ու բանջարեղեն, բուծում էին խոզեր, թռչուններ և այլն), ո՛չ էլ Սաղերնայի միաճյուղ՝ հացահատիկ արտադրող տնտեսությունը։ Առավելագույն շա-

հույթ ստանալու ձգտումը հարուստներին ստիպում էր ստեղծել խոշոր անասնապահական ֆերմաներ, անցնել խաղող և ձիթապտուղ արտադրող խոշոր տնտեսություններին։

Գյուղատնտեսական գրողները անհրաժեշտ ուշադրությամբ մշակում էին Կատոնի հանձնարարականները, որը կալվածքի հիմք վերցնում էր 240 յուգեր ձիթենու այգին (13 ստրուկներ էին մշակում) կամ 100 յուգեր խաղողի այգին (15 ստրուկներով)։ Նոր պայմաններից ելնելով՝ երիտասարդ գրողները (նրանց մեջ նշանավոր տեղ էր գրավում Սիցիլիայի խոշոր հողատեր, Սպարտակի ապագա հակառակորդ Գ. Կասիոսը) իրենց գրքերում վիճաբանում էին կալվածքի տեղադրության վերաբերյալ, շուկայի հետ դրա կապի, այգիների, անտառների և բանջարանոցների դերի, տիրոջ կալվածք հաճախակի այցելելու անհրաժեշտության մասին, նրանք քննարկում էին լծկան ուժի, աշխատանքի կազմակերպման, կալվածքի կառավարման, ստրուկների նկատմամբ վերաբերմունքի, նրանց՝ անհրաժեշտ քանակության և մասնագիտացման, ստրուկների անձնական հատկությունների, ստրուկների և աղատագիրների աշխատանքի զուգակցման, վարձակալների և փայատերերի դերի հետ կապված խնդիրներ։

Նոր գաղափարների համաձայն Իտալիայում արագորեն տարածվում էին հարուստ անասնապահական վիլլաները[1]։ Նրանց շահութաբերության մասին հեշտությամբ կարելի է եզրակացություն գալ Վարոնի բերած օրինակներով. «Սույնը մի վիլլայից, որտեղ բուծում է (ընտանի թռչուններ և մեղուներ), ավելի շատ օգուտ է ստանում, քան ուրիշներն ամբողջ կալվածքից։ Ես նրա մոտ տեսա մեծ քանակությամբ սագեր, հավեր, աղավնիներ, կռունկներ, սիրամարգեր, ինչպես և ձկներ, վարազներ ու այլ որսահարմար կենդանիներ։ Նրա աղատագիրը՝ գրառումներ կատարողը, որն ինձ ընդունեց պատրոնի բացակայությամբ, ասում էր, թե շնորհիվ այս ամենի վիլլան տարեկան 50 հազար (սեստերցի) օգուտ է բերում...

---

[1] Սովորական հասկացությամբ վիլլան քաղաքից դուրս կալվածք է, որի մեջ են մտնում արտեր, խաղողի այգիներ, արոտավայրեր։ Սակայն հին հեղինակները (Վարոն) հաճախակի վիլլա ասելով՝ հասկանում էին նաև այլ բան. «Ամեն մի կալվածք, որտեղ խոշոր անասունների բուծումը խոշոր շահույթ է բերում»։

...Մի՞թե Լ. Աբուկցիոսի պես կրթված, Լուցիլիոսի ոճով գրող մարդը չէր ասում, որ իր Ալբանական տիրապետություններում կալվածքներին հետին պլան են մղում անասուններ բուծող վիլլաները, այնպես որ արտերը 10 հազար (սեստերցից) պակաս եկամուտ են բերում, իսկ վիլլաները՝ ավելի քան 20 հազար։ Հենց նրա ասելով էլ, եթե ծովափնյա ցանկացած վայրում վիլլա ձեռք բերվի, ապա կարելի է 100 հազար (սեստերցի) եկամուտ ստանալ»։

Ահ՛ հենց այսպիսի միջակ և ոչ մեծ կալվածքների հետ սերտ կապեր էին հաստատում հարուստ մարդկանց հողային մեծ կալվածքները (լատիֆունդիաները), նրանց վաճառելով անհրաժեշտ առարկաներ և վարձով տալով հարկավոր մասնագետների՝ բժիշկների, մահուդագործների, հյուսների և այլն։ «Իրոք,— ասում է Վարոնը,— շատերը չպետք է կալվածք ներմուծեն հացահատիկ կամ գինի, կամ այն, ինչ (այնտեղ) չկա։ Մյուս կողմից էլ քիչ չեն նրանք, ովքեր կարող են ինչ-որ բան արտահանել։ Այսպես, օրինակ, Հռոմի մոտակայքում շատ եկամտաբեր է բանջարեղեն մշակելը, ինչպես նաև այգիներ, մանուշակների և վարդերի ծաղկանոցներ աճեցնելը, և ընդհանրապես արտադրել այն, ինչ սպառում է Հռոմը, այն դեպքում, երբ հեռավոր կալվածքներում նման մթերքներ արտադրելը, որտեղ վաճառել հնարավոր չէ, վնասաբեր է։ Այդպես էլ, եթե հարևանությամբ քաղաքներ կամ գյուղեր կան, կամ նույնիսկ առատ դաշտեր և հարուստների վիլլաներ կան, որտեղից կալվածքի համար էժան կարելի է գնել անհրաժեշտ ամեն բան և վաճառել ավելցուկը, ինչպես օրինակ, սյուներ, հենակներ, եղեգն, ապա կալվածքն ավելի եկամտաբեր է դառնում, քան երբ հարկ է լինում հեռվից բերել (բոլոր անհրաժեշտ բաները)։ Երբեմն հարևանից գնելն ավելի ձեռնտու է, քան արտադրելը»։

Բայց 1000—1500 և ավելի յուգեր տարածությամբ լատիֆունդիաներ հարուստները ձեռք էին բերում ոչ միայն Իտալիայում (մինչև մ. թ. ա. I դարը դրանք այստեղ համեմատաբար քիչ էին)։ Դրանք էլ ավելի շատ ստեղծվում էին գավառներում։ Այստեղ հողատերերը գործում էին առանց այլևայլության, սնանկացնելով մանր ու միջին սեփականատերերին, կլանելով նրանց կալվածքները, հողամշակության համար ստրուկների խմբեր ձեռք բերելով։ Այդ պատճառով լատիֆունդիաների նկատմամբ թշնամանքն այստեղ արտահայտվեց ամենից վաղ։

Բայց խոշոր սեփականատերերին այդ բանը չէր վհատեցնում։ Միաժամանակ հանդես գալով որպես վաշխառուներ, կապալառուների և կուսակալների հետ սերտորեն համագործակցելով՝ նրանք իրենց բռան մեջ էին պահում գավառների կախյալ բնակչությանը, վճարումների ժամկետների հետ կապված ոչ մի զիջողություն չանելով գյուղացիներից և անողոքաբար խլում էին նրանց հողակտորները՝ կանգ չառնելով նույնիսկ ուժ գործադրելու առաջ։

Այդ տարաբախտ մարդկանց՝ իտալացի թե պրովինցիացի, ճակատագիրը շատ աննախանձելի էր։ Վերցնելով իրենց աղքատիկ կահկարասին, կեղտոտ երեխաներին և հայրական աստվածներին, նրանք հեռանում էին քաղաքները աշխատանք փնտրելու և այնտեղ փորձում էին տեղավորվել, սեփական ուսերի վրա ղդալով քաղաքային ընչազրկության ամբողջ սարսափները։

Ճարպիկ մարդիկ նախանձելի եռանդով մխրճվում էին զանազան շահադիտական գործարքների մեջ։ Նրանք Իտալիայում և պրովինցիաներում կառուցում էին բազմաբնակարան եկամտաբեր տներ վարձով տալու համար, գնում էին ջահել ստրուկներ, արժեքավոր մասնագիտություններ սովորեցնում և նույնպես վարձով տալիս կամ ազատագրում՝ պայմանագիր կապելով, որով վերջիններս պարտավորվում էին կիսել իրենց ստացած եկամուտները։ Վերջապես, նրանք ընկերություններ էին ստեղծում, բաց էին թողնում և վաճառում յուրատեսակ ակցիաներ և փոխառություններ, որոնցով իրավունք էր տրվում մասնակցել ծովային փոխադրումներին, ռազմական մատակարարումներին, աղի հարկահավաքությանը, արծաթի և ոսկու հանքերի մշակմանը, կավահանքի վաճառքին և այլն։ Հեծյալների դասից բաղմաթիվ հարգարժան մարդիկ կախյալ թագավորների մոտ ծառայում էին որպես հարկային տեսուչներ և խոշոր պաշտոնյաներ (նման մարդկանց վառ օրինակ է Գ. Ռաբիրիոս Պոստումոսը՝ Ցիցերոնի ընկերը, որը հռչակ ձեռք բերեց 59 թվականին Եգիպտոսի արքա Պտղոմեոսին տրված փոխառությամբ, հետագայում նա գրավեց ֆինանսների մինիստրի պաշտոնը, թալանեց գանձարանը, հանվեց այդ պաշտոնից, բանտ ընկավ և ի վերջո փախավ երկրից)։

Հռոմեացի գործարար մարդկանց (այսպես կոչված հեծյալների) ղդալի միջոցները նրանց հնարավորություն էին տա-

լիս ազդել սենատի վրա պրովինցիաների կյանքի և կապալային վճարումների հարցերում, կաշառել պլեբսին զվարճալի տեսարաններով և հացահատիկի էժանացված վաճառքով, ճոխ հյուրասիրություններով, որոնց ժամանակ մեջտեղ էին դալիս լավ գինին, տապակած սագերը, ճտերը, կեռնեխները և նույնիսկ սիրամարգերը։

Ամբողջ Իտալիան արագորեն վերածնվում էր։ Կրկին աշխուժացել էր առևտուրը։ Պրովինցիաներ էին արտահանվում իտալիկական արհեստների ապրանքներ, իսկ ներմուծվում էին պերճանքի առարկաներ, մետաղներ և որոշ քանակությամբ հաց։ Իտալիան դեռևս սեփական հացով բավարարվում էր, քանի որ հացահատիկի մշակումը մանր տնտեսությունների մենաշնորհն էր։ Իտալիայի ստրկատերերը հպարտությամբ էին նայում երկրի արագորեն վերակառուցվող տնտեսությանը։ Եվ Վարոնը, անցած տասնամյակներին հայացք գցելով, օրինավոր հպարտության զգացումով ասում էր. «Ո՞ր գարին կարող եմ համեմատել կամպանյան գարու հետ։ Ո՞ր ցորենը՝ ապուլյան ցորենի հետ։ Ո՞ր գինին՝ ֆալերնյան գինու հետ։ Ո՞ր կարագը՝ վենաֆյանի հետ։ Մի՞թե Իտալիան այնպես չի տնկարկված, որ թվում է, թե ամբողջովին պտղատու այգի է։ Մի՞թե ավելի խիտ է ծածկված խաղողի այգիներով Փոյուգիան, որին Հոմերոսը «խաղողի բերքառատ այգի» է կոչել, կամ «բազմապտուղ» Արգոսը նույն բանաստեղծի մոտ։ Որտե՞ղ է մեկ յուգեր հողը 10—15 տիկ գինի տալիս, ինչպես Իտալիայի որոշ շրջաններում...»

Երկրի տնտեսության այս փայլուն հաջողությունները ոչ միայն տերերի աշխատանքի և տաղանդի արդյունքն էին, այլև ստրուկների դաժան շահագործման պտուղը։ Նրանց շարքերն անընդհատ աճում և նորացվում էին[1]։ Իտալիկական դաշտերի մեծ, միջին և փոքր կալվածքներում նրանք շոգին ու ցրտին աշխատում էին 14—15 ժամ, առավոտից մինչև մութն ընկնելը, տասական մարդուց բաղկացած խմբերով, վերակացուների աչալուրջ հսկողության տակ, առանց հանգստյան օրերի, առանց նորմալ ճաշի ընդմիջման, միայն օրվա վերջում տար կերակուր ստանալով։

---

[1] Սուլլան Միհրդատի հետ պատերազմելու ժամանակ գերեվարեց մոտ 200 հազար զինվոր ու ապա և նրանց մեծ մասին ստրկության վաճառեց։

Ստրուկներն ապրում էին մասնատված, ըստ աշխատանքի բնույթի, միմյանցից անջատ (մի տեղ՝ վարողները, մի տեղ՝ խաղողագործները), խղճուկ քոլիկներում (6—14 քառակուսի մետր), որտեղ ապրում էին 2—5 մարդ, այնտեղ պատերը ծեփաթափ էին, հատակը կավից էր, կահկարասին՝ թախտ, վերմակ, ներքնակ, բարձ, մի քանի աման (ամֆորաներ, կճուճներ, ափսեներ, ձկնապուրի թաս), երբեմն՝ ճրագ և երկանք՝ շփոթի ցորեն աղալու համար։ Նույն տեղում գտնվում էր նեղ պատուհանների շարանով էրգաստուլը անհնազանդների համար։ Ստրուկները սնվում էին հացով, հաճարով, թթու դրած և թարմ բանջարեղենով, ձիթապտղով, թզով, բակլայով։ Նրանց բաժին էր ընկնում նաև որոշ քանակությամբ պանիր, կաթնամթերք, կարագ և գինի։ Կալվածքի վարչությունը, սակայն, հաճախակի մթերք գողանալով՝ կրճատում էր ստրուկների մթերաբաժինը։ Սանր աշխատանքի և դժվար պայմանների հետևանքով ստրուկները հաճախակի հիվանդանում էին։ Ճիշտ է, կալվածատիրոջ ցուցումով նրանց արագորեն բուժում էին հենց իրենք՝ ստրուկ-բժիշկները։ Բայց տերերի այդ «հոգատարությունը» մեկ նպատակ էր հետապնդում, որպեսզի նրանք իրենց հիվանդությամբ նշանակալի վնաս չբերեին տերերին։ Մեր և հիվանդ ստրուկներին հաճախ չանում էին վաճառել։ Եթե այդ բանը չէր հաջողվում, նրանց տանում էին Տիբերի էսկուլապ կղզին և թողնում բախտի քմահաճույքին։

Գյուղական ստրուկների այս խավը առանձնահատուկ ծանր պայմաններում էր գտնվում, ամենաանգութ շահագործման էր ենթարկվում։ Գերլարված աշխատանքի շնորհիվ, ինչպես վկայում է Ցիցերոնը, երկու տարում նրանք տերերին փոխհատուցում էին իրենց ձեռքբերման գինը։

Բայց նույնիսկ այդ կարգի ստրուկների համար, որոնց մեջ հատկապես եռում էր ցասումը, ատելությունը և վրեժի ծարավը, ստրկատերերը ժամանակ առ ժամանակ փոքրիկ տոնախմբություններ էին կազմակերպում. գարնանը, ապրիլին, ի պատիվ հին իտալիկական կրակի աստվածուհի, անասնահոտի և հովիվների հովանավորող Պալեսի (տոնախմբությունը կոչվում էր Պալիլիաներ), իսկ բերքահավաքից հետո, խաղողահավաքից հետո (դեկտեմբերի 17—19-ը) Սատուրնալիաներ։ Սատուրնալիաները կազմակերպվում էին ցանքսերի աստված Սատուրնի պատվին։ Այդ օրերին հասարակական գործերը կանգ էին առ-

նում, մեղանչածների պատիժները վերացվում էին, նվերներ էին բաժանվում, գինարբուքներ կազմակերպվում, ընդհանուր ուրախություն էր տիրում։ Դեկտեմբերի 19-ին տերերը սեղանի շուրջ սպասարկում էին իրենց ստրուկներին և նստում նրանց կողքին։ Ստրուկները շատ էին գնահատում իրենց կարճատև հանգստի օրերը, ծիծաղում ու երգում էին խաչմերուկներում կազմակերպվող խաղերում, ծղոտ էին վառում և թռչում կրակի վրայով։ Այդ տոնական ազատ օրերին գյուղական ստրուկներն այնքան բուռն ու խնդագին էին հանգստանում, որ «հարևանները հպիվ էին դիմանում նրանց ուրախության պոռթկումներին»։

Ամուսնական հարաբերությունների հարցում քաղաքային և գյուղական ստրուկների վիճակն առանձնապես բարդ էր։ Հռոմեական օրենքը չէր ճանաչում նրանց ամուսնությունները (ամուսնությունը և դրանից բխող քաղաքացիական կյանքի բոլոր նորմերը ազատների արտոնությունն էր)։ Ստրուկին թույլատրվում էր միայն կապի մեջ մտնել և կենակցել։ Այդ պատճառով քաղաքային ստրուկների մեծ մասը կին էր գտնում պանդոկներում՝ թեթևաբարո սպասուհիների կամ սրնգահարուհիների շրջապատից (նրանց հետ էժանագին գինի էին խմում և տաքանալով նետվում էին խելահեղ պարերի մեջ) կամ էլ Սուբուրայի՝ հռոմեական ամենազզվելի և ամենավատահամբավ թաղամասերից մեկի, հասարակաց տներում, որտեղ ստրուկները գիշերներ էին անցկացնում և որտեղ կուրտիզանուհիները երկու ասսա վճարով «կուրացուցիչ ջահերի փայլի տակ հայտնվում էին առանց հագուստի» (Հորացիոս)։

Իհարկե, որոշ բացառություններ էլ էին լինում. վերջ ի վերջո ստրուկների տիրային-ամուսնական հարաբերությունների կարգավորումը կախված էր տիրոջ ցանկությունից և մարդասիրությունից[1]։ Եվ քիչ չէին այնպիսի տերերը, որոնք փաստորեն հակառակ օրենքի թույլ էին տալիս ստրուկներին ունենալ ընտանիք կամ դրա պես մի բան (նման ստրկատերերը ղեկավարվում էին կամ մարդասիրական սկզբունքներով, կամ տնտեսական նկատառումներով, կամ էլ շրջահայեցությունից դրդված՝ ընտանեկան կապեր ունեցող ստրուկը դառնում էր ավելի հա-

[1] Մարդասեր ստրկատերերը սովորաբար հենվում էին Պլատոնի հեղինակության վրա, որն իր «օրենքներում» ասում էր. «Ստրուկների հետ հարկավոր է լավ վերաբերվել, չպետք է նրանց վիրավորել և նույնիսկ, եթե հնարավոր է, նրանց հետ վարվել ավելի արդարացի, քան հավասարների հետ»։

մակերպվող և աշխատասեր)։ Արդյունքը լինում էր այն, որ ստեղծվում էին բավականին ամուր, երկարատև (30—40 տարով) միություններ՝ բազմաթիվ երեխաներով։ Դրա շնորհիվ տնային ստրուկները հաճախ ոչ միայն հայր, այլև պապ էին ունենում։ Ստրուկների ընտանիքները ստեղծվում էին հռոմեական քաղաքացիական բոլոր պայմանականություններից անկախ. պատահում էր, որ երկու ստրուկ ընկեր մեկ ընդհանուր կին էին առնում և ընդհանուր տնտեսություն վարում կամ ստրուկն ամուսնանում էր հարազատ քրոջ հետ և այլն։

Ընդհանուր առմամբ դաժան ու անողոք վերաբերմունքը ստրուկների նկատմամբ հռոմեական հասարակության մեջ բնավ էլ պատահական երևույթ չէր։ Բոլոր անտիկ պետությունների ղեկավարող վերնախավը համարում էր, որ ֆիզիկական աշխատանքն ամոթարեր է և մթագնում է միտքը, որ ազատ մարդը չպետք է զբաղվի դրանով, նրան վիճակված է զբաղվել քաղաքականությամբ, պատերազմով, գիտությամբ, արվեստով և վերջապես, ազատ ժամավաճառությամբ։ Դաշտում աշխատելը, անասուններ, մեղու, թռչուններ խնամելը, կերակուր պատրաստելը, հագուստ կարելը, ճանապարհներ, ջրմուղներ կառուցելը, քաղաքային կոյուղիները մաքրելը, արհեստներով զբաղվելը միմիայն ստրուկների և ստրկուհիների գործն էր։ Վերջիններս արժանի են արհամարհանքի, քանզի չեն կարող բարձրանալ հոգեկան բարձրագույն արժեքների աստիճանին, և նրանց հարկավոր է հրամայել կարողանալ։

Սպարտակի դարաշրջանում ստրկական աշխատանքը ամենուրեք քաղաքական և տնտեսական կյանքի հիմքն էր։ Ստրկավաճառական շուկաները բազմաթիվ էին՝ Դելոս, Կիպրոս, Քիոս կղզիներում, Աթենք, Եփեսոս, Հռոմ, Կապուա, Ակվիլեա քաղաքներում։ Ընդ որում ստրկավաճառները անվտանգության նկատառումներից դրդված՝ աշխատում էին որոշակի կարգ պահպանել, վաճառվողների մեծ մասը պետք է կանայք ու երեխաներ լիներին. քիչը՝ տղամարդիկ։

Գնորդները մանրակրկիտ զննում էին «կենդանի ապրանքը», ուշադրությամբ կարդում էին նրանց պարանոցից կախված ցուցանակները, ստիպում էին թռչկոտել, ուժը ցուցադրել, արտասանել։ Ստրուկը դին ուներ, երբ առողջ էր, գեղեցիկ, խելոք, որևէ արհեստ ուներ։ Ուշադրության էին արժանանում նաև ստրուկի «առանձնահատուկ հատկանիշները»։ Առևտուրը չեղյալ էր հայ-

տարարվում, եթե վաճառականը թաքցնում էր, որ ստրուկը փախել է նախկին տիրոջից, հանդես է եկել որպես գլադիատոր, խռովարար հակումներ է ունեցել և այլն (նման ստրուկների գլխին թասակ էին դնում, ռազմագերիները հասարակ գլխապատակ էին կրում)։ Գնած ստրուկին տերը նոր անուն էր դնում։ Ահա գրառումներից մեզ հասած հռոմեական ստրուկների տիպիկ անուններ. «Հուստոս՝ Մերկուրիոսի և Ցերերայի տաճարի ստրուկ, Բլանդոս և Մարանոս՝ Լարաների-Պենատների կոլեգիումի անդամներ, Վենուստոս՝ դորձակալ, Դեցիմիանոս, Էպաֆրա, Անտոս՝ գանձապահ, Մուտատոս՝ քարտուղար, Ագաթոն՝ բժիշկ։ Պրիմիոս՝ հանդերձապահ, Կոմունոս՝ ծառա, Թայիս, Ֆիրմոս՝ սենեկապետ, Փիլոկալոս՝ բաղնիսպան և այլն։

Այս և ուրիշ անունները (երբեմն, ասենք, պահպանվում էր նաև հին անունը) ստրուկներին տրվում էին ըստ նրանց անձնական հատկանիշների, ըստ զբաղմունքի, ըստ այն երկրի, որտեղից նրան բերել էին, վաճառականի կամ նոր տիրոջ անունով, մոդայի պահանջով, կամ տարբեր կենդանիների անուններով (արջ, գայլ և այլն)[1]։

Տարբեր երկրներից բերված բազմաթիվ ստրուկների խմբերի հետ մշտական և սերտ շփման հետևանքով հռոմեացիների մոտ աստիճանաբար որոշակի կարծիք էր ստեղծվում նրանց մասին։ Այսպես, օրինակ, Կրետե կղզուց բերված ստրուկին համարում էին ստախոս, Սիրիայինը՝ հասկացող և դիմացկուն, Փոքր Ասիայինը՝ հաճոյակատար և անառակ, Հունաստանինը՝ գեղեցիկ և մտավոր ցանկացած աշխատանքի համար պիտանի, Դալմացիայինը՝ կատաղի, Թրակիայից, Գալիայից, Գերմանիայից բերվածները՝ ռազմաշունչ, անվախ, լավ հովիվներ, Իսպանիայինը՝ արտակարգ ազատատենչ և վտանգավոր արկածախնդրություններին հակված։

Ինչպես հանրապետության, այնպես էլ կայսրության ժամանակաշրջանում տերերի վերաբերմունքը մեղսագործ ստրուկների նկատմամբ տարբեր էր։ Ամենախիստ ստրկատերերը առաջնորդվում էին «ծեծված փոյուգացին խելոքանում է»

---

[1] Վարոնն ասում էր, թե Եփեսոսից (ստրկավաճառական խոշոր շուկա) գնած երեք ստրուկներից մեկը ստանում է վաճառողի անունը՝ Արտեմիդորոս-Արտեմաս, երկրորդը՝ այն մարդի անունը, որտեղ նրան վաճառում էին Իոնիկոն, երրորդը՝ քաղաքի անունը՝ Եփեսոս։

առածով և առանց վարանման ճիպոտահարում էին նրանց։ Մարդասեր ստրկատերերը նախընտրում էին խուսափել նման մեթոդներից, բայց նրանց օրինակը դաժան տերերի վրա չէր ազդում։

Իրենք՝ ստրուկները, լավ էին հասկանում գոյություն ունեցող վիճակի անարդարացիությունը։ Մ. թ. ա. երրորդ դարի վերջի հեղինակ Պլավտոսի «Ամփիտրիոն» կատակերգության մեջ Սոսիոս արքայի ստրուկը հետևյալ կերպ է խոսում.

Ազնվականի ստրուկ լինելը ծանր բան է շատ,
Եվ էլ ավելի ծանր է ծառայել տիրոջը հարուստ։
Բանիր հա բանիր, գիշեր ու ցերեկ,— բայց քիչ է էլի։
Այս արա և այն։ Այս լսիր և այն։ Քեզ հանգիստ չկա։
Տերդ՝ հարուստ մարդ, դեռ մատը մատին չի խփել կյանքում,
Ինչ խելքին փչի, կարծում է ողջն էլ կարվի անպայման։
Այս է պետք ու վերջ։ Էլ չի չափչփի՝ գործը շա՞տ է, քի՞չ,
Հրամանն արդյոք ճի՞շտ է, թե՞ սխալ,— չի խորհի բնավ։
Անիրավության մի մեծ բաժին կա ստրկության մեջ,
Մեր վիճակված է ծանր տանջանքով կրել լուծն այդ մեծ։

Ստրուկները կատաղությամբ և բոլոր միջոցներով դիմադրում էին շահագործող տերերին, ձգտում էին վրդովմունք ու վնաս պատճառել նրանց. եզներին կորցնում էին, ծեծով ու աշխատանքով տանջում, անասուններին վատ էին կերակրում, լավ չէին վարում, պետք եղածից ավելի սերմացու էին շաղ տալիս, չկամությամբ էին մշակում ցանքսերը, կալատեղում խնամքով չէին վերաբերվում հասկերին, գողության հնարավորություն ստեղծում, սխալ հաշվարկներ կատարում և այլն։ Հաճախ սպանում էին դաժան տերերին։ Սենեկան ասում էր. «Հիշեցեք նրանց կողմից տանը դրված ծուղակներում զոհվածների, բացահայտ հարձակմամբ կամ խաբեությամբ զոհվածների օրինակները և կհամոզվեք, որ բռնակալների զոհերի քանակից պակաս չի նրանց (տերերի) քանակը, որ սպանվել են վրեժխնդիր ստրուկների ձեռքերով»։ Քիչ չէին նաև տերերի դաժանություններին չդիմացող ստրուկների ինքնասպանության և փախուստի դեպքերը։ Բայց փախստականը հաջողության հասնելու շնչին հնարավորություն ուներ։ Նա չէր կարող ապաստան գտնել տաճարում, ինչպես Հունաստանում էր (նման իրավունք չէր տրվում)։ Նրան անպայման բռնում էին, Հռոմում գոյություն ուներ հա-

տուկ մասնագիտություն՝ ֆուգիտիվարիուս («փախստական որսացող»)։

Հասարակական օրենքները և հռոմեացիների սովորությունները փախստական ստրուկների նկատմամբ շատ դաժան էին. ով թաքցներ փախստական ստրուկին, վիլիկոս լիներ, պլեբեյ թե աղնվատոհմիկ (առաջավոր փիլիսոփայական գաղափարներով տոգորված այդպիսի մարդիկ արդեն այն ժամանակ էլ գոյություն ունեին), համարվում էր գող, նա ենթակա էր պատժի և տուգանքի։ Տուգանվում էր նաև նա, ով «փչացնում էր ստրուկին», այսինքն՝ նրան համոզում էր անօրինական գործողություններ կատարել (գողություն, տիրոջ գույքային գործերի խճճում), փախուստ, որպեսզի թափառաշրջիկ դառնար, թովչությամբ զբաղվեր, որքան հնարավոր է շատ հաճախել զվարճալի հանդեսների կամ խռովարար դառնալ։

Պրովինցիաների կուսակալները, պրետորական կոհորտաների զինվորները պարտավորվում էին տերերին օգնել փնտրելու փախստական ստրուկներին, վերադարձնել գտնվածներին, նրանց բերել հասարակական վայրերը՝ քաղաքապետական մագիստրատներին, պահակախմբերի պրեֆեկտներին կամ սպասարկող անձնակազմին հանձնելու նպատակով։

Տերերին չենթարկվելու, փախուստի փորձ կատարելու և խռովություն բարձրացնելու համար ստրուկներին ճիպոտահարում էին, բանտարկում էրգաստուլներում, շղթայակապ էին անում։ Առանձնապես համառ փախստականներին խարանում էին կամ պարանոցին օղակ էին հագցնում՝ «Բռնիր ինձ, ես՝ փախստական եմ» մակագրությամբ։ Հաճախակի, խելքի բերելու նպատակով, նրանց աշխատելու էին ուղարկում հանքերը։ Հանքավայրերում նման բանտարկյալներ շատ կային։ Միայն Իսպանիայի արծաթահանքերում (Նոր Կարթագենի մարզ) աշխատում էին 40 հազար ստրուկներ։

Ստրկատերերը քաջ ծանոթ էին ստրուկների ամենօրյա գաղտնի դիմադրությանը և ձգտում էին կանխարգելել. զանազան արտոնություններով, խոստումներով նրանք կաշառում էին ստրուկների որոշ մասին, բաժանելով առավել վտանգավոր ստրուկներից (վերջիններս վերակացուների հսկողության տակ առավելապես աշխատում էին խաղողի այգիներում, շղթայակապ էին, գիշերում էին էրգաստուլներում, ստրկատերերը հանձին նրանց ակնհայտորեն տեսնում էին «ստահակների» և

«սրիկաների»)։ Այդ կարգի ստրուկների վիճակն առանձնապես ծանր էր։ Չնայած դրան՝ էրգաստուլներում բանտարկվածները չէին կորցնում հոգեկան կորովը և հաճախակի իրենց բանտերի պատերին թողնում էին լավատեսական մակագրություններ, օրինակ. «Ես երդվել եմ, որ այստեղից դուրս գալուց հետո կխմեմ տան ամբողջ գինին»։ Եվ դա դատարկ գլուխգովանություն չէր։ Ստրուկների հիմնական զանգվածը գոյության բուն պայմաններից, տերերի ժլատությունից ու կծծիությունից դիմում էր գողության։ Սենեկան, իհարկե, տերերի տեսակետն էր արտահայտում, երբ ասում էր (Նրա խոսքում էլ ուղղակիորեն զգացվում է դասակարգային թշնամանքը). «Ինչքա՜ն քաղցած գազաններ կան, որոնց շատակերությունը հարկավոր է բավարարել։ Ինչքա՜ն ծախս պետք է անել նրանց հագուստի վրա։ Ինչքա՜ն ջանք է պետք գողության սովոր նրանց ձեռքերին հետևելու համար։ Ի՜նչ հաճույք կա նրանում, որ մեզ ծառայում են մարդիկ, որոնք հեծեծում և ատում են մեզ»։

Որոշակիորեն, ծանր փորձից ելնելով՝ ստրուկների զգալի մասի շրջանում առաջանում է տերերին լիովին հնազանդվելու սեփական բարոյական կոդեքսը։ Պլավտոսի «Ուրվականներ» ստեղծագործության ստրուկներից մեկը հետևյալ կերպ է դատում. «Կաշխս մինչև այժմ մաքուր է, և հարկավոր է առաջիկայում էլ պահպանել հարվածներից։ Քանի դեռ կկարողանամ ինձ տիրապետել, նրան ծեծեր չեն սպառնա, որոնք թափվում են ուրիշների վրա։ Իսկապես, չէ՞ որ տերն այնպիսին է, ինչպիսին նրան ուզում են տեսնել ստրուկները, բարի՝ լավ ստրուկների նկատմամբ, դաժան՝ վատերի։ Նայե՛ք մեր ստրուկներին։ Գրեթե բոլորը անպետք, իրենց ունեցվածքը վատնող, հավերժ ծեծված ստրուկներ են։ Երբ նրանց կանչում ես, որ տիրոջ մոտ՝ քաղաք գնան, պատասխանում են. «Չեմ ուզում, դու ինձ ձանձրացրել ես։ Գիտեմ, թե ուր ես շտապում։ Դու չես համբերի զբոսանք կատարել մի տեղում։ Երդվում եմ Հերկուլեսով։ Դու կարող ես գնալ կերդ ստանալ, լավ ջորի»։ Ահա թե ինչ ստացա փութաջանությանս դիմաց և թողեցի գնացի։ Իսկ հիմա ստրուկների ամբողջ ամբոխի միջից միայն ես եմ քայլում տիրոջս հետևից։ Վաղը, երբ նա իմանա ինչ է կատարվել, վաղ առավոտից նրանց կպատժի գոտիով։ Ասենք, իմ մեջքն ինձ համար ավելի թանկ է, քան նրանցը։ Եվ նրանք ավելի վաղ կծանոթանան գոտու հետ, քան ես՝ պարանի»։

Նման բարդ սոցիալ-կենցաղային դրության մեջ շատ տարօրինակ է թվում այն, որ ստրուկներին խիստ հուզել է մահվանից հետո թաղման հարցը։ Ոչ մի խնայողություն չունեցող ստրուկի սովորական ճակատագիրն այսպիսին էր. գիշերով դիակը նետում էին Էսկվիլինյան բլուրի (հետագայում Մեկենասը այստեղ հրաշալի տուն կառուցեց, իսկ Տիտոս կայսրը՝ իր բաղնիքները) գերեզմանահորի մեջ։ Նման թաղումը նույնիսկ ստրուկների շրջանում ամոթաբեր էր համարվում և հոգու համար կործանարար։ Այդ պատճառով հարստավոր ստրուկներ ամբողջ կյանքում համառորեն գրամ հավաքելով իրենց ազատագրման համար, միաժամանակ միջոցներ էին կուտակում իրենց թաղման, գերեզմանի և տապանագրի համար։ Եթե ստրուկի կամ ազատագրի բախտը բերում էր և հաջողվում էր հարստանալ, նա իր համար ընդարձակ դամբարան էր կառուցում։ Իր գերեզմանում ուրիշին ընդունելը մեծագույն բարեհաճության նշան էր։ Քիչ չէր արիստոկրատների և հարստացած ազատագիրների թիվը, որոնք իրենց դամբարաններում տեղ էին հատկացնում բարեկամների, ազատագիրների և ստրուկների համար։ Ավելի հաճախ, սակայն, այլ կարգի դեպքեր էին հանդիպում, երբ մեռած ստրուկի ընկերները 2—3 հոգով փող էին դնում և թաղում՝ հուշարձանի վրա համապատասխան բանաստեղծություն փորագրելով։ Շատ ստրուկներ նախապես ընդունվում էին թաղման ընկերությունների մեջ կամ իրենց համար տեղ էին գնում ընդհանուր դամբարան-կոլումբարիումներում, որտեղ հանգուցյալի աճյունը պահվում էր հատուկ կավանոթի մեջ, մակագրված մարմարյա ցուցանակների տակ։

Իհարկե, անհրաժեշտ է սա մեկ անգամ ևս կրկնել, թե՛ ստրկատերերը, թե՛ ազատագիրները, թե՛ ստրուկները առօրյա կյանքում բնավ էլ միատեսակ չէին։ Շատ բան որոշում էին ոչ միայն դասային-դասակարգային դիրքը, այլև ընտանեկան ավանդույթները, դաստիարակությունը և անձնական բնավորությունը։ Բազմաթիվ անտիկ մակագրություններ, որտեղ էլ որ դրանք արված լինեն, վառ կերպով ցույց են տալիս այդ բանը, արտահայտում այն ժամանակվա որոշակի կենսական բախումները։ Ամենատարբեր դասերին պատկանող մարդիկ պատմում են իրենց, իրենց բարեկամների և տնեցիների մասին այսպես.

Ապարանք է շինում հարուստը, իմաստունը շինում է շիրիմ.
Սա՝ մարմնի օթևան կարճատև, այն մեկը տունն է իսկական,
Այստեղ մենք հյուր ենք փութանցիկ, իսկ այնտեղ ապրում ենք հարատև,
Այստեղ մեզ՝ անհանգիստ, փուչ մի կյանք, իսկ այնտեղ՝ անդորր հավիտյան...

«Սեկունդիանոս, անասնաբույժ, իր համար հավերժական կացարան պատրաստեց»։ «Կվինտոս Գրանիոս, Կվինտոսի ազատագիրը, Պրիմոս, սանդալի վաճառական Սուբուրայից, ապրեց 25 տարի»։

«Ես ցանկանում եմ, որպեսզի իմ մահվանից հետո ստրուկս՝ Կրոնիոնը ազատ արձակվի, եթե նա ազնվորեն վարի գործերը և ամեն ինչ հանձնի իմ վերոհիշյալ ժառանգորդին կամ կարգադրիչին, ինչպես և ցանկանում եմ նրան նվիրել ունեցվածքիս 1/20 մասը»։

Չնայած ներքին որոշ տհաճություններին, վաղվա օրը հռոմեական ստրկատերերին ներկայանում էր բավականին ապահով և երջանիկ։ Միայն մի բան էր անհանգստացնում՝ սերտորիոսական կուսակցության երկարաձգված դիմադրությունը։ Նայելով հետ՝ դեպի Սուլլայի մահվան (78 թ.) ժամանակները, իտալիկյան ստրկատերերը և սենատի զանազան խմբավորումների պարագլուխները կրկին ու կրկին մտաբերում էին անցած չորս տարիների քաղաքական զարգացման իրադարձությունները... Իսկապես, արդյոք իմաստ չունի՞ ընդառաջել սերտորիոսականներին և դադարեցնել համաքաղաքացիների միջև ծագած կործանարար պատերազմը։ Բայց հնարավո՞ր է ոտնահարել սենատի մենիշխանության սկզբունքը... Ինչպե՞ս ներում շնորհել նրանց, ում դեմ արդեն վեց տարի է անդուլ պայքար է մղվում։ Ինչպե՞ս հասնել ընդունելի կոմպրոմիսի[1]։

---

[1] *Ստրկատերերի դասակարգի տարբեր շերտավորումների (օպտիմատները ամեն գնով ցանկանում էին հաստատել սենատի մենիշխանության սկզբունքը, որանց հակառակորդները՝ պոպուլյարները՝ ժողովրդական ժողովի սուվերենիտետը, այսինքն՝ Հռոմի ազատ շարքային քաղաքացիների իշխանությունը) այս երկպառակտիչ պայքարը նշանակելիորեն թուլացնում էր ստրկատիրական դիկտատուրան։ Այնինչ ստրուկների կողմից (այդ դասակարգը հաճախակի պատերազմների և առևտրական գործողությունների շնորհիվ բազմանում էր, ընդ որում անընդհատ աճում էր նրա ինտելեկտուալ հզորությունը, քանի որ ստրուկների մեջ ավելանում էր ճարտարապետների, գիտնականների, ինժեներների, քերականների և այլ մասնագետների քանակը) սպառնալիքի աճը հրամայական պահանջում էր այդ դիկտատուրայի ուժեղացումը։*

III

Ահեղ Սուլլայի մահը (78 թ.) ոգեշնչեց մարիոսական կուսակցության մնացորդներին և աշխուժացրեց նրանց։ Բոլորը հույսերով լի էին, դժգոհներին ջերմացնում էին Սերտորիոսի տարած փայլուն հաղթանակների լուրերը։

Իսպանիայի և Իտալիայի միջև գնում-գալիս էին գաղտնի սուրհանդակները։ Մայրաքաղաք սկսեցին ժամանել հեռավոր ճամփաների փոշով ծածկված առաջին արտաքսյալները։

Ժողովրդական հավաքույթներում, հասարակաց տներում և պանդոկներում խոսակցություններ են պատվում սուլլայական ռեժիմի փոփոխության, աքսորյալների ներման, ձրի հացաբաժանումների վերականգնման անհրաժեշտության մասին։ Ագիտացիան զգուշորեն է տարվում։ Շատ բան լրիվ չի ասվում, վճռական պահը դեռևս չի հասունացել...

Իսկ սենատում ուժեղանում են վիճաբանությունները պահպանողական կուսակցության զանազան խմբավորումների միջև։ Դրանք հինգն էին։ Ամենաաջ թևում գտնվում էին մոլի սուլլայականները՝ գլխավորությամբ Կվ. Կատուլլոս Կապիտոլականի (մ. թ. ա. 120--60 թթ.), մի մարդու, որի «հեղինակությունն,— ինչպես Ցիցերոնն էր ասում,— միշտ ապրելու է մեր պետության մեջ»։ Նա ականավոր օպտիմատ էր, 102 թվականի կոնսուլ Կվ. Կատուլլոսի որդին, որը մասնակցել էր կիմվրների դեմ տարած հաղթանակին (ինքնասպան էր եղել 87 թվականին մարիոսական հեղաշրջումից հետո)։ Կվ. Կատուլլոս-որդուն, Ցիցերոնի բառերով ասած, «ո՛չ վտանգավոր մրրիկները, ո՛չ փառքի մեղմ զեփյուռը երբեք չէին կարողանում ճանապարհից շեղել, ո՛չ հույս տալ, ո՛չ վախեցնել»։ Ավելի ձախ դիրքերում էին կանգնած պահպանողական ռեֆորմատորները։ Նրանց պարագլուխները մեկը մյուսին փոխարինած երեք եղբայրներ էին. հռչակավոր հռետոր, 75 թվականի կոնսուլ Գայոս Ավրելիոս Կոտան (մ. թ. ա. 124—73 թթ.), Կեսարի հորեղբայրը և բարեկամը Լիբիոս Դրուզոսի, որն այդ բարեկամության պատճառով աքսորվեց և Հռոմ վերադարձավ միայն Սուլլայի հաղթանակից հետո, 74 թվականի կոնսուլ Մարկոս Ավրելիոս Կոտան, որը Քաղկեդոնի մոտ ջախջախվեց Միհրդատից և կորցրեց իր բոլոր 70 ռազմանավերը, հետագայում Բիթանիայում կատարած դրամաշորթության համար դատապարտվեց։ Լուցիոս Ավրելիոս Կոտան՝ 70 թվականի պրե-

տորը։ Հետագայում Կոտայի անվամբ կոչվեց դատարանի վերաբերյալ ռեֆորմը, որը վերացնում էր դրա ենթակայությունը սենատին, իսկ ավելի ուշ նա դարձավ կոնսուլ (65 թ.) և ցենզոր (64 թ.)։ Ցիցերոնը Կոտայի մասին խոսում էր մեծագույն գովեստով. «մեծագույն խելքի և ականավոր օժտվածության տեր այր է»։ Պահպանողական ռեֆորմատորների հետևից գնում էր Պոմպեոսի խումբը։ Ավելի ձախ տեղավորված էր Մարկոս Կրասոսի խումբը։ Ամենաձախ թևը գրավում էին Սուլլայից ներում ստացած նախկին մարիոսականները՝ Մարկոս Լեպիդոսի և 74 թվականին պրետոր եղած Պուբլիոս Ցետեգոսի գլխավորությամբ։ Վերջինս երևելի արիստոկրատական ծագում ուներ. նա 1-ին Պունիքական պատերազմի մասնակից, Հռոմի առաջին պերճախոս հռետոր, Սուլլայի ազգական, կոնսուլ Մ. Կոռնելիոս Ցետեգոսի սերունդից էր։ Ցիցերոնը այսպիսի կարծիք է հայտնում. «Նրա պերճախոսությունը լիուլի բավարարում էր պետական գործերի մասին ելույթներ ունենալու համար, որոնք նա լիովին ըմբռնում էր և հասկանում մինչև վերջին նրբությունները, այնպես որ սենատում նրան հարգում էին կոնսուլի կոչում ունեցող այրերից ոչ պակաս։ Բայց քրեական գործերում նա ոչինչ էր, իսկ մասնավոր գործերում՝ ոչ ավելին, քան մի ճարպիկ փաստաբան»։

Իր անձնական նպատակները հետապնդելով՝ Պոմպեոսը սկսում է առաջ մղել և գովաբանել Մարկոս Էմիլիոս Լեպիդոսին (մ. թ. ա. 120—77 թթ.)։ Պոմպեոսն ինքն արդեն քաղաքական կյանքում երևելի դեր էր խաղում։ Նա երիտասարդ էր (ընդամենը՝ 28 տարեկան), դեռ ոչ մի պետական պաշտոն չէր գրավում, բայց մարիոսականների դեմ մղած պատերազմում բացառիկ ծառայությունների համար արդեն արժանացել էր Սուլլայի ուշադրությանը և տրիումֆին։ Հասարակ քաղաքացիները և ռազմիկները նրան վերաբերվում էին հիացական դարմանքով. նա հրաշալի բնավորություն ուներ, մեծ խելք ու տակտ, փայլուն գիտեր զինվորական գործը, պատերազմի ժամանակ շրջահայաց էր, մարտում՝ քաջարի։ Պոմպեոսին դուր էր գալիս ռազմիկների և համաքաղաքացիների սերը։ Խանդավառ, փառասիրական հույսերը նրան նոր գործողությունների էին մղում։ Նա ցանկանում էր փառքով հավասարվել իր հորը և նույնիսկ Սուլլային։ Պոմպեոսը հպարտանում էր, որ ինքը որդին է հռչակավոր զորավար Պոմպեոս Ստրաբոնի, որը արյունակցա-

կան կապ ուներ ականավոր պոետ, հռոմեական սատիրայի ստեղծող, մեծ զորավար Սկիպիոն Էմիլիանոսի բարեկամ Լուցիլիոսի հետ (նրա եղբայրը, որ սենատոր էր, Գնեոս Պոմպեոս Մեծի[1] պապն էր)։

Պոմպեոսը գիտեր շարքային քաղաքացիների նվիրական երազանքը՝ հասնել Սուլլայի սահմանած բռնակալական ռեժիմի թեկուզ փոքր-ինչ մեղմացմանը։ Այդ նպատակով էլ Պոմպեոսը ցանկանում էր Լեպիդոսին կոնսուլ դարձնել և նրա միջոցով անհրաժեշտ միջոցառումներ անցկացնել։ Նրան հաջողվում է իր կողմը թեքել օրենքից դուրս հայտարարելու կամպանիայի ժամանակ Սուլլայից վիրավորված Կրասոսին։ 82 թվականին շարությունից և ագահությունից դրդված, Կրասոսը մահապարտների ցուցակի մեջ էր մտցրել բռնակալի որոշ համախոհներին՝ իր անձնական թշնամիներին։ Դրա համար Սուլլան նրան հեռացրել էր հասարակական գործերից։ Թաքցնելով վիրավորանքը, Կրասոսն այժմ հակվածություն չէր ցուցաբերում օգնելու Կատուլոսի դյխավորած մոլի սուլլայականներին։

Լեպիդոսը շատ մեծատոհմիկ էր ու հարուստ, ինչպիսիք քիչ կային։ Նա շքեղ պալատ ուներ Հռոմում, հսկայական կալվածքներ և մեծ քանակությամբ թանկարժեք կայք, որը ձեռք էր բերել Սուլլայի հրամանով մահապատժի ենթարկված մարիոսականների կարողությունների առուծախի ժամանակ։ Նման ճանապարհով Սուլլան նպատակ ուներ Լեպիդոսին ընդմիշտ կապել իր հետ և նրան ատելի դարձնել նախկին կուսակցական ընկերների համար։ Բայց հաշվարկն իրեն շարդարացրեց։ Ձեռք բերելով օրենքից դուրս հայտարարվածների կարողությունը, Լեպիդոսն, այնուամենայնիվ, հակվեց Պոմպեոսի ղեկավարած օպոզիցիայի կողմը։

Լեպիդոսի կազմած պլանը (որի միակ նպատակը իր «բարեգործ» Պոմպեոսին որևէ կերպ առաջ մղելն էր) հաջողվեց

---

[1] Գնեոս Պոմպեոսի մահից հետո, երբ ոչինչ չէր ստիպում շողոքորթելու, Ցիցերոնը նրա մասին արտահայտվում էր հետևյալ կերպ. «Իմ հասակակից Գնեոս Պոմպեոսը, մեծագործությունների համար ծնված մի մարդ, իր պերճախոսությամբ մեծ փառքի կհասներ, եթե ավելի մեծ փառքի ծարավը նրան չտաներ դեպի ռազմական քաջագործությունները։ Նրա խոսքն առատ էր, նա կարողանում էր տեսնել գործի էությունը։ Իսկ ինչ վերաբերում է կատարմանը, ապա ձայնը արտասովոր հնչեղ էր, շարժումները՝ վսեմ արժանապատվությամբ լեցուն»։

փայլուն կերպով։ Պոմպեոսի համախոհներ Կրասոսի և Կոտայի միահամուռ օգնությամբ Լեպիդոսը հեշտությամբ դարձավ կոնսուլ։ Անմիջապես անցնելով ծայրահեղորեն տրամադրված նախկին մարիոսականների խմբավորումների կողմը, նորընտիր կոնսուլը միանգամայն բացահայտ և սուր ագիտացիա սկսեց սուլլայական կարգերի դեմ։

Լեպիդոսի ագիտացիան անհապաղ արձագանք գտավ Իտալիայի բոլոր այն մասերում, ուր հիմնավորվել էին սուլլայական վետերանները։ Էտրուրիայում բանը հասավ զինված խռովության։ Տեղացիները զենք վերցրին և սկսեցին ուժով արտաքսել սուլլայական վերաբնակիչներին։

Երբ այդ լուրը Հռոմ հասավ, Կատուլոսի սենատական ամբողջ խումբը սարսափահար սկսեց մեղադրել Լեպիդոսին խռովություն հրահրելու մեջ։ Բայց Պոմպեոսի, Կրասոսի և Կոտայի կողմնակիցները այս կամ այն պատճառով դեռևս Լեպիդոսի կողմն էին պահում։ Ուստի նրա դեմ ոչինչ չձեռնարկվեց։ Երկար վիճաբանություններից հետո սենատի մեծամասնությունը որոշեց զույգ կոնսուլներին ուղարկել Էտրուրիա Ֆեզուլիայի ապստամբած բնակիչներին զսպելու համար։ Իրար դեմ ծայրահեղորեն թշնամաբար տրամադրված կոնսուլներին սենատը երդմամբ պարտավորեցրեց միմյանց վրա զենք չբարձրացնել։

Էտրուրիա ժամանելով, Լեպիդոսը համոզվեց, որ վիճելի հարցերը զենքի ուժով հարթելն առայժմ վաղաժամ է. օպոզիցիայի ուժերը բավարար չէին։ Ֆեզուլիայի ապստամբների առաջնորդների խորհրդակցության ժամանակ նա կարողացավ համոզել կողմերին և խելամիտ հաշտությամբ դադարեցրեց հուզումները։

Սուլլայական վետերանները վերադարձան իրենց կալվածքները կամ նորերն ստացան։ Կվ. Կատուլոսը վերադարձավ Հռոմ, Լեպիդոսը մնաց Էտրուրիայում՝ «կարգ ու կանոնին հետևելու համար»։

Սակայն շուտով նրա վրա սկսեցին բողոքներ գնալ սենատ։ Կվ. Կատուլոսի կողմնակիցները մատնագրեր էին ուղարկում։ Լեպիդոսն ամենուրեք քաղաքացիական իրավունքներից զրկված և իրենց կալվածքներից արտաքսված մարդկանցից կամակատարներ է հավաքում, դայրացուցիչ ճառեր է արտասանում։

Իսկապես, Հռոմի ժողովրդական հավաքների ժամանակ արտահայտված մտքերը տարափոխելով՝ Լեպիդոսը շատ համարձակ էր խոսում.

— Հռոմի ժողովուրդը, որ մինչև վերջերս մյուս ժողովուրդների տիրակալն էր, այժմ զուրկ է իշխանությունից, փառքից, օրենքների պաշտպանությունից, զուրկ է հասարակական կյանք վարելու հնարավորությունից։ Ստորացված ժողովուրդը նույնիսկ բավարար չափով չունի այն սնունդը, որ տալիս են ստրուկներին։ Սուլլան ձեր համախոհների մեծամասնությունից խլել է քաղաքացիական այն իրավունքները, որոնք դուք տվել էիք բազմաթիվ փառավոր գործերի համար, իսկ նրա փոքրաթիվ կողմնակիցները, ասես թե ի պարգև իրենց կատարած հանցագործությունների, զավթել են հռոմեական ժողովրդի տոհմական կալվածքները։

Օրենսդրությունը, դատական որոշումները, պետական գանձարանը, թագավորությունների և պրովինցիաների վրա եղած իշխանությունը և, վերջապես, քաղաքացիների կենաց և մահու իրավունքը, այս բոլորը գտնվում էր մեկ մարդու ձեռքում, իսկ այժմ՝ քչերի։

Մի՞թե կան այնպիսի մարդկային կամ աստվածային օրենքներ, որոնք արհամարհված և պղծված չլինեն։ Հարկավոր է գործել, պետք է ջանալ նրանցից հետ խլել մեր ասպաղենքը։ Հետաձգել չի կարելի, և միայն խոստումներով ոչնչի չենք հասնի։ Նրանց ուժերը խարխուլ են և չնչին։

Ես ցանկություն չունեմ միայն իմ անձնական գործերով զբաղվել։ Վտանգավոր ազատությունը ես գերադասում եմ հանգիստ ստրկությունից։ Եթե համաձայն եք այս ամենին, ապա պատրաստ եղեք և աստվածների օգնությամբ հետևեցեք ձեր կոնսուլ Մարկոս Էմիլիոսին, որն ազատության վերականգնման պայքարում ձեր առաջնորդը կլինի...

Էտրուրիայում այսպես էր խոսում Լեպիդոսը, և հացի, մսի ու գինու վաճառականները (ժողովուրդը անհրաժեշտության դեպքում նրանց հետ էր հաճախակի շփվում) նրա ճառերի բովանդակությունը տարածում էին երկրով մեկ։

Հռոմում իր ժամանակի առաջին հռետոր, անկաշկանդ, ազատ և սրամիտ խոսքի տեր, հակառակորդի հետ վիճաբանության ժամանակ շատ հնարամիտ, նախկին կոնսուլ (91 թ.) և ցենզոր (86 թ.), Կվ. Կատուլլոսի կողմնակից, հնագույն սենատորներից մեկը՝ Լ. Մարցիոս Փիլիպոսն, առաջարկում էր անհապաղ խիստ միջոցներ ձեռնարկել և կոնսուլին հայրենիքի թշնամի հայտարարել։ Բայց սենատի օպոզիցիոն խմբերը տա-

պալեցին նրա առաջարկությունը։ Լեպիդոսի կողմնակիցներն ասում էին.

— Կոնսուլ Լեպիդոսը ոչ մի վտանգավոր բան չի կատարել, դրա համար նա ուժեր էլ չունի։ Իսկ անդգույշ բառերը, հայրե՛ր, պետք է ներել կարողանալ, քանզի ներել՝ նշանակում է բարձրացնել հռոմեական ժողովրդի վեհությունը։ Ասենք, եթե որոշ մարդկանց նա այդպիսի սարսափ է ներշնչում, հետևաբար պետք է նրան անհապաղ ուղարկել պրովինցիա որպես կուսակալ։

Այս առաջարկությանը սենատի բոլոր խմբերը համաձայնեցին, և Լեպիդոսը, դրամ ու լեգատներ առած, մեկնեց հարևան Անդրալպյան Գալլիա որպես կուսակալ։

Բայց դաշինքը չստացվեց։ Լեպիդոսը պրովինցիայում գրտնվելը չօգտագործեց որպես հարստացման միջոց, ինչպես սովորաբար անում էին կուսակալները։ Ավելի մեծ եռանդով նա սկսեց իրեն տրամադրված միջոցները ծախսելով՝ կաշառել հռոմեական քաղաքացիներին, իր կողմը գրավել բոլոր դժգոհներին, մեծ ու լավ զինված զորաբանակ ստեղծել։

Կատուլլոսն ու նրա կողմնակիցները կատաղել էին։ Լուցիոս Փիլիպոսը սենատում Լեպիդոսի գործողությունների վերաբերյալ հարց ունենալով, կրկին ցանկացավ հայրերին վճռական միջոցներ ձեռնարկելու դրդել։

Բայց սուլլայական հռետորների առաջարկությունները մերժվում էին։ Սենատի մեծամասնությունը նախընտրում էր Լեպիդոսի «նպատակները» պարզել պատգամախոսների կանխագուշակումների միջոցով։ Վերջիններս լուրջ տեսքով խորհրդակցում էին, հետո Անդրալպյան Գալլիայի կուսակալի մոտ դեսպաններ էին ուղարկում խաղաղության դաշինք ու համաձայնագիր կնքելու վերաբերյալ բարեխոսելու համար։

Այդ ձգձգումների շնորհիվ Լեպիդոսին հաջողվեց պրովինցիայում ուժեղ բանակ հավաքել։ Գործը մոտենում էր հանգուցալուծմանը։ Կոնսուլի գանձարանը լիքն էր դրամով (մասնավոր անձանց և պետական գանձարանից հատկացված միջոցների հաշվին)։ Նա կայազորները տեղափոխում էր պրովինցիայի մի քաղաքից մյուսը՝ սահմանին ավելի մոտ։ Սկսել էր հրապարակել նոր օրենքներ, որոնք Հռոմի ազդեցիկ շատ մարդկանց դուրը չէին գալիս։

Սենատի նոր նիստում Լուցիոս Փիլիպոսը կատաղի հար-

ձակում գործեց հակառակորդների վրա, հայրերին մատնացույց անելով, թե իրադրությունը ինչքան է դեպի վատը փոխվել։

— Բայց այն ժամանակ Լեպիդոսն ավելին չէր, քան մարդասպանների և ծառաների հրոսակախմբի գլուխն անցած մի ավազակ։ Նրանց ոչինչ չարժեր կյանքը կորցնել հանուն օրավարձի։ Այժմ նա պրոկոնսուլ է՝ զինվորական իշխանությամբ, որը ոչ թե գնված է, այլ ձեր կողմից կամավոր տրված, նա լեգատներ ունի, որոնք մինչև այժմ պարտավոր են նրան ենթարկվել։ Դեռ ավելին. նրա մոտ հիմա հավաքվում են զանազան խավերից սրիկաներ, որոնց նեղում է կարիքը, որոնց հուզում են հանցավոր կրքերը և տանջում է գործած հանցանքների գիտակցումը։ Դրանց համար հանգիստը՝ խառնակչություն է, իսկ խաղաղությունը՝ տագնապ։ Դրանց բան ու գործը խռովություն խռովության հետևից բարձրացնելն է, պատերազմ՝ պատերազմի հետևից սկսելը։ Մի ժամանակ նրանք գնում էին Սատուրնինիոսի հետևից, ավելի ուշ՝ Սուլպիցիոսի, հետո՝ Մարիոսի և Դամազիպոսի, իսկ հիմա նրանք Լեպիդոսի օգնականներն են։ Հայրե՛ր, ձեր ուշադրությունը թախանձագին հրավիրում եմ դրա վրա։ Թույլ մի՛ տվեք, որ հանցավոր հանդգնությունը վարակի պես մեկ հպումով տարածվի անմեղների վրա։ Եթե վատ մարդկանց պարգև են տալիս, ապա դժվար կլինի յուրաքանչյուր մարդու համար աղնիվ մնալ՝ պարգև չստանալով։ Թե՞ դուք սպասում եք, որ Լեպիդոսն իր զորքով քաղաք ներխուժի, սրի ու հրի հետքեր թողնի այնտեղ։

Այս անգամ սուլլայական սենատորները որոշ բավարարվածություն ստացան. սենատը կարգադրեց Լեպիդոսին պետության մեջ հանգստությունը չխռովելու համար թողնել պրովինցիան և Հռոմ ժամանել բացատրություններ տալու համար։

Լեպիդոսը, որի պրոկոնսուլական տարին (77 թ.) դեռևս նոր էր սկսվել, հրաժարվեց կատարել սենատի որոշումը։ Պատասխան նամակով նա պահանջեց հաջորդ տարվա (76 թ.) համար երկրորդ կոնսուլություն, տրիբունների լիակատար իշխանության, օրենքից դուրս համարվածների ու նրանց ժառանգների քաղաքացիական ու գույքային իրավունքների վերականգնում։

Լեպիդոսի պահանջները սենատում սուլլայականների շրջանում փոթորիկ առաջ բերեցին։ Նրանք հայտարարում էին.

— Հարկավոր է Լեպիդոսին անհապաղ հայրենիքի թշնամի

հայտարարել, նրա նկատմամբ վճռական բոլոր միջոցները ձեռնարկել։

Բայց Պոմպեոսի, Կրասոսի և Կոտայի կողմնակիցները հակառակն էին պնդում.

— Հայրե՛ր, նման կտրուկ միջոցների ոչ մի անհրաժեշտություն չկա։ Լեպիդոսն ատում է հուզումները և քաղաքացիների կոտորածները։ Ջինվելու ոչ մի անհրաժեշտություն չկա։

Համոզվելով, որ սենատում համապատասխան լիազորություններ չեն ստանա, սուլլայականներն, իրենց ղեկավարների առանձին խորհրդակցությունից հետո, որոշեցին գաղտնի զինվել։ Անմիջապես վետերանների գաղութները սուրհանդակներ ուղարկվեցին՝ Հռոմի պատերի տակ զինվորական ճամբարներ դնելու կարգադրությամբ։ Ժողովրդի համակրանքը շահելու նպատակով, նրանք սենատում շտապություն որոշում կայացրին վերականգնել 40 հազար քաղաքացիներին հացի բաժանումը, ամսական 5 մոդի, 6,3 աստա գնով, այսինքն՝ շատ էժան։

Իմանալով թշնամիների ռազմական նախապատրաստությունների մասին, Լեպիդոսը որոշեց առաջինը հարված հասցնել և հրամայեց զորքերին շարժվել։ Այսրալպյան Գալլիայում զորքերի մի մասը թողնելով այդ պրովինցիայի կուսակալ, իր համախոհ, Մ. Մարիոս կրտսերի նախկին կողմնակից, գաղութները Կապուա տանելու պլանի նախաձեռնող, պրետոր Մ. Բրուտոսի հրամանատարության ներքո, Լեպիդոսը մնացած զորքով շտապեց Հռոմ։

Անդրալպյան Գալլիայի պրոկոնսուլի ապստամբության լուրը սենատում շատ սուր վեճերի առիթ տվեց։ Գլխավորը կրկին Լ. Փիլիպոսի հերթական ելույթն էր։ Իր սովորության համաձայն նա մեղադրանքներ տեղաց Լեպիդոսի հասցեին, հետո հարձակվեց «հաշտարարների» վրա և ճառն ավարտեց եռանդուն առաջարկությամբ.

— Հայրե՛ր, ես ձեզ խորհուրդ եմ տալիս հետևյալը. քանի որ Լեպիդոսը ինքնակամորեն զորք է հավաքել ամենավատ ու պետության համար թշնամական մարդկանցից և արշավում է քաղաքի վրա մեր դասի կամքին հակառակ, ապա թող ինտերեքս Ապիոս Կլավդիոսը պրոկոնսուլ Կվինտոսի և զինվորական իշխանություն ունեցող մյուս մարդկանց հետ պաշտպանի քաղաքը և հոգ տանի, որպեսզի պետությունը որևէ վնաս չկրի։

Այս խորհրդակցությունը վճռեց վիճաբանության ելքը։

Սենատը, քաղաքի դարպասների մոտ հավաքված ռազմիկների սպառնալիքներին ենթարկվելով, որոշում կայացրեց արտակարգ դրություն մտցնելու մասին։ Քաղաքով մեկ, ասես քամու բերանն ընկած, տարածվում էին Լեպիդոսի դեմ Լուցիոս Փիլիպոսի փշոտ խոսքերը.

— Ամենաանազնի՛վ և ամենաանամո՛թ մարդ, դո՞ւ պետք է մտածես քաղաքացիների հոգսերի և վշտերի մասին, երբ տանդ յուրաքանչյուր իրը ձեռք ես բերել կամ զենքով, կամ հանցագործությամբ։ Դու՝ դավաճանդ, յուրայիններիդ երդմնազանց առաջնորդդ և բոլոր ազնիվ մարդկանց թշնամիդ երկրորդ անգամ կոնսուլություն ես խնդրում, կարծես թե առաջինն արդեն հանձնել ես։ Համաձայնության հաստատման միջոցը փնտրում ես պատերազմում, որի պատճառով կորչում է ամենայն բարիքը։ Ինչպե՞ս չես ամաչում մարդկանցից և աստվածներից, որոնց վստահությունը շահելով կամ ավելի շուտ երդումներ տալով, այդքան անգամ վիրավորել ես նրանց։

Շատերին մեծ հռետորի այս ճառը ստիպեց հետ քաշվել Լեպիդոսից, շատերին՝ տատանվել։ Օպոզիցիան ասկվեց։ Պոմպեոսի և Կրասոսի սպասումներն ի դերև ելան. սենատին վախի միջոցով ստիպել սուլլայական կարգերը վերացնել՝ չհաջողվեց։ Բացի այդ, Լեպիդոսի ծրագրի վերջին կետերը նրանց միանգամայն դուր չեկան։ Առանձնապես դժգոհ էր Կրասոսը, որը հարբատությունն էր դիզել օրենքից դուրս հայտարարվածների կալվածքների առուծախի միջոցով։

Այժմ պահպանողական կուսակցության բոլոր առաջնորդները հետագա գործողությունների վերաբերյալ արագորեն համաձայնության եկան։ Քաղաքի պաշտպանությունը հանձն առան Կվ. Կատուլլոսը և Լ. Լուկուլլոսը։ Պոմպեոսը զորքերի մի մասով պարտավորվեց շարժվել դեպի Այսրալպյան Գալլիա և այն մաքրել Բրուտոսի զորքերից։

Մեծ դրամայի հանգուցալուծումը չհապաղեց։ Լեպիդոսը հայտնվեց քաղաքի մոտ, ճակատամարտով գրավեց Տիբերի աջ ափը, բայց սենատի զորքերը Լ. Լուկուլլոսի հրամանատարությամբ կարողացան նրան ջախջախել Մարսյան դաշտում (Կվ. Կատուլլոսին, որը ռազմական գործից հեռու էր, զորքի ղեկավարությունը պատկանում էր զուտ ձևականորեն)։

Նահանջելով, Լեպիդոսը զորքերի մի մասը թողեց հարևան Ալբա քաղաքում։ Նա հույս ուներ սենատի զորքերը կաշկանդել

պաշարումով, որպեսզի կարողանար էտրուրիայում կրած պարտությունից ուշքի գալ՝ Բրուտոսի զորքերի օգնությամբ։

Հույները չարդարացան։ Պոմպեոսը Բրուտոսին պաշարեց Մուտինայում (նա ինքն սպասում էր, թե ինչով է վերջանալու հակատամարտը Հռոմի մոտ), իմանալով Լեպիդոսի պարտության մասին, հակառակորդին տրամադրեց կապիտուլյացիայի։ Նա խոովարար պրետորին երդմամբ կյանք ու ազատություն խոստացավ։ Բրուտոսը, տատանվելով հանձնվեց։ Բոլորի ներկայությամբ Պոմպեոսը նրան ազատ արձակեց։ Սակայն շուտով, ճանապարհին Պոմպեոսի ընկեր և նրա գաղտնի հանձնարարությունները կատարող Հեմինիոսը ձերբակալեց Բրուտոսին ու սպանեց։ Այսպիսով հաղթական զորավարը և՛ «աղնիվ խոսքի» տերը եղավ, և՛ ազատվեց մի մարդուց, որը նրա գաղտնի բանսարկությունների մասին չափազանց շատ բան գիտեր։

Ալբայի կայազորը կապիտուլյացիայի ենթարկվեց։ Լեպիդոսն ինքը, Լուկուլլոսի և Պոմպեոսի զորքերի ճնշման տակ՝ նահանջեց ծովափ։ Մեկ անգամ էլ ճակատամարտեց, ապարդյուն փորձ անելով շրջել անբարեհաճ ճակատագրի անիվը, բայց ստիպված եղավ թողնել Իտալիան և մեկնեց Սարդինիա կղզին։

Այստեղ Լեպիդոսը եռանդուն պայքար սկսեց կղզու սուլլայական կուսակալի դեմ, բայց չդիմանալով կարուկ կլիմայափոխությանը՝ շուտով մահացավ դողէրոցքից։ Զարալեղու հակառակորդները ծիծաղելով պնդում էին.

— Մեր Լեպիդոսը մեռավ վշտից, չէ՞ որ կղզի մեկնելու հաջորդ օրը կինը նրան դավաճանեց։

Լեպիդոսի զորքերի մնացորդները նրա գլխավոր օգնական դարձած պրետոր Մ. Պերպերնան տարավ Իսպանիա՝ Սերտորիոսին միանալու։

Հռոմում ժամանակավոր անդորր տիրեց։ Երկին նրա քաղաքացիները վերադարձան բոլորը բոլորի դեմ ամենօրյա մանր պայքարին։ Նման պայքարը հռոմեական կյանքի ամենատիպական գիծն էր։ Այդ մասին գրել է դեռևս բանաստեղծ Լուցիլիոսը, որն ապրել է մինչև Սպարտակի ժամանակները (մ. թ. ա. 180—102 թթ.) և պատկանում է նշանավոր զորավար Սկիպիոն Էմիլիանոսի մտերիմների խմբին.

Դե՛, իսկ հիմա ծեգից գիշեր, և՛ լի օրով, և՛ կիրակի
Այսպես ահա թե՛ ժողովուրդ, թե՛ սենատոր,— ով էլ լինի,—
Գալիս ֆորում, դոփդոփում են ամբոխի հետ ու չեն գնում։

Եվ ամենքը մեն-մի բանի, մի գործի են թունդ նվիրված,
Թե ոնց իարի մեկը մեկին, ոնց մարտնչի նենգ պայքարում,
Ճարպկորեն շողոքորթի, ներկայանա պատվարժան մարդ,
Ցանցը գցի դիմացինին,— թշնամի են դարձել, ասես, ամենքն իրար և բոլորին...

Լեպիդոսի պարտությունը փշրեց արագ և վճռական հարվածով սուլլայական ռեժիմը թոթափելու դեմոկրատական շրջանների հույսերը։ Այժմ միակ հույսը Սերտորիոսն էր։ Պ. Ցետեգոսը և նրա ընկերները միանգամայն հնարավոր էին համարում, որ մի գեղեցիկ օր Հաննիբալի նման, Ալպերն անցնելով և սենատի զորքերը կործանելով՝ նա կներխուժի Իտալիա։ Բայց բաղձալի ժամն առայժմ հեռու էր։ Ակամա ստիպված էին վերադառնալ քիչ բան խոստացող և անշնորհակալ կոնստիտուցիոն ռեֆորմների ուղին։ Դրանց իրականացման միջոցը հասարակական կարծիքին անընդմեջ ապավինելն էր, ֆորումում՝ ժողովրդական տրիբունների միջոցով, դատարանում՝ քաղաքական հողի վրա մեղադրանքներ հարուցելու միջոցով։

Նման մեղադրողներից մեկն էր երիտասարդ արիստոկրատ Հուլիոս Կեսարը։ Փորձելով փողոցային ագիտատորի դերը, բոլորի հետ հիասթափություն ապրելով առաջնորդի նկատմամբ, որը չէր կարողացել հաղթանակի հասցնել, և իսկապես էլ, ավելի վատ արդյունք էր ստացվել, քան ինքն սպասում էր, Կեսարը որոշեց իր ուժերը փորձել այլ բնագավառում։ Լեպիդոսի պարտությունից անմիջապես հետո (77 թ.) նա ձեռնարկեց սուլլայական կուսակցության նշանավոր գործիչ, Կիլիկիայի նախկին կուսակալ, մեծահարուստ կոնսուլ Գ. Դոլաբելլայի դատավարությունը։ Դոլաբելլան Լեպիդոսի կոնսուլության ժամանակ (78 թ.) Մ. Ավրելիոս Սկավրոսի կողմից արդեն դատի էր ենթարկվել շորթողության համար և դատապարտվել էր։ Կեսարը որոշել էր վերականգնել մեղադրանքը, բայց իրադրության շեշտակի փոփոխության պատճառով հաջողություն չէր ունեցել։ Սակայն Կեսարը չէր հանձնվում։ Հաջորդ տարին (76 թ.) նա որպես մեղադրող հանդես եկավ Սուլլայի հեծելազորի նշանավոր պետի՝ Հունաստանի նախկին կուսակալ, կաշառակերությամբ հռչակված Կայոս Անտոնիոս Հիբրիդայի դեմ և կրկին անհաջողության մատնվեց։ Սուլլայականները նրա հասցեին սկսեցին սպառնալիքներ տեղալ, և Կեսարը նպատակահարմար

դատավ միառժամանակ հեռանալ Հռոմից։ Նա մեկնեց Հռոդոս կղզին իր կրթությունը լրացնելու և հռետորական արվեստը կատարելագործելու նպատակով, ինչը երկու դեպքում էլ նրան այնքան շատ քիչ էր ծառայել։

Բայց Կեսարի անհաջողություններն օրինաչափ էին։ Սենատական դատարանում սենատոր դատապարտելը շատ դժվար գործ էր, իսկ նման պայմաններում՝ բացարձակորեն անհնարին։ «Գողությունն ու թալանը,— ինչպես գրում է գերմանացի նշանավոր պատմաբան Թ. Մոմզենը,— այսպես ասած, օրինականացված սովորություններ էին։ Կաշառակերության գործերով զբաղվող հանձնաժողովը դարձել էր մի այնպիսի հիմնարկ, որտեղ կուսակալությունից վերադարձած սենատորները հարկ էին վճարում տանը մնացած իրենց գործընկերների օգտին»։

Հասկանալի է, որ Ցեսեդոսը և իր ընկերները քաջ գիտակցում էին բացահայտ ելույթների ապարդյունությունը։ Բայց այդ պահին ուրիշ ավելի լավ միջոց չէին տեսնում։

Ֆորումում պայքարը սովորաբար ավելի սուր ձևեր էր ընդունում։ Այստեղ իշխում էին հռոմեական քաղաքացիության ստորին շերտերի պարագլուխները. այդպիսիք էին 76 թվականին ժողովրդական տրիբուն Գ. Սիցինիոսը, 75 թվականին՝ Կվինտոս Օպիմիոսը, կոնսուլ Լուցիոս Օպիմիոսի՝ Կ. Գրաքկոսի նկատմամբ հաշվեհարդարի գլխավոր հրահրիչի ժառանգը, 74 թվականին՝ Լ. Կվինկցիոսը, ժառանգը Գ. Կվինկցիոսի՝ ոչ ազնվագարմ մեկի, որը Հաննիբալի (Լիվիոս) դեմ մղած պատերազմում շատ քաջագործություններ էր կատարել և աղմկալից փառքի էր արժանացել[1]։ Նրանց դեմ ստիպված էին լրջորեն պայքարել սուլլայական կոնսուլները. 76 թվականին՝ Գ. Կուրիոնը, 75 թվականին՝ Լ. Օկտավիոսը, 74 թվականին՝ Լ. Լուկուլլոսը։

Բախումների սրությունը կախված էր արտաքին քաղաքական իրադրությունից։ Տրիբուններն իրենց ծայրահեղորեն հանդուգն էին պահում։ Ֆորումում նրանք կազմակերպում էին տա-

---

[1] Ցիցերոնը տանել չէր կարողանում այդ ժողովրդական տրիբուններին, նրանց բոլորին խռովարարներ համարելով։ Հավաքույթների ժամանակ նա ամեն կերպ ծանակում էր նրանց խոսքը՝ պարդ, խոսակցական կոպիտ սրամտություններով համեմված («որոշ հռետորներ արդեն չեն խոսում, այլ հաչում են»)։ Գ. Սիցինիոսի մասին նա այսպես էր արտահայտվում. «Պատվաղուրկ մարդ է, բայց մոլի ծաղրաբեր է, հռետորի միայն այս հատկությունը ունի»։

պալումներ, պահանջում էին վերականգնել իրենց լիիրավ իշխանությունը և հեծյալների դասի խիստ դատարանները, Սուլլայի կողմից ոչնչացված գրաքննությունը։ Նրանց վարքը զայրացնում էր բուն օպոզիցիայի չափավոր տարրերին։

Սուլլայականները մեծագույն ատելությամբ էին վերաբերվում տրիբուններին։ Բայց նրանց հաշիվը տենել չէին կարող։ Վերջիններիս թիկունքին կանգնած էին սենատի հզոր խմբավորումների պարագլուխները՝ Պոմպեոսը, Կրասոսը, Գ. Կոտան, Ցետեգոսը։

Վերջին հաշվով վեճի նյութը վճռելու էր, այդ հասկանում էին բոլորը, Սերտորիոսի դեմ մղվող պատերազմը։ Հենց նրա հաջողություններն ու ձախողումներն էին սենատում պայքարող կողմերի հարձակումների և պաշտպանության գլխավոր նյութը։

Իսկ Իսպանիայում գործերն ընթանում էին հետևյալ կերպ։ Լեպիդոսին Իտալիայից արտաքսելուց հետո սենատի զորքերը տեղավորվեցին Հռոմի պարիսպների մոտ։ Պոմպեոսը, նոր փառքով պսակված, պահանջեց իրեն հանձնել Սուլլայի կողմնակից, նրա կնոջ ազգական Մետելոս Պիոսին պաշտպանելու նպատակով Իսպանիա ուղարկվելիք լեգեոնների հրամանատարությունը։

Երիտասարդ զորապետի պահանջը սենատում շատերին դուր չեկավ։ Պոմպեոսը դեռևս ոչ մի պետական պաշտոն չէր զբաղեցնում, հետևաբար, մասնավոր անձ էր։ Այնինչ նրա պահանջը կապված էր իշխանության և պրոկոնսուլի բարձր լիազորությունների հետ։

Բայց իր տրամադրության տակ անձնվեր բանակ ունեցող Պոմպեոսի հետ վիճելու հարկ չկար։ Սենատը զիջեց և Լ. Փիլիպոսի առաջարկությամբ պրոկոնսուլի իշխանությունն ու Հեռավոր Իսպանիայում գլխավոր հրամանատարությունը հանձնեց մագիստրատուրա ստանալու կանոնները առանց քաշվելու խախտած այդ վտանգավոր երիտասարդ մարդուն։

77 թվականի ամռանը, այդ տարվա կոնսուլի հետ միասին Պոմպեոսը զորքով կտրեց անցավ Ալպյան լեռները։ Նա հնազանդեցրեց Լեպիդոսին աջակից ապստամբած գալլերին և աշնանը մտավ Պիրենեյան թերակղզի։

Առաջին երկու տարում (76—75 թթ.) Պոմպեոսը ռազմական գործողություններում անհաջողություններ էր կրում։ Սենատական մեծամասնությունը, ինչպես կրակից, վախենում էր նրա

հաջողություններից, նրան ո՛չ դրամ էր տալիս, ո՛չ էլ համալրումներ։ Դրան Պոմպեոսը պատասխանում էր Հռոմում սուլլայական կարգերի դեմ պայքարող ժողովրդական տրիբունների շրջանում բանտարկություններ սարքելով։ Բանակը պահելու համար նա ստիպված էր լինում գալլերից հաց և դրամ բռնագրավել։ Պոմպեոսի լեգեոնների ձմեռային օթևանները, գալլական հետևակի և հեծելազորի մշտական օժանդակ հավաքագրումները գալլական համայնքի վիճակն ավելի էին ծանրացնում։ Անհրաժեշտությունից դրդված՝ գալլերը հռոմեական կապալառուներից փոխառություններ էին վերցնում և խրվում էին անվճարելի պարտքերի մեջ։ Անվճարունակ պարտքատերերին խմբերով ստրուկ էին դարձնում և ուղարկում Իտալիա աշխատելու։ Այդ ամենը հակահռոմեական ագիտացիային սնունդ էր տալիս և Պոմպեոսի թիկունքը դարձնում էր շատ երերուն։

Սենատի նկատմամբ իրենց թշնամական տրամադրությունները ցուցաբերեցին նաև Իսպանիայի բնակիչները։ Երկիրը կուլտուրական էր (այստեղ բազմիցս գաղութներ էին հիմնել փյունիկացիները, կարթագենցիները, հույները), բնակիչներն աչքի էին ընկնում ազատասիրությամբ և ռազմատենչությամբ։ Հնագույն մի հեղինակ նրանց մասին գրել է. «Բնակիչների (իսպանացիների — Վ. Լ.) մարմինը միշտ պատրաստ է տանելու սովն ու ցրկանքները, ոգին՝ մահը։ Նրանք բոլորն ապրում են դաժան պայմաններում և խնայողաբար։ Պատերազմը գերադասում են խաղաղությունից։ Եթե օտարերկրյա թշնամի չկա, նրանք թշնամի են փնտրում սեփական երկրում... Այդ ցեղի շարժումները սրընթաց են, նրա ոգին անհանգիստ է, մեծամասնության համար մարտական ձին ու զենքը կյանքից թանկ են» (Հուստինիանոս)։

Պոմպեոսը հասկանում էր, որ պատերազմը դժվարին է լինելու։ Իրականում այդպես էլ եղավ։ 75 թվականի վերջին երիտասարդ զորավարը սենատին նամակ ուղարկեց։ Նամակում շատ պարզորոշ ասվում էր, որ անհրաժեշտ համալրում և դրամական օժանդակություն չստանալու դեպքում զորքով կվերադառնա Իտալիա։ 74 թվականի սկզբին, Լուկուլլոսի կոնսուլության ժամանակ, սենատը պաշտոնական նիստում լսեց Պոմպեոսի նամակը։ Այդ ժամանակ նոր պատերազմ էր հասունանում Միհրդատի դեմ, Պոմպեոսի վերադարձը շատ անպատեհ էր։ Սենատի կողմարահներում խոսում էին, թե Իսպանիայի ռազմական գործողությունների ընթացքից հիասթափված զորա-

պետը երազում է ավելի հեշտ ու շահավետ պատերազմի ուղարկվելու մասին։ Վերջինիս տակ նկատի ուներին Պոնտոսի արքայի դեմ մղվելիք պատերազմը։ Սակայն սենատական իմբերից ոչ մեկը, բացառությամբ Պոմպեոսի կողմնակիցների, չէր ցանկանում համաձայնել դրան։ Այդ պատճառով կոնսուլ Լ. Լուկուլլոսի (նա ինքն էլ էր ուզում գլխավորել պոնտական պատերազմը) առաջարկությամբ միջոցներ ձեռնարկվեցին Իսպանիայում գտնվող զորապետների կենսական պահանջները բավարարելու համար։

Անհանգիստ էր նաև Իլլիրիայում։ Այնտեղի կուսակալ պրոպրետոր Գ. Կոսկոնիոսն արդեն 3 տարի (մ. թ. ա. 76—74 թթ.) կռվում էր տեղացի ցեղերի դեմ։ Երկու տարի պաշարելուց հետո նա մեծ դժվարությամբ գրավեց նրանց գլխավոր ամրոցը՝ Սոլոնա քաղաքը։ Եվ այդ ամբողջ ժամանակ հռոմեական 50 հազարանոց բանակը ծվատվում էր կուսակցական բանսարկությունների (դրանք ուղղություն էին ստանում Հռոմից)։ 74 թվականին պրոպրետորի լեգատ Մ. Աթիլիոս Բուլբոսը (Ցիցերոնը Ցետեգոսի այդ կողմնակցի մասին ասում է. «Նա ընդհանրապես սրիկա է, ստոր, խարեբա, բազմաթիվ նողկալի արարքներով իրեն վարկաբեկած մարդ») փորձում էր խռովություն բարձրացնել ամենաազդեցիկ լեգեոնում, հետագայում ամբողջ բանակն իրեն ենթարկելու միտումով։ Անհաջողության մատնվեց և 73 թվականին պետական դավաճանության մեղադրանքով դատի ենթարկվեց։ Պ. Ցետեգոսը իր ազդեցության շնորհիվ, այնուամենայնիվ, կարողացավ արդարացնել նրան։ Սպարտակյան պատերազմի ժամանակ Բուլբոսը բաղմիցս հանդես է եկել որպես դատավոր և, ինչպես Ցիցերոնն է վկայում, հռչակվել իր ծախու լինելով։

Գործերն Իլլիրիայից ավելի վատ վիճակում էին Մակեդոնիայում ու Թրակիայում։ 78—76 թվականների ընթացքում Մակեդոնիայի պրոկոնսուլ Ապիոս Կլավդիոսը ապարդյուն փորձեր էր կատարում տիրելու մակեդոնա-թրակական սահմանում կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող մարզին։ Նա մահացավ մարտական գործողությունների ժամանակ, իսկ նրա փոխանորդը, Սուլլայի երևելի զորապետներից մեկը՝ Գ. Սկրիբոնիոս Կուրիոնը թրակացիների դեմ մի շարք ճակատամարտերից հետո ստիպված եղավ զբաղվել պրովինցիան հյուսիսից ապստամբությամբ անհանգստացնող դարդաններով (74 թ.)։

Իրադրությունը շիկացած էր նաև հանրապետության հեռավորարևելյան սահմանների մոտ։ Սենատը կասկածանքով էր հետևում հայոց արքայի գործողություններին։ Տիգրանը բացահայտորեն մտադրություն էր ցուցաբերում դառնալու Սելևկյան քայքայված թագավորության ժառանգորդը։ Նա իր իշխանությունը տարածել էր Ծփրատի արևելյան ափի վրա և փորձում էր իրեն միացնել Կապադովկիան։ 78 թվականին այդտեղից նա Հայաստան էր տեղափոխել 12 քաղաքների ազգաբնակչությանը (հռոմեացիները դա համարում էին նրա վտանգավոր պլանների իրականացման առաջին քայլը)։ Տիգրանը նվաճեց Կիլիկիայի, Սիրիայի և Փյունիկիայի մի մասը։ Սելևկյանների Անտիոք քաղաքը դարձավ նրա մայրաքաղաքներից մեկը։ Իր գլխավոր մայրաքաղաքը նա կառուցեց Հայաստանի և Միջագետքի սահմանի վրա, այն անվանելով Տիգրանակերտ (Տիգրանի քաղաք)։

Իրեն համարելով մեծ արքաներ Դարեհի և Քսերքսեսի ժառանգորդը, Տիգրանն ամենուրեք երևում էր ոչ այլ կերպ, քան ծիրանի կապայով, երկար ու լայն տաբատով, բարձր տյուրբանով և արքայական վարսակալով։ Ցիցերոնի բառերով ասած, Տիգրանին ամենուրեք ուղեկցում և ստրկամտորեն ծառայություններ էին մատուցում նրա չորս «թագավորները»։

Սենատին լուրջ մտահոգություն էր պատճառում նաև Միհրդատի դիրքորոշումը։ Վերջինս մեծ զորք էր հավաքել, լավ զինել ու հանդերձավորել էր այն։ Առանձին զորամասեր պոնտոսյան արքունիքում գտնվող իտալիկական վետարանդիների օգնությամբ կազմակերպված էին հռոմեական օրինակով։ Միհրդատը կրկին իրեն էր ենթարկել նախկին հողերը։ Նա նոր դաշնակիցներ էր որոնում։ Դրամով ու նվերներով ծանրաբեռնված սուրհանդակներ էր ուղարկում Իլլիրիայի, Թրակիայի, Սկյութիայի, Գալատիայի տիրակալների մոտ։ Միհրդատը դուստրերին նշանեց Եգիպտոսի և Կիպրոսի նոր թագաժառանգների՝ Պտղոմեոս Ավլետոսի (Սրնգահար) և Պտղոմեոս Կիպրացու հետ։ Ի պատասխան արքայական այդ նշանագրությունների սենատը երկու թագավորներին էլ հայտարարեց որպես Սուլլայի կողմից եգիպտական գահին նստեցրած և անփառունակ սպանված Ալեքսանդր II (նա հազիվ գահ բարձրացած՝ զոհվեց Ալեքսանդրիայի ապստամբության ժամանակ) «ապօրինի» զավակներ։ Թագավորի հույժ կասկածելի կտակը, որով նա իրեն ժառան-

պորդ էր համարում հռոմեական ժողովրդին, կրկին քաղաքական վիճաբանությունների առարկա դարձավ։

75 թվականի վերջում աֆրիկյան Կիրենա թագավորությունը և պոնտական հարևան Բիթանիան սենատը հայտարարեց որպես պրովինցիա։ Այս կցման հիմք ծառայեց մահացած Նիկոմեդես III թագավորի կտակը։ Նրա ժառանգը նույնպես «ապօրինածին» հայտարարվեց։

Միհրդատն այդ բանն ընդունեց որպես վիրավորանք ու մարտահրավեր և վճռեց, որ հիմա արդեն պատերազմն անխուսափելի է (նա գիտեր նաև, որ հռոմեացիները դեռևս 77 թվականին ուժեղացրել էին կիլիկյան բանակը։ Պաշտոնական հավաստիացմամբ, սենատն այն ժամանակ թշնամական հարձակումների էր սպասում՝ կապված Լեպիդոսի ապստամբության հետ)։ Հռոմեական սենատն առավել հաստատեց արքայի կասկածները, երբ հրաժարվեց գրավոր վավերացնել Սուլլայի և Միհրդատի կողմից բանավոր կնքված Դարդանոսի խաղաղության պայմանագրի կետերը։

75 թվականի վերջին խորվարար Ֆիմբրիոսի[1] երկու նախկին սպաների՝ Լ. Փանիոսի և Լ. Մագիոսի միջոցով Միհրդատը ռազմաքաղաքական դաշինք կնքեց հռոմեական սենատի բացահայտ թշնամի, Մարիոսի կողմնակից Սերտորիոսի հետ։ Պլուտարքոսը նրա մասին գրել է. «Սերտորիոսի մեծահռչակ փառքը տարածվեց ամենուրեք, Արևմուտքից եկածները, օտարերկրյա ապրանքների նման, նրա մասին եղած լուրերով հեղեղեցին ամբողջ Պոնտոսը»։ Սերտորիոսը ընդունեց արքայի տիրապետությունը Պափլագոնիայում, Բիթանիայում և Կապադովկիայում (այս տերությունները Միհրդատը ըստ Դարդանոսի դաշնագրի կորցրել էր)։ Նա նաև մի օժանդակ ջոկատ ուղարկեց պրոպրետոր, մարիոսական կուսակցության մահացած առաջնորդի աղգական, սենատոր Մարկոս Մարիոսի հրամանատարությամբ։ Իր կողմից Միհրդատը Իսպանիա ուղարկեց 40 նավ և 3 հազար տաղանդ՝ ռազմական ծախսերի համար։

Միհրդատի պատերազմական նախապատրաստությունները,

---

[1] Ֆիմբրիոսը մարիոսական կոնսուլ Վ. Ֆլակոսի (86 թ.) հեծելազորի պետն էր։ Նա սպանեց իր հրամանատարին և զորքի իշխանությունը ձեռքը վերցրեց։ Երբ զինվորներն սկսեցին անցնել հաղթական Սուլլայի կողմը, ինքնասպան եղավ (85 թ.)։

ինչպես նաև բուն պատերազմը հռոմեացիների վրա, շատ ուժեղ տպավորություն գործեց։ Ցիցերոնն այդ մասին այսպես է գրել. «Այդ ընթացքում Միհրդատը իրեն հատկացված ժամանակը չօգտագործեց նրա համար, որպեսզի ձեզ մոռանալ տար նախորդ պատերազմի մասին, այլ այն բանի, որ միջոցներ ձեռք բերեր նոր պատերազմ վարելու համար։ Իր հարևան բոսպորցիների դեմ արշավելու պատրվակի տակ նա ուժեղ նավատորմ կառուցեց և հանդերձավորեց, զանազան ցեղերից հսկայական հրոսակախմբեր հավաքեց և նույնիսկ դեսպանների հետ նամակներ ուղարկեց Իսպանիա այնպիսի առաջնորդների, որոնց դեմ այն ժամանակ մարտնչում էինք. նրա նպատակն այն էր, որ մեր դեմ պատերազմը ընթանար երկու թատերաբեմերում, մեկը մյուսից շատ հեռու, տիեզերքի հակադիր ծայրերում, ծովում և ցամաքում, երկու թշնամական զորքերի դեմ, բայց մեկ ծրագրով, և որպեսզի մենք մեր տերության համար կռվելիս, մեր ուժերը բաժանեինք»։

Վերջապես, սենատի համար ծանր մտահոգության մի առարկա էլ ծովահեններն էին։ Նավարկելով ոչ մեծ բեռնանավերով, ժամանակի ընթացքում նրանք սկսեցին միավորվել ամենախսկական տորմիղների մեջ։ Նրանց պարագլուխները փորձված նավապներ էին։ Ամենանշանավորներն էին կիլիկիացի Աթենոդորոսը, բութանիացի Հերակլեոնը, կրետացի Լասթենեսը և Պանարոսը, հույն Պիրգանիոնը և սիրիացի Սելևկոսը։

Ծովահեններն ամուր կապեր էին հաստատել հունական առափնյա քաղաքների հետ։ Նրանց մոտ նոր խոշոր նավեր էին կառուցում, վաճառում էին ավարը։ Ծովահենները Միջերկրական ծովը գրեթե անանցանելի էին դարձրել։ Նրանք կողոպտում էին հարուստ տաճարները, ռազմատուգանք էին նշանակում բազմաթիվ քաղաքների և բնակավայրերի, իտալական հանգրստավայրերից առևանգում էին ազնվազարմ հռոմեացիների և մահվան սպառնալիքով փրկագին պահանջում։ Սիցիլիան, ինչպես և մյուս պրովինցիաները, խիստ տուժում էր նրանց ասպատակություններից։ Ծովահենների դեմ պայքարելու կոչված կուսակալները վատ էին կատարում իրենց պարտականությունները։ Այդ զարմանալի անկարության պատճառների մասին Ցիցերոնը միանգամայն անկեղծորեն ասել է. «Մեր զորապետները, հազվադեպ բացառությամբ, ամեն տարի հարստանում էին մեր դանձարանի հաշվին, մինչդեռ նրանց նավատորմիղ-

նելը, որոնք պատրվակ էին եղել նրանց նշանակումներին, ուրիշ ոչինչ չէին անում, բացի նոր պարտություններով ավելացնելով մեր խայտառակության տարեգրությունը»։

Բոլոր արշավախմբերից, որոնք հատուկ ուղարկվում էին ծովահենների դեմ, հաջողություն ունեցավ միայն մեկը՝ պրոկոնսուլ Պուբլիոս Սերվիլիոսի հրամանատարած նավատորմը։ Պայքարը հինգ տարի տևեց (մ. թ. ա. 79—75 թթ.) և ավարտվեց ծովահենների գլխավոր որջերի կործանումով։ Հաղթանակողը Իսավրացի պատվավոր մականվանն արժանացավ։ Ցիցերոնը Սերվիլիոսի մասին ամենաբարձր կարծիքին էր և նրան կոչում էր «պետության զարդ ու լուսատու», «ծովում ու ցամաքում կատարած իր քաջագործությունների համար,— բացականչում էր հռետորը,— նա արժանի է, որպեսզի զուք (այսինքն՝ հռոմեացիներդ) պատերազմի հարցերում նրա կարծիքը համարեք ամենածանրակշիռը»։

Բայց և այնպես Պ. Սերվիլիոսն էլ չկարողացավ ծովահենությունն արմատախիլ անել։ Մայրահեղ պայմաններից դրդված՝ այդ մոլի արկածախնդիրների շարքերն էին մղվում հաղարավոր մարդիկ։ Նշանավոր պատմաբան Մոմզենի բառերով ասած, դրանք «Կրետե կղզում հավաքագրված՝ ազատ արձակված վարձկան ռազմիկներ էին, Իտալիայի, Իսպանիայի և Ասիայի ավերված քաղաքների քաղաքացիներ, Սերտորիոսի և Ֆիմբրիոսի զորքի դինվորներ ու սպաներ, բոլոր ազգերի բարոյալքված մարդիկ, բոլոր պարտված կուսակցություններին պատկանող հալածված փախստականներ, բոլոր նրանք, ովքեր դժբախտ էին և քաջ, իսկ այդ սարսափելի ժամանակներում որտե՞ղ վիշտ ու հանցագործություն չկար»։

74 թվականին Միհրդատի, Հայոց արքա Տիգրանի և Իսպանիայի մարիոսական տիրակալ Սերտորիոսի օգնությամբ ծովահենները կրկին ծով դուրս եկան։ Նրանք նոր նավեր կառուցեցին, զինվեցին և սկսեցին նավարկել, հանձնարարություն ստանալով քայքայել Իտալիայի մատակարարումները, խափանել պրովինցիաներից հացահատիկի առաքումը։

Իտալիան սովորաբար բավականաչափ սեփական հաց էր ունենում։ Բայց երեք տարի տևած երաշտը նրան արտակարգ ծանր դրության մեջ էր դրել։ Սուլլայական նոր հեծյալներն անմիջապես օգտվեցին դրանից, է՛լ ավելի բարձրացրին գները։ Հռոմի և իտալիկական մյուս քաղաքների պլեբսը հուզվեց։ Մարդ-

կային զանգվածները սովից փրկվելու համար նետվեցին մայրաքաղաք։ Ամենուրեք կոչեր էին լսվում վտանգավոր դրության դեմ միջոցներ ձեռնարկելու մասին։ Բայց հացի հետ կապված խարդախություններին մասնակից սենատը չէր շտապում...

Նման իրադրությունում ճնշված օպոզիցիան կրկին գլուխ բարձրացրեց։ Նրանք, ովքեր ավազակությամբ զբաղվելով թաքնվում էին լեռներում, սկսեցին համարձակորեն հայտնվել քաղաքներում։ Հռոմի ֆորումում և Մարսյան դաշտում սկսեցին կրքերը եռալ։ Ժողովրդական տրիբուն Լ. Կվինկցիոսը, մեծաթիվ համախոհներով շրջապատված, դարձավ դատարանի մշտական այցելուն։ Նա այնտեղ իր հակառակորդների համար մոլեգին ճեսարաններ էր սարքում։ Հետո տրիբունը ժողովրդական հավաքներ էր կազմակերպում, և դեմոկրատիայի հռետորները խռովարար ճառերի փոթորիկ էին բարձրացնում։ Ժողովրդական ամբոխը, Ցիցերոնի վկայությամբ «կատաղության էր հասնում» և շարժվում էր ավերելու իր թշնամիների տները։ Կոնսուլ Լ. Լուկուլլոսը ստիպված էր լինում ամբոխին ցրել զինվորների օգնությամբ։

Հետագայում Ցիցերոնը 74 թվականը սարսափով հիշում էր որպես «ժողովրդական կրքերի լիակատար բորբոքման ժամանակաշրջան»։ Նրա և բոլոր սուլլայականների կարծիքով Լ. Կվինկցիոսը բուռն հավաքների օգնությամբ բացահայտորեն քայքայում էր պետության հիմքերը։ Իսկապես, Լ. Կվինկցիոսի, ինչպես նաև Ցետեգոսի ճառերը հսկայական ժողովրդականություն էին վայելում։ Պ. Ցետեգոսը լինելով պրետոր՝ «ամբոխին սպառնում էր խոսքով և գործով»։ (Պլուտարքոս)։ Դրա շնորհիվ նա այն ժամանակ պետության մեջ ամենամեծ ազդեցությունը ձեռք բերեց։

Մարսյան դաշտի և ֆորումի խռովարարական ճառերը զուր չանցան։ Առավել շատ մարդիկ էին փախչում անտառները և գինք վերցնում, սկսվեցին հաճախակի կողոպուտները ճանապարհների վրա և գյուղական վայրերում։ Նույնն անում էին այն ստրուկները, որոնց տերերը չէին կարողանում կամ չէին ցանկանում կերակրել նրանց։

Ահա նման իրադրության մեջ Կապուա քաղաքում գտնվող Լենտուլլոս Բատիատոսի դպրոցից փախան 78 գլադիատորներ։ Նրանք էլ սկիզբ դրեցին ստրուկների վիթխարի ապստամբությանը, որը պատմության մեջ հռչակվեց Սպարտակի ապստամբություն անունով։

Գլուխ երրորդ

ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I

Սպարտակը գլադիատորների դպրոցում մնաց վեց տարի։ Այդ ընթացքում բազմիցս ելույթներ էր ունեցել արենայում որպես մուրմիլոն և իր քաջությամբ, գեղեցիկ մարտնչելու ունակությամբ, որն առանձնապես գնահատում էին հռոմեացիները, աղմկոտ փառքի էր արժանացել։ 76 թվականին Սպարտակը ազատություն ստացավ և պաշտոնաթող եղավ։ Որպես բարձրագույն կարգի գլադիատորի՝ նրան թողեցին դպրոցում ուսուցանելու։ Այդ դպրոցի լանիստ Լենտուլոս Բատիատոսը հպարտանում էր իր դպրոցին այդքան փառք բերած գլադիատորով։ Նա հաշվի էր առնում Սպարտակի կարծիքը և ամեն ինչում վստահում էր նրան։ Դրանից Սպարտակը հիանալիորեն օգտվեց իր նպատակներին հասնելու համար։ Բատիատոսի դպրոցում նա գտավ մարդկանց այն խավը, որոնց օգնությամբ, նրա կարծիքով, կարելի էր փորձել Հռոմի կարգերը հաջողությամբ տապալել։

Սպարտակը սկսեց աջակիցներ հավաքել մուրմիլոնների միավորման շրջանում և իր սաների մեջ, որոնք անվախ, կամային, կազմակերպչական հակումներ ունեցող, փիլիսոփայությանը և գրականությանը հասու, նշանակալից ռազմական փորձ ունեցող մարդիկ էին։ Առանձնապես ձգտում էր իր կողմը գրավել Միհրդատյան առաջին պատերազմի մասնակիցներին, որոնց անհաշտ թշնամանքը Հռոմի նկատմամբ հայտնի էր բոլորին։ Նրանցից շատերին գլադիատորների դպրոցի համար Սպարտակն ընտրել էր անձամբ, լանիստի հետ հաճախելով ստրկավաճառական շուկաներ և էրգաստուլներ։ Սպարտակը Բատիատոսի դպրոց պատրաստակամությամբ ընդունում էր նաև իրեն հարմար փախստականների՝ տերերի մոտ վատ համբավ ձեռք բերած մարդկանց։ Նախատեսված վտանգավոր գործում Սպարտակի մերձավորագույն օգնականներ են դառնում երեքը. Կրիքսոսը (մոտավորապես մ. թ. ա. 110—72 թթ.), Էնոմայոսը (մոտ մ. թ. ա. 109—73 թթ.) և Գանիկոսը (մոտ մ. թ. ա. 110—72 թթ.)։ Դավադիրների առաջին խմբի կազմակերպման գործում նրա մերձավորագույն աջակիցն Էնոմայոսն էր։ Հնում այդ անունը

շատ տարածված էր աղնվատոհմիկների շրջանում։ Հայտնի է տրոյացի հերոս Էնոմայոսը՝ Էնեասի զինակիցը։ Ավելի շատ հայտնի է Հելլիդայի Պիսա քաղաքի թագավորը, որն իրեն Արեսի որդին էր համարում։ Տանտալոս արքայի որդի Պելոպսը նրան խարդախությամբ սպանեց մարտակառքերով մրցության ժամանակ՝ կաշառելով Միրտիլոս արքայի կառավարչին (սա հանեց մարտակառքի անիվը պահող սոնին, անիվն ընթացքի ժամանակ դուրս թռավ, և արքան ջախջախվեց)։ Իսկ արքայի և Պելոպսի վեճը Հիպոդամյա արքայադստեր ձեռքն ստանալու համար էր։ Էնոմայոսի համար գուշակել էին, թե նա զոհվելու է իր դստեր ամուսնության հետևանքով, և թագավորն սկսեց գլուխն ազատել իր համար անցանկալի փեսացուներից մարտակառքերով մրցությամբ, որոնց ժամանակ նա պարտվածներին սպանում էր նիզակի հարվածով։ Հնում այս թեմայով շատ հայտնի էր Եվրիպիդեսի «Էնոմայոս» ողբերգությունը։

Գանիկոսը, հավանաբար, ծնունդով ինսուբր էր։ Ինսուբրները Անդրպադանյան Գալլիայի ամենաբազմաքանակ հզոր ցեղն էր, Հաննիբալի դաշնակիցը, հռոմեացիների կատաղի թշնամին, որը բազմիցս կռվել էր Հռոմի դեմ։ Ինսուբրների մայրաքաղաքը Մեդիոլանն էր («Մեդերի երկիր»), ստրատեգիական կարևոր դիրք ունեցող հին ու հզոր մի քաղաք։ Մ. թ. ա. III դարում հռոմեացիները նվաճեցին այն։

Կրիքսոսի մասին հետագայում հատուկ կխոսվի։

Սպարտակի այս բոլոր օգնականներն էլ ազատ խոսում էին կելտերեն և գերմաներեն։ Այս պատճառով, ինչպես նաև ելնելով այն բանից, որ պատերազմի ժամանակ նրանք գալլերի ու գերմանների հրամանատարներն էին, հին հեղինակներն առանց վարանման նրանց գալլեր կամ գերմաններ են հայտարարում ըստ ցեղային պատկանելիության։

Շնորհիվ իրենց խելքի, կրթվածության, հրաշալի արիության, մահվան նկատմամբ արհամարհանքի, անձնական օրինակով ու կրակոտ պերճախոսությամբ իրենց ընկերներին գրաչելու ունակության, Էնոմայոսը, Կրիքսոսն ու Գանիկոսը գլադիատորների միջավայրում և դրանից դուրս հսկայական հեղինակություն էին վայելում։ Նախկին փախուստների, Իտալիայում և պրովինցիաներում դեղերումների շնորհիվ նրանք արժեքավոր տեղեկությունների պաշար ունեին, որն այժմ շատ էր պետք գալիս նրանց գերագույն առաջնորդին։ Ապստամբության

ժամանակակից, պատմաբան Սալյուստիոսը բարձր էր գնահատում Սպարտակի օգնականներին. «Նրանք,— գրում է նա,— ալատ ոգու տեր և փառաբանված մարդիկ էին»։

II

Նման համախոհներով և ընկերներով Սպարտակը ձեռնարկեց դավադրությունը, նպատակ ունենալով, հին պատմաբան Սինեղիոսի ասելով, «կործանել տիրող կարգերը»։ Հանդես գալով որպես գլխավոր ագիտատոր, իր կամքով և հեղինակությամբ, իր անհերքելի փաստարկով, թե «հանուն ազատության ավելի լավ է ծայրահեղ վտանգի դիմել, քան կյանքը վտանգի ենթարկել՝ արենայում ուրիշներին զվարճացնելու համար» (Ապիանոս), նա շատ շատերին համոզում է միանալ դավադրությանը։

Որպես փառաբանված գլադիատոր, Սպարտակը մուտք ուներ ազնվատոհմիկներից շատերի տները, ուր բազում ստրուկներ կային, որոնց մի մասը բավականին բան դիտեր հռոմեական քաղաքական կյանքի գաղտնիքներից և իրենց տերերի գաղտնիքներից[1]։

Սպարտակի մեծ և լարված գործունեության հետևանքով դավադրություն է ծագում, որի կենտրոնը Կապուան է։ Նրա բջիջները տարածվում են հարավային Իտալիայի տարբեր մարզերում (Ապուլիա, Լուկանիա, Բրուտիում և այլն), թափանցում պրովինցիաները, Հռոմ, ազնվատոհմիկների տները։

Դավադրությունն աճում էր՝ նորանոր մարդիկ ներգրավելով իր շարքերը[2]։

---

[1] Ազատագիր Պուբլիոս Սիրոսը՝ Սպարտակի և Կեսարի ժամանակակիցը, մի շարք ֆարսերի հեղինակ, իր միջավայրի կարծիքն արտահայտելով՝ գրել է. «Տիրոջ համար մեղք գործելը առաքինություն է», «Իրեն խելոք պահող ստրուկը ինչ-որ չափով նաև տեր է», «Եթե չկամությամբ ես ենթարկվում՝ ստրուկ ես, եթե կամավոր՝ օգնական»։

[2] Անցյալ տասնամյակներում էլ դավադրություններ եղել էին։ Այսպես, մ. թ. ա. 186 թվականին Տարենտոսի (Ապուլիա) շրջակայքում բացահայտված «հովիվների դավադրությանը», համաձայն հռոմեական պրետորի հետաքննության, մասնակցում էր առնվազն 7 հազար մարդ։ Սիցիլիայի ստրուկների ապստամբության հաջողության (մ. թ. ա. 137—132 լուրն ստանալիս՝ Ատտիկայում ի պատասխան դրա դավադրության մասնակցեց մոտ հազար մարդ, իսկ բուն Իտալիայում՝ Սինուեսում 4 հազար ստրուկ։

Ընդունած բազմամարդ հավաքներին, դավադիրների մոտ գաղտնապահությունը լավ հիմքերի վրա էր։ Եվ երբ ինչ-որ տեղ, կազմակերպության հեռավոր բջիջներում մատնիչ հայտնվեց, ապա նա համարյա ոչինչ չգիտեր. ո՛չ դավադրության ղեկավարների անունները (որի շնորհիվ նրանք խուսափեցին ձերբակալությունից), ո՛չ էլ նույնիսկ դավադիրների քանակը (ուստի և հին հեղինակներն անգամ այդ հարցում խճճվում են և հակասում միմյանց)։

Բայց և այնպես մատնիչն իրեն չկորցրեց։ Պարգև ստանալու համար նա ժամանեց Հռոմ և քաղաքային պրետոր Գ. Վերեսին հայտարարություն արեց ապստամբության նախապատրաստման մասին։ Անհանգստացած պրետորը սենատ գումարեց և զեկուցեց իր ջանքերի շնորհիվ բացահայտված գլադիատորական դավադրության մասին։ Սենատը որոշում կայացրեց. պրետորը պետք է կապեր հաստատի Կապուայի իշխանությունների հետ, վերջիններիս պարտավորեցնի հետաքննել գործը և մեղավորներին պատժել։ Պրետորն անմիջապես սուրհանդակի հետ նամակ ուղարկեց Կապուա։ Բայց... դավադիրների կապավորական գիծն ավելի արագ գործեց։

Սպարտակն առաջինն ստացավ մատնության լուրը։ Նա իր ղեկավարներին խորհրդի հավաքեց։ Որոշում կայացրին չսպասել Մեգալեսյան[1] խաղերի (ապրիլի 4—10) բացման օրվան, (խաղերի կազմակերպիչ Գ. Անտոնիոս Հիբրիդան պատրաստվում էր հանուն հռոմեական ժողովրդի արենայում քավության զոհ մատուցել և արդեն պայմանավորվել էր գլադիատորների մի ջոկատ գնելու վերաբերյալ), այլ անհապաղ սկսել ապստամբությունը[2]։

Խոհանոցից խլելով դանակներ, շամփուրներ ու պարան-

---

[1] Մեգալեսյան խաղերը փոխառնված են փռյուգիական կրոնական ծեսերից, Պեսինունտից, որը համարվում էր աստվածների Մեր կացարանը։ Այս սրբավայրի փառքը իրեն հավատարը չուներ։ Մեգալեսյան խաղերը Հռոմ ներմուծվեցին Հաննիբալյան ճախորդ պատերազմի ժամանակ, բախտագուշակ Սիբիլայի խորհրդով։

[2] Հռոմեացիների համար մեղքերը քավող այդպիսի զոհաբերությունը մեծ իմաստ ուներ։ Ծովահենները կրկին տարածվել էին Միջերկրական ծովով մեկ և մեծ վնասներ էին հասցնում Իտալիային։ Պահպանողարար տրամադրված մարդիկ գտնում էին, որ դա աստվածների պատիժն է համաքաղաքացիների ծայրաստիճան այլասերվածության համար։

ներ, Սպարտակի ջոկատը ջարդեց զինանոցի դռները և այդտեղից մարտական զենք ձեռք բերեց։ Հետ շպրտելով հարձակման չսպասող պահակախմբին, գլադիատորները կործանեցին դպրոցի դարպասները, սլացան փողոցներով՝ ի զարմանս անցորդների, հարձակվեցին դարպասապահ պահակախմբի վրա և կարճատև դաժան մարտից հետո, դուրս պրծան քաղաքից։ Առաջին ընդհարումներից հետո մեծ ջոկատից մնաց միայն 30 մարդ։ Բայց շուտով, ճանապարհին, հասան նաև հետ մնացածները։ Այսպիսով, ջոկատում 78 մարդ հավաքվեց։

Որոշում կայացրին շարժվել դեպի Վեզուվ լեռը, որը բնությունից արդեն անառիկ էր (այն ժամանակ դեռ գործող հրաբուխ չէր)։ Սպարտակը նկատի ուներ, որ այնտեղից, թշնամու ուժեղ ճնշման դեպքում, հնարավոր կլիներ դուրս գալ ծովափ (այդ ճանապարհն ընդամենը 14 կմ կլիներ), հափշտակել որևէ խոշոր նավ կամ նավակներ և գնալ-միանալ կամպանիական ափով պարբերաբար երթևեկող ծովահեններին։

Սպարտակի կարծիքը նրա ընկերներն ընդունեցին։ Կապուայից մինչև Վեզուվ ճանապարհը (մոտ 50 կիլոմետր) գլադիատորներն անցան գովելի եռանդով։ Ճանապարհին Պոմպեյի գլադիատորական դպրոց գնացող զենքով բեռնված մի քանի սայլեր պատահեցին։ Ապստամբները հարձակվեցին պահակախմբի վրա և նրանց փախուստի մատնեցին։ Զինվելով, նրանք շարունակեցին իրենց ուղին դեպի Վեզուվ՝ ճանապարհին անցորդներից դաշույններ խլելով և կալենպայտից ծանր մահակներ կտրելով։

Կապուայի իշխանությունները տհաճ զարմանքի մեջ էին Բատիատոսի դպրոցում կատարված միջադեպից։ Բայց, քանի որ ստրուկների և գլադիատորների փախուստները սովորական բան էին, իսկ 74 թվականի պայմաններում, երկու անբերրի տարիներից և ստրուկների ու գլադիատորների մթերաբաժնի հաշվին խնայողություն անելու փորձերից հետո՝ առավել ևս, ապա ո՛չ իշխանությունները, ո՛չ էլ Բատիատոսը չէին ցանկանում աղմուկ բարձրացնել։ Քանզի Բատիատոսը աննկատելիորեն հարստացել էր իր սանների հաշվին, իսկ իշխանությունները ժամանակին չէին կռահել խռովությունը և չէին ցանկանում խոստովանել իրենց անճարակությունը։ Երկու կողմերի համաձայնությամբ գործը կոծկվեց։ Կապուայում տեղի ունեցած փո-

խաղարձ ներումը հետագայում բացվեց, որովհետև 78 գլադիատորների փախուստից շուտով աներևակայելի իրադարձություններ ծնվեցին, և սենատն ակամայից ստիպված եղավ վերադառնալ զրանց ակունքներին։

Հասնելով անտառներով, արոտավայրերով և վայրի խաղողով ծածկված Վեզուվ բարձր լեռը, ապստամբները հռոմեացիների օրինակով ամուր ռազմական ճամբար խփեցին և Սպարտակի առաջարկությամբ նորից քվեարկության դրեցին դերադույն պարագլխի հարցը։ Ընտրությունները նախկին արդյունքը տվեցին. գլխավոր առաջնորդ միաձայն ընտրվեց ամբողջ գործի հոգին՝ Սպարտակը։ Էնոմայոսը, Կրիքսոսը և Գանիկոսը՝ նրա մերձավորագույն զինակիցները, որոնք օրհասական պահերին զարմանալի արիություն ու խիզախություն ցուցաբերեցին, ընտրվեցին նրա տեղակալներ։

Ղեկավարները հետագա գործողությունների ծրագիր մշակեցին։ Որոշվեց ռազմական բախումները հնարավորին չափ հեռացնել Վեզուվից՝ ապստամբության կենտրոնից, գործողությունները բացառապես ծավալել Կամպանիական հարթավայրում, Սամնիայում, Ապուլիայում, Կալաբրիայում և Լուկանիայում։ Այդ վայրերի ընտրությունը պայմանավորվում էր հետևյալ նկատառումներով. նախ՝ հռոմեական սենատորները և հեծյալները այդտեղ մեծ քանակությամբ ստրուկ-հովիվներ էին կենտրոնացրել (գալլեր, գերմաններ, թրակացիներ), որոնք ավելի հակված էին ապստամբությանը։ Երկրորդ՝ Ապուլիայի ստրուկներն արդեն ապստամբության փորձ ունեին (մ. թ. ա. 186—184 թթ.) և այստեղ հնարավորություն կար խափանել Հռոմ և Իտալիայի մյուս մարզերն առաքվող հացահատիկի մթերումները[1], և երրորդ՝ տեղի իտալիկական բնակչությունը ռազմատենչ էր և գտնվում էր ծայր աղքատության մեջ (նրանք խճճված էին հռոմեական վաշխառուների պարտքերի մեջ և աղքատությունից դուրս գալու ոչ մի հեռանկար չունեին)։ Այդ

[1] Ապուլիան հացահատիկի երկիր էր՝ հռչակված ցորենի, գինու, ձիթապտղի արտադրությամբ։ Աշնանը, բերքահավաքից հետո, առևտրականները բերքն ավանակներով տեղափոխում էին ծովափ։ Այստեղից, ապրանքը Բրունդիզիումում և Տարենտոսում իրենց ապրանքը բարձելով նավերը ուղարկում էին Իտալիայի ադրիատիկական առափնյայով մեկ, Լուկանիայի և Կալաբրիայի քաղաքները։

մարդիկ բոլորն էլ ատում էին Հռոմն ու սենատը, սուլլայական կարգերը։ Լուկանիայի և Սամնիումի բնակիչներն առանձնապես չէին կարողանում մոռանալ ծանր բռնագրավումները և դաժան մահակածեծերը, որով Սուլլան պատժում էր նրանց որպես իր անհաշտ թշնամիների։

Ենթադրվում էր, որ երկրի տարբեր մասերում և առաջին հերթին հարավում, ջոկատների կազմակերպիչներ կդառնան առաջնորդի կողմից հատուկ այնտեղ ուղարկված պատվիրակները։ Ինքը՝ Սպարտակը, գտնվելով Վեզուվ լեռան վրա, պետք է կարգավորի պարտիզանական ջոկատների գործողությունները Իտալիայի սահմաններում, իսկ հարմար պահին հրաման կտա միավորել դրանք բանակի մեջ՝ մշտական ռազմական գործողություններ վարելու համար։

Այսպիսով, վճռելով ամենակարևոր խնդիրները, ապստամբների առաջնորդներն իսկույն անցան եռանդուն գործողությունների։ Արոտավայրերը՝ հովիվների մոտ հուսալի սուրհանդակներ ուղարկվեցին՝ հրամայելով Վեզուվ կանչել ընտիր ռազմիկներին։ Մանրամասն հրահանգներով Կամպանիա, Սամնիում, Լուկանիա և Բրուտիում մեկնեցին ապստամբների գործակալները։

Անտառներում և լեռներում վերստին սկսվեցին գաղտնի խորհրդակցությունները։ Բոլոր խոռվությունների սովորության համաձայն, ապստամբության կողմն էին գրավում «բոլոր կրովարարներին, բոլոր նրանց, ում համար աղքատությունից ու պատժի սարսափից մի փրկություն կար՝ հանցագործությունը» (Տակիտոս)։

Երկրի տարբեր ծայրերում, առաջին հերթին հարավում, սկսեցին գլադիատորների գլխավորությամբ պարտիզանական ջոկատներ առաջանալ։

Լատիֆունդիաներում և միջին կալվածքներում ստրուկների ծանր վիճակը ադմինիստրացիայի և վերակացուների ծանակներն ու կոպտությունը, ստրկական մթերաբաժինների անամոթ գողությունները, որոնք առանձնապես սուր կերպով զգացնել էին տալիս երկու տարվա անբերրիությունից հետո,— այս ամենը ծայրահեղորեն շիկացրել էր իրադրությունը, մասսայական խռովարարական տրամադրություններ առաջացրել։ Ստրուկների էրգաստուլները լիքն էին կոճղապարտ բանտարկյալներով։ Ճիպոտն ու երկաթը մոլեգնում էին։

Պլինիոս Ավագը հետևյալ կերպ էր բնութագրում մեծ կալվածքներում աշխատողներին. «Շղթայակապ ոտքեր, դատապարտված ձեռքեր, խարանված ճակատներ»։

Այդ պատճառով ստրուկների շրջանում ագիտացիան լիակատար հաջողություն էր ունենում (առաջին հերթին՝ հովիվների, որոնց վրա վերահսկողությունն ավելի մեղմ էր)։ Դիոդորոսը պատկերավոր ձևով է նկարագրել մարդկանց այդ տիպը, որն առաջինը միացավ Սպարտակին. «Բնական է, որ աղատության մեջ ապրող և զինված հովիվները համակված էին գոռոզամտությամբ և հանդգնությամբ։ Մահակներով, նիզակներով և ծանր հովվական գավազաններով զինված, գայլի և վարազի մորթիներից հագուստներով, նրանք գրեթե ռազմաշունչ և սարսափազդու տեսք ունեին։ Յուրաքանչյուրի հետևից կատաղի շների ոհմակ էր վազում, առատ կերակուրը՝ կաթ և միս, նրանց հոգիներն ու մարմինները դարձրել էին վայրի...»

Ագիտացիայի արդյունքները անհապաղ երևացին։ «Սկզբում ստրուկները բաց վայրերում սկսեցին սպանել միայնակ կամ երկու-երկու ճամփորդող մարդկանց, հետո խմբեր կազմելով, գիշերները հարձակվում էին գյուղական անպաշտպան առանձնատների վրա, ոչնչացնում դրանք, ունեցվածքը հափշտակում, իսկ դիմադրավորներին սպանում։ Կողոպտիչների հանդգնությունը գնալով ավելի ու ավելի էր աճում» (Դիոդորոս)։

Իտալիայի տարբեր մասերում կարճատև հարձակում-ապատակությունները շփոթեցնում էին հռոմեական իշխանություններին, հնարավորություն չէին տալիս որոշելու ապստամբության իսկական կենտրոնը։ 74 թվականի մնացած ամիսներին հռոմեացիները զբաղված էին տեղերում մանր ու խոշոր խռովություններ բացահայտելով, իսկ զինվորական ջոկատները անհաջողությամբ կռվում էին ապստամբների դեմ։ Վերջիններս անընդմեջ լայնացնում էին իրենց գործողությունների շրջանակները, ձեռք էին բերում զենք ու ձիեր։ Ապստամբների ամեն մի նոր հաջողություն լուրերի հեղեղ էր առաջացնում և ավելացնում նրանց օրինակին հետևել ցանկացողների թիվը։ Բանն արդեն Կապուայից և մի խումբ գլադիատորների փախուստից անցել էր։

Այդ ընթացքում Վեզուվի ապստամբական կենտրոնը գործում էր հակայական եռանդով՝ իր պարիսպներից դուրս նորա-

նոր գործակալներ ուղարկելով։ Նրանցից յուրաքանչյուրը Սպարտակին հրաժեշտ տալով, եղբայրաբար համբուրվում էր նրա զինակիցների հետ, վերադառնում իր շրջանը, ինքնուրույն ջոկատ կազմակերպում և ռազմական գործողություններ էր սկսում։

Ընդ որում ապստամբները հաճախ խորամանկության էին դիմում. կասկած չհարուցելու համար շրջում էին ծպտված, որպես վաճառականներ կամ զինվորական մարդիկ։ Իրենց անհրաժեշտ տեղեկությունները հավաքելուց հետո, հարձակվում էին հարուստ տների, վիլլաների և նույնիսկ քաղաքների վրա։ Ամենուրեք ապստամբները պարտամուրհակները վերադարձնում էին պարտապաններին, խուճապահար փախուստի էին մատնում հարկահավաքներին, պաշտոնյաներին պահում էին ահ ու սարսափի մեջ։ Առավել դաժան ստրկատերերին նրանք նախապես զգուշացնում էին։ Եթե սրանք վերջ չէին տալիս իրենց դաժանությանը, հաշվեհարդար էին տեսնում՝ մարմնական պատժի ենթարկելով. կապում էին ջրաղացքարերին և ստրուկների ներկայությամբ մտրակելով ստիպում, որ պտտեցնեին ու կիսամեռ արած՝ բաց էին թողնում կամ հողին էին հավասարեցնում նրանց տունը, երբեմն նաև՝ ամբողջ կալվածքը։ Ամենածաղրասեր ստրկատերերին, որոնք սիրում էին շրջել ստրուկներին լծած սայլերով, ճանապարհներին դարանում բռնում էին, և շուտով տերերն էին ձիու պես լծված վազելով քարշ տալիս սայլերը, որոնց մեջ արդեն տերերի փոխարեն ստրուկներն էին նստած։

73 թվականի գարնան մոտերքը ստրուկների ապստամբությունները Կամպանիայի սահմաններում, ստրուկներ, որոնք «զենք էին բարձրացրել բուն օրենքների դեմ», «իրենց վայրագ հարձակումների ժամանակ» կողոպտել տերերին, ստրկատերերի համար անտանելի դարձան։ Հենց այդ ժամանակ Վեղուվի կազմակերպչական դերը, որի վրա թաքնված էին Կապուայից փախած գլադիատորները, բոլորի համար դարձավ միանգամայն աներկբայելի։

Իսկ այդ ընթացքում ի՞նչ էր տեղի ունենում բուն Հռոմում։

Գլուխ չորրորդ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կապուայից 73 գլադիատորների փախուստի տարին Հռոմում կոնսուլներ էին Մարկոս Ավրելիոս Կոտան և Լուցիոս Լիցինիոս Լուկուլլոսը։ Մ. Կոտային բոլորը համարում էին միջին ընդունակությունների տեր, ավելի շուտ՝ փաստաբան և հռետոր, քան զորավար։ Սենատում նա պատկանում էր պահպանողական ռեֆորմատորների խմբին, որոնց ջանքերով էլ նա կոնսուլ էր դարձել։ Նրա գործընկեր Լ. Լուկուլլոսը (116—56 թթ. մ. թ. ա.) ընդհանուր ճանաչմամբ փայլուն անձնավորություն էր։ Նա շատ մեծատոհմիկ, բայց աղքատացած ընտանիքից էր։ Նրա նախնիները թունդ արիստոկրատներ էին, որոնք իրենց գործունեության պատճառով պոպուլյարների կողմից ամենախիստ հարձակումների էին ենթարկվում։ Նախապապը, էդիլ եղած ժամանակ, մեղադրվել էր պաշտոնի չարաշահման համար, պապը, կոնսուլության ընթացքում, խառնված էր արձանների գողության հետ կապված տհաճ պատմության, հորը մեղադրում էին (ինչպես ինքն էր պնդում՝ հանիրավի) սիցիլիական ստրուկների ապստամբության (մ. թ. ա. 102 թ.) պարագլուխների կողմից կաշառվելու և կողոպուտների համար։ Հայրը կամավոր աքսոր ընդունեց և իր օրերն ավարտեց Սիցիլիայի Հերակլեա քաղաքում, այնտեղ մեծագույն ազդեցության և պատվի արժանանալով։

Լ. Լուկուլլոսը մեծացել էր համեստ եկամուտ ունեցող ընտանիքում (հայրն աքսորված էր)։ Բայց և այնպես նա կրտսեր եղբոր հետ միասին, որին որդեգրել էր հոր բարեկամ և համախոհ, հռոմեացի նշանավոր գրող և հասարակական գործիչ Մ. Տերենտիոս Վարրոնը, հիանալի հունական կրթություն էր ստացել։ Սենատի կողմից մասնակցել էր Դաշնակցային պատերազմին (մ. թ. ա. 90—88 թթ.)։ Մարիոսի և Սուլլայի պայքարի ժամանակ, ինչպես պահանջվում էր արիստոկրատից, բռնել էր վերջինիս կողմը։ Երբ Սուլլան արշավեց Հռոմի վրա, Լուկուլլոսը, որն այն ժամանակ քվեստորի պաշտոն էր զբաղեցնում, միակ ապան եղավ, որ չվախեցավ նման արարքից և չլքեց իր զորապետին։ Այդ հավատարմությունը նրա վերելքի սկիզբը դրեց։ Սուլլայի հրամանատարությամբ Լուկուլլոսը մասնակցեց

Առաջին միհրդատյան պատերազմին։ Նա զորք ու նավատորմ հավաքեց և հաջողությամբ ճակատամարտեր էր տալիս ծովում ու ցամաքում։ Դարդանյան հաշտությունից հետո Սուլլան նրան, որպես իր ամենաազնիվ գործակցի, հանձնարարեց Փոքր Ասիայի քաղաքներից հարկեր և ռազմատուգանք հավաքելու դժվարին ու պատվավոր գործը։ 82 թվականին հաջողությամբ կատարելով իր զորապետի հանձնարարությունը, Լուկուլլոսը վերադարձավ Հռոմ։ Թշնամիներին պարտության մատնած ահեղ դիկտատորը նրան բացառիկ ջերմությամբ ընդունեց։ Օրենքից դուրս հայտարարելու գործողություններին Լուկուլլոսը մասնակից չեղավ։ Իր վարկի մասին հոգ տանելով, նա խուսափեց մահապատժի ենթարկվածների կարողության առուծախից։ Ցնցած դրան մինչև վերջ մնում էր որպես Սուլլայի ամենահավատարիմ բարեկամը։ Հենց նրան, այլ ոչ թե Պոմպեոսին, նախկին դիկտատորը հանձնարարեց իր «Հիշողությունների» վերջնական հղկումը, հենց նրան դարձրեց իր որդի Ֆաուստոսի խնամակալը։ Սուլլայի մահից հետո Լուկուլլոսը դարձավ նրա կուսակցության ահեղ սուրը, 78 թվականի կոնսուլ Կվ. Կատուլոսի՝ կայուն սուլլայականների հանրահայտ առաջնորդի, մերձավորագույն աջակիցը։ Փաստորեն սենատի զորքերի հրամանատարը հենց Լուկուլլոսն էր, որ Մարսյան դաշտում պարտության մատնեց ապստամբ պրոկոնսուլ Լեպիդոսի զորքերին։

76 թվականին Լուկուլլոսը պրետորի պաշտոն ստացավ և ամուսնացավ Թրակացիների դեմ անհաջող պատերազմի ժամանակ հիվանդությունից մահացած Ապիոս Կլավդիոսի՝ 79 թվականի կոնսուլի, Մակեդոնիայի կուսակալի (մ. թ. ա. 78—76 թթ.) դստեր հետ։ Ամուսնությունը Լուկուլլոսին ո՛չ դրամ բերեց, ո՛չ էլ երջանկություն։ Նրա կինը, դարմանալի մի գեղեցկուհի (նրան Լեսբիա անվան տակ գովերգել է հռոմեացի նշանավոր քնարերգու Կատուլլոսը), աչքի էր ընկնում ծայրահեղ սիրառատությամբ։ 74 թվականին Լուկուլլոսը դարձավ կոնսուլ։ Ընտանեկան գժտություններից և իր հին հռոմեական քաջագործությունների դիմաց պարգև ստանալու անպարդյուն սպասումներից հոգնած, համոզված արիստոկրատը սկսեց միտք անել՝ արդյոք չարժե՞ հիմնավոր փոփոխություններ մտցնել իր համոզմունքների և ապրելակերպի մեջ։

Այդ ժամանակ էլ գործնականորեն ծառացավ Երրորդ միհրդատյան պատերազմի հարցը։ Որպես արևելյան գործերի

գիտակ Լուկուլլոսը շատ էր ցանկանում ստանալ զորքերի հրամանատարությունը, որը նրան, հաղթանակի դեպքում, արևելյան թագավորների հսկայական հարստություններն էր խոստանում։ Բայց պրովինցիաների վիճակահանությունը նրա հույսերը շարդարացրեց։ Նրան բաժին ընկավ Այսրալպյան Գալլիան, որտեղ «հնարավորություն չկար որևէ նշանակալից բան անել» (Պլուտարքոս)։ Իսկ Կոտային՝ նրա ընկերոջը, բաժին ընկավ Բիթանիան։ Այդ կուսակալությունը խիստ շահավետ էր, որովհետև նոր կազմակերպված պրովինցիան հարուստ էր։ Բայց փառասեր Կոտան չէր ցանկանում առաջիկա պատերազմին մասնակցել որպես ստորադրյալ։ Սենատի բոլոր խմբերի առաջնորդներին երկար խնդրելուց հետո նա կարողացավ ձեռք բերել Սև ծովից Պրոպոնտիսի (Մարմարա ծով) մուտքը պաշտպանելու իրավունքը։ 80 նավերից բաղկացած նավատորմով և 3 լեգեոններով Կոտան շտապեց պրովինցիա, որտեղ հասավ մայիսի վերջին։

Միաժամանակ ծովահենների դեմ պայքարելու համար մեկնեց պրետոր Մ. Անտոնիոսը (ապագա եռապետներից մեկի՝ Մարկոս Անտոնիոսի հայրը)։ Նրան հանձնարարվել էր ավազակներից մաքրել ծովը և նվաճել Կրետե կղզին։ Այդ խնդիրը ռազմական գործից բոլորովին հեռու պրետորի ուժերից վեր էր։ Նա Կիդոնիայի մոտ (մ. թ. ա. 74 թվականի կեսերին) ջախջախիչ պարտություն կրեց ծովահենների պարագլուխներ Լասթենեսից և Պանարոսից, գերի ընկավ և գերության մեջ էլ մեռավ 71 թվականին։ Այս հաղթությունը ցնծություն առաջացրեց ծովահենական բոլոր նավատորմիկներում՝ ընդունվելով որպես փոխհատուցում կիլիկյան ծովահենների դեմ Մ. Անտոնիոսի հոր 30 տարի առաջ տարած հաղթանակի։

Իսպանիայում Սերտորիոսի դեմ մարտնչող Պոմպեոսը ուշադրությամբ հետևում էր հռոմեական գործերին։ Նա գոհ էր իր ախոյան Լուկուլլոսի՝ պրովինցիայի հետ կապված անհաջողությունից և քաջալերում էր իր կողմնակիցներին և Սուլլայի սիրեցյալ ու մտերիմ Լուկուլլոսի թշնամիներին՝ ավելի վճռական լինել պետական հեղաշրջման կազմակերպման գործում։

Դրա պատճառները շափազանց լուրջ էին. նախ՝ ստրուկների ջոկատների դեմ պատերազմը գնալով ընդլայնվում էր, երկրորդ՝ 75 թվականի երաշտի պատճառով (նոր հացահատիկ հույս ունեին ստանալ միայն 74 թվականի օգոստոսին) պարե-

նային խոշոր դժվարություններ էին առաջացել, երրորդ՝ դատարաններում աղաղակող անկարգություն էր տիրում։

Ժողովրդականություն ձեռք բերելու համար ամենաբարենպաստ պաշտոնին՝ քաղաքային պրետորի աթոռին 74 թվականին հայտնվեց Վերեսը։ Նրա գործընկերների շարքում էին Պ. Ցելիոսը, Լ. Կալպուրնիոս Պիզոնը՝ քրեական գործերի հանձնաժողովների նախագահները։ Այս պաշտոնները, Ցիցերոնի ասելով, բավականին տխուր էին. «Աջ նայես՝ արցունքներ են, վշտի զգեստներ, ձախ նայես՝ շղթայակապեր, մատնիչներ. երդվյալները չեն ուզում գալ՝ դու պահանջում ես, նրանք ցանկանում են գնալ՝ դու պահում ես. զրպիր ես դատապարտել՝ ամբողջ կորպորացիան քո դեմ է. սուլլայական դրամական հատկացումների համակարգի առջև դլուխ չես խոնարհել՝ բաղում լավ մարդկանց, մեր համաքաղաքացիների մեծ մասի թշնամություն ես վաստակել, քաղաքացիական հայցերը գնահատելիս խիստ ես վերաբերվել՝ օգտվողը մոռանում է, տուժողը՝ հիշում»։

Իր ահա այս պրետոր-գործընկերների մեջ Վերեսն ամենահաճելի և շահավետ պաշտոնն ուներ։ Բայց նա ժողովրդականության մասին չէր մտածում։ Նրան միայն փողն էր հետաքրքրում։ Եվ նա իր տիրուհի, հույն հետերա Հելիդոնեի (Միծեռնակ) հետ միասին բոլոր միջոցներով դրամ էր կուտակում։ Հետագայում դատի ժամանակ Ցիցերոնը այսպես էր նկարագրում պրետորի՝ բնօրինակից արտանկարած կենցաղը. «Նրա (Հելիդոնեի) կացարանը լեփ-լեցուն էր այցելուներով. այստեղ նոր իրավունքներ, նոր կարգադրություններ, դատավարության նոր կարգեր էին պահանջում։ Մեկն ասում էր. «Թող նա ինձ հաստատի կալվածքում», մյուսը. «Թող նա չզրկի ինձ կալվածքից», երրորդը. «Թող նա թույլ չտա, որ դատարանն ինձ հետապնդի», չորրորդը. «Թող նա ինձ կարողություն հատկացնի»։ Ոմանք փող էին հաշվում, մյուսները կնիք էին դնում պարտամուրհակների վրա։ Մի խոսքով, դահլիճը լիքն էր ոչ թե ուրախ կանանց այցելուներով, այլ պրետորի խնդրարկուներով»։

Բայց Վերեսը պլոկում էր ոչ միայն հարուստ մարդկանց։ Նա դաժանորեն բռնանում էր նաև աղքատների վրա։ Նրա հրամանով էր, որ բաղմիցս մտրակում էին հռոմեական խոովարար պլեբեյներին։ «Բոլորը գիտեն,— ասում էր Ցիցերոնը,— թե ինչպես էր նա արհամարհում աղքատներին, ինչպես նրանցից

ոչ մեկի հետ չէր վերաբերվում որպես ազատ քաղաքացիների։

Դեմոկրատական օպոզիցիան, ճիշտ է, փորձում էր օգտագործել քաղաքացիական իրավունքների կոպիտ ոտնահարման փաստերը։ Ագիտացիա էր տանում, հարձակվում էր պահպանողական ուղղության ամենահարգված անձանց և դատարանների վրա։ Լ. Լուկուլլոսը եռանդուն հակահարվածներ էր հասցնում այդ հարձակումներին։ Լ. Կվինկցիոսին հասարակական հորդորանքներով և մասնավոր զրույցներով նա կոչ էր անում զսպել իր փառամոլությունը, հրաժարվել պետական կարգը բռնի ուժով փոխելու ծրագրերից։ Ցեսեգոսին էլ, որին առանձնապես ատում էր ժողովրդին շողոքորթելու, վատնողության, նրա աղմկոտ սիրային արկածների համար, Լ. Լուկուլլոսը մերկացնում էր ամենախիստ բառերով։ Ֆորումում նրա հրոսակախմբերին հակահարված էր տալիս զինված կողմնակիցների և պաշտոնաթող վետերանների օգնությամբ։

Կողմերի կրքերն առանձնապես շիկացրեց այսպես կոչված «Օպիանիկոսի գործը», որը տարբեր ատյաններում բազմաթիվ խոսակցությունների, լուրերի, ենթադրությունների և անվերջանալի ասեկոսեների առիթ էր տվել։ Այդ գործի էությունը հետևյալն էր։

Իտալիկական Լարին քաղաքում բնակվում էր հարուստ մի ընտանիք, բաղկացած հայր-Օպիանիկոսից (Ս. Ալբինա), որդի-Օպիանիկոսից (հոր Մագիա անունով մահացած կնոջից), Սասյա մորից (առաջին ամուսինը մահացել էր 88 թվականին) և վերջինիս նախորդ ամուսնության երեխաներից. որդուց՝ Կլուենցիոս Գաբիտոսից (ծնվ. 103 թ.) և աղջկանից (ծնվ. 105 թ.)։ Հենց այս անձնավորությունների մեջ էլ ծագել էր մահացու վախճան ունեցած ընտանեկան դրաման։

Ամեն ինչ սկսվել էր նրանից, որ մայրը՝ Սասյան, աղջկանից խլել էր փեսային և ամուսնացել նրա հետ (83 թ.)։ Երբ նրա այս՝ երկրորդ ամուսինը զոհվել էր Սուլլայի կամայականությունների ժամանակ իր թշնամի Օպիանիկոսի ձեռքով, Սասյան երրորդ անգամ ամուսնացել էր Օպիանիկոսի հետ, որը կնոջ ժառանգության հետ հույսեր էր կապել։

74 թվականին խորթ որդու՝ Կլուենցիոսի, Լարինի բնակիչների և նոր «հոր»՝ Օպիանիկոսի միջև սուր վեճ էր ծագել մարցիալների կոլեգիումի անդամների դիրքի պատճառով։ Նրանք բոլորը Մարս աստծուն նվիրաբերված հասարակական ստրուկ-

ներ էին, բայց Օպիանիկոսը հանկարծ սկսեց պնդել, որ նրանք իբր «ազատ մարդիկ են և, հետևաբար, հռոմեական քաղաքացիներ»։ Գործը քննվում էր Հռոմի դատարանում։ Անսպասելի դիմադրությունից գաղագած (իսկ նա Լաբինի առաջին դեմքն էր) և մեծ ժառանգություն ստանալու հույսով, Օպիանիկոսը որոշեց թունավորել խորթ որդուն։ Նա որոշակի քայլեր ձեռնարկեց։ Սակայն գործը բացահայտվեց. վարձու մարդասպանը թույնը և ստացած դրամը ձեռքին ձերբակալվեց, սկսվեց դատաքննություն։ Օպիանիկոսը երկու դատավարություններում տանուլ տվեց։ Փորձելով փրկվել, նա հսկայական գումար (600 հազար սեստերց) կաշառք տվեց դատարանի անդամներից մեկին՝ Ստատիենին։ Սա պետք է փողը բաժաներ 16 դատավորների միջև։ Սակայն Ստատիենը գրպանեց այդ գումարը, բայց անհաջող։ Օպիանիկոսը մեղավոր ճանաչվեց 17 ձայներով ընդդեմ 5-ի (10 դատավոր ձեռնպահ մնաց)։ Տեսնելով, որ լիակատար կործանում է սպասվում, Օպիանիկոսը նեռվեց Կվինկցիոսի մոտ օգնություն փնտրելու։

Մերկացումներով մի քանի դատավարությունները, ժողովրդական հավաքներում Կվինկցիոսի և նրա ընկերների բողոքի ճառերը, որոնցում նրանք ելույթ էին ունենում ի պաշտպանություն, իրենց բառերով ասած, անմեղ հաշվեհարդարի զոհ Օպիանիկոսի, քիչ մնաց բացահայտ հուզումների առիթ տային։ Անհանգստացած սենատը Օպիանիկոսի գործն ինքը քննեց և որոշում կայացրեց, որ «սույն թվականի կոնսուլները կամ, եթե նրանք չկարողանան հասցնել, ապա նրանց փոխանորդները՝ ապագա կոնսուլները, Հունիոսի[1] դատարանին կաշառելը համարեն հիմնավոր, ժողովրդական ժողովում առաջարկություն մտցնեն այդ գործի վերաբերյալ արտակարգ հետաքննչական հանձնաժողով կազմելու մասին»։

Այդ որոշումից անմիջապես հետո Մ. Կոտան մեկնեց, իսկ Լ. Լուկուլլոսը չօգտվեց դրանից։ Նրանց օրինակին հետևեցին նաև փոխանորդները՝ Մ. Լուկուլլոսը և Գ. Կասիոսը՝ 73 թվականի կոնսուլները։ «Իսկ հետո,— նաև հռոմեական ժողովուրդն ինքն էլ, նույն ժողովուրդը, որն առաջ Լ. Կվինկցիոսի կեղծավոր բողոքների ազդեցության տակ պահանջում էր այդ օրենքը, այժմ Գ. Հունիոսի մանկահասակ որդու արցունքներից հուզ-

[1] Գ. Հունիոս՝ Օպիանիկոսին դատող դատարանի նախագահը։

Ված էր և խառնիխուռն ամբոխով մագիստրատի բազկաթոռը շրջապատած՝ բարձրաձայն գոչյուններով պահանջեց, որ առաջադրվող հանձնաժողովի և դրա վերաբերյալ օրինագծի մասին այլևս խոսք չլինի։ Այդ ժամանակ պարզ դարձավ,— ամփոփում է Ցիցերոնը,— հաճախ բերվող համեմատության արդարացիությունը. թե ինչպես ծովը, որ իր բնույթով խաղաղ է, բայց քամիների ճնշման տակ հուզվում է, փոթորկվում, ճիշտ այդպես էլ ժողովուրդը, ինքնին հեզաբարո լինելով, կատաղության մեջ է ընկնում, երբ նրա գլխին պայթում են մրրիկի պես խռովարար ճառերը»։

Այս պայքարի ընթացքում հանկարծակի վախճանվեց Կիլիկիայի կուսակալ Լ. Օկտավիոսը (75 թ. կոնսուլ)։ Պոմպեոսականները սկսեցին եռանդագին խարդավանքներ հյուսել, վախճանված կուսակալի փոխարեն առաջադրելով Իսպանիայում մարտնչած զորավարներին՝ Պոմպեոսին կամ Մետելլոսին։ Բայց Լ. Լուկուլլոսը նախկին անհաջողությունից ձեռ ու ոտ ընկած (նրան բաժին էր ընկել Այսրալպյան Գալլիան) բնավ չէր ուզում որևէ մեկին զիջել Կիլիկիան (Պոնտոսին մոտիկ գտնվելն անելիքբայելի էր դարձնում Միհրդատի դեմ առաջիկա պատերազմին դրա կուսակալի միջամտությունը)։ Իհարկե, մեծ դժվարություններ կային։ Լ. Լուկուլլոսին սենատում աջակցում էին միայն մոլի սուլլայականները։ Լուկուլլոսը հասկացավ, որ վրա է հասել իր ապագայի համար վճռական պահը։ Այդ պատճառով նա գնաց (չնայած ծանր սրտով) Ցետեգոսի սիրուհու, հռոմեական նշանավոր կուրտիզանուհի Պրեցյայի մոտ գլուխ խոնարհելու և աջակցություն հայցելու։ Վերջինս իրեն շատ շոյված զգաց (նրան խնդրում էր «ինքը՝ Լուկուլլոսը»), հարկ եղած ոգով խոսեց Ցետեգոսի հետ, իսկ վերջինս, ինչպես արտահայտվել է Պլուտարքոսը, «նրա համար խնամախոսեց Կիլիկիայի համար»։ Մնացածը (Միհրդատի դեմ պատերազմի ժամանակ հրամանատարություն ստանալը) արդեն հեշտ գործ էր, և Լուկուլլոսն առանց դժվարության հրամանատարությունն ստացավ քաղաքացիներից։ Քանզի, ինչպես նկատում է հետո Պլուտարքոսը, «Պոմպեոսը դեռևս կռվում էր Սերտորիոսի հետ։ Մետելլոսը շատ ծեր էր. չէ՞ որ միայն այդ երկուսին կարելի էր Լուկուլլոսի արժանավոր մրցակիցը համարել զորավարի կոչման համար մղվող պայքարում»։

Օգտվելով Ցետեգոսի խմբի հետ իրենց հարաբերությունների ժամանակավոր բարելավումից, մոլի սուլլայականները հաջորդ կոնսուլական ընտրությունների ժամանակ միանգամից կարողացան անցկացնել կոնսուլության իրենց երկու թեկնածուներին՝ Մ. Տերենցիոս Վարոն Լուկուլլոսին և Գ. Կասիոս Վարոսին։

Երկրորդ վճռական հաղթանակը տանելուց հետո, Լուկուլլոսն արդեն հանգիստ խղճով սկսեց նախապատրաստվել պատերազմի։ 74 թվականի հունիսի վերջին Ալբանական լեռան վրա սահմանված զոհաբերությունը կատարելուց հետո, իր հետ վերցնելով ընտանիքի բարեկամ, նշանավոր բանաստեղծ Արքիոսին, որը բանաստեղծություններով փառաբանելու էր առաջիկա պատերազմում նրա կատարելիք մեծ քաջագործությունները, Լուկուլլոսը իր 6 հազարանոց փոքրիկ բանակով Բրունդիզիումում նավ նստեց և ծով դուրս եկավ։ Հուլիսի 10-ին նա արդեն ափ իջավ Փոքր Ասիայում, Եփեսոսում, որտեղից մի քանի օր հետո տեղափոխվեց Լաոդիկե քաղաքը՝ Ասիայի կուսակալների նստավայրը։ Այստեղ նա միացավ Ֆիմբրիայի նախկին ռազմիկներից կազմված ասիական երկու լեգեոնին։

Բարձր հեղինակություն վայելող Լ. Լուկուլլոսի մեկնելուց հետո Հռոմում նորից վերսկսվեց ագիտացիան ընդդեմ Հունիոսի դատարանի։ Դատավորներին զանազան առիթներով սկսեցին պատասխանատվության ենթարկել։ Օպիանիկոսին դատապարտած 17 դատավորներից 8-ը, իրենց հերթին, դատապարտվեցին։ Առանձնապես չբերեց Գ. Ֆիդիկուլանիոս Ֆալկուլայի բախտը։ Լ. Կվինկցիոսը, ամեն օր բուռն հավաքներ անելով, իր ճառերում այնպես «նախշեց» նրան, որ այդ մարդը համընդհանուր ատելության առարկա դարձավ։

Վերջապես, տարեվերջին գործը հասավ դատարանի նախագահին։ Ժողովրդական հավաքի դատարանը նրան դատապարտեց խոշոր տուգանքի և արտաքսման։

Հունիոսի դեմ հարուցվող դաշը Ցիցերոնը բացարձակ անօրինականություն էր համարում. «... այն ժամանակ ամբողջ գործը մինչև արմատները խեղաթյուրված էր զրպարտություններով, թյուրիմացություններով, կասկածանքներով, իռոմարար դեմագոգի ժողռված ամենօրյա ժողովրդական հավաքներով, նրանով, որ նույն ժողովրդական տրիբունը որպես մեղադրող հանդես էր գալիս և՛ ժողովրդական հավաքներում, և՛ ժողովը-

դական դատարանի առջև, նրանով, որ նա դատարան էր գնում ոչ միայն հավաքից, այլև «հավաքի» ուղեկցությամբ։ Ավրելիոսական, այն ժամանակ դեռևս նոր, սանդուղքը թվում էր կառուցված էր հատուկ այն բանի համար, որպեսզի թատերաբեմ դառնար այդ դատարանին. բավական էր մեղադրողը և նրա հավաքած մարդիկ տեղերը գրավեին, և մեղադրյալին այլևս թույլ չէին տալիս ոչ միայն բառ արտասանել, այլև տեղից վեր կենալ»։

Այսպես էր հետագայում (66 թ.) պաշտպանում Հունիոսին Ցիցերոնը։ Նրա հակառակորդ Լ. Կվինկցիոսը պատկերվում էր ամենաանբարյացակամ, որպես «խոովարար», որպես «կատաղի, չարալեզու, անդադրում դեմագոգ»։ «Դուք հիշո՞ւմ եք,— բացականչում էր հռետորը,— այս մարդու ամբարտավանությունը։ Դուք հիշո՞ւմ եք նրա կրքոտ խիզախությունը, որով դրսևորում էր իրեն տրիբուն եղած ժամանակ։ Անմահ աստվածներ, ինչպիսի ատելությամբ էր նա լեցուն։ Ինչպես էր բոլորին արհամարհում, ինչպես էր մեծամտանում, ինչպիսի վրդովեցուցիչ, անտանելի գոռոզություն էր ցուցաբերում»։ «Նա չարացած էր հենց միայն այն բանի համար, ինչից էլ սկսվել էր այս ամբողջ պատմությունը, այն, որ դատավորներն Օպիանիկոսին դատապարտելիս համարձակվել էին անուշադրության մատնել նրան և նրա պաշտպանությունը։ Այնինչ նա պետք է հասկանար, որ հենց նրա հովանավորությանը դիմելը միայն վկայում է Օպիանիկոսի միայնակ լինելու մասին։ Հապա մի մտածեք, Հռոմում իսկապե՞ս չափազանց շատ հավատարմատարներ՝ հարգարժան և պերճախոս մարդիկ, չկային։ Մի՞թե նրանցից որևէ մեկը չէր համաձայնի պաշտպանել հռոմեական հեծյալին, իր համայնքի ազնվազարմ անդամին, եթե պատիվը նրան թույլ տար նման գործում պաշտպանի դերով հանդես գալ։ Ինչ վերաբերում է Կվինկցիոսին, ապա նա մինչ այդ, գոնե մի գործ վարե՞լ էր իր 50 տարիների ընթացքում։ Որևէ մեկը նրան տեսե՞լ էր, «չեմ ասում հավատարմատարի, գոնե «փաստաբանի» կամ գովաբանողի դերում։ Իր ժողովրդականության համար, որ նա մի ժամանակ վայելում էր մարդկանց որոշ դասակարգի մոտ, նա պարտական էր այն պարագային, որ նրան հաջողվեց առաջինը գրավել երկար ժամանակ թափուր մնացած ամբիոնը, այն տեղը, որտեղից Սուլլայի վերադարձից հետո դադարել էր լսվել տրիբունի ձայնը, և որ նա հավաքներից արդեն հետ սովորած ամբոխին

վերադարձրեց նախկին սովորության մի որոշ նմանություններ։ Բայց փոխարենը շուտով ինչպե՞ս սկսեցին նրան ատել հենց իր համախոհները, նույն այն մարդիկ, որոնց շնորհիվ նա հասել էր իր բարձունքին։ Եվ դա լիովին հասկանալի է. բավական է հիշել, չեմ խոսում արդեն նրա մեծամիտ բնավորության մասին, նրա դեմքը, նրա հագուստը, միայն նրա ոտքերին խճճվող ճիրանի պատմուճանը»։

Այսպես էր Ցիցերոնը խայտառակում Լ. Կվինկցիոսին՝ Ցեզեգոսի կուսակցության գլխավոր պարագլուխներից մեկին, ժողովրդական կրքերի սանձարձակությամբ լի 74 թվականի ֆորումի առաջատար անձնավորությանը։

Իսկ այդ ընթացքում ի՞նչ էր կատարվում Իսպանիայում և Փոքր Ասիայում, ռազմական գործողությունների թատերաբեմերում։

Գլուխ հինգերորդ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԵՐ

I

74 թվականի գարնանը Իտալիայից երկու լեգեոն համալրում ստանալով, Պոմպեոսն ու Մետելլոսը դուրս եկան իրենց ձմեռային ճամբարներից և շարժվեցին դեպի Իբեր։ Սերտորիոսն ու Պերպերնան երկու բանակներով նրանց ընդառաջ դուրս եկան։ Կողմերը դեռևս չէին հասցրել միմյանց հետ ուժերը չափել, երբ մեծ թվով հռոմեացի վտարանդիներ սկսեցին լքել Սերտորիոսի բանակը և փախչել Պոմպեոսի ու Մետելլոսի մոտ։

Շատերի համար նման զարմանալի երևույթը (Սերտորիոսը գտնվում էր իր հզորության գագաթնակետին և 150 հազարանոց ահռելի բանակ ուներ) բացատրվում էր այն բանով, որ Իտալիայում արդեն սկսվել էին ստրուկների հուզումները։ Եվ Սերտորիոսի բոլոր կողմնակիցների՝ նախկին իտալիկական ստրկատերերի առաջ, անկախ խմբավորումներից, ծառացավ «ինչպե՞ս վերաբերվել այդ բանին» հարցը։ Արդյոք պե՞տք է հաշտվել կուսակցական թշնամիների՝ սուլլայականների հետ՝ խռովարար ստրուկների դեմ ընդհանուր պայքարի համար։ Թե՞

հնարավորություն տալ ստրուկներին կռվելու կուսակցական հակառակորդների դեմ։

Վիճաբանությունների հետևանքով Իսպանիայում մարիոսականների վերնախավում պառակտում առաջացավ։ Զախ թևը, թեև ոչ առանց տատանումների, արտահայտվում էր սուլլայականների դեմ ռազմական գործողությունները շարունակելու կողմ։ Աջ թևը պահանջում էր անհապաղ հաշտություն կնքել պահպանողական կուսակցության հետ և վերադառնալ Իտալիա ընդհանուր թշնամու՝ ապստամբ ստրուկների դեմ պատերազմելու համար։

Մարիոսական սենատում խմբավորումների պայքարն ուղեկցվում էր միմյանց դեմ չընդհատվող բանսարկություններով, Պոմպեոսի և Մետելլոսի հետ գաղտնի բանակցություններով, սենատի առաջատար գործիչների հետ գաղտնի նամակագրությամբ։

Այնտեղ էլ միասնական կարծիք չկար սերտորիոսականների վերաբերյալ։ Նրանց հետ հաշտվելու կողմնակից էին Մ. Կրասոսը և Պ. Ցետեգոսը։ Ցետեգոսը, որպես նախկին մարիոսական, կարծում էր հեշտությամբ ընդհանուր լեզու կգտնի սերտորիոսականների հետ։ Կրասոսը, որպես ֆինանսիստ և գործարար մարդ, ոչ մեկի նկատմամբ մշտական ատելություն չէր տածում և ամեն ինչում ղեկավարվում էր բացարձակապես շահի դիրքերից։ Սերտորիոսի հետ պատերազմը դադարեցնելու և պետության ուժերը սեփական ապստամբ ստրուկների դեմ միավորելու շահը միանգամայն ակնհայտ էր։

Բայց սենատում ոչ բոլորն էին համաձայն հաշտությանը։ Մոլի սուլլայականները (Կվ. Կատուլլոսը, Կվ. Հորտենզիոսը և ուրիշները) արտահայտվում էին և շատ վճռական, կուսակցական երդվյալ թշնամիների հետ խաղաղություն կնքելու դեմ։ Նրանց, անտարակույս, աջակցում էր Պոմպեոսն իր ամբողջ խմբով։ Վերջինս ամենևին չէր ցանկանում Սերտորիոսի հետ խաղաղություն կնքելու ժամանակ երկիմաստ դրության մեջ ընկնել և չէր ուզում նաև հեռուն գնացող զիջումներ անել։

Միջանկյալ դիրք էր գրավել պահպանողական ռեֆորմիստների տատանվող խումբը (Գ. Կոտա, Լ. Կոտա և ուրիշներ)։

Հռոմեական սենատի վիճակը, բնականաբար, ավելի բարենպաստ էր։ Նա հայրենիքում էր գտնվում և ներկայացնում էր այն։ Նրա հակառակորդները՝ մարիոսական սենատը, ընդհա-

Օրփեոսը գնչուների հետ

Դիոնիսոսը եղջերի վրա

Թրակիան՝ Սպարտակի հայրենիքը



Տուն թրակական գյուղում

Թրակացի հեծյալ (Հերոս)

Թեմիսը և Բենդիսը (ձախից)

Սեքոնեները հացահատիկ են ճնում բրգական դաշտում

Հանգստացող Արեսը

Սեքոնեները բերում են բրգացի առաջնորդների գլուխները



Լատիում



Արիստոկրատական թաղամաս Պալատինում

Հռոմեական տուն

Հռոմեացին պարեզատով

Ռամկուհի

Հռոմեացին նախնիների կիսանդրիներով

Վիլլա պրովինցիայում

Սարսի կապանքներով

Սեսիլիոսների տանմի
ներկայացուցիչ («Հոնաոր»)

Հավիվ

Հարուստ տուն տարիում (Պոմպեյում)



Կոտանքի գործիքներ

Հռոմեական վահան

Ինքնասպանությամբ իրենց կյանքին
վերջ տվող գալլը կնոջ հետ

Թրակացի (դակ)

Գերման

Գերված գերմաններ

Գալլ

Կատոնյան դաստակերտ (վերակառուցում)

Գութանով վար անող գյուղացի

Գայոս Մարիոս Ավագը՝
Սուլլայի ճակատակորդը

Լուցիոս Կոռնելիոս Սուլլա

Պոմպեոս Մեծը՝
Սերտորիոսի ճակատակորդը

Պատրիկուսի

Տիգրանը՝ Հայաստանի
թագավորը

Միհրդատ VI Եվպատորը՝
Պոնտոսի թագավորը

Լուցիոս Լուկուլլոս,
74 թ. (մ. թ. ա.) կոնսուլը

Անվանի հռետոր
Հորտենզիոսը

Սայլապան

Գլադիատոր սամնիտը

Ռետարիոսի և մուրմիլոնի մենամարտը

Գրեթարը՝ գլխավոր հրամանատարը

Սեծանարուստ հռոմեացիներ

Հռոմեական զորապետները բշնամուն հաղթելու կոչ են անում

կառակը, արտաքսված էր և գտնվում էր Հայրենիքի թշնամու դրության մեջ։

Բայց և այնպես երկու սենատների ու ճամբարների ներկայացուցիչների միջև շփում դոյություն ուներ։ Այդ դաղտնի հարաբերությունները (հաճախ մի կողմում գտնվում էին քեռի-հորեղբայրները, մյուսում՝ զարմիկները, մի կողմում՝ հայրերը, մյուսում՝ որդիները) և հակառակորդներին իրենց կողմը քաշելու բազմաթիվ փորձերը, ի վերջո, 74 թվականին սկսեցին իրենց պտուղները տալ Հոգուտ Պոմպեոսի և Մետելլոսի։

Ցանկանալով վերադառնալ Իտալիա և մասնակցել սեփական ստրուկների դեմ մղվող պատերազմին (ստրուկների նկատմամբ դասակարգային հակասությունները հետին դիրքերն են մղում մնացած բոլոր հակասությունները) մարիոսականների աջ թևի ներկայացուցիչները սկսեցին փախչել թշնամու կողմը։ Փախստականների հոսանքը դադարեցնելու Սերտորիոսի բոլոր փորձերն ապարդյուն անցան։ Այդժամ զայրացած զորավարը, իր զինակիցներին մեղադրելով անհավատարմության մեջ, նրանց զրկեց թիկնապահների պարտականություններից։ Սերտորիոսը նրանց փոխարինեց կելտիբերացիների պահակախմբով, իսկ բարձրագույն հրամանատարական պաշտոնների համար սկսեց առաջ քաշել իրենց քաջությամբ և ռազմական բանիմացությամբ հռչակված իսպանական արիստոկրատների։ Արդյունքը եղավ այն, որ հռոմեական զորամասերի հրամանատարությունը հաճախ գտնվում էր վերջիններիս ձեռքին։

Այս փոփոխությունները հռոմեական վետերանների շրջանում խիստ դժգոհություն առաջացրին։ Նրանք անարդարացի էին համարում անհավատարմության մեղադրանքը, որն, ինչպես իրենք էին արտահայտվում, «մի քանիսի» հանցագործության պատճառով բարդվել էր նրանց վրա։ Բացի դա, ափերից հանում էր ծաղրը, որով կելտիբերիացիները դատապարտում էին նրանց, որպես վստահությունը և նշանակությունը կորցրած մարդկանց։ Իրենց ծանր դրությունը զգալով, հռոմեացի-վետերանները, այնուամենայնիվ, սիրտ չէին անում թողնել Սերտորիոսին, շատերը վստահ չէին սուլլայականների հետ հաշտության վրա, իսկ Սերտորիոսը փայլուն զորավարի համբավ ուներ, որը հաստատել էր բազմաթիվ հաղթանակներով։ Այդ պատճառով մարիոսականների աջ թևի մեծ մասն ակամայից մնում էր

Սերտորիոսի ճամբարում նրա մոլի կողմնակիցների հետ միասին։

Ասենք, աջ թևը դժգոհության բազմաթիվ այլ հիմքեր էլ ուներ։ Ընդհանուր առմամբ նրանց դուր չէր գալիս Իսպանիան հռոմեականացնելու և տեղի ազգաբնակչությանը իր կողմը գրավելու՝ Սերտորիոսի քաղաքական կուրսը։ Սերտորիոսի այդ կուրսը հիմնավորվում էր հետևյալ միջոցառումներով. 1) հարկերի նվազեցում, 2) գոռոզությունից և դաժանությունից զերծ մեղմ վերաբերմունք ազգաբնակչության նկատմամբ, 3) քաղաքներից զինվորական պահակակետերի դուրս բերում (ռազմիկներն ապրում էին քաղաքամերձ ձմեռային զորանոցներում), 4) տեղական սովորույթների նկատմամբ հարգանք (զինվորներին և սպաներին գունավոր զգեստներով, ոսկով և արծաթով զարդարված զենքերով պարգևատրելը և այլն), 5) իսպանական զորքի մեջ հռոմեական ռազմական կազմակերպվածության ներմուծում, 6) իր մասին որպես աստվածային պատվիրակի լուրերի տարածում (այդ նպատակով Սերտորիոսը իր մոտ պահում էր սպիտակ եղջերու, որն իբր աստվածների կամքն էր թելադրում նրան), 7) խնամքը երեխաների նկատմամբ (արիստոկրատների երեխաներին սովորեցնում էին Օսկա քաղաքի մոտ գտնվող լատինական դպրոցում)։

Սերտորիոսի կողմնակիցների միջև գաղտնի և բացահայտ տարաձայնություններն, անպայմանորեն, ազդում էին ռազմական գործողությունների վրա։ Սենատի զորապետները չնայած դանդաղորեն, բայց հաջողությամբ ճնշում էին թշնամուն։ Նրանք սերտորիոսականներից խլեցին արևելյան Իսպանիան, նվաճեցին Սերտորիոսի համար զինապահեստ ծառայող մի քանի քաղաքներ, գործողությունները տեղափոխեցին դեպի վերին և ստորին Էբրո։

Ներունավարի համառ Մետելլոսը, չնայած նախկին անհաջողություններին, (առաջ նա չարությամբ ասում էր. «Ո՞վ է Սերտորիոսը։ Նա Սուլլայի զորքի դասալիքն է, նա Կարբոնի պարտված բանակի մնացորդն է», հետո Սերտորիոսի սպանության համար խոստացավ 100 տաղանդ արծաթ և 20 հազար պլետր, իսկ փախստականին՝ Հռոմ վերադառնալու իրավունք), վերջապես բռնել էր հաջողության թևերից և գլխովին ջախջախել էր Սերտորիոսի մերձավորագույն աջակից, իր վազեմի թշնամի Հիրտուլեոսին։ Զորավարն ինքը ընկել էր ճակատամար-

տում։ Այդ տխուր իրադարձությունն ամբողջ Իսպանիայում հրակայական ազդեցություն էր գործել։ Շատ քաղաքների հավատարմությունը սասանվել էր, և նրանք մեկը մյուսի հետևից սկսել էին հանձնվել հռոմեական զորավարներին։

Արդեն խոր աշուն էր, երբ Պոմպեոսը պաշարեց անհնազանդ Պալանցիան՝ կելտիբերիացիների ցեղախմբին պատկանող վակեացիների շատ կուլտուրական և ոչ հեռու անցյալում ոսկով հարուստ, Իսպանիայում հայտնի մի քաղաք։ Սերտորիոսը ստիպեց թշնամուն վերացնել քաղաքի պաշարումը։ Պոմպեոսը հրդեհեց քաղաքի փայտյա պարիսպները (Սերտորիոսը հետագայում վերականգնեց) և հեռացավ Մետելլոսի հետ միանալու։ Շուտով Սերտորիոսին հաջողվեց Կալաչուր բնակավայրի մոտ (վերին Էբրո) պարտության մատնել հռոմեացիներին։ 3 հազար թշնամիներին կոտորելով, նա զորքերը հետ քաշեց ձմեռային զորանոցները։ Նույնպես վարվեցին Պոմպեոսն ու Մետելլոսը։ Իսպանիայում 74 թվականի կամպանիան ավարտվեց։

Սենատի երկու զորավարները կարող էին իրենց միանգամայն բավարարված զգալ գործողությունների արդյունքներից. հակառակորդի ճամբարը, չնայած Սերտորիոսի որոշ հաջողություններին, քայքայվում էր աչքի առաջ, և դա մեծ հույսեր էր ներշնչում։ Սկզբում անվստահ Մետելլոսը լիովին ճանաչել էր տարիքով կրտսեր իր գործընկերոջը։ Իսկապես, այդ դժվար տարիներին Պոմպեոսը ցուցադրել էր հմուտ քաղաքագետի և դիվանագետի հատկություններ։ Ցուցաբերել էր հստակ միտք, արագ գործող հնարամտություն, բոլոր գործերում տակտ և զգուշավորություն, մարտերի ժամանակ՝ խիզախություն, հրաշալի ֆիզիկական ուժ և վարժվածություն։ Նա կարողանում էր ընդհանուր լեզու գտնել ռազմիկների հետ, հաճույքով նրանց հետ ֆիզիկական վարժություններ էր կատարում, ուտում էր զինվորական ընդհանուր կաթսայից և սեփական միջոցները չէր խնայում ոռճիկ վճարելիս։ Այս երիտասարդի մեջ, ասես, վերածնվել էր Գ. Մարիոսը, բայց որը կանգնած էր ոչ թե սենատի դեմ, այլ նրա կողքին։

II

Միհրդատը հռոմեացիների դեմ նոր պատերազմին սկսեց նախապատրաստվել 75 թվականի կեսերից։ Այս անգամ, փորձով իմաստնացած, նա սկսեց գործել այլ կերպ, քան առաջ։ «Նա

հրաժարվեց խայտաճամուկ հրուսակախմբերից, ահաբեկիչ, բարբարոս, բազմալեզու աղաղակներից, այլևս չէր հրամայում ոսկով ու թանկարժեք քարերով զարդարված զենքեր պատրաստել, որոնք տիրոջ զորությունը չէին ավելացնում, այլ միայն գրգռում էին թշնամու ագահությունը։ Նա պատվիրեց սրեր կոփել հռոմեական ձևով, հրամայեց երկար վահաններ պատրաստել և այնպիսի ձիեր ընտրել, որոնք թեև շքեղորեն զարդարված չէին, բայց լավ վարժեցված էին։ 120 հազար հետևակ հավաքեց և զինեց հռոմեական ձևով։ Այրուձին 16 հազար էր, չհաշված մանգաղակիր մարտակառքերը։ Դրան ավելացրեց նաև նավեր, այս անգամ առանց ոսկեզօծ վրանների, առանց հարճերի համար բաղնիքների և կանանց համար շքեղ ննջասենյակների, բայց փոխարենը զենքով, նետման գործիքներով ու դրամով լի» (Պլուտարքոս)։

Հետևակը Միհրդատը բաժանեց 10 հազարական մարդուց բաղկացած 12 բանակների։ Յուրաքանչյուրն իր զորավարն ուներ՝ ընդամենը 12։ Ութ զորավար պոնտոսցի էին. 1. Տաքսիլեսը՝ պարթև, 2. Հերմոկրատեսը՝ սիցիլիացի, 3. Եվմաքոսը՝ փռյուգացի, 4. Ալեքսանդրը՝ պաֆլագոնացի, 5. Դիոնիսիոսը՝ թրակացի, 6. Դիոկլեսը՝ աթենացի, 7. Մեսրոֆանեսը՝ բութանիացի, 8. Հերմեոսը՝ փոքրասիացի (տրոյացի)։

Մնացած չորս զորավարները հռոմեացիներ էին. 1. սենատոր Մ. Վարիոսը, որին Սերտորիոսն ուղարկել էր որպես հռոմեական զորախմբերի հրամանատարի, 2. սենատոր և պրետոր Մ. Մարիոսը, նույն այդ Սերտորիոսի կողմից ուղարկված, 3,4. Ֆիմբրիացի երկու նախկին սպաները՝ Սերտորիոսի և Միհրդատի հետ դաշինք կնքած Լ. Ցանիոսը և Լ. Մագիոսը։

Պատերազմի նախօրյակին պոնտոսյան հրամանատարական վերնախավում իրադրությունը լարված էր։ Միհրդատը Արքելայոսի՝ հռոմեացիների կողմը փախչելուց հետո, իր զորապետների մեջ լուրջ դատում կատարեց։ Դրա հետ կապված զորավարների մեջ փոխադարձ մեղադրանքները և բանսարկությունները սկսել էին ծաղկել, ինչպես երբեք։ Երիտասարդները ծերերին մեղադրում էին ծախվածության մեջ։ Եվ քանի որ Առաջին միհրդատյան պատերազմի ժամանակ (89—85 թթ.) զորավարների կաշառման փաստեր իսկապես եղել էին, ապա Միհրդատը դարձել էր չափազանց կասկածամիտ։ Հաճույքով ընդունելով մատնությունները՝ նա հրամանատարությունից հեռացրեց նշանավոր զորավար Դիոֆանտեսին, որը, մասնավորա-

պես, Բոսպորոսում ճնշել էր Սավմակի ղեկավարած ստրուկների ապստամբությունը և որի համար շնորհապարտ խերսոնեսցիները նրան ոսկեպսակ էին մատուցել և լրիվ ասպազենով պղնձյա արձանը կանգնեցրել էին միջնաբերդում։ Կասկածների շնորհիվ երկրորդական դերերում հայտնվեցին Կալիմաքոսը՝ Փոքր Ասիայից (լաոդիկեցի), Մյուոնը՝ բեռվոտիացի, Մենանդրոսը՝ Փոքր Ասիայից (լաոդիկեցի), Մենեմաքոսը՝ փռյուգացի, Տրիփոնեսը՝ սիրիացի, Նեմանը՝ հայ։

Մինչդեռ Միհրդատի բարձրագույն հրամանատարությունը կարիք ուներ բազմափորձ զորավարների (հույները նրանց կոչում էին «ինքնուրույն հրամայելու իրավունք ունեցող զորավարներ»), քանզի Առաջին միհրդատյան պատերազմը սարսափելի կորուստների էր մատնել նրանց. չկային Արքելայոսն ու Նեոպտղոմեոսը՝ թագավորի սարսափելի կասկածամտության հետևանքով հռոմեացիների կողմը փախած ամենափորձառու զորավարները, Քերոնեայի մոտ զոհվել էր թրակացի Դրոմիքետոսը, Մակեդոնիայում ընկել էին Կրատերոսն ու Պելոպիդեսը, քաղաքացիների հանկարծակի հարձակման ժամանակ Եփեսում սպանվել էր Զենոբիոսը, հռոմեացիների հետ գաղտնի համաձայնության մեջ բռնված Դորիլայոս թագավորի կաթնեղբայրը աքսորված էր, թրակացի հայտնի զորավար, երկրորդ միհրդատյան պատերազմի ժամանակ Մուրենայի դեմ տարած հաղթանակի մասնակից Գորդիոսը դրպարտությամբ մեղադրվել և մահապատժի էր ենթարկվել։ Նոր զորավարները, բացառությամբ Տաքսիլեսի, Հերմոկրատեսի, Ալեքսանդրի և Դիոնիսիոսի, ուժեղ հակառակորդի դեմ մեծ պատերազմում ինքնուրույն հրամանատարելու փորձի պակաս ունեին։

Հռոմի հետ երրորդ, վճռական դոտեմարտի պատրաստվելով, Միհրդատը, իր պահակախմբի պետ, գալլատացի Բիտոիտոսի ղեկավարած գաղտնի գործակալների օգնությամբ մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի ամենուրեք Փոքր Ասիայում, Հունաստանում, Իտալիայում և Հռոմում ձեռք բերեր հուսալի կողմնակիցներ ու լրտեսներ։ Նրա գաղտնի գործակալները կաշառում էին շարքային քաղաքացիների, ժողովրդական պարագլուխների, աշխարհի տարբեր ծայրերում զանազան գործարքներով զբաղվող հեծյալների և չէր բացառվում նաև՝ հռոմեական սենատորների։ Վերջինս այնքան էլ դժվար գործ չէր. հռոմեական սենատորները հռչակված էին իրենց ծախվածությամբ։ Միհրդատը

միջնորդների օգնությամբ նրանցից զանազան գաղտնի տեղեկություններ էր ստանում։

Հին հեղինակները լավ տեղյակ էին Միհրդատի այդ գաղտնի (և հաջող) գործունեությանը, հռոմեական և իտալիկական պոլիտիկանների անօրինակ ծախվածությանը, բայց հայրենասիրական նկատառումներից դրդված ջանում էին կոծկել այն։ Ահա թե ինչու հայտնի անտիկ պատմաբան Ապպիանոսը, այդ նրբանկատ հարցը շոշափելիս, իր «Միհրդատյան պատերազմներում» ոչ այնքան հասկանալի գրել է. «... նա (Միհրդատը) գիտեր (որտեղի՞ց — Վ. Լ.), որ վերջերս գրեթե ամբողջ Իտալիան ատելությունից դրդված հեռացել է հռոմեացիներից և երկարատև ու դաժան պատերազմի մեջ է եղել նրանց դեմ և նրանց դեմ դաշինք է կնքել Սպարտակի՝ գլադիատորի, վատահամբավ մի մարդու հետ»։

Մայիսի վերջին Ամիսոսի շրջանում զորավարժություններից և նավատորմի փորձարկումից հետո, Միհրդատի զորքերը դուրս էին բերված ելման դիրքերը։ Մշակված ծրագրի համաձայն հարձակումը ենթադրվում էր վարել այսպես. 1) Պափլագոնիա-Բիթանիայի ուղղությամբ պոնտական վեց բանակների (հրամանատարներ՝ Տաքսիլես, Հերմոկրատես, Ալեքսանդր, Դիոնիսիոս, Հերմեոս, Դիոկլես) և սերտորիոսական չորս բանակների (հրամանատարներ՝ Մ. Վարիոս, Մ. Մարիոս, Լ. Ֆանիոս, Լ. Մագիոս) ուժերով։ 2) Բիթանիա-Փռյուգիա, Պիսիդիա-Իսավրիա ուղղությամբ մեկ բանակի ուժերով (հրամանատար՝ Եվմաքոս), 3) Բիթանիա-Փռյուգիա-Պիսիդիա-Կիլիկիա) մեկ բանակի ուժերով (հրամանատար՝ Մետրոֆանես)։ Նավատորմին կարգադրված էր ափի երկայնքով նավարկել և հարձակվող բանակին ապահովել պարենով, ինչպես և թշնամուն զրկել թիկունքում՝ Պոնտոսի տարածքում, դեսանտ իջեցնելու հնարավորությունից։ Հռոմեական զորքերը Բիթանիայից և Ասիայից դուրս մղելուց ու թրակական Բոսպորոս և Հելեսպոնտոս նեղուցները ազատելուց հետո, նախատեսված էր Լեմնոս կղզում որպես հավաքատեղի կենտրոնացնել չորս բանակ՝ Մարկոս Վարիոսի, Մարկոս Մարիոսի, թրակացի Դիոնիսիոսի և պափլագոնացի Ալեքսանդրի հրամանատարությամբ պոնտոս-սերտորիոսական զորքերի 40 հազար ընտիր ռազմիկներ։ Այդտեղից հզոր նավատորմիղը նրանց պետք է Իտալիայի ափը դուրս բերեր՝ կոալիցիոն

ուժերով սուլլայական սենատի դեմ պատերազմը վերսկսելու համար։

Ե՛վ Մ. Վարիոսը, և՛ Մ. Մարիոսը եռանդագին նախապատրաստվում էին Իտալիայում սուլլայականների դեմ ծրագրված գործողություններին։ Ցովահենների, վաճառականների և վստահելի մարդկանց միջոցով նրանք հսկայական գումարներ էին ուղարկում հայրենիք։ Գաղտնի գործակալները, շռայլորեն շաղ տալով պոնտական ոսկին ու չզլանալով առատ խոստումներ տալ, ջանում էին օգտակար մարդիկ հավաքագրել հռոմեացիների մեջ՝ առանձնապես առափնյա քաղաքներում (Բրունդիզիում, Տարենտոս, կամպանական ափերում և այլն)։ Նրանք բավականաչափ բարյացակամ ընդունելություն էին գտնում. Իտալիայում սոցիալական իրադրությունը չափազանց լարված էր, սուլլայական սենատի հեղինակությունն այնպես էր վարկաբեկված, ինչպես երբեք։ Բոլոր դժգոհները պատրաստակամություն էին հայտնում մասնակցել ծրագրված հեղաշրջմանը և առաջիկա պատերազմին։ Նրանցից հակառակ ուղղությամբ դեպի Մարիոսն ու Վարիոսը՝ հռոմեական զորքերի գլխավոր հրամանատարն ու պոնտոսյան պալատում Սերտորիոսի գլխավոր ներկայացուցիչը, առատ և արժեքավոր տեղեկություններ էին հոսում երկրում ու տարբեր քաղաքներում, ներառյալ և Հռոմում, տիրող գործերի ընդհանուր վիճակի մասին։

Պոնտական պալատին կից սերտորիոսական այդ ռազմաքաղաքական վերնախավի մեջ միաբանություն չկար։ Նրա նշանավոր ներկայացուցիչները Սերտորիոսի ճամբարի զանազան օպոզիցիոն հոսանքներն էին ներկայացնում (Մարիոսը՝ ձախ թևը, Վարիոսը, ինչպես և Սերտորիոսը, ցենտրիստ էր, Ֆիմբրիոսի երկու նախկին սպաներ Մագիոսը և Ֆանիոսը՝ աջ թևը. սրանք Սերտորիոսի առաջին տեղակալ Պերպերնայի կողմնակիցներն էին)։ Այս պարագլուխները բոլոր ընթացիկ և հեռանկարային կարևորագույն հարցերի շուրջ կատաղորեն վիճում էին միմյանց հետ։ Հայացքների տարբերությունը լրացնելու էր գալիս անձնական սուր մրցակցությունը, պատերազմում կամ պոնտական արքունիքում հաջողությունների և դիրքի նկատմամբ փոխադարձ նախանձը։

Միհրդատի համար նոր պատերազմը հաջող սկսվեց։ Տաքսիլեսի և Հերմոկրատեսի ղեկավարությամբ նրա զորքերը երկու

զորաբաժիններով ներխուժեցին Պափլագոնիա և հռոմեացիների արգելափակիչ թույլ ջոկատներին փախուստի մատնեցին։

Երբ երկու զորաբաժինները Բիթանիայի սահմանագլխին հանդիպեցին նախանշված վայրում, Միհրդատը դինվորական հավաքում ելույթ ունեցավ. նա զորքի առջև ճառեց, փառաբանելով իր նախնիներին և գովաբանելով իրեն, ասելով, որ իր նախկին փոքրիկ թագավորությունը դարձել է հսկայական և ինքն անձամբ ոչ մի անգամ հռոմեացիներից պարտություն չի կրել։ Հետո նա հռոմեացիներին մեղադրեց շահամոլության և ագահության համար, որի ծանրության տակ հեծեծում է ստրկացված Իտալիան և նրանց հայրենիքը։ Դրանից բացի, վերջին դաշնագրի մասին հայտարարեց, թե իբր հռոմեացիները չեն ցանկանում գրավոր ձևակերպել այն, սպասելով հարմար պահի նորից հարձակվելու համար։ Այս պատերազմի մեջ մեղքը բարդելով նրանց վրա, նա նշեց իր զորքերի ու զենքի ուժը և մատնացույց արեց այն, որ այժմ հռոմեացիները Իբերիայում զբաղված են Սերտորիոսի հետ լուրջ պատերազմով, իսկ Իտալիայում երկպառակտիչ պատերազմ է։ «Այդ պատճառով,— ասաց նա,— նրանք ուշադրություն չեն դարձնում արդեն երկար ժամանակ ծովային ավազակների տիրապետության տակ գտնվող ծովին էլ և նրանք ոչ մի դաշնակից չունեն, և ոչ ոք կամովին իրեն նրանց հպատակը չի համարում։ Մի՞թե չեք տեսնում,— ասաց նա՝ ցույց տալով Վարիոսին և երկու Լուցիոսներին,— որ նրանցից լավագույնները իրենց հայրենիքի թշնամիներն են և մեր դաշնակիցները» (Ապպիանոս)։

Զորքը բարեհաճությամբ ընդունեց արքայի ճառը։ Դրանից ոգևորված՝ Միհրդատը մայիսի վերջին հարձակվեց Բիթանիայի վրա։ Կոնսուլ Կոտան անմիջապես ծանր դրության մեջ ընկավ։ Նա հենց նոր էր ժամանել պրովինցիա և շտապում էր զորք հավաքել։ Հարձակման պահին նրա հրամանատարության տակ գտնվում էր 24 հազար հետևակ և 1800 մարդուց բաղկացած այրուձի (նրա զորքերի կեսը բերված էր Իտալիայից 100 նավերով, մյուս կեսը՝ տեղական կայազորներն էին), դաշնակիցները նրան հատկացրին ևս 80 նավ։ Նման ուժերով Կոտան ստիպված եղավ դիմագրավել թշնամու հարձակմանը։ Այնուամենայնիվ, նա չվարանեց ճակատամարտ տալ։ Պոնտական զորքերով բոլոր կողմերից շրջապատված կոնսուլը գլխովին ջախջախվեց և ստիպված եղավ նահանջել, պրովինցիան թող-

նելով թշնամու քմահաճույքին։ Միանգամայն քայքայված զորքերով, Տաքսիլեսի բանակի ճնշման տակ, նա դժվարությամբ կարողացավ հասնել թրակական Բոսպորոս նեղուցը և թաքնվեց Քաղկեդոն ուժեղ ամրոցում։

Կոտայի պարտությունն ամբողջ պրովինցիան ընդունեց բերկրանքով. հռոմեացիներին այստեղ, ինչպես ամենուրեք, ատում էին։ Քաղաքները իրենց դարպասները բաց էին անում հաղթողների առջև, պոնտական կուսակցությունն ամենուրեք հաղթում էր։

Կոտայի դեմ տարած հաղթանակը ճանապարհ բացեց դեպի Ասիա պրովինցիան։ Հերմոկրատեսի զորաբանակը թեքվեց հարավ և մեկը մյուսի հետևից քաղաքներ գրավեց։ Առջևից շարժվում էին սերտորիոսական բանակները։ Նրանք դուրս եկան ծովափ, գրավեցին Լամպսակոսը, Պարիոսը, Պրիապոսը։ Պատերազմում հաջողակ զաբավար Մ. Մարիոսի բանակի հետևից գալիս էր Միհրդատը։ Եվ երբ լիկտորներով շրջապատված Մարիոսը մուտք գործեց քաղաք, Միհրդատը, ստորադրյալի նման, մտավ նրանից հետո։ Այլ կերպ նա չէր կարող վարվել. ըստ պայմանագրի Ասիան մտնում էր Սերտորիոսի տիրապետության մեջ։ Իսկ Մարիոսը, Պլուտարքոսի ասելով, որոշ քաղաքների ազատություն էր պարգևում, մյուսներին Սերտորիոսի անունից ազատում էր հարկերից, այնպես որ Ասիան ոգի էր առնում և լցվում հույսերով։

Պոնտա-սերտորիոսական զորքերի հաջող գործողությունների հետևանքով բոլորը հռոմեացիների համար Բիթանիան և Ասիան կորած համարեցին։ Հռոմեացի վաճառականներն ու կապալառուները դրամն ու հարստությունները վերցնելով, փախան Կոտայի մոտ՝ Քաղկեդոն։

Հռոմում չափազանց ընկճված էին կոնսուլի անհաջողություններից։ Իրենց մխիթարելով՝ սենատում ասում էին, թե Կոտան զինվորական առումով թույլ մարդ է (կարծես թե նրա կողքին փորձառու զինվորական խորհրդատուներ չկային) և միանգամայն մոռանում ու չէին էլ ուզում հիշել պրովինցիաների բնակչության վերաբերմունքը հռոմեացիների նկատմամբ։ Իսկ այդ վերաբերմունքը մեկ անուն ուներ՝ ատելություն։ Դրանում, իհարկե, զարմանալի ոչինչ չկար։ Լ. Լուկուլլոսի՝ Ասիա պրովինցիա ժամանելու նախօրյակին այդ դրության մասին Պլուտարքոսը հայտնում է. «Այն (պրովինցիան) սարսափելի և անհավատալի

տառապում էր։ Կապալառուներն ու վարկատերերը կողոպտում էին այն և բնակչությանը դարձնում ստրուկներ։ Մասնավոր անձինք ստիպված էին լինում վաճառել իրենց գեղեցիկ որդիներին ու դուստրերին, իսկ քաղաքները՝ իրենց տաճարների ընծաները, նկարները և արձանները, մինչև որ պարտքի դիմաց իրենք էլ դառնում էին ստրուկներ։ Էլ ավելի սարսափելի տանջանքներ էին կրում նրանք ստրուկ դառնալուց առաջ. նրանց ծեծում էին մտրակներով, գցում էին բանտերը, նստեցնում էին ցցի վրա, ստիպում էին ամռան տապին կանգնել թեժ արևի տակ, իսկ ձմռանը՝ ցեխի կամ ձյան մեջ, այնպես որ ստրկությունը նրանց համար մի տեսակ թեթևություն և հանգստություն էր» (Պլուտարքոս)։

Պրովինցիաներում այսպիսին էր իրադրությունը, որը նախապայմաններ էր ստեղծում պոնտա-սերտորիոսական զորքերին որպես ազատարարների դիմավորելու համար։

Միհրդատին շրջապատող զորապետների մեջ սուր վեճեր էին տեղի ունենում հետագա գործողությունների ծրագրի վերաբերյալ։ Ոմանք կողմնակից էին Իտալիայի վրա անմիջապես հարձակվելու, մյուսները՝ ավելի զգուշավոր գործողությունների։ «Արքա՛,— ասում էին նրանք,— հարկ չկա այդպես մեծ ռիսկի դիմել։ Հարձակվել Իտալիայի վրա՝ նշանակում է հռոմեացիների հետ անհաշտ պատերազմի մեջ մտնել։ Անհաջողության դեպքում քեզ, ինչպես Հաննիբալին, գթություն չի լինի։ Այդ պատճառով լավ է բավարարվել Ասիայի նվաճումով, իսկ եթե հաջողվի, ապա նաև՝ Հունաստանի։ Առանց այդ տարածքների հռոմեացիները կարող են գոյություն ունենալ, նրանց վարկը նման կորուստներից շատ չի ընկնի»։

Սակայն Սերտորիոսի զորապետները գերակշռությամբ առաջին ծրագրի կողմնակիցն էին. նրանք ձանձրացել էին օտար հողում դեգերելուց, ցանկանում էին վերադառնալ հայրենիք, Հռոմ։ Բայց ոմանք որոշ վախ ու շփոթմունք էին ապրում։ «Սուլլայականները մեզ առանց այդ էլ հայրենիքի դավաճաններ են համարում,— ասում էին նրանք։— Եվ ահա մենք նրանց ձեռքը նոր փաստարկ ենք տալիս. Հռոմի վրա ենք տանում նրա երդվյալ թշնամիներին՝ պոնտացիներին»։

Այս վեհերոտ արտահայտությունները, սակայն, մեծամասնության կողմից մերժվում էին։ Ընդ որում խորհրդակցությունների ժամանակ առավել ակտիվություն և ագրեսիվություն էր ցու-

ցաբերում Մարիոսը։ Նա տենչում էր Իտալիա մտնել, բուն դժգոհություն էր հայտնում զանազան դանդաղումների և հետաձգումների ժամանակ, ծարավի էր վրեժ լուծել իր համար, սուլլայականների ձեռքով մահապատժի ենթարկված հորեղբոր և հոր համար, երազում էր հնարավորին չափ շուտ վերադառնալ Հռոմ, և անպատճառ որպես հաղթող։

Ամռանը Միհրդատի նավերով և ծովահենների հետ բազմիցս ծով էր դուրս գալիս, խլում Իտալիա մեկնող նավերի հացահատիկը և հավատարիմ մարդկանց ջոկատով Բրունդիզիում, Տարենտոսի ու նույնիսկ կամպանական ծովեղրում ափ էր իջնում։ Մարիոսը նավ էր բարձրացնում իր գործակալներին, նորերին ափ էր հանում, կողոպտում էր թշնամիների առափնյա կալվածքները, գերեվարում էր ձեռքն ընկած արիստոկրատներին։ Լուր տարածելով, թե շուտով զորքով վերադառնալու է Իտալիա, նա կրկին հեռանում էր դեպի ծովը։ Սենատական ադմինիստրացիայի դանդաղկոտությունը, նաև անհրաժեշտ ծովային ուժերի պակասը, հնարավորություն չէր տալիս հաջողությամբ պայքարելու նրա և ծովահենների դեմ։

Որպես կոնսուլ Լ. Լուկուլլոսը-սենատում կատաղի պայքար էր մղում նոր մեծ նավատորմի ստեղծմանը նշանակալից միջոցներ հատկացնելու և ծովահենների դեմ կռվելու նպատակով իշխանությունը կենտրոնացնելու համար։ Բայց սենատի մեծամասնությունն ամեն անգամ ձախողում էր Լ. Լուկուլլոսի առաջարկությունը։

Արևելքում խոշոր անհաջողությունները ստիպեցին Լուկուլլոսին շտապել։ Գործերը հանձնելով նորընտիր կոնսուլներին, սովորույթի համաձայն Ալբանական լեռան վրա զոհ մատուցելուց հետո, նա 74 թվականի հուլիսին մեկ լեգեոն հետևակով և հեծելազորային ջոկատով (1200) մարդ) Բրունդիզիումից ծով դուրս եկավ։ Հուլիսի 10-ին ափ իջավ Եփեսոսում, միացավ ֆիմբրիական երկու լեգեոնների հետ, իսկ հուլիսի 24-ին երեք լեգեոնով ժամանեց Սելևկիա (Կիլիկիա) և միացավ կիլիկիական երկու լեգեոններին։ Ամռվա մնացած օրերը ծախսելով տեղական գործերը կարգի բերելու վրա, 74 թվականի օգոստոսի սկզբին հակառակ ճանապարհով՝ Պիսիդիայի և Փռյուգիայի միջով Լուկուլլոսը շարժվեց դեպի հյուսիս՝ Միհրդատի վրա։ Իր հետևում նա շատ թույլ թիկունք թողեց։ Հռոմեացիներին հավատարիմ մնացած համայնքների և քաղաքների դեմ արդեն գործում

էին թշնամու երեք զորավարներ՝ Եվմաքոսը, Մեսրոֆանեսը և հարավ ուղարկված Լ. Ֆանիոսը։ Լուկուլլոսը, ճիշտ է, կարողացավ Ասիա ժամանելով հռոմեացիների կողմը ներգրավել Դեյոտարոսին՝ կելտական ցեղերից մեկի տետրարքոսին, որն հետագայում դրա համար հռոմեական սենատից թագավորի տիտղոս ստացավ (Ցիցերոնը նրան շատ էր հարգում արքայական շռայլության, ազնվության և հայացքների կայունության համար)։

Բայց հռոմեացիների նկատմամբ բնաչկության ընդհանուր թշնամական տրամադրությունը Լուկուլլոսին խիստ մտահոգություն էին պատճառում։ Անհրաժեշտությունից դրդված, նա ամենուրեք՝ դաղարների ժամանակ և ճանապարհին, իր մոտ էր կանչում ազդեցիկ կապալառուներին և արտակարգ կերպով Ասիա պրովինցիան նրա ենթակայությանը հանձնած սենատի լիազորության հիման վրա «հորդորում և կոչ էր անում չափավորության, որով և իր ձեռքում էր պահում գրեթե լիովին երես թեքած համայնքները, որոնցից, կարելի է ասել, և ոչ մեկը հանգստություն չէր պահպանում» (Պլուտարքոս)։ Դեպի հյուսիս ամբողջ ռազմերթի ընթացքում Լուկուլլոսը ստիպված էր լինում կռվել սեփական ռազմիկների, առանձնապես նախկին ֆիմբրիականների հետ։ Վերջիններս կամակոր ու կատաղի մարդիկ էին, սովոր զեկավարության շողոքորթությանը, բայց միաժամանակ քաջարի, դիմացկուն և զինվորական մեծ փորձ ունեցող ռազմիկներ։ Վերջ ի վերջո, Լուկուլլոսը կարողացավ կոտրել Ֆիմբրիականների հանդգնությունը և կարգ ու կանոն հաստատել մնացածների մեջ, ապացուցելով նրանց, որ ռազմական ծառայությունը ժամանց չէ։

Այդ ընթացքում Լուկուլլոսի հակառակորդները, տեղեկանալով Կիլիկիայից զորքով նրա վերադարձի մասին, սկսեցին վերադասավորել իրենց ուժերը։ Միհրդատի չորս բանակները շարունակում էին պաշարել Կոտային Քաղկեդոնում, կատաղորեն ջանալով կոտրել նրա դիմադրությունը և ճանապարհ բացել դեպի Պրոպոնտիս, իսկ այնտեղից՝ Եգեյան ծով։ Միաժամանակ, Մարիոսի հրամանատարության տակ չորս բանակներ միացվեցին, երկուսը հռոմեական, երկուսը պոնտական՝ 40 հազար հետևակով և 5200 այրուձիով։ Մարիոսը ստացավ հրամանատար Մարկոս Վարիոսի կողմից հատատված արքայի հրամանը՝ դուրս գալ Լուկուլլոսին ընդառաջ և ջախջախել նրան

կամ, գոնե, խափանել առաջխաղացումը։ Միաժամանակ պոնտական մի բանակ Հերմոկրատեսի հրամանատարությամբ պաշարեց Կիզիկոս հարուստ քաղաքը։ Այդ ազդեցիկ քաղաքը, որը մեծ նավատորմ ուներ, հրաշալի նավահանգիստ, մարմարյա աշտարակներով հզոր պարիսպներ և փառաբանված ամրոց, հռոմեացի պատմաբան Ֆլորոսի բառերով ասած՝ «ասիական ափի զարդն էր»։ Կիզիկոսը խոչընդոտում էր դեպի հարավ՝ Հելլեսպոնտոս լողացող պոնտական նավերի անցմանը և օգնում էր պաշարված Կոտային, այդ պատճառով քաղաքի շուտափույթ գրավումն անհրաժեշտ էր թվում։

Օգոստոսի 20-ին, 560 կիլոմետր ճանապարհ կտրելով, Լուկուլլոսը ժամանեց Օտրիա (Փոյուգիա) փոքրիկ բնակավայրը։ Մինչև Քաղկեդոն մնացել էր 480 կիլոմետր, 18 օրվա ճանապարհ և 4 օրվա՝ հեծյալ կապավորի համար։ Այստեղ, Օտրիայում, իր բանակով նրան սպասում էր Մարիոսը։ Թշնամու ուժերը ավելի նշանակալից էին. Լուկուլլոսն ուներ 30 հազար հետևակ և 2500 այրուձի[1]։

Ճակատամարտ տալու հարցը վճռելու համար Լուկուլլոսը զինվորական խորհրդի հավաքեց իր սպաներին՝ նրանց, ովքեր անհայտությունից նրա հետ միասին քայլ էին արել դեպի Ասիան նվաճողների մեծ փառքը, ովքեր օգնում էին նրան այն գործում, որն ի վերջո Լուկուլլոսի արշավանքը դարձրեց «ամենահրաշալի արշավանքներից մեկը, իսկ նրան՝ ամենախելոք և քաջարի առաջնորդներից մեկը» (Ցիցերոն)։ Ահա թե ինչ անձանցից էր բաղկացած Լուկուլլոսի ռազմական խորհուրդը.

1. Ապպիոս Կլավդիոս Պուլքրոս, Լուկուլլոսի կնոջ եղբայրը, Պոմպեոսի հավատարիմ զինակիցը և նրա ավագ որդու ապագա անները, շատ քաջ մի մարդ, Ցիցերոնի կարծիքով՝ այրերից ամենաշահամոլը։

2. Լ. Մուրենա, Երկրորդ Միհրդատյան պատերազմի ժամանակ (83—82 թթ.) Միհրդատի դեմ մարտնչած Լ. Մուրենայի որդին։ Հետագայում (63 թ.) Ցիցերոնը նրա մասին գովեստով կասի. «Լ. Մուրենան լեգատի պաշտոնում ցուցաբերեց մեծ քաջություն, մեծ խելք, մեծ աշխատասիրություն, և նրա հենց այդ գործունեությունը, պնդում եմ ես այնուհետև, նրան ոչ պակաս

---

[1] Այս պաշտոնական, սակայն բավականին կասկածելի թվերը, վերցված են Լուկուլլոսի արևելյան ռազմագեկույցներից։

հմայքով պսակելով, քան մեր գործունեությունը՝ ֆորումում, նրա համար ճանապարհ հարթեց դեպի կոնսուլություն»։

3. Գ. Վալերիոս Տրիարիոս։ Հետագայում նա կդառնա Պոմպեոսի լեգատ։

4. Կվ. Վոկոնիոս։ 66 թվականին կդառնա պրետոր։

5. Կասիոս Բառբա։ Մեծ արշավանքներից հետո նա կանցնի մասնավոր կյանքի։

6. Ե. Պոմպոնիոս, Լուկուլլոսի հեծելազորի հրամանատարը, Ատտիկոսի ազգականը։

7. Կվ. Սեքստիլիոս, հետագայում Ցիցերոնի բարեկամը։

8. Մ. Ֆաբիոս Ադրիանոս։ Բառբայի նման կանցնի մասնավոր կյանքի, ընկերական կապերով կմտերմանա Ցիցերոնի հետ։

9. Սորնացիոս, նա 67 թվականին 7 հազարից ավելի հռոմեացիների հետ միասին կզոհվի Ջիելայի ճակատամարտում։

Լուկուլլոսի զինակիցների պատասխանը միահամուռ եղավ. Մ. Մարիոսի դեմ ճակատամարտ տալ։ Եվ ահա առելությամբ կրակված թշնամիները շարք կազմեցին միմյանց դիմաց։ Հանկարծ հսկայական մի երկնաքար՝ տակառի չափ, սարսափելի դղրդոցով ընկավ երկու զորքերի արանքը։ Երկու կողմերի գուշակները այդ երևույթը մեկնաբանեցին որպես աստվածների կանխանշան, որով նրանք դեմ են արյունակից բանակների ճակատամարտին։ Զորքերը վախեցան և զորապետներից պահանջեցին հրաժարվել ճակատամարտից։ Զորապետները ստիպված ենթարկվեցին։ Մարիոսն անմիջապես հետ շարժվեց, մտադիր լինելով Քաղկեդոնի մոտ միանալ Միհրդատին։ Լուկուլլոսը հետևեց նրան։

Իսկ Կոտան նույնպես որոշեց իզուր ժամանակ չվատնել։ Գիտենալով Լուկուլլոսի առաջխաղացման և Մարիոսի հետ ճակատամարտ տալու նրա մտադրության մասին, տեսնելով Միհրդատի ճամբարի տագնապը, մեծ հույսով համակվեց։ Նրա խորհրդատուներն ասում էին. «Հարկավոր է Լուկուլլոսի գալստյանը չսպասելով՝ ճակատամարտ տալ։ Դու կհաղթես, Կոտա, և Լուկուլլոսի հետ չես կիսի Միհրդատին հաղթողի փառքը»։

Կոտայի և նրա խորհրդատուների ծրագրված գործողությունը լիովին ձախողվեց և սարսափելի կործանման հասցրեց. 20 հազար զորքից 16 հազարը սպանվեց կամ գերի ընկավ, ոչնչացավ նաև նավատորմը։

Սեպտեմբերի կեսերին Լուկուլլոսը մոտեցավ Քաղկեդոնի պարիսպներին և ճամբար դրեց հակառակորդի աչքի առաջ։

Առաջին իսկ օրից կողմերի միջև սկսեցին բախումները։ Միհրդատը կրկնակի գերազանցություն ուներ. Քաղկեդոնը պաշարած զորքի թիվը հասնում էր 100 հազարի։ Նա ճակատամարտ էր առաջարկում, իսկ Լուկուլլոսը խուսափում էր՝ ձգտելով պոնտացիներին հաղթել սովահարությամբ։ Հռոմեացիների այրուձին անընդհատ հաջող հարձակումներ էր գործում հակառակորդի պարենային փոխադրամիջոցների վրա և խափանում մատակարարումը։

Զորավարի հրամանով մի քանի քաղաքներից և համայնքներից հավաքված նավերը հաջող գործողություններ սկսեցին ծովում՝ գրավելով Պոնտոսից եկող հացով բեռնված նավերը։

Պարենի պակասից ճնշված՝ Միհրդատը որոշեց վերացնել Քաղկեդոնի պաշարումը և ամբողջ ուժերն ուղղել Հերմոկրատեսի կողմից ապարդյուն պաշարված Կիզիկոսի վրա։

Լուկուլլոսը, իմանալով հակառակորդի գիշերային տեղաշարժի մասին, լուսաբացին հետևեց նրան։ Մոտենալով իր գլխավոր դաշնակիցների քաղաքին, նա տեղավորվեց Թրակիա գյուղի մոտ։ Պոնտոսի արքան, իր տասը ճամբարները տարածած (յուրաքանչյուր ճամբարում՝ 10 հազարանոց բանակ) կանգ էր առել մոտակայքում։ Նրա նավատորմը մտել էր քաղաքը մայր ցամաքից բաժանող նեղուցը։ Այսպիսով պաշարումը կատարվում էր միաժամանակ երկու կողմից։

Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո, Լուկուլլոսը եռանդագին հողային աշխատանքներ սկսեց։

— Մի քանի օրից, զինակիցներ,— ասաց նա իր սպաներին,— ես ձեզ համար անարյուն հաղթանակ ձեռք կբերեմ։

Դրանք պարծենկոտի խոսքեր չէին։ Նախորդ օրերին իր լրտեսների միջոցով Լուկուլլոսը վերջապես կապ էր հաստատել Միհրդատի զորապետներից մեկի՝ Լ. Մագիոսի հետ։ Ոսկե սարեր և անվտանգություն խոստանալով՝ Սուլլայի մտերիմ ընկերը կարողացավ համոզել նախկին ֆիմբրիական սպային (այդ բանում նրան մեծ օգնություն ցույց տվեցին իր ճամբարում գտնվող մյուս ֆիմբրիականները) դավաճանել թագավորին և զինվորական խորհրդի ժամանակ Միհրդատին հուշել գործելու Լուկուլլոսին ձեռնտու ծրագրով։ Լ. Մագիոսը համաձայնեց։ Անհրաժեշտ առիթը շուտով ներկայացավ և պոնտական զոր-

քերի դիրքերը կործանարար վիճակի հասցրեց։ Միհրդատի զայրացած զորապետները սկսեցին խոսել Լ. Մագիոսի դավաճանության մասին։ Մերկացումից վախենալով, վերջինս շտապեց փախչել հակառակորդի կողմը[1]։

Խոշոր դավաճանության փաստի առաջ կանգնելով, Տաքսիլեսը և նրա ընկերները սկսեցին թագավորին առաջարկել անհապաղ դուրս գալ ճամբարից և ճեղքել-անցնել հակառակորդի ամրությունների միջով։ Բայց խոցված սեփական սխալից, որը հանգեցրել էր այդքան ծանր հետևանքների, Միհրդատը վճռականորեն մերժեց այդ ծրագիրը։ Նա առաջարկեց կրկնապատկել և եռապատկել քաղաքի գրավման ջանքերը։

Եվ պայքարը կրկին եռաց կատաղի ուժով։ Նախապատրաստվում էին վճռական հարձակման՝ պոնտական զորքի համար ուրիշ ելք չկար։

Մ. թ. ա. 74 թվականին փոքրասիական ռազմաթեմում այսպես ավարտվեցին ռազմական գործողությունները։

III

Իսպանիայում գործերն ընթանում էին այսպես։ Նոր տարվա (73 թ.) դարնանը, անցյալի փորձը հաշվի առնելով, Պոմպեոսն ու Մետելլոսը, ինչպես սովորաբար, անցան Իբերը և սկսեցին հարձակումներ գործել հակառակորդի քաղաքների վրա։ Նրանց առջևից գազտնի ճանապարհներով ընթացող հետախույզները ներթափանցում էին Սերտորիոսի տիրապետության տակ գտնվող տարածքների խորքերը։ Նրանք բոլորը համայնքներում գտնում էին անհաստատ և փոքրոդի մարդկանց, խոստումներ շռայլելով բանտարկություններ և խռովություններ էին հյուսում, ցեղերին դրդում էին ապստամբության ու խռովության։ Այդ գործունեությունը օրեցօր ավելի հաջող էր ընթանում։ Բազմաթիվ համայնքներում և քաղաքներում հռոմեական կուսակցությունը հաղթում էր Սերտորիոսի դաշնակից ազգային

---

[1] Լուկուլլոսի շնորհիվ Լ. Մագիոսը լրիվ ներում ստացավ, վերադարձավ Իտալիա և որպես կարողություն ունեցող մեկը բնակվեց Կրեմոնում։ Նրա որդին՝ Նումերիոս Մագիոսը հետագայում Պոմպեոսի մոտ արհեստավորների պետ էր և վերջինիս կողմից մասնակցում էր Կեսարի դեմ քաղաքացիական պատերազմին։

կուսակցությանը։ Դրա հետևանքով Պոմպեոսին և Մետելլոսին հաջողվեց առանց կռվի իրենց կողմը ներգրավել մի շարք քաղաքներ։ Հաջողություններից ոգևորված, նրանք արդեն առավել համարձակությամբ սկսեցին մոտենալ այն քաղաքներին, որտեղ թշնամական կայազորներ կային։

Այդ ընթացքում Սերտորիոսն էլ ընկճված տրամադրություն ուներ։ Միհրդատի հետ կնքած տարօրինակ դաշինքի համար նա անընդմեջ բազմաթիվ կշտամբանքների էր ենթարկվում Իսպանիայում հռոմեացիների վտարանդիներից իր կազմակերպած սենատի ընկերակիցների կողմից։

Այս հարցում անհաշտելի հակասություն գոյություն ուներ։

Ինչպե՞ս էր պետք լուծել։ Դա Սերտորիոսն ինքն էլ չգիտեր։ Մի կողմից, Միհրդատի հետ դաշինքը թելադրում էին քաղաքական հանգամանքները, մյուս կողմից՝ հռոմեացիների վաղեմի թշնամու հետ միությունը հակասում էր հենց նրա՝ մարիոսականների վերջին խոշոր ներկայացուցչի, մտքերին և համոզմունքների ամբողջ համակարգին։

Զբաղված լինելով մարիոսականների վերնախավի մեջ սուր վեճեր հարուցող սկզբունքային կարևոր հարցի լուծմամբ և կուսակցական ամենաերևելի ներկայացուցիչներ Գ. Կոտայի, Կրասոսի և Ցետեգոսի հետ գաղտնի նամակագրությամբ, Սերտորիոսն ամբողջ 73 թվականին անձամբ չմասնակցեց ռազմական գործողություններին։ Պոմպեոսի և Մետելլոսի դեմ հիմնականում գործում էին նրա լեգատները։

Բայց Իտալիայում բռնկված ստրուկների պատերազմի պատճառով վերջիններս բացահայտորեն կորցրել էին իրենց նախկին ռազմական ոգին ու եռանդը։ Պոմպեոսն ու Մետելլոսը ճարպկորեն օգտվում էին դրանից, ընդլայնելով իրենց ազդեցության ոլորտը, հաջողությամբ ճնշում էին թշնամուն, նրա հողերից խմբերով դեպի իրենց գրաված վայրերն էին տեղափոխում արական բնակչությանը։

Ամբողջ 73 թվականի գարնանը և ամռանը Իսպանիայում այսպես էին ընթանում գործերը։ Աշնանամուտին երկու կողմերն էլ զորքերը տարան ձմեռային կացարանները։

IV

73 թվականի հունվարին Կիզիկոսի մոտ մարտերը հասան իրենց կիզակետին։ Օր օրի Լ. Լուկուլլոսի ամրությունների մեջ օղակով սեղմված Միհրդատի բազմամարդ բանակի վիճակը դնալով ավելի բարդանում էր մատակարարման անընդհատ վատթարացման հետևանքով։ Ավելի շատ զինվորներ էին մահանում հիվանդություններից, քաղցից ու ցրտից։ Հուսահատության եզրին կանգնած նրանց ընկերները դիակները շպրտում էին ճամբարի դարպասներից դուրս։

Միհրդատը շրջում էր դեմքի անթափանց արտահայտությամբ (նա իրեն շատ լավ էր տիրապետում)։ Զորավարները վախվորած կարծիքներ էին փոխանակում նրա թիկունքում, արքան խիստ բնավորություն ուներ և չէր սիրում լսել ինքնակոչ խորհուրդներ։ Արքայի ցասման ահից ոչ մեկը չէր համարձակվում կրկին խորհուրդ տալ Կիզիկոսի պաշարումը վերացնելու և թշնամու դիրքերը ճեղքել անցնելու մասին։

Առաջինը քաղցի տանջանքներին չդիմացան սկյութները. նրանք սկսեցին դիակները քերթել, միսը կրակի վրա խորովել և ուտել։ Նրանց օրինակին հետևեցին մյուս բարբարոս ցեղերը։

Կիզիկոսցիներն անմիջապես զգացին թշնամու ճնշման թուլանալը։ Իրենց հրամանատար Պիսիստրատեսից քաջալերված, նրանք հաճախակի արտագրոհներ էին կազմակերպում։ Շուտով նրանց հաջողվեց քանդել Միհրդատին Դինդիմոս լեռան հետ կապող ստորգետնյա խրամատը, իսկ հետո հրդեհել քաղաքի պարիսպներին մոտեցած նրա պաշարողական մեքենաները՝ Թեսալացի Նիկոնիդեսի զարմանահրաշ շինվածքները։

Թշնամիների նոր հաջողությունից պոնտական զորավարների համբերության բաժակը լցվեց։ Նրանցից ամենաազդեցիկները՝ Հերմոկրատեսը և Տաքսիլեսը, հարգալից, բայց հաստատակամ սկսեցին արքային խնդրել նորից ռազմական խորհուրդ գումարել։ Արքան համաձայնեց։

Խորհուրդը բուռն էր։ Հերմոկրատեսն, առանց գունազարդելու, արքային ներկայացրեց զորքերի սարսափելի վիճակը, նշեց, որ հեծելազորից, որպես մարտական ուժից, զրկվելու իրական վտանգ կա՝ կեր հայթայթելու անընդհատ փնտրտուքի մեջ ձիերը հարել էին սմբակները։

Հերմոկրատեսին պաշտպանեցին մյուս զորապետները։

Նրանք առաջարկում էին վերացնել Կիզիկոսի պաշարումը և ստրատեգիական խնդիրները լուծելու այլ ճանապարհներ որոնել։

Բայց Միհրդատը ոչ մի կերպ չէր ցանկանում հաշտվել նման առաջարկության հետ։ Նա նոր ծրագրով հանդես եկավ և զինվորական խորհրդին ստիպեց ընդունել այն։ Դեպի Բիթանիա ճեղքման համար զորքերի հրամանատար ընտրեց իր լավագույն զորավարներից մեկին՝ Հերմոկրատեսին։

Հերմոկրատեսը եռանդագին սկսեց նախապատրաստվել արշավանքին։ Փետրվարյան մի երեկո նա նավերով ուժեղ մի ջոկատ ուղարկեց դեպի հռոմեացիների թիկունքը՝ հին ամրություններից մեկը։ Վերջինս բարեհաջող հասավ նշանակված վայրը և ամրացավ այնտեղ։

Լ. Լուկուլլոսը մեկ լեգեոնով և օժանդակ զորախմբով անմիջապես շտապեց դեպի Թշնամու ամրությունը, շրջապատեց պոնտացիներին և ջանաց դուրս շպրտել նրանց։

Իսկ Հերմոկրատեսը, օգտվելով թանձր մթությունից, իր 10 հազարանոց, հիմնականում հեծելազորային (մոտավորապես 9 հազար հեծյալ) բանակով և գրեթե ամբողջ զորքի գումակով (40 հազար մարդ) դուրս եկավ և շարժվեց դեպի հարավ-արևելք։ Նա գնում էր դեպի Ապոլլոնիա՝ մտադրություն ունենալով ճեղքել-հասնել ծովին, մթերային բազաներին։

Ճամբարից պոնտական զորքերի զգալի մասի դուրս գալու լուրն առնելով, Լ. Լուկուլլոսը թողեց լեգեոնը և իրեն տրված օժանդակ զորամասերը թշնամուն պաշարելու համար, իսկ ինքը հեծյալ ջոկատով հետ շտապեց։

Առավոտյան հանկարծակի ձյուն տեղաց։ Ուժեղ քամի փչեց։ Ջերմաստիճանն իջավ մինչև — 10°։ Այդուհանդերձ Լուկուլլոսը, չնայած հռոմեացի զորավարների կողմից ձմեռային արշավանքների նկատմամբ ունեցած վաղեմի նողկանքին, զինվորներին կոչ արեց ուժերը լարել և նետվեց հեռացող թշնամուն հետապնդելու։ Իր հետ նա տանում էր հռոմեական մեկ լեգեոն, օժանդակ զորք և 2 հազարանոց այրուձի։ Ռինդակոս գետի մոտ Լուկուլլոսը հասավ թշնամուն և ծանր պարտության մատնեց, զավթեց 6 հազար ձի, անհամար քանակությամբ բեռնակիր անասուններ և 15 հազար գերի վերցրեց։

Պոնտական ճամբարների մոտով անցկացված իրենց գերի

ընկերների տեսքը և Հերմոկրատեսի զոհվելու լուրը պոնտական մնացած զորքի վրա ծանր տպավորություն թողեց։

Զորավարների համառ խնդրանքով Միհրդատը կրկին զինվորական խորհուրդ գումարեց։ Զորապետները Տաքսիլեսի գլխավորությամբ աղաչում էին արքային դիջել անդառնալի ճակատագրին, պաշարումը վերացնել և ամբողջ զորքով ճեղքման գնալ։ Միհրդատը չէր համաձայնում։ Այդ պահին նա Լուկուլլոսի ճամբարից շատ հաճելի լուր էր ստացել։ Նկատի ունենալով, որ հռոմեական ճամբարում իր բանսարկությունները վերջապես ցանկալի պտուղներ են տվել, նա զորավարներին վճռական պատասխան տալը հետաձգեց։

Իր մոտ կանչելով ծովակալներից մեկին՝ Արիստոնիկոսին և ամենասիրելի պալատականներից մեկին՝ Արքելայոսին, Միհրդատը նրանց բացատրեց իրադրությունը։ «Ֆիմբրիականների զորքը,— ասաց նա,— Լուկուլլոսի ճամբարում կասկածանքի տակ է գտնվում. մի ժամանակ նրանց հրամանատարները Ֆիմբրիայի հետ միասին սպանեցին կոնսուլ Ֆլակոսին, և ահա հիմա ինձ մոտ գաղտնի դեսպաններ են ուղարկել։ Նրանք խոստանում են անցնել իմ կողմը։ Դու, Արքելայոս, գնա նրանց մոտ, որպեսզի հաստատես անցման պայմանները և փախստականներին բերես այստեղ»։ Արքելայոսը համաձայնեց և գիշերով, պահակախմբի հետ գաղտնի գնաց Լուկուլլոսի ճամբարը։ Բայց բնավ էլ այնպես չստացվեց, ինչպես հույս ուներ Միհրդատը։ Բանակցությունների ժամանակ Ֆիմբրիականները հարձակվեցին Արքելայոսի վրա, պահակախմբին կոտորեցին, իսկ նրան գերի վերցրին։

Այսպիսով բոլորին պարզ դարձավ, որ Միհրդատը ընկել է Լ. Լուկուլլոսի խորամանկորեն հյուսած թակարդը և նոր ստրացուցիչ պարտություն է կրել։

Բայց ճակատագիրը դրանով էլ չբավարարվեց։ Կարծես թե այն ուրբի էր. ելել Միհրդատի դեմ։ Խստաշունչ ցրտերին հաջորդեց անսպասելի հալոցքը՝ վրա հասնող գարնան նախանշանը։ Բաղում անթաղ նետված դիակները հիմա, ասես, վրեժ էին լուծում քաղցաատանջ բանակից։ Արևի տակ քայքայվելով, նրանք համաճարակ էին տարածում։ Կիզիկոսի բնակիչները, Միհրդատի երկու խոշոր պարտությունների լուրն առնելով, հաճախացրին արտագրոհները։ Նոր միայն Միհրդատը հնազանդվեց և վերջապես համաձայնեց վերացնել քաղաքի պաշարումը։

Զորավարները (Տաքսիլես, Մարիոս, Հերմեոս) արագորեն նախապատրաստվեցին արշավին և մի գիշեր դուրս եկան ճամբարից։ Ինքը՝ Միհրդատը, ինչպես և որոշված էր, լուր տարածելով, որ վերադառնում է հարազատ թագավորություն, բայց իրականում նավերով և զորքի ընտիր մասով (շուրջ 50 հազար հռոմեացիներ և պոնտացիներ՝ Մ. Վարիոսի հրամանատարությամբ) Հելլեսպոնտոսի միջով մեկնեց հարավ, դեպի Կրետե կղզին։ Նա մտադիր էր այնտեղից ծովահենների՝ դաշնակիցների ամուր իշխանության տակ գտնվող իր գլխավոր ռազմածովային բազայից հանկարծակի հարձակվել Իտալիայի վրա։

Պոնտական և սերտորիոսական զորքերի մյուս մասն՝ առանց գումակի հետևակ և մի քանի հազար հեծյալ, հապճեպ շարժվում էր արևմուտք, Հելլեսպոնտոսի ափին գտնվող Լամպսակոսի ուղղությամբ։ Երթի ավանգարդում Մ. Մարիոսն էր, կենտրոնում՝ Հերմեոսը, արիերգարդը տանում էր Տաքսիլեսը։ Իմանալով այդ մասին, Լուկուլլոսը իր մի զորախմբով ընկավ պոնտացիների հետևից, Եսեպոս և Գրանիկոն գետերի անցման ժամանակ կրկին հարձակվեց թշնամիների վրա և կրկին պարտության մատնեց, կոտորելով 20 հազար մարդ, բազմաթիվ գերիներ վերցրեց։ Տաքսիլեսը կատաղաբար կռվելով, ականատեսների վկայությամբ, ընկավ մարտի պահին։

Պոնտական զորքերի մնացորդները վիթխարի կորուստներ տալով՝ հասան Լամպսակոս և ամրացան այդտեղ։

Այդ ընթացքում Միհրդատը հարձակվեց Կիզիկոսից քիչ հեռու գտնվող Պրիապոս քաղաքի վրա և դրավեց այն։ Նախկին դժբախտություններից ուշքի գալու և նոր հույսեր ներշնչելու նպատակով արքան իր ռազմիկներին թույլ տվեց թալանել քաղաքի առավել հարուստ մասը։ Ընդ որում նրա զինվորները, քաղաքացիների և քրմերի համընդհանուր հեծեծանքների տակ, սրբեցին-տարան Արտեմիսի տաճարի բոլոր գանձերը և նույնիսկ աստվածուհու հնամենի արձանը։

Պրիապոսից Միհրդատը տեղափոխվեց թրակական Խերսոնես թերակղզին։ Հանկարծակի հարձակումով նա փորձեց դրավել հռոմեացիների կողմը կանգնած Պերինթոս քաղաքը, բայց անհաջողության մատնվեց։ Դրանից հետո նա իր զորքով և նավատորմով Հելլեսպոնտոսով շարժվեց հարավ՝ դեպի Կրետե կղզին։ Իսկ Լ. Լուկուլլոսը, բավարար համարելով թշնամուն հասցված հարվածները, հաղթողի հանդիսավորությամբ մտավ

ազատագրված Կիզիկոս։ Քաղաքացիների արժանի սերն ու հարգանքը վայելելով (նրա պատվին քաղաքացիները նոր տոնախմբություն՝ «լուկուլլիաններ» սահմանեցին), Սուլլայի մերձավորագույն զինակիցը զորքով շարժվեց Լամպսակոսի վրա և պաշարեց քաղաքը։

Պաշարումը, ինչպես նա իսկույն կռահեց, նավերի բացակայության պատճառով ոչինչ չէր խոստանում։ Ահա թե ինչու Լ. Լուկուլլոսը քաղաքի տակ թողեց ուժերի մի մասը, իսկ մյուսով, նավեր հավաքելով շարժվեց Հելլեսպոնտոսի ծովափի երկայնքով։ Նկատի ունենալով նրա հաղթանակները, ոչ մեկը չհամարձակվեց առարկել։

Այդ ընթացքում Միհրդատը իր զորքով ու նավատորմով ժամանեց Փարոս կղզի (մինչև Կրետե մոտավորապես 240 կիլոմետր էր մնում. լավ քամու ժամանակ այդ դարաշրջանում նավերը 20 ժամում 220 կիլոմետր էին անցնում)։

Այստեղ Միհրդատը որոշեց մի քանի օր կանգ առնել, սպասելով բարենպաստ եղանակի, բանակների և Լամպսակոսի բնակիչների ժամանմանը։ Նա համոզված էր, որ հաղթանակած Լուկուլլոսը անմիջապես պաշարման կենթարկի իրենց։

Միհրդատի ուղարկած նավերն արագորեն հասան Լամպսակոս։ Այնտեղ գրեթե խուճապային դրություն էր տիրում։ Անընդհատ պարտություններից շարացած ռազմիկները և հրամանատարները արդեն բամբասում էին զորավարների դավաճանության մասին։ Խոսում էին, որ իբր նրանք մեծ գումարով ծախվել են Լուկուլլոսին, որ իրենց բոլորին թողել են այստեղ կոտորվելու, ինչպես Կիզիկոսի մոտ ճամբարում թողեցին հիվանդներին և վիրավորներին (պաշարման սարսափներից գալարած Կիզիկոսի բնակիչներն անմիջապես կոտորել էին բոլոր լքված պոնտացիներին) և այլն։

Փարոսից վերադարձած նավերին դիմավորեցին բուռն ցնծությամբ։ Յուրաքանչյուրը ցանկանում էր շուտափույթ ընկնել փրկարար նավերը։ Յուրաքանչյուրը վախենում էր, որ հենց իր համար տեղ չի ճարվի։ Շարքերը խախտելով՝ զինվորների բազմությունները զենքով ու փրկած եղած-չեղածով նետվեցին դեպի նավամատույցները։ Հայհոյանք ու անեծք տեղալով, միմյանց ճզմելով, կատարյալ սատանա կտրած, ոչ մեկի հրամանին չենթարկվելով, նրանք նետվում էին նավերը՝ աջ ու ձախ դաշույնների ու թրերի հարվածներ տեղալով։ Ամեն մեկը մտածում

էր միայն իր մասին։ Նման խառնաշփոթի մեջ բազմաթիվ նավեր շրջվեցին և հազարավոր մարդիկ խեղդվեցին։

Մեկ օր անց Միհրդատի նավերը քաղաքի բնակիչների հետ միասին Լամպսակոսից Փարոս կղզին բերեցին լիովին քայքայված զորամասերին։ Միհրդատը հրամայեց ռազմիկներին գիշերելու տեղավորել, կերակրել և անձնական գանձարանից դրամ բաժանել։ Իսկ ինքը զորավարների հետ խորհուրդ գումարեց՝ գործերի ընթացքը գնահատելու և ապագա ծրագրեր ու հեռանկարներ մշակելու համար։ Մարիոսն ու Վարիոսը սկսեցին համոզել արքային, որպեսզի նա հրաժարվի Իտալիայում գործողություններ սկսելուց։

— Արքա՛,— ասում էին նրանք,— դու պետք է վերադառնաս Պոնտոս։ Քո թագավորությունը, իր բացառիկ հարստության շնորհիվ, մեր միակ հույսն ու հենարանն է։ Եթե նույնիսկ քո Իտալիա ծրագրած արշավանքը հաջողություն չունենա (պատերազմում ամեն ինչ հնարավոր է. Պյուռռոսն և Հաննիբալը նույնպես կռվում էին Իտալիայում և հաջողության չհասան), ապա Պոնտոսը կպահպանի իր օրինական իշխանությունը, ինչպես քո Առաջին և Երկրորդ պատերազմներից հետո, մեր գործը կորած չէ։ Բայց եթե Լուկուլլոսը հաղթի Դիոֆանտեսին կամ կարողանա կաշառել, ապա ամեն ինչ կորած է։ Քո թագավորության կորուստը մեզ բոլորիս կկործանի։ Դիոֆանտեսը, դու ինքդ էլ գիտես, չի կարող փոխարինել քեզ։ Ո՞վ կարող է քեզ հետ համեմատվել իր ազդեցությամբ, իր պետական մեծ իմաստությամբ։

Միհրդատը համաձայնեց նման դատողություններին և քննարկումից հետո հայտնեց իր վճիռը. Իտալիայի վրա հարձակումը կիրականացվի չորս բանակների ուժերով (երկու պոնտոսյան, երկու հռոմեական), հետևյալ զորավարների հրամանատարությամբ. Վարիոս, Մարիոս, Պափլագոնացի Ալեքսանդր և Ներքինի Դիոնիսիոս։ Իսկ ինքը մնացած զորքի հետ կվերադառնա Պոնտոս և այն կպաշտպանի հաղթական Լուկուլլոսից։

Միհրդատի նման պատասխանը լսելով, հռոմեական զորավարները թեթևացած շունչ առան. դժվարագույն, նրբանկատ խնդիրը հաջողությամբ լուծվեց։ Բանն այն է, որ Մարիոսը և Վարիոսը գաղտնաբար չէին ցանկանում Միհրդատի հետ միասին արշավել Իտալիայի վրա։ Երկուսն էլ լավ գիտակցում էին իրենց համար բոլոր հնարավոր իրադրությունների ծայրահեղ անշահեկանությունը. 1) հատկապես այն, որ արքան իր հեղի-

նակությամբ և ինքնիշխանությամբ Իտալիայում կկապի նրանց ձեռքն ու ոտքը, նրանց կդարձնի իր անուժ կցորդները, արքայի հետ խոսել հավասար դիրքերից, ինչպես շարքային պոնտական զորավարների, նրանք չեն կարող։ 2) Միհրդատի՝ որպես իրենց դաշնակցի, Իտալիայում հայտնվելը, որն անխուսափելիորեն կուղեկցվի իտալական գյուղերի ու քաղաքների ավերումով, վատ տպավորություն կթողնի հասարակական կարծիքի վրա, ուժեղ փաստարկներ կտա իրենց թշնամիներ՝ սուլլայականների ձեռքը։ Իհարկե, այնժամ նրանք կասեն. «Ահա թե ինչպիսի՞ն են այդ սրիկաները. Իտալիայի՝ իրենց հայրենիքի դեմ բերել են մեր երդվյալ թշնամուն՝ Միհրդատին»։ Եվ այն ժամանակ Իտալիայի ժողովուրդներն, անկասկած, կհրաժարվեն օգնել մարիոսականներին։

Համաձայն ընդունված որոշման Միհրդատը զորավարներին թողեց նավատորմի մի մասը և 40 հազարանոց զորք։ Զորքերի և նավատորմի մնացած մասի հետ նա հետ շարժվեց դեպի Հելլեսպոնտոս։ Արքան մտադիր էր արագորեն կտրել, անցնել այն, ճանապարհին Պրոպոնտիդում գրավել հռոմեացիների կողմը հակված մի քանի քաղաքներ և հիմնավորվել Բիթանիայի մերձծովյան մայրաքաղաք Նիկոմեդիայում։ Եթե հնարավոր չլինի այնտեղ ամրանալ, փորձել ճեղքելով անցնել թրակական Բոսպորոս նեղուցը, մտնել Եվքսինյան Պոնտոս (Սև ծով) և ամրանալ Բիթանիայի հյուսիսային ծովամերձ քաղաքներում՝ կտրելով հաղթական Լուկուլլոսի ճանապարհը դեպի Պոնտոս։

Եղանակը դնալով վատանում էր։ Ուժեղ, սառցասառը քամի էր փչում։ Ալիքները շառաչով բախվում էին կղզու ափերին, իրենց հետևից ջրափոշու ամպեր թողնելով։ Մտահոգված նավավարները խորհուրդ էին տալիս.

— Արքա,— ասում էին նրանք,— ուժեղ փոթորիկ է սկսվում։ Չի կարելի ծով դուրս գալ և նավատորմը վտանգի ենթարկել։ Հարկավոր է լավ եղանակի սպասել։

— Ա՛յ, դա հենց լավ է,— պատասխանում էր Միհրդատը։— Նման փոթորկի ժամանակ հռոմեացիները սիրտ չեն անի ծով դուրս գալ. նրանք այդքան համարձակություն չունեն։ Նրանք շատից ավելի խոհեմ են։ Իսկ մենք դուրս կգանք և աստվածների հովանավորությամբ բարեհաջող կհասնենք մեր նպատակակետին։

Երեկոյան պոնտական նավերը դուրս եկան բաց ծով։ Քամին գնալով ուժեղանում էր։ Սարսափելի փոթորիկ սկսվեց։ Հսկայական ալիքները տակովն էին անում առավել գերբեռնված նավերը, շրջում էին նրանց, ջրով լցնում և խորտակում։ Մյուսներին կատաղի քամին կոտրված թիակներով և պոկոտված առագաստներով քշում-տանում էր մի կողմի վրա...

Մի օր հետո, փոթորկից և ափհանումից հսկայական կորուստներ տալով, Միհրդատն իր նավատորմով և զորքով գիշերվա մթության մեջ հասավ Լեմնոս կղզու ափերը։ Զորքի կորուստները շատ մեծ էին։ Այդ պատճառով արքան անմիջապես մի նավ ուղարկեց Փարոս՝ հրաման տալով Վարիոսին, Դիոնիսիոսին և Ալեքսանդրին 30 հազար զորք բերել Լեմնոս կղզին, Մարիոսին Իտալիայի վրա արշավելու համար թողնելով միայն 50 նավ և 10 հազար զորք։

Զորավարներն ստիպված ենթարկվեցին և, ինչպես հրամայել էր Միհրդատը, զորքի մեծ մասով մեկնեցին հյուսիս՝ Լեմնոս։ Իրենցից առաջ ուղարկված արագագնաց նավը արքային լուր էր տանում, որ իր հրամանի համաձայն նրանք լողում են դեպի Լեմնոս, բայց շատ ավելի քիչ քանակությամբ զորքով և նավերով, քանի որ իրենք նույնպես զգալի կորուստներ են կրել փոթորկի պատճառով...

Զորավարների տեղեկությունը Միհրդատը չհասցրեց ստանալ։ Իրադրությունը չափազանց արագ էր փոխվում։ Լուր տարածվեց, որ Լուկուլլոսը մեծ հաջողությամբ նավեր է հավաքում։ Այդ պատճառով Միհրդատը շտապեց թողնել Լեմնոսը, վախենալով կտրվել սեփական թագավորությունից։ Հելլեսպոնտոսով նա նեբից մտավ Պրոպոնտիդ (Մարմարա ծով) և, Կիզիկոսի մոտով անցնելով, շարժվեց դեպի դրա ամենաարևելյան մասը։ Այստեղ նա գրավեց Նիկոմեդիան (Բիթանիայի մայրաքաղաքը), որտեղ գտնվում էր նրա կայազորը։

Մ. Վարիոսը, Մ. Դիոնիսիոսը և Ալեքսանդրը զորքով ու նավատորմով Լեմնոս ժամանեցին, երբ Միհրդատն արդեն մեկնել էր։ Արքան, սակայն, նրանց միանգամայն որոշակի հրաման էր թողել. կղզու մոտ խարիսխ գցել և այստեղ դիմագրավել Լ. Լուկուլլոսի հարձակմանը։ Արքան հայտնում էր, թե հրաման է ուղարկել Մ. Մարիոսին էլ, որ զորքով գա Լեմնոս։ Այդտեղ նրանք ընդհանուր ուժերով պետք է ճակատամարտ տան Լուկուլլոսի դեմ և մեկ մարտով լուծեն ամեն ինչ։

Զորավարների միջև անմիջապես աղմկոտ վեճ սկսվեց։ Իտալիայի վրա արշավելու տրամադրված Վարիոսը սկսեց զայրանալ, դժգոհություն և անհամաձայնություն արտահայտել։ Պափլագոնացի Ալեքսանդրը նույնպես հակված էր նախկին ծրագրին, բայց խոսակցությունից շուտով պարզ դարձավ, որ նա պարզապես վախենում է Լուկուլլոսից և ցանկանում է որքան հնարավոր է արագորեն հեռանալ նրանից։ Միայն Դիոնիսիոսը, որը սովոր էր արքայի հետ սերտորեն շփվելուն ու ծանոթ էր նրա մտքերի հանկարծակի փոփոխությանը, առանց վարանելու հավանություն տվեց և իր ընկերներին համոզում էր ենթարկվել հրամանին։

Իսկ Փարոսում մնացած Մարիոսը իր զորքի մի մասով անհամբերությամբ ժամերն էր հաշվում՝ կանխավայելելով դեպի Իտալիա ցանկալի արշավանքի սկիզբը։ Հանկարծ, օ՜, մեծագույն անակնկալ, տեղ հասավ Միհրդատի ու Վարիոսի հրամանը՝ զորքով ու նավատորմով մեկնել Լեմնոս, միանալ այնտեղ գտնվող զորամասերին։ Հրամանը չեղյա՞լ էր համարում, թե՞, համենայն դեպս, հետաձգում էր արշավանքը դեպի Իտալիա։

Մինչ Մարիոսը մտածում էր և տատանվում, ինչպե՞ս անել՝ կատարե՞լ հրամանը, թե՞ ոչ, նոր անակնկալ վրա հասավ. հեռավոր Իսպանիայից, Սերտորիոսի մոտ Կրետե կղզում կարճատև դադարից հետո ժամանեց իսպանացի Իսիդորոսի ոչ մեծ նավախումբը։ Այդ ծովահենների ծովակալը նույնպես հրաման էր բերել Սերտորիոսից։ Հրամանը, անհավատալի՜ բան, նույնպես չեղյալ էր համարում Իտալիայի վրա կատարվելիք արշավանքը։

Կարդալով այդքան ապշեցուցիչ հրամանը, ցնցված Մարիոսը չէր կարողանում գլուխ հանել, թե որն է քաղաքականության այդպիսի անսպասելի փոփոխության պատճառը։ Թե՞ սուլլայականները՝ երեկվա ոխերիմ թշնամիները, հանկարծ դարձել են բարեկամներ։

Մարիոսի բոլոր սպաները (նրանց անմիջապես զինվորական խորհրդի էր հրավիրել) Սերտորիոսի հրամանն ընդունեցին զայրույթով։ Նրանք Մարիոսին առաջարկում էին չկատարել այն։ Բայց Մարիոսը, մտածելուց հետո, այսպես վճռեց. ապահով կլինի կատարել գոնե Միհրդատից և Վարիոսից ստացած առաջին հրամանը՝ շարժվել դեպի Լեմնոս, միանալ յուրայիններին

և միասին քննարկել ամենադժվարին հարցը. արշավե՞լ Իտալիայի վրա, թե՞ ոչ։

Այդպիսի որոշում ընդունելով և միացնելով իր և ծովակալ Իսիդորոսի նավախմբերը, Մարիոսը ծով դուրս եկավ և լողաց դեպի հյուսիս՝ Լեմնոս։ Փոթորիկը նավերին ստիպեց շեղվել ուղղությունից և նրանց տարավ ասիական ափ, Աքայան նավահանգստի մոտ։

Այդ ընթացքում եռանդուն գործելով Լուկուլլոսը մի քանի օրում 70 նավ հավաքեց։ Երբ Լ. Լուկուլլոսը տրոյական Ալեքսանդրիայում (Աֆրոդիտեի տաճարում) կանգ առավ գիշերելու, իր բառերով ասած, երազում աստվածուհուն տեսավ։ Նավերի և թշնամու խարդավանքների մասին մտածելուց տանջահար զորավարին աստվածուհին այսպես ասաց. «Հզո՛ր առյուծ, ի՞նչ ես քնել։ Եղնիկները քեզանից հեռու չեն»։

Անհանգստացած Լուկուլլոսը գիշերվա կեսին արթնացավ և երազը պատմեց ընկերներին։ Իսկ մի քանի ժամ անց, Իլիոնից սուրհանդակ եկավ և հայտնեց, որ քաղաքի ժամապահները Աքայական նավահանգստի մոտ (մայր ցամաքի և Թենեդոս կղզու միջև) նկատել են շուրջ 50 թշնամական նավեր։ Լ. Լուկուլլոսը անմիջապես ոտքի հանեց ռազմիկներին, նստեցրեց նավերը և հետապնդեց թշնամուն։

Հասնելով նրանց՝ Լուկուլլոսը ճակատամարտ տվեց։

13 պոնտական պենտերաներ՝ հինգ շարք թիակներով նավեր, նավաճանկվեցին։ Պոնտացիները կորցրին իրենց ծովակալին՝ իսպանացի Իսիդորոսին։ Թշնամու մնացած նավատորմը փախուստի դիմեց։

Մարդկանց մի մասին թշնամու գերի վերցրած նավերը նստեցնելով, Լ. Լուկուլլոսը շարժվեց դեպի Լեմնոս կղզին. հենց այնտեղ էին շտապով նահանջում պարտություն կրած թշնամիները։

Մ. Մարիոսը,— դա նա էր,— սկսեց կղզին շրջանցել հյուսիսից։ Նա ուզում էր իր նավատորմը կառանել կղզու հյուսիս-արևմտյան կողմում, Նայտոս կղզյակի մոտ, հույս ունենալով, որ Լ. Լուկուլլոսն իր նավերի մեծ ընկղմվածքի պատճառով չի կարող այստեղ ափ դուրս գալ։

Նրա բոլոր հաշվարկները արդարացան։

Կղզուն Լուկուլլոսի նավերի մոտենալուց մի քանի ժամ հետո ամեն ինչ վերջացած էր. Մ. Մարիոսի բանակը լիովին

ջախջախվեց, վիթխարի թվով ռազմիկներ սպանվեցին և գերի ընկան, չփրկվեց նաև նրանց զորավարը։

Այսպիսով Փոյուգիայի դաշտերում՝ Օտրիումի մոտ սկսված վեճը լուծվեց հօգուտ Լուկուլլոսի։

Հաշիվներն ավարտելով թշնամու բանակի հետ, հաղթողը իր նավերի մի մասը (այդ թվում և՝ նոր գրավածների) զինվորների հետ միասին հանձնեց իր լեգատ Կվ. Վոկոնիոսին։ Նա հանձնարարեց լեգատին շարժվել դեպի Նիկոմեդիա քաղաքը, որտեղ գտնվում էր Միհրդատը, և ծովից փակել արքայի փախուստի ճանապարհը։

Զինվորներով ու նավերով Կվ. Վոկոնիոսը ծով դուրս եկավ։ Իսկ Լ. Լուկուլլոսը մնացած զորքով ու նավատորմով լողաց գնաց Լեմնոս կղզու այն տեղը, որտեղ գերիների տեղեկությունների համաձայն, գտնվում էր պոնտա-սերտորիոսական զորքերի մնացած մասը՝ Մ. Վարիոսի, Դիոնիսիոսի և Ալեքսանդրի հրամանատարությամբ։

Իսկ վերջիններս, ստանալով Մարիոսի նամակը, որով նա հայտնում էր Լուկուլլոսի մոտենալու մասին և օգնություն խնդրում, սուր վիճաբանություն սկսեցին։ Դիոնիսիոսը ցանկանում էր անմիջապես գնալ-միանալ Մ. Մարիոսին։ Բայց Մ. Վարիոսը, որ վերջինիս ատում էր որպես հաջողակ զորավարի և ախոյանի, չէր համաձայնում և տարբեր պատրվակներով մերժում էր նրա առաջարկը։ Դիոնիսիոսի նկատմամբ տածած նույն վերաբերմունքից դրդված՝ Ալեքսանդրը համաձայն էր Վարիոսի հետ։

Երեք զորավարները վիճեցին և միմյանց հակաճառեցին այնքան ժամանակ, մինչև նրանց դեմ հայտնվեց Լ. Լուկուլլոսը։

Եվ կրկին Լ. Լուկուլլոսի ռազմիկները ցամաքում ջախջախեցին թշնամուն, փախչողներին քշեցին նավերը, որոնք հապճեպորեն բարձրացրին խարիսխները։ Վախենալով Լուկուլլոսից նրանք չհամարձակվեցին բաց ծով դուրս գալ և սկսեցին լողալ ափի երկայնքով, հույսը դնելով իրենց նավերի ցածր ընկրկմվածքի վրա։

Սակայն ծովի կողմից Լուկուլլոսի նավատորմի ճնշման հետևանքով պոնտացիները վերջ ի վերջո ստիպված կրկին ափ իջան։ Բայց ցամաքում նավերի անձնակազմերը նորից հայտնվեցին Լ. Լուկուլլոսի ռազմիկների հարվածի տակ։ Այստեղ նրանք վերջնականապես ջախջախվեցին և դիմեցին խուճապահար փախուստի։ Իսկ նրանց զորավարները, մեծ կորուստներ

կրելով, միանգամայն հուսահատված, թաքնվեցին մի քարանձավում։ Մոլեգնած հաղթողները ներխուժեցին քարանձավ։ Դիոնիսիոսը թույն ընդունեց և անմիջապես մահացավ (որպես արքային մոտ կանգնած անձնավորություն և ներքինի՝ նա քաջ գիտեր բախտի բոլոր քմահաճույքները և ապահովության համար մոտը՝ մասանու մեջ միշտ թույն էր պահում)։ Մ. Վարիոսը և Ալեքսանդրը փոքրոգի գտնվեցին և հանձնվեցին, նրանք դեռևս ողորմածության հույսեր էին փայփայում։

Բոլոր գերիներին արագորեն տեսակավորեցին։ Ազնվազարմ պոնտացիներին Ալեքսանդրի գլխավորությամբ Լուկուլլոսը որոշեց պահպանել իր հաղթահանդեսի համար, մնացածներին ստրկության վաճառեց։ Գերի մարիոսականները մեկը մյուսի հետևից անցան հաղթողի ռազմական դատարանի առջևով։ Բոլոր հրամանատարները, ներառյալ և Մ. Վարիոսն ու Մ. Մարիոսը, մահվան դատապարտվեցին և անմիջապես մահապատժի ենթարկվեցին։

Գերի մարիոսականներն իրենց պահում էին արիաբար։ Նրանք Լուկուլլոսի, նրա զինվորների և հրամանատարների գլխին անեծք ու ընտիր հայհոյանքներ էին թափում, սպառնում էին վրեժով և ափսոսանք էին հայտնում, որ չկարողացան ներխուժել Իտալիա և հաշվեհարդար տեսնել ատոր, ծախու և հանցավոր սենատի հետ։

Իտալիայում սերտորիոսական և պոնտական բանակների ու նավատորմի դեմ տարած Լուկուլլոսի կրկնակի հաղթանակը շատ բարձր գնահատվեց։ Ասենք, Լուկուլլոսն ինքն էլ քիչ չօժանդակեց այդ հարցում, որոշակիորեն «հարմարեցնելով» իրադարձությունների ընթացքը։ Դրանով նա շատ մարդկանց, նույնիսկ ամենաիրազեկներին, թյուրիմացության մեջ գցեց։ Դրա համար էլ Ցիցերոնը «Հանուն Մանիլիոսի օրենքի» ճառում (66 թ.) այսպես էր շարադրում այդ դիպվածը (հագիվ թե միայն Լ. Լուկուլլոսին հաճոյանալու համար). «Նա ջախջախեց և ոչնչացրեց հսկայական, դերազանց զինված մի նավատորմ, որն ասելությամբ բոցավառված անձնակազմով սերտորիոսական առաջնորդների գլխավորությամբ շարժվում էր դեպի Իտալիայի ափերը»։

Այս շափազանցությունները, որոնք Լուկուլլոսի զինվորական փառքի ու հեղինակության հաստատման համար մեծ դեր խաղացին, նրան ևս մի ծառայություն մատուցեցին. նրա զինակից

Կասիոս Բառբային հաղթական շեփորների ներքո վերջապես հաջողվեց սենատից որոշում կորզել պետական գանձարանից, ռազմանավեր կառուցելու նպատակով, Լ. Լուկուլլոսին 3 հազար տաղանդ վճարելու մասին (հետագայում իր հսկայական հաջողությունները նկատի ունենալով՝ հաղթական զորավարը նույնիսկ հրաժարվեց այդ հատկացումներից)։

Նա ինքն իր հետ հսկայական թվով կամավորներ էր բերել, որոնք նման հաջողակ զորավարի ղեկավարությամբ արագ հարստանալու հույսեր ունեին։

Լեմնոս կղզում թշնամիների հետ հաշիվները մաքրելուց հետո, Լուկուլլոսը վերադարձավ Լամպսակոս, որի պարիսպների տակ թողել էր զորքի մի մասը։ Հաղթողին խնդությամբ դիմավորեցին։

Իսկ Միհրդատն այդ ընթացքում շտապում էր Հերակլեա, որտեղ հռոմեական կուսակցությունը հաղթանակել էր։ Ճանապարհին նա կրկին սարսափելի փոթորկի մեջ ընկավ և բազմաթիվ նավեր կորցրեց։ Մնացած զորքով Միհրդատն, այնուամենայնիվ, գրավեց քաղաքը (նրան հաջողվեց իր կողմը թեքել քաղաքի կառավարիչ Լամաքոսին), պոնտական կուսակցությանը վերադարձրեց իշխանությունը և այն ամրապնդեց 3 հազարանոց կայազորով կելտ Կոնակորիկոսի գլխավորությամբ։ Քաղաքի բնակիչներին և առանձնապես մագիստրատներին, նրանց բարեհաճությունը նվաճելու համար, շռայլորեն դրամ բաժանեց։ Հերակլեայից Միհրդատը մեկնեց Բիթանիայի մայրաքաղաք Նիկոմեդիա։ Միաժամանակ մի նավախումբ ուղարկեց իրենից անջատված Բյուզանդիոնը պաշարելու համար։

Նիկոմեդիայում ափ իջնելով, Միհրդատը զորքերի մի մասը որպես կայազորներ ուղարկեց Ապամեա, Պրուսիա, Պրուսիադա և Նիկեա։ Ջնայած ճակատագրի դաժան հարվածներին, թվում էր, թե գործերը սկսում էին կարգավորվել։ Հանկարծ ժամանեցին նավերը՝ Մ. Մարիոսից և Ալեքսանդրից բերելով նամակներ, որոնք հաղորդում էին Լուկուլլոսի նավատորմի երևալու և առաջիկա ճակատամարտի մասին, այնուհետև լուրեր եկան, որոնք շուտով հաստատվեցին. Թենեդոս և Լեմնոս կղզիների մոտ զորքի ու նավատորմի լիակատար պարտության մասին։

Նավատորմի կործանման և Լեմնոսում չորս բանակների ջախջախման սարսափելի բոթը խորապես ցնցեց Միհրդատին, նրա զորապետներին և ամբողջ զորքին։ Փոլ եկավ գլխավոր

հույսը՝ Լուկուլլոսին հաղթելու հույսը։ Այժմ պետք է սպասվեր հաղթական թշնամու հարձակումը Պոնտոսի վրա և բութանիական բոլոր քաղաքների միահամուռ դավաճանությունը։

Զորապետների հետ խորհրդից հետո Միհրդատը վճռեց անհապաղ վերադառնալ հայրենի սահմանները։ Նստելով իր արքայական նավը, իր մոտ եղած զորքին էլ մյուս նավերը նստեցնելով, Միհրդատը լքեց Նիկոմեդիան և ծով դուրս եկավ։

Իսկ Լ. Լուկուլլոսը, վերադառնալով Լամպսակոսի ճամբարը, ամենից առաջ տեղեկացավ արքայի և Կվ. Վոկոնիոսի մասին։ Լ. Մուրենայի, որին թողել էր տեղապահ, պատմածը նրան զայրացրեց։ Պարզվեց, որ Կվ. Վոկոնիոսը, ծով դուրս գալով, գայթակղվել էր ճանապարհին Սամոթրակե կղզին մտնելու և Կաբիրներ հին աստվածների խորհուրդներին հաղորդակից լինելու մտքով։ Քանի որ կղզին Լեմնոսին մոտիկ էր, ապա լեգատը իրեն հանգստացրել էր նրանով, որ կհասցնի կատարել զորավարի հանձնարարությունը։

Բայց ժամանելով կղզի, Կվ. Վոկոնիոսը շափից ավելի էր տարվել քրմերի հետ զրույցներով և կրոնական տոնակատարություններով։ Արդյունքը եղավ այն, որ Միհրդատը (նա արդեն տեղափոխվել էր Նիկոմեդիա) ավելի շուտ իմացավ իր բանակի և նավատորմի պարտության մասին, քան Կվ. Վոկոնիոսը, և անարգել թողեց քաղաքն ու շարժվեց դեպի Պոնտոս։ Ճանապարհին նա զորքով ու նավատորմով կրկին ընկավ փոթորկի մեջ, որը նրա նավերի մի մասը խորտակեց, իսկ մի մասն էլ ցրեց։ Կործանվեց նաև արքայական նավը։ Միհրդատը տեղափոխվեց թեթև ծովահենական մի նավ և հակառակ իր շարակամների հույսերի, բարեհաջող հասավ Պոնտական Հերակլեա։ Կելտ Կոնակորիկոսի գլխավորությամբ այստեղ ուժեղ մի կայազոր թողնելով, նա ծովով մեկնեց Սինոպ։ Վոկոնիոսին բան չէր մնացել անելու, քան Նիկոմեդիայում արքայի թողած պոնտոսյան կայազորը շրջափակելը։ Վոկոնիոսի ինքնագլուխ վարքից զայրացած՝ Լուկուլլոսը նրան անհապաղ նամակ ուղարկեց, հրամայելով անմիջապես հրամանատարությունը հանձնել նոր ծովակալին՝ Լ. Մարցիոս Ցենզորինին և Նիկոմեդիայից վերադառնալ Լամպսակոս։

Փոփոխված իրադրությունը հաշվի առնելով (ձմեռը վերջացել էր, և գարուն էր եկել) Լ. Լուկուլլոսը նոր փոփոխություն մտցրեց գործողությունների նախկին ծրագրի մեջ։ Իրենց հրա-

մանատարից հրահանգներ ստանալով, զորապետները ջանասիրաբար ձեռնամուխ եղան դրանց կատարմանը։ Սակայն, հաջողությունները նույն աստիճանի չեղան։ Հերակլեայի վրա արշաված Մ. Կոտան անմիջապես նոր պարտություն կրեց և գնաց Պրուսիադա Կասիոս Բառբային «օգնելու», որ գրավի այն։ Համատեղ ջանքերով նրանք գրավեցին քաղաքը։ Բիթանիացիներից նոր օժանդակ զորք հավաքելով, Մ. Կոտան կրկին վերադարձավ Հերակլեայի պարիսպների մոտ։ Պոնտական կայազորի պետ Կոնակորիկոսը և քաղաքի իշխանությունները պատվիրակներ ուղարկեցին Խերսոնես և Թեոդոսիա՝ պարենի հետևից։ Նրանք օգնություն էին խնդրում նաև Սկյութիայի տիրակալներից և Բոսպորոսի թագավորներից։

Հերակլեայի մոտ հանդուցալուծման վերջը չէր երևում...

Մյուս վայրերում գործողությունները հռոմեացիների համար ավելի հաջող էին ընթանում։ Լ. Մուրենան հարավում նեղում էր Եվմաքոսին։ Կասիոս Բառբան զավթեց Նիկեան։ Գ. Տրիարիոսը նվաճեց Ապամեան և քաղաքացիների սոսկալի ջարդ կազմակերպեց, իսկ դրանից հետո Թենեդոս կղզու մոտ ոչնչացրեց Իսպանիայից և Կրետեից վերադարձող Միհրդատի նավատորմը (մոտ 80 նավ)։

Գ. Տրիարիոսի այս հաղթանակը վերջնականապես ջախջախեց Միհրդատի ծովային ուժերը և զրկեց Իտալիա դեսանտ իջեցնելու վերջին հույսից։

Մայիսի վերջերին ռազմական գործողությունները հաջողությամբ ավարտվեցին։ Հերակլեայից բացի, բոլոր քաղաքները գրավված էին, Լ. Մուրենան ոչնչացրել էր Եվմաքոսին։ Հաջողություններից հպարտ բոլոր զորապետները հավաքվեցին հաղթական Տրիարիոսի գրաված Բիթանիայի մայրաքաղաք Նիկոմեդիայում։

Մինչ զորապետները հռոմեական իշխանության տակ էին վերադարձնում անջատված քաղաքները, Լուկուլլոսը ջանում էր խաղաղ կյանքի վերադարձնել Բիթանիա և Ասիա պրովինցիաները։ Գործը բարդ դուրս եկավ։ Լ. Լուկուլլոսն անընդհատ ստիպված էր լինում բախվել կապալառուների, ինչպես դիվանագիտորին անվանում էր Ցիցերոնը, այդ «հարգարժան ու պատկառելի մարդկանց» հետ։ Առանց քաշվելու և անողոքաբար նրանք կողոպտում ու պլոկում էին պրովինցիայի բնակիչներին։

Հաշվի առնելով առաջին հերթին պետական գանձարանի

շահերը, երկրորդ՝ հանգիստ թիկունք ստեղծելու և գոնե պատերազմ մղելիս հռոմեացիների դեմ չարանալու պատճառների վերացման անհրաժեշտությունը և երրորդ՝ Իտալիայում բռնկված ստրուկների ապստամբությունը, Լ. Լուկուլլոսը որոշեց եռանդուն միջոցներ ձեռնարկել Ասիան և Բիթանիան (իսկ հետագայում նաև Կիլիկիան) խաղաղեցնելու համար։ Այդ նպատակով նա սահմանափակեց տոկոսների ընդհանուր գումարը հենց վարկի գումարի չափով։ Բոլոր «գործարար մարդիկ» սաստիկ դժգոհ էին նման նորամուծությունից։ Բայց Լ. Լուկուլլոսը խորամանկորեն խոստացավ, թե մտցված սահմանափակումը «ժամանակավոր» է։ Կապալառուներն ակամա հաշտվեցին։

73 թվականի ամռանը Նիկոմեդիայում ռազմական խորհուրդ կայացավ։ Մասնակցում էր 13 մարդ՝ Լ. Լուկուլլոսը, Մ. Կոտան, Ապիոս Կլավդիոս Պուլքրոսը, Լ. Մուրենան, Գ. Վալերիոս Տրիարիոսը, Կվ. Վոկոնիոսը, Մ. Պոմպոնիոսը, Կվ. Սեքստիլիոսը, Մ. Պոմպեոսը, Սորնացիոսը, Կասիոս Բառբան, Մ. Ֆաբիոս Ադրիանոսը, Լ. Մարցիոս Ցենզորինոսը։ Ներկաներից շատերը՝ հսկայական հաջողություններից արբած, նվաճված Ասիայի հրաշալիքներից ու շքեղությունից հմայված երիտասարդներ, արտահայտվում էին Մ. Կոտայի առաջարկության օգտին. մեծամեծ շարշարանքներից, անընդմեջ ճակատամարտերից և պաշարումներից հետո բանակին հանգիստ տալ։ Նման կարգի գործողությունների հիմնավորումը նրանք համարում էին հետևյալը. Բիթանիան, Ասիան և Կիլիկիան մաքրված են Միհրդատի զորքերից։ Նրա լավ վարժեցված բանակի 3/4-ը ոչնչացված է կամ գերեվարված, նա գրեթե լիովին զրկվել է իր 400 ռազմանավի հասնող նավատորմից, ինքը՝ արքան, խայտառակված է անհաջողություններից, Բիթանիայում և Ասիայում նրա թշնամիները աշխուժացել են, դաշնակիցները՝ ընկճվել, նրա մեծատոհմիկների և զորապետների հավատարմությունը սասանված է, շատերը մտածում են դավաճանության մասին, ինչը վկայում են գաղտնի պատգամաբերները։ Միհրդատը վերջացած մարդ է, նա այլևս չի կարող ուշքի գալ։ Այդ պատճառով առանց գործին որևէ վնաս տալու կարելի է հանգիստ առնել։

Երիտասարդ զինակիցների առաջարկությունը Լ. Լուկուլլոսը մերժեց։ Նա ուրիշ ծրագիր առաջարկեց. ռազմական գործողություններն անմիջապես տեղափոխել Պոնտոսի տարածքը։ Մի-

հրդատի թագավորություն ներխուժումը կատարել միանգամից երկու կողմից. մեկ զորասյունով (Լ. Մուրենայի հրամանատարությամբ) շարժվել Բիթանիայի-Պափլագոնիայի միջով, Եվքսինյան Պոնտոսի ափերով մինչև Միհրդատի մայրաքաղաքները՝ Սինոպ և Ամիսոս (Միհրդատն ընդամենը երեք մայրաքաղաք ուներ), երկրորդ զորասյունով (իր հրամանատարությամբ) գնալ Բիթանիայի և Գալատիայի միջով՝ հարավ-արևելքից, Հալիս գետի վրայով, գյուղական տեղանքներով, շրջանցելով հունական քաղաքները, որոնց նա իրեն կենթարկի խաղաղ ճանապարհով։ Երկու զորասյունները պետք է միանան Ամիսոսի մոտ։ Մ. Կոտան իր զորքով կրկին կարշավի Հերակլեայի վրա և պաշարումը կհասցնի ավարտին։ Հիանալի ծովակալի ունակություններ ցուցաբերած Գ. Տրիարիոսը կստանձնի նեղուցների պահպանությունը։ Նա հետ կմղի Իսպանիայում և Կրետեում մնացած, եթե կան, Միհրդատի նավերը։ Լ. Լուկուլլոսի ծրագիրը, թեև ոչ այնքան հաճույքով, ռազմական խորհուրդը ընդունեց։

73 թվականի հունիսին Լ. Մուրենային տրամադրելով ուժերի մի մասը (դրանք հիմնականում բաղկացած էին նախկին սերտորիոսական գերիներից և նոր հավաքագրած օժանդակ զորքերից), Լ. Լուկուլլոսը Բիթանիայի և Գալատիայի վրայով ներխուժեց Պոնտոս։

Նա շարժվում էր գյուղական տեղանքով և հետևակի ու հեծելազորի ուժերով ավերում էր այն։ Միհրդատը փորձում էր կանգնեցնել նրան, իր լավագույն զորապետներին ուղարկելով նրա դեմ։ Հաճախակի բախումներ էին լինում, որոնցում հռոմեացիները մեծ մասամբ հաղթում էին։

Երբ զորքերը մտան Թերմոդոնտոս գետի արգավանդ հովիտը (մինչև Ամիսոս եղածը մի 200 կիլոմետր էր) հռոմեացիների համար ցանկալի առատությունն սկսվեց։ «Ցուլը ճամբարում մեկ դրախմ արժեր, ստրուկը՝ չորս դրախմ, իսկ մնացած ավարը ընդհանրապես ոչինչ չարժեր, կամ դեն էին շպրտում, կամ էլ ոչնչացնում» (Պլուտարքոս)։ Բայց բոլորին համակել էր անհագուրդ ագահությունը։ Ռազմիկները բողոքում էին դրամի բացակայությունից, քանի որ վաճառականները այդ դժվարին արշավանքի ժամանակ չէին ցանկացել հետևել նրանց և ավարը վաճառելու տեղ չկար։ Սակայն լեգեոնականներին ամենից շատ դայրացնում էր Լուկուլլոսի ընտրած ուղերթը, որը շրջանցում էր քաղաքները (զորավարն, ինչպես մտածել էր, քաղաքներն

իրեն էր ենթարկում խաղաղ ճանապարհով)։ Ռազմիկները սրտնեղում էին, որ իրենց առաջնորդը թույլ չի տալիս թալանել գոնե մեկ քաղաք։ Բայց Լուկուլլոսը դժգոհության վրա ուշադրություն չէր դարձնում։

Իրենց հերթին սպաները նույնպես սկսեցին քննադատել զորավարին։ Նրանք երկյուղ էին արտահայտում (արդեն մոռանալով նախկին ճառերը), որ անդադրում արքան, որին Լուկուլլոսը չէր ցանկանում հետապնդել, կկարողանա կարճ ժամանակում նոր, լավ վարժված բանակ ստեղծել։

— Հենց դա էլ ինձ պետք է,— պատասխանում էր նրանց Լ. Լուկուլլոսը։— Ես դիտավորյալ եմ դանդաղում. թող արքան կրկին ուժեղանա և կռվի համար բավականաչափ զորք հավաքի, այնպես որ տեղում մնա և ոչ թե փախչի մեր մոտենալուն պես։ Թե՞ դուք չեք տեսնում, որ նրա թիկունքում անսահման լայնարձակ անապատներ են, իսկ կողքին՝ Կովկասը, խոր կիրճերով հսկայական լեռնային մի երկիր, որտեղ թշնամու հետ հանդիպելուց խուսափող հազար թագավոր կարող է պաշտպանություն և ապաստան գտնել։ Բացի այդ Կաբերոսից (ամրոց Պոնտոսի հարավարևելյան մասում — Վ. Լ.) մինչև Հայաստան մի քանի օրվա ճանապարհ է։ Իսկ Հայաստանում թագավորում է Տիգրանը՝ արքայից արքան, որն իր զորքով կտրում է պարթևների ճամփան դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները ահգափոխում է Միդիա, նա, որ նվաճել է Սիրիան ու Պաղեստինը, իսկ Սելևկյան տոհմի թագավորներին մահվան է դատապարտում և նրանց կանանց ու զավակներին գերության է քշում։ Եվ այդ մարդը Միհրդատի ազգականն է՝ փեսան։ Եվ եթե Միհրդատը դիմի նրա օգնությանը, ապա Տիգրանը նրան չի թողնի դժբախտության մեջ և մեզ հետ պատերազմ կսկսի։ Հանկարծ այնպես չլինի, որ Միհրդատին իր տիրակալությունից քշելու փոխարեն փորձանքի մեջ ընկնենք Տիգրանի ձեռքով։ Չէ՞ որ նա վաղուց մեզ հետ պատերազմելու պատրվակ է որոնում, իսկ ավելի հարմար բան ո՞րտեղից կգտնի, քան իր արքայական ազգակցին դժբախտության պահին օգնելու առիթը։ Ինչո՞ւ հասնենք այդ բանին, ինչո՞ւ Միհրդատին սովորեցնենք, թե ում օգնությանը դիմի մեր դեմ պայքարելիս։ Ինչո՞ւ նրան հրենք Տիգրանի գիրկը, երբ ինքը դա չի ցանկանում և ամոթաբեր է համարում։ Ավելի լավ չի՞ նրան ժամանակ տանք սեփական ուժերը հավաքելու և կրկին ոգի առնելու,— չէ՞ որ

այն ժամանակ մենք կկռվենք ոչ թե միդիացիների և հայերի, այլ՝ կոլխերի, տիբարեն-կապադովկիացիների դեմ, որոնց բազմիցս ջարդել ենք։

Մինչ Լ. Լուկուլլոսը շրջում էր Բիթանիայով և Ասիայով մեկ, կարգի բերելով տեղական գործերը, արքան եռանդագին նոր զորք էր հավաքում։ Նա նամակ ուղարկեց Բոսպորոս՝ Մաքար որդուն, նրանից հետևակ պահանջելով։ Նույն խնդրանքով դեսպանների միջոցով դիմեց իր փեսային՝ Տիգրանին։ Նա դրամով ու նվերներով հավաքագրողներ ուղարկեց Կովկաս և Սկյութիա։

Զորք հավաքվում էր, բայց գլխավորապես նրա ջանքերի շնորհիվ։ Մաքարը գլուխն ազատում էր օգնության խոստումներով, Տիգրանը՝ դիվանագիտական խուսանավություններով։

Իր խորհրդականների՝ սկեպսիացի Մետրոդորոսի («արքայի հոր») և Կալլիստրատեսի («արքայի գաղտնիքների հավատարմատարի») հետ միասին Միհրդատը հորինում էր զանազան միջոցներ, որոնց օգնությամբ հնարավոր լիներ անհավատարիմ բարեկամներին ստիպել օգնություն ցույց տալ։ Բայց ոչ մեկը որևէ լավ բան չէր կարողանում մտածել։ Անընդմեջ անհաջողությունների հետևանքով հենց արքայի խորհրդականների և զորապետների հավատարմությունն էլ բացահայտորեն խախտվել էր։ Մաքարի հետ խոսքը մեկ արած՝ Սելևկոսը գաղտնի բանակցություններ էր սկսել Լ. Լուկուլլոսի հետ։ Սկյութների մոտ հավաքագրման ուղարկված Դիոկլեսը, հռոմեացի զորավարից անվտանգության խոստում ստանալով, փախել էր նրա մոտ, իր հետ տանելով ոսկի ու նվերներ։ Նրա օրինակին հետևեցին ատիճանով ցածր բազմաթիվ այլ պաշտոնյաներ։

Զայրացած Միհրդատը իր մտերիմ մարդկանց մեջ նոր դաժան զտում սկսեց։

Զորքը հավաքվում էր։ Եվ երբ Լ. Մուրենան զորքով հայտնվեց Պափլագոնիայում, արքան արդեն կարող էր դիմավորել նրան և դիմադրություն ցույց տալ հռոմեացիներին։ Եռանդուն հակառակորդի ճնշման տակ Միհրդատը ատիճանաբար նահանջեց արևելք, ընդհուպ մինչև Ամիսոս։ Այստեղ հակառակորդները կանգ առան և կատաղորեն կռվեցին, բայց բանը գլխավոր ճակատամարտի չհասավ։

Միայն Լ. Լուկուլլոսի բանակի Ամիսոս գալուց հետո (հուլիսի կեսերին) Միհրդատը ստիպված եղավ նահանջել հարավ-

արևելք՝ Հայաստանի կողմը։ Ամիսոսում և Եվպատորիայում՝ իր երկու մայրաքաղաքներում, Թեմիսկարոսում, ըստ ավանդության, ամազոնուհիների նախկին մայրաքաղաքում, Սինոպում նա ուժեղ կայազորներ թողեց։

Լ. Լուկուլլոսը չկարեց հետապնդել Միհրդատին։ Նա իր զորքերի մի մասը տեղավորեց Լ. Մուրենայի զորքերի կողքին՝ Ամիսոսի պարիսպների տակ, իսկ մնացած մասը բաժանեց Եվպատորիան (հրամանատար Ապիոս Կլավդիոս) և Թեմիսկարոսը (հրամանատար Մ. Պոմպեոս) պաշարելու համար։

Տարվա երկրորդ կեսը հռոմեացիներն անցկացրին այդ երկու ամրոցները պաշարելով։

73 թվականի մնացած ամիսների ընթացքում Լ. Լուկուլլոսը միայն մեկ անգամ տատանվեց երկարատև պաշարելու որոշման հարցում, երբ Միհրդատը 40 հազարանոց զորքով և 4 հազարանոց հեծելազորով թշնամու նպատակները հետախուզելու համար Կարիրոսից կրկին շարժվեց հյուսիս, դեպի ծովեզր։

Ենթադրելով, թե Միհրդատը ճակատամարտ է որոնում, Լ. Լուկուլլոսը Ամիսոսի մոտ ամրացած զորքերի մի մասը տեղահան արեց և նրան ընդառաջ գնաց։ Այդ տեղաշարժը խիստ դժգոհություն առաջացրեց ռազմիկների մոտ։ Միհրդատը նրանց այժմ շատ ավելի քիչ էր հետաքրքրում, քան Ամիսոսն՝ իր հարստություններով։ Սվ Հանդուգն ու կռվարար ֆիմբրիականները, որոնք սովոր էին հրամանատարներին քննադատել և ոչ թե ենթարկվել, զինվորներին դրդռելով, ասում էին.

— Ա՛յ, հենց հիմա էլ հեշտությամբ կարող էինք գրավել Ամիսոսը, այդ ծաղկուն ու հարուստ քաղաքը, բավական է մի լավ պաշարել այն, բայց մենք ստիպված ենք ամեն ինչ թողնել, որպեսզի այդ մարդու հետևից գնանք Տիբարենյան և Քաղդեական անապատները՝ Միհրդատի դեմ կռվելու։

Նման խոսքերը համակրանք էին գտնում ռազմիկների շրջանում։ Բայց Լ. Լուկուլլոսը ձևացնում էր, որ իբր ոչինչ չգիտի և ոչինչ չի լսում։

Մոտենալով հակառակորդին և առաջին ընդհարումները տալով՝ Միհրդատը համոզվեց, որ Լուկուլլոսը համաձայն է ճակատամարտի։ Որոշ տատանումներից հետո արքան որոշեց վերջերս հավաքած զորքով ռիսկի չդիմել և շրջվեց հետ, դեպի Կաբիրոս։

Այդժամ Լ. Լուկուլլոսն էլ, ի գոհություն ռազմիկների, հրամայեց վերադառնալ հետ՝ դեպի Ամիսոս։

Այսպես ավարտվեցին 73 թվականի գործողությունները փոքրասիական-բիթանիական և պոնտոսյան ռազմական թատերաբեմերում։

Գլուխ վեցերորդ

ՍՊԱՐՏԱԿՅԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կապուա քաղաքը Իտալիայի ամենանշանավոր քաղաքների թվին էր պատկանում։ Այն գտնվում էր բացառիկ պտղաբեր հողեր և հրաշալի, մեղմ կլիմա ունեցող մարզում, որտեղ առատ բերք էր ստացվում։ Ըստ ավանդության, Կապուան մ. թ. ա. VI դարում հիմնադրել էին էտրուսկները քուրմ Կապիսի (լատիներեն capis նշանակում է՝ զոհաբերության թաս) գլխավորությամբ։ Քրմի դամբարանը քաղաքում պահպանվել էր մինչև Սպարտակի ժամանակները։ Դամբարանի պատին փակցված էր պղնձյա մի տախտակ, որի վրա գրված էր. «Եթե որևէ մեկը բաց անի Կապիսի ոսկորները (այսինքն՝ եթե դամբարանը բացվի), ապա նրա ժառանգը կընկնի աղգականների ձեռքով, իսկ հետո նրա վրիժառությունը կուղեկցվի Իտալիայի համար սարսափելի դժբախտություններով»։

Էտրուսկյան ազդեցությունը երկար ժամանակ պահպանվում էր Կապուայում և նպաստում էր, որ քաղաքը կարճ ժամանակում ուժ հավաքեր, ձեռք բերեր նշանակալի հարստություն ու հզորություն։ Քաղաքի փողոցները կառուցապատված էին հոյակապ հասարակական և մասնավոր շենքերով։ Հզոր պարիսպը շրջափակում էր քաղաքը։ Բնակիչներն աչքի էին ընկնում կրթվածությամբ, էտրուրիայի, Հունաստանի, Աֆրիկայի հետ սերտ կապերով, նրբաճաշակությամբ, ուղածի պես ապրելու հմտությամբ։

Կապուան հարևան հողերում գաղութներ էր հիմնում և տարածում իր ազդեցությունը։ Քաղաքի վաճառականները տարբեր երկրներով մեկ սփռում էին տեղական հմուտ արհեստավորների պատրաստած ապրանքները։ Տեղական շուկաներում հաճախ կարելի էր տեսնել օտար վաճառականների։

Տնտեսական, քաղաքական և մշակութային ազդեցությամբ կարևոր քաղաք լինելով, Կապուան Իտալիայի քաղաքական

կյանքում խոշոր դեր կատարելու հավակնություն ուներ։ Այդ պատճառով թշնամաբար էր վերաբերվում Հռոմին, որն ամբողջ Իտալիային իշխելու հավակնություն ուներ։

II Փյունիկյան պատերազմի ժամանակ Կապուան կանգնեց Հաննիբալի կողմը, հույս ունենալով նրա օգնությամբ կործանել Հռոմը (Կարթագենի զորավարը խոստանում էր, որ Կապուան կդառնա Իտալիայի մայրաքաղաքը և հռոմեացիները մյուսների հետ միասին Կապուայից օրենքներ կստանան)։ Պատերազմն անհաջող ստացվեց։ Հռոմը բազմաթիվ ծանր պարտություններից հետո, այնուամենայնիվ, հաղթեց։ Նրա զորքերը շրջապատեցին Կապուան և գրավեցին այն։ Կապուայի սենատի անդամները և աղնվականության վերնախավի շատ ներկայացուցիչներ՝ հռոմեացիների թշնամիները, անձնասպան եղան։ Մնացածների հետ հաշվեհարդար տեսան հաղթողներն իրենք, ոմանց մահապատժի ենթարկեցին, ոմանց բանտեր նետեցին, ոմանց էլ ուղարկեցին այլ քաղաքներ, որտեղ նրանք իրենց վախճանը գտան, բնակիչների մեծ մասին ստրկության վաճառեցին։ Քաղաքի հին բնակչությունից հռոմեացիները խնայեցին գլխավորապես ոչ տեղացիներին՝ վաճառականների, արհեստավորների, ազատագիրների։ Սրանց ավելացրին տեղացի հովիվներին և Հռոմից դաղթածներին։

Որպեսզի Կապուան նորից ոտքի չկանգներ, հռոմեացիները (Կորնթոսի և Կարթագենի կործանումից հետո իրենց իսկական ախոյանը միայն Կապուան էին համարում) քաղաքի բոլոր հողերը, հասարակական բոլոր շենքերը հռոմեական ժողովրդի սեփականություն հայտարարեցին. «առհավետ» ոչնչացրեցին քաղաքային համայնքը, սենատը, ժողովրդական ժողովը, հասարակական պաշտոնները (առանց այս հենարանների բնակչությունն անընդունակ էր դառնում համատեղ գործունեության համար)։

Դատարանը սկսեց գլխավորել ամեն տարի Հռոմից ուղարկված պրեֆեկտը, որի ձեռքում գործնականորեն կենտրոնացվել էր ամբողջ իշխանությունը։

Սուլլան էլ ավելի ամրապնդեց Հռոմի իշխանությունը քաղաքի վրա՝ Կամպանիայի բոնագրավված հողերում տեղավորելով իր վետերանների (25 հազար մարդ) գաղութները։ Վետերանները կարճ ժամանակում ձուլվեցին տեղական աղնվազարմիկների հետ, դառնալով, ինչպես Ցիցերոնն էր ասում, «բա-

բեմիտ և ամուր» մարդիկ։ Խոշոր միջոցներ ունենալով (արևելյան ավարները, օրենքից դուրս հայտարարելու շրջանի զավթումները), նրանք շուտով մեծ փոփոխություններ կատարեցին Կապուայի մարզում։ Նոր տներ ու դղյակներ կառուցեցին, խաղողի ու ձիթենու այգիներ հիմնեցին, ամբողջ շրջակայքը լցրեցին անասուններով, ստրուկների նորանոր բազմություններ բերեցին։ Նրանք շռայլորեն վատնում էին միջոցները թատրոնների, կերուխումների և Հռոմի ժողովրդին կաշառելու վրա՝ իրենց բարեկամների և համախոհների համար պաշտոններ ձեռք գցելու նպատակով։

Նրանց անկաշկանդ ու հարուստ կյանքը արթնացնում էր այսպես կոչված «օրինավոր մարդկանց», մանր ու միջին ստրկատերերի սարսափելի նախանձը, որոնք չէին կարողացել քաղաքացիական պատերազմի ժամանակ հարստանալ և բարոյական նկատառումներից ելնելով՝ ձեռք չէին գցել օրենքից դուրս հայտարարվածների կարողությունները։

Շուրջ տասը տարի տևած շռայլ կյանքը, տնտեսությունը վարելու անբավարար իմացությունը, որին վետերանները սովոր չէին, բազմաթիվ գաղութների վիճակը հասցրին քայքայման, իսկ 20 տարի անց, Ցիցերոնի կոնսուլության ժամանակ հանգեցրին դատական կոչնագրերի և դատավճիռների, ունեցվածքները աճուրդի հանելու հայտարարությունների։ Բնութագրելով նրանց վիճակը, Ցիցերոնը ճիշտ էր ասում (63 թ.). «Իսկական մեծահարուստների նման հրապուրվելով շինություններով, վայելելով հրաշալի կալվածքները, օգտվելով բազմաթիվ ծառաներից, շռայլ կերուխումներում իրենց ժամանակն անցկացնելով՝ նրանք այնպիսի պարտքերի տակ ընկան, որ եթե դրանցից աղատվել էլ ուզենային, հարկ կլիներ Սուլլային մեռած տեղից հարություն տալ։ Որոշ բնակավայրերում աղքատ ու սակավազոր մարդկանց մեջ նրանք բորբոքեցին կողոպուտի հույսը, ինչն առաջ կար այդ վայրերում»։

Այսպիսին էր տրամադրությունների և ուժերի դասավորությունը 73 թվականին Կապուայի մարզում, երբ քաղաքային պրեֆեկտը, բոլոր կողմերից գլադիատորների և փախստական ստրուկների ավազակության մասին բողոքներով շրջապատված, վերջապես խոստացավ վճռական միջոցներ ձեռնարկել և հարված հասցնել Վեզուվին, որտեղ, ինչպես պարզվել էր, գտնվում էր ապստամբական շարժման կենտրոնը։

Պրեֆեկտն իսկապես Վեզուվ ուղարկեց ուժեղ մի ջոկատ, որի կազմում նաև տեղացի վետերանների խմբեր կային։ Բայց այդ փորձն արդյունք չտվեց։ Ժամանակին անհրաժեշտ տեղեկություն ստանալով, Սպարտակը Վեզուվի կողմը քաշեց շրջակայքում գործող իր ջոկատները, հեշտությամբ կասեցրեց հարձակման նետված Կապուայի լեգեոնականներին, կոտորեց բոլորին և շոշափելի ռազմաավար ձեռք գցեց, որն անմիջապես բաժանվեց մարտի մասնակիցների միջև։ Լեգեոնականների զենքն ընկավ նրանց ձեռքը, ովքեր դեռևս կռվում էին գլադիատորների զենքերով։

Կապուական զորքի պարտության լուրը կայծակնապես տարածվեց Իտալիայի հարավով մեկ։ Հսկայական խայտառակություն ստացվեց։ Ոչ մեկը չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր նման վարկաբեկիչ բան տեղի ունենալ։ Հռոմում անհատը գրգռվել էր. և՛ արտաքին, և՛ ներքաղաքական դրությունն այնքան էլ ուրախալի չէր, Վեզուվի մոտ պարտությունն ավելի էր բարդացնում այն՝ ստրուկներին, գլադիատորներին ու ժողովրդի առավել չքավոր մասին հանդուգն հույսեր ներշնչելով։

Քննելով գործի հետ կապված բոլոր հանգամանքները, սենատը կոնսուլ Մ. Լուկուլլոսին հանձնարարեց խոովությունը ճնշելու համար ամենաեռանդուն միջոցներ ձեռնարկել։ Մ. Լուկուլլոսը, Միհրդատի դեմ պատերազմող Լ. Լուկուլլոսի եղբայրը, այդ ժամանակ պատրաստվում էր մեկնել Մակեդոնիա պրովինցիան, որը նրան «վիճակ էր ընկել» թրակացիների նոր հարձակումների հետ կապված։ Սպարտակի դեմ կռվելու համար դրությունի հնարավոր թեկնածուների քննարկման ժամանակ նրա ընտրությունը կանգ առավ այդ թվականի պրետոր Կ. Կլավդիոս Պուլքրոսի վրա (մ. թ. ա. 113—? թթ.)։ Նա զորապետին հանձնարարեց հավաքել վեց կոհորտա (3 հազար մարդ) և նրանց միջոցով Կամպանիան մաքրել Վեզուվի վրա բույն դրած ավազակախմբերից։

Մ. Լուկուլլոսի լեգատը, որը միաժամանակ նաև նրա ազգականն էր, երևելի արիստոկրատ, որոնցից Հռոմում քիչ կային։ Նրա տոհմում, որ հավերժական քաղաք էր եկել մ. թ. ա. VI դարում Սաբինայից, եղել էին կոնսուլներ, ցենզորներ, զորավարներ և տրիումֆատորներ, ռեֆորմատորներ և դեմոկրա-

տական ուղղության դրծիչներ։ Ինչ ասես արժեր միայն Ապիոս Կլավդիոս Պուլքրոսը՝ 143 թվականի կոնսուլը, 136 թվականի ցենզորը, Տիբերիոս Գրակքոսի անները, էլ չենք ասում Ապիոս Կլավդիոսի՝ մ. թ. ա. 312 թվականի ցենզորի մասին, որը Հռոմը և Կապուան միացնող Ապիյան ճանապարհը կառուցեց, առաջին ջրմուղն անցկացրեց, կատարելագործեց հռոմեական այբուբենը, Հերկուլեսի պաշտամունքը դարձրեց համահռոմեական, հռոմեական իրավագիտության հիմնադիրներից մեկը դարձավ, հովանավորում էր ազատագիրներին ու քաղաքային պլեբեյությանը և նրանց զավակներին նույնիսկ գրանցում էր սենատում։ Գայոս Կլավդիոսն ինքը մեծահարուստ մարդ էր. նշանավոր սուլլայական սպա, եղբայրը Ապիոս Կլավդիոս Պուլքրոսի՝ 79 թվականի կոնսուլի և Մակեդոնիայի պրոկոնսուլի։ Հենց այս Գ. Կլավդիոսը կամ Կլոդիոսը ընդունակ և փորձառու զորապետի համբավ ուներ։ Զինվորական տրիբունի աստիճանով նա անցել էր Առաջին միհրդատյան պատերազմի միջով, հաջողությամբ կռվել էր Իտալիայում մարիոսականների դեմ։ Նրա խելքն ու աղնվազարմությունը, լայն կապերը, սուլլայական կուսակցությանը նվիրվածությունը, զինվորական դրծին քաջատեղյակությունը նպաստեցին պաշտոնական սանդուղքով նրա վերելքին։ Հենց այս բոլոր հանգամանքներն էլ որոշեցին Մ. Լուկուլլոսի ընտրությունը։ Ճիշտ է, կար ևս մի, զուտ անձնական հանգամանք էլ։ Մ. Լուկուլլոսը և Կլավդիոսների ամբողջ տոհմը ենթադրում էին, թե Կամպանիայում գործող խոռվարար գլադիատորների և ստրուկների ճնշումը սենատի ու ժողովրդի առջև զորապետի ամենալավ բնութագիրը կլինի և վճռորոշ առավելություն կտա նրան առաջիկա կոնսուլական հերթական ընտրությունների ժամանակ։

Կլավդիոսը, կամ Կլոդիոսը, ինչպես յուրաքանչյուր արիստոկրատ, բնականաբար, Սպարտակին ճանաչում էր որպես հայտնի գլադիատորի և քաջարի ռազմիկի։ Վախենալով խորամանկ հակառակորդից, նա վճռեց գործել ծայրահեղորեն վճռյալ։ Ժամանելով Վեզուվի մոտ և գլադիատորների մասին տեղեկություն հավաքելով, պրետորը սպառումներին հակառակ իմացավ, որ ապստամբները չեն շտապել ցրվելու շրջակայքում, այլ կրկին թաքնվել են լեռան անմատչելի դադաթի ճամբարում։

Կլոդիոսը մանրակրկիտ ուսումնասիրեց տեղանքը։ Լեռան

լանջն անհավատալիորեն բարձր էր ու զառիթափ։ Ցած իջնելու միայն մի տեղ կար։

Տեղանքն ինքնին թելադրում էր խնդրի պարզ լուծումը. օդակաձև լեռնագագի վրա (հետագայում այն կոչվեց Ատրիո դել Կովալո), լեռնագագաթից ընդամենը 300 մետր հեռու հիմնել ամրացված ճամբար, արահետը փակել խանդակով և հողապատնեշով ու թշնամուն սովի մատնել։

Կլոդիոսի ծրագրին բոլորը միահամուռ հավանություն տվեցին։ Գիշերվա կողմ ամրացված դիծը պատրաստ էր։ Հռոմեացիները հրճվում էին։ Ոչ մեկի մտքով չէր էլ անցնում, թե ինչու ռազմական գործը հիանալի գիտցող Սպարտակը թույլ է տվել իրեն այդպես երևիայի նման «բռնել»։

Իսկ ամեն ինչ պարզ բացատրություն ուներ։ Սպարտակին լեռնագագաթում պահելը պարզվեց, որ անհնարին է։ Նրա հրամանով (Կլոդիոսի արածը միանգամայն ակնհայտ էր) մի քանի օրից Վեզուվի մոտ պետք է հավաքվեին շրջակայքի ապստամբ ջոկատները և թիկունքից գրոհեին թշնամու վրա։ Ներքևից և վերևից նախատեսված կրկնակի հարվածը հռոմեացիներին անխուսափելի պարտություն էր խոստանում։

Սակայն շուտով Սպարտակի ծրագիրը փոխվեց։ Նրա գլխում հանկարծակի հանդուգն միտք ծագեց. եթե լեռնագագաթից իր մարդկանց խաղողի վազերից պատրաստված աստիճաններով ցած իջեցնի, ապա հնարավոր կլինի թշնամու վրա թիկունքից գրոհել՝ առանց սպասելու օժանդակ ուժերին...

Առաջնորդի միտքը գլադիատորները ընդունեցին խանդավառությամբ, նման իսկապես ֆանտաստիկ հնարանքը (պետք է 300 մետր բարձրությունից ցած իջնեին) նրանց հիշեցնում էր արենայի հուզումները, հնարավորություն էր տալիս մեկ անգամ ևս ստուգել իրենց քաջությունը և ինքնատիրապետումը, իսկ որ գլխավորն է՝ բավարարություն տալ իրենց փառասիրությանը, այնպիսի խիզախություն կատարել, որ ոչ մեկը չէր կարող կրկնել։

Գլադիատորները հմտորեն ու արագ խաղողի վազեր կտրատեցին, անհրաժեշտ երկարությամբ սանդուղքներ հյուսեցին և Սպարտակի նշած ժամին սկսեցին վայրէջքը։

Վայրէջքը բարեհաջող անցավ։ Բոլոր գլադիատորները մեկ մարդու նման ցած իջան, բաժանեցին իջեցված զենքը և, իրենց միացնելով արդեն ժամանած մի քանի ջոկատները, գաղտնա-

բար մոտեցան հռոմեական ճամբարին։ Լուսաբացին, երբ քունն ավելի խորն է լինում, նրանք գրոհեցին։

Անտեղյակ հռոմեացիները գլխովին ջախջախվեցին և խուճապահար փախուստի դիմեցին։

Ապստամբների նոր, փայլուն հաղթանակի լուրը, հորինովի մանրամասներով գունազարդված (պատմում էին, որ իբր մի քանի կոհորտաներ նահանջել են 74 գլադիատորների դիմաց) անմիջապես տարածվեց Կամպանիայի հարևան մարզերում։ Ամենուրեք ստրուկները խնդության մեջ էին։ Առավել համարձակները փախչելու և Սպարտակին միանալու պլաններ էին ծրագրում։

Իսկ ճակատամարտից ողջ մնացած լեգեոնականները, անիծելով խարդախ թշնամուն, պատսպարվեցին Կապուայում և իրենց պատմություններով, որոնցում ճիշտն ու հորինվածը իրար էր խառնվել, սարսափելի խուճապ սերմանեցին։ Քաղաքում անմիջապես ռազմական դրություն հայտարարվեց։ Ամենուրեք լրացուցիչ պահակախմբեր կարգվեցին։ Կապուայի բնակիչները և վետերանները զինվեցին և պարիսպների վրա դիրքեր գրավեցին։ Բոլորն սպասում էին քաղաքի վրա հարձակմանը։ Անհապաղ օգնության խնդրանքով սուրհանդակ թռավ Հռոմ։

Դա 73 թվականի հունիսն էր։

Գլուխ յոթերորդ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ։ ՄԱԿՐՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

73 թվականը սենատի օպոզիցիոն տարրերը դիմավորեցին սպասումի և տագնապի խառը զգացումով։ Բոլորը հասկանում էին. կուսակցությունների պայքարում վճռական պահը վրա է հասնում։

Լ. Կվինկցիոսի փոխանորդը եղավ ժողովրդական նոր տրիբուն Գ. Լիցինիոս Մակրոսը (մ. թ. ա. 107—66 թթ.), պերճախոս, կրթված, եռանդուն և ժողովրդից հարգված մի անձնավորություն։

Ցիցերոնը Կ. Մակրոսին, ինչպես նաև օպոզիցիոն ուղղության բոլոր տրիբուններին, վերաբերվում էր ծայրահեղ ան-

բարյացակամ։ Ընդունելով, որ նա «բազմակողմանի ու խոր կրթություն է ստացել», Ցիցերոնը նրա պերճախոսության մասին խրախուսանքով չէր արտահայտվում։

Սենատում Մակրոսին չէին սիրում երևելի սենատորների դեմ հարձակումների պատճառով, բայց նրան ոչինչ անել չէին կարողանում, քանզի Մակրոսը Մ. Կրասոսի ազգականն ու դրածոն էր, իսկ տվյալ դեպքում նա քծնում էր նաև Պոմպեոսին։

73 թվականին ելույթներ ունենալով ժողովրդական հավաքներում, Մակրոսը ձգտում էր ունկնդիրներին մղել տիրող ռեժիմի դեմ համառ պայքարի։

— Դուք հույս ունեիք,— ասում էր նա,— որ մեզ մոտ անիծյալ ստրկություն սահմանած Սուլլայի մահից հետո շարի վերջը կգա։ Բայց շատ ավելի դաժան բռնակալ հայտնվեց՝ Կատուլլոսը։ Արդյունքը եղավ այն, որ Բրուտոսի և Էմիլիոս Մամերքոսի կոնսուլության տարին խռովություն բարձրացավ, իսկ հետո կոնսուլ Կ. Կուրիոնը իր դեսպոտիզմը հասցրեց մինչև անմեղ տրիբունի (այսինքն Լ. Սիցինիոսի — Վ. Լ.) սպանությանը։ Ինքներդ էիք տեսնում, թե անցյալ տարի ինչպիսի կատաղությամբ էր Լուցիոս Կվինկցիոսի դեմ ելույթ ունենում Լուկուլլոսը, վերջապես, ինչպիսի ամբոխներ են դրդում այժմ իմ դեմ...

Բայց ես, այնուամենայնիվ, բարի հույսեր եմ կապում ձեր օգնության հետ և հույսն իմ մեջ հաղթում է վախին, և ես գտնում եմ, որ քաջարի այրը ավելի լավ է ազատության համար մղվող պայքարում անհաջողություն կրի, քան ընդհանրապես հրաժարվի այդ պայքարից։

Ընդհանուր ուշադրության և օժանդակության նշաններից ոգևորված, Կվինկցիոսը, Մակրոսը և նրանց ընկերները վերականգնեցին դատավարությունների կամպանիան, տարբեր առիթներով պատասխանատվության կանչելով Օպիանիկոսին դատապարտած դատավորներին։ Վերջինս աքսորից հետո թափառում էր հանդրվան չգտնելով (մահացավ մ. թ. ա. 72 թվականին տենդից, Հռոմի մոտ)։

Սուլլայականները իրենց հակառակորդներին պատասխանում էին նույնանման դատավարություններով։

Փոխադարձ մեղադրանքների և հակամեղադրանքների հետևանքով դատապարտվեցին հետևյալ սենատորները. Պ. Սեպտիմիոս Սցևոլան՝ դրամաշորթության համար, Գ. Պոպիլիոսը և

Գ. Գերենիոսը՝ գանձագողության համար, Մ. Ստիլիոս Բուլբոսը՝ հռոմեական ժողովրդի վեհությունը վիրավորելու համար։ Երկրորդ անգամ դատի տրվեց Գ. Ֆալկուլլան, որը մեղադրվում էր Ա. Կլուենցիոսից 50 հազար սեստերց կաշառք ստանալու համար։ Ի մեծ տհաճություն թշնամիների, Ֆալկուլլան, սակայն, կարողացավ արդարանալ։ «Ինքնին հասկանալի էր,— նկատում է Ցիցերոնը,— գործն այնպես էր վարվում, ինչպես պահանջում է նախնիների պատգամը՝ առանց բռնության, առանց խուճապի, առանց սպառնալիքների։ Պաշտպանության ժամանակ թույլ տվեցին ամեն ինչ արտահայտվել, շարադրել, ապացուցել, դատավորները համոզվեցին, որ նախորդող ամբողջ ժամանակի ընթացքում դատարանի կազմի մեջ չմտած և միայն սեփական խղճի թելադրանքով ղեկավարվող յուրաքանչյուր ոք կարող էր Օպիանիկոսի նկատմամբ մեղադրական դատավճիռ արձակել։ Դեռ ավելին, եթե նա, որպես դատավոր, գիտենար միայն Օպիանիկոսին ներկայացված նախնական դատավճիռները, ապա միանգամայն բավարար կհամարեր այդ»։

Քաղաքական դատավարությունների շարքը լրացնում էին մեծ աղմուկ բարձրացրած քաղաքացիական դատավարությունները «վատ ու լկտի մարդկանց» դեմ, ինչպես նրանց կոչում էր Ցիցերոնը (Հռոմում այդպես կոչում էին նրանց, ովքեր կտակ էին կեղծում, իրենց հարևաններին շպրտում էին փողոց, պլոկում էին պատանիներին)։ Նման գործերից առանձնապես աչքի էին ընկնում Վերեսի սկսած նոր դատավարությունները։

Միաժամանակ սենատում և ֆորումում կատաղի պայքար էր ծավալվում տարբեր խմբերի միջև։ Սուլլայականները, ճնշելով ժողովրդական տրիբուններին, բազմազան անձնական խոստումներ տալով, ծառայություններ մատուցելով, վերջ ի վերջո նրանց իրենց կողմը թեքեցին, Մակրոսին թողնելով բացարձակ միայնության մեջ։

Բայց և այնպես նա չէր հանձնվում և շարունակում էր պայքարը, ձգտելով քաղաքացիներին դրդել ակտիվ գործունեության։ Իր վախկոտ գործընկերներին հիշատակելով, Մակրոսը բացականչում էր.

— Քվիրիտնե՞ր։ Ձեր իրավունքները պաշտպանելու համար ընտրված մյուս բոլոր մարդիկ իրենց ուժերն ու ամբողջ իշխանությունը ուղղել են մեր դեմ։ Նրանք բարերարություններից,

խոստումներից և պարգևներից գայթակղված գերադասել են վճարով լքել ձեզ, քան անվճար գործել աղնվորեն։

Մակրոնը նախազգուշացնում էր ունկնդիրներին սուլլայականներից և նրանց խորամանկ, դեմագոգիական քաղաքականությունից։ Նա ժողովրդին խոստանում էր Իսպանիայում մարտնչող Պոմպեոսի ազատությունը։

— Հարկավոր է նրանց խորամանկությունից զգուշանալ,— ասում էր նա։— Չէ՞ որ նրանք ձեզ համար զանազան խայծեր են պահում և գործը հետաձգում են մինչև Գն. Պոմպեոսի վերադարձը։ Բայց ախր նրան էլ իրենց գլուխներից վեր են բարձրացնում, քանի գնա նրանից վախենում են։ Հենց որ վախն անցնի, պատրաստ կլինեն նրան կենդանի-կենդանի ծվատել։

Ո՜չ, քվիրիտնե՜ր։ Ըստ իմ դիտարկումների, ինձ ստույգ հայտնի է, որ Գնեոս Պոմպեոսը, այդ երիտասարդ հերոսը, որն արդեն նման փառք է նվաճել, կգերադասի ձեր համաձայնությամբ առաջին տեղը գրավել պետության մեջ, այլ ոչ թե նրանց իշխանությանը գործակցել։ Ինձ նաև հայտնի է, քվիրիտներ, որ նա առաջին հերթին կվերականգնի տրիբունների իշխանությունը։

Այս բավականաչափ հանդուգն ագիտացիաների ժամանակ արևելքից Հռոմ վերադարձավ երեսնամյա Կեսարը։

Երեք տարի Հռոդոս կղզում նա հռետորական արվեստ էր սովորել այդ գործի լավագույն ուսուցիչներից՝ մեկի՝ հռչակավոր Ա. Մոլոնի մոտ և լավ տիրապետել էր մերկացնող ճառեր արտասանելուն, երրորդ միհրդատյան պատերազմի սկզբում հանդես էր եկել որպես օժանդակ ջոկատի ինքնակոչ հրամանատար։ Նրա հետ նա հռոմեացիների հանդեպ հնազանդ էր պահել կարիական քաղաքները և, ինչպես Հռոմում էին խոսում, նույնիսկ մարդից վռնդել էր պոնտական ականավոր զորապետ Մետրոփանեսին։

Ինչպես նախորդ տարիներին, երիտասարդ Կեսարը նորից ընկղմվեց պաշտոն որոնողի սովորական կյանքի մեջ, ձգտելով ժողովրդականություն և ձայներ նվաճել։ Մտերիմներին հաջողվեց նրան խցկել մահացած հորեղբոր՝ Գայոս Ավրելիոս Կոտայի տեղը՝ պոնտիֆիկոսների կոլեգիումը։ Կեսարի երկրորդ հաջողությունը եղավ պատվավոր ռազմական տրիբունի (հազար ռազմիկների հրամանատար) պաշտոնում ընտրվելը։ Կեսարը շատ էր հպարտանում այդ դերադասությամբ, որը ժողովուրդը ցու-

ցարերել էր նրա նկատմամբ Կ. Պոպիլիոսի՝ հարուստ և ազդեցիկ ազատագրի որդու, սենատում տեղի համար նկրտողի համեմատությամբ։

73 թվականի սկզբին սենատը Կեսարին և նրա գործընկերներին ուղարկեց Իտալիայի տարբեր մարզերը՝ ապստամբների ջոկատների դեմ կռվելու։

Մարդերն աղքատ գյուղացիների և ստրուկների ապստամբական ջոկատներից մաքրելը գնալով հռոմեական սենատի համար անհրաժեշտություն էր դառնում (Վեզուվի մոտ հիմնավորված գլադիատորների դեմ գործողությունն իսկ իտալիկական ապստամբների դեմ ծրագրված պայքարի մի մասն էր կազմում)։ Ամիսներ շարունակ ստրկատիրական ունեցվածքն այնպիսի կատաղությամբ էր կողոպտվել, ինչպես երբեք։ Մտահոգված քաղաքային պրետոր Գ. Կլավդիոս Պուլքրոսը ավելի ու ավելի խիստ հրովարտակներ էր հրապարակում, բայց՝ ապարդյուն։ Վերջապես Մ. Լուկուլլոսը որպես կոնսուլ խառնվեց գործին և վերականգնեց իրեն իսկ պատկանող պրետորական հրովարտակը (75 թ.), որը փաստորեն ուժեղացնում էր սեփականության դեմ զինված բանդաների հանցագործության պատիժը և «կողոպուտ» հասկացությունը առանձնացնում էր «գողություն» ընդհանուր հասկացությունից։ Բայց այս հրովարտակն էլ դրական արդյունք չտվեց։ Այնժամ սենատը որոշեց դիմել վերջին, վճռական միջոցի՝ զենքի։ Պրետոր Գ. Կլավդիոսը 3 հազարանոց ջոկատով ուղարկվեց Կամպանիա՝ ոչնչացնելու ապստամբական շարժման կենտրոնը՝ գլադիատորների շտաբկայանը Վեզուվում։ Արշավանքը ավարտվեց հռոմեացիների ամենախայտառակ պարտությամբ։

Պոմպեոսի և Ցեսեգոսի կողմնակիցները, օգտվելով հարմար պահից, սենատում մեծ աղմուկ բարձրացրին, սուլլայականներին մեղադրելով գործերը վարելու անկարողության մեջ։ Վերջիններս, պաշտպանվելով, պատճառաբանում էին, որ Կլոդիոսի կոհորտաները կազմված էին հռոմեական քաղաքացիություն չունեցող պատահական մարդկանցից և որ ժամանակ առ ժամանակ ավաղակների հետ բախումների ընթացքում անհաջողություն կրում են բոլորը, ինչը բնական է։

Սուլլայականների հակառակորդները, սակայն, տեղի չէին տալիս։ Նրանք ամեն կերպ աշխատում էին պլեբեյներին հրահրել սենատի դեմ՝ օգտագործելով պարենային դժվարություններն ու

հեծյալների ֆինանսական մեքենայությունները։ Սենատը դրանից, ինչպես նաև Սպարտակի դեմ Կլոդիոսի կրած անհաջողությունից ու պլեբեյների բացահայտ թշնամանքից խիստ անհանգստացած, ի վերջո կարևոր քայլի դիմեց. սահմանեց շուկա մտնող մթերքի կայուն գներ (73 թ. կոնսուլներ Մ. Լուկուլլոսի և Գ. Կասիոսի օրենքը)։ Այդ բանը սաստիկ զայրացրեց հեծյալներին, քանի որ ոչնչացվում էր սպեկուլյացիայի միջոցով Հռոմի պլեբեյների հաշվին արագ հարստանալու հնարավորությունը։ Իսկ պլեբեյներն, ընդհակառակը, շատ գոհ էին ու գտնում էին, որ սենատն ու կոնսուլները շատ օգտակար և իմաստուն միջոցառում են կենսագործել։

Միաժամանակ սենատը որոշեց Կլոդիոսին զրկել Սպարտակի դեմ պատերազմ վարելուց և նրա պարտականությունները հանձնել մեկ այլ պրետորի։ Սենատական խմբերից յուրաքանչյուրը ցանկանում էր իր թեկնածուին առաջ մղել։ Սուր պայքար ծավալվեց։ Հավաքների ժամանակ ժողովրդական պարագլուխներն ամեն կերպ օգտագործում էին Կլոդիոսի (Գ. Կլավդիոս Պուլքրոսի) պարտությունը և խիստ ագիտացիա էին տանում սուլլայականների դեմ։ Մակրոսը՝ ամենագլխավոր հռետորներից մեկը, ժողովրդին կոչ էր անում ավելի եռանդուն պաշտպանել իրենց իրավունքները։

— Նման պայքարում,— կատաղորեն բացականչում էր նա,— ինչ էլ որ լինի, հաղթանակը փոքրամասնությա՞ն կողմն է։ Ժողովուրդը միշտ պարտված է, իսկ հետագայում, ձեզ զգուշացնում եմ, քվիրիտնե՛ր, դա է՛լ ավելի շատ կլինի, եթե միայն նրանք առավել համառությամբ պաշտպանեն իրենց գերիշխանությունը, քան դուք կպայքարեք ազատության վերականգնման համար։

Մակրոսի կոչերն անպատասխան չէին մնում։ Հռոմում իրադրությունը ակնհայտորեն շիկանում էր։ Զարացած պլեբեյները ծեծում էին անցանկալի պաշտոնյաներին։ Հռոմի տարբեր մասերում և նրա սահմաններից դուրս բռնկվում էին հրդեհներ։ Հազարավոր մարդիկ սենատի շենքի առջև ամբոխված՝ հաց էին պահանջում։

Հիմա արդեն բոլոր քաղաքագետները վախեցան։ Անդրկուլիսյան բանակցություններից հետո 73 թվականի կոնսուլներ Մ. Տերենտիոս Վարոն Լուկուլլոսը և Կ. Կասիոս Վարոսը սենատում

օրենք անցկացրին Սիցիլիա, Սարդինիա և Աֆրիկա պրովինցիաներից հացի արտահերթ գնումների վերաբերյալ։

Ստացված հացն անմիջապես վաճառվում էր արտոնյալ գնով՝ 1 մոդին 6,3 ասայով (7/12 սեստերց)։ Գնորդների թիվը 58 հազարից աճեց ու հասավ 113 հազարի (այդպես արվում էր 75 թվականին Լ. Օկտավիոսի կոնսուլության ժամանակ)։ Գնորդների նման հավելումը հնարավոր դարձավ միայն սիցիլիական հացի հաշվին։ Սարդինիայից և Աֆրիկայից ստացվող հացահատիկը արտոնյալ գներով կարողանում էին գնել մինչև 240 հազար քաղաքացիներ։

73 թվականի հացի օրենքը չափազանց վնասաբեր եղավ հռոմեական գանձարանին, քանի որ 74—71 թվականներին պետական գանձարանը «աղքատ էր, ծախսերից հյուծված» (Ցիցերոն)։ Ժողովրդին արտոնյալ գներով հաց վաճառելու հետևանքով գանձարանը տարեկան կորցնում էր ավելի քան 30 միլիոն սեստերց։ Բայց և այնպես օրենքը սենատի համար շատ օգտակար եղավ։ Այն օպոզիցիայի գաղտնի հույսերին կործանարար հարված հասցրեց։ Բոլորից շատ հռոմեական պլեբեյներին հուզող հարցը զգալի չափով լուծվեց և մասսաներն անմիջապես կորցրին նախկին խանդավառության 3/4-ը։ Իզուր էին Մակրոսն ու նրա համախոհները ջանում կրկին բորբոքել ժողովրդի վրդովմունքը։ Հերթական հավաքի ժամանակ, սենատորներին ակնարկելով, Մակրոսն ասում էր.

— Ռազմական իրավունքների տեր մարդկանց պես գործելով, նրանք գավթել են գանձարանը, զորքը, բոլոր թագավորությունները ու պրովինցիաները և ձեզնից խլված զենք ու զրահով իրենց համար ամրություն են ստեղծել։ Իսկ դուք, որ ժողովրդի հիմնական զանգվածն եք կազմում, անասունի եք նմանվում, առանձին անձնավորությունների թույլ տալով լիակատար տիրելու ձեզ և օգտվելու ձեզանից։ Դուք զրկվել եք այն ամենից, ինչ որ ձեզ թողել են ձեր նախնիները, բացի այդ ինքներդ քվեարկությամբ ձեզ համար տերեր եք ընտրել, ինչպես նախկինում տիրակալներ էին ընտրում։

Դուք իսկապես ինչ-որ մոռացության մեջ եք։ Դուք գտնում եք, որ ձեզ լիուլի ազատություններ են տվել, եթե մարմնական պատիժների չեն ենթարկում և, հարուստ տերերի ողորմածությամբ, թույլ են տվել այստեղ ու այնտեղ տեղաշարժվել։ Բայց գյուղի բնակիչները նման պայմաններ չունեն։ Նրանք մեռնում

են երևելի մարդկանց կժտություններից։ Նրանք մատնված են հզոր մարդկանց կամքի քմահաճույքին, կարծես ընծայաբերվում են նրանց։

Բայց բոլոր կոչերն ապարդյուն դուրս եկան։ Օժանդակությունը գնալով դառնում էր սակավաղոր և թույլ։ Այսպես հակառակորդ կողմերը մոտեցան կոնսուլական նոր ընտրություններին։

Սուլլայականների վերջին անհաջողությունների (նրանց թեկնածու Գ. Կլավդիոս Պուլքրոսը Սպարտակից խայտառակ պարտություն էր կրել) և Իսպանիայում Պոմպեոսի հաջողությունների շնորհիվ հաջողվեց բավականին ամուր դաշինք կնքել պահպանողական ռեֆորմատորների խմբի հետ։ Դաշինքին միացավ նաև Ցետեգոսի խումբը։ Հետևանքն այն եղավ, որ կոալիցիան ընտրությունների ժամանակ հեշտությամբ հաղթանակ տարավ։ Պոմպեոսն անցկացրեց կոնսուլության իր թեկնածուին՝ Լ. Հելիոս Պուբլիկոլային, իսկ ռեֆորմատորները՝ Գն. Լենտուլոս Կլոդիանոսին։

Կոնսուլական ընտրություններից հետո վերստին առաջացավ Սպարտակի դեմ պայքարի հրամանատար նշանակելու հարցը։ Ընտրությունների ժամանակ ձայների մեծամասնությունը հավաքեց Պուբլիոս Վալերիոս Վարինիոսի թեկնածությունը։ Սենատի հատուկ հանձնարարությամբ ռազմական լիազորությունները (Իտալիայի սահմաններից ներս պրետորներն ու կոնսուլները չէին կարող զորահրամանատար լինել առանց սենատի հատուկ որոշման) ստանալով, Պ. Վարինիոսը Հռոմից մեկնեց զորք հավաքելու։ Նրա հետևից կոնսուլ Մարկոս Լուկուլլոսը մեկնեց Բրունդիզիում, որտեղ նրան սպասում էր լեգեոնը։ Նրան, ինչպես արդեն ասվել է, սենատը բաժին էր հանել Մակեդոնիան (նրա դրծընկեր Գ. Կասիոսին «վիճակ էր ընկել» Այսրալպյան Գալլիան), և նա պատրաստվում էր մեկնել այնտեղ Միհրդատի դաշնակիցների՝ թրակացիների դեմ կռվելու համար։

Հռոմից նրա մեկնումը Մակրոսի համարձակությունն ավելացրեց։ Բոլոր ուժերով նա ջանում էր խանգարել Վարինիոսին՝ իր քաղաքական հակառակորդին, զորք հավաքել։ Ժողովրդական հավաքներում Մակրոսը կոչ էր անում հետագա հարձակումներ գործել թուլացած սուլլայականների վրա։ Նրա ագիտացիայից և իրենց անհաջողություններից շարացած սուլլայականները հանդուգն տրիբունի հասցեին սպառնալիքներ էին թափում, նրա

դեմ հակառակորդների ամբոխներ էին հավաքում և տուրուդրմփոցներ սարքում։

— Մակրոսը,— գոռում էին սուլլայական հռետորները, երբ նրանց խոսելու հնարավորություն էին տալիս,— մտադիր է նոր քաղաքացիական պատերազմ սանձազերծել։ Նա ցանկանում է դիկտատո՞ր, թագավո՞ր դառնալ...

Տրիբունը պատասխանում էր շինծու հեզությամբ.

— Ո՜չ, քվիրիտնե՛ր, ես ձեզ չեմ համոզում վրեժ լուծել վիրավորանքների համար։ Ես ավելի շատ ցանկանում եմ, որ դուք հանգիստ կյանք ստանաք։ Երկպառակության չձգտելով, ինչում մեղադրում են ինձ նրանք, ես կոչ եմ անում ժողովուրդների իրավունքների պահպանման։ Եթե նույնիսկ նրանք ամուր կառչեն իշխանությունից, ես զենքի չեմ կոչի և ոչ էլ պառակտման, այլ միայն այն բանին, որ դուք նրանց շտրամադրեք ձեր արյունը։ Թող նրանք իրենք, ինչպես ուզում են, անցկացնեն և իրագործեն իրենց կարգադրությունները, թող հասնեն տրիումֆների, թող իրենց դրոշներով հետապնդեն Միհրդատին, Սերտորիոսին և մյուս կենդանի մնացած աքսորականներին։ Բայց թող վտանգ ու չարչարանք չտեսնեն նրանք, ովքեր ավարից ոչ մի բաժին չունեն։ Չէ՞ որ նրանք ծառայության դիմաց ձեզ պարգևատրում են հապճեպ անցկացված օրենքներով։ Դրա համար են նրանք ձեր ազատությունը գնահատում հինգ մոդիոյի։ Բայց դա բանտային օրապահիկից ավելի չէ, քվիրիտնե՛ր։ Նման ոուզ օրապահիկը մարդկանց թույլ չի տալիս քաղցից մեռնել, բայց հյուծում է ուժերը։ Նման աղքատիկ օրապահիկը չի ազատում տնային հոգսերից և ի դերև է հանում բոլոր պասսիվ մարդկանց հույսերը։

Այսպես էր կոչ անում և թախանձում Մակրոսը։ Բայց հռոմեական պլեբսի մասսան առանձին հաճույքով չէր լսում նրա կոչերը։ Վիրավորվելով խանդավառության պակասից, տրիբունը համաքաղաքացիներին մեղադրում էր փոքրոգության մեջ։

73 թվականի աշնան սկզբին Հռոմում դրությունը դարձավ վերին աստիճանի անորոշ։ Միհրդատի դեմ Լուցիոս Լուկուլլոսի հաջող գործողությունների շնորհիվ կողմերի ուժերը հավասարակշռվեցին։

Դրսից նոր, ուժեղ խթան էր անհրաժեշտ։ Հակառակորդները, լարված, թարմ լուրերի էին սպասում ռազմաբեմերից՝

Իսպանիայից և Պոնտոսից, ուր արդեն ներխուժել էր Լ. Լուկուլլոսը։

Սակայն նոր հարվածը բոլորովին այնտեղից չեկավ, որտեղից սպասում էին։

Գլուխ ութերորդ

ԻՆՉՊԵՍ ԷՐ ՊՐԵՏՈՐ ՎԱՐԻՆԻՈՍԸ ԿՌՎՈՒՄ ՍՊԱՐՏԱԿԻ ԴԵՄ

I

Պուբլիոս Վալերիոս Վարինիոսը (մ. թ. ա. 113—48 թթ.) տոհմի ազնվազարմությամբ չէր զիջում իր նախորդին՝ Գ. Կլավդիոս Պուլքրոսին։ Նրա հեռավոր նախնին՝ նշանավոր Վալերիոս Պուբլիկոլան, հռոմեական հանրապետության չորս հիմնադիրներից մեկն էր։ Զատկանց նշանավոր էին նաև նրա մյուս նախնիները, որոնք Հռոմում երևելի պաշտոններ էին գրավում։

Նրանց իր փառքով չէր զիջում նաև Վարինիոսի հայրը՝ Լ. Վալերիոս Ֆլակոսը (ծն. մ. թ. ա. 140 թ.), որն այդ ժամանակ սենատի պրինցեպս էր։

Պ.Վարինիոսը ծանոթների և բարեկամների լայն շրջանակ ուներ, նրանցից էր և Ցիցերոնը։ Նրա կարիերան հաջող էր դասավորվում։ Նա փորձառու և օժտված զորապետի համբավ ուներ, Սուլլայի հրամանատարության տակ Հունաստանում կռվել էր Միհրդատի դեմ, հետո Իտալիայում՝ մարիոսականների դեմ։

Պ. Վարինիոսը պրետոր դարձել էր Մ. Կրասոսի օգնությամբ (նրա հետ գործարար հարաբերությամբ էր կապված որպես ֆինանսիստ)։ Պաշտոնի անցնելով՝ Պ. Վարինիոսը հետագա հառաջադիմության նպատակով անմիջապես սերտ կապեր հաստատեց Պոմպեոսի կուսակցության հետ և սկսեց նրան շատ արժեքավոր ծառայություններ մատուցել։ Ծաղրասեր հռոմեական պլեբսը, որ լավ ծանոթ էր գաղտնի քաղաքականության անակնկալներին, անմիջապես նոր պրետորին կնքեց «Վարինիոս», այսինքն՝ «Փոփոխամիտ» մականունով։

Սպարտակյան պատերազմից հետո Պ. Վարինիոսի կապերը Գն. Պոմպեոսի հետ առավել ամրապնդվեցին։ Նա մասնակցեց Միհրդատի դեմ Գն. Պոմպեոսի արշավանքներին և մյուս սպաների հետ միասին լավ հարստացավ դրանից։ Նոր

քաղաքացիական պատերազմը (մ. թ. ա. 49—45 թթ.) Պ. Վարինիոսը դիմավորեց Գն. Պոմպեոսի կուսակցության շարքերում՝ նրա բանակը մտնելով որպես վետերան-կամավոր։ 65 տարեկան հասակում նա զոհվեց Դիրաքիումի մոտ Կեսարի զորքերի դեմ մարտնչելիս (մ. թ. ա. 48 թ.)։

Ապստամբած ստրուկներից Գ. Կլավդիոսի պարտությունից հետո, երբ նրան փոխարինող գտնելու անհրաժեշտության հարցն առաջ քաշվեց, հայր ու որդի անմիջապես վճռեցին (ինչպես, մինչ նրանք, Լուկուլլոսների և Կլավդիոսների ամբողջ կլանը), որ չի կարելի ձեռքից բաց թողնել Սպարտակին ջախջախելու միջոցով Պ. Վարինիոսի կոնսուլ դառնալու հնարավորությունները ամրապնդելու նպաստավոր միջոցը։ Քանի որ կոնսուլ Լուկուլլոսների հովանավորյալը լիովին սնանկացել էր և նրանք ոչ մի պատճառ չունեին դիմակայելու համար, իսկ մյուս հավակնորդները նման ազդեցիկ միջնորդ չունեին, ինչպես Պ. Վարինիոսը, ապա սենատում դրված հարցը, իսկ նա որպես պրետոր դրա իրավունքն ուներ, լուծվեց նրա օգտին։

Որպես պրոպրետոր ստրուկների դեմ պատերազմելու նշանակումն ստանալով՝ նոր հրամանատարը որոշեց գործել զգուշորեն։ Մանրակրկիտությամբ սպաներ ընտրեց։ Խորհրդատուի և լեգատի դերի համար Պ. Վարինիոսը հրավիրեց պրետորության գծով իր ընկեր Կոսինիոսին (մ. թ. ա. 113—73 թթ.), որը համարվում էր զինվորական գործի գիտակ և նույնպես Ցիցերոնի բարեկամն էր։

Նոր հրամանատարը հեծելազորի պետ ընտրեց Ֆուրիոսին՝ հեծյալների ընտանիքից մի քաջ երիտասարդի (մոտ. մ. թ. ա. 103—73 թթ.)։ Պլեբեյական այս տոհմը նշանավոր էր (նրանք ունեցել էին պրետորներ, կոնսուլական իշխանությամբ ռազմական տribուններ, կոնսուլներ, դիկտատորներ, ցենզորներ), աչքի էր ընկել ռազմական գործերում (նրանք հռոմեական զորքերը մարտի էին տարել էկվաների, վոլսկների, էտրուսկների դեմ)։ Բայց Ֆուրիոսներին առանձնահատուկ փառք էր բերել գալլերի դեմ մղված պատերազմը, որի ժամանակ Մ. Ֆուրիոս Կամիլոսը (մ. թ. ա. IV դար), «հայրենիքի հայրը», ազատագրել էր Հռոմը գալլերից, նորից վերակառուցել ավերված քաղաքը, իսկ հետո երկրորդ անգամ հաղթել էր սարսափելի կելտերին։

Հեծելազորի պետի անձնական հատկանիշների կողքին զուտ հոգեբանական այս հանգամանքը Պ. Վարինիոսը նույնպես

նկատի էր ունեցել։ Եվ սենատորների հետ զրույցների ժամանակ նա աշխատում էր հնարավորին չափ տարածել իր հեծելազորի պետի փառքը։ Նա ենթադրում էր, թե Սպարտակի հրամանատարության տակ դտնվող գալլերը, իմանալով նրա ընտրության մասին, գիտենալով իր իսկ տոհմագրությունը, կվախենան ու շփոթահար կլինեն։

Նրա հաշվարկը չիրականացավ, իսկ փառասիրությամբ կրակված Ֆուրիոսն էլ չկարողացավ կրկնել իր նախնիների քաջագործությունները. սպարտակյանների դեմ մղվող մարտերի ժամանակ զոհվեց, չհասցնելով վաստակել ո՛չ փառք, ո՛չ հռչակ։

Պ. Վարինիոսի երրորդ սպան, այսինքն՝ քվեստորը, երեսնամյա Գ. Թորանիոսը (մ. թ. ա. 103—45 թթ.) զարձավ։ Նրա հայրը Հ. Կեսարի պատանեկան տարիների խնամակալն էր։ Իրեն՝ Գ. Թորանիոսին (նրա եղբայրը՝ Մետելլոս Պիոսի քվեստորը, վերջերս զոհվել էր Սերտորիոսի դեմ մղած պատերազմում) հնարավորություն մեծ բախտ կվիճակվի. նա կդառնա մահացած ընկերոջ՝ Մակեդոնիայի կուսակալ և պրոպրետոր Գ. Օկտավիոսի որդու՝ ապագա Օգոստոս կայսեր (մ. թ. ա. 59 թ.) խնամակալը։ Դրանից 10 տարի հետո Գ. Թորանիոսը կմասնակցի Կեսարի դեմ Պոմպեոսի մղած պատերազմին և կյանքի վերջին օրերը կանցկացնի Կորկիրոսի աքսորում։ Հենց նրան՝ հավատարիմ համախոհին կուղղի Ցիցերոնն իր դառնությամբ լի նամակները։

Այսպիսին էին սպաները Պ. Վարինիոսի՝ նոր հրամանատարի, որին սենատը տրամադրեց երկու լեգեոն (12 հազար մարդ) հետևակ և 2 հազար այրուձի։ Ճիշտ է, զինվորները դեռևս հավաքագրված չէին, բացի 4 հազար վետերաններից, որոնց սենատը նրան հանձնեց անմիջապես։

Ուժերի հավաքագրումը երկարաձգվեց։ Չնայած տարբեր կողմեր ուղարկված կարգադրագրերին, ռազմիկները չէին ցանկանում բանակ գնալ և դասալքում էին։ Ստիպված ամենուրեք զինված ջոկատներ ուղարկվեցին, որոնք ուժով հավաքեցին ծառայությունից խուսափողներին և ապա երդմամբ պարտավորեցրին նրանց։

Բայց գյուղերում դիմադրությունը չէր դադարում։ Բնակչությունը չէր ցանկանում ձիեր, սայլեր, պարեն տալ։ Զորապետն ստիպված էր անձամբ շրջել մարզերում և հռոմեական հայրենասիրության կոչ անել։

Այդ ժամանակ Կամպանիայից Վարինիոսին տեղեկություններ հասան, որ Սպարտակը սկսել է միավորել ապստամբական ջոկատները, ստեղծել է ծանր ու թեթև հետևակ և հռոմեական օրինակով եռանգուն վարժեցրել նրանց։

Պրետորին ընկճում էին նաև Իտալիայի մյուս մարդերից ստացված լուրերը։ Ըստ տեղեկությունների դժգոհություններն ամենուրեք աճում էին օր օրի, ավելացնելով ստրուկների ենթադրյալ ուժերը և խռովարարների կողմը գրավելով հասարակ ժողովրդի նոր նոր խմբեր։

II

Իսկ Հռոմում դեռևս չէին հասկանում, թե իրականում ինչ է կատարվում։ Օրերն այնտեղ գլորվում էին սահմանված կարգով։ Հավաքվելով նիստի, սենատը քննարկում էր ընթացիկ գործեր, արտաքին քաղաքականության հարցեր, նամակագրություն էր վարում Գն. Պոմպեոսի և երկու Լուկուլլոսների հետ։ Մեկ այս, մեկ այն սենատորը, հիվանդ ձևանալով, խուսանավում էր ձանձրալի վիճաբանություններից և մեկնում էր քաղաքամերձ կալվածքները, որպեսզի տեղում ստուգի գործերի ընթացքը, համոզվի, թե արդյոք վիլիկոսը չի՞ գողանում, կըրճատելով նրա եկամուտները, գնում էր ֆորում դատական բանավեճեր լսելու, բաղնիք էր գնում կամ կրկես՝ զվարճանալու մարտակառքերի մրցումներով և մնջախաղով կամ էլ միաժամանակ հանգստանում էր Բայիի մոդայիկ հանգստավայրում, «ցրվելով» առօրյա հոգսերից։ Այստեղ զուգված ու օծված, բարձրահասակ ստրուկների ուսերին դրված փակ պատգարակներով, հաբգանքով հետ քաշվող ամբոխի միջով, նա գնում էր ժամադրության սիրունիկ դերասանուհիների, արտասահմանցի հետեբաների կամ ուրիշների կանանց հետ։ Վերջապես, շատ ժամանակ էր խլում հասարակական պարտականություններով զբաղվելը. հարկավոր էր շնորհավորել ընտրված թեկնածուներին, դատարանում ինչ-որ մեկին իր հեղինակությամբ օժանդակել, որևէ մեկին ճանապարհել պրովինցիա, վկա կանգնել կտակ կազմելու ժամանակ, ներկա գտնվել նշանդրեքի, երիտասարդի պատմուճան հագնելու ծիսակատարությանը...

Սենատորների կանայք ժամերով նստում էին փայլեցված մետաղից հայելիների առաջ։ Բազմաթիվ սպասուհիների օգնու-

թյամբ նոանդագին զբաղվում էին իրենց արտաքինով և արդուզարդով։ Վարձված կամ գնված փիլիսոփաները հաշվի առնելով իրենց տիրուհիների զբաղվածությունը, այդ ժամերին ողջախոհության և բարոյականության մասին ճառեր էին արտասանում։ Տիրուհին, սովորաբար, նրան լսում էր ցրված տեսքով, երբեմն աշխուժանալով, երբ հարկ էր լինում պատասխանել ծծանելիքի բույր արձակող երկտողին կամ տնտեսական որևէ կարգադրություն անել։ Սպիտակեցված և կարմրացված դեմքով, սուրմա քաշած աչքերով, ջահել ստրկուհիների միջոցով մազը մազին դարսված սանրվածքներով կամ սպիտակ, շեկ, շագանակագույն կեղծամներով, չտեսնված արդուզարդով պճնված, թևի տակ առնելով Պլատոնի «Պետության մասին» թղթագլանը, որում նշանավոր փիլիսոփան կանանց ընդհանրություն էր քարոզում, ազնվազարմ տիկնայք դուրս էին գալիս Ապիական ճանապարհ՝ զբոսնելու։ Նրանց ուղեկցում էր գնված ստրուկների ամբողջ մի ամբոխ, թղթատարներ, դրսի լակեյներ, սուրհանդակներ՝ բոլորն էլ վարպետորեն սանրված խոպոպներով սքանչելի պատանիներ, որոնք, կարծես, պատվավոր պահակախումբ էին կազմում։ Նրանց հետ միասին սովորաբար տիկինը վերցնում էր իր թզուկին ու ձեռնասուն կապիկին, ինչպես և փիլիսոփա-բարոյախոսին։ Այստեղ, Ապիական ճանապարհի վրա հաճախակի ժամադրություններ էին նշանակում իրենց ընկերուհիներին, մտերիմներին և ընտանիքի բարեկամներին։ Քննարկելով իրենց գործերը, տիկնայք խայթոցներով արտահայտվում էին իրենց ախոյանների հասցեին և թշնամաբար հետևում գեղեցկուհի կուրտիզանուհիներին, որոնք անձամբ վարելով մետաքսապատ կառքերը այդ ժամանակ դուրս էին գալիս զբոսանքի։

Ազնվազարմ երիտասարդությունը նույնպես ժամանակ չէր կորցնում։ Շքեղորեն պճնված, պսակներով զարդարված, թանկարժեք անուշահոտություններով օծված, հետևաների, դերասան-դերասանուհիների գրկերում պառկած՝ նրանք խնջույքներ էին անում շքեղորեն զարդարված տրիկլինիումներում, երգեր էին լսում, տարբեր երկրներից բերված ջահել ստրկուհիների պարեր դիտում կամ շրջում էին քաղաքային գլխավոր հրապարակը՝ ֆորումը տանող առևտրական փողոցների վաճառատներում, սակարկելով գնում էին դրսից գված արծաթեղեն, թանկարժեք քարեր, ընտիր կտորեղեն, հախճապակյա գավաթներ,

հինավուրց սափորներ, մարգարիտ, հասպիս, կրիայի պատյաններով դրվագանախշ պատգարակներ, փղոսկրից սեղաններ, ձիեր ու շներ, իսկ Կաստորի տաճարի մոտ թեժ աճուրդից՝ գեղեցիկ պատանի-ստրուկներ։

Հեծյալները՝ առևտրական խավի ներկայացուցիչները, սովորաբար խոնվում էին Մինուցիոսի՝ որպես հացահատիկի բիրժա ծառայող սյունասրահում, յուղի շուկան շրջապատող սյունասրահներում կամ Ֆորումում։ Նրանք քննարկում էին բաժնետոմսերի արժեքները պրովինցիաներում, վիճում էին շինարարական, պարենի փոխադրման կապալների մասին, մաքսային հարկերի, պետական հողերի վարձակալման և հարկահավաքության հարցերի շուրջ։ Նրանք բարձր տոկոսներով պարտքեր էին տալիս պատանիներին, սենատորներին, համայնքներին և արքաներին, դատարանով բռնագանձում էին անվճարունակ պարտապանների կարողությունը և աճուրդի հանում ունեցվածքը, առևտրական գործարքներ էին կնքում, անդրծովյան ապրանքների և հազվագյուտ իրերի աշխույժ առևտուր անում։

Քրքրված կոշիկներով, կեղտոտ ու կարկատած պարեգոտներով խնդրատուները, ինչպես ընդունված էր, առավոտները խմբվում էին իրենց պատրոնների տների առջև, բակերում աղմկում էին, ստրուկներին հայհոյում։ Ով որ ուներ, մի բան էր գցում դռնապանի գրպանը, իցկվում էր տունը և մյուս երջանիկների հետ միասին կեղծավոր ողջույնի խոսքեր արտասանում։ Եթե ուշադրության էր արժանանում, խոսակցություն էր բաց անում և ձգտում էր կարգի բերել իր գործերը կամ որևէ նվեր կորզել։

Դատարաններում, բազմաթիվ քաղաքացիական և քրեական դատավարությունների ընթացքում, մեծ քանակությամբ շահագրգռված անձանց ներկայությամբ, սովորական պայքար էր գնում մեղադրության և պաշտպանության միջև։ Յուրաքանչյուր կողմ կատաղորեն ապացուցում էր իր իրավացիությունը և հակառակորդի գլխին ամեն տեսակի լուտանք էր թափում։

Արհեստավորներն, իրենց աթոռակներին նստած, ջանասիրաբար մուրճահարում էին, ռանդում ու սղոցում էին, անոթներ էին սարքում, կտոր գործում, մահուդ լմում, աշխատում ներկատներում, զբաղվում նաև հազար ու մի գործով։ Երեկոները, ծանր աշխատանքից և նեղվածք արհեստանոցների հեղ-

ձուկից տանջահար, նրանք վերագառնում էին նեղլիկ փողոցներում կառուցված, հաճախակի հրդեհներից վնասված, խիտ բնակեցված շենքերի ձեղնահարկերում գտնվող իրենց խղճուկ բները։ Այստեղ հապճեպ ընթրում էին, ուտելով բակլա, դարու խաշիլ, եփած կամ բոված սիսեռ, քացախով բանջարեղեն, սոխուկով շիլա կամ, եթե գործերը հաջող էին ընթանում, հորթի խաշած գլուխ, և ծանր աշխատանքի ու անվերջանալի զրկանքների բեռան տակ կքված իրենց կանանց հետ զրուցելով ընթացիկ գործերի ու հույսերի մասին, շուտով պառկում էին քնելու։ Վաղը նրանց նույն ծանր աշխատանքային օրն էր սպասում։ Իսկ հաճախ քնել հնարավոր չէր լինում. հարևան բնում հայհոյում էին, փողոցի շրջադարձից լսվում էր գերան կամ տախտակ փոխադրող բեռնասայլերի կամ փողոցի նեղվածքում իրար բախված կառքերի դղրդյունը, կառապանների բարձրաձայն հիշոցները։

Հոգատարությամբ, շինարարական և ծածկապատման կապալային աշխատանքներով, պարենի առևտրով, ստրուկների և դյուղիատորների առուծախով, դրամական սպեկուլյացիայով և լումայափոխությամբ, ոսկի և արծաթ հալելով, բժշկությամբ, նկարչական և դրողական գործերով, գերասանությամբ, գրագրությամբ զբաղվող տնային ստրուկները և աղատագիրները բոլորն էլ մեկը մյուսի նկատմամբ կատաղի բանսարկություններ էին սարքում, ջանալով նվաճել իրենց տերերի բարյացակամությունն ու ողորմածությունը։

Իտալիայի տարբեր մարզերից եկվոր ժողովուրդը (նախ և առաջ տանը խղճուկ գոյությունը քարշ տվող և մասնավոր ու հասարակական նվիրատվություններից գայթակղված, բոլոր հույսերը կորցրած գյուղական երիտասարդությունը, օրենքից դուրս հայտարարվածների երեխաները, որոնք երկար ժամանակ դեգերումների մեջ էին եղել, նրանք, ովքեր իրենց ունեցվածքը գինարբուքների և այլասերության, խելահեղ ծախսերի մեջ էին վատնել, ովքեր իրենց հայրենիքում որևէ հանցագործություն էին կատարել), արդարություն որոնելու համար Հռոմ եկած, որևէ վաստակ կամ պաշտոն գտնելու հույսով ժամանած բաղմաթիվ օտարերկրացիները մաշում էին ազնվազարմ մարդկանց դռները՝ օգնություն և պաշտպանություն հայցելով։ Ճաշի ժամին նրանք շրջապատում էին շրջիկ առևտրականներին, որոնց մթերքներով

լի զամբյուղներից ախորժաբեր բույր էր տարածվում։ Բոլորն շտապում էին իրենց ամանեղենով։ Ստանալով իրենց բաժինը և մի կողմ քաշվելով, ագահաբար ուտում էին գնածը։

Իսկ քաղաքի ծայրամասերում ընկած ծուռումուռ ցուցանակներով էժանագին պանդոկներում, որտեղ առանց ուղեկցորդի ոչ մի ունևոր մարդ սիրտ չէր անի գնալ, քանի որ կարող էին թալանել կամ սպանել, ուր բացարձակ մթության մեջ դժվար էր հասնել (եթե առջևից ջահով կամ բրոնզյա լամպով ստրուկ չէր գնում, հեշտությամբ կարելի էր ընկնել կեղտաջրով լի խոր փոսերի մեջ), հավաքվում էին այդ մռայլ ու խղճուկ հաստատությունների մշտական հաճախորդները՝ գերեզմանափորներ, կամուրջների տակ բնակվող թափառաշրջիկներ ու մուրացկաններ, գողեր ու թալանչիներ։ Վերջիններս մշտապես գտնվում էին ընդհարման մեջ օրենքի և քաղաքային պահակազորի հետ, որոնք ապարդյուն նրանց փնտրում էին Պոմպտինյան ճահիճների կամ Կումի մերձակա Գալինարյան անտառների շրջակայքում, այնինչ նրանք հավաքվում էին Հռոմում և գիշերները վիտում էին քաղաքում ավար փնտրելով։ Այստեղ՝ ծայրամասերի պանդոկները, գալիս էին նաև ո՛չ կարողություն, ո՛չ էլ ապնվազարմ հովանավորներ ունեցող գործազուրկ փիլիսոփաներ, ճարտասաններ և քերականներ, Կիբելեի քրմեր, պաշտոնաթող ատլետներ ու գլադիատորներ, խեղանդամ բռնցքամարտիկներ և կրկեսային հեծյալներ, սնանկացած և բարոյալքված վետերաններ, որոնք չունեին և ոչ մի գրոշ, բայց տոգորված էին Միհրդատի պատերազմից և օրենքից դուրս հայտարարվածների ունեցվածքից հարստացած 10 քաղցր տարիների հիշողություններով։ Նրանք բոլորը գալիս էին այստեղ, որ վեգ խաղալով ցրեին իրենց դառը մտքերը, մի բաժակ գինով տաքանային, իրենց դժբախտությունների և հույսերի մասին զրուցեին, ինչպես նաև «աղքատներին ճնշող անիծյալ հարուստներին ու թալանչիներին հայհոյեին»։

Ասենք, Հռոմի կյանքը միայն մութ կողմեր չուներ։ Շքեղ տաճարները լիքն էին աղոթողներով։ Փողոցներով տարբեր ուղղություններով քայլում էին զանազան աստվածների պատվին կազմակերպված կրոնական թափորներ։ Կրկեսում, սովորականի պես, առավոտից մինչև արևամուտ մեծաքանակ ամբոխ էր հավաքվում։ Սենատորները, խառնվելով հեծյալներին և հասարակ

ժողովրդին, իրենց տիկնանց գլխավերևում հարգանքով հովանոցներ էին բռնում, նրանց պաշտպանելով արևից ու անձրևից։ Հասարակ ժողովուրդը ագահությամբ նայում էր ջահել աղնվազարմ կանանց զարմանալի արդուզարդին և գեղեցկությանը, երկիմաստ կատակներ փոխանակում և հաճույքով ուտում պանրով կարկանդակներ, երշիկեղեն, խոզապուխտ, վրայից մեղր կամ եփած քաղցր գինի խմելով։ Տարբեր խավերի հարյուր հազարավոր մարդկանց համար կրկեսը մարտակառքերի մրցություն, ըմբշամարտ, բռնցքամարտ, արագավազներ ցուցադրող սիրելի մի վայր էր։ Այստեղ ցուցադրական ճակատամարտեր և շքերթներ էին կազմակերպվում։ Ամֆիթատրոններում, առաջվա պես, մարտնչում էին գլադիատորները։ Թատրոնները ժողովրդին հրամցնում էին կոպիտ ֆարսեր, կատակերգություններ և դրամաներ։ Կատակերգությունները (ատելաններ) պատկերում էին գյուղացիների, ձկնորսների, փայտահատների, բրուտների, մահուդագործների, խաղողագործների, ուղղիկների կյանքը։ Այս ամենը համեմված էին կոպիտ սրամտություններով, հաճախ անպարկեշտ կատակներով, ինչպես նաև քաղաքական ակնարկներով և ուղղակի հարձակումներով։ Ներկայացումներն ընդունվում էին միահամուռ ծափահարություններով։ Ֆարսերը կամ մնջախաղերը (ծաղրածուական կատակերգություններ) ներկայացնում էին իրական կյանքից վերցված կենցաղային, հաճախ սիրային տեսարաններ, որոնք աչքի էին զարնում իրենց հասարակ լեզվով և ծայրահեղ անպարկեշտությամբ։ Կանանց դերերը կատարում էին տղամարդիկ։ Արլեկինների պես հագնված գործող անձինք հաճախակի պարում էին։ Գլխավոր հերոսին՝ խելապակասին ապտակների և հարվածների առատ բաժին էր հասնում։ Առասպելական սյուժե ունեցող ողբերգությունների ժամանակ բեմ էին հանվում մարտակառքեր, այլ երկրներից բերված գազաններ, որ անչափ դուր էր գալիս հանդիսատեսին։ Ժողովրդայնություն էին վայելում մնջախաղերը (մեկ դերասանի և գործողության ընթացքը պատմող երգչախմբի թատրոն)։ Սրանց բովանդակությունն էլ շատ երկիմաստ էր և ծայրաստիճան անպարկեշտ։

Բոլոր այս ներկայացումներն աշխուժորեն արձագանքում էին նաև ստրուկների պատերազմին։ Հանդիսատեսը բարձր քրքջոցով էր դիմավորում ապստամբների և նրանց առաջնորդի դեմ կատակերգակների հարձակումները։

Խելա՜ռ, խելա՜ռ Սպարտակ...
Նա ուզում է Հռոմին հաղթել,
Այն Հռոմին, որին
Նույնիսկ Հաննիբալն ընկճել չկարողացավ...

Առավել կրակոտ հանդիսատեսները վեր էին թռչում տեղերից, իրենց հայրենասիրական զգացմունքները ցուցադրելով, բռունցք էին ճոճում, բարձրաձայն գոռում.

— Խաչե՜լ բարբարոսին... Խաչե՜լ զազրելի թրակացուն... Մենք նրանց ցո՜ւյց կտանք...

III

Օգոստոսի սկզբին, երբ արտերում հասել էր հացահատիկը, Վարինիոսը որոշեց սկսել ռազմական գործողությունները։ Ճիշտ է, բանակը դեռևս լիակատար կազմավորված չէր և բարոյական ոգին այնքան էլ բարձր չէր։ Զորապետի բացակայությունների ժամանակ երիտասարդ ռազմիկները հաճախակի փախչում էին ճամբարներից։ Հաջողվում էր վերադարձնել նրանց (այն էլ՝ ոչ բոլորին) միայն ամենասոսկալի պատիժների սպառնալիքով։ Դրան ավելացան նաև Մակրոսի՝ զենք չվերցնելու կոչ անող հանդուգն ճառերի վերաբերյալ զինվորների ասեկոսեները։ Այս ամենից և Հռոմից եկող ներքին վեճերի ու ճղճիմությունների մասին լուրերից գրգռված Պ. Վարինիոսը Հռոմ ուղարկեց իր քվեստոր Թորանիոսին, հանձնարարելով տեղեկանալ անցուդարձին և սենատից պահանջել կտրելու ապստամբների կամա թե ակամա դաշնակիցը դարձած Մակրոսի ձայնը։

Այդ ընթացքում Վարինիոսն ինքը որոշեց (թեև Կոսինիոսի և Ֆուրիոսի օժանդակ ուժերը դեռ իրեն չէին միացել) Ապիական ճանապարհով շարժվել հարավ, դեպի Կամպանիա, մտադիր լինելով առանց հետագա ձգտումների հարձակվել Սպարտակի վրա։

Իսկ վերջինս վիթխարի եռանդով զբաղված էր իր զորամասերի կազմավորմամբ։ Նա արդեն ստեղծել էր ծանր լեգեոնային հետևակ, թեթևազեն ջոկատներ, ուժեղ թափով զինում և վարժեցնում էր նրանց։

Ամենօրյա մարզումների շնորհիվ ապստամբներն արագորեն սովորեցին ռազմական ձևով ճամբարներ կառուցել, պարեկ-

ներ ու պահակախմբեր կարգել, շարքի մեջ կռվել և զանազան այլ ռազմական պարտականություններ կատարել։

Օրեցօր աճում էր Սպարտակի բանակը մտնել ցանկացողների թիվը։ Գերագույն առաջնորդը մանրակրկիտ ուսումնասիրում էր մարդկանց։ Նա ընտրում էր արտաքինից ավելի ամրակազմներին և խիզախներին, ըստ մասնագիտության՝ դարբիններին, հողափորներին, որսորդներին, խաղողագործներին, բրուտներին, կաշեգործներին, սայլապաններին, հյուսներին, ձկնորսներին, հովիվներին, ճարտարապետներին, շինարարներին, ֆերմերներին և այլն։ Սպարտակն իր զորքում գրագիտության մեծ նշանակություն էր տալիս, և այստեղ նրան օգնեց հենց ստրկատերերի՝ ստրուկներ ընտրելու բծախնդրությունը[1]։ Առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում նախկին սրոֆեսիոնալ-ռազմիկներին, ինչպես և Իտալիայի տարբեր մարզերի անկյուններին լավ ծանոթ մարդկանց։ Սպարտակը բոլոր աղատ գյուղացիներին չէր վերցնում, այլ միայն «որոշ» (Ապպիանոս) մարդկանց։ Նա նախընտրում է համեմատաբար միատարր բանակ ունենալ՝ բաղկացած գյուղական խռովարար ստրուկներից, էրգաստուլներում բանտարկվածներից և ստրուկ-հովիվներից։

Մնացած ցանկացողներին Սպարտակը բաժանում էր ջոկատների, նրանց հրամանատար էր կարգում, գինում էր ինչով կարող էր և ուղարկում երկրի զանազան շրջանները՝ պարտիզանական գործունեություն մղելու։

Ապստամբները սկզբում զենքի պակաս էին զգում։ Նրանց դարբինները՝ թրակացիներն ու գալլերը, աշխատում էին օր ու գիշեր, բայց և այնպես չէին հասցնում անհրաժեշտ քանակությամբ սրեր ու նիզակներ պատրաստել։ Չէր բավականացնում պաշտպանական սպառազինումը։ Այդ պատճառով Սպարտակը իր առաջին ռազմիկներին տալիս էր փայտյա սաղավարտներ, կաշվե զրահներ և բարակ ճյուղերից հյուսկեն, վրայից նոր մաշկած գազանի մորթիներ քաշած (ասես սոսինձով ամրացրած լինեին) վահաններ։

---

[1] Հետաքրքիր է նշել, օրինակ, հին ճարտարապետի գիտելիքների ծավալը. «... Նա պետք է գրաճանաչ լինի, հմուտ նկարիչ, երկրաչափությունը ուսումնասիրած, պատմությունը բազմակողմանիորեն իմացող, փիլիսոփայության դասեր առած, պետք է ծանոթ լինի երաժշտությանը, հասկանա բժշկություն, գիտենա իրավագետների որոշումները և տիրապետի աստղագիտությանը ու երկնային օրենքներին» (Վիտրուվիոս)։

Պ. Վարինիոսն արշավանքն սկսեց, երբ Սպարտակի զորքը գտնվում էր կազմավորման փուլում։ Նա ուներ երկու հազար զինված ու վարժեցրած ռազմիկներ։ Եվ քանի որ այդ ուժերը բավականաչափ չէին, Սպարտակը սկսեց նահանջել հարավ, դեպի լեռները։ Լինելով լեռնային մարտերի գիտակ, նա ցանկանում էր ջլատել հռոմեացիների թվական և զինվածության գերակշռությունը, հակառակորդի հեծելազորի գործողությունները սահմանափակել և շուտափույթ միանալ Կրիքսոսի ու Էնոմայոսի ջոկատներին։ Վերջիններս Կլոդիոսի պարտությունից անմիջապես հետո, որպես Սպարտակի լեգատներ, ուղարկվել էին Լուկանիա և Ապուլիա՝ ուժեր հավաքելու։

Իր 4-հազարանոց բանակով Վարինիոսը համառորեն հետապնդում էր արագությամբ նահանջող թշնամուն։ Տեղի էին ունենում հաճախակի բախումներ։ Սպարտակն անընդմեջ դարաններ էր սարքում, ձգտելով բռնել հռոմեական զորավարին։ Բայց Պ. Վարինիոսն աշխատում էր ծայրաստիճան զգուշություն պահպանել։

Թշնամուն կիրճը քշելու և այնտեղ սովատանջ անելու անհաջող փորձերից հետո, հռոմեացիները սաստիկ շփոթության մեջ ընկան։ Ստրուկների առաջնորդից ոչ ոք չէր սպասում նման խորաթափանցություն և ռազմական արվեստ։ Կիրճում դարան ընկնելուց վախենալով, Պ. Վարինիոսը դադարեց հետապնդել հակառակորդին։

Մի քանի օր անց, Կոսինիոսի օժանդակ ուժերի շնորհիվ իր զորքի քանակը 8 հազարի հասցնելով, նոր ժամանածների կողմից վճռական գործողությունների դիմելու դրդմամբ (բոլորը նրան հաստատ հաղթանակ էին կանխատեսում), Վարինիոսը կրկին շարժվեց թշնամու վրա։

Իսկ Սպարտակի ճամբարում կատարվում էր հետևյալը։ Լուկանիա և Ապուլիա ուղարկված Կրիքսոսը և Էնոմայոսը հիանալի կատարել էին իրենց պարտականությունները և առաջնորդի մոտ բերել էին հռոմեական հոլիվներից 4 հազար գալլեր և գերմաններ։ Ե՛վ գալլերը, և՛ գերմանները, որոնք սովոր էին պատերազմների, ի լրումն դրա՝ ստրկության մեջ իրենց բաժին հասած ծանր ստորացումներից կատաղած, անմիջապես համաձայնել էին ապստամբներին միանալու առաջարկին։ Առանձնապես հռոմեացիների հետ զենքերը խաչաձևելու ծարավի էին գալլերը, ինչպես նրանք, ովքեր ստրկության էին մատնվել դաշնակցա-

ին պատերազմի ժամանակ (մ. թ. ա. 90—88 թթ.)[1], այնպես էլ վերջերս Անդրալպյան Գալլիայում հռոմեացիների գործողությունների հետևանքով գների ընկածները։

Երբ նոր ժամանածները միացան Սպարտակի փոքրիկ բանակին, ապստամբների տրամադրությունը շեշտակի բարձրացավ։ Գալլերը, ինչպես և գերմանները, բարձրահասակ ժողովուրդ են և բարձր կարծիքի են իրենց մասին։ Նրանք պահանջում էին դադարեցնել նահանջը, դուրս գալ Թշնամուն ընդառաջ և ճակատամարտ տալ։ Բայց Սպարտակը, որն արդեն բախումների ժամանակ փորձարկել էր իր և հռոմեացիների զորքերը, ճակատամարտը համարում էր վաղաժամ։ Նա ցանկանում էր շարունակել նահանջը վերջապահական մարտերով և դարաններով, ամբողջ զորքով դուրս գալ ձիերով ու անասուններով հարուստ Լուկանիա մարզը և, մինչև Թշնամու հայտնվելը, զորքը վերակազմավորել՝ համալրելով նոր, ընտրովի մարդկանցով և հեծելազոր ստեղծելով։

Ապստամբների շտաբում վեճը թեժացավ։ Կրքերն այնպես բորբոքվեցին, որ խորհուրդի գալլ և գերմանացի կրտսեր մասնակիցները, որոնք հայրերի օրինակով կռիվների, տոնախմբությունների և ավարառությունների մեջ իրենց ամբողջ կյանքն էին անցկացրել, չէր մնաց կռվին Սպարտակի ընկերգլադիատորների հետ[2]։

Ի վերջո Սպարտակը կարողացավ համոզել իր անհամբեր ընկերներին։ Նա ապացուցեց իր ծրագրի առավելությունները, և նրա հետ, չնայած ոչ մեծ հաճույքով համաձայնեցին մնացած բոլորը։ Այսպիսով ոչ մի «երկպառակություն», որի հետ

---

[1] Գալլերը օգնություն էին ուղարկում դաշնակիցներին (օրինակ՝ 89 թ. Կլուսերիոսին։— Ապպիանոս)։ Ցինան գալլական ջոկատ ուներ (Ապպիանոս)։ Իսկ կոնսուլ Կարբոնը ուներ նույնիսկ Իսպանիայից ուղարկված կելտիբերյան այրուձի (Ապպիանոս)։

[2] Սալլուստիոսը կարծիքների այդ տարբերությունը ամփոփում է հետևյալ պարբերությամբ. «Մի քանի ուղղամիտներ հավանություն էին տալիս (Սպարտակի առաջարկին — Վ. Լ.) և ասում, որ հարկ չկա նահանջի այլ ձև փնտրել։ Դրանք փառաբանված և ազատ ոգու տեր մարդիկ էին... Բայց բնավորությամբ գաժան մի մասը՝ հիմարաբար հույս դնելով նորանոր ավելացող ուժերի վրա, ուրիշներն էլ, ամոթալի ձևով մոռանալով իրենց հայրենիքը, իսկ գլխավոր պանդվածը, իր բնույթով ստրկահոգի, Թալանից և իր գաժանությանը հաղորդ տալուց բացի ուրիշ ոչինչի չձգտելով (չէին ցանկանում ընդունել առաջնորդի առաջարկությունը)»։

հույսեր էր կապել Պ. Վարինիոսը, ստրուկների մեջ չառաջացավ։

Առանց թշնամու հետ բախվելու, Սպարտակի բանակը ճամբարը հավաքեց և, քաշվելով էբուրինյան լեռների հետևը, շարժվեց դեպի Լուկանիայի Նոլա քաղաքը։ Այնտեղից, փոքր ինչ դադար առնելով, լուսադեմին ապստամբները հասան մինչև Աննիյան Ֆորումը։ Հանկարծակի գրոհով գավթելով քաղաքը՝ ստրուկներն անմիջապես սկսեցին հնարավոր ամեն ձևով վրեժ լուծել բնակիչներից։ Դրա մասին Սալյուստիոսը այսպես է պատմում. «Հակառակ հրամանին՝ փախստական ստրուկներն սկսեցին որսալ և պատվազուրկ անել կանանց ու աղջիկներին... Ոմանք կրակ էին շպրտում շենքերի տանիքները, իսկ տեղացի ստրուկներից շատերը, որոնց բարքերը նրանց դարձնում էին ապստամբների դաշնակիցներ, թաքստոցներից դուրս էին բերում տերերի թաքցրած թանկարժեք իրերը և նույնիսկ իրենց՝ տերերին։ Եվ ոչինչ սուրբ ու անձեռնմխելի չկար բարբարոսների զայրույթի և նրանց ստրկական խառնվածքի համար։ Սպարտակը չկարողանալով նրանց խանգարել, թեև բազմիցս թախանձել էր վերջ տալ վայրագություններին, որոշեց առաջն առնել գործողությունների արագությամբ...»

Մեկ օրվա և մեկ գիշերվա ընթացքում կրկնապատկելով իր զորքի քանակությունը (այժմ բանակի թիվը հասնում էր 12 հազար հետևակի և 600 հեծյալի), Սպարտակը դուրս եկավ Ապիական ճանապարհից և սկսեց շարժվել գյուղական տեղանքով։

Իսկ Վարինիոսն այդ ընթացքում միացավ իր հեծելազորի պետի բերած օժանդակ ուժերին։ Ունենալով 12 հազար մարդուց բաղկացած հետևակ և Անդրալպյան Գալլիայի կուսակալ Մ. Ֆոնտեոսից ուղարկված 2 հազարանոց այրուձի, նա վճռեց այս անգամ ինչ էլ որ լինի շրջապատել թշնամուն, քշել անհարմար տեղանք և արագորեն վերջ տալ նրան։

Լուկանիա մտնելուց հետո, կարծես թե, պատեհ առիթը ներկայացավ։ Պ. Վարինիոսը ուժերը բաժանեց երեք մասի. 6 հազարը թողեց իրեն, 4 հազարը հանձնեց պրետոր Կոսինիոսին, իսկ 2 հազարը՝ հեծելազորի պետ Ֆուրիոսին։ Նրանց մանրամասն բացատրելով իր ծրագիրը, սկսեց գործել։

Ի տարբերություն Պ. Վարինիոսի Սպարտակը նախընտրեց ամբողջ ուժերը պահել մի բռունցքի մեջ։ Անընդմեջ տեղափո-

խումներով, նա խախտեց թշնամական ջոկատների փոխգործակցությունները, հարմար պահ որսաց և ամբողջ ուժով հարձակվեց Ֆուրիոսի 2 հազարանոց ջոկատի վրա։ Շատ շուտով հռոմեացիները լիակատար պարտություն կրեցին և խուճապահար փախան փախուստի, որի ընթացքում ապստամբների այրուձին նրանց սարսափելի կորուստներ պատճառեց։

Դրանից հետո Սալինոս կոչվող բնակավայրի մոտ Սպարտակը արբենաց հարձակվեց Կոսինիոսի վրա (պրետորը թեթևամտորեն իր համար բաղնիք էր ընդունում), կրկին հռոմեացիներին ծանր պարտության մատնեց, գավթելով դումակը և ճամբարը։ Կոսինիոսն ինքը կատաղի կռվելով, զոհվեց մարտում։

Դրանից հետո Սպարտակը շարժվեց Պ. Վարինիոսի վրա։ Վերջինս տեսնելով, թե ինչքան անհաջող են դասավորվել հանգամանքները, որոշեց խուսափել ճակատամարտից և սկսեց նահանջել Կապուայի ուղղությամբ։ Բայց և այնպես Սպարտակը ստիպեց նրան ճակատամարտն ընդունել և ջախջախեց նրան։ Պ. Վարինիոսը հազիվ թաքնվեց ճամբարում, իսկ դիշերվա քողի տակ փախավ Կապուա։

Մեկ ամիս անց, «պատահական մարդկանցից և հապճեպորեն» (Ապպիանոս) նոր ուժեր հավաքելով, միանալով Հռոմից քիչ թե շատ բարենպաստ լուրերով եկած Թորանիոսին և Աղատ Գալլիայի հեծյալ զգունների ջոկատին, 20 հազարանոց հետևակ զորքով ու 4 հազարանոց հեծելազորով, Պ. Վարինիոսը փորձեց բախտի անիվը շրջել իր կողմը։ Եվ կրկին անհաջողություն. նախ պարտվեց նրա թվեստոր Թորանիոսը, իսկ հետո մի քանի անգամ ջարդ կրեց նաև ինքը։

Վերջին ճակատամարտը շտեսնված կատաղի եղավ։ Հռոմեացիները մոլեգնաբար գրոհում էին ապստամբական բանակի կենտրոնի վրա, որտեղ գալլերն էին Էնոմայոսի գլխավորությամբ (Սպարտակն, ինչպես պահանջվում է գլխավոր հրամանատարից, գլխավորում էր աջ թևը, իսկ Կրիքսոսը՝ ձախ)։ Այդ մարտը Էնոմայոսի համար ճակատագրական եղավ։ Խիզախության ու հերոսության հրաշքներ ցուցաբերելով, նա ընկավ մարտում։ Սպարտակի համար դա մեծ կորուստ էր, նա զրկվեց ամենահուսալի ընկերոջից և հեղինակավոր առաջնորդից, որը նրա ծրագրերում նշանակալից տեղ էր գրավել։

Էնոմայոսի դիակի համար կատաղի գոտեմարտ բռնկվեց։ Պ. Վարինիոսը, ցանկանալով ամեն գնով ձեռք բերել դին, մե-

նամարտում հանդիպեց Սպարտակի հետ, նրանից վիրավորվեց, կորցրեց ձին և հազիվ խուսափեց գերությունից։

Ջորքերի մնացորդներով անհաջողակ զորավարը հետ քաշվեց Կապուա և այնտեղ տեղավորվեց ձմեռելու։ Սենատին ուղղված հերթական նամակում Պ. Վարինիոսը ջանում էր հնարավորին չափ մեղմ պատմել իր անհաջողությունների մասին։ Նա խոստանում էր առաջիկա տարվա սկզբին վերսկսել ռազմական գործողությունները և փոշի դարձնել Թշնամուն, որի գրավականն էր համարում իր հետ պայքարում ընկած Թշնամու առաջնորդ Լենտուլոսի մահը։

Ճիշտ է, Վարինիոսը գործերի վիճակին նայում էր ոչ այնքան լավատեսորեն, ինչպես պատկերում էր նամակում։ Պրետորը լիովին համոզվել էր, որ Թշնամին շատ ուժեղ է։ Այդ պատճառով նա վճռեց այսպես. բարդ իրադրության մեջ, համաձայն հռոմեական քաղաքականության հիմնական օրենքի, անհրաժեշտ է օգտվել ոչ Թե ուժից, այլ խորամանկությունից, գաղտնի մեքենայություններից, Թշնամուն կաշառելուց։ Թե ինչպես են այդ գործերը իրականացվում, Պ. Վարինիոսին սովորեցնելու հարկ չկար. ինչքան չլինի նրա հայրը սենատի պրինցեպս էր։ Անմիջապես հակայական գումարներով և միանգամայն բարեմիտ ալատրվակներով Սպարտակի ճամբար և Իտալիայի ամբողջ հարավը ուղարկվեցին հավատարիմ ստրուկներից ու ազատագիրներից ընտրված գաղտնի գործակալներ։ Նրանց հանձնարարվեց ապստամբների մեջ որոնել «պետական մարդիկ», յուրայինների մեջ քաջալերել փոքրոգիներին, համախմբել դիմադրողներին, չխնայել ո՛չ դրամ, ո՛չ խոստումներ, ո՛չ սպառնալիքներ, քայքայել Թշնամու Թիկունքը, իտալիկական բնակչությանը դրդող զանազան «անկարգություններ» կազմակերպել, իսկ մեղքը բարդել ապստամբների վրա, մահափորձեր կազմակերպել Թշնամու առաջնորդների, առաջին հերթին Սպարտակի վրա։ «Երբեմն,— սովորեցնում էր պրետորն իր գործակալներին,— դաշույնի մի լավ հարվածը հաջող ճակատամարտ սրժեւ։ Հիշում եք, Թե ինչպես Մուցիոս Սցևոլան քիչ մնաց սպաներ էտրուսկների Թագավոր Պորսեննային։ Միայն իր մահափորձով, նույնիսկ անհաջող, նա միանգամից դադարեցրեց Հռոմի համար չարաբաստիկ պատերազմը...»

Պրետորի հրամանն անմիջապես սկսեցին կատարել, և գաղտնի գործակալներն անհապաղ գործի անցան...

IV

Սենատին ուղղված Վարինիոսի նամակը մանրակրկիտ քննարկման ենթարկվեց։ Պրետորի հակառակորդները հարձակվեցին նրա վրա՝ ամեն կարգի մեղադրանքներ բարդելով։ Սակայն, պաշտպաններ էլ քիչ չունեցավ։ Ի վերջո հետևյալ կարծիքը գերիշխեց. թեև պրետորների պարտությունները տհաճ են, բայց ոչ մի իսկապես սարսափելի բան դեռևս տեղի չի ունեցել։ Այդ պատճառով վախենալու հարկ չկա և միջոցներ պետք է ձեռնարկել հիմնականում երեք ուղղությամբ. 1) իսկական զորք կազմել, 2) անհրաժեշտ քանակությամբ զենք ու հանդերձանք պատրաստել (Հռոմի, Պիկենայի և Էտրուրիայի արհեստավորներին արվելիք մեծաքանակ պատվերները կամրապնդեն նրանց հավատարմությունը), 3) միջոցներ ձեռնարկել Սիցիլիայի և Իտալիայի հարավին Հռոմը հացով ապահովելու համար։

Հացի գրությունը սենատին առանձնահատուկ տագնապ էր ներշնչում, քանի որ ծովահենների պատճառով մատակարարումները նվազել էին և մշտապես գտնվում էին վտանգի տակ։ Իսկ Ապուլիան և Կամպանիայի զգալի մասը՝ Իտալիայի հացի գլխավոր մատակարարողները (Էտրուրիայի հետ միասին) գործնականում ձեռքից գնացած էին, և նորից այնպես էր, ինչպես Հաննիբալի պատերազմի ժամանակ, երբ, Լիվիոսի բառերով ասած, «պատերազմը ոչնչացրել էր ագաստ հողատերերից շատերին, ստրուկների պակաս էր զգացվում, նախիրները հափշտակված էին, իսկ ագարակները՝ կամ քանդված, կամ հրդեհված»։ Բայց և այնպես, ենթարկվելով սենատի հրամանատարներին, Այսրալպյան Գալլիայի, Էտրուրիայի, իսկ Կամպանիայում ովքեր որ կարող էին, հողագործները, թեև տագնապի զգացումով, նորից դուրս եկան դաշտերը։ Հոկտեմբերի վերջին վաղահաս ցորենի (սովորաբար հռոմեացիները գարնանացան եռամսյա ցորեն և այնպիսի հացահատիկ էին ցանում, որ հասունանում էր նույնիսկ 40 օրում), անպահանջկոտ հաճարի և գարու ցանքս կատարեցին։ Հռոմեացիները փորձով գիտեին, որ գարուց ու հաճարից բացի, այնպիսի բույս չկա, որ ցորենի անբերրիության ժամանակ սովի դեմն առնի։

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՐԱՎՆ ԱՆՋԱՏՎՈՒՄ Է ՀՌՈՄԻՑ

I

Սպարտակն էնոմայոսին շքեղությամբ թաղեց։ Նրա պատվին մեծ քանակությամբ զոհեր մատուցվեցին։ Ջոկատների բաժանված հետևազորայիններն ու հեծյալները, զենքը ձեռքներին, պտտվում էին թաղման խարույկի շուրջը և հանգուցյալի քաջագործությունները փառաբանող երգեր երգում։ Այնուհետև, երբ կրակը հանգավ, սգո արարողության մասնակիցները հող լցրեցին գերեզմանաթմբին, որի մոտ պետք է մի քանի հարյուր հռոմեացիներ գլադիատորների պես մենամարտեին, հետո հոգեհանգստի ընթրիք տրվեց։

Հարգանքի տուրք մատուցելով իր զինակցին՝ այրերից քաջագույնին և փառաբանյալին, Սպարտակը նոր հրամանատարներ կարգեց։ Ընդ որում Գանիկոսը նշանակվեց ամբողջ աջ թևի և գերմանների նոր հրամանատար, իսկ Կրիքսոսը տեղափոխվեց ղորքի կենտրոն և ստանձնեց գալլերի հրամանատարությունը։

Սպարտակի նոր փայլուն հաղթանակները մեծապես նպաստեցին նրա ուժերի արագ աճին։ Նոր եկած գալլերին և գերմաններին նա հանձնում էր Կրիքսոսի ու Գանիկոսի ենթակայությանը, իրեն, առաջվա պես, թողնելով թրակացիներին։

Նոր մարդիկ ապստամբության մեջ ներգրավվում էին ոչ միայն տարերայնորեն, այլև անասնապահական լատիֆունդիաներում հովիվների (լեգեոններում նրանք ապստամբների ճընշող մեծամասնությունն էին կազմում) շրջանում հատուկ ուղարկված ագիտատորների ագիտացիայի շնորհիվ։ Այդ գործելաձևը նոր չէր. այդպես էին վարվում նաև Սիցիլիայում Սալվիոսն ու Ափինիոնը։ Ապստամբների բանակը սնող երկրորդ աղբյուրը էրգաստուլներն էին՝ խռովարար ստրուկների բանտերը, որտեղ տերերը պահում էին մեղանչած ստրուկներին։ Վերջիններիս երկար համոզելու հարկ չէր լինում. նրանք կատաղի ատելությամբ էին լցված իրենց տերերի նկատմամբ և վրեժ լուծելու համար պատրաստ էին ում ասես միանալու։ Ապստամբության երրորդ սնուցիչ աղբյուրը գյուղական վիլլաներն էին, որտեղ աշխատում էին գյուղատնտեսությամբ զբաղվող ստրուկ-

ները։ Վիլլաները, որպես օրինակ, խոշոր չէին, այնուհետև աշխատում էին մի քանի տասնյակ ստրուկներ։ Բայց նրանք էլ ապրուստամրցությանը որոշակի քանակությամբ մարդիկ էին տալիս։ Ընդ որում խոռվարարները (եթե նրանց մոտ չէին էլ գալիս սպարտակցիների գինված ջոկատ) առաջին հերթին սպանում էին իրենց վերակացուներին և վիլիկոսներին, տիրոջը նվիրված ստրուկներին, բոլորին լրտեսներին, իսկ երբեմն նաև՝ տերերին։ Դրանից հետո ձեռքի տակ եղածով զինվելով, նրանք գնում էին հարևան վիլլաները և մյուս ստրուկներին հրահրում էին ապստամբության։

Վերջապես, շափազանց կարևոր էր, ինչպես հաճախ լինում է ապստամբությունների ժամանակ, կրոնական գործոնը։ Խոռվարարները դալիս էին վստահություն վայելող իրենց որևէ ընկեր-գուշակի մոտ, ինչպես Էվնոսը՝ Սիցիլիայում, և հարցնում. «Աստվածներն արդյոք հավանություն տալի՞ս են իրենց մտադիր իրականացնելուն»։ Որպես օրինակ, նման դեպքերում պատասխանը դրական էր լինում, և խոռվարարները անցնում էին գործի, հաճախ գուշակին ընտրելով առաջնորդ։

Ապստամբների շարքերը համալրող մի աղբյուր էլ կարդա հովիվներից և քաղաքային ստրուկներից կազմված այսպես կոչված «ավազակային» ջոկատներն էին, որոնք, ինչպես ասում է Լիվիոսը, «հանապարհներին, հասարակական արոտավայրերում գրաղվում էին կողոպուտով»։ Նման ջոկատներ ստեղծվում էին պարբերաբար։ Մտածված գործողությունը կատարելուց հետո, նրանց մի մասը անմիջապես ցրվում էր։

Քաղաքային ստրուկները նույնպես մասնակից էին Սպարտակի գործին, բայց հիմնականում, որպես հռոմեական ադմինիստրացիայի ծրագրերի, զորքերի տեղաշարժերի, հռոմեական պալանի փաստաթղթերի, կարևոր դեսպանությունների մասին պատանի տեղեկություն հաղորդողներ։ Այս խնդրում գլխավոր դերը կատարում էին «մտավորական» ստրուկները՝ դասատուներ, քարտուղարներ, տան կառավարիչներ և այլն։

Անկասկած, քաղաքային ստրուկներն ավելի լավ վիճակում էին, քան գյուղականները (այդ բանը խոստովանում են մի շարք հին հեղինակներ)։ Պատահում էր, որ նրանք վտանգից պաշտպանում էին մարդասիրությամբ և սպասավորների հետ լավ վերաբերմունքով հռչակված իրենց տերերին։ Բացահայտ ելույթներում գյուղական ստրուկներին սակավադեպ պաշտպանելով՝

քաղաքային ստրուկներն ամենևին էլ զուրկ չէին հեղափոխական տրամադրություններից։ Ընդհակառակը, աղբյուրի պես բխող քաղաքային կյանքը, ֆորումի և տարբեր մագիստրատների ընտրությունների հետ կապված հուզումները, ընդհանուր դատափետանքի առարկա դարձող երևելի անձանց բազմաթիվ դատավարությունները, տերերի գաղտնի ձեռնարկումներին և քաղաքացիական երկպառակություններին (նրանց շատ բան էր սովորեցրել Մարիոսի և Սուլլայի ժամանակաշրջանը) մասնակից լինելը հանգեցնում էր այն բանին, որ նրանք միշտ պատրաստ էին հարձակվելու իրենց տերերի վրա, «եթե հարմար առիթ լիներ։ Ուստի ստրուկները համակրում էին նրանց, ովքեր կանչում էին առաջիկա գաղտնի հարձակմանը մասնակցելու»։ Այսպես է պատմում ստրուկների շատ հին ապստամբության մասին (մ. թ. ա. 502—500 թթ.) պատմաբան Դիոնիսիոս Հալիկառնասցին։

Քաղաքային ստրուկների ելույթներն ընդդեմ հռոմեական սենատի բազմիցս կրկնվում էին և՛ Հռոմում, և՛ մյուս քաղաքներում (մ. թ. ա. 419 թ. խռովությունը Հռոմում, Հաննիբալյան պատերազմի ժամանակ 25 ստրուկների ելույթը Մարսյան դաշտում, կարթագենացի պատանդների հետ դաշինք կնքած ստրուկների խռովությունը Սեռիոսում 199 թ. մ. թ. ա. և այլն)։

Այսպիսով, տարածքային «մասնատվածությունը» քիչ էր խանգարում ապստամբության համար նոր մարդիկ հավաքագրելուն։ Քաղաքային և գյուղական ստրուկների վիճակի տարբերությունը այնքան էլ էական չէր, որպեսզի այդ խավերը, ի դեմս իրենց ամենավճռական ներկայացուցիչների, չկարողանային ընդհանուր լեզու գտնել, երբ ցանկանում էին ՝պայքարել հանուն ազատության։ Քանզի, ինչպես արդարացիորեն ասում է Սինեզիոսը, «յուրաքանչյուր ստրուկ իր տիրոջ թշնամին է, եթե հանկարծ միտք է հղանում հաղթել նրան»։ Դիոնիսիոս Հալիկառնասցին էլ ընդգծում է, որ ստրուկները միշտ «գրգռված» և «չարացած են», «հրապուրված են ազատության հույսով» և «իրենց տերերին չարիք են ցանկանում»։ Հենց իրենց՝ հռոմեացիների նկատմամբ ստրուկների թշնամանքը, անկախ դասային պատկանելիությունից, որևէ կասկած չէր հարուցում։ Իզուր չէր նրանց մոտ լայն տարածում գտել «Քանի ստրուկ՝ այնքան թշնամի» ասացվածքը։ Այդ ասացվածքի արդարացիությունը փայլուն կերպով ապացուցում էին ստրուկների

խոսություններն ու պատերազմները (Սիցիլիայում հռոմեացիների համար շատ տխուր իրադարձությունների մասին Դիոդորոսը գրել է. «Բաղում հալարավոր սարուկներ առանց որևէ հրամանի ժողովվեցին, որպեսզի կործանեին իրենց տերերին»)։ Արդեն մինչև Սպարտակը գոյություն ուներ այս թեմայով խոսքը, թե սարուկներին մարտի կոչող անձը բոլոր անարդվածների և ճնշվածների պաշտպանն է։

Ապատամրական ճամբար բոլոր նոր ժամանածներին (որոշակի ատուգումից հետո) անմիջապես բաշխում էին լեգեոնների[1] միջև։ Վերջին մարտերի արդյունքներից ելնելով, յուրաքանչյուր լեգեոնին Սպարտակը նշանակել էր նոր հրամանատար՝ իրենց խելքն ու ռազմական արիությունը ցուցաբերած մարդկանց։ Ապատամրական բանակի կառավարումը ընդօրինակված էր հռոմեականից։ Յուրաքանչյուր լեգեոնի գլուխ կանգնած էր հրամանատար. պրեֆեկտը։ Նրա ենթակայության տակ էին. 1) ճամբարի պրեֆեկտը, 2) արհեստավորների պրեֆեկտը, 3) 6—10 զինվորական տրիբուններ, կոհորտաների հրամանատարներ (1-ինը՝ պատվավոր, մինչև 1000 ռազմիկից էր բաղկացած։ Սրա մեջ մտնող ցենտուրիաները ղեկավարում էին հինգ պատվավոր ցենտուրիոններ, որոնք, ինչպես պատվավոր տրիբունը, բավականին առավելություններ ու արտոնություններ ունեին։ Մնացած կոհորտաները հաշվում էին մինչև 500 զինվոր), 55 ցենտուրիոններ (1-ինը, որն առանձնահատուկ պատվի էր արժանանում, իր հրամանատարության տակ ուներ 400 և նույնիսկ 600 ռազմիկ, ավագ սպաների հետ զինվորական խորհրդի անդամ էր, մնացածները 100 ռազմիկ ունեին), դեկանոներ (տասնապետներ) կամ վրանի ավագներ, նրանց տասնյակը կազմում էր մեկ մանիպուլ («նրանք, ովքեր կռվում են ձեռք ձեռքի տված»)։

Լեգեոնի հրամանատարը լեգեոնի բոլոր գործերի անօրինողն էր։ Նրա իրավասության տակ էին զենքը, ձիերը, հագուստը, օրապահիկը, նա էր կարգադրում և նշանաբան նշանակում, ուղարկում էր արշավի և աշխատանքի, պատասխանատու էր կարգապահության և զինվորական վարժանքների համար։ Նրա պարտականությունն էր զինվորների պատրաստականությունը

---

[1] Հռոմեական լեգեոնի քանակը, կապված իրադրության և պատերազմի դժվարությունների հետ, տատանվում էր 3,5-ից 6 հազար զինվորների սահմանում։

հասցնել կատարելության և բարձր մակարդակի վրա պահել իր լեգեոնի մարտական ոգին։ Այդ պաշտոնին հավակնող յուրաքանչյուր ոք պետք է որոշակի հատկանիշ ուներ. քաջություն, շրջահայեցություն, արդարամտություն, ջանասիրություն, զբաղվածություն, փառասիրություն։

Ճամբարի պրեֆեկտը տնօրինում էր ճամբարի դասավորությունը, հիվանդ ռազմիկների բուժումը, սայլերը, բեռնակիր անասունները, գործիքները, քարնետ մեքենաները և այլն։ Այս պաշտոնին հռոմեացիներն առաջ էին քաշում երկար ու անբասիր զինվորական ծառայություն անցած մարդկանց։

Արհեստավորների պետը ղեկավարում էր արհեստանոցները։ Նրա հսկողության տակ էին արհեստավորները և վարպետները, հիմնականում գալլեր և թրակացիներ, որոնց Սպարտակը հավաքել-բերել էր քաղաքներից, կալվածքներից և լատիֆունդիաներից։ Նրանք պատրաստում էին մեծ քանակությամբ սրեր, նիզակներ (ստրկական բանտերի և արհեստանոցների երկաթից) վահաններ, զրահներ, նետեր, աղեղներ, ռազմական մեքենաներ և այլն։

Ռազմիկների նախապատրաստությամբ անմիջականորեն զբաղվում էին զինվորական տրիբունները, որոնք ռազմիկներին անձնական օրինակով էին սովորեցնում։ Այս գործի համար ընտրում էին զգալի մարտական փորձ ունեցող մարդկանց։ Նույն բծախնդրությամբ նաև զորքի համար ընտրում էին ցենտուրիոններ՝ բարձրահասակ, ֆիզիկական մեծ ուժի տեր, ճարպկությամբ և ուժեղ նիզակ ու տապար նետող, սուր ու վահան վարպետորեն բանեցնող, աչալուրջ, զուսպ, ճշտապահ, պահանջկոտ ու հոգատար մարդկանց։

Յուրաքանչյուր լեգեոնի հատկացվում էր 1000 հոգուց բաղկացած հեծելազորային ջոկատ[1]։ Այսպիսով, Սպարտակի տրամադրության տակ կար ընդամենը 4 հազարանոց այրուձի (նա հեծելազոր կազմավորել էր Լուկանիայում հանդիպած ձիերի երամակները հափշտակելուց հետո)։ Այդ այրուձին ջանասիրաբար սովորում էր ռազմական բոլոր անհրաժեշտ հնարանքները։

---

[1] Ըստ հռոմեական սովորության յուրաքանչյուր լեգեոնին հասնում էր 300 հռոմեացի և 900 դաշնակից հեծյալ ռազմիկ։

II

Ապստամբների ճամբարում հրճվում էին։ Շատերն արդեն իրենց հաղթողներ էին համարում։ Բայց ցնծությունը վաղաժամ էր։ Շուտով Իտալիայի տարբեր վայրերում ապստամբների իշխանության դեմ խռովություններ բռնկվեցին։ Սկսեցին կողոպտիչների հրոսակախմբեր հայտնվել։ Սպարտակի հրամանները վիկտյակոշելով, նրանք սպանում էին հասարակ մարդկանց, թալանում նրանց ունեցվածքը, քշում անասուններին, հրդեհում տները։ Սպարտակին սկսեցին բողոքներով հեղեղել նրա մարդկանց կատարած անօրինությունների համար։ Ապստամբության առաջնորդը, որպես բավականին փորձառատ մարդ, անմիջապես հասկացավ, թե բանն ինչ է։ Եվ չհասկանալ էլ հնարավոր չէր, երբ արդեն վտանգվել էր ամբողջ բանակի մատակարարումը և իտալիկական բնակչության հետ կապերը քայքայման սպառնալիքի տակ էին։ Հրամանատարների հետ խորհրդակցելուց հետո, Սպարտակը որոշեց կողոպտիչների դեմ պայքարելու համար զինված ջոկատներ ուղարկել։ Միառժամանակ որոշ բարելավում նկատվեց, բայց կարճատև։ Դիմադրության օջախները նորից էին բռնկվում մեկ այստեղ, մեկ այնտեղ։ Տեղացի ստրկատերերը օգտվելով իրենց իշխանությունից և ազդեցությունից, խոշոր ֆինանսական միջոցներից, Վարինիոսի գործակալներին հսկայական ժանդակություն էին ցույց տալիս։ Ձերբակալվեցին նաև Սպարտակի կյանքին սպառնացող թշնամական գործակալներ։ Նրանք խիստ հետաքրքիր ցուցմունքներ տվեցին։

Այդ ժամանակ վճռական միջոցներ ձեռք առնելու վերաբերյալ երկար վիճաբանություններից հետո ապստամբների շտաբը որոշեց թշնամիներին պատասխանել նույն զենքով. Նոլա և Նուկերիա (Կամպանիա), Մետապոնտոս (Լուկանիա), Կոնսենտիա (Բրուտիում) քաղաքների ստրկատերերին սարսափելի տեսարի ենթարկել, Իտալիայի հարավում ամբողջովին ջախջախել պետական զեկավարման հռոմեական մեքենան, բանակի պետքերը հոգալու համար բռնագրավել ստրկատերերի սեփականությունը և այնպիսի դաս տալ, որ հիշվի դարեր շարունակ։

Համաձայն ընդունված որոշման՝ Սպարտակը զորքը բաժանեց ջոկատների (նա ենթադրում էր, որ Վարինիոսը ծանր պարտություններից հետո չի կարող հարձակվել իր վրա) և ուղարկեց երկրի հարավի տարբեր կողմերը։ Մեկը մյուսի հետևից

ապստամբները գրոհով նվաճեցին հիշատակված քաղաքները։ Եվ ինչպես հետագայում՝ Գալլիայում բաղաուդների ապստամբության ժամանակ (մ. թ. 3-րդ դար), նրանք կործանում էին բանտերը, ազատում բանտարկյալներին (սրանք անմիջապես միանում էին նրանց), ոչնչացնում էին տաճարները, պալատները, ջրմուղները, բաղնիքները, մեծամեծ մարդկանց կացարանները, շուրջբոլորը լցնելով «սպանություններով, հրդեհներով, կողոպուտով ու բռնությամբ» (Օրոզիոս)։ Բազմաթիվ երևելի անձանց շղթայակապ բերեցին Սպարտակի մոտ և դատի ընթացքում նրանց զանազան ծանր հանցանքները (լրտեսություն, թիկունքից սպանություն և այլն) մերկացնելուց հետո, գլխատեցին։

73 թվականի հոկտեմբեր-նոյեմբերը մնաց Սպարտակի ապստամբության ժամանակակիցների, նրանց որդիների, թոռների և նույնիսկ հեռավոր ժառանգների հիշողության մեջ։ Հետագայում Ցիցերոնը խոսում էր «ստրուկների պատերազմի վտանգների և սարսափների ծանրության մասին»։ Հորացիոսը (մ. թ. ա. I դար)՝ ստրուկների առաջնորդի «ոխակալության» մասին, Ֆլորոսը՝ հարավ-իտալիկական քաղաքների ստրկատերերի «սարսափելի կոտորածի» մասին (մ. թ. II դար), Տակիտոսը (մ. թ. I դար) «նախկին դժբախտությունների», Հուլիոս Կապիտոլինը (մ. թ. IV դար), որ Սպարտակը «տանել չէր կարողանում ոչ մի աղնվազարմի»։ Նույն բանն է ասում նաև Ամիանոս Մարկելինոսը (մ. թ. IV դար)։ «Ինչքա՜ն գլուխներ,— նշում է նա,— որոնց առջև ժողովուրդներ էին դողում, ընկան դահճի խայտառակ կացնով»։

Ստրկատերերի վիճակն ավելի էր վատանում նաև այն պատճառով, որ ապստամբներին ամենուրեք համակրում էին պլեբեյական ստորին խավերը՝ «քաղաքային տականքները», ինչպես արհամարհանքով անվանում էր նրանց Ցիցերոնը, իսկ գյուղական վայրերում՝ սնանկացած և աղքատ գյուղացիները։ Ընդհանուր առմամբ, իտալիկյան հողում կատարվածը հիշեցնում էր Սիցիլիայի իրադարձությունները ստրուկների ապստամբության ժամանակ։ Դիոդորոսը վերջինիս մասին գրել է այսպես. «... հասարակ ժողովուրդը ոչ միայն չէր ցավակցում հարուստներին, այլև, ընդհակառակը, ուրախանում էր, քանի որ նախանձում էր հարստությունների անհամաչափ բաշխմանը և դիրքի անհավասարությանը։ Նախկինում վշտից ծնվող նախանձը

հիմա, երբ փայլուն ճակատագիրը երեսը դարձրել էր նրանց կողմը, ում նախկինում վերաբերվում էր արհամարհանքով, փոխվել էր խնդրության։ Իսկ ամենահիանալին այն էր, որ ապստամբ ստրուկները, խելամտորեն հոգալով ապագայի մասին, մանր վիլլաները չէին հրկիզում, չէին ոչնչացնում այդտեղի ոչ ունեցվածքը, ոչ պտուղների պաշարները, ձեռք չէին տալիս նրանց, ովքեր շարունակում էին զբաղվել հողագործությամբ, իսկ խաժամուժը, նախանձից, ստրուկների անվան տակ լցվելով գյուղերը, ոչ միայն թալանում էր ունեցվածքը, այլև հրկիզում էր վիլլաները»։

III

Ապստամբների հաջողությունները հսկայական էին։ Նրանց ուժերն աճում էին անընդմեջ։ Իտալիայի հարավում հռոմեական իշխանությունը բարբարոսաբար կործանվում էր։ Տեղերում տարբերաբերն իշխանության նոր մարմիններ էին գոյանում։

Այս ժամանակահատվածում Սպարտակը խիստ ամրապնդում էր կարգապահությունը, ձգտում էր բանակն ազատել կասկածելի տարրերից, որոնք խառնակչություն ու քայքայում էին մացնում, իրենց կողոպուտներով ու հանցագործություններով, ամեն տեսակի չարաշահումներով տեղական իտալիկական բնակչության անարգանքը, նզովքն ու կշտամբանքներն էին հարուցում։ Առաջին անգամ հարգորանքներից հետո (բանը բավականաչափ պարզ չէր երևում), Սպարտակը, հենվելով իր հեղինակության վրա, սկսեց այդ հանցավոր տարրերին զանազան կարգապահական պատիժների ենթարկել, ապա՝ զորքից վռնդել ու նույնիսկ մահապատժի ենթարկել։ Ապստամբական բանակում մահապատիժ մտցնելու համար նախադեպ ծառայեց ծայրահեղորեն տհաճ մի բան։ Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ երկրի հարավում ապստամբները կոտրում էին հռոմեական արիստոկրատիային և նրա կողմնակիցներին, մասայական տեռորի օգնությամբ թշնամիներից մաքրելով Նոլա, Նուկերիա, Կոնսենտիա և Մետապոնտոս քաղաքները։ Հենց այդ ժամանակ, օգտվելով նպաստավոր պահից, հրամանատարներից մեկը իր մերձավորների խմբի հետ միասին բռնաբարեց հռոմեացի շատ գեղեցիկ մի դերի պատրիկուհու «Իր անարատության ապականումից հուսահատված», այսպես Սպարտակին

պատմեցին նրան շրջապատող գերուհիները, աղնվազարմ հռոմեուհին ինքնասպան եղավ։ Այդ զաղրելի դեպքը կատաղեցրեց ապստամբության գերագույն առաջնորդին։ Ամենից շատ նա վախենում էր, որ հրամանատարների գեշ օրինակին հետևելով, զորքը վերածվի իրենց հոգում ոչ մի սրբություն չունեցող թալանչիների և բռնացողների ավազակախմբի։

Այսպիսով, նա ծանր հանցագործության մեջ մեղադրվողներին կանգնեցրեց զորքի դատարանի առջև։ Այստեղ, ռազմիկների և հրամանատարների հավաքի առաջ, Սպարտակը կրքոտ ու համոզիչ ճառ արտասանեց այն մասին, թե ինչու են ապրստամբել, ինչի են ձգտում և ինչը կարելի է, ինչը՝ ոչ։ Հանցագործները պաշտպանվում էին ինչպես կարող էին, բայց նրանց փաստարկները համոզիչ չէին։ Զորքի դատարանը նրանց դատապարտեց մահապատժի, և ընդունված սովորության համաձայն, քարածեծ անելով սպանեցին։

Եվ այս շատ տհաճ, բայց ուրանելի գործն ավարտելուց հետո, Սպարտակը կարգադրեց ինքնասպան կնոջը պատվով թաղել, իսկ գերեղմանաթմբի մոտ, ըստ հռոմեական սովորության, գլադիատորական խաղեր կազմակերպել։ Որպես գլադիատորներ հանդես եկան աղնվական ընտանիքներից 400 գերի երիտասարդներ։ Կռվում էին մինչև արյուն երևալը, ոչ թե մինչև մահ։ Ապստամբների բանակը հանդիսատես էր։

IV

Հոկտեմբերյան մի օր, կեսօրից հետո Կրիքսոսը եկավ Սպարտակի վրանը։ Երիտասարդ պահակներն անխոս ներս թողեցին նրան. բոլորը Կրիքսոսին հարգում էին պատերազմում մեծ քաջագործությունների և հոգու բազմաթիվ հրաշալի գծերի համար։

Սպարտակը, բազկաթոռին նստած, ինչ-որ գլանաթուղթ էր կարդում։ Տեսնելով ղինակցին, նա գիրքը մի կողմ դրեց, տեղից վեր կացավ և ջերմորեն ողջունեց Կրիքսոսին։ Երկու առաջնորդները ողջագուրվեցին։

— Քա՜ջ Սպարտակ, քեզ բարի լո՜ւր եմ բերել,— ուրախ սկսեց Կրիքսոսը։

— Ի՞նչ լուր,— ժպտադեմ հարցրեց Սպարտակը։— Գուցե մեր ջոկատները որևէ տեղ հաղթե՞լ են հռոմեացիներին։

— Ո՛չ, բոլորովին ա՞յլ բան է. իմ հետախույզները մեր Ճամբարից չորս ժամվա Ճանապարհի վրա հայտնաբերել են վարազներ՝ հղոր մի արու, խողամայրը, չորս խոճկոր և մի երկվեցյակ խոզուկներ։ Ես ուզում էի քեզ որսի հրավիրել։ Վերջին անգամ ե՞րբ ես որս արել։

— Շատ վաղուց։ Վերջին անգամ Լուկանիայում, երբ հովիվ էի։ Այնտեղ գայլերի որս էինք անում, իսկ Պոնտոսում՝ հովվակների, արջերի, եղջերուների... Իսկ վարազներ երբեք չեմ որսացել։

— Ա՛յ դա հիանալի է,— ուրախացավ Կրիքսոսը։— Մեծ հաճույք կստանաս։ Վարազի որսը անչափ գրավիչ է։ Այսօր երեկոյան դուրս կգանք։ Գիշերով ենք որս անելու։

— Գիշերո՞վ,— զարմացավ Սպարտակը,— իսկ ինչո՞ւ գիշերով։

— Վարազը շատ զգույշ կենդանի է,— բացատրեց Կրիքսոսը։— Ցերեկները թաքնվում է ճահճուտներում և անանցանելի մացառուտներում, իսկ գիշերը դուրս է գալիս կերակրվելու։ Արևամուտից հետո կգամ քո հետևից։

Ճամբարից դուրս եկան մինչև մթնելը։ Առջևից, զինված հետախույզներից հետո գնում էին 20 շնապահները կրետեյան, լոկրիսյան և լակոնյան արագավազ ու ցեղական շների ոհմակով։ Նրանց հետևում էին Սպարտակը և Կրիքսոսը ընտիր զինվորների՝ հրաշալի ուժի ու քաջության տեր մարդկանց, քառաշար պահակախմբի ուղեկցությամբ։ Նրանց հետևից գնում էին եղջերներով, տապարներով, ծայրերը քառթ-քառթ նիզակներով, գիշերելու վրաններով, թաղիքներով, կաթսաներով, մթերքներով, բանջարեղենով բեռնված ջորիներ՝ ջորեպանների հետ... Փոքրիկ գումակը պաշտպանում էր ևս հարյուր մարդուց բաղկացած հեծյալ մի պահակախումբ։

Երկու զորավարների ջահել ուղեկիցների տրամադրությունը գերազանց էր։ Նրանք հերթով զանազան ծիծաղելի պատմություններ էին անում ճարպիկ սիրեկանների և կանացի խարդախության մասին։ Բոլորն ուրախ էին։

— Իսկ ես ուզում եմ ձեզ մի առակ պատմել,— մտախոհ ասաց Սպարտակը։— Պատմում են, որ հինավուրց Միդիայում բարձր լեռան վրա շատ կապիկներ էին ապրում։ Նրանց առաջ-

նորդը ծեր էր և իմաստուն։ Բայց և շատ ուժեղ մի արու ծերունու հետ վիճարկում էր իշխանությունը։

Մի անգամ ծեր առաջնորդը նստել էր լեռան վրա և այնտեղից նայում էր քաղաքին։ Նա տեսավ, թե ինչպես է փողոցով անցնում ջահել ու գեղեցիկ մի կին՝ նվաղկոտ ու նրբագեղ, աշխույժ ու պչրաբարո, նման գարնանային ծաղկի։ Կինը հետևից պարանով քարշ էր տալիս մի սև խոյ։ Խոյը սիրաբար խաղում էր նրա հետ և կոտոշներով թեթևակի հրում էր նրան։

Առաջնորդը կանչեց մյուս կապիկներին և ասաց նրանց.

— Տեսե՛ք։ Շատ տարօրինակ խաղ է։ Այն վատ կվերջանա։

Կապիկներն ասացին.

— Այդտեղ ի՞նչ վատ բան կա։ Խոյը կնոջ հետ խաղ է անում։

Մեր առաջնորդը պատասխանեց.

— Ես շատ երկար եմ ապրել, ամեն ինչ տեսել եմ։ Նման բանը լավ չի վերջանա։ Պետք է այստեղից շուտափույթ հեռանալ։

— Ինչո՞ւ,— դոչեցին դժգոհ կապիկները։— Ի՞նչ գործ ունենք խոյի հետ։ Մենք վաղուց այստեղ ենք ապրում։ Այստեղ մեզ դուր է գալիս։ Պտուղները շատ են, ջուրը՝ հրաշալի։ Ո՞չ, մենք այստեղից չենք հեռանա։

Առաջնորդը հակաճառեց նրանց.

— Ես ձեր տիրակալն եմ։ Իմ պարտականությունն է հոգ տանել ձեր մասին, իսկ ձերը՝ ենթարկվել։ Բայց եթե դուք չեք ցանկանում հեռանալ, ես կգնամ իմ կանանց ու երեխաների հետ։ Իսկ ձեզանից ով իր լավն է ցանկանում, թող հետևի ինձ։ Դժբախտությունը հեռու չէ։

Եվ նույն օրը ծեր առաջնորդն իր կանանց ու երեխաների հետ հեռացավ։ Իսկ կապիկներն ասացին.

— Մերուկը խելքը գցել է։ Մեզ համար նոր թագավոր ընտրենք։

Եվ իրենց համար առաջնորդ ընտրեցին այն ջահել կապիկին, որ ծերունու հետ վիճարկում էր իշխանությունը։ Անցավ երեք օր։ Իսկ չորրորդ օրը կնոջ հետևից գնացող խոյը հանկարծ նետվեց նրա վրա և եղջյուրներով սեղմեց պատին։ Կինը սկսեց ճչալ. «Օգնեցե՛ք, նա ինձ սպանո՛ւմ է»։ Ճիչը լսելով հարևան բակից՝ օջախից վերցրած խանձողը ձեռքին դուրս թռավ մի տղա և դրանով խփեց խոյի մեջքին։ Խոյի բուրդը սկսեց վառ-

վել։ Վախից նա փախավ տուն,— իսկ խոյն արքայինն էր,— սարսափահար մտավ փղերի մսուրը և կրակ տվեց այնտեղի հոգնը, իսկ հետո՝ ամբողջ մսուրը։ Փղերն սկսեցին մռնչալ և պատեպատ զարնվել։ Մինչև փղապանները կգային և նրանց շղթայողերծ կանեին ու աղատ կարձակեին, շատ փղեր ծանր ոչրվածքներ ստացան։ Արքան, իմանալով պատահածը, շատ բարկացավ՝ փղերը նրա սիրելիներն էին։ Նա իր մոտ կանչեց գլխավոր փղապանին և, զայրույթից շնչահեղձ լինելով, հարցրեց.

— Ի՞նչ արեցիք անիծյալ խոյին։ Նա ամենասոսկալի պատժին է արժանի։

— Մենք սպանեցինք նրան, տիրակա՛լ,— պատասխանեց դողդողացող փղապանը։

— Իսկ այժմ ի՞նչ անենք փղերին,— հարցրեց արքան։— Ինչո՞վ բուժենք։

— Փղերի վերքերին պետք է կապկի ճարպ քսել,— պատասխանեց փղապանների գլխավորը։— Դա լավ միջոց է։ Զինվորնե՛ր ուղարկեք որսի, տիրակա՛լ։

Արքան համաձայնեց և անտառ ուղարկեց նետաձիգ զինվորների մի ջոկատ։ Նրանք հայտնվեցին հարևան լեռան վրա, հանկարծակի հարձակվեցին կապիկների վրա և նետատարափ տեղացին նրանց գլխին։ Կապիկները, տեսնելով իրենց կանանց ու երեխաների զոհվելը, սարսափահար եղան։

— Օ՜ մարդիկ,— աղեկտուր կանչեցին նրանք։— Ինչո՞ւ եք այսպես դաժանությամբ կոտորում մեզ։ Մենք ոչ մեկին չենք նեղացրել։ Ձեր ցանքերին և պտղատու ծառերին ձեռք չենք տվել։ Երկար տարիներ է խաղաղ ապրում ենք լեռան վրա։ Ինչի՞ համար եք մեզ սպանում։

Ականջից թանկարժեք օղ կախ տված զինվորների պարագլուխը կապիկներին համառոտ պատմեց կնոջ, խոյի և փղերի պատմությունը, հայտարարեց արքայի հրամանը։ Այդժամ կապիկները բոլորովին վհատվեցին, իսկ նոր առաջնորդը հառաչելով ասաց.

— Մեր բախտին լիովին արժանի՞ ենք։ Ջլանցինք կյանքի փորձով իմաստնացած մեր առաջնորդին։ Ահա՛ և հատուցումը։

— Ո՞րն է առակի իմաստը, բարեկամնե՛ր,— հարցրեց Սպարտակը սակված ուղեկիցներին։— Ինչպես ասում է մի բանաստեղծ.

Այն, ինչ պատանին սովոր է փնտրել ողորկ հայելում,
Մերը տեսնում է աղյուսի մեջ իսկ։

Կարելի է և այլ կերպ ասել. երբ բոլորի համար սարսափելի մի բան արդեն կատարվել է, չեն օգնի ո՛չ ղղջալը, ո՛չ աղերսը, ո՛չ էլ ողբաձայն ճիչերը։ Իզուր չի ասված.

Դարանում են միշտ մարդ-արարածին, չի ննջում երբեք աղետն աշխարհում։
Լի լցնում էին գետն առուները դարեր ու դարեր,
Բայց արդ, ցամաքեց ջուրն առուների...

Մի ուրիշ օգտակար խոսք էլ կա, այն ասում է.

Թող փոշին ցրվի,— դժվար չի լինի այնժամ որոշել,
Տակինդ ինչ է՝ է՞շ է, թե՞ նժույգ...

Ամբողջ պատմության ընթացքում Կրիքսոսը մի քանի անգամ փոխեց դեմքի արտահայտությունը։ Վերջապես նա բացականչեց.

— Երևում է, ե՞ս էլ բան պիտի պատմեմ։

Բոլորը միաձայն ասացին.

— Պատմի՞ր, օ՞ քաջասիրտ Կրիքսոս։

Եվ Կրիքսոսը այսպես սկսեց.

— Իմ պատմությունը,— ասաց նա,— ինձ է հասել հեռավոր նախնիներից։ Մեր ծերունիներն են այն պատմում։ Ինչպես ասում են, կար-չկար մի սրբակյաց մարդ կար։ Մի անգամ նա գնացել էր հրաշալի մի պուրակ զբոսնելու։ Այնտեղ նա ծառին նստած մի հոպոպ տեսավ։ Իսկ մոտերքում, գետակի ափին երեխաները ցանցաթակարդ էին դնում։

— Եղբա՛յր հոպոպ,— ասաց սրբակյացը— վատ տեղ ես ընտրել հանգստի համար։ Կարող է թակարդն ընկնես։

— Երեխաները իզուր են շարշարվում,— կտուցը շրխկացնելով ասաց հոպոպը։— Ոչինչ չի ստացվի։ Ես ուշիմ եմ, հնարամիտ, կյանքում շատ բան եմ տեսել, հասկացել։ Ես դժվարագույն հարցեր եմ լուծում։ Ինձ խաբել չի լինի։ Հանգիստ գնա, սուրբ մարդ։

Սրբակյացը գլուխը մեծ կասկածանքով օրորեց և ինքն իրեն խոսելով հեռացավ.

— Միայն խորհուրդ տալն է խորհրդատուի գործը։

Իզուր էին երեխաները մի քանի ժամ դարանակալել Բզռչունին։ Իսկ հոպոպը նրանց ձեռք էր առնում. փետուրները և թևերը լվանում էր առվակի ջինջ ջրով, մոտենում էր ցանցին,

թևերը թափահարում և կրկին վերադառնում էր տեղը՝ ծառի վրա։

Վերջապես երեխաները հույսները կորած հավաքեցին իրենց ցանցերը և հեռացան։ Այդ ընթացքում հոպոպը քաղցածացավ։ Տեսնելով ցանցերից խայծի համար կախված հատիկները թափվել են, նա որոշեց կոցել դրանք և առանց վախենալու մոտեցավ հատիկներին ու ընկավ պատահաբար մոռացված մի ցանցի մեջ։ Ինչքան էլ թպրտաց, ոչինչ չօգնեց։ Այդժամ հոպոպն ինքն իրեն ասաց.

Հաճախ է կործանվում մեր իղձը, բայց դա դեռ կործանումը չէ։
Երջանիկ մի բախտ կա պահված այդ անդունդն ընկնողի համար։

Նա ուշքերը փակեց և պատրաստվեց մահվան։ Բայց նրա բախտից սրբակյացը պրոտանքից վերադառնում էր նույն ճանապարհով։ Իր ծանրին տեսնելով փորձանքի մեջ, նա շտապեց օգնության, թակարդը բացեց և սկսեց հանդիմանել.

— Դու չլսեցիր բարեկամիդ խորհուրդը և քիչ մնաց կործանվեիր խայտառակ մահով։

Հոպոպը խոստովանեց իր մեղքը և ասաց.

— Մի՞թե չգիտես, ո՞վ մեծ սուրբ, որ անօգուտ է զգուշանալ ճակատագրից։ Որ հնարավոր չէ դիմագրավել Բախտին։ Երբ ճակատագիրը վրա է հասնում, ուժն ու գիտելիքները դառնում են անօգուտ, նույնիսկ ամենախիստուն թուչունը չի կարող խուսափել թակարդից։ Բանաստեղծն ասել է.

Ճակատագրի դեմ մի՛ կռվիր. չէ՞ որ անհույս մի բան է դա։
Կյանքը չնչին ուժով անգամ կարելի է և կործանել։

Իսկ մի ուրիշ բանաստեղծ ասել է.

Երկնակամարը ամեն օր երկրում ինչ-որ նոր բան է վճռում ի վերուստ,
Որի հանդիման նահանջում է մեր մարդկային մտքի սուր հաշվարկն անգամ։
Թող որ մեր միտքը ոսկե արևի նման շողշողա բարձունքներից լուրթ,
Բայց ճակատագրի առեղծվածներին լուծում չի գտնի հար ու հավիտյան։

— Այո՛,— իր առակն ավարտեց Կրիքսոսը,— ճիշտ է ասված, և ես համաձայն եմ. «Երբ ճակատագիրը վրա հասնի, իմաստունն էլ կկուրանա»։

Երկու առաջնորդների բոլոր ուղեկիցները միմյանց նայեցին. յուրաքանչյուրը հասկացավ, որ Կրիքսոսը և Սպարտակը

բոլորի համար չէին առակներ պատմում, այլ միմյանց։ Մնացած ճանապարհը լուռ անցան, ամեն մեկը խորհելու բան ուներ։

Կեսգիշերին մոտ տեղ հասան. հրաշալի կաղնու անտառ էր, ծառերի տակ ամբողջ գետինը ծածկված էր հասած կաղիններով՝ վարազի համար մեծ ուրախություն։

Ջորեպանները իջեցրին բեռները, վրաններ խփեցին, գիշերելու տեղ պատրաստեցին։ Կրիքսոսն անհրաժեշտ պահակներ կարգեց և հետախույզներին ուղարկեց մեկ անգամ էլ ընելու շրջակայքը։ Հետո որսի բոլոր մասնակիցները զինվեցին և երկու խմբի բաժանվելով՝ որսորդներ և հալածողներ, շարժվեցին դեպի այն վայրը, ուր վարազները գալիս էին կերակրվելու։

Հիանալի գիշեր էր։ Լիալուսինը արծաթյա փափուկ լույսով ողողում էր շուրջբոլորը։ Թեթև քամին մեղմ օրորում էր բարձր ծառերի սաղարթը։

Կրիքսոսը, Սպարտակը և նրանց ընկերների մի մասը՝ որսորդները, դարան մտան ծառերի հետևում, մնացածները՝ որսահալածները, բոլոր կողմերից շրջապատեցին անտառակը, ինչպես և լճակի այն տեղը, ուր վարազները գալիս էին լողանալու և ջուր խմելու։ Դարան մտան, հաշվի առնելով քամու ուղղությունը, վայրի խոզերի հիանալի լսողությունն ու հոտառությունը (մարդահոտ առնում են 500—600 քայլի վրա)։ Լիակատար լռության մեջ բոլորը լսում էին գիշերային ինչ-որ թռչունի սուր ճիչերը, որ երբեմն լավում էր վերևից, քամու պոռթկումից տերևների սոսափյունը, որսի դուրս եկած մանր կենդանիների հեռավոր եռուզեռը...

Երկար ժամանակ էին դարանակալել՝ մեկ ժամից ոչ պակաս։ Առաջինը վարազներին տեսան որսահալածները։ Նրանցից բավական հեռու մացառուտը հանկարծ ճրթճրթաց, բոլորը լարվեցին, մի րոպե անց որսահալածների աչքի առաջ հայտնվեց արու վարազը։ Նա հսկայական էր, գորշ դարչնագույն, ողնաշարի վրա ցցված էր կոշտ, ցանցառ բաշը։ Հզոր իրանը և փոքրիկ աչքերով ու խոշոր մռութով, հսկայական գլուխը պահում էին ամուր, հաստ ոտքերը։ Վարազի բերանից ցցվել էին խոշոր, եռանիստ ներքին ժանիքները,— որսի ժամանակ նման ժանիքների հարվածը հաճախ մահացու է,— և փոքր, կարճ ու բութ վերին ժանիքները։

Վարազը անշարժ կանգնել էր։ Համոզվելով, որ վտանգ չկա, նա կանչողաբար խոխոջացրեց և նման վիթխարի մարմնի համար անսպասելի աշխուժությամբ վազեց դեպի մոտակա ծառերը։ Բերանով ագահորեն կաղին ժողովելով՝ սկսեց խրթխրթացնելով խժռել։

Վարազի հետևից մացառուտից անշտապ դուրս եկավ մերունը, հետո գոճիները, իսկ ապա դուրս թափվեցին զոլավոր խոհկորները։ Բոլորը գնացին դեպի բոլուկապետը և, տեղավորվելով նրա կողքին, նույնպես սկսեցին կաղին անուշ անել։

Որսահալածները չէին շտապում ընդհատել նրանց խրախճանքը։ Նրանք սպասում էին, մինչև խոզերը բավականաչափ կհնանան փրկարար մացառուտից։ Մի քանիսի սրտերը նույնիսկ խղճահարվեցին անմեղ կենդանիների նկատմամբ։ Բոլորի աչքի առջև նրանք խաղաղ կշտանում էին չգիտենալով, որ դատապարտված են և մի քիչ հետո համարյա բոլորը զրկվելու են յուղոր կյանքից։

Աստիճանաբար խոզերը հեռանում էին մացառուտից, աղատորեն ցրվելով տարբեր կողմեր։

Վերջապես որսահալածների գլխավորն ասաց. «Ժամանակն է սկսելու»։ Անմիջապես բոլոր որսորդական եղջերափողերը մոտեցրին շրթունքներին և ամբողջ ուժով սկսեցին փչել։ Միաժամանակ նրանք դուրս թռան թաքստոցից, փակելով մացառները տանող նահանջի ճամփան, իսկ շնապահները կապերից արձակեցին շների ոհմակը։ Սրանք բարձր հաչոցով նետվեցին առաջ։

Այդքան բազմաթիվ թշնամիներ տեսնելով՝ խոզերը նետվեցին մի կողմ, բայց այստեղ հայտնվեցին եղջերափողեր փչող որսահալածները, մյուս կողմ՝ նույնը կրկնվեց։ Միայն մի կողմն էր թշնամիներից ազատ, և խոզերը նեղ միջանցքով գլխապատառ վազեցին առաջ, հույս ունենալով փրկվել։

Տնքոցները, ճարճատյունն ու հառաչը, բազմաթիվ շների հաչոցը, վախեցած կենդանիների ֆսֆսոցն ու խոխոջը լցրեցին անտառը։ Փախչող կենդանիների առջևից, պոչը վեր տնկած ծանր-ծանր վազում էր արու վարազը։ Նա նախկինում ընկել էր նման փորձանքների մեջ, այդ էին վկայում վերքերի սպիները, փորձով գիտեր, խնայել չի լինի։

Եվ իսկապես, ծառերի հետևից դուրս եկած որսորդները նրանց վրա բազմաթիվ նիզակներ ու տապարներ տեղացին։

Գոճիներն ու խոճկորները վիրավորված ընկնում էին գետին, նորից վեր թռչում և վազում։ Կատաղած շները բոլոր կողմերից շրջապատել էին խոզերին, կծելով ականջները, ազդրերը և կողերը... Եվս 20—40 քայլ վազելով՝ գոճիներն ու խոճկորները սատկած գետին թափվեցին։

Որսորդները, հաղթանակած, վրա ընկան որսին։ Մի քանիսը վիրավոր կենդանիների՝ աղեկտուր ճղճղացող խոճկորների ոտքերն էին կապկպում...

Կրիքսոսը և Սպարտակը դեռևս դարանում նստած լարված նայում էին իրենց կողմը փախչող հսկայական արուին։ Մյուս որսորդները, դարաններից դուրս եկած (սրանք առջևում էին նստած), գոռում էին և նիզակ նետում մեկ նպատակով՝ գազանին վախեցնել և քշել Կրիքսոսի ու Սպարտակի կողմը։ Կրիքսոսը կտրականապես արգելել էր մյուս որսորդներին ձեռք տալ այս վարազին։ «Ես ինքս անձամբ պետք է սպանեմ դրան»,— ասել էր նա։

Վճռական պահը սրընթաց մոտենում էր։ Սպարտակը կողքանց նայեց Կրիքսոսին, որն ուսերի վրայից նետեց թիկնոցը և մնաց թեթև հագուստով։ Նա, ասես, ցատկի համար ամբողջովին կծկվեց, ձեռքն առավ ծանր ու սուր դաշույնը և նախապատրաստվեց։ Ջնայած որսի ավելի անվտանգ ձևեր կային (ձիով, ծառի հետևից նիզակի հարվածով՝ ծառը վահանի դեր էր կատարում), բայց Կրիքսոսը որոշել էր վարազին սպանել ամենահին, բայց և ամենավտանգավոր ձևով։ Այլ կերպ ասած, նա ցանկացել էր վարազին նաև փրկվելու հնարավորություն տալ...

Վարազն արագորեն մոտենում էր, տատացիորեն ահռում էր աչքի առաջ։ Արդեն լսվում էր նրա հևոցը, երևում էին մարմնի վրայի յուրաքանչյուր բիզ-բիզ մազը, կատաղի չարությամբ այրվող մանրիկ աչքերը։ Կճղակների տակից գուղձ-գուղձ հող էր պոկվում։

Այն պահին, երբ բոլորովին մոտ էր, Կրիքսոսը մարտական ճիչով դուրս թռավ դարանից։ Վարազը կտրուկ մի կողմ նետվեց։ Բայց արդեն ուշ էր։ Նրանք ընդամենը մի քանի քայլ կողք կողքի վազեցին։ Հաջորդ ակնթարթին Կրիքսոսը, առանց փոքր իսկ վարանման, ցատկեց վարազի վրա և սարսափելի ուժով դաշույնը մխրճեց գազանի վիզը, պարանոցի ողերը վարազի մարմնի ամենաթույլ տեղն են...

Վարազը մի քանի քայլ էլ վազեց, հետո ընկավ ծնկների

վրա։ Կրիքսոսը ճարպկորեն ցատկեց մեջքից և մի կողմ թռավ։ Նա գիտեր, որ նույնիսկ մահացու վիրավոր վարազը վտանգավոր է։ Բոլոր կողմերից ուրախ գոչյունով վազում էին մյուս որսորդները։ Նրանց ճիչերը, կարծես, նոր ուժ տվեցին վարազին։ Նա կրկին ոտքի ելավ, ևս 80 քայլ վազեց և նորից ընկավ։ Միայն կանգ առավ...

Կրիքսոսը և մյուս որսորդները շրջապատեցին գազանին։ Կրիքսոսը, բերկրանքով լեցուն, սպանված թշնամու շուրջը որսորդական բուռն պար էր սկսել, գոչելով.

— Ի՞մն է... ի՞մն է... Ե՞ս եմ սպանել։

Մոտ վազեց Սպարտակը (ըստ պայմանավորվածության նա պետք է ապահովեր Կրիքսոսի անվտանգությունը անհաջող հարվածի դեպքում)։ Կրիքսոսը հրճվանքով բռնեց նրա ձեռքը։

— Սպարտա՛կ, ան՞ս։ Ատամնե՞րը։ Ի՞նչ ատամներ են։ Դրանցից պարզ եմ պատրաստելու։ Իսկ ժանիքնե՞րը։ Ի՞նչ ժանիքներ են։ Դրանք ոսկու մեջ եմ ագուցելու։ Ի՞նչ որս է, ի՞նչ որս։ Սպարտա՛կ, դու երբևէ նման գազան տեսած կա՞ս։

Բոլոր որսորդները ուրախ գոչում էին.

— Փա՞ռք Կրիքսոսին։ Փա՞ռք։

— Ի՞նչ հարված էր։

— Ինչպիսի՞ ուժ ու համարձակություն։

— Ինչպիսի՞ խիզախություն։

— Ո՞չ մեկը սիրտ չէր անի։

— Մեր Կրիքսոսը մեն-մենակ ցուլի՞ դեմ էլ կգնա։

— Առյուծի՞։

— Փղի՞։

— Մեր Կրիքսոսն առյուծի՞ սիրտ ունի։

Սպարտակը թեթևացած՝ ուրախությամբ համբուրեց Կրիքսոսին։

— Ես ուրախ եմ, թանկագի՞ն Կրիքսոս։ Ի՞նչ հարված էր։ Փայլո՞ւն հաղթանակ։ Բայց և այնպես մեծ ռիսկ է։ Եթե զարկն անհաջող լինի, հանկարծ ձեռքը դողա և կամ նենգ ճակատագիրը երես թեքի, ապա վերջ. նման ժանիքներ ունեցող վարազը որսորդի վերջը կտա։ Չէ՞ որ մեծն հերոս Ակտեոնն էլ զոհվեց վարազի որսի ժամանակ։ Ոչ, ես այլևս քեզ չեմ թողնի այդպես ռիսկի դիմել, Կրիքսո՛ս։ Բայց ինչքա՞ն ուրախ եմ, որ ամեն ինչ բարեհաջող անցավ։

Կրիքսոսը ճակատից սրբեց տաք քրտինքը.

— Է՜, Սպարտա՜կ։ Միևնույնն է, ճակատագրից չես խուսափի։ Իսկ ես պատանի ժամանակվանից սիրել եմ համարձակությունը և միշտ դիմել եմ ռիսկի։ Ինձ նմանները չեն մեռնում անկողնում։ Լսե՞լ ես, ինչպես են հռոմեացիներն ասում. «Նա, ում աստվածները սիրում են, ջահել է մեռնում»։ Դա ճիշտ իմ մասին է ասված։ Իսկ մեր որսը, Սպարտա՜կ, քեզ չի՞ հիշեցնում արենայի վտանգները։

Մինչ նրանք զրուցում էին, որսորդներն ամբողջ որսադաշտով մեկ մաշկում էին սպանված փոշոտ խոզերին, լյարդն ու սիրտը հանում էին, կտրում էին ազդրերը...

Որսաշները ագահորեն լակում էին արյունը, խժռում որսորդների թափած աղիքները։

Վերջապես մսեղիքի կտրատման ամբողջ աշխատանքն ավարտեցին։ Ուրախությունից գրգռված որսորդները շալակներն առած միսն ու վիրավոր խոճկորներին՝ շարժվեցին հետ, դեպի իրենց կայանը։

Մինչ ջահել պահապանները թարմ միսը շամփուրների վրա շարելով՝ խորովում էին, Սպարտակը և Կրիքսոսը փոթորկի կործանած ծառաբնի վրա նստած զրուցում էին։

— Ի՞նչ արած, թանկագի՛ն Կրիքսոս,— ծիծաղելով ասաց Սպարտակը, շարունակելով ընդհատված խոսակցությունը։— Ինձ միշտ թվում է, որ և՛ Սաբազիոսը, և՛ Ատիսը կասկածելի աստվածներ են։ Վախենում եմ, որ նրանք երկնքում էլ լրիվ քաղաքացիական իրավունքներ չունեն։

— Ես գիտեմ, Սպարտա՜կ, դու աստվածներին չես հավատում,— սրտնեղած ասաց Կրիքսոսը։— Բայց ես հավատում եմ։ Ե՛վ գինվորներից շատերը, և՛ մեր զորապետները, նրանք նույնպես հավատում են աստվածներին։ Թող որ զանազան անուններով, բայց հավատում են։ Մե՛զ թող մեր հավատը, Սպարտա՜կ, մի՛ սպանիր այն, շատերի կյանքն է հավատը թեթևացնում։ Իսկ փիլիսոփաների նկատմամբ, որոնց հաճախ վկայակոչում ես, մենք՝ հավատի մարդիկս, անտարբեր ենք։ Ի՞նչ են դրանք, քո այդ աստվածներին վիրավորող փիլիսոփաները։ Հեղաձգ քաղաքում, ցանկացած տաճարի մոտ դրանցից կան։ Այնտեղ նրանք մշտապես գոռում և հայհոյում են միմյանց։ Այնտեղ նրանց աշակերտները միմյանց օձիքից են բռնում։ Հենց այնտեղ, ուր մանր առևտրականներն իրենց հնոտին են վաճառում, ճառասաններն ազնիվ քաղաքացիներին կործա-

նելու նպատակով անամոթաբար աղավաղում են օրենքները, կեղծ կուշակները ստոր մեկնաբանություններ են տալիս հավատի նշանակներին, բանաստեղծները երգում են իրենց անտաղանդ ոտանավորները, իսկ ոչխար-ունկնդիրները նրանց ծափահարում են, չինայելով իրենց ձեռքերը, և նույնիսկ գոչում են նրանց ամենափքուն խոսքերով։ Իսկ այդ ժամանակ զանազան շատախոս և նողկալի սոփեստներ, զանազան գրչակներ հոչակում են իրենց անմիտ և վնասակար շարադրանքները։ Դրանով իսկ նրանք մարդկանց փչացնում են, նրանց զրկելով բարեպաշտությունից՝ դարձնում են տգետ, ինքնագոհ, անմիտ և ենեգ։

— Է՜, Կրի՜քսոս, տեսնում եմ, դու փիլիսոփաների դեմ շատ վատ ես տրամադրված,— քմծիծաղ տվեց Սպարտակը։— Նրանք քեզ ի՞նչ վատություն են արել։

— Պատանի ժամանակ,— մռայլ պատասխանեց Կրիքսոսը,— ես մտադիր էի մաքրվել տգիտությունից։ Ես ծարավի էի գիտելիքների, ցանկանում էի ինձ տանջող հարցերի պատասխանը ստանալ՝ ո՞րն է հարստության, իշխանության, փառքի, հզորության իսկական բնությունը։ Կյանքում օրինավոր մարդուն ինչքանո՞վ է պարտադիր այդ ամենի հետևից ընկնելը։ Վերջապես, ես ծարավի էի հասկանալու բնության մեծագույն գաղտնիքները. ինչո՞ւ ամպերը խլացուցիչ որոտ են արձակում, փայլփլուն կարկուտ թափում, գեղեցիկ փոթիլներ, գոլ անձրև։ Ինչի՞ համար է ապրում մարդը։ Ընդհանրապես, ո՞րն է կյանքի իմաստը։ Եվ ի՞նչ եղավ։ Փիլիսոփաներն իմ գլխին ծիծաղաշարժ ատոմների, դատարկության, մատերիայի, նախապատճառների, գաղափարների, ինչպես նաև փոխադարձ անհամաձայնությունների անձրև տեղացին։ Յուրաքանչյուրը վիճարկում էր մյուսների կարծիքը, նրանց անվանում էր տգեղներ. իսկ ճշմարտության նեցուկ՝ միայն իրեն։ Յուրաքանչյուրը մի բան էր ուզում. այն, որ ես միայն իր հայացքներն ընդունեի և միայն իրեն վճարեի։ Նրանք, որպես օրենք, միշտ դատապարտում էին մյուսների վարքը, մարդկանց կարծիքներն արհամարհում, աստվածների մասին խոսում ամենաղազրելի ձևով, անամոթաբար հայհոյելով և՛ Զևսին, և՛ Հերային. իրենց հետ չհամաձայնողների դեմ մեղադրական ճառեր գրում. բոլորին իրենց սիլոգիզմների և դատողությունների մեջ խճճում. դերասանական ծամածռություններով առաքինության մասին շատախոսում։

— Կրիքսոս, դու ամեն ինչ շատ չափազանցնում ես,— նկատեց Սպարտակը ժպտալով։ Նա միանդամայն դեմ էր ընկերոջ կատաղի խայթոցներին, բայց չէր ցանկանում նրան խանդարել արտահայտվելու։

— Բոլորովին էլ ոչ,— շարունակում էր իրենը պնդել Կրիքսոսը։— Ով բոլորից բարձր է գոռում, ով ավելի շատ և հանդուգն դրքեր է գրում, ով բոլորից լկտի է հայհոյում, անարգելով սրբազան խորհուրդները, ծաղրելով պատգամախոսների գուշակություններն ու նախանշանները և կոչ անելով զոհաբերություններ չկատարել, այսինքն՝ աստվածներին քաղցած թողնել, քանի որ նրանց կարծիքով աստվածներ կամ ընդհանրապես գոյություն չունեն, կամ էլ նրանք չեն զբաղվում երկրային գործերով,— նա էլ ահա նրանց մոտ ամենամեծ հարգանքն է վայելում։ Օ՜, այդ կեղծ իմաստուն դատողությունները գաղափարների, սահմանի և անսահմանության մասին, անմարմին էակների, ատոմների և ճակատագրի մասին, որոնցով պարզամիտների գլուխն են յուղում, օ՜, այդ երդումները սագերի, շների և նույնիսկ սոսիների անունով։ Օ՜, թվերի տեսքով անկրկնելի աստվածություն։ Օ՜, այդ Հելլադայում, Պարսկաստանում, Հրնդկաստանում թափառող փիլիսոփաները։ Ամեն տեղից նրանց քշում են կեղծ ու զազրելի դատողությունների պատճառով։ Հենց իրենք էլ ոչ մի տեղ, ոչ մի երկիր չեն ուզում ընդունել իրենց համար որպես հայրենիք, նրանք բոլորը հպարտությամբ կրկնում են. «Մենք կոսմոպոլիտ ենք»։

Սպարտակը հառաչեց. փիլիսոփայության և փիլիսոփաների վրա նման կատաղի հարձակումը նրան հաճելի չէր, բայց չէր ցանկանում ընդհատել Կրիքսոսին։ Իսկ նա նույն բորբոքվածությամբ շարունակում էր զարգացնել իր միտքը.

— Իսկ տես, թե նրանք իրենց աշակերտների և ունկնդիրների առաջ ինչպե՜ս են գովաբանում անշահախնդրությունը, կայունությունը, հաստատակամությունն ու չափավորությունը։ Ինչպե՜ս են միշտ անարգում հաճույքն ու հարստությունը։ Եվ ահա նրանք մնում են մենակ, առանց ամբոխի, իրենց շրջապատում։ Եվ ի՞նչ են անում։ Չկա այնպիսի համեղ ուտելիք, որ նրանք անմիջապես ագահությամբ չկլանեն։ Ինչպիսի՜ ագահությամբ են հաշվում ստացած դրամները։ Որտե՞ղ է այդ կովարար, սնափառ տխմարների կեղծության և ագահության սահմանը։ Տեսնում եմ, ինձ հետ համաձայն չես, ուզում ես առարկե՜լ։

— Իսկապես ուզում եմ հակառակն ասել,— վեր կացավ Սպարտակը։

— Բայց մի՛ շտապիր, մինչև վե՛րջ լսիր,— պնդեց Կրիքսոսը։— Հարցրո՛ւ նրանցից յուրաքանչյուրին. «Օ՜, ամեն ինչ անարգո՛ղ փիլիսոփա, իսկ ի՞նչ ես արել մինչև հիմա։ Կյանքում որևէ օգուտ բերե՞լ ես»։ Նա հպարտորեն փքվելով, անպատճառ կպատասխանի. «Սովորական զբաղմունքները՝ ծովագնացությունը, հողագործությունը, առևտուրը, արհեստները, զինվորական ծառայությունը, ես մերժում եմ։ Դրանք բոլորն իմաստունի համար անօգուտ են։ Իսկ ես, առօրյա կյանքից հեռանալով, գործում եմ միշտ բարձրագույն նպատակների համար։ Եթե հարուստի մեկը շատ է վատնում, ես անհապաղ հայտնում եմ ժողովրդին։ Ես պարտավոր եմ հարձակվել անխոհեմ հարուստների վրա։ Իսկ մեծ պայքարին նախապատրաստվելու համար ես լոգանում եմ սառը ջրում, թավալվում եմ ցեխի մեջ, ամառներ ոտաբոբիկ եմ քայլում»։

Բայց ես կարծում եմ, որ մենք փիլիսոփաների՝ կեղծ ու ծախու իմաստություն տարածողների կարիքը չունենք։ Ինչի՞ է պետք փիլիսոփայությունը, եթե Դելֆիքում և Դիդիմիքում Ապոլլոնի պատգամախոսարանները կամ, Եփեսոսում՝ Արտեմիսի, Թրակիայում՝ Դիոնիսիոսի և Բենդիդայի տաճարները, Սամոթրակեում՝ կաբիրների, Եգիպտոսում՝ Անուբիսի, Պերգամոնում՝ Ասկլեպիոսի բուժարանը։ Այնտեղ է իսկական իմաստությունը, այնտեղ է անկեղծ բարեպաշտությունը, այնտեղ են մեծագույն աստվածների կացարանները։ Ասածիցս, Սպարտա՛կ, հետևում է, որ մեր ճամբարում մեզ պետք չեն շատախոս և վնասակար փիլիսոփաներ։ Մեզ հարկավոր են ուրիշ մարդիկ, գործի մարդիկ, նրանք, ովքեր կարող են և ուզում են կռվել զենքով, ոչ թե լեզվով։ Միայն նման մարդիկ են մեզ բարեկամ և հարազատ,— իր կրքոտ մենախոսությունն ավարտեց Կրիքսոսը։

Սպարտակը լսեց, մտածեց, հետո պատասխանեց.

— Քեզ հետ համաձայն եմ, Կրի՛քսոս, հետևյալ հարցում. յուրաքանչյուր փիլիսոփայություն որևէ արժեք ունի միայն մի դեպքում. երբ այն սովորեցնում է գործել, ոչ թե դատողություններ անել և երբ իրենք փիլիսոփաներն ապրում են իրենց հրապարակած գաղափարների համաձայն։ Բայց համաձայն չեմ, որ հերքում ես փիլիսոփայության արժեքավորությունն ընդհանրապես։ Հարցնում եմ քեզ. ի՞նչը կարող է մարդուն հետ պահել

սխալներից, ազատել զազրելի արատներից, լավ տրամադրություն տալ։ Ջե՞ս կարողանում պատասխանել։ Ուրեմն ես պատասխանեմ. ոչինչ, բացի իսկական փիլիսոփայությունից։ Իմ հետևությունը, թանկագի՛ն բարեկամ, այսպիսին է. փիլիսոփայությամբ պետք է զբաղվել։ Առաջնորդի համար նման զբաղմունքը կենսականորեն անհրաժեշտ է. փիլիսոփայությունը կհղկի, կսրի բնական խելքը, ինչպես արվեստով զբաղվելը զարդարում է մարդկային հոգին։ Հարկավոր է հարգել փիլիսոփաներին. նրանց մեջ հրաշալի մարդիկ կան։ Անհրաժեշտ է նրանց նկատմամբ շռայլ լինել։ Նրանցից հարկավոր է ընտրել այնպիսիներին, որոնք, քո կարծիքով, մոտ են ճշմարտությանը։ Բայց մնացածներին էլ չի կարելի հանդիմանել։ Չկա այնպիսի մի սիստեմ, որի մեջ որևէ ճշմարտություն չլինի։ Ուստի և կարծում եմ, որ յուրաքանչյուր խոշոր փիլիսոփա իր նոր սիստեմն է կառուցել՝ նախկին սիստեմներից ընտրելով ամբողջ լավագույնը։ Մի խոսքով, փիլիսոփայությունը մեր կյանքում կարող է օգտակար լինել։

— Բայց ի՞նչ է մեր մարդկային կյանքը,— մրթմրթաց Կրիքսոսը։— Տոնախմբություններ, ամուսնություններ, ժողովրդական հավաքներ, դատարաններ, ռազմական արշավներ, սայլերով և նավերով ճանապարհորդություններ ցամաքով ու ծովով, մի կտոր հացի կամ ավարի համար պայքար, փառամոլություն, փառասիրության հուզմունքներ, մտերիմների կամ բարեկամների մահ, խնդություն կամ վիշտ։ Օ՜, ինչքան ծիծաղելի են արհամարհելի հարուստները, որ հպարտանում են ոսկով, երկու ձեռքերի ութ մատանիներով։

— Ի դեպ, մատանիների վերաբերյալ,— Սպարտակը նայեց Կրիքսոսի բազկին։

— Հրաշալի մատանի ունես։ Վաղո՞ւց ես ձեռք բերել, թանկագին Կրիքսոս։

Սամնիտը կարմրեց և ինքնաբերաբար մյուս ձեռքով ծածկեց մատանին։

— Ցույց տուր տեսնեմ,— Սպարտակը բռնեց նրա ձեռքը և օղը հանեց Կրիքսոսի մատից։ Աչքերի առջև պտտեցրեց մատանին, հիանալով քարերի խաղով,— հիանալի օղ է, հրաշալի քար, Կրիքսոս,— հավանություն տվեց նա,— շատ թանկ մատանի է։ Ես նման բաներից հասկանում եմ, կարող ես վստահել, Պոմպեոսում շատ եմ տեսել։ Որտեղի՞ց այս մատանին։

— Մի երկրպագուից,— դժկամությամբ պատասխանեց ջփոթված սամնիտը։

— Ա՜խ, Կրիքսո՜ս, Կրիքսո՜ս,— Սպարտակը կշտամբանքով գլուխն օրորեց։— Նման նվերներ չի կարելի ընդունել, դրանց փոխարեն միշտ մեծ ծառայություններ են պահանջում։ Հուսով եմ, որ պատասխանել ես նույնպես թանկարժեք նվերով։

Շփոթահար Կրիքսոսը լռում էր, նա չէր համարձակվում բացահայտ ասել, բայց և ճշմարտությունն էլ չէր ցանկանում ասել։

— Գիտե՞ս, Կրիքսոս,— ասաց Սպարտակը,— կարծում եմ, մատանին պետք է վերադարձնել։

— Ինչո՞ւ,— վախեցավ սամնիտը։ Նա ընկերոջ ձեռքից խլեց մատանին և սեղմեց բռունցքի մեջ։— Ինչո՞ւ վերադարձնել։ Այս նվերը տղամարդուց չեմ ստացել, այլ սիրելի կնոջից։ Մի՞թե կարող եմ նրան վիրավորել՝ մատանին վերադարձնելով։ Նա ինձ նվիրել է հանուն սիրո։ Ես աստվածներին հարցրի. «Կարելի՞ է նման թանկարժեք մատանին վերցնել»։ Ես երեք անգամ հարցրի, ինչպես հարկն է։ Աստվածները պատասխանեցին. «Կարելի է»։

— Նման բացատրությունները թո՞ղ, Կրիքսոս,— Սպարտակը բացահայտորեն բարկացավ։— Սխալներդ աստվածներին վկայակոչելով մի՛ քողարկիր։

Կրիքսոսը վեր թռավ.

— Ես մատանին չե՞մ տա։ Գիտեմ, աստվածների կամքը քեզ համար ոչինչ է։ Դու ընդհանրապես կցանկանայիր վենետների հավատն աստվածների նկատմամբ խախտել։

Սպարտակը կրկին ժպտաց և հաշտվողաբար ասաց.

— Իզուր ես տաքանում։ Ես չեմ պատրաստվում աստվածների նկատմամբ ձեր հավատին դիպչել։ Ով ուզում է, թող հավատա։ Միակ ցանկությունս այն է, որ դու, որպես զորքի ամենաազդեցիկ առաջնորդներից մեկը, չվստահես նվերներին, շողոքորթությանը, խաբեբաների պատմություններին և երազահան վհուկներին, կախարդանքներին, գևեր կանչելու հմայությանը։ Անցյալում իրենց դյուրահավատության պատճառով շատերն են զոհվել և կործանել իրենց ընկերներին։ Առանձնապես կասկածելի են նման թանկարժեք նվերները։ Չէ՞ որ գիտես հռոմեական սովորությունը. ոչինչ ձրի չտալ։ Նույնիսկ աստված-

նրերին զոհ են մատուցում, ասելով. «Տալիս եմ քեզ, որ ինձ տաս»։ Իսկ ի՞նչ են ուզում քեզնից քո խորհրդավոր երկրպագուները։ Լավ կլինի, որ նրանք կոնսուլների հետ կապված չլինեն։

— Դու ինձ միամիտի տե՞ղ ես դրել,— վիրավորվեց Կրիքսոսը։

— Ո՛չ,— պատասխանեց Սպարտակը։— Բայց քեզ խորհուրդ կտայի, սիրելի՛ բարեկամ, որ մշտապես զգույշ լինես։ Մենք պատերազմի մեջ ենք։ Մեզ հռոմեական լրտեսներ են շրջապատում։ Նրանք ձգտում են թափանցել մեր ճամբարը, կաշառել թույլերին և ագահներին, շողոքորթության և նվերների միջոցով վստահություն ձեռք բերել բարձրագույն հրամանատարների մեջ։

— Մի՞թե ես դա մոռանում եմ,— կրկին վիրավորվեց Կրիքսոսը։— Դու ինձ երեխայի նման դաս ես տալիս։ Բայց մի՞թե ես վատ եմ կատարում պարտականությունները։ Ուրեմն զրկի՛ր ինձ պաշտոնից։ Գուցե ավելի խելոք ու արժանավոր մեկին գտնես, որն առավել հաճույքով գլուխը վտանգի կենթարկի մարտի ժամանակ։

Սպարտակը կշտամբանքով գլուխն օրորեց.

— Ա՜խ, Կրի՜քսոս, Կրի՜քսոս։ Ինչո՞ւ ես այդպես խոսում։ Ոչ մեկը չի կասկածում, որ դու ազնվորեն կատարում ես քո պարտականությունները։ Դու աչքի ես ընկնում քաջությամբ, անշահախնդրությամբ, վեհանձնությամբ, զինվորական գործի բանիմացությամբ։ Մենք այդ ամենը գիտենք և գնահատում ենք քո լավ գծերը։ Բայց դու չափազանց տաքարյուն ես և բավականաչափ շրջահայաց չես։ Քո կրքերին հնարավորություն ես տալիս քեզ հրապուրելու այն սահմանից դուրս, որը թույլատրելի է զորավարի համար։

— Ի՞նչը նկատի ունես,— բացահայտորեն բարկանալով հարցրեց Կրիքսոսը։

— Ինքդ գիտես, թանկագին ընկեր։

— Ո՛չ, Սպարտա՛կ, եթե սկսել ես, խոսի՛ր։ Առաջնորդը պետք է անկեղծ լինի։ Ենթական չպետք է գուշակի, թե ինչ է ուզում, ինչ չի ուզում նա։

— Կասեմ։ Կասեմ, մի՛ անհանգստացիր,— համաձայնեց Սպարտակը։— Իսկ առայժմ պատասխանի՛ր, դու ոսկյա գավաթներ և սափորներ ունե՞ս։

— Ունեմ,— դժկամորեն խոստովանեց Կրիքսոսը։

— Եվ շա՞տ։

— Մի տասնյակ կլինի։

— Որտեղի՞ց ես ճարել։

— Մի մասը գնել են իմ հանձնարարությամբ ռազմաավարի վիճակով ինձ ընկած հասանելիքի դրամով, մյուս մասը նվեր եմ ստացել ընկերներից։

— Ի՜նչ առատաձեռն ընկերներ ունես։ Կրի՜քսոս,— քմծիծաղեց Սպարտակը։— Ամեն անգամ թանկարժեք մի նվեր են բերում՝ մեկ մի ամբողջ ունեցվածքի արժեքով մատանի, մեկ՝ ոսկյա դավաթներ։ Ինձ չէի՞ր ծանոթացնի նրանց հետ։ Շատ հետաքրքիր է, գոնե մի աչքով նրանց տեսնել։

— Կծանոթացնեմ... Հետո...— խոժոռվելով պատասխանեց սումնիտը։

— Ասա՛, Կրի՜քսոս, ինչի՞ պետք ոսկյա սափորներն ու գավաթները,— կրկին հարցրեց Սպարտակը։— Ինչո՞ւ չես կարողանում կավե կամ մետաղյա ամաններից խմել։

— Որովհետև ես ազատ մարդ եմ,— զրգռված պատասխանեց Կրիքսոսը։— Մի՞թե հասկանալի չէ։ Կավե ու փայտե ամաններից թող ստրուկները խմեն, իսկ ես հիմա ազատ եմ և միջոցներ ունեմ։ Դրա համար ես ուզում եմ ոսկյա սափորներից և գավաթներից խմել, ցանկանում եմ ուտել և խմել ոսկյա ամանեղենով, ինչպես հռոմեական սենատորները, ինչպես հռոմեացիներից ամենահարուստը՝ Մարկոս Կրասոսը։

Սպարտակը նորից ժպտաց։

— Ինչպե՞ս ես սխալվում, Կրի՜քսոս, նույնիսկ զարմանալի՜ է։ Հենց Մարկոս Կրասոսն ինքը՝ հռոմեացիներից ամենահարուստը ուտում և խմում է հասարակ ամանեղենով։ Արծաթյա և ոսկյա սպասքը հաղվադեպ է մեջտեղ հանում, առանձնահատուկ հյուրերի համար։ Կրասոսը շատ չափավոր մարդ է, Կրիքսոս։ Եվ նկատի ունեցիր, նա՝ փիլիսոփաների երկրպագու է։ Իսկ դու չգիտե՞ր։ Այո, Կրասոսը պերիպաթետիկ է, Արիստոտելի Լիկեյի կողմնակիցը։

— Ուզում է, թող շան գանգով խմի,— մոթմոթաց Կրիքսոսը։— Իսկ ես ուզում եմ ուտել և խմել ոսկյա ամաններով։ Մերոնցից շատերն էլ են ուզում։ Դու լսած կլինես բանաստեղծի այս տողերը.

Մարդկային կյանքի օրերը կարճ են և արագահոս,

Որքան կարող ես, կյանքի գավաթից հաճույքներ ըմպիր։

Ուրեմն, Սպարտա՛կ, վե՛րջ տուր մանրուքների համար մեզ ճնշելուն։ Մի՛ մոռացիր այն ճշմարտությունը, որ ասել է մի ուրիշ բանաստեղծ.

Թագավորելու իրավունք է քեզ բախտը պարգևել, որպեսզի արդար կառավարես դու,
Պետք է խուսափես դու բռնությունից, ոչ թե կուտակես այն քո սրտի մեջ։

— Քո կարծիքով, ուրեմն, ես ճնշո՞ւմ եմ,— վրդովվեց Սպարտակը։— Ես նոր բռնակա՞լ եմ։

— Ես նման բան չէի ասում,— պատասխանեց Կրիքսոսը։— Բայց իսկապես բռնակալություն կլինի, եթե մեզ թույլ չտաս ուղածներիս պես ապրել նույնիսկ խաղաղ ժամանակ։ Բավական է այն, որ մենք բոլորս առանց առարկության ենթարկվում ենք քեզ մարտի և արշավի ժամանակ։

— Այսպես, ուրեմն, ես ճիշտ չե՞մ վարվում, ես ձեզ ճնշո՞ւմ եմ,— հարցը կրկնեց Սպարտակը։ Մեղադրանքը նրան թվում էր մեծագույն անարդարացիություն։

— Իհարկե,— հաստատեց Կրիքսոսը,— վաղուց հայտնի է՝ զորավարի իշխանությունն իր բնույթով մոտ է բռնակալությանը, այնպես, ինչպես անխոհեմությունն առնչվում է քաջության, վատնողությունը՝ առատաձեռնության հետ։

— Ո՛չ, Կրի՛քսոս, դու սխալվում ես,— գլուխն օրորեց Սպարտակը։— Իմ կողմից բռնակալության ակնարկ իսկ չկա։ Ես կարգ ու կանոն, զգոնություն, կարգապահություն եմ ուզում։ Միայն դրանցով կարելի է հաղթել պատերազմում, ոչ թե ոսկյա սափորներով ու գավաթներով կամ կանանց ու պատանիների ընկերությամբ անընդմեջ կերուխումներով։

— Ո՛չ, Սպարտա՛կ, ես չեմ կարող քեզ հետ համաձայնել,— իրենն էր պնդում սամնիտը,— ո՛չ կերուխումները, ո՛չ ոսկյա սափորները կապ չունեն պարտականությունների աղնվորեն կատարման հետ։ Առանձին պարտություններ ցանկացած դեպքում կարող են լինել։ Հենց դրա համար էլ մի բանաստեղծ ասում է.

Բախտը երբեմն մեզ չարշարանաց անդունդն է գցում,
Բերում է ապա և թեթևացում։

Իսկ մի ուրիշ պոետ որոշ անհաջողություններ նույնիսկ օգտակար է համարում։ Ահա թե ինչ է ասում նա.

Կրիր քո Ճախտը. Ճակատագիրդ թող նույնիսկ անի
Ոչ այն, ինչ որ դու կկամենայիր,— համենայն դեպս մի լինի անհաստատ
Չի տղամարդու կյանքն այնժամ է լոկ լինում հաճելի,
Երբ հաճույքների մինչև մերթ ընդ մերթ ընդմիջումներ կան։

— Տարօրինա՞կ ես դատում, Կրի՞քսոս,— բացականչեց Սպարտակն, արդեն խիստ զայրանալով։

— Ինչո՞ւ է տարօրինակ,— չէր համաձայնում Կրիքսոսը,— ես ասել եմ և կասեմ. արդարացի չէ ընկերներին ճնշելը։ Դատանում է բռնության։ Նման բռնակալություն ստեղծեց պարսկական արշավանքներից հետո Ալեքսանդր Մեծը։ Ոչ մի ազատ մարդ իրավունք չուներ մի ճիշտ խոսք անգամ ասելու։ Զարմանալի բան է. պատերազմում մակեդոնացիները սեփական քաջությամբ իրենց համար շղթաներ կոփեցին։ Ահա թե ինչն է իրական ու հավաստի (ինչքան ուզում ես, կարող ես բարկանալ, Սպարտա՛կ). բռնակալությունը միշտ հանդեցնում է շրջապատի կողմից կեղծության, գրպարտության, ճարպկության, երեսպաշտության, իսկ ազատությանը նվիրվածությունը պահանջում է սեր ճշմարտության և արդարության նկատմամբ։ Եվ մարդկանց հարկավոր է դաստիարակել խելքով, իզուր նրանց չզրգռել, ինչպես մի բանաստեղծ ասել է.

Եթե փաղ ես ցանել, խոզդ չես հավարի։

— Տարօրինակ ես դատում, Կրի՞քսոս։ Երդվում եմ Յուպիտերով, տարօրինա՞կ,— Սպարտակը բարկությամբ բռունցքով դարկեց ագրերին։— Քո կարծիքով, ոսկյա թասերը ազատությա՞ն խորհրդանիշն են։ Ով ցանկանում է արգելել դրանք, համարյա բռնակալ է։ Իսկ իմ կարծիքով, դրանք նոր ստրկական շղթաների նախանշաններն են։ Չե՞ս հասկանում։ Բացատրեմ։ Նրանք, ովքեր պատերազմի ժամանակ սկսում են օգտագործել ոսկյա թասեր, արագորեն անցնում են շքեղության ամեն ինչում։ Նրանց զգոնությունը, աշխատունակությունը, կռվելու ցանկությունը և ունակությունը արագորեն նվազում են։ Նրանք սկսում են անփութորեն կատարել իրենց պարտականությունները։ Իրենց բարձրագույն հրամանատարներին նայելով՝ նույն կերպ սկսում են վարվել ավելի փոքր հրամանատարները, զինվորական տրիբունները և, վերջապես, զինվորները։ Վերջը միշտ մենակն է՝ լիակատար և ամոթալի պարտություն։ Նրանց, ովքեր ողջ են մնում, պարանոցներին թոկ են գցում և քարշ տա-

լիս ստրուկների շուկա։ Դու քեզ ու զորքին նմա՞ն վախճան ես ցանկանում։

— Մեզ հետ երբեք նման բան չի պատահի։— Կրիքսոսը գայրույթով վեր թռավ տեղից։— Մենք՝ ոսկե թասի երկրպագուներս, երբեք թշնամուն թիկունք չենք ցույց տա։ Մենք ավելի շուտ կընկնենք մարտում, քան թույլ կտանք կրկին ստրուկի թոկ դցել մեր վիզը։

— Լա՜վ ստիպեցիր ինձ, Կրի՜քսոս։ Ա՜յ, շնորհակա՜լ եմ,— հեգնանքով գլուխը խոնարհեց Սպարտակը։— Ուրեմն, դուք՝ ոսկե թասի երկրպագուներդ, արդեն տրամադրվել եք պարտության, ոչ թե հաղթանակի։ Ա՜յ, հիմա, թանկագի՜ն բարեկամ, կասեմ այն, ինչ առաջ չէի ուզում ասել. շատերը է հրամանատար լինի նա, ով առանց քաշվելու օր ու գիշեր անց է կացնում կանանց հետ, ով այլասերում է տղաներին, ով ծընծղաների նվագակցությամբ պարում է ներքինիների հետ, ով ամեն օր վեգ է խաղում, ում գիշերները մինչև լույս ճաշեր են մատուցում, իսկ ցերեկները՝ երկարաւև նախաճաշեր, որոնց նկարագրելը երկար ժամանակ կխլի։

Կրիքսոսը կարմրեց և խոժոռվելով մի կողմ շրջվեց։

— Դու ի՞նձ ես ակնարկում, թե՞ հրամանատարներիս,— երկարատև լռությունից հետո վերջապես հարցրեց նա։

— Ի՞նքդ հասկացիր, թե ում են ուղղված խոսքերս,— պատասխանեց Սպարտակը։— Բայց ես կցանկանայի, որ ինքդ հրամանատարներիդ հետ միանգամայն անկեղծ խոսեիր։ Ոմանց ժամանակն է կարգի հրավիրել, քանի դեռ ուշ չէ։ Նրանք բոլորին վատ օրինակ են ծառայում։ Եթե այս բանը քեզ չասեի, որպես զորավար պարտականություններս կատարած չէի լինի։ Դու պետք է խոսես յուրայիններիդ հետ։ Քո հեղինակությունը զորքի մեջ մեծ է, քեզ սիրում և հարգում են։ Մենք, Կրիքսոս, բոլոր կարևոր հարցերում պետք է գործենք համատեղ, առանց բաժանվելու։ Չէ՞ որ մենք երկուսով ենք այսքան մարդու ոտքի հանել պայքարի և նրանք մեզ հավատում են։ Բացառվում է, որ ես զորքը մի կողմ տանեմ, իսկ դու՝ հակառակ։ Այդ դեպքում կատաղի վիճաբանությունների մեջ մենք կոչնչացնենք միմյանց հեղինակությունը։ Այդ ժամանակ բանակում կսկսվի քայքայում, խռովություններ, բանսարկություններ։ Ա՜յ թե հռոմեացիները կուրախանան։ Մեր շրջանում երկպառակություններն ու բանսարկությունները հող կդառնան դավաճանության։ Ագահ և անհաս-

տատակամ մարդիկ,— դու լավ գիտես,— մեր մեջ կան։ Դու կարո՞ղ ես երաշխավորել, որ նրանցից ոչ մեկը հռոմեացիների գանձարանին ընդառաջ չի գնա... Ես չեմ ուզում մինչև վերջ ամեն ինչ ասել։

— Սրիկաներ ամեն տեղ էլ կան,— դժվարությամբ խոսեց Կրիքասը— Ինչպե՞ս կարելի է նման երաշխավորություն տալ։ Մեզ մոտ էլ դրանք, ինչպես ուրիշ տեղ, որոշակի քանակությամբ կլինեն։ Մանավանդ, եթե հռոմեացիները ձգտում են գաղտնի գործակալներով լցնել մեր ճամբարը։ Բայց իմ շրջապատում այդպիսիք չեն լինի։ Սեփական ձեռքով կսպանեմ այն սրիկային, ով կծախվի հռոմեացիներին։ Կամ խռովություն կմտցնի մեր շարքերը։ Ով բանսարկությամբ կամ լրտեսությամբ կզբաղվի, կամ կուզենա դավաճանել մեզ...

— Լավ կլիներ, թանկագի՛ն Կրիքասս, որ դու պարտականությունները ստանձնես կատարելու,— մեր պատերազմում դա բավական չէ,— անձնական օրինակ ծառայելով, ամեն օր քո մարդկանց մեջ դաստիարակեիր ոչ միայն քաջություն, այլև շափավորություն։ Բարձրագույն հրամանատարների շափավորությունը պետք է նրանց գլխավոր հատկություններից մեկը լինի։ Դա, հասկանո՞ւմ ես, ինչ առավելություն է տալիս։ Նման ստորաբաժանումը ոչնչի կողմը չշեղվելով՝ ո՛չ հարբեցողության, ո՛չ կանանց հետ կապված բանսարկությունների, ամբողջ ուժով կենտրոնանում է պատերազմի վրա։ Միայն այդպիսի առաջնորդները կարող են բանակը հասցնել հաղթանակի։ Սա անվիճելի է։ Հենց դրա համար էլ փիլիսոփաները, որոնց կարծիքը դու այդքան չես սիրում, ասում են. «Դժվար է առաջնորդ լինելը։ Բազմաթիվ հատկություններ պետք է ունենալ. փայլուն գիտենալ ռազմական գործը, մարդկանց և քաղաքականությունը, աչքի ընկնել քաջությամբ, շափավորությամբ, համեստությամբ, դիմացկունությամբ, անպահանջկոտությամբ, հավասարակշիռ բնավորությամբ, սեփական արժանապատվության զգացումով ու ինքնատիրապետմամբ, կայտառությամբ՝ դժվար իրադրություններում, ինչպես և հիվանդ ժամանակ։ Իսկ ինչքան կարևոր է ուրիշի ազդեցությանը չենթարկվելը, զրպարտություններին բանի տեղ չդնելը, կատակել կարողանալը, աղատ, երեսին ասված խոսքը տանել կարողանալը։ Մարմնական բավականությունները պետք է մեզ մոտ այնպիսի դեր խաղան, ինչպիսի դեր բանակում խաղում են օժանդակ ու թեթևազեն ջոկատները։

Դրանք մեզ ժամանակավոր են տրված և վաղանցիկ են։ Մենք չպետք է մարմնականի ստրուկը լինենք։ Միայն այդ պայմանով դրանք կարող են օգտակար լինել մարմնին և ոգուն»։

Էլի մի բան. «Մարդկային հզորության գագաթնակետին կարելի է հասնել միայն մեկ ճանապարհով՝ կատարելագործելով ժուժկալությունը և արիությունը»։

Եվ վերջապես. «Զորավարի կյանքը պետք է լինի ոչ թե շռայլ, այլ՝ չափավոր։ Այլ կերպ ասած, զորավարը պետք է զինվորի կյանք վարի։ Դրանով ամեն ինչ ասված է»։

— Գուցե յուրովի իրավացի ես, Սպարտա՛կ,— արդեն առանց նախկին բորբոքվածության առարկեց Կրիքսոսը,— բայց չի կարելի չափազանց շատ բան պահանջել զինվորներից և հրամանատարներից։ Հարկավոր է խելամիտ չափավորություն պահպանել։ Մենք պատերազմի մեջ ենք։ Յուրաքանչյուրն ամեն օր կարող է զոհվել։ Ի՞նչ է ստանալու կյանքից։ Միայն աստղերի վրա ապագա հիանալի կյանքի խոստումնե՞ր։ Թե՞ երկրի վրա հիանալի կյանքի խոստումներ մեր գործի հաջողության դեպքում, որը նա, գուցե և, չի էլ տեսնի։ Ամոթ է և սարսափելի մարդկանց իսաբելը։ Ուստի և պետք է նրանց ընդառաջ գնալ։ Քաջագործությունների համար անհրաժեշտ է շռայլորեն պարգևատրել՝ և՛ թանկագին զենքով, և՛ գունավոր հագուստով, և՛ հազվագյուտ մանյակներով։ Թող նույնիսկ ոսկյա թասերով խմեն։ Մի՞թե բանն այդ է։ Արդարացի է պոետը.

Ինչպես է շողում, մեզ ձեռքով անում հույս-գեղեցկուհին...
Նրա հետ լավ է ապրելը՝ թեկուզև տագնապալի։
Դե, ուրախ եղիր, ուրախ, դի մահվան ճոխ հարսանիքին
Այդպիսի հրաշք գեղեցկուհիներ, գիտես, չեն ճարվի։

Ես այսպես եմ մտածում, Սպարտա՛կ, և հետ չեմ կանգնի։

— Իմ թանկագի՛ն Կրիքսոս։ Մի՞թե ես գեմ եմ պարգևներին։ Մի՞թե մարդկանց ցանկանում եմ զրկել հաստատ հույսերից։ Բայց քաղաքականության ուղիները ծայրաստիճան բարդ են.... Հենց դրա համար էլ ասվում է. «Հաճախ ճշմարտություն է դառնում այն սուտը, որին բոլորը հավատացել են»։

— Ես երբեք նման կարծիքը չեմ ընդունել,— զայրացած ասաց Կրիքսոսը,— հարկավոր է իրական խոստումներ տալ։ Ոչինչ առաջնորդի նկատմամբ հավատն այնպես չի խախտում, ինչպես խաբեությունը։ Ուզում եմ փիլիսոփաների օգտակար մի

կարծիքը բերել (պատանի ժամանակ ես էլ եմ նրանց լսել, ինձ բոլորովին ոգեսի տեղ մի՛ դիր). «Միայն նա է մեծ, ով շուայլորեն գրամ է բաժանում, ռազմական արշավանքների ժամանակ առաջինն է փառքի ենթարկվում, գնահատում է ընկերներին՝ ուշադրություն չդարձնելով նրանց թերություններին»։

— Դու, Կրի՛քսոս, փիլիսոփաների կարծիքի միայն առաջին մասն ասացիր, իսկ երկրորդ մասը՝ ոչ պակաս կարևորը, բաց թողեցիր։ Իսկ այն ասում է. «...ով հաղթող լինելով ոգորմած է գերիների նկատմամբ, հեշտությամբ է մեղմում զայրույթը, հաջողության գագաթնակետին չի կորցնում մարդասիրությունը»։ Ինչո՞ւ ես մոռանում ասույթի երկրորդ մասը։

— Ես չե՞մ պատրաստվում ոգորմածություն ցուցաբերել հռոմեացիների նկատմամբ, մեր երդվյալ թշնամիների նկատմամբ, անցիր վեր թողնելով դայրապին գոռաց Կրիքսոսը,— նրանք ատելություն են սամնիտներին, Իտալիայի բոլոր ազգերին, ուչիտարի բոլոր ազգերին։ Սամնիտները երդվել են կործանել Հռոմը, կոտորել մինչև վերջին հռոմեացին։ Եթե ճակատագիրն ու աստվածները գորավիգ լինեն մեր գործին, ես կկատարեմ նախնիների երդումը։ Սկզբում մենք կկողոպտենք անիծյալ քաղաքը. դարեր շարունակ Հռոմը կողոպտել է ուրիշ ազգերի և քաղաքներ, չէ՞ որ նրա հերթն էլ է գալու։ Հետո առաջինը ես եմ փառքով չուր մտնելու։ Պատանեությի ամենագեղեցիկ պայմանն եմ երբ Հռոմը վերածվի ավերակ մոխրակույտի, առաջինը ես եմ գուցեանում փարելու այդ ավերակները և տեղն աղ եմ ցանելու։ Դա նշանակելու է, որ այլևս այնտեղ ոչ ոք չի բնակվելու, որ այդ վայրը անիծված է աստվածների և մարդկանց կողմից։ Ո՛չ մի ոգորմածություն չի կարող լինել Հռոմի և հռոմեացիների նկատմամբ։ Ինչո՞ւ մյուս քաղաքները՝ Կորնթոսը, Կարթագենը և այլն, կարելի է կոտորել ու կողոպտել, իսկ Հռոմը՝ ոչ։

— Հանգստացի՛ր, Կրի՛քսոս,— Սպարտակը բռնեց նրա ձեռքը և կրկին նստեցրեց,— հանգստացի՛ր։ Այդ բանը դեռ կքննարկենք։ Իսկ առայժմ ասա, ի՞նչ ես մտածում մեր հետագա ծրագրերի մասին։ Ըստ քեզ, ո՞ր կողմը տանենք զորքը։ Ընդհանրապես ի՞նչ անենք այսուհետև։

— Կարծում եմ,— փոքր-ինչ հանդարտվելով ասաց Կրիքսոսը,— ավյալ պահին երեք առաջարկություն կարելի է քննարկել։ Դրանք տարբեր զինվորներից և հրամանատարներից են

գալիս։ Առաջին՝ զգալի ուժ կուտակելով հարձակման տանել ուղիղ Հռոմի վրա (ինքս էլ այդ կարծիքին եմ)։ Երկրորդ՝ հնարավորին չափ շատ ազատության ծարավի և ազատության համար կռվելու պատրաստ մարդիկ հավաքել և նրանց դուրս բերել Իտալիայից. ասենք, Բրունդիզիումը կամ Ալպերն անցնելով։ Եվ երրորդ՝ Հռոմի մասին չմտածելով, Իտալիայում պատերազմ մղել այնքան ժամանակ, ինչքան հնարավոր կլինի, կողոպտել իտալիկներին և հռոմեացիներին, որպես ոխերիմ թշնամիների, նրանցից վրեժ լուծել մեր բոլոր դժբախտությունների և սոսրացումների համար։ Շատ հեռուն նայելը ծիծաղելի է։ Ո՞վ գիտե մութ ճակատագիրն ինչ է թաքցնում։

— Երրորդ առաջարկությունն ակնհայտորեն վատն է,— աշխուժորեն արձագանքեց Սպարտակը։— Իրադարձություններն ինքնահոսի թողնելն հիմարություն է։ Եթե մենք դրան համաձայնենք, չեմ կարծում, որ խելոք կվարվենք։ Ըստ իս, հարկավոր է միայն երկու առաջարկություն քննարկել, եթե որևէ նոր, ավելի լավ բան չհայտնվի։ Երկրորդ առաջարկությունը, անմիջապես երևում է, խոշոր թերություններ ունի. մարդկանց Իտալիայից վախկոտաբար փախչելու կոչ անելով՝ դժվար կլինի նրանց քաջաբար մարտնչելու մղել։ Իսկ մենք դեռ երկար ժամանակ ստիպված կլինենք մարտնչելու։ Մի՞թե հռոմեացիները թույլ կտան հարյուր հազարավոր ստրուկների միանգամից փախչել Իտալիայից։ Ո՞չ։ Ուրեմն մեր դեմ դուրս կբերվեն ընտիր զորքեր լավագույն զորապետների հրամանատարությամբ։ Եվ ստիպված կլինենք կատաղորեն կռվելով անցնել Իտալիայով մեկ, մարտերով հեղքել անցնել երկու պրովինցիաներով՝ Այսբալպյան և Անդրալպյան Գալլիաներով։ Հավանաբար տենատը Զոմպեոսի կամ Մետելլոսի գլխավորությամբ իսպանական մի բանակ կնետի Անդրալպյան Գալլիայի կուսակալ Ֆոնտեոսին օգնելու։ Բայց եթե նույնիսկ հաջողվի դուրս պրծնել և հասնել Ազատ Գալլիա, որտեղ հռոմեացիների տիրապետությունը չի տարածվում, արդյոք գալլերը կցանկանա՞ն մեզ ընդունել։ Երկրում՝ բնակվելու համար ազատ տարածություններ չկան։

— Այդ դեպքում կարելի է անցնել Գերմանիա,— միջամտեց Կրիքսոսը։

— Գերմանիայում էլ ազատ հողեր չկան։ Գերմանները նույնպես փնտրում են ու չգիտեն թե որտեղ բնակեցնեն իրենց էքսպանսարդությանը։ Հենց այդ պատճառով են նրանք ամեն

տարի ներխուժում Գալլիա, ոչ միայն ավարառության համար։

— Ուրեմն ի՞նչ ենք անելու,— անհամբերությամբ հարցրեց Կրիքսոսը,— հեռանալ դու չես ուզում, մնալուն էլ, ինչպես տեսնում եմ, հակված չես։

— Հարկավոր է աչքի անցկացնել բոլոր հնարավորությունները, քննարկել հռոմեական պրովինցիաներում տեղավորվելու տարբերակները, իմանալ այն մարդկանց կարծիքը, ովքեր այնտեղ երկար ժամանակ ապրել են։ Հարկավոր է իրավիճակը հանգամանորեն կշռադատել և բոլորի հետ միասին անկեղծորեն քննարկել։

Այստեղ երկու առաջնորդների զրույցն ընդհատվեց։ Մոտեցան երիտասարդ պահակները և իրենց ավագ ընկերներին կանչեցին խարույկի մոտ։ Թեժ կրակը բոցկլտում էր, կարմրած ածուխները ջերմություն էին ճառագում։ Խարույկի շուրջը փռված թաղիքի վրա նստելը հաճելի էր։ Խորոված ը շատ համեղ էր. հիանալի խորոված մսի և ճարպի կտորներն ախորժելի բույր էին տարածել։ Գավաթները հրաշալի գինով լցվեցին։ Փայտյա բոլորակների վրա պաստեղ ու բանջարեղեն, զանազան համեմունքներ դասավորեցին։

Ընդունված կարգի համաձայն, կարճատև աղոթք ասելով, աստվածներին մատուցեցին առաջին պատառը և գինի հեղեցին նրանց պատվին։ Հաջորդ բոպեին բոլորն ուրախությամբ ծամում էին ծխացող, շատ համեղ միսը։ Ջահել պահակները կըրկին սկսեցին ծիծաղելի պատմություններ պատմել։ Հետո Կրիքսոսի շրջապատից մի երգիչ լարեց քնարը և սկսեց երգել Արեսի ու Աֆրոդիտեի սիրային արկածների մասին, այն մասին, թե ինչպես խաբված էր եղջյուրակիր ամուսինը՝ Հեփեստոսը և թե ինչպես մի անգամ նա դաժան վրեժ լուծեց սիրեկաններից. վարպետորեն հյուսած անտեսանելի ցանցով բռնեց նրանց միանգամայն մերկ և բոլոր աստվածներին ի ցույց խայտառակեց նրանց...

Ընդհանուրի կարծիքով, որը շատ հաճելի անցավ։ Բոլորը տպավորություններով լի վերադարձան ճամբար և հետո հիացմունքով պատմում էին ընկերներին, թե իրենք ինչ են տեսել, ինչ են կերել և թե ինչպես իրենցից յուրաքանչյուրը սպանել է «ամենամեծ վարազին»։

Միայն Սպարտակն ու Կրիքսոսը սովորականի նման գուսպ էին։ Նրանք մտածելու շատ բան ունեին...

V

Ընդլայնելով Հռոմի դեմ պայքարը, ձգտելով այն դարձնել համաիտալիկական, Սպարտակը և նրա գլադիատոր ընկերները մի շարք խորհրդակցություններում քննարկեցին ապստամբական շարժման կարևորագույն խնդիրները։ Նրանք միասին մի շարք ծրագրային որոշումներ ընդունեցին ապստամբության նպատակի, ընթացիկ ու հեռանկարային, ինչպես և հնարավոր դաշնակիցների վերաբերյալ ընդհանուր քաղաքականության մասին։

Այդ որոշումները կայացվում էին թեժ վիճաբանությունների մթնոլորտում։ Բավականին շատ տեսակետներ եղան։ Նույնիսկ այսպիսի առաջարկություններ արվեցին. Հաննիբալի նման, երկրով մեկ անընդհատ տեղաշարժվել՝ կողոպտելով հռոմեացիներին և բոլոր իտալիկներին, քանի որ և՛ սրանք, և՛ նրանք հավասարապես թշնամի են գլադիատորներին ու ստրուկներին, և անհրաժեշտ է դրանցից վրեժ լուծել «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքով։

— Այսպես կոչված «ապագայի» մասին,— ասում էին նրանք,— հարկ չկա առանձնապես մտահոգվելու. ով անընդմեջ կռվում է, բնականաբար, իր անկողնում չի մեռնում։

Նման պնդումը (իսկ դա բազմազան տարբերակներով առաջարկվեց) վճռականորեն մերժվեց մեծամասնության կողմից։

— Այդ կերպ մեր դեմ կլարենք ամբողջ Իտալիայի բնակչությանը, վրդոված ասում էին նրանք։— Դա էլ հենց ձեռնտու է հռոմեացիներին։

Հետագա քննարկման ընթացքում հավաքվածները որոշեցին. գործողությունների ընդհանուր ծրագիրը հարկավոր է կազմել այնպես, որ առավելագույն չափով հաշվի առնվի Հռոմի դեմ պատերազմող ուժերի (գլադիատորների և ստրուկների) կամ այդ պատերազմում նրանց օժանդակող (քաղաքային պլեբեյների, Իտալիայի գյուղացիության առավել աղքատ ու անանկացած մասի) խավերի արմատական պահանջները։

Գլադիատորների պահանջների վերաբերյալ զգալի տարաձայնություններ չառաջացան։ Ապստամբական բանակի հրամանատարական կազմը հենց բաղկացած էր նախկին գլադիատորներից։ Նրանք չիմովին զգացել էին գլադիատորության նող-

կայունություններ և քաջ գիտեին իրենց միջավայրի պահանջները։ Այդ պատճառով ծրագրային պահանջների մի մասն արագորեն ձևակերպվեց և ընդհանուր հավանություն գտավ։

Շատ ավելի բարդ էր ապստամբների մյուս խավերի՝ ստրուկների, քաղաքային պլեբեյների, գյուղացիության, այս կամ այն պատճառներով ապստամբությանը համակրողների ծրագրային պահանջների ձևակերպումը։ Այդ խավերի շահերը բավականաչափ իրարամերժ էին և նույնիսկ հիվանդագին դիպչում էին միմյանց։ Կենսականորեն անհրաժեշտ էր այդ պահանջների այնպիսի զուգակցում գտնել, որպեսզի դրանք անընդհատ վեճերով ու բախումներով չպատակտեին շարժումը, ինչի հիման վրա կարող էին զարգանալ դավաճանությունն ու պատրությունը։

Այս հարցում առանձնապես թեժ բանավեճ սկսվեց։ Բազմաթիվ կրտսեր հրամանատարներ՝ նախկին գլադիատորներից և ստրուկներից, բոլորն էլ գալլեր ու գերմաններ, պահանջում էին անմիջապես ու բացահայտորեն դնել այսպիսի ծայրահեղ պահանջներ. կործանել և կողոպտել Հռոմը, ոչնչացնել այն, որպես աշխարհում ամենահանցավոր ցեղախմբի քաղաքական կենտրոն, առհավետ արգելել գլադիատորությունն ու ստրկությունը որպես մարդկային բնությանը հակառակ կացություն, գլադիատորներին ու ստրուկներին տալ քաղաքացիական իրավունքներ և ստրկատերերի ունեցվածքը, «նախնիների պատգամների» հիման վրա առավել արդարացի կարգեր հաստատել։ Նրանց իր ազդեցությամբ աջակցում էր Կրիքսոսը. չէ՞ որ նա սամնիտ էր, իսկ սամնիտները երդվել էին Հռոմը ջնջել երկրի երեսից։ Նրանց բոլորին առարկում էր Սպարտակը։ Նա ասում էր.

-- Քվիրիտների քաղաքը վաղուց կազմավորված և հեղինակավոր քաղաքական կենտրոն է։ Իտալիայի ոչ բոլոր ցեղերն են ցանկանում Հռոմի ավերումն ու կողոպուտը։ Նման ծայրահեղ պահանջը՝ ժամանակավրեպ է, այն անմիջապես ապստամբությունից կվանի զգալի քանակությամբ մասնակիցների, ինչպես նաև համակրողների։

Սպարտակի փաստարկները, թեև ոչ անմիջապես, բայց ի վերջո պարզ դարձան բոլորին։ Այսպիսով, ապստամբների ղեկավարների կողմից հետագա պայքարի համար ընդհանուր ծրագրի ընդունման հետևանքով ինչ-որ մի հավասարակշիռ դրություն առաջացավ. սոցիալական տարբեր խմբերի հիմնական

պահանջները այս կամ այն չափով բավարարվեցին, և յուրաքանչյուրն ապագայի հույսով կարող էր օժանդակություն ցույց տալ ապստամբությանը, առանց իր շահերն անսահմանորեն սահմանափակված համարելով։ Իսկ այս կապակցությամբ ապստամբության առաջնորդները միանգամայն որոշակի հավատիքներ տվեցին. հաղթանակի դեպքում սենատի նկատմամբ միջոցներ կձեռնարկվեն, որոնք կփշրեն Իտալիայի քաղաքական և սոցիալական կառուցվածքը և կնպաստեն համընդհանուր արդարության՝ «Արևի պետության», հաստատմանը։ Թե հատկապես ինչ էր իրենից ներկայացնելու այդ պետությունը, բացատրում էին Սպարտակի շրջապատում եղած փիլիսոփաները։ Քանզի, ինչպես Արիստոնիկոսը Պերգամոնում որպես խորհրդատուի և մտերմի իր մոտ պահում էր Տիբերիոս Գրակքոսի ընկեր, փիլիսոփա Բլոսիոսին, իսկ Ալեքսանդր Մակեդոնացին՝ Արիստոտելին և շատ ուրիշներին, այդպես էլ Սպարտակը չէր խուսափում փիլիսոփաների հետ շփվելուց։ Անտիկ դարաշրջանում նրանց կարելի էր հանդիպել ամենուրեք. բաղնիքում, շուկայում, արհեստավորի արհեստանոցում, կրկեսում, պարապ-սարապ մարդկանց շրջապատում և այլն։ Շատ հաճախ այդ փիլիսոփաների կյանքը մի էր լինում զրկանքներով ու ստորացումներով։ Ուստի նրանց մեջ առանձնապես ուժգին էր հակումը արդարության նկատմամբ, տանջալի մտորումը Արիստոտելի, Պլատոնի և փիլիսոփայության մյուս լուսատուների՝ պետության ու հասարակության մասին, անարդարացի աշխարհը վերափոխելու մասին աշխատությունների վրա։ Բայց հենց այդ մասին էլ մտածում էր Սպարտակը։

Ապստամբության հաջող ընթացքը Սպարտակի առջև դնում էր բարձրագույն իշխանության կազմակերպման խնդիրը։ Նրա տրամադրության տակ երեք հնարավոր տարբերակ կար. 1) սիցիլիական ստրուկների (երկրորդ ապստամբության ժամանակաշրջան) պետական կարգը, 2) հռոմեացիների պետական կարգը, 3) դաշնակիցների պետական կարգը։ Առաջին օրինակը բացահայտորեն չէր համապատասխանում նոր պայմաններին. ստրուկների գերակշռող մեծամասնությունը այնպիսի երկրներից էին, որտեղ չգիտեին հելլենիստական թագավորների անսահմանափակ թագավորական իշխանության մասին։ Երկրորդ օրինակը ցանկալի չէր կարող լինել հռոմեական սահմանադրու-

թյան բազմաթիվ հակաժողովրդական գծերի պատճառով։ Ամենաարնոպանելին թվում էր երրորդ օրինակը։ Հենց դաշնակիցների պետությունից էլ սպարտակյան ապստամբներն օրինակ վերցրին, ընդհանուր սխեմայի մեջ ըստ ժամանակի ոգու և փիլիսոփայական առավել արմատական տեսությունների փոփոխություններ մտցնելով։ Իրենց իշխանության վերջնական նպատակն ապստամբները, որն ընդհանուր առմամբ տիպական է բոլոր մասսայական ապստամբությունների համար, տեսնում էին Փիդոբասի խոսքերով ասած «աղատ մարդկանց ծայրաստիճան գերիշխանություններ պատճառելու մեջ» (այսինքն՝ ստրկատերերին), իրենց տերերի նկատմամբ լիակատար հաղթանակ տանելու համար պայմաններ ստեղծելու մեջ (Սինեզիոս)։

Սպարտակն ու նրա համախոհները որևէ նոր բան հնարելու առանձին կարիք չէին զգում։ Հին Հելլադայի, Իտալիայի և Թրակիայի պարզագույն փիլիսոփայական միտքը պարզորոշ հասկացություններ էր մշակել հասարակական կյանքի կարևորագույն կատեգորիաների, հասարակական վերափոխությունների ուղիների և մեթոդների վերաբերյալ։ «Ազատությունն այն է,— աղդարարում է բանաստեղծներից մեկը,— որ, երբ քաղաքացուն հարցնում են. «Ո՞վ է ցանկանում քաղաքի համար օգտակար մի բանի մասին հրապարակայնորեն տրտահայտվել»,— ցանկացողը ելույթ է ունենում ժողովրդի առաջ, իսկ ով չի ցանկանում, լռում է։ Ի՞նչը կարող է ազատ պետության համար դրանից արդարացի լինել» (Եվրիպիդես)։

Վերջին հաշվով Իտալիայի ամբողջ հարավում կառավարման որոշակի մարմիններ ստեղծվեցին՝ սկսած առանձին կալվածքներից և վերջացրած ապստամբների կողմն անցած քաղաքներով։

Զգալի հույն ազդաբնակչությամբ, Տարենտինյան ծովածոցից քիչ հեռու գտնվող, իր շրջակայքում բազմաթիվ անասնահոտեր և հոլիվներ ունեցող, առևտրաարհեստավորական հայտնի կենտրոն, Ֆուրիք քաղաքը, ոչ առանց որոշ վիճաբանության, ապստամբներն ընտրեցին որպես իրենց մայրաքաղաք։ Այստեղ, ինչպես Իսպանիայում Սերտորիոսի մոտ, ինչպես սիցիլիական ստրուկների երկու ապստամբությունների ժամանակ Էվնոսի և Սալվիոսի (Տրիֆոն) մոտ, սկսեց գործել «իոհեմությամբ աչքի ընկնող այրերից» բաղկացած ապստամբների խորհուրդը։

Սպարտակի գլխավորությամբ ապստամբական պետության ստեղծումը հռոմեացիներին շատ դժվար կացության մեջ դրեց. «ստիպեց դառը զգացումներ ու դաժան վախ զգալ և շատ շարշարվել սոսկալի պարտությունից խուսափելու համար» (Ավգուստինոս Երանելի)։ Այդ պետության կարգերը հռոմեացիներին ներկայանում էին որպես խենթ «բաքոսատոն» և պատկերվում նույն այն ոգով, ինչպիսին նրանք պատկերում էին սիցիլիական ստրուկների պետությունը. «Երկրում ամենուրեք տեղի էր ունենում հարուստների ունեցվածքի բռնի հափշտակումը։ Նրանք, ովքեր նախկինում իրենց հարստությամբ և հոչակով առաջին տեղերն էին զբաղեցնում քաղաքներում, հիմա ճակատագրի անսպասելի շրջադարձի բերումով, փախստական ստրուկների կամայականության պատճառով ոչ միայն զրկվում էին կարողությունից, այլև ստիպված էին վիրավորանքներ կրել ազատների կողմից... Ընդհանրապես քաղաքներում տիրում էր քաոս և օրինավոր իրավունքների ոտնահարում, քանզի խռովարարները տիրելով արձակ վայրերին, երկիրը դարձնում էին անանցանելի։ Նրանք վրեժ էին լուծում իրենց տերերից և չէին հագենում անսպասելիորեն իրենց բաժին ընկած երջանկությունից»։

Այսպես էին ընթանում իրադարձությունները հռոմեացիների դեմ ապստամբած Սիցիլիայում (մ. թ. ա. 104—101 թթ.)։ Հավանաբար, նույն ձևով էին զրանք դասավորվել նաև ապըստամբած Իտալիայում։

Սպարտակը բոլոր ուժերով ջանում էր վերջ տալ անարխիական երևույթներին։ Որպես հեռատես մարդ, նա ցանկանում էր շարունակել Ափինիոնի ուղին, որը Սիցիլիայում իր զինակիցներին ասում էր, թե «անհրաժեշտ է պահպանել երկիրը և այնտեղ գտնվող անասուններին ու պաշարները, ինչպես իր սեփականները», թե նրանք, ովքեր զբաղված չեն պատերազմում, պետք է «մնան իրենց նախկին գործին և հոգ տանեն իրենց տնտեսության մասին, կարգ ու կանոն պահպանելով այնտեղ»։ (Դիոդորոս)։ Ո՛չ մի անգամից, ո՛չ մեկ ակնթարթում, բայց զրությունն աստիճանաբար կայունանում էր։

Շատ շուտով ապստամբ ստրուկների պետությունն իր ուժը ցույց տվեց։ Իսկ ինչ էր իրենից ներկայացնում հռոմեացիների՝ նրանց դիմակայող պետությունը։

Գլուխ տասնչորրորդ

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմում պետական կառավարման սիստեմը ձևավորվել էր վաղ հանրապետական ժամանակաշրջանում և այնուհետև բազմիցս ենթարկվել էր զանազան փոփոխությունների։

Իշխանության համար նոբիլիտետի և հեծյալների դասի (Մարիոսի ու Սուլլայի ժամանակաշրջան) կատաղի երկպառակտիչ պատերազմից հետո հաղթանակած դիկտատորը մի շարք կարևորագույն ռեֆորմներ կատարեց, որոնք արիստոկրատական ռեժիմն ամրապնդող նպատակներ էին հետապնդում։ Այսպիսով, Սպարտակի ապստամբության ժամանակաշրջանում հռոմեական պետության կառուցվածքը հետևյալ տեսքն ուներ։ Բարձրագույն մագիստրատները՝ կոնսուլներն էին։ Նրանց ամեն տարի ընտրում էին հունիս ամսին Մարսյան դաշտում։ 6 ամիս հետո, հունվարի 1-ին նրանք անցնում էին իրենց պարտականությունների կատարմանը։ Իտալիայի սահմաններում կոնսուլներն առանց սենատի հատուկ որոշման չէին կարող զորքի հրամանատարներ լինել և զուրկ էին ռազմական իշխանությունից։ Հատարակական վայրերում կոնսուլներին ուղեկցում էին ձողիկների կապոցներ ունեցող 12 ծառայող-լիկտորներից բաղկացած պատվավոր պահակախմբեր։ Քաղաքի սահմանագծից դուրս ձողիկների կապոցի մեջ դրվում էին տապարներ, որոնք խորհրդանշում էին կոնսուլների իշխանությունը նրա կողքին գտնվող մարդկանց կյանքի վրա (քաղաքի սահմանագծում կոնսուլի իշխանությունը սահմանափակում էին ժողովրդական տրիբուններն ու ժողովրդական ժողովը)։

Հռոմեական պաշտոնական անձանց մեջ երկրորդ տեղը գրաղեցնում էին պրետորները։ Նրանք ութն էին։ Նրանցից մեկը՝ քաղաքացինը՝ քննում էր Հռոմի քաղաքացիների վեճերը։ Մնացածները հանդես էին գալիս որպես քրեական հանձնաժողովների մշտական նախագահներ և վարում էին քրեական դատավարությունը։ Քաղաքից դուրս գալով, պրետորները ստանում էին ձողերի և տապարների նույնանման կապոցներով վեց լիկտորներից բաղկացած պատվավոր պահակախումբ։

Կոնսուլները, պրետորները և նրանց հետևող կուրուլային էդիլները հանդիսանում էին պատվավոր (կուրուլային) մագիս-

տրատներ։ Նրանք հագնում էին կարմիր զոլով պարեգոտներ և ծառայողական պարտականությունները կատարելիս նստում էին առանց թիկնակի, փղոսկրով զարդարված հատուկ աթոռի վրա։

Բարձրագույն պաշտոնական անձինք՝ կոնսուլները և պրետորները, ընտրվում էին ցենտուրիատական կոմիցիաներում՝ քաղաքացիների ժողովներում, որոնք հնագույն սովորության համաձայն բաժանված էին զորակոչային միավորների (նրանցից յուրաքանչյուրը զորահավաքի ժամանակ հատկացնում էր հարյուր ռազմիկ)։

Քաղաքացիների նման ցենտուրիաները 373-ն էին։

Մնացած մագիստրատներին՝ էդիլներ, տրիբուններ, քվեստորներ, ընտրում էին տրիբուտական կոմիցիաներում՝ ֆորումում, բարձրագույն մագիստրատների նախագահությամբ։ Ընդորում պաշտոնական անձանց ընտրությունը կատարվում էր հետևյալ հաջորդականությամբ. կոնսուլներ, ժողովրդական տրիբուններ, պրետորներ, կուրուլային էդիլներ, պլեբեյական էդիլներ։

Քաղաքական և կրոնական բնույթի կարևորագույն հարցերի մասին քաղաքացիներին տեղյակ պահելու նպատակով Կապիտոլիական տաճարի հարավարևելյան լանջին («կոմիցիայում») կամ կենտրոնական հրապարակում՝ ֆորումում, գումարվում էին հավաքներ, ժողովրդական ժողովներ։ Դրանցում քաղաքացիներին իրավունք էր վերապահվում կարծիքներ հայտնել պետությունների և հաղորդագրությունների վերաբերյալ, ինչից հարկորեն օգտվում էին տրիբունները։

Բոլոր հռոմեական քաղաքացիները գրանցված էին տրիբշրջաններում։ Դրանք 35-ն էին. չորս քաղաքային (Սուբուրյան, Պալատինյան, Էսքվիլինյան, Կոլինյան) և երեսունմեկ գյուղական (Առնյան, Ռոմիլյան և այլն)։ Տրիբները հռոմեական քաղաքական կյանքում խոշոր դեր էին խաղում։

Իտալիայում իրենց լիազորությունների ժամկետը վերջանալուց հետո բարձրագույն մագիստրատները (կոնսուլներ, պրետորներ) մեկնում էին պրովինցիաները։ Այդ նպատակով գոյություն ունեցող պրովինցիաներից ընտրվում էին երկու կոնսուլական և 8—10 պրետորական պրովինցիաներ։ Մնացածներում, իրադրությունից ելնելով, նախորդ տարին այնտեղ ուղարկված կուսակալների իշխանությունը երկարաձգվում էր ևս մեկ տարով։ Մինչև 70 թվականը հռոմեացիները հետևյալ պրովինցիա-

ներն ունեին. 1. Սիցիլիա, 2. Սարդինիա և Կորսիկա, 3. Հեռավոր Իսպանիա, 4. Մերձավոր Իսպանիա, 5. Այսրալպյան Գալլիա, 6. Իլիրիա, 7. Մակեդոնիա, 8. Աքայա, 9. Աֆրիկա, 10. Ասիա, 11. Անդրալպյան Գալլիա, 12. Կիլիկիա, 13. Կիրենա, 14. Բիթանիա։

Սպարտակի ապստամբության ժամանակաշրջանում կոնսուլական էին Այսրալպյան Գալլիան և Բիթանիան։ Կուսակալական իշխանության ժամկետը մի քանի տարվա ընթացքում երկարաձգվում էր. Կիլիկիայում (Լ. Լուկուլլոս), Մակեդոնիայում (Մ. Լուկուլլոս), Մերձավոր Իսպանիայում (Մետելլոս) և Հեռավոր Իսպանիայում (Պոմպեոս)։

Պրետորներից հետո հաջորդ պաշտոնյաները էդիլներն էին։ Այդ պաշտոնին հավակնողները պետք է պարտադիր 36—38 տարեկան լինեին (պրետորները՝ 40 տարեկան, կոնսուլները՝ 42)։ Երկու պատվավոր «կուրուլական» էդիլների վրա դրված էր հասարակական խաղեր կազմակերպելու, շուկայական գործերի, դատավարության, հրովարտակներ կազմելու պարտականությունները։ Երկու «պլեբեյական» էդիլներ իրականացնում էին Հռոմի ոստիկանական վերահսկողությունը և քաղաքային պահակախմբի հատուկ ստորաբաժանումների ղեկավարությունը, հսկում էին շուկաներին ու մատակարարմանը, շինարարությանը, հետևում հանդարտությունը, ջրմուղը, տաճարները բարվոք վիճակում պահպանելու գործին։ Նրանք խորհրդի էին հավաքվում Ցերիրա աստվածուհու տաճարում։

Էդիլներից մեկ աստիճանով ցած կանգնած էին ժողովրդական տրիբունները։ Այդ պաշտոնը զբաղեցնելու համար պարտադիր էր 33-ից 35 տարիքը և պարտադիր էր պլեբեյական դասին պատկանելությունը (որոշ պատրիկներ, օրինակ Կլոդիոսը, այդ օրենքը շրջանցում էին դառնալով պլեբեյների որդեգիրներ)։ Տրիբունները տասն էին։ Սուլլայի օրենքի համաձայն նրանք կորցրել էին պետական գործերին միջամտելու, իրենց վետոյի («արգելում եմ») միջոցով գործադիր իշխանությունների և սենատի որոշումների կատարումն արգելակելու և պաշտոնյա անձանց (նույնիսկ կոնսուլներին) ձերբակալելու իրավունքները։ Սուլլայական կոնստիտուցիայի համաձայն նրանց թույլատրվում էր հանդես գալ որպես սենատի առաջ հռոմեական քաղաքացիների գործերի սոսկ հավատարմատարներ, ժողովրդական ժողովում ելույթ ունենալու միայն սենատի նախօրոք հավա-

նություն տված առաջարկություններով։ Ժողովրդի մեջ անկարգությունների հանգեցնող դեմագոգիական գործունեության համար տրիբունները իրենց լիազորությունների ժամկետը վերջանալուց հետո ենթարկվում էին դատական խիստ հետապնդումների։ Առավել ականավոր ժողովրդական տրիբունները (Լ. Սիցինիոսը, Լ. Կվինկցիոսը, Կ. Մակրոսը և ուրիշներ) ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել իրենց լիազորությունների և կուսակցական (այդ կուսակցությանն էին պատկանում Պոմպեոսը, Կրասոսը, Ցեսեգոսը) շահերի սահմանափակումների հետ, բոլոր ուժերով ձգտում էին ընդլայնել դրանք։

Վերջապես գալիս էր քվեստուրան։ Քվեստորը պետք է լիներ 28—29 տարեկան։ Քվեստորները քսանն էին։ Երկուսը՝ ամենապատվավորները, տնօրինում էին կենտրոնական գանձարանը Հռոմում, մեկը՝ Իտալիայի գանձարանը, երկուսը ծառայում էին կոնսուլների մոտ, մնացածները՝ պրովինցիաներում կուսակալների մոտ։

Բոլոր պետական պաշտոնները սերտորեն առնչվում էին բանակային ծառայության հետ։ Պետական հին կանոնադրությունը (Սպարտակի ապստամբության ժամանակ, ասենք, այդ բանն արդեն շատ չէր պահպանվում) ասում էր. «Ոչ մեկն իրավունք չունի պետական պաշտոն զբաղեցնել, առանց ռազմական արշավանքներին 10 տարի մասնակցելու»։

Կուսակալները մեկնում էին պրովինցիաները իրենց քաղաքացիական և զինվորական լիակատար իշխանությամբ՝ որպես պրոմագիստրատներ՝ այսինքն՝ նոր տարվա մագիստրատների տեղակալներ։ Նրանց իշխանությունը սահմանափակվում էր իրենց պրովինցիայով, կենտրոնական իշխանության վրա նրանք ազդում էին անուղղակիորեն՝ դործընկերներին կաշառելու («նվերներ») և սենատի անդամ ազդեցիկ ազգականների միջոցով։

Պրովինցիաներից վերադառնալուց հետո նախկին կոնսուլները և պրետորները, ինչպես նաև նրանց կրտսեր ընկերները՝ քվեստորները, ընդդրկվում էին սենատի կազմի մեջ, եթե իհարկե պրովինցիայի բնակիչները չէին կարողանում մերկացնել նրանց ծանր հանցագործությունները և դատարանով աքսորել։ Բայց նման բան շատ հազվադեպ էր պատահում, քանի որ սենատորները կատաղորեն պաշտպանում էին միմյանց։

Պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ սենատը, բաղկացած էր մոտ 300—350 հոգուց։

Սենատի իշխանության ոլորտը արտակարգ լայն էր։ Այն տնօրինում էր դեսպանական գործերը, պրովինցիաների կուսակալներ էր նշանակում, ընդունում էր կուսակալների հաշվետվությունները, նրանց համար պարտադիր որոշումներ էր հրատարակում, պարգևատրում էր տրիումֆներով, նշանակում էր տոնակատարություններ և մաղթանքներ, հետևում էր պետական ֆինանսների բաշխմանը, տաճարների կառուցմանը, քննարկում էր ժողովրդական ժողովում առաջարկված օրինագծերը, պետության ներսում խաղաղության պահպանման միջոցները, թունավորման, հայրասպանության գործերը և այլն։

Սենատում առաջատար դեր էր խաղում սենատի պրինցեպսը, նա, ում աղգանունն առաջինն էր սենատորների ցուցակում և առաջինն էր իր կարծիքը հայտնում (որպես զեկուցողներ ամենից հաճախ հանդես էին գալիս կոնսուլներն ու պրետորները), ով առաջինն էր առաջարկություն մտցնում և ստորագրում ձևակերպված որոշումը։ Սովորաբար պրինցեպսներ լինում էին. 1) նախկին ցենզորները, 2) փայլուն հռետորները, 3) բարոյական բացառիկ ազդեցություն ունեցող մարդիկ (սենատորի տարիքը, նրա ծագումը, քաղաքական ծառայությունները քիչ դեր էին խաղում)։

Սպարտակի ապստամբության ժամանակաշրջանում այսպիսին էր Հռոմեական հանրապետության պետական կարգը, որի մեջ բոլոր դասերը ձգտում էին իրենց համար շահավետ փոփոխություններ մտցնել։

Հենց այս հռոմեացիների, նրանց հասարակական և պետական կարգի, նրանց ապրելակերպի կատաղի թշնամիներն էին շատ ժողովուրդներ, այդ թվում նաև նրանց մերձավորագույն հարևանները՝ սամնիտները և օսկերը։ Հենց նրանց մասին է խոսվելու ստորև, Սպարտակի ամենաերևելի զինակիցներից մեկի՝ Կրիքսոսի կենսագրության կապակցությամբ։

Գլուխ տասնմեկերորդ

ԽՈՍՔ ԿՐԻՔՍՈՍԻ ՄԱՍԻՆ

Սամնիտները Իտալիայի ամենանշանավոր ու հարուստ ցեղերից մեկն էին։ Ըստ ավանդության, սամնիտներն անջատվել էին սաբիններից «սրբազան դարնան» ժամանակ և Մարս աստծու սուրբ կենդանու՝ ցուլի, ցեղի տոտեմի միջոցով բերվել էին նոր հողեր, որտեղ նրանք հիմնադրել էին իրենց նոր մայրաքաղաք Բովիանումը (Ցուլի քաղաք)։ Հողերն արգավանդ դուրս եկան, իսկ սամնիտներն աշխատասեր էին, նրանց առաջնորդները՝ գինվորական արշավանքներում հաջողակ։ Սամնիտներն արագորեն հարստացան, քանակապես աճեցին, ձուլվեցին մի շարք արյունակից ցեղերի հետ։ Նրանք շրջում էին գույնզգույն հագուստներով, արծաթով ու ոսկով զարդարված զենքերով, զբաղվում էին անասնապահությամբ (դա նրանց գլխավոր զբաղմունքն էր)։ Լինելով քաջարի գինվորներ, լեռներում պատերազմելու սովոր, Բշնամիներին դարանակալող, սամնիտները հռոմեացիների հետ բախվեցին Կապուայի և Կամպանիայի համար։

Սամնիտները երեք անգամ էին կռվել Հռոմի դեմ (մ. թ. ա. 343—290 թթ.)։ Մարտերում ցուցաբերել էին ցասում և մոլեգնություն, վեց անգամ խախտել էին հաշտության պայմանը, սրբազան ուխտերով և մարդկային զոհաբերություն մատուցելով երդվել էին ավերել Հռոմը և ոչնչացնել հռոմեացի անունն իսկ։ Բայց ճակատագիրը նրանց ընդառաջ չգնաց։ Հռոմեացիները Ֆաբիոսների ու պապիրեոսների երկու սերնդի կոնսուլների գլխավորությամբ հաղթեցին նրանց և սամնիտական քաղաքներն ավերակների վերածեցին։ Հռոմեական զորավարները սամնիտների դեմ տարած հաղթանակների պատվին 24 անգամ տրիումֆ տոնեցին։ Բայց և այնպես սամնիտները չէին հանձնվում։ Նրանք կրկին վերակառուցում էին իրենց քաղաքները, վերականգնում տնտեսությունը և ընկած ռազմիկների քաջագործությունները գովերգող երգիչների միջոցով սերնդեսերունդ երիտասարդությանը փոխանցում էին նախնիների ատելությունը Հռոմի նկատմամբ, հիշեցնելով, որ գալու է նախնիների երդումը կատարելու՝ Հռոմը հիմնահատակ կործանելու ժամանակը։ Ավելի ուշ ժամանակներում սամնիտները Գ. Մարիոսի մոլեգին կողմնակիցներն էին, քանի որ սենատի դեմ պայքարելու ընթացքում նա խոստա-

ցել էր կատարել նրանց բոլոր այն պահանջները, որոնց չէր համաձայնում սենատը (քաղաքացիական իրավունքներ պարգևել նրանց, հավասարաչափ բաշխել բոլոր 35 տրիբների միջև, սամնիտների ղեկավարներին մտցնել սենատի կազմի մեջ)։

Այդ սամնիտների մեջ մի ճյուղ էր կազմում նաև օսկերի հարավիտալիկական ցեղը (մ. թ. ա. V դարում հպատակվելով սամնիտներին, ձուլվել էին սրանց)։ Օսկերը խոսում և գրում էին մի քանի լեզուներով՝ հունարեն, ումբրիերեն, էտրուսկերեն։ Շատերը նաև լատիներեն գիտեին։ Օսկերի լեզուն իր գրությունն ու բարբառային առանձնահատկություններն ուներ և բաժանվում էր չորս խմբի։ Օսկերենը Հռոմի դեմ ապստամբած Իտալիկական ֆեդերացիայի գլխավոր լեզուն էր։ Մ. թ. I դարում Կամպանիայի բնակչությունը դեռևս խոսում էր օսկերեն։

Հենց այդ օսկերի ցեղին, Կամպանիայի բնիկ բնակիչների, որոնց հռոմեացիներն իրենք ավելի հաճախ սամնիտներ էին կոչում, պատկանում էր և Կրիքսոսը (մոտ մ. թ. ա. 110—72 թթ.)։ Նրա նախնիները որպես կարթագենցիների զորավար Հաննիբալի դաշնակիցներ մասնակցել էին Հռոմի դեմ պատերազմին (մ. թ. ա. 218—201 թթ.) և բաժանել էին պարտվածների դառը ճակատագիրը։ Կրիքսոսը նրանցից էր ժառանգել կատաղի թշնամանքը Հռոմի նկատմամբ, որպես բոնակալի և ստրկացնողի, ինչն ավելի էր խորացել Դաշնակցային պատերազմի ժամանակ (մ. թ. ա. 90—88 թթ.)։ Այդ պատերազմին նա մասնակցել էր ատակավին պատանի հասակում, նախ կռվել էր դաշնակիցներին հռոմեական քաղաքացիական իրավունքներ տալու համար, իսկ հետո հանուն Իտալիայի ազատագրության՝ սամնիտական առաջնորդներ Գայոս Պապիոս Մուտիլոսի և Տրեբացիոսի գլխավորությամբ։ Այդ անհաջող պատերազմում Կրիքսոսը ճաշակել էր ընկերների և հարազատների կորստյան դառնությունը։ Նրանցից մի քանիսը զոհվել էին Հռոմի կրկեսում, որտեղ ռազմագերիներին բերել և Սուլլայի հրամանով կոտորել էին, Սուլլայի, որը ցանկանում էր այդպիսով վրեժ լուծել սամնիտներից՝ իր Լրդվյալ թշնամիներից։ Երբ ռազմագերիների հուսահատ ճիչը հասավ սենատի կուրիային, և սենատորները սարսափահար վեր թռան տեղերից, Սուլլան սառն ու հանգիստ նրանց վերադարձրեց իրենց տեղը. «Մի՞ անհանգստացեք, հայրե՞ր, իմ հրամանով պատժում են մի խումբ սրիկաների»։ Մյուս սամնիտ-գերիների հետ միասին, որոնց բախտ վիճակվեց ողջ մնալ, Կրիքսոսը

լիովին կրեց հռոմեական ստրկության լուծն ու ստորացումը։ Լինելով քաջ և անսասան մարդ, նա երկու անգամ փախավ տերերից, բռնվեց, ենթարկվեց մտրակածեծի և նստեց էրգաստուլում։ Անհնազանդության համար նրան բազմիցս սովատանջում էին մենախցերում, ծեծում էին, սպառնում խարանել։ Բայց նա չէր ընկճվում։ Սեփական փորձով համոզվելով, որ միայնակ փախուստները անարդյունավետ են, նա անցնում է խմբակային և զինված փախուստի, ինչպես մինչ այդ շատերն էին արել։ Թափառելով Իտալիայով մեկ, Կրիքսոսը հարձակվում է խոշոր կալվածքների վրա, սպանում ստրկատերերին և իր խումբն է վերցնում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են մարտնչել։ Կրիքսոսի կյանքի այս հատվածը, ինչպես երևում է, կարելի է շատ հավանական համարել։ Հետագան նկարագրելու համար ստիպված ենք հենվելու որոշ ենթադրությունների վրա։

Անտիկ շրջանը,— առանձնապես անտիկը,— անվերջանալի քաղաքական արկածախնդրությունների դարաշրջան է։ Անհանգիստ ու անզուսպ բնավորության տեր մարդիկ որպես զինվորներ և վարձու զորավարներ թափառում էին տարբեր երկրներում, մասնակցում բազմապիսի խռովությունների ու հեղաշրջումների, հաճախակի այցելում էին կրոնական զանազան կենտրոններ (Դելֆիք, Պեսինունտոս, Սամոթրակե կղզի, Կնոս և այլն) աստվածներից իրենց մտահղացումների վերաբերյալ հավանություն ստանալու համար։ Կրիքսոսը բնավորությամբ պատկանում էր այս կարգի մարդկանց թվին և, հավանաբար, նույնպես բացառություն չէր կազմում իր զորձելակերպով։ Կարելի է ենթադրել, որ հռոմեական ստրկությունից դուրս սլրծնելով, նա իր բախտակից ընկերների հետ կարողացել է գնալ հասնել Ազատ Գալլիա, այնտեղ ծառայության է մտել տարբեր իշխանների մոտ որպես վարձու հրամանատար (գուցե այդ շրջանում նա եղել է Թրակիայում և ուրիշ երկրներում, շփվել գերմանների հետ և հենց այնտեղ էլ սովորել է թրակերեն, գալլերեն և գերմաներեն, որոնց իմացությունն այդքան պետք եկավ նրան Իտալիայում ստրուկների ապստամբության ժամանակ)։

Մ. թ. ա. 83 թվականի վերջին Կրիքսոսը գալլական ջոկատով վերադարձավ Իտալիա, մտավ սամնիտների գլխավոր հրամանատար Պոնտիոս Թելեզինոսի բանակը։ Այդ զորքերի կազմում նա մարտական շատ քաջագործություններ կատարեց, և

նրա անունը հռչակվեց սամնիտների ու հռոմեացիների շրջանում։

82 թվականին Սուլլան վերջնականապես հաղթեց և իր թշնամիներին ենթարկեց մահապատիժների, տուգանքների, բռնագրավումների, աքսորի և այլն։ Կռվի վտանգներից ողջ մնացած և վերստին գերության դառնությունը ճաշակած Կրիքսոսին և նրա ընկերներին որպես պատիժ դարձրին գլադիատորներ։

Կրիքսոսը գլադիատոր մնաց գրեթե յոթ տարի, բազմաթիվ նլույթներ ունեցավ արենայում, դարձավ բարձրագույն կարգի գլադիատոր, մեծ փառք վաստակեց։ Բայց ոչ մի վայրկյան նրան հանգիստ չէր տալիս ամեն գնով ազատություն ձեռք բերելու, Հռոմի դեմ պատերազմ վերսկսելու և թշնամիներից վրեժ լուծելու միտքը։

Լենտուլլոս Բատիատոսի դպրոցում նրա հանդիպումը Սպարտակի հետ վճռեց Կրիքսոսի ճակատագիրը։ Նա վաղուց էր հետևում այդ մարդուն, որի փառքը, որպես նախկին գլադիատորի, թնդում էր ամբողջ Իտալիայում։ Կրիքսոսն առաջինը սիրտ արեց անկեղծ խոսակցություն բացել ապագայի հեռանկարների մասին և առաջարկեց ազատության և տիրող կարգերի տապալման նպատակով գլադիատորների խռովություն բարձրացնել։ Նույն բանը մտածող և այդ հանդուգն ծրագրի իրագործման համար դյուրությամբ թեկնածուներ ընտրող Սպարտակը համաձայնություն տվեց։ Աքսպիոսով, Սպարտակի և Կրիքսոսի ուժերով, խելքով ու հեղինակությամբ կազմակերպվեց խռովությունը, որն ավելի ճիշտ մի կազմակերպության մեջ գլադիատոր-խռովարարների երկու խմբի միավորումն էր (մեկը խմբվել էր Կրիքսոսի, մյուսը՝ Սպարտակի և Էնոմայոսի շուրջը)։

Հին հեղինակներից ոչ մեկը չի կասկածում խռովության կազմակերպման և պատերազմի ծրագրման գործում Կրիքսոսի ակնառու դերի վերաբերյալ, և V դարի հեղինակ Սինեզիոսը իր «Թագավորության մասին» ճառում ասել է. «Նրանք, ովքեր միացան Կրիքսոսին և Սպարտակին, իրենց առաջնորդների երկրներից չէին և բոլորն էլ նույն ազգությանը չէին պատկանում, բայց ճակատագրի ընդհանրությունը և բարենպաստ դիպվածը միավորել էին նրանց ընդհանուր գործի մեջ»։ Նույն ճառի մի այլ հատվածում նա ավելացնում է, որ սարուկների պատերազմը սկսել էին «միայն բոլոր ատվածներին արհամարհող երկու մարդ», այսինքն՝ Սպարտակը և Կրիքսոսը։

Պատերազմի ընթացքում Կրիքսոսը ցուցաբերեց հրաշալի շատ հատկանիշներ՝ անվախություն, համառություն, հիանալի մարզվածություն, մեծ եռանդ ու անխոնջություն։ Նա բազմիցս անձամբ գլուխի էր տանում իր ընկերներին, իր գերմանագալլական զինվորների հետ կարողանում էր խոսել։ Աշխույժ հետաքրքրություն ուներ սրամիտ պատմությունների նկատմամբ, շատ էր սիրում նախնիների հերոսական սխրանքներին վերաբերող երգեր։

Ճիշտ է, թերություններ էլ ուներ. աչքի էր ընկնում, ինչպես շատ սամնիտներ, դյուրաբորբոքությամբ, սիրում էր կերուխումներ, պճնազարդ հագուստներ, նրան դուր էր գալիս կենցաղային գեղեցիկ կահկարասին, նա հաճույքով իր վրանը զարդարում էր գեղեցիկ իրերով, անտարբեր չէր նաև գեղեցիկ կանանց նկատմամբ, և զինվորները կատակով պատմություններ էին անում նրա սիրային արկածների մասին։ Որպես զորապետ նրա շրջահայեցությունը չափից դուրս տաքարյունության պատճառով հաճախ բարձրության վրա չէր լինում։

Չնայած հիշյալ թերություններին, նա բանակի իր ընկերների մոտ մեծ հեղինակություն ուներ։ Նրան սիրում էին քաջության, ազնվության և ուղղամտության համար, այն բանի համար, որ նրա խոսքը երբեք չէր տարբերվում գործից, որ նա ո՛չ ագահ էր, ո՛չ ժլատ և հեշտությամբ դրամ էր ծախսում, երբ ունենում էր։

Գլուխ տասներկուերորդ

73 ԹՎԱԿԱՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ

Երկրի հարավում Հռոմի իշխանությունը կործանվում էր ակնհայտորեն, բայց մայրաքաղաքում դեռևս չէին հասկանում կատարվող իրադարձությունների իրական մեծությունը։ Բազմաթիվ սենատորների շփոթության մեջ էին գցում Պ. Վարինիոսի հանդստացուցիչ նամակները (արդյոք նա կարո՞ղ էր կամովին խոստովանել կրած պարտությունների լրջությունը)։ Եվ սենատում հռետորները շարունակում էին ծիծաղել հարավից եկող մասնավոր նամակներում ամփոփվող «չափազանցումների»

վրա, նրանք ապստամբ ստրուկների գործողությունները համարում էին «սովորական ավազակային հարձակումներ», պրետորի պարտությունը բացատրում էին «գալլիական օժանդակ զորքերի դավաճանությամբ», իսկ ռազմական գործողությունները վերսկսելու նրա դանդաղկոտությունը բացառապես վերագրում էին «խսկական զորքի բացակայությանը»։ Այսպիսի, շատ հարմար հայացք ունենալով հարավի անցուդարձի վերաբերյալ՝ սենատական տարբեր խմբավորումներն առաջվա պես մոլեգնաբար բանսարկում էին միմյանց։

Ֆորումում՝ քաղաքի գլխավոր հրապարակում, որտեղ գտնվում էին ճառերի ամբիոնը, կարթագենցիների նավատորմին հաղթող կոնսուլ Դուիլիոսի նշանավոր ցուցանման սյունը, պետական գանձարանի պահոցը՝ Սատուրնի տաճարը, Համաձայնության տաճարը՝ սենատի ընդունելությանը սպասող արտասահմանյան դեսպանների սպասարանը և ռազմական գանձարանը, Մամերտինյան բանտը, Սենատի պալատը՝ Գոստիլիոսի կուրիան, ալոբրոգ-գալլերին հաղթող (մ. թ. ա. 120 թ.) Ֆաբիոս Մաքսիմոսի հաղթակամարը, Վեստայի տաճարը և վեստալուհիների տունը, հերոսներ Կաստորի և Պոլուքսի տաճարը, փորձիկ սյունասրահներ, մարմարե, քարե, բրոնզե արձանների մի ամբողջ բազմություն (թեև դրանց թիվը խիստ պակասեցրել էր դիկտատոր Կոռնելիոս Սկիպիոնը մ. թ. ա. 156 թ.), որտեղ կային նաև մի քանի կրպակներ, բայց գլխավորապես՝ բանկիրների, լումայափոխների և առևտրամիջնորդների դրասենյակներ,— այստեղ ամեն օր, անկախ եղանակից, խռնվում էին տարբեր տարիքի և կոչման տեր հսկայական թվով մարդիկ։ Նրանց մեջ կային մշտական այցելուներ՝ «ֆորումի մշտական հաճախորդներ», որոշակի զբաղմունք չունեցող մարդիկ, որոնք պարապ խոսակցություններով ժամանակ էին վատնում, մեծագույն հաճույքով պատրաստ էին որևէ մեկին կեղծ վկայություն տալու, վարձու ծափահարելու, լրտեսության։

Հենց այստեղ հաճախակի հայտնվում էին ժողովրդական պարագլուխները՝ Ֆիրմիդիոսը և 72 թվականի կոնսուլ Լ. Հելիոսի կրտսեր եղբայր Տիցիոսը, նոր ժողովրդական տրիբուն պոմպեացի Պ. Պլավտիոս Գիպսեոսը (ծնվ. մ. թ. ա. 95 թ.), աղնվատիպ մի մարդ,— որոնք սուլլայականների դեմ կատաղի հարձակման նոր հող էին նախապատրաստում։ Գիպսեոսը բաց-

հայտորեն պատրաստվում էր դառնալ Կ. Լիցինիոս Մակրոսի[1] փոխանորդը։ Բայց Հելիոս-կրտսերը վիճարկում էր նրա առաջնությունը և ժողովրդին առաջարկում էր սեփական «ծրագրերն ու նախագծերը»։ Այդ մարդն այն ժամանակ Երևելի դեր էր խաղում և միանգամայն արժանի է, որպեսզի նրա մասին խոսվի։

Կոնսուլ Լ. Հելիոսի եղբայր Հելիոս-կրտսերը՝ պոպուլյարների խմբի նշանավոր դեմքերից էր։ Ցիցերոնը նրան ատում էր (հետագայում նա դարձավ Ցիցերոնի երդվյալ թշնամիներ Կատիլինայի և Կլոդիոսի բարեկամը)։ «Հանուն Սեստիոսի» ճառում Ցիցերոնը նրան կոչում է «կատաղած և աղքատ քեֆչի», մի մարդ, որն «արժանի չէ ոչ իր եղբորը՝ փառաբանված մարդուն և ազնվագույն կոնսուլին, ոչ էլ հեծյալների դասին»։ Բանն այն է, որ Հելիոսը, լինելով ծնունդով սենատոր, նաև հռչակավոր մարդու, ականավոր հռետոր, 91 թվականի կոնսուլ, 86 թվականի ցենզոր Լ. Մարցիոս Փիլիպոսի հոգեորդին, պատանեկությունը բավականին բուռն էր անցկացրել, մսխել էր հոր՝ ժամանակին Հռոմի ամենահռչակավոր քեֆչիներից մեկի, կարողությունը, հետո իրեն հռչակել էր «հույն» և խորասուզվել էր գրական զբաղմունքի մեջ։ Քանի որ այդ զբաղմունքը դրամ և փառք չէր բերել («հաճախ,— քինախնդրորեն նկատում է Ցիցերոնը,— նա գրքերը գրավ էր դնում դինու դիմաց, անկշռում

---

[1] Մակրոսի հետագա ճակատագիրն այսպես եղավ։ Կրասոսի օգնությամբ և Պոմպեոսի աջակցությամբ նա հետագա տարիներին հասավ պրետորի աստիճանի, հետո պրովինցիա ստացավ, որտեղ կարողացավ, հռոմեական կուսակալների սովորության համաձայն, լավ հարստություն դիզել։ 66 թվականին վերադառնալով Հռոմ՝ նա դատի տրվեց, և նրա որոշ գործողություններից դժգոհ Կրասոսը չխոչընդոտեց այդ բանին։ Հետագայի մասին Պլուտարքոսը պատմում է. «... Լիցինիոս Մակրոսը, որը քաղաքում արդեն ինքնին մեծ ուժ ուներ, հետն էլ վայելում էր Կրասոսի աջակցությունը, Ցիցերոնի կողմից դատարանում հափշտակությունների համար մեղադրվեց։ Հույսը դնելով իր ազդեցության և իր նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի վրա, մինչև դատավորների քվեարկությունը դատարանից գնաց տուն, հապճեպ սափրեց գլուխը և ի նշան դատը շահելու սպիտակ պարեզոտ հագավ ու կրկին ուղղվեց դեպի ֆորում։ Շեմին հանդիպելով Կրասոսին, որը նրան հայտնեց, թե դատավորները միաձայն մեղավոր են ճանաչել նրան և դատապարտել, Լիցինիոսը վերադարձավ տուն, մտավ անկողին և մեռավ։ Այդ գործը Ցիցերոնին (այն ժամանակ նա պրետոր էր — Վ. Լ.) օրենքի ջերմեռանդ պահապանի համբավ բերեց»։ (Պլուտարքոս)։

որովայնը պահանջում էր, իսկ միջոցները չէին բավականացնում»), ապա Հելիոսը որոշեց քաղաքականությամբ զբաղվել։ Նա մոտ ծանոթություններ հաստատեց ժողովրդական տրիբունների հետ, իրեն հռչակեց ժողովրդական կուսակցության համախոհ, սկսեց հաճախակի լինել ժողովրդական ժողովներում, խռովարար ճառեր արտասանել և նույնիսկ ամուսնացավ աղատագիր կնոջ հետ։ Նրա այդպիսի վարքը խայտառակություն էր բերում բոլոր հարազատներին, որոնք հրաժարվեցին նրանից։ Սենատը անօրենին խելքի բերելու համար նրան զրկեց սենատական դասի պատկանելությունից և հեծյալների շարքին դասեց։ Բայց Հելիոսը չէր էլ մտածում զղջալ։ Սանձակոտոր լինելով, նա շարունակում էր առաջ տանել իր գիծը։ Կապվելով Կրասոսի հետ, սկսեց ֆորումում նրան կարևոր ծառայություններ մատուցել։ Հելիոսը, ինչպես պլեբեյների ու ժողովրդական տրիբունների մեծամասնությունը, հիմա գլխավոր հույսը կապում էր պետական հեղաշրջման հետ։ Նրա ակնկալությունները, ինչպես և սպառնալիքները, թշնամիների համար դաղտնիք չէին։ Նրա այդ շրջանի գործողությունները բնութագրելով, Ցիցերոնը պատմում բացականչում էր. «Ո՞ր խռովության պարագլուխը չի եղել նա։ Ո՞ր խռովարարը նրա մտերիմ ընկերը չի եղել։ Ո՞ր բուռն ժողովրդական հավաքը նա չի կազմակերպել։ Ո՞ր ապնիվ մարդուն է երբևէ բարի խոսք ասել։ Բարի խոսք։ Ո՞ր քաջ ու ապնիվ քաղաքացուն նա չի հետապնդել ամենալկտի ձևով»։

Հենց այսպիսի մարդիկ էին ակտիվ գործունեություն ծավալում ֆորումում և դատարաններում, որտեղ կողմերի ամենօրյա, կատաղի պատերազմ էր գնում։ Բոլոր կողմերից պրովինցիալները բողոքներով գալիս էին Հռոմ, արդարություն և պաշտպանություն փնտրելու։ Այդ գործերից ամենաբնորոշը սիցիլիացի Դիոնի (Հալեսից) գործն էր։

Դիոնի որդի Դիոնը 75 թվականին իր ազգական Ապոլլոդորաս Լաֆիրոնից հարուստ ժառանգություն ստացավ Հայրենի քաղաքում մի քանի արձաններ կանգնեցնելու պայմանով։ Նշված պայմանը խախտելու դեպքում նա պարտավոր էր տուգանք մուծել Սիցիլիայում հայտնի Էրիցինյան Վեներայի տաճարին։

Դիոնի որդին չէր հասցրել ժառանգությունն ստանալ, երբ գործին խառնվեց Սիցիլիա (Մեսանա) որպես կուսակալ ժամանած Կ. Վերեսը։ Նրա առաջադրած մեղադրող Նովիոս Տուր-

պիոնը՝ «նրա լրտեսն ու խուզարկուն» (Ցիցերոն), սկսեց լրկատիաբար հաստատել, որ ժառանգությունը իրականում կազմվել է հօգուտ... Վեներայի տաճարի։ Դիոնին անմիջապես դատի կանչեցին պրետորի մոտ։ «Ի վերջո Վերեսը պատասխանողին Վեներային տուգանք վճարելու պարտականությունից ազատ ճանաչեց, բայց պարտավորեցրեց խոշոր գումար վճարել իրեն... Վերեսին» (Ցիցերոն)։ Հետևանքն այն եղավ, որ Դիոնը 1 միլիոն սեստերց վճարեց, իսկ ապա, ի լրումն, նրանից հափշտակեցին ազնվացեղ ձիերի ամբողջ երամակները և տան եղած գորգերն ու արծաթը։

Թալանված Դիոնը հռոմեական մի քանի սենատորների դիմելով՝ փորձում էր պաշտպանություն գտնել։ Վերջապես աղերսագին նամակ ուղարկեց Թրակիայում գտնվող, իր հյուրընկալ Մ. Լուկուլլոսին՝ 73 թվականի կոնսուլին։ Բայց նա էլ չօգնեց։ Այնժամ բոլորովին հուսահատ Դիոնը Հռոմ եկավ ճշմարտություն որոնելու և մինչև 70 թվականը ապարդյուն տարբեր դռներ մաշեց։ Դատավորներին հիշեցնելով Դիոնի չարչարանքները, Ցիցերոնը դիմելով Վերեսի պաշտպան Հորտենզիոսին, ասաց. «Ես կարծում եմ, այստեղ շատ բան կա, որ չգիտեն իմ վկաները, բայց գիտես դու։ Եվ ոչ թե նրա անմեղությունը, այլ միայն օրենքն է քեզ ազատում այս դեպքում վկա լինել իմ օգտին։ (Քարտուղարին)։ Կարդա՛։ (Լուկուլլոսի, Քլորի, Դիոնի ցուցմունքները...)։ Ի՞նչ եք կարծում, բավականաչա՞փ խոշոր է եղել այն գումարը, որը Վեներայի անունով քողարկվելով, իրեն է վերցրել այդ Վեներայի երկրպագուն՝ ուղղակի Հելիդոնայի գրկից պրովինցիա մեկնած այդ Վերեսը...»։

Այսպես սենատում խմբավորումների միջև ընթացող պայքարով և դատարաններում պրովինցիալների խոշոր գործերի քննարկումներով Հռոմում ավարտին էր մոտենում 73 թվականը։

Գլուխ տասներեքերորդ

Գ. ՎԵՐԵՍԸ՝ ՍԻՑԻԼԻԱՅԻ ԿՈՒՍԱԿԱԼԸ

Գայոս Վերեսը (մ. թ. ա. 114—43 թթ.) սպարտակյան պատերազմի ամբողջ ընթացքում Սիցիլիայի կուսակալը (73—71 թթ.) երկար կյանք ապրեց՝ 71 տարի։ Իրեն սպանողների՝ տրիումվիր Մարկոս Անտոնիոսի լեգեոնականների սրերի հարվածների

տակ մեռնելիս Վերեսը կարող էր ասել, որ հրաշալի կյանք էր ապրել, ճաշակել էր բոլոր հաճույքները և ստացել էր իր բաժին փառքը, որպես այդ դարաշրջանի մեծագույն իրավարձությունների մասնակից։

Հռոմեական բոլոր կուսակալների փոխարեն քավության նոխազ դարձած Գ. Վերեսին մեղադրելով, Ցիցերոնը 70 թվականի դատավարության ժամանակ նրան դատավորներին ներկայացնում էր հետևյալ կերպ. «... Ես դատի եմ տվել հասարակական գանձարանի կողոպտչին, Ասիայի և Պամփիլիայի հարստահարիչին, քաղաքային պրետորի կոչում ունեցող ավազակին, սիցիլիական պրովինցիայի խոցին ու պատուհասին... Ես ձեզ մոտ՝ դատարան եմ բերել ո՛չ թե գողի, այլ կողոպտչի, ո՛չ թե անառակի, այլ ապականիչի, ո՛չ թե սրբապղծողի, այլ կրոնի և սրբության թշնամու, ո՛չ թե մարդասպանի, այլ մեր համաքաղաքացիների և դաշնակիցների արյունախում դահճի։ Իմ կարծիքով, բոլոր մեղադրյալներից, որոնց զեթ հիշում են մարդիկ, սա միակն է, որին դատապարտելը կարող է ուրախալի լինել»[1]։

Եվ նման մարդը Հռոմում կարողացել էր բարձրանալ պրետորի բարձր աստիճանին, իսկ հետո դառնալ սիցիլիացիների՝ «հռոմեական ժողովրդի այդ մահկալ-բարեկամների» (Ցիցերոն) կուսակալը։

Հարց է ծագում, հնարելով հռետորական սոփորությանը, Ցիցերոնն արդյոք չի՞ խտացրել գույները։ Պատասխանը տվել է ինքը՝ հռետորը, մի այլ դատավարության ժամանակ. «Իմ շուրթերով իմ կողմնակիցներն էին խոսում, ոչ թե իմ անձնական համոզմունքը»։

---

[1] 70 թվականի դատավարության ժամանակ Ցիցերոնի առաջին ճառից և նախկին կուսակալի դեմ վկայություններից հետո, Գ Վերեսն իր գործը հեռանից անհուսալի։ Վճարելով պահանջված 40 միլիոն սեստերցը, նա կամավոր հեռացավ, արտաքսվեց դեպի Կամպանյան ծովեզերք։ Չնայած վճարած առատաձեռնական գումարին, նա առաջվա պես ահռելիորեն հարուստ էր (Ցիցերոնը խիստ նվազեցրել էր Սիցիլիայում նրա կողոպտածը)։ Այդ հարստությունն էլ հենց կործանեց Վերեսին, 27 տարվա արքայական կյանքից հետո նետելով տրիումվիրների կողմից ուղարկված մարդասպանների սրերի տակ։ Այլևս ջադաբականությամբ չզբաղվող Գ. Վերեսը ճակատագրի հեգնանքով բռնադրավման ենթակա մարդկանց ցուցակի մեջ մտավ իր նախկին մեղադրող Ցիցերոնի հետ միասին։ Վերջինս էլ անսպասելիորեն նրանց շարքում դասվեց և սպանվեց իր անձնական թշնամի Մարկոս Անտոնիոսի պահանջով։

Արիստոկրատական զանազան ընտանիքների շրջապատում Վերեսը շատ բարեկամներ ուներ։ Ահա նրանցից սոսկ մի քանիսի անունները. Կվ. Կատուլոս, Կվ. Հորտենզիոս, Գ. Սկրիբոնիուս Կուրիոն (հայրը), Լուկուլլոս եղբայրներ, Պ. Կոռնելիոս, Սկիպիոն Նազիկա՝ 52 թվականի կոնսուլության Պոմպեոսի ապագա գործընկերը և նրա անները, Կվ. Մանլիոս, Կվ. Կորնիֆիցիոս, հարգարժան և խիստ դատավորներ Ա. Պեդուցիոս, Կվ. Կոնսիդիոս, Կվ. Հունիոս և ուրիշներ։ Ազնվատոհմիկների շրջանում Գ. Վերեսի նկատմամբ հարգանքի վկայությունն է նրա ամուսնությունը։ Հռոմեական արիստոկրատական ընտանիքներից ամենաամբարտավաններից մեկը՝ Սուլլայի հետ բարեկամական կապ ունեցող Մետելլոսների ընտանիքը, իր արժանապատվությունից ցածր չհամարեց բարեկամանալ նրա հետ։ Եվ երբ Գ. Վերեսի գլխին կախվեց աղետը՝ դատը և դատապարտման սպառնալիքը, նրա բոլոր ազգականներն ու բարեկամները սարի պես կանգնեցին նրա թիկունքին։ Հերքելով Ցիցերոնի մեղադրանքը, թե՝ նրանց պաշտպանյալը Սիցիլիայում իրեն դրսևորել է որպես կողոպտիչ ու գող, նրանք զանազան բանսարկությունների էին դիմում Վերեսին պաշտպանելու համար և պնդում էին, թե նա ոչ մի այլ բան չի արել, քան մյուս կուսակալները։

Գայոս Վերեսը (մ. թ. ա. 114—43 թթ.) ծնվել էր ազնվատոհմիկ և հարուստ ընտանիքում։ Նրա հայրը առանձնապես հռչակվել էր որպես դիվիդոր՝ պետական պաշտոնի հավակնորդների համար ընտրական ձայների գնորդ։

Իր կյանքի առաջին կեսում (մինչև 30 տարեկանը) Վերեսն արժանավոր որևէ բան չէր կատարել։ Ցիցերոնն արհամարհանքով նկատում է, որ մինչև քվեստոր դառնալը նա միայն «շրջում էր անբարոյական կանանց և հասարակաց տների տերերի շրջապատում»։ 82 թվականին լինելով Գն. Կարբոնի քվեստորը (չնայած արիստոկրատական ծագմանը, Վերեսն անցել էր մարիոսականների կողմը), նա կոնսուլական բանակի ամբողջ դրամն առած՝ փախավ Սուլլայի հետ։ Այս կարևոր ծառայությամբ, ինչպես և նրանով, որ կարողացավ բաղմաթիվ երևելի անձանց համոզել Սուլլայի կողմն անցնելու, Վերեսը հաղթողների շրջանում իր համար նշանակալից տեղ ապահովեց։ Նա

մասնակցեց նաև բռնագրավումներին այնքանով, որքանով որ մասնակցում էին Սուլլայի կուսակցության մյուս անդամները։ Հետո հանդես եկավ որպես Կիլիկիայի նոր կուսակալ Գնեոս Դոլաբելայի լեգատ և հռչակվեց դաշնակիցներին չտեսնված լկտիությամբ թալանելով։ Կողոպտածը նա ուղարկում էր Իտալիա և տեղավորում Դոլաբելայի ու իր սեփական կալվածքներում։ 78 թվականին երկու «արժանավոր բարեկամները» վերադարձան Հռոմ։ Կողոպտվածներն անմիջապես Դոլաբելային դատի տվեցին։ Որպես մեղադրող հանդես եկավ երիտասարդ և փառասեր արիստոկրատ Մարկոս Էմիլիոս Սկավրոսը և շահեց դատը (Վերեսը սեփական գլուխը փրկելու համար առանց վարանելու իր ցուցմունքներով «ջրասույզ» արեց պատրոնին)։ Դոլաբելան 3 միլիոն սեստերց տուգանք վճարելով, սնանկացավ և հեռացավ աքսորավայր։ Վերեսն ինքը դատից փրկվեց հբս-կայական կաշառքների և կապերի օգնությամբ։ Հաջորդ երեք տարին Վերեսը «խաղաղ» ապրեց Հռոմում՝ վայելելով ձեռք բերած հարստությունը, արիստոկրատական կուսակցությանը ծառայություններ մատուցելով ընդդեմ նախկին մարիոսական բարեկամների։ Հետո հաջողությամբ «գրոհեց» պրետորի պաշտոնի վրա (մ. թ. ա. 74 թ.) և նույնիսկ ստացավ առավել պատվավորը՝ քաղաքայինը։ Անհաջողության մատնված ախոյանները փորձեցին նրան դատի տալ, բայց Վերեսն ամենապոր կաշառքի օգնությամբ կարողացավ կոծկել գործը։

Պրետորի պաշտոնում Վերեսն իրեն ամբողջովին բացահայտեց։ Ամենից առաջ, իր սովորության համաձայն, նա սկսեց «փողային հարցերը» կարգավորել։ Նրան ակտիվ օգնություն էր ցույց տալիս նրա սիրուհին՝ հույն հետերա Հելիդոնեն (Միծեռնակ)։ Ժառանգության գործերում կաշառքներ կորզելով, նախկինում չլսված հրովարտակներ կազմելով, կապալային գործերում մեքենայություններ անելով, Գ. Վերեսը տոկոսներով հանդերձ իրեն էր վերադարձնում ընտրողներին կաշառելու վրա իր ծախսած գրամը։ Միաժամանակ Վերեսը դատարանում մի շարք քաղաքական դատավարություններ անցկացրեց, իրեն ցուցադրելով որպես սուլլայական ռեժիմի մոլի պաշտպան։

Պերճախոս փաստերը հանրագումարի բերելով, Ցիցերոնը, դիմելով դատավորներին և ուկնդիրներին, ասաց. «Բոլոր նրանցից, ովքեր գիտեն նրա հանցագործությունների մասին, այսինքն հռոմեական ամբողջ ժողովրդից, թախանձագին ներողություն

եմ խնդրում և հավատացնում եմ, որ շատ բան ես բաց եմ թողել ոչ իմ մեղքով, այլ այն պատճառով, որ որոշ բաներ հետաձգել եմ մինչև վկաների հարցաքննությունը, իսկ շատ բաներ էլ լռության եմ մատնել ժամանակը խնայելու պատճառով։ Դրանից բացի, թեև կամքիս հակառակ, այնուամենայնիվ, հարկադրված կլինեմ խոստովանելու, որ ես չէի կարող իմանալ այն ամենը, ինչ կատարել է իր ամբողջ կյանքում ոչ մի վայրկյան առանց հանցագործության չապրած այս մարդը»։

Ահա այսպիսի գունագեղ ու խայտաբղետ կենսագրություն ունեցող մարդը 73 թվականի հունվարին ժամանեց Սիցիլիա և անցավ կուսակալի պարտականությունների կատարմանը։

Պատրաստվելով ավազակության, այսինքն՝ որպես կուսակալ Սիցիլիան կառավարելու, Գ. Վերեսը մեկնելուց առաջ խորհուրդ գումարեց իր աղդեցիկ բարեկամների հետ. ինչպե՞ս առավելագույն չափով դրամ վաստակել մեկ տարում։ «Նա,— ասում է Ցիցերոնը,— չէր ցանկանում տեղում սովորել, թեև գիտեր պրովինցիա թալանելու ձևը՝ այդ գործում սկսնակ չլինելով՝ այլ ուղում էր Սիցիլիա ավազակության մեկնել գործողությունների նախօրոք մշակած ծրագրով։ Ասեկոսեներն ու բամբասանքները լավ բան էին խոստանում այդ պրովինցիայի ժողովրդի համար. սոսկ միայն նրա անունից կատակասերները կռահում էին, թե ինչով է այնտեղ զբաղվելու այդ մարդը»[1]։

Գ. Վերեսը մենակ չէր գնում։ Ճանապարհվելով, ապագա կուսակալը իր հետ վերցրել էր ընտիր բարեկամներին, որոնց, «երաշխավորել էին ոչ թե իրենց հայրերը, այլ Վերեսի հարճը» (այսինքն Հելիդոնեն)։ Դրանք դրամի խիստ կարիք զգացող տոհմիկ գերդաստանների սերունդներ էին, հեծյալների զավակներ, բոլորովին անանուն պլեբեյներ և նրա սեփական ազատադրյալները։ Ահա կուսակալի այսպես կոչված «պրետորական կոհորտայի» կազմի մեջ մտած, Վերեսի ամենագլխավոր գործակիցների անվանացուցակը.

1. Պ. Ցերվիոս — 73 թվականի լեգատ։

2. Մ. Պոստումիոս — Սիրակուզայի 73 թվականի քվեստոր։

---

[1] Լատիներենում «Վերրեսե» բառը նշանակում է «ավել»։ Կատակասերները կանխագուշակում էին, թե Վերեսը պրովինցիայում ամեն ինչ սրբող «ավել» կդառնա։

3. Տ. Վետիոս — Լիլիբեումի 73 թվականի քվեստոր։

4. Պ. Վետիոս Քիլոն — քվեստոր Տ. Վետիոսի եղբայրը. «հռոմեական պատվավոր հեծյալ», կուսակալի աներոջին և նրա սրտակից ընկերը։ Երրորդ եղբայրը՝ Լ. Վետիոսը հետագայում կդառնա Կատիլինայի խռովության մասնակիցը։

5. Կվ. Ապրոնիոս («Ոչ մեկի առջև չխոնարհվող») — կապալառու և Գ. Վերեսի կապալառուների գլխավորը, նրա լավագույն ընկերը և մտերմագույն հավատարմատարը, շատով նա սկսեց ինքն իրեն անվանել «Վերեսի բարեկամ և գործընկեր»։ Ցիցերոնը Կվ. Ապրոնիոսին անարգում է վերջին խոսքերով, ասելով, թե նա «ցեխի մեջ ծնված, արատների մեջ մեծացած մարդ է, Վերեսի մեղսակիցը և՛ նրա ստոր մղումներում և՛ ստոր կրքերում»։

6. Տիմարքիդես — Վերեսի սիրած ազատագրյալը և ակցենդը, իր նշանակությամբ երկրորդ դեմքը Ապրոնիոսից հետո։ Ցիցերոնը նրա մասին հետևյալ կերպ է արտահայտվում.

«Նրա իրավասության տակ էին բոլոր մեղադրյալներն ու մատնիչները, ում ցանկանում էր հոգս պատճառել՝ կատարում էր առանց դժվարության։ Նա հույժ հմտորեն ու խորամանկությամբ փաճառում էր Վերեսի բոլոր դեկրետները. հրամանագրերը և նամակները։ Նա ոչ միայն նրա կրքերի մեղսակիցն էր, այլև չէր մոռանում իրեն, և ոչ միայն հավաքում էր տիրոջ գցած գրամները, որը հսկայական գումար էր կազմում, այլև ժողովում էր նրա կնդտոտ հաճույքների մնացորդները։ Ուրեմն պիտցեք, որ երեք տարի շարունակ Սիցիլիայի բոլոր քաղաքների արքան փախստական է եղել, բայց ոչ թե Ափինիոնը, որ ոչ մի քաղաք չէր դրավել (սիցիլիական ստրուկների ապստամբության (մ. թ. ա. 104—101 թթ.) առաջնորդներից մեկը — Վ. Լ.), այլ՝ Տիմարքիդեսը։ Տիմարքիդեսի իշխանության տակ էին գտնվում հռոմեական ժողովրդի վաղեմի ու հավատարիմ դաշնակիցների երեխաները, կանայք, սեփականությունը և ամբողջ ունեցվածքը»։

Այսպես է Ցիցերոնը բնութագրում Գ. Վերեսի շրջապատի երկրորդ մարդուն։ Որքան հետաքրքիր կլիներ թափանցել նրա հռետորական հնարանքների խորքերը։ Բայց հնարավո՞ր է նման անհավատալի հաջողություն։ Այո՛։ Ճակատագիրը մեզ համար պահպանել է վերեսական կլիկի մեն-մի նամակը, այն էլ ոչ թե

երկրորդական մի անձնավորության, այլև գլխավոր հերոսներից մեկի՝ հենց Տիմարքիդեսի նամակը։

Ահա այդ հաղվագյուտ նամակը, գրված 70 թվականի սկզբին (այն գրեթե ընդհուպ մոտ է Սպարտակի ապստամբության ժամանակին և իր գրման թվականով հին է Ցիցերոնի հայտնի բոլոր նամակներից).

«Տիմարքիդեսը՝ Վերեսի ակցենտը, ողջույն է հղում Ապրոնիոսին.

1. Զգուշացիր այն ամենից, ինչը կարող է վնասել կուսակալի փառքին։ Դու եռանդուն ես և պերճախոս։ Դրամական միջոցներ ունես։ Բոիդ մեջ հավաքիր նոր գրագիրներ և ծառայողներ, սրատիր, խփիր Լ. Վոլտեռսին (նոր կուսակալ Լ. Մետելլոսի լեգատին — Վ. Լ.), որը հսկայական ազդեցություն ունի։ Եթե Լ. Վոլտեռսը քո կողմը լինի, մնացած բաներն անելը դժվար չի լինի քեզ համար։ Լ. Մետելլոսը և Լ. Վոլտեռսը համոզված են, որ դու սնանկացրել ես հողագործներին։ Նրանց ականջին անընդհատ բզզացել են, թե դու և պրոպրետորը խոսքերդ մեկ եք արել։ Նրանց պատմիր հողագործների խաբեությունների մասին։ Ատովածների օգնությամբ մենք նրանց կստիպենք քրտնել։

2. Դու պետք է կարողանաս կոհորտայի (Լ. Մետելլոսի — Վ. Լ.) անդամների սիրուն արժանանալ։ Ում ինչ հարկավոր է, խոստացի՛ր։ Չէ՞ որ միշտ ամենքն ստանում են իրենց ցանկացածը, երբ նրանց փոխարեն դու ես խնդրում։

3. Դու գիտես, Լ. Մետելլոսը խելոք մարդ է, բայց Լ. Մետելլոսը մի պատանյակ որդի ունի...

4. Ես կուզեի, սիրելի՛ եղբայր, որ դու հավատայիր փոքր եղբորդ»։

Այսպիսին է Տիմարքիդեսի կարճ, բայց գործարար և վառ նամակը, որը խոսում է նրա նենգ ու խորամանկ մտքի, մարդկանց ճանաչելու փայլուն կարողության մասին։

7. Գ. Կլավդիոս — Պալատինյան տրիբից, փորձաշատ իրավաբան։ Այդ նրա հասցեին էր Ցիցերոնը խոսում դատավարության ժամանակ. «Տեսնում եք այդ թխագանգուր մարդուն, որը նայում է մեզ, կարծես ցանկանում է ասել. «Մի՞թե ես խելոք չեմ»։ Նրա ձեռքին գրատախտակներ կան։ Նա գրում է, խորհուրդներ է տալիս և կողք կողքի նստած է նրա հետ։ Դա հենց Կլավդիոսն է, որը Սիցիլիայում առևտրական միջնորդ էր, գոր-

ծերի հավատարմատար, թարգման։ Կարելի է ասել, Տիմարքիդեսի բնկերն է համարվել»։

8. Կվ. Կորնիֆիցիոս — Գ. Վերեսի քարտուղարը և գրագիրը, 68 թվականի ապագա ժողովրդական տribունը։

9. Վոլուզիոս — դուշակ։

10. Վալերիոս — մոնետիկ։

11. Կոռնելիոս (պերգացի Արտեմիդորոս) — բժիշկ, «որը մի ժամանակ նրան սովորեցրել էր, թե ամենից լավ ինչպես պետք է կողոպտել հայրենի քաղաքի Դիանայի տաճարը»։

12. Տլեպտղոմեոս — մոմի քանդակագործ, և Գիերոն՝ գեղանկարիչ՝ երկու եղբայր են, երկուսն էլ հույն, Վերեսի վաղեմի ծանոթները։ Այդ նրանց վերաբերյալ էր հռետորը սրամտել. «Արրապիղծ-հույներ էին եղել մի ժամանակ, սրիկաներ դարձել էին վաղուց, Կոռնելիոսներ՝ վերջերս»։

13. Ա. Վալենցիոս — թարգմանիչ. «աղքատ ու դատարկապորտ», «սովորաբար նրանից օգտվում էր ոչ թե հունարեն թարգմանելիս, այլ կողոպուտների և իր կեղտոտ ցանկություններին հագուրդ տալու համար»։

14. Լ. Վոլկացիոս Տուլլոս (հայրը) — ավելի շատ «կապալառու»։ Նրա որդի Գ. Վոլկացիոս Տուլլոսը հետագայում լեգատ կդառնա Կեսարի զորքում։

15. Լեսիլիոս — «հայրենի գրության գիտակ», Գ. Վերեսի նամակատարը։

16. Պ. Նեիոս Տուրպիոն — «վերին աստիճանի սրիկա», «նրա լրտեսը և խուզարկուն, այդ բանսարկուների ընկերության ամենաստորը, Գ. Սացերդոտոսի պրետորության ժամանակ դատապարտվել էր ինչ-որ մեկին վիրավորանք հասցնելու համար»։

17. Սեքստիոս, լիկտոր, Գ. Վերեսի մոտ գահճի պարտականությունները կատարող։

18. Լ. Կարպինացիոս — Սիցիլիայի արոտավայրերի կապալառուների գլխավորը։ Սկզբում կուսակալի նկատմամբ նա հիշտ դիծ չէր բռնել և թշնամություն էր անում նրան, բայց մի քանի դասեր ստանալուց հետո, խելքի եկավ, ջանքեր գործադրեց, մտավ Գ. Վերեսի սիրելիների շարքը, ախոյաններին հեռին դրան մղեց և «համարվում էր գրեթե երկրորդ Տիմարքիդես, բայց ավելի վտանգավոր, քանի որ տոկոսով փող էր տալիս նրանց, ովքեր Գ. Վերեսի հետ որևէ առևտուր էին անում»։

Այս մարդկանց թվին Վերեսը շուտով ավելացրեց նորերին, ընտրված բուն սիցիլիացիներից։

19. Կլեոմենն — սիրակուզացի մեծահարուստ։ Նրա կինը՝ գեղեցկուհի Նիկեն, կանացի գեղեցկության մեծ երկրպագու կուսակալի սրտին շատ դուր եկավ։

20. Դոկիմոս — սիցիլիացի կապալառու, Վերեսի երկրորդ սիրուհու՝ Տերցիայի ամուսինը։ Կուսակալը Տերցիային խլել էր նրա սրնգահար ամուսնուց՝ Ռոդիոսից։

21. Էսքրիոն — կապալառու, Գ. Վերեսի երրորդ սիրուհու՝ Պիպալի, ձևական ամուսինը. «այդ կնոջ մասին բազմաթիվ բանաստեղծություններ են գրվել դատավարական բազկաթոռներին և պրոպրետորի գլխավերևում»։

22. Թեոմնաստոս — սիցիլիացի, քաղաքներում ղբաղվում էր արվեստի գործեր բռնագրավելով և կապալառությամբ։

23. Դիոնիսոդորոս — սիցիլիացի, բոլոր գործերում հանդես է գալիս որպես Թեոմնաստոսի գործընկեր։

24. Աղնվատոհմիկ սիցիլիացի Ագատինոս և Դորոթեոս։ Նրանց երկուսի հետ Գ. Վերեսը արտաքին մտերմացավ՝ գայթակղվելով Կալիդամայոյ, որը վերջինիս կինն էր և առաջինի դուստրը։

Ահա թե ինչպիսիք էին Գ. Վերեսին շրջապատող մարդիկ։ Ահա թե ովքեր էին նրա այսպես կոչված պրետորական կոհորտայի անդամները։ Հենց նրանց հետ կուսակալը անսանձ կոզոպուտի ենթարկեց Սիցիլիան, որը Ցիցերոնին նման սարսափ էր պատճառել. «Դո՛ւք, դատավորներ, տեսնում եք,— կոչ էր անում հռետորը,— ինչպե՞ս էր կապալառուների վառած հրակայական հրդեհը նրա պրոպրետորության մեջ ոչնչացնում ոչ միայն արտերը, այլև հողատերերի մնացած սեփականությունը, և ոչ միայն նրանց գույքը, այլև նրանց քաղաքացիությունն ու ազատությունն ապահովող իրավունքները։ Դուք տեսնում եք, ինչպե՞ս էին ոմանց կապում ծառից, մյուսներին մտրակում և ծեծում, երրորդներին հասարակական վայրերում կանգնեցնում էին պահակների հսկողությամբ, չորրորդներին ստիպում էին կանգնել կերուխումների սեղանների մոտ, հինգերորդներին դատական մեղադրանք էին ներկայացնում բժիշկը և մունետիկը, այն ժամանակ, երբ նրանց բոլորի ունեցվածքը այնուամենայնիվ տարվում է բռնությամբ, խլվում է նրանց դաշտերից։ Եվ դա կոչվում էր հռոմեական ժողովրդի իշխանություն, հռոմեա-

կան ժողովրդի օրենքներ, նրա դատ ու դատաստանն իր ամենահավատարիմ դաշնակիցների, մայրաքաղաքին ամենամոտ պրովինցիայի նկատմամբ։ Չէ՞ որ դա այնպիսի նողկալի բան է, որը սիրտ չկար անի գործել նույնիսկ Ավինիոնը, եթե հաղթեր։ Ո՞չ, դատավորնե՛ր, փախստական ստրուկները, իրենց ամբողջ ինքնակամությամբ հանդերձ, շատ հեռու են նրանց փչացածությունից»։

Այսպես էր խոսում Ցիցերոնը դատավարության ժամանակ և նրա խոսքերում չափազանցություն չկար։

Ժամանելով Սիցիլիա, Գ. Վերեսը հիմնվեց Սիրակուզայում՝ «աշխարհի ամենագեղեցիկ և հունական ամենամեծ քաղաքում», որը «բոլոր կողմերից՝ և՛ ցամաքից, և՛ ծովից հրաշալի տեսարան է ներկայացնում»։ Իրեն չդավաճանելով, Գ. Վերեսն անմիջապես ընդհանուր լեզու գտավ սիրակուզացի գեղեցկուհիների հետ, որոնք «կուսակալության ամբողջ ընթացքում ղեկավարում էին նրան»։

Նրա կառավարման առաջին տարվա քաղաքականությունը հանդում էր հետևյալին։ Ակտիվորեն կողոպտում էր բոլորին, ովքեր ժառանգություն էին ստանում, նրանց գործի քննությունը լուծելով իր օգտին։ Անարդարացի հայցեր էր ընդունում, տուգանքների և միջնորդ դատարանների միջոցով դրամ քամելով «մեղավորներից»։ Սիցիլիական քաղաքներում սենատորների տեղերի առուվաճառք էր կատարում։ Սիցիլիացիներին ստիպում էր խոշոր գումարներ մուծել սեփական գանձարանը իր, իր փոքրիկ որդու, Հռոմում գտնվող Վերես պապիկի արձանները կանգնեցնելու համար։ Վերացրել էր տեղական հայտնի «մարցելիանների» տոնը և փոխարինը մտցրել էր իր պատվին՝ «վերեսական» տոնը։ Զբաղվում էր Հռոմ առաքվող հացահատիկի հետ կապված բոլոր մեքենայություններով։ Տեղացիներից խլում էր արվեստի ամենագեղեցիկ և հազվագյուտ առարկաները։ Նա ինքն իր այդ կարգի գործերը կոչում էր «սիրած զբաղմունք», նրա արիստոկրատ բարեկամները՝ «թուլություն» և «տարօրինակություն», իսկ սիցիլիացիները՝ «թալան»։ Զնչին գումարով նա ստիպեց իրեն վաճառել մեծ քանակությամբ հրաշալի զարդարված տրիկլինումներ իրենց ճաշի բոլոր պարագաներով (դրանք նա տեղաբաշխեց Հռոմում և իտալիկական բազմաթիվ ագարակներում ցրված իր սեղանատներում)։ Սիցիլիայի հարուստ տներից շատերում Վերեսի հրամանով ծիրանագույն գոր-

գեր էին գործում իր համար։ Սիցիլիայից ոչ հեռու Մելիտ կղզում նրա պատվերով պատրաստում էին կանացի թանկարժեք զգեստներ, որոնք հետո վաճառվում էին չափազանց թանկ գներով։ Որպեսզի հռոմեական հեծյալներից բաղկացած սիցիլիական էսկադրոնները (սրանք միլիոնների հետ էին գործ ունենում և չէին ցանկանում կուսակալի կամակատարը դառնալ) իրեն ենթարկեր, Վերեսը Ստրոնիոսի՝ իր լավագույն բարեկամի, զլխավորությամբ սեփական կայազորական ընկերություն ստեղծեց սիցիլիական դեսյատիններում։ Հռոմեական հեծյալները ձգտում էին Վերեսի հետ դատաստան տեսնելու ձև գտնել նախ Հռոմում, իսկ հետո ժողովրդի մեջ։

Գ. Վերեսը նրանց դեմ ի պատասխան սարսափելի զենք ուղղեց, որ նրա ձեռքն էր դրել իրավունքը. նա սկսեց հաստատել, որ իր հակառակորդները՝ «Իսպանիայից փախած սերտորիոսականներ են կամ ծովահենների գաղտնի հանցակիցներ»։ Նման մեղադրանքից հետո նրանց հետ խոսակցությունը կարճ էր լինելու. բանտ, կառափնարան...

Դժգոհողների դեմ Գ. Վերեսի հաշվեհարդարը մեծ չափեր ընդունեց։ «Բավական է որևէ մեկի խոսքերը կամ դեմքը նրան դուր չգար, անմիջապես ընկնում էր քարհատարանները»։ Մեղադրանքի այս չափազանց վտանգավոր կետը Հերտենգիոսը և Վերեսը փորձեցին բողոքարկել, բայց Ցիցերոնը նրանց սարսափելի հարված հասցրեց, դատաբանին ներկայացնելով սիրակուզյան քարհատարանների մատյաններից մեկը։ «Տեսնո՞ւմ եք,— բացականչեց նա,— ինչպես էին հռոմեական քաղաքացիներին կենդանիների նախորդ պես քշում քարհատարանները, տեսնո՞ւմ եք, մեր համաքաղաքացիներից քանիսն են կուտակվել այդ ամոթաբեր վայրում։ Հիմա նրանց դուրս գալու մասին նշումներ փնտրեք։ Չկան։ Նշանակում է, նրանք բոլորը մեռե՞լ են։ Եթե նույնիսկ դու (Վերես — Վ. Լ.) կարողանայիր դա ասել իրրև քեզ արդարացում, քեզ չէին հավատա։ Բայց դու դա էլ չես կարող ասել. այս մատյանում մի բառ կա, որ Վերեսը, որպես անկիրթ և փնթի մի մարդ կամ չի նկատել, կամ չի հասկացել՝ ΕΛΙΚΑΙΩΘΗΣΑΝ, որը սիցիլիական բարբառով է, այսինքն. «Պատժվել են մահով, մահապատժի են ենթարկվել»։

Հսկայական կապերի շնորհիվ երեք տարվա ընթացքում Գ. Վերեսի կուսակալական դիրքերն անսասան էին։ Համոզվելով բոլոր բողոքների դուր լինելու մեջ, հեծյալների զգալի մասը անձնա-

տուր նպաստ և ընդունեց հարգողի ծանր պայմանները, որի համաձայն ստացվող եկամուտների մեծ մասը անցնում էր կուսակալին։

Իսկ այդ ժամանակամիջոցում Վերեսն ի՞նչ քաղաքականություն էր վարում սիցիլիական ստրուկների նկատմամբ։

Սիցիլիական երկրորդ ապստամբությունից (մ. թ. ա. 104—101 թթ.) հետո Հռոմից ուղարկված կուսակալները խստագույնս պահպանում էին սիցիլիական ստրուկներին զենք չարտադրելու օրենքը։ Զիջողություններ ձգտում էին չկատարել ոչ մեկի համար, նույնիսկ հոտերի պահապան հովիվների։

Սպարտակի գլխավորությամբ Իտալիայում սկսված ստրուկների պատերազմն անմիջապես շարժման մեջ դրեց սիցիլիացի ստրուկների հսկայական խմբերը։ Վերստին հայտնվեցին խռովարարական կազմակերպություններ։ Արդյունքը եղավ այն, որ ստրուկներն «ստրուկների միջավայրում որոշակի խմորումներ» (Ցիցերոն)։ Այդ մասին լուրերը Հռոմում բավականաչափ անհանգստություն առաջացրին։ Սենատը Վերեսին կարգադրեց ուժեղացնել հսկողությունը ստրուկների վրա։ Բայց սենատին և ժողովրդին ուղղված պաշտոնական նամակներում կուսակալը ջանում էր հանգստացնել ահաբեկվածներին։ Նա հավատացնում էր, որ իր և տերերի կողմից զոհություն ունեցող խստությունների դեպքում պրովինցիայում բացառվում է ստրուկների որևէ խռովության սաղմնավորում։ Նման խոստումներ տալով, Վերեսը սկզբում իսկապես բավականին աչալուրջ հսկում էր այն մարզերը, որտեղ նախկինում տիրություն էին անում ստրուկները (Տրիոկալան, Ապոլոնիան, Պանորմը և այլն)։ Բայց 73 թվականի վերջին դրությունը փոխվեց։ Տարածվեցին Իտալիայի հարավում Սպարտակի փայլուն հաղթանակների և Հռոմից հարավային մասի լիովին անջատման վերաբերյալ գունազարդված լուրերը։ Ապստամբած ստրուկների առաջնորդի զորանի լիազորները առևտրական նավերով ամբողջ ջոկատներով գալիս էին Սիցիլիա և ցրվում կղզով մեկ։ Նրանք տարածում էին Սպարտակի համար շահեկան լուրեր, բազմաթիվ օգտակար ծանոթություններ էին հաստատում, ագիտացիայի նպատակով թափանցում էին լատիֆունդիաները, ջանում էին մտերմանալ կուսակալի բոլոր ազդեցիկ ազատագրյալների ու ստրուկների հետ, և նույնիսկ մանել «Ապրոնիոսի գվարդիան»։ Ոմանց դա հաջողվում էր, քանզի Ցիցերոնի կարծիքով «այդ կիսա-

ստրուկը, այդ փչացած, հանցավոր, նողկալի մարդը, որը չէր կարողացել մաքուր պահել ոչ միայն իր հոգին, այլև նույնիսկ իր ոգին», հեշտությամբ ընկերանում էր գանագան «հանդուգն սրիկաների» հետ։ Այսպիսով, Ապրոնիոսն ու նրա համախոհները հաճախ գործում էին հօգուտ Սպարտակի։ Եվ այն կամայականությունները, որ կատարում էր Ապրոնիոսը դատարաններում, ուժեղացնում էր սոցիալական լարվածությունը Սիցիլիայում և խիստ թուլացնում էր սենատի դիրքերը։ Ցիցերոնը, ստրկատեր լինելով, այդ բանը լավ էր գիտակցում։ Հենց այս հանգամանքն էլ, ոչ պակաս, բացատրում է նրա զայրույթը։ «Ապրոնիոսը,— բարկացած ասում էր նա,— թալանում ու կողոպտում էր այնքան, ինչքան ցանկանում էր և ում ցանկանում էր։ Ամենուրեք լսվում էին կողոպտվածների և ճնշվածների բողոքները, բայց և այնպես և ոչ մի տեղ հողագործները դատ ու դատաստան չէին գտնում»։

73 թվականի վերջին Սիցիլիայում մթնոլորտը խիստ շիկացավ։ Կասկածներ ծագեցին, որ Սիցիլիայում էլ ստրուկների նոր պատերազմ է նախապատրաստվում։ Տեղական լատիֆունդիաների տերերը դիմեցին հավատարիմ մարդկանց և խստացրին հսկողությունն ստրուկների նկատմամբ։ Իսկ կուսակալը։ Ի՞նչ էր անում նա։ Նա հանկարծ այն կարծիքին հանգեց, որ ստրուկների սպառնացող պատերազմի հաշվին էլ կարելի է հարստանալ։

Այսպիսով, Վերեսը սկսեց մեծաքանակ ստրուկներ ունեցող ընտանիքներին մատնելու նպատակով լրտեսներ բուծել։ Շատերը դրանից խուսափելու համար դիմում էին կաշառքի օգնությանը։ Բայց բոլորը չէ, որ հեշտությամբ էին լեզու գտնում։ Ցիցերոնի ընկեր և հյուրընկալ պանորմցի Ապոլոնիոսը՝ հարուստ ու ազդեցիկ մի մարդ, չցանկացավ «հաշտվել» և ահա ինչ ստացվեց։ «Ժամանելով Պանորմ, Վերեսը նրա հետևից մարդ ուղարկեց և մունետիկին կարգադրեց տրիբունալից բարձրաձայն տալ նրա անունը։ Հրապարակում շատ ժողովուրդ կար, մարդի բնակիչները խմբերով հավաքվել էին Պանորմում։ Ներկաների մեջ անմիջապես շշուկ տարածվեց. «Իսկ ես զարմանում էի, թե ինչպե՞ս է նա այսքան ժամանակ հանգիստ թողել Ապոլոնիոսի հարստությունը։ «Երևում է, մի բան որոշել է, մի բան գտել է»։ «Դե, իհարկե, Վերեսն իզուր չէ նման մեծահարուստի անունը բարձրաձայն տալիս...» Բոլորն անհամբեր սպասում են,

թե ինչ է կատարվելու։ Հանկարծ շնչակտուր վազելով գալիս է Ապոլոնիոսը ջահել որդու հետ։ Ծերուկը վազուց էր, ինչ անկողնուց դուրս չէր գալիս։ Վերեսը Ապոլոնիոսի տասնապետ-հովիվ ստրուկի ինչ-որ անուն է տալիս, մեղադրելով ստրուկներին խռովություն հրահրելու մեջ և պահանջում է հանձնել նրան։ Մինչդեռ Ապոլոնիոսն այդպիսի ստրուկ չի ունեցել։ Սա հավատացնում է, թե այդ անունով ստրուկ ընդհանրապես չունի։ Այնժամ Վերեսը հրամայում է բռնել նրան և տրիբունալից տանել բանտ։ Ապոլոնիոսը սկսում է դոռալ, որ ինքը՝ դժբախտը, ոչ մի մեղք չունի, ոչինչ չի արել, որ իր բոլոր փողերը շրջանառության մեջ են և հիմա կանխիկ դրամ չունի։ Մինչ հսկայական ամբոխի առջև նա հայտարարում է այդ բանը, յուրաքանչյուրին հասկացնելով, որ նման դաժան անարդարացիության զոհ է դարձել սոսկ կուսակալին կաշառք չտալու հետևանքով, մինչ նա, կրկնում եմ, պոռում էր դրամի հետ կապված այդ պատմության մասին, նրան բռնում են ու տանում բանտ»։

Ապոլոնիոսը միակը չէր, որ տուժել էր Գ. Վերեսից, բայց միայն նա էր «անարդարության բաժակը խմել մինչև վերջ, մնացածները,— իսկ դրանց թիվը քիչ չէր,— փող էին տվել, հետապա անախորժություններից ազատվելու համար»։

Ցիցերոնն Ապոլոնիոսին անվերապահորեն իր պաշտպանության տակ չի առնում։ Նա սոսկ համարում է, որ «հարկ չկար տոանց դատի դժվարանալն պատվել պատվավոր համայնքի պատվավոր քաղաքացուն»։ Հռետորի բերած թույլ փաստարկը («Սիցիլիայում տեղի ունենալիք ամենափոքր խռովության կամ պատերազմի դեպքում, հաշվի առնելով Ապոլոնիոսի հարստությունը՝ բազմաթիվ ստրուկներ, անասուններ, ագարակներ և շրջանառության մեջ գտնվող դրամ, ոչ մեկը նրանից շատ չէր տուժի») իրեն՝ Ցիցերոնին էլ բավականին երերուն էր թվում։ Նա քաջ գիտեր, որ Իտալիայում ստրկատերերը դեմ էին ապըստամբությանը, հետևում էին իրենց ստրուկներին, բայց և այնպես ապստամբությունը տեղի ունեցավ։

Ինչ վերաբերում է Վերեսին, ապա ստրուկների խռովության հնարավորությունը նրան քիչ էր հուզում։ Նա իր հատակ ծրագիրն ուներ. ինչպես հարկն է կողոպտել պրովինցիան։ Այնուհետև, եթե ողջ Իտալիան անցնի հաղթական Սպարտակի ձեռքը, ամբողջ հարստությունը բարձել նավերը և փախչել անվտանգ մի տեղ։

Այսպես էր պատկերացնում Վերեսն ապագան, եթե իրագործությունները անհապատ ընթացք ստանային։ Իսկ յուրաքանչյուր օրը, որպես էպիկուրյան փիլիսոփայությունը յուրովի հասկացող մարդ, նա սկսում էր մի բանի մասին մտածելով. պետք է օրն անցկացնել առավելագույն հաճույքներով։ Թե դա ինչ էր նշանակում Վերեսի համար, շատ արտահայտիչ պատմել է Ցիցերոնը. «... Նա մշտական բնակավայր ընտրել էր իր հաճելի դիրքով և հիանալի կլիմայով Սիրակուզան, որտեղ, ասում են, երբեք այնպիսի վատ օր չի լինում, որ գոնե մեկ անգամ արևը չերևա։ Այստեղ մեր քաջարի զորավարը ձմռան ամիսներին այնպիսի կյանք էր վարում, որ նրան ոչ միայն դժվար էր տանից դուրս տեսնել, այլև մահճից դուրս։ Կարճ ցերեկներն անցնում էին կերուխումների մեջ, երկար գիշերները կարճացվում էին անառակությամբ։ Հետո գարնան գալստյամբ, սակայն, նրա համար գարունը չէր սկսվում այն ժամանակ, երբ սկսում էր փչել զեփյուռը կամ ծագում էր նույն համաստեղությունը, ո՞չ, նա գարնան գալը որոշում էր առաջին վարդը տեսնելիս,— Վերեսն ամբողջովին տրվում էր աշխատանքին և ուղևորություններին, ընդ որում հիանալի անհոնջություն ու եռանդ էր դրսևորում. ոչ ոք նրան ձի հեծած չէր տեսնում։ Ինչպես մի ժամանակ բութանիական թագավորներին, նրան էլ պատգարակով առնում էին ութ ստրուկներ, ընդ որում նա պառկում էր միլեցյան թափանցիկ կտորից կարված, վարդի թերթերով լցված բարձերի վրա, մի պսակ գլխին, մյուսը՝ պարանոցին և դրանից բացի շնչում էր ցանցի մեջ լցված բմբուլի պես նուրբ վարդերի բույրը։ Այդպես էր նրա երթը։ Երբ այն ավարտվում էր և նա հասնում էր քաղաքը, նույն պատգարակով անմիջապես տանում էին ննջարան։ Այնտեղ նրան ներկայանում էին սիցիլիական մագիստրատները, ներկայանում էին նաև հռոմեական հեծյալները, ինչը հաստատված է երդմամբ ցուցմունք տված շատ վկաների կողմից, և նրան գաղտնի ծանոթացնում էին վճռերի էությանը։ Շուտով ի լուր ամենքի հայտարարվում էին նրա վճիռները։ Այսպիսով, ննջարանում անցկացրած իր ժամանակի որոշ մասը հատկացնելով ոչ թե օրենքով հասնող, այլ առաջարկված կաշառքի չափով պայմանավորված դատ ու դատաստանին, նա մնացած մասը համարում էր Բաքոսի ու Վեներայի սեփականությունը»։

Այսպես էր Վերեսը ապրում և ղեկավարում Սիցիլիան 78—71 թվականներին։

Զարմանալի չէ, որ այդպիսի քաղաքականության պայմաններում Սպարտակի լիազորները, որոնք խմբերով ու մենակ Սիցիլիա էին անցնում, իրենց զգում էին բավական ազատ և եռանդուն աշխատանք էին տանում համասիցիլիական ապստամբություն նախապատրաստելու ուղղությամբ։ Ամենուրեք կազմավորվում էին տարբեր շրջաններում գործող պարտիզանական ջոկատներ (Ցիցերոնի ձևակերպմամբ՝ «ավազակներ»)։ Իսկ այս ամենին կուսակալը նայում էր մատների արանքով։

Գ. Վերեսի քաղաքական երկիմաստ դիրքորոշումը լիովին հասկանալի է դարձնում նրա քաղաքականությունը բուն Սիցիլիայում ստրուկների և ստրկատերերի նկատմամբ, քաղաքականություն, որը Ցիցերոնը կծու ծաղրում էր. «Ի՞նչ ես արել, պրովինցիայի քաջարի-պատվար ու պահապան։ Զենք վերցրած և Սիցիլիայում պատերազմի հրդեհը վառելու պատրաստ ստրուկներին, քո և քո դատավորների կողմից մեղավոր ճանաչվելուց հետո, արդեն դահճին հանձնված այդ ստրուկներին, որոնց մնացել էր նախնիների սովորությամբ միայն մահապատժի ենթարկել, դու համարձակվել ես խլել մահվան ճիրաններից և ազատել դատարանից...

... Այո՛, դու գերազանց զորավար ես, Մանիոս Ակվիլիոսի հետ չես համեմատվի, այլ միայն Պավլոսի, Սկիպիոնների, Մարիոսի։ Ինչպիսի՜ հեռատեսություն է ցուցաբերել նա այդ խուճապի և պրովինցիային սպառնացող վտանգների մեջ։ Իտալիայում փոթորկվող ստրուկների պատերազմի հետևանքով սիցիլիական ստրուկների բազմությունների մեջ առաջացած անբարեհույս տրամադրությունները տեսնելով, ինչպիսի՜ փրկարար սարսափ է կարողացել ներշնչել նրանց, որպեսզի զրկի շարժվելու ցանկությունից։ Նա հրամայում է բռնել խոովարարներին՝ ո՞վ չէր վախենա։ Հրամայում է նրանց տերերին ներկայանալ դատարան՝ ինչպիսի՜ սարսափելի բան ստրուկների համար։ Հայտարարում է վճիռը. «Այո՛, մեղավո՛ր է»։ Պարզ է, հրդեհը ժամանակին է հանգցված, մի քանի մարդկանց արյունով ու արցունքով։ Իսկ այնուհետև՞։ Դե, հասկանալի է. մտրակածեծ, կրակով խոշտանգում և ծայրահեղ պատիժ՝ դատապարտյալներին, ծայրահեղ սարսափ մյուսներին՝ տանջալի մահ խաչի վրա... Ո՛չ, այս ամենից նրանց ազատել են։ Պատկերացնում եմ, ստրուկները ինչպե՞ս էին սարսափում կուսակալի այս զիջողականությունը տեսնելիս, մի կուսակալի, որից ստրուկների հանցա-

վոր դավադրության համար դատապարտվածների կյանքը կարելի էր դնել նույնիսկ (վերջին պահին) հենց գահճի միջնորդությամբ»։

Ապստամբ ստրուկների ներխուժումը Սիցիլիա Վերեսին հնարավորություն էր տալիս իր վրայից թոթափել կղզու վիճակի պատասխանատվությունը. ամեն ինչ,— սեփական արարքներն էլ հետը,— կարելի էր այն ժամանակ բարդել նրանց վրա։ Իր համար անբարենպաստ հետևանքներից էլ նա կարող էր չվախենալ. փախուստի նավը միշտ պատրաստ էր...

Մինչ նա զբաղված էր կողոպուտով, Լ. Լուկուլլոսը ընթանում էր փառքի ճանապարհով, երազելով դառնալ նոր Ալեքսանդր Մակեդոնացի։ Եվ կարծես, բախտը ժպտում էր նրան...

Գլուխ տասնչորսերորդ

ՄԻՀՐԴԱՏԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ (72 Թ.)

Պատերազմի առաջիկա երրորդ տարին երկու կողմերն էլ համարում էին վճռական։ Ե՛վ Լ. Լուկուլլոսը, և՛ Միհրդատը եռանդագին պատրաստվում էին նոր ճակատամարտերի։ Պոնտացոց արքան ձմեռել էր Հռոմեացիներից ընդամենը 150 կիլոմետր հեռու, Կոմանա քաղաքից և Լիկաստես գետից արևելք, Կաբիրայի շրջանում, որտեղ գտնվում էր նրա հարուստ պալատը և գանձարանը։ Նա բազմաթիվ նամակներ է հղում Բոսպորոսի տիրակալ Մաքար որդուն, պահանջելով ռազմական օգնություն ուղարկել։ Օժանդակություն էր խնդրում նաև Սկյութիայի թագավորներից, իր փեսա Հայոց արքա Տիգրանից և պարթևներից։

Մաքարը և սկյութները օգնություն ուղարկեցին, իսկ Տիգրանը և Արշակը տարբեր պատճառաբանություններով մերժեցին՝ ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չէր ցանկանում խառնվել Միհրդատի վտանգավոր և անհաջող ձեռնարկումներին։

Նախապատրաստության և բանակցությունների մեջ անցավ ձմեռը։ Գարունը եկավ։ Միհրդատի տրամադրության տակ արդեն կար 60 հազարանոց հեծելակազմ և 8 հազարանոց այրուձի։

Ապրիլի վերջին, տեղեկանալով, որ Միհրդատը պատրաստ է ռազմական գործողությունների, Լ. Լուկուլլոսն իր զորքին հրամայեց շարժվել հարավ։ Նրա հետ ճանապարհ ընկան 30 հազար

Հռոմեացի, 30 հազարանոց օժանդակ զորք և Հռոմեացիներից ու Թրակացի վարձկաններից բաղկացած 5 հազարանոց այրուձի։ Հռոմեացի զորավարը Ամիսոսի մոտ զորքի մի մասը թողեց Լ. Մուրենային, Սինոպեի մոտ՝ Ապպիոս Կլավդիոսին, Եվպատորիայի մոտ՝ Կասիոս Բառբային, Թեմիսկյուրեի մոտ՝ Կվ. Վոկոնիոսին, հանձնարարելով նրանց շարունակել թշնամու պաշարումը։

Թշնամուն կանգնեցնելու և Կաբիրայի վրա հարձակումը կանխելու նպատակով Միհրդատը հապճեպորեն Լ. Լուկուլլոսին ընդառաջ ուղարկեց 50 հազար հետևակ և 5 հազար հեծյալ (բանակների հրամանատարներ՝ Մենանդրոս, Մենեմաքոս, Մյուրոն, Մետրոֆանես և Լ. Ֆանիոս)։ Լիկատես գետի հովտում սկսվեցին հեծելազորային բախումները։ Վերջապես երկու կողմերն էլ հանդիպեցին մարտի դաշտում։ Ճակատամարտի ընթացքում Մետրոֆանեսը և Լ. Ֆանիոսը, որոնք Լուկուլլոսի հետ գաղտնի պայմանավորվել էին դավաճանության մասին, հանկարծակի խախտեցին ճակատային գիծը, որի հետևանքով ամբողջ զորքը փախուստի դիմեց։

Ստանալով դավաճանության, պարտության և զորքի անկանոն նահանջի լուրը, Միհրդատը հոգեպես ընկճվեց։ Սակայն Տաքսիլեսի, Մետրոդորոսի, Կալիստրատեսի և անձնական գվարդիայի պետ Բիտոիտոսի շնորհիվ աստիճանաբար ուշքի եկավ և Տաքսիլեսին ու Դիոֆանտեսին հրամայեց նոր հավաքած և արագորեն մարդած զորքով՝ 40 հազար հետևակ և 4 հազար հեծյալ, շտապել պարտված զորամասերին օգնության։ Միաժամանակ Միհրդատը Տաքսիլեսին հանձնարարեց Լ. Լուկուլլոսի զորքում կաշառելու փորձ անել թրակական հեծյալ զորամասերին։ Դեռ վերջերս նրանք կռվում էին արքայի բանակում, բայց Հռոմեացի զորավարի կողմից դերեվարվել էին և մտցվել նրա սեփական բանակի կազմի մեջ։ Այդ պատճառով Միհրդատը հույս ուներ նրանց անջատել թշնամուց։

Թրակացի հրամանատարների հետ համատեղ գործողությունների ընդհանուր ծրագիր մշակվեց։ Եվ երբ մի շարք նոր բախումներից հետո կողմերը հանդիպեցին հեծելազորային մեծ ճակատամարտում, թրակացիները հանկարծ զենքերն ուղղեցին հռոմեացիների դեմ։ Հռոմեական այրուձին սարսափելի ջարդ կրեց։ Նրանց մնացորդները լքելով իրենց վիրավոր հրամանատար Մ. Պոմպոնիոսին,— նման բանը հռոմեացիների մոտ հազվադեպ էր պատահում,— խուճապահար փախուստի դիմեցին։

Մ. Պոմպոնիոսին գերեվարեցին, և հաղթողները նրան ցընծագին տարան Միհրդատի մոտ։

Ստանալով իր հեծելազորի պարտության լուրը (դրա մնացորդները փրկվել էին հռոմեական հետևակի դիրքերում), Լ. Լուկուլլոսն սկսեց հապճեպորեն հետ քաշվել դեպի լեռները։ Նոր ստեղծված իրավիճակի մասին խորհելով, Լ. Լուկուլլոսը որոշեց շարժվել ոչ թե հետ՝ դեպի ծովեզերք, այլ առաջ՝ դեպի Կաբիրա։ Հենց այնտեղ էր ցանկանում կանչել տալ օժանդակ ուժերին՝ նոր հեծյալ զորամասերին, որոնք նրա հանձնարարությամբ պետք է հավաքեին Գալատիա և Կապադովկիա ուղարկված հավաքագրող-սպաները։

Հույն ուղեկցորդներ ճարելով, Լ. Լուկուլլոսը լեռնային արահետներով ուղղություն վերցրեց դեպի Կաբիրա։ Հարթավայրով այնտեղ էին շտապում նաև պոնտական զորքերը։ Նրանք առաջինը տեղ հասան, իսկ գիշերը իր նշանակած տեղը հասավ Լ. Լուկուլլոսը։ Նա ճամբար խփեց ճիշտ թշնամիների գլխավերևում։

Միհրդատը, ձգտելով պարենի միջոցով թշնամուն ծանր կացության մեջ դնել,— նա լավ էր հիշում Կիզիկոսի դասը,— հրամայեց անխնա ամայացնել ամբողջ շրջանը։ Հաշվարկը ճիշտ դուրս եկավ։ Անհրաժեշտությունից դրդված Լ. Լուկուլլոսը շուտով ստիպված էր Կապադովկիա (Հռոմեական հեծելազորի հայտնի պարտությունից հետո տեղի թագավորի հավատարմությունը սկսել էր տատանվել և նա դադարեցրել էր հացի առաքումը) ուղարկել լավ զինված ջոկատներ՝ մթերք հափշտակելու համար։ Միհրդատն, իմանալով այդ մասին, ավելի ուժեղ և բազմաքանակ զորամասեր ուղարկեց նրանց դեմ։ Մի քանի ընդհարումներից հետո Կաբիրայի շրջակայքում խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ, որտեղ Միհրդատի զորքերը կործանիչ պարտություն կրեցին։

Մ. Պոմպեոսը, Գն. Պոմպեոս Մեծի աղգականը, իրեն վստահված լեգեոնով դրավեց Միհրդատի՝ Լիկաստես գետից այն կողմ գտնվող ճամբարը։ Հեռացող թշնամուն կրնկակոխ հետապընդելով՝ նա ամեն գնով ցանկանում էր գերի վերցնել թագավորին։

Զիերին շնչակտուր արած քշելով, Միհրդատը փոքրիկ շքախմբով սլացավ Կոմանա։ Միանալով քաղաքի կայազորի հեծյալ ջոկատին (2 հազար մարդ) նա անմիջապես թեքվեց դեպի արևելք։ Երեք օրում 200 կիլոմետր ճանապարհ կտրելով, Միհրդատը

Փոսադռան մոտով անցավ Հայաստանի սահմանը (72 թ. հունիս)։

Մ. Պոմպեոսը ստիպված՝ կանգ առավ սահմանի մոտ՝ սպասելով իր զորավարի հետագա հրամաններին։ Իսկ Լուկուլլոսը, իջնելով բարձունքից, որտեղ քշել էր նրան Միհրդատը (այդպիսիք են զինվորական բախտի սատանումները), պաշարեց Կարիրան։ Նա կայազորին առաջարկեց հանձնվել, բայց մերժում ստացավ։ Ենթադրում դեռ հավատում էին օգնությանը, որ Միհրդատը խոստացել էր բերել Տիգրանից։

Պաշարման համար թողնելով զորքերի մի մասը, Լ. Լուկուլլոսը շտապեց Փոսադռան կողմը, որտեղ արդեն գտնվում էր Մ. Պոմպեոսը։ Հայաստանի սահմանը Միհրդատի անցնելուց չորս օր հետո միայն նա այդտեղ հասավ։

Երկար մտորեց Լ. Լուկուլլոսը. ի՞նչ անել, անցնե՞լ սահմանը, թե՞ ոչ։ Տիգրանից պահանջե՞լ, որ հանձնի Միհրդատին։ Թե՞ առայժմ խուսափել Հայոց արքայի հետ որևէ ընդհարման մեջ մտնելուց։

Վերջապես կանգ առավ ամենազգուշավոր որոշման վրա. առայժմ և՛ Տիգրանին, և՛ Միհրդատին անուշադրության մատնել։ Իրեն միացնելով լեգատի լեգեոնը, Լ. Լուկուլլոսը վրիժառության համար շարժվեց դեպի խաղտիքացիների և տիբարենների հողերը, որոնք արքային զորք էին տվել պատերազմելու համար, իսկ այնտեղից՝ Փոքր Հայք։ Ամենուրեք քաղաքներին և ամրոցներին նա ստիպում էր հանձնվել։

Լ. Լուկուլլոսի հաղթանակները բոլոր սուլլայականներին հիացմունք պատճառեցին Հռոմում։ Նույնիսկ նրա հակառակորդները մեղմացել էին։ Ամենուր զորավարի հասցեին ամենաջերմ գովեստներ էին շռայլում։ Մյուսներից հետ չէր մնում և Ցիցերոնը։ Թե ինչ ոգով էր արտասանում իր ներբողները, կարելի էր կռահել նրա հետևյալ խոսքերից. «Նախ և առաջ ես կցանկանայի բոլորին հասկացնել այն, որ Լ. Լուկուլլոսին մատուցում եմ ամենայն փառք, որին նա արժանի է որպես քաջարի ռազմիկ, իմաստուն ադմինիստրատոր և մեծ զորավար։ Նա հանդես եկավ այն ժամանակ, երբ Միհրդատը ահռելի քանակությամբ զորք ուներ, որը, բացի այդ, ապահովված էր անհրաժեշտ ամեն ինչով, իսկ անսահմանորեն մեզ նվիրված Կիզիկոս քաղաքը՝ Ասիայի ամենագլխավոր քաղաքներից մեկը, շրջապատված էր արքայի անձնական հրամանատարության տակ գտնվող հորդա-

ներով և ենթարկվում էր կատաղի հարձակումների։ Եվ ի՞նչ։ Լ. Լուկուլլոսի արիության, աչալրջության և հնարամտության շնորհիվ այդ քաղաքն ազատագրվեց սարսափելի վտանգից, որը սպառնում էր նրան պաշարումը։ Հենց նա ջախջախեց և ոչնչացրեց սերտորիոսական առաջնորդների հրամանատարությամբ և ասիությամբ վառված անձնակազմերով դեպի Իտալիայի ափերը սուրացող վիթխարի և հիանալի հանդերձավորված նավատորմը։ Հենց նա մի շարք ճակատամարտերում բնաջինջ անելով թշնամիների անհամար զորքեր, մեր լեգեոնների համար ճանապարհ հարթեց դեպի Պոնտոս, որը մինչ այդ բոլոր կողմերից անմատչելի էր հռոմեական ժողովրդի համար...»

Իսկ այդ ընթացքում հաղթական զորավարը Փոքր Հայքից կրկին շարժվեց դեպի Կաբիրա։ Քաղաքի կայազորը լիովին հուսալքվեց։ Միհրդատի խոստացած օգնությունը չէր գալիս և, պարզ դարձավ, որ չէր էլ գալու։ Հայաստանից ստացված տեղեկությունների համաձայն Տիգրանը Միհրդատին իր մոտ չէր թողնում։ Նրան տեղավորելով իր արքայական պալատներից մեկում, հրամայել էր աստիճանին արժանի պատիվներ ցուցաբերել, բայց հանդիպման խնդրանքին պատասխանել էր լռությամբ։

Միհրդատը իզուր էր նամակներ ուղարկում պարթևների արքա Արշակին, նրան հորդորելով պատերազմ սկսել հռոմեացոց դեմ։

Իր թագավորության վերականգնման հույսը միանգամայն կորցնելով, հուսահատ Միհրդատը կանչեց հավատարիմ ներքինի Բակքիդեսին, հրամայեց նրան հեծյալների զինված ջոկատով գնալ ծովեզրյա Փառնակիա քաղաքը, որտեղ պատերազմի վտանգներից հեռու գտնվում էին նրա քույրերը, կանայք, հարճերը, և նրանց բոլորին սպանել։

Բակքիդեսը կատարեց արքայի հրամանը, միայն հնարավորություն տալով, կանայք իրենք ընտրեն մահվան ձևը։

Արքայի հուսահատական որոշումը նրան նոր փորձանք բերեց։ Նրա հրամանից կայազորների հրամանատարները հասկացան, որ Միհրդատը բոլոր հույսերը կորած է համարում։ Ուստի իրենց ազատ համարեցին հավատարմության նախկին երդումներից և մեկը մյուսի հետևից սկսեցին հռոմեական զորավարի մոտ սուրհանդակներ ուղարկել՝ հայտնելով իրենց հնազանդությունը։ Նախօրոք որոշ արտոնություններ կորզելով, վերջապես հանձնվեց և Կաբիրան։ Այսպիսով Լ. Լուկուլլոսը հսկայական

հարստության տեր դարձավ։ Մի մասն անմիջապես բաժանեց ավարին ագահությամբ սպասող ռազմիկների միջև։ Լ. Լուկուլլոսը բանտերից ազատեց իր բոլոր կողմնակիցներին՝ հույներին և պոնտացիներին (նրանց մեջ էին գտնվում Միհրդատի դեմ պայքարության մասնակից, արքայի քույր Նիսան, Փենիկսի լայմաթիվ ազգականները և հույներ՝ պոնտական զանազան քաղաքների հռոմամետ կուսակցությունների գլխավորներ)։

Կաբիրայից Լ. Լուկուլլոսը շարժվեց հետ՝ դեպի Ամիսոս։ Լ. Մուրենայի պաշարումն առայժմ անհաջող էր ընթանում, նրա հակառակորդը՝ Կալիմաքոսը, հռչակված էր որպես հմուտ զորավար և տաղանդավոր ռազմական ինժեներ։ Իզուր էր Լ. Լուկուլլոսը փորձում համոզել նրան և քաղաքի բնակիչներին, որ բաց անեին դարպասները։ Պոնտացիները չէին էլ ցանկանում լսել դիմադրությունը դադարեցնելու մասին։ Հռոմեացի զորավարը շատ դառնացած էր։ Իր լեգատին հանձնարարելով շարունակել իրասածի թշնամու պաշարումը, նա զորքով ուղղվեց Սվպատորիայի կողմը, որտեղ Կասիոս Բառբան պաշարել էր Կլեոքարան։ Այստեղ էլ որևէ հաջողություն չէր երևում։

Աշունը մոտենում էր, բայց Լ. Լուկուլլոսը նոր մեծ աշխատանքներ էր ծավալել՝ աշտարակների շինարարություն և ամրացված պատնեշաղծերի լիակատար կառուցում։ Կաբիրայի մոտ մղված մարտերում հոգնած դինվորները չէին ցանկանում նման ծանր աշխատանք սկսել, բայց զորավարն անդրդվելի էր։ Անիծելով նրան, չարացած լեգեոնականները ձեռքներն առան կացիններ, սղոցներ ու քլունգներ։

Կասիոսին հանձնարարելով աշխատանքների հսկողությունը, Լ. Լուկուլլոսը Հելլեսպոնտոսից կանչել տվեց Գ. Տրիարիոսի նավատորմը և նրա հետ սկսեց շրջել ծովեզրով, իրեն ենթարկելով դեռևս արքայի կողմը կանգնած քաղաքները (Ամաստրիսը, Պոնտական Հերակլեան և այլն)։

Այս գործերն ավարտելով՝ Լ. Լուկուլլոսը ծովեզրից շարժվեց դեպի Ասիա պրովինցիան։ Հիմնավորվելով Լաոդիկեում, նա սկսեց եռանդագին կարգի բերել այնտեղի գործերը։ Նկատի ունենալով ծայրահեղ բարդ քաղաքական իրադրությունը (Իտալիայում ստրուկների ապստամբությունը չտեսնված թափ էր առել, Միհրդատը դեռևս հնարավորություն ուներ իրեն վերադարձնելու թագավորությունը, քանի որ Տիգրանը առայժմ նրան չէր հայտնել իր վերջնական վճիռը։ Պոնտոսի և Ասիայի բնակչու-

թյան համակրանքն, այսպիսով, դառնում էր ռազմական հաստատուն հաջողությունների գրավականը), Լ. Լուկուլլոսը որոշեց ծայրահեղ միջոցների դիմել կապալառուների նկատմամբ։ Հենվելով Ասիայում, Բիթանիայում, Պոնտոսում և Կիլիկիայում տարածվող իր պրոկոնսուլական իշխանության հեղինակության վրա՝ նա հայտարարեց, որ պարտատուն իրավունք ունի միայն իր պարտապանի եկամուտների 1/4-ի վրա, սկզբնական պարտքի գումարի մեջ տոկոսներ մտցնող վաշխառուն կորցնում է ամեն ինչ (Պլուտարքոս)։

Հռոմեական հեծյալների անկշռում ագահության համար նման որոշումը սարսափելի հարված եղավ։ Զարմանալի ոչինչ չկար այն բանում, որ նրանք անմիջապես հայտարարեցին իրենց հանդեպ հաղթական զորավարի սարսափելի անարդարացիության մասին և դրամի օգնությամբ Հռոմում սկսեցին նրա դեմ գրգռել հին թշնամիներին՝ Պ. Ցեսեգոսի և Լ. Կվինկցիոսի գլխավորությամբ։

Գեղեցկադեմ, բարեկազմ, սուր խելքի տեր, հրաշալի կրթություն ստացած, թե՛ ֆորումում և թե՛ արշավանքների ժամանակ միատեսակ պերճախոս Լ. Լուկուլլոսը հին ժամանակների արիստոկրատի ամբողջ վարքագիծն ուներ և այդ առումով բոլորովին նման չէր իր ուսուցիչ Սուլլային։ Նա չէր շրջում վրաններում, հենց այնպես՝ ընկերավարի, չէր խոսում զինվորների հետ։ Նրա պահանջները անողոք էին, իսկ պարգևները՝ ժլատ։ Նա չէր ցանկանում զինվորներին ձմեռելու տեղավորել հռոմեական ու դաշնակից քաղաքներում։ Նա ակնհայտորեն ցանկանում էր զորքին ստիպել ձմեռելու բարակ կաշվե վրաններում, թշնամական երկրում։ Վերջապես, նա թույլ չտվեց կողոպտել ոչ մի հարուստ քաղաք։ Եվ դա, իհարկե, որոշեց նրա նկատմամբ այդ քաղաքների վերաբերմունքը։

72 թվականը մոտենում էր ավարտին, Լ. Լուկուլլոսը կարող էր տարվա արդյունքներն ամփոփել։ Միհրդատի համար Պոնտոսը բացահայտ կորած էր։ Տիգրանը (համենայն դեպս ներկա պահին) միտք չուներ պատերազմի մեջ մտնել։ Դա չէին ուզում նաև պարթևները։ Հեծյալները չարացած էին Լ. Լուկուլլոսի վրա և Հռոմում ու բանակում նրա դեմ ագիտացիա էին տանում։ Բանակը դժգոհություն էր արտահայտում։ Ճիշտ է, պրովինցիաները գրեթե աստվածացնում էին նրան...

Լ. Լուկուլլոսի համար ապագան բավականաչափ անորոշ էր թվում։ Նա հաղթող էր, բայց հաղթանակը բավարար ամուր չէր, քանի դեռ Միհրդատի թիկունքում կանգնած էր ուժով լեցուն նրա փեսան՝ Տիգրանը։ Նոր Ալեքսանդր կարելի էր դառնալ միայն հայոց արքային հաղթելով։ Բայց գործողությունների ընթացքը Իտալիայում (հռոմեական զորքերի անընդմեջ պարտությունները Սպարտակից) ստիպում էին ավելի հաճախ կրկնել նույն հարցը. իսկ ստիպված չի՞ լինի Սուլլայի նման դադարեցնել պատերազմը Միհրդատի դեմ, նրա հետ հապճեպ հաշտություն կնքել և մեկնել Իտալիա՝ սենատին օգնության։ Այսպես մտածելու բոլոր հիմքերը կարծես կային...

Գլուխ տասնհինգերորդ

ՍՊԱՐՏԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՆՍՈՒԼՆԵՐԻ ԴԵՄ։ ԿՐԻՔՍՈՍԻ ԵՎ ՆՐԱ ԲԱՆԱԿԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

I

Սկսվեց 72 թվականը, որը շարժման առաջնորդների կարծիքով պետք է լուծեր իրենց ծրագրած գործի ելքը։ Ապստամբների 19 բարձրագույն զորապետները (թրակացի Սպարտակը, սամնիտ Կրիքսոսը, իսպանացի կելտ Կաստոսը[1], գալլ Գանիկոսը, Պ. Վարինիոսի նախկին հավատարիմ ստրուկ Պուբլիպորոսը[2], որը նպաստել էր ապստամբներին և, հռոմեական կարևոր դաղտնիքներին տեղյակ՝ փախել էր իր տիրոջ մոտից, լեգեոնների, հեծելազորի և լրտեսների պետերը, ճամբարի և արհեստավորների պրեֆեկտը) դինվորական խորհուրդների ժամանակ բազմիցս քննարկում էին հետագա գործողությունների ծրագրի դանազան տարբերակներ։

Դրությունը ներկայանում էր հետևյալ կերպ. ապստամբներին պատկանում էր հարավը, բացի մի քանի քաղաքներից

---

[1] Կաստոսը՝ կելտական արիստոկրատիայի անուն է։ Հայտնի է, օրինակ, սեկվանների թագավորի որդի Կաստիկոս անունը։ Հայտնի է նաև Կաստակս քաղաքը հին Իբերիայում (Իսպանիա)։

[2] Պուբլիպորոսը, հավանաբար, ծնվել է Էտրուրիայում (այն Սամնիումի հետ միասին առանձնապես տուժեց Սուլլայի ճնշումից)։ Եվ հենց այդ պատճառով նա Էտրուրիան ընտրեց իբրև գլխավոր ռազմաբեմ, որպես գերագույն առաջնորդ փոխարինելով Սպարտակին (71—70 թթ.)։

և Կապուայից, որտեղ մնացել էին Պ. Վարինիոսի զորքերի մնացորդները (ինքն արդեն գտնվում էր վիճակահանությամբ բաժին ընկած Ասիա պրովինցիայում)։ Նրանց տրամադրության տակ կար 70 հազարանոց մի բանակ, այսինքն՝ 5 հազարական մարդուց բաղկացած 14 լեգեոն հետևակ և 4200 հեծյալ։

Գերագույն առաջնորդի հրամանով հավաքագրվելիք մյուս լեգեոնների համար դարբինները եռանդուն գենք էին կռում։ Վճռական ստրատեգիական ուղղություններով ստեղծվում էին բանակային մթերատեսություններ։ Պարենն մատակարարում էին հարավում ստրուկների դավթած և նրանց կողմից կառավարվող բազմաթիվ կալվածքները։

Միջին և հյուսիսային Իտալիայում գնալով ուժեղանում էր պարտիզանական շարժումը, ավելանում էին կալվածքների վրա հարձակումներն ու հրկիզումները, ստրկատերերի սպանությունները, վիլլաներից և լատիֆունդիաներից ստրուկների փախուստները։ Քաղաքային ստրուկները, հարավի իրենց ընկերների հաջողություններից քաջալերված, նույնպես սկսում էին մտածել ապստամբության մասին։

Ապստամբական շարժման առաջնորդների կարծիքով, բազմականին ծանրակշիռ այդ սպառնալիքի դեմ սենատն առայժմ բավարար միջոցներ չէր ձեռնարկում։ Բայց սպասվում էր, որ վերջապես սպառնալիքի շափն զգալով, սենատը պրովինցիաներից զորքեր կկանչի. առաջին հերթին՝ Թրակիայից, հետո մի բանակ Իսպանիայից (Պոմպեոսինը կամ Մետելլոսինը) և, վերջապես, Պոնտոսում Միհրդատի դեմ պատերազմող Լ. Լուկուլլոսի զորքերի մի մասը։

Այդպես մտածելու բոլոր հիմքերը կային։ Որպես Մակեդոնիայի կուսակալ Մ. Լուկուլլոսը հաջողությամբ կռվում էր թրակացի-բեսերի դեմ։ Միաժամանակ նա դիվանագիտական խարդավանքների էր դիմում, ջանալով օդրիսների թագավոր Սադալոսին հաշտության տրամադրել։ Ամբողջ եռանդով հռոմեական զորավարը հարձակվում էր անկախության պայքարի կողմը բռնած հունական քաղաքների վրա (Իսարոպոլիս, Մեսեմբրիա, Օդես, Տոմք և ուրիշներ)։

Նույն ժամանակ ակնհայտ ճգնաժամային վիճակ է սկսվում Իսպանիայում։ Սերտորիոսի բանակում աճում էր դասալքությունը, համայնքները մեկը մյուսի հետևից երես էին թեքում։ Զախ թևի և նույնիսկ մարիոսական կուսակցության կենտրոնի

սպանները սկսել էին ծուռ նայել իրենց զորավարին։ Պոմպեոսն ու Մետելլոսը բոլոր ապստամբներին բացահայտորեն հայտարարել էին ներման մասին և մեծ դրամական պարգև էին խոստացել Սերտորիոսի սպանության համար, այնպես որ ամեն տհաճ անակնկալ կարելի էր սպասել։

Բաղմաթիվ քննարկումներից հետո Սպարտակը և նրա ընկերները հետագա գործողությունների ընդհանուր ծրագիր մշակեցին։ Որոշվեց բանակը բաժանել երկու մասի։ Հարավում, քանի որ այն լիովին մաքրված էր թշնամիներից, թողնել Կրիքոսին 30 հազարանոց զորքով, նրան հանձնարարելով ձեռքում պահել հացահատիկային շրջանները (Ապուլիա), հետագա պատերազմի համար կազմավորել նոր լեգեոններ և հեծելազոր, լրջորեն զբաղվել Սիցիլիա դեսանտ իջեցնելու և պրովինցիան ապստամբության մեջ ներգրավելու գործով, ինչպես և ոչնչացնել դեռևս մի շարք քաղաքներում դիմադրող սուլլայական ռազմական գաղութները, առաջին հերթին Սիպոնտոսում։ Քանզի Սիպոնտոսը հացահատիկ և ապրանքներ էր հավաքում ամբողջ Ապուլիայից և տարածում Իտալիայի արևելյան ծովեզրով մեկ (դրա հետևանքով քիչ ցորեն չէր հասնում Հռոմ)[1]։

Այդ նույն ժամանակ Սպարտակը զորքերի մեծ մասով,— 40 հազար հոգի,— Իտալիայի արևելյան ծովեզրով, թշնամական տարածքի միջով, որտեղ սուլլայական ռազմական գաղութներն ամենից թույլ էին, պետք է արշավ սկսեր դեպի հյուսիս։ Ճանապարհին նոր լեգեոններ կազմավորելով, բոլոր ուղղություններով պարտիզանական ջոկատներ ուղարկելով, նա պետք է ներխուժեր հեղափոխական պայթյունի նախապատրաստված Էտրուրիա, որտեղ ստրուկները պատերազմ վարելու փորձ ունեին (մ. թ. ա. 196 թ. ապստամբությունը), որտեղ փախստական ստրուկ պարտիզաններ և ընդհանրապես դժգոհներ շատ կային։

---

[1] Սուլլայի հրամանի համաձայն (մ. թ. ա. 82 թ.) վետերանները Իտալիայում տեղաբաշխվել էին հետևյալ կերպ. Անդրալպյան և Այսրալպյան Գալլիաներում՝ 10 հազար մարդ, Էտրուրիայում՝ 40 հազար, Ումբրիայում՝ 10 հազար, Պիկենայում՝ 10 հազար, Լատիումում՝ 10 հազար, Կամպանիայում՝ 25 հազար, Լուկանիայում և Բրուտիումում (հատկապես ծովափնյա խոշոր քաղաքներ Գուրիոսում, Կոնսենտիայում, Մետապոնտոսում՝ 5 հազար)։ Այսպիսով, Իտալիայի 47 քաղաքներում, որոնք պատերազմի ժամանակ մարիոսական կուսակցության կողմն էին, (Կապուա, Նոլա, Նուկերիա, Պոմպեյ, Տեանոս և այլն), Սուլլան բնակեցրել էր 120 հազար վետերան։

Նրա բանակի գլխավոր խնդիրը լինելու էր. Էտրուրիայում ապստամբություն բարձրացնել, Հռոմին զրկել երկրորդ (և կարևորագույն) հացահատիկային շրջանից, ներխուժել Այսրալպյան Գալլիա, ջախջախել տեղի կուսակալի զորքերը, անցնել Ալպերը և ջախջախել Անդրալպյան Գալլիայի կուսակալի բանակը։ Երկու Գալլիաներում Սպարտակը պետք է ամուր հիմնավորվեր, այստեղ ստեղծեր ապստամբության համար հենակետային երկրորդ բազա։

Այստեղից, Գալլիայից, անհրաժեշտ հավաքագրումներից հետո, նա պետք է Կաստոսի գլխավորությամբ զորք ուղարկեր Իսպանիա՝ Սերտորիոսին օգնության։ Դրանով իսկ հռոմեացիները զրկված կլինեին իսպանական ռազմաբեմերից իրենց զորամասերը հանելու հնարավորությունից։

Ինքը՝ Սպարտակը, գտնվելով Գալլիայում, պետք է շտապ դեսպաններ ուղարկեր Ազատ Գալլիա և Գերմանիա։ Կասկած չկար, որ հռոմեացիների վաղեմի թշնամիներ, պատերազմի և ավարի սիրահար գալլերի ռազմաշունչ ցեղերը՝ արվերները, սեկվանները, հելվետները, չխոսելով արդեն գերմանների մասին, կցանկանային մասնակցել հակահռոմեական շարժմանը։

Գերագույն առաջնորդի մոտ կայացած խորհրդակցությունում քննարկվեցին նաև Թրակիայում, Իլլիրիայում, Մակեդոնիայում ցեղերի պայքարի ակտիվացման զանազան հնարավորությունները։

Ապստամբության առաջնորդները համերաշխաբար ընդունեցին հետագա պատերազմը վարելու նոր ծրագիր։

II

Վերջին նախապատրաստություններն արագորեն կատարվեցին, 72 թվականի մայիսի վերջին ապստամբների զորքերը ճանապարհ ընկան Ապենինյան թերակղզու արևելյան ծովեզրով, Ֆիրմոս, Անկոնա, Արիմինիոն, Մուտինա քաղաքների միջով դեպի Պլացենցիա (Այսրալպյան Գալլիա պրովինցիայի հյուսիսային ծայրամասը)։

Ամենուրեք լսվում էին թրակական, գերմանական, գալլական, փոքրասիական երաժշտության, սրինգների և շվիների ձայներ։ Մարտիկները ռազմի երգեր էին երգում։ Կանայք ամբոխի միջից, իրենց հարազատներին ճանապարհ գցելով, ասիրներով գինի էին հրամցնում։

Սպարտակը, Կրիքսոսը և մյուս բարձրագույն հրամանատարները նույնպես ընդհանուր ուրախությանը մասնակից էին... Հետո, հայրերի սովորության համաձայն, գինի հեղեցին աստվածներին և հաղթական Հերկուլեսին՝ հերոսների հովանավորողին։

— Սպարտա՛կ, իսկ դու երբեմն հիշո՞ւմ ես մրցասպարեզը, որտեղ ելույթ էիր ունենում որպես մուրմիլոն,— հանկարծ հարցրեց Կրիքսոսը։

Սպարտակը զարմանքով նայեց նրան։

— Դա հիմա շատ հեռու անցյալ է... Ինչո՞ւ հանկարծ այդ մասին հիշեցիր։

— Չգիտեմ,— մտախոհ պատասխանեց Կրիքսոսը։— Հանկարծ հիշեցի լանիստ Բատիատոսին և այն ամենն, ինչ մեզ հետ կատարվել է նրա դպրոցում...

— Երբեմն...— Սպարտակը մի պահ աչքերը փակեց, ասես, քանում էր կենտրոնանալ,— շատ հազվադեպ, երազիս դալիս է Կապուայի ամֆիթատրոնի մրցասպարեզը, իմ առաջին ելույթը... Փորձառու ռեդարիուս էր բաժին ընկել... Նա կարողացավ ցանցը նետել վրաս... Այդ օրը քիչ մնաց զոհվեի... Ուղղակի հրաշքով փրկվեցի։ Հետագայում երբեք նման ռիսկի չէի դիմում, ինչպես առաջին անգամ։ Միշտ խստագույն զգուշություն էի պահպանում, հակառակորդի յուրաքանչյուր հարձակումից կայծակնաբար խույս էի տալիս...

— Բայց և այնպես շատերին սպանեցինք մրցասպարեզում,— հոգոցով նկատեց Կրիքսոսը։— Գլադիատորի մեր փառքը մեզ վրա էժան չի նստել։

— Ի՞նչ միտք ունի անցյալը վերհիշել,— պատասխանեց Սպարտակը։— Ճակատագիրն ում վիճակ էր հանել սպանվելու, նա էլ սպանվեց։ Եթե աստվածներ գոյություն ունեն, ապա զոհվածները դեռ կվերադառնան այս աշխարհը։ Եվ մենք հիմա պետք է մտածենք ոչ թե նրանց, այլ կոնսուլների դեմ առաջիկա պատերազմի մասին։ Եթե հաղթենք, բոլորիս համար լավ կլինի։ Իսկ եթե պայքարը տանուլ տանք, բոլորիս կտտանքներ են սպասվում և, անտարակույս, խաչ։ Կամ թե՝ կրկին ամֆիթատրոնի մրցասպարեզ, ինչը Սատիրոսին և նրա մարդկանց վիճակվեց Սիցիլիայի սարուկների ապստամբության պարտությունից հետո։

— Մեզ հետ նման բան երբեք չի կատարվի,— դլուխն օրորեց Կրիքսոսը։— Դեպի հետ ճանապարհ չկա, առանձնապես երկուսիս համար։ Մեր ուղին կամ հաղթանակն է կամ մահը մարտում։ Ինձ համար մի՛ անհանգստացիր. ոչ մի դրության մեջ չեմ հանձնվի, պատիվս չեմ նվաստացնի։

Ապստամբների երկու առաջնորդները հրաժեշտ տալով դրկախառնվեցին և եղբայրաբար համբուրվեցին։

— Զգո՛ւյշ եղիր, թանկագի՛ն Կրիքսոս,— խրատ տվեց Սպարտակն ընկերոջը։— Ոչ մեկի խոսքին մի՛ վստահիր։ Հույս մի՛ դիր նախանշանների և կանխագուշակումների վրա։ Խելքից բացի ոչնչով մի՛ զեկավարվիր։

Կրիքսոսը ժպտաց։

— Հանգի՛ստ մնա, Սպարտա՛կ, բանաստեղծի խոսքերով ասած.

Օձի առամների արանքով իսկ կանցնեմ,
Եվ ես վերջ ի վերջո կմնամ ողջ,—
Առյուծների ճանկն էլ ընկել եմ ես, սակայն
Կարողացել եմ միշտ սպրդել դուրս։

Բոլոր լեգեոնների եղջերափողերն ազդանշան տվին. «Ուշադրությո՛ւն, դրոշները պարզե՛լ»։ Դրոշակակիրները, գետնի մեջ խրած դրոշները պոկելով, կայտառ նժույգներին հեծած, առաջ ընթացան։ Ռազմիկները, վերջին անգամ հարազատներին համբուրելով, իրենց տեղերը գրավեցին զորասյուներում, հավասարեցրին շարքերը։ Նոր ազդանշանները շարժման մեջ դրեցին մարդկանց այդ վիթխարի զանգվածին։ Գլխավերևում լողացին քամուց փողփողացող դրոշները. թրակական՝ վիշապի պատկերով, կելտական՝ վարազի պատկերով, գերմանական՝ ամպրոպի Թոր աստծո և հերոսների հովանավոր Հերկուլեսի պատկերներով, մարդով շարժվեցին հեծելազորները, նրանց հետևից՝ հետևակը, վերջում՝ գումակները...

Այսպես բաժանվեցին նրանք, որպեսզի այլևս երբեք չհանդիպեն։ Կրիքսոսը, ինչպես մտածված էր, 30 հազար հետևակով և 1800 հեծյալով մնաց հարավում։ Իսկ Սպարտակը 40 հազար հետևակով և 2400 հեծյալով շարժվեց դեպի հյուսիս։

Բանակը շարժվում էր արագ (գումակները հասցված էին նվաղագույնի) և ճանապարհին անխնա ոչնչացնում էր թշնամու տարածքը։ Սարկաստերները հապճեպ վերցնելով իրենց ունեց-

վածքի ամենաթանկ բաները՝ խուճապահար փախչում էին Հռոմ։ Սպո հազուստներով փախստականների բազմությունները դալիս էին սենատ և ամենաազդեցիկ սենատորներին աղերսում սանձել խաղաղարար ստրուկներին։

Գիշերով պահակները քաղաքային պարիսպների վրայից հեռավոր հորիզոնում տեսնում էին հրդեհի ցոլքեր,— այդ իր ճանապարհին ամեն ինչ կործանելով Սպարտակի բանակն էր գնում, ամենուրեք ուղարկելով իր թեթևազեն ջոկատները։

Եվ երկար տարիներ անց, այդ սարսափելի օրերը դեռ մնում էին հռոմեացիների հիշողության մեջ։ Հարուստ ազատագրյալի որդի, բանաստեղծ Հորացիոս Ֆլակոսը, ծնված Իտալիայի հարավում, որտեղ բոլորովին վերջերս իշխանությունը պատկանում էր ստրուկներին, իր ձոների գրքում հետագայում հիշել է Սպարտակին.

Որդի՞ս, գնա՛, շտապ գնա՛, պսակնե՛ր բեր,
Զիթենի՛ բեր, հետո էլ՝ գինի հաստնացած,
Թե որ մի բան թողել է դեռ հրոսակը Սպարտակի...

III

Սենատի բոլոր մրցող խմբավորումները վերջապես նոր միայն հասկացան, թե գործերն ինչքան վատ են։ Առաջ, սենատորների ասելով, իրենց անհանգստացնում էր սոսկ «ստրկական ապստամբության անարժան ամոթը» (Պլուտարքոս)։ Իսկ հիմա Սպարտակը բոլորի աչքին դարձավ «մեծ և ահարկու»։

Բացահայտ վտանգավոր իրադրությունը նկատի ունենալով՝ սենատն արտակարգ դրություն հայտարարեց։ Անմիջապես քաղաքի տարբեր մասերում՝ Կապիտոլիումում, Պալատինյան բլրի արիստոկրատական թաղամասում, որտեղ ապրում էին ամենանշանավոր հռոմեացիները՝ Մ. Կրասոսը, Կվ. Հորտենզիոսը, Լ. Կատիլինան և ուրիշներ, բոլոր կարևոր կետերում զինված ուղեկալներ տեղաբաշխեցին։ Բոլոր ուղղություններով վետերաններից, երևելի քաղաքացիներից, հավատարիմ ազատագրյալներից և ստրուկներից կազմված ջոկատներ ուղարկվեցին։ Նրանց հանձնարարված էր հետևել, թե ինչ է կատարվում շրջակայքում։ Գիշերները պարեկախմբերը սանրում էին ամբողջ քաղաքը և ձերբակալում կասկածելի մարդկանց։ Բոլոր կողմերը հավաքա-

գրողներ և սենատի լիազորներ ուղարկվեցին նոր ռազմիկներ հավաքելու համար։ Խռովությունների դաղանիքները բացահայտող և Սպարտակին օժանդակող մարդկանց վերաբերյալ մատնությունների համար պարգևներ սահմանվեցին (ստրուկներին՝ ազատություն և փող, ազատներին՝ փող և խռովությանը մասնակցելու համար նեղում)։

Անվտանգությունն ապահովող այս բոլոր միջոցառումների մեջ սենատում առավելագույն վեճերի առիթ տվեց Սպարտակի դեմ պատերազմելու համար նոր զորավարի թեկնածության հարցը։ Քննարկվեց այդ ժամանակ Իտալիայում գտնվող առավել նշանավոր հրամանատարների անվանացանկը։

1. Պ. Սերվիլիոս Իսավրացի (մ. թ. ա. 121—44 թթ.), Սուլլայի լեգատը, նախկին կոնսուլ, 79 թվականին ծովահեններին և Կիլիկիայի իսավրների ցեղին (մ. թ. ա. 78—75 թթ.) հաղթողը, «ռազմական զանազան գործերի քաջ գիտակ և փորձառու պետական գործիչ» (Ցիցերոն)։

2. Կ. Կուրիոն (մ. թ. ա. 118—53 թթ.), Սուլլայի զորքի աջ թևի հրամանատարը, լեգատ, 76 թվականի կոնսուլ, Մակեդոնիայի նախկին կուսակալ (75—73 թթ.), դարպաններին հաղթողը, որը մինչև Դանուբի ափերը հասավ։

3. Լ. Մուրենա — հայրը (մ. թ. ա. 113—? թթ.), Առաջին միհրդատյան պատերազմի ժամանակ Սուլլայի զորքերի ձախ թևի հրամանատարը, 2-րդ Միհրդատյան պատերազմի ժամանակ հռոմեական զորքերի առաջնորդ (83—82 թթ.), միակ հռոմեական զորավարը, որ կարողացավ տրիումֆ ստանալ, ստանց հաղթելու։ Ցիցերոնն այդ բանը հիշելով՝ ասում է, որ իբր նա «բազմաթիվ դաժան ընդհարումներից հետո Միհրդատին նշանակալիորեն նվաստացրեց, բայց չհնազանդեցրեց». 73 թվականին սենատի հանձնարարությամբ որպես պրետոր կռվեց ծովահենների դեմ, բայց այդտեղ էլ հաջողության չհասավ։

4. Լ. Հորտենզիոս — հայրը, Սիցիլիայի նախկին պրետորը, Միհրդատի և մարիոսականների դեմ պատերազմող Սուլլայի բանակի կենտրոնի հրամանատարը։

5. Անտոնիոս Հիբրիդա (մ. թ. ա. 105—? թթ.) Սուլլայի հեծելազորի պետը։ 83 թվականին Սուլլան նրան թողեց կառավարելու Հունաստանը, որը վերջինս թալանեց (76 թվականին այդ բանի համար Կեսարը նրան դատի տվեց, բայց գործընկերները արդարացրին մեղադրյալին)։ Մասնակցել է մարիո-

սականների բռնագրավումներին, որից հետո ապրում էր որպես մեծահարուստ մեկը։

6. Սերվիլիոս Գալբա — Միհրդատի դեմ մղված պատերազմում Սուլլայի լեգեոններից մեկի հրամանատար։ Հայտը հռչակվել էր նրանով, որ Իսպանիայում բարձրացրել էր Վիրիատոսի նշանավոր ապստամբությունը (մ. թ. ա. 150—139 թթ.)։

7. Լ. Մինուցիոս Բասիլոս, Միհրդատյան պատերազմում Սուլլայի զորքի լեգեոններից մեկի հրամանատար, մարիոսականների դեմ մղվող կռիվների ակտիվ մասնակից։

8. Մ. Կրասոս — մարիոսականների դեմ մղվող պատերազմի ժամանակ Սուլլայի լեգատը։

Սրանցից բացի, ուրիշ անուններ էլ էին նշվում. 72 թվականի կոնսուլներ Լ. Հելիոսը և Գն. Լենտուլոսը, պրետորներ Կվ. Արիոսը և Պ. Կոնսիդիոս Լոնգոսը (սրանք բոլորն էլ անցել էին Միհրդատի և մարիոսականների դեմ մղված պատերազմների միջով, սկսելով որպես զինվորական տribուններ, աստիճանաբար ավելի բարձր պաշտոնների էին հասել)։

Այս անունները հրապարակելիս սենատորները դառը հառաչ արձակեցին։ Նրանց այն ժամանակվա ընկճվածության պատճառը երկու տարի անց (69 թ.) բացատրելով՝ Ցիցերոնն այսպես է ասել. «Զինվորական գործը դադարել էր երիտասարդության համար հրապուրիչ լինելուց։ Քաջարի ռազմիկները և ականավոր զորավարները ոչնչացել էին. մի մասը մեռել էր բնական մահով, մի մասը զոհվել էր երկպառակտիչ քաղաքացիական մարտերի և մեր հայրենիքի գլխին թափվող այլ փորձանքների ժամանակ, մինչդեռ ինչքա՜ն պատերազմներ մեր մասնակցությունն են պահանջում, ինչքա՜ն պատերազմներ առաջանում են հանկարծակի ու չնախատեսված...»։

Հենց այս պատճառով էին 72 թվականին հառաչում սենատորները։ Բոլոր հնարավոր թեկնածուների մեջ չկար մեկը, որն իր բացառիկ արժանիքների և դիրքի շնորհիվ բոլորի համար ընդունելի լիներ։

Երկարատև, կպտաղի վիճաբանություններից հետո որոշեցին Սպարտակի դեմ ուղարկել այդ տարվա կոնսուլներ Հելիոսին և Լենտուլոսին։ Վճիռն այնքան էլ հեշտ չէր (առաջինը պատկանում էր Պոմպեոսի խմբին, իսկ երկրորդը՝ արիստոկրատական ռեֆորմատորներին), սակայն սենատն այլ ելք չուներ։ Բացի դա, Պ. Սերվիլիոս Իսավրացին պրոկոնսուլական իշխա-

նություն ստացավ և ուղարկվեց անհաջողակ Մուրենայի փոխարեն ծովահենների դեմ պայքարելու։

Վատանդավոր դրությունից դրդված՝ կոնսուլները և Պ. Սերվիլիոսը եռանդագին կապան գործին։ Պ. Սերվիլիոսը մեկնեց Օստիա՝ հռոմեական նավատորմի մոտ, իսկ այնտեղից՝ Սիցիլիայի ափերը։ Կոնսուլներն էլ Այսրալպյան Գալլիայի պրոկոնսուլ Գ. Կասիոսին և Անդրալպյան Գալլիայի պրոպրետոր Մ. Ֆոնտեոսին նամակներ ուղարկեցին, պահանջելով իրենց պրովինցիաներում ռազմական դրություն հայտարարել և սկսել ուժեր հավաքել «Իտալիայից փախչող Սպարտակի» շուրջկալին մասնակցելու համար։ Միաժամանակ նրանք Հռոմում զորահավաք հայտարարեցին և երկու լեգեոն կազմեցին, որոնց միացրին Լատիումում, Էտրուրիայում, Ումբրիայում, Պիկենայում, Անդրալպյան Գալլիայում հավաքած զորքերին։ Կոնսուլներին այրուձի բերեցին Ազատ Գալլիայից էդուները (հետագայում, Գալլիայում Կեսարի պատերազմի ժամանակ, էդուները Սպարտակի դեմ մղված պատերազմում Հռոմին օգնելն իրենց ծառայությունն էին համարում և բազմիցս Կեսարին հիշեցնում էին այդ մասին)։

Արտզորեն ավարտելով բանակների կազմավորումը, Հելիոսը և Լենտուլոսը դրանց հետ շարժվեցին Հռոմից դեպի արևելք՝ հյուսիս ընթացող Սպարտակին ընդառաջ։

Շուտով նրանք բաժանվեցին։ Հելիոսը թեքվեց դեպի հարավ՝ դիմապրավելու Կրիքսոսին, իսկ Լենտուլոսը շարունակեց ընթացքը Սպարտակի ճանապարհը կտրելու համար։ Լենտուլոսը անձնական պատճառ ուներ ստրուկների առաջնորդին ընտրելու համար։ Այդ ամբողջ ժամանակաընթացքում՝ «Սպարտակի պատերազմի» սկզբից, Հռոմում մեղադրում էին նրան իր նախկին գլադիատորի համար։ Այդ պատճառով կոնսուլն անհամբերությամբ ցանկանում էր մարտնչել Սպարտակի հետ և իր խոսքերով գլադիատորի «խելքը գլուխը բերել»։

Ամբողջ Հռոմը քարացած սպասում էր։ Իսկապես, չտեսնված տեսարան էր սպասվում. նախկին տերը իր բախտով ու զինվորական տաղանդով չափվում էր իր նախկին գլադիատորի հետ։

IV

Յուրաքանչյուր նոր օրը Ցիցերոնն սկսում էր մեծ հուզմունքով։ Նա ագահաբար որսում էր բանակից եկող ամեն մի լուր, որտեղ նրա մոտիկ մարդկանցից շատերը կային, և անհամբերությամբ սպասում էր իր բարեկամ կոնսուլների նամակներին[1]։

Ապստամբ ստրուկներին և իտալիկական ստորին խավերին Ցիցերոնը ոչ մի կերպ չէր կարեկցում։ Նրա հայացքները չափազանց պահպանողական էին։ Ինքն էլ երբեք չէր թաքցնում այդ բանը։ Դեռևս իր առաջին ճառերից մեկում, երբ 26 տարեկան էր, ասում էր. «Ով որ ինձ ճանաչում է, գիտի, որ երբ կուսակցությունների (Մարիոսի և Սուլլայի — Վ. Լ.) հաշտության իմ անկեղծ ցանկությունները չիրականացան, ես, որքան ներում էին իմ թույլ, աննշան ուժերը, աշխատում էի հանուն նրանց հպատակի, ովքեր այժմ հաղթել են։ Բոլորին պարզ էր, որ հասարակության տականքները իշխանության համար պայքարի էին ելել հասարակության ծաղկի դեմ։ Այդ պայքարում միայն վատ քաղաքացիները կարող էին շհարել նրանց, ում հաղթանակը ապահովում էր պետության արժանապատվությունը ներսից և պատիվը՝ դրսից։ Ամբողջ հոգով դոհ եմ և ուրախ, դատավորնե՛ր, որ այդ բանն իրականացավ, որ յուրաքանչյուրին վերադարձվեցին իր իրավունքներն ու առավելությունները, և միաժամանակ չեմ կարող չխոստովանել, որ այդ բանը տեղի ունեցավ աստվածների կամքով, հռոմեական ժողովրդի գործուն մասնակցությամբ և Լ. Սուլլայի զինվորական ուժի ու բախտի, նրա խելքի շնորհիվ։ Ես իրավունք չունեմ պարսավել այն, որ մյուս կուսակցության գործի համար համառորեն մարտնչող

---

[1] 72 թվականի կոնսուլների հետ իր ընկերության մասին Ցիցերոնը հիշատակում է «Հանուն Կլուենցիոսի» ճառում. «Քաջ այրերը, մեր ցենզորները՝ իմ ընկերներն են։ (Լ. Հելիոսը և Գն. Լենտուլոսը 70 թվականի ցենզորներն էին — Վ. Լ.)։ Առանձնապես մտերիմ և սրտակից հարաբերությունների մեջ եմ, որը հիմնված է փոխադարձ ծառայությունների վրա, ինչպես գիտեք, նրանցից մեկի հետ (այսինքն Հելիոսի — Վ. Լ.)։

... Ինչ հատկապես վերաբերում է Լենտուլոսին, իմ լավ բարեկամին, որի անունը տալիս եմ այնպիսի հարգանքով, ինչպիսին պահանջում են նրա ակնառավոր ընդունակությունները և այն բարձր կոչումը, որով նրան մեծարել է հռոմեական ժողովուրդը...

մարդիկ պատժվել են, չեմ կարող չդժվել այն, որ մեր գործի կատարմանը հսկայական ծառայություններ մատուցած հերոսներին մեծարանք է ցույց տրվում։ Կարծում եմ, այդ բանի համար էին նրանք կռվում, հանուն դրա, խոստովանում եմ, նրանց կուսակցությանը միացա և ես...»

Այս ճառը ինքնագոհացում չէր՝ թելադրված ժամանակի ծանր հանգամանքներից՝ սուլլայական ռեժիմի մռայլ տիրապետությունից։ Ցիցերոնն իր դատախազության պատճառով միշտ էլ հակված էր դեպի արիստոկրատիան, իսկ մարիոսականների դեմոկրատիան տանել չէր կարողանում։ Իհարկե, իզուր չէր ասում, որ «Մենք բոլորս, ազնիվ մարդիկս, միշտ բարեհաճ ենք վերաբերվում ազնվազարմությանը»։ Նա ինքն իրեն անվանում էր «սենատի, Իտալիայի, պետության գործի համար պայքարող մարտիկ» և շատ էր սիրում դատողություններ անել «ժողովրդի պարագլուխների խելահեղ ձգտումների» մասին։ Սենատի հետ անհամաձայն յուրաքանչյուր ժողովրդական տրիբուն, նրա համար «բացահայտ սրիկա էր և չունևոր»։ Բուն հռոմեա-իտալիկական պլեբսի մասին Ցիցերոնն արտահայտվում էր արհամարհանքով։ Այսպես, օրինակ, Ատիկոսին ուղղած իր մտերմական նամակներից մեկում (61 թ.) նա գրում է. «... ժողովրդական հավաքներ կազմակերպող ողորմելի և սոված խաժամուժի՝ գանձատան այդ տղրուկի» մասին, մեկ ուրիշում (60 թ.). «Չէ՞ որ մեր ուժը, ինչպես քաջ գիտես, կազմում են հարուստները։ Ժողովրդին և Պոմպեոսին էլ լիովին գոհացրել եմ հողեր գնելու իմ առաջարկով (չէ՞ որ հենց դա էլ ուզում էի)։ Մտադիր էի, որ այդ առաջարկը հաստատակամորեն անցկացնելով, կարելի կլինի քաղաքային տականքներին հավաքել ու բնակեցնել Իտալիայի անմարդաբնակ մարզերում»։

Հատկանալի է, որ նման հայացքներ ունենալով, Ցիցերոնն անհամբերությամբ սպասում էր իմանալու, թե ինչպես են կոնսուլների բանակները հաշվեհարդար տեսել խռովարարների հետ։ Նրա անհամբերությունը շուտով բավարարվեց, բայց ոչ բոլորովին այնպես, ինչպես որ սպասում էր։

Սպարտակի բանակին ճանապարհելով, Կրիքսոսը իր լեգեոններով շարժվեց Սիպոնտոսի կողմը, որի հողում գտնվում էր սուլլայական վետերանների մի մեծ գաղութ (մոտ 10 հազար հոգի)։

Մ. թ. ա. 194 թվականին Գարգանոս լեռան մոտ հիմնադրված (դրանից հարավ գտնվում էր տիրահռչակ ճահճուտ Սալապիան) այդ գաղութը վետերանների տարաբնակեցման (մ. թ. ա. 82 թ.) ամենավաղ շրջանն էր։

Բայց նման դրությունը ժամանակավոր եղավ։ Արևելյան պատերազմից և բռնագրավումներից հարստացած վետերանները դրամ ունեին, պատերազմն այլևս նրանց չէր հետաքրքրում, նրանք ծարավի էին հանգիստ ու խաղաղ կյանքի, վաստակած պատվի ու փառքի։ Բնականաբար, նրանք մեծագույն հաճույքով հետևելով նախնիների պատգամներին, կրկին ձեռք դարկեցին հողագործությանը։ Գնեցին մեծ քանակությամբ կալ ու գերման ստրուկներ, ձիեր ու ոչխարներ, տնավորվեցին, հողը ցամաքեցրին, բանիմաց հարևանների և հռոմեացի բազմաթիվ գյուղատնտեսների խորհրդով փորձում էին խաղող աճեցնել։

Դրա հետևանքով 10 տարուց էլ պակաս ժամանակահատվածում Սիպոնտոսի և Սալապիայի շրջակայքը միանգամայն վերափոխվեց։

Հենց դեպի այդ շրջանն էր շարժվում Կրիքսոսը։ Նա մտադիր էր Սիպոնտոսում գտնվող վետերանների հետ վերջնականապես հաշիվ տեսնել, էրգաստուլներից ազատել ձերբակալված ստրուկներին, հեծյալ զորամասեր կազմավորելու համար ձիերի նոր երամակներ հափշտակել, ևս մեկ մթերային բազա ստեղծել։

Անհրաժեշտությունից դրդված և սենատի դեկրետի համաձայն վերստին զենք վերցրած սուլլայական վետերանները հանձնվելու մասին չէին էլ մտածում, թեև թվով շատ քիչ էին։ Պատերազմներում ճերմակած, քաջ ու փորձառու, Սուլլայի հրամանատարությամբ բազմաթիվ մարտերում փառքով պսակված այդ մարդիկ ապստամբներին արհամարհում էին նախ և առաջ որպես պատերազմում իրենցից արդեն մեկ անգամ պարտություն կրածների, և երկրորդ, որպես սեփական փախստական

ստրուկների, որոնց թիկունքներին դեռևս թարմ էին վետերանների մահակների և մտրակների հետքերը։

Սպարտակի սկզբից Սիպոնտոսում հավաքված վետերանները խիստ ուժեղացրել էին քաղաքի ամրությունները։ Այստեղից նրանք հաճախակի արտաքրոհ էին անում իրենց պաշարած Կրիքսոսի զորքերի վրա։ Վերջինս դրան պատասխանում էր թեթևաշարժ ջոկատների միջոցով շրջանն ավերելով։ Եվ վետերանները, բռունցքները սեղմած ու չարությունից շնչահեղձ, ստիպված էին տեսնել, թե ինչպես են վառվում իրենց կալվածքները և քաղաքի պարիսպների տակ փախստական ստրուկների ամբոխներն ինչպես են մեջ-մեջ անում իրենց ունեցվածքը։

Իսկ այդ ընթացքում հռոմեացիների ռազմական գլխավոր ուժերի հետ կատարվում էր հետևյալը. կոնսուլ Հելիոսը, Լենտուլոսից բաժանվելով (վերջինս շարժվում էր Սպարտակի վրա), իր զորքերը սրընթաց բերում էր հարավ։ Ըստ համաձայնության Կրիքսոսը նրան էր բաժին ընկել։

Լ. Հելիոս Պուբլիկոլայի նախնիները սամնիտներ էին եղել։ Տասնամյակներ շարունակ նրանք կռվել էին հռոմեացիների դեմ, իսկ Երկրորդ փյունիկյան պատերազմից հետո (մ. թ. ա. 218—201 թթ.) նրանք տեղափոխվել էին Հռոմ։ Սպարտակյան պատերազմի սկզբին Հելիոսների տոհմն արդեն նշանավոր քաղաքագետների և զորավարների մի քանի սերունդներ էր տվել և ամուսնական կապերի միջոցով մերձեցել էր Վալերիոսների ազնվազարմ տոհմի հետ, տոհմակիցների համար վաստակելով Պուբլիկոլա պատվավոր մականունը։ Լ. Հելիոսի հայրը՝ սենատոր և միջին չափի դատական հռետոր, հայտնի էր իր կրթությամբ, հարազատ պատմության իմացությամբ և դատական վիճաբանություններում ցուցաբերած հնարամտությամբ։ Այն ժամանակվա մեծ հռետորները նրան առաջին շարքերից հետ էին մղել։ «Բայց և այնպես նա իր բարեկամներին շատ օգուտ տվեց և այնքան երկար ապրեց, որ դարձավ շատ հռետորական սերունդների ժամանակակիցը» (Ցիցերոն)։ Լ. Հելիոսը (մ. թ. ա. 114—45 թթ. հետո) նրա բարեկամ Ցիցերոնի կարծիքով, «ուժեղ և իմաստուն մարդը», Վերեսի թշնամին (նրա հետ միասին 74 թվականի պրետոր է եղել) Պոմպեոսի «շրջանին» պատկանելու և զորապետի ու հռետորի մեծ ունակությունների շնորհիվ, կարողացավ բարձրանալ կոնսուլի աստիճանին, իսկ 70 թվականին իր գործընկեր Գն. Լենտուլոսի հետ նույնիսկ դարձավ ցեն-

զոր։ Կուսակալությունն անցկացրեց Աքայա պրովինցիայում (71 թ.), հետո ծովահենների դեմ պայքարելիս Աթենքում կատարում էր Պոմպեոսի լեգատի պարտականությունները (67 թ.)։ Սենատի կողմն էր Կատալինայի դեմ մղվող պայքարում և մյուսների հետ քվեարկեց խռովության ղեկավարին մահապատժի ենթարկելու օգտին (63 թ.)։ Նպաստեց աքսորից Ցիցերոնի վերադառնալուն (57 թ.)։

Անցյալ պատերազմներում շատ բան տեսած, Էտրուրիայից, Ումբրիայից և Պիկենայից ղորակոչված կաղրային ռազմիկ վետերաններով, մանրակրկիտ ընտրված հրամանատարներով, Հելիոսն հաստատ հույս ուներ հաղթելու Սպարտակի դեմ մղվող պատերազմում։ Այդ ուղղությամբ նաև գաղտնի անհրաժեշտ միջոցներ էր ձեռնարկում։ Նրա հանձնարարությամբ հավատարիմ գերմաններից և գալլերից կազմված ամբողջ ջոկատներ գալիս էին Սպարտակի բանակն ու խնդրում իրենց ընդունել «աղատության քաջարի մարտիկների» շարքերը։ Կոնսուլը նրանց հանձնարարում էր քայքայել թշնամու շարքերը, խառնակչություն սերմանել, ավարը բաժանելու ժամանակ վեճեր առաջացնել, անչափավոր հարբեցողությանը և որկրամոլությանը հակված կելտերին հրահրել զենքի դիմելու կերուխումների ժամանակ, ենկայուն տարրերին վախեցնել և կաշառել, իրեն հաղորդել Սպարտակի գաղտնի ծրագրերը, բոլոր գերմանների և գալլերի ականջին անընդհատ շշնջալ. «Օր ու գիշեր խմեք, եղեք հույների նման», այսինքն՝ ապրեք հանուն հաճույքի։ «Խռովարարներին արատներով խորտակելն ավելի հեշտ է, քան զենքով»,— քմծիծաղով ասում էր փորձառու Հելիոսը և իր գործակալներին խոստանում էր այնպես անել, որ ապստամբները մարտի ժամանակ վերցնեին այն, ինչն ամենից շատ վնասակար կլիներ իրենց համար, այսինքն՝ հռոմեական պերճանքի առարկաներ, գինի և այլն։

Լ. Հելիոսի լեգատ և օգնական Կվ. Արիոսն ամեն կերպ ամրապնդում էր կոնսուլի հավատը հաղթանակի նկատմամբ։ Հետագա իրադարձություններում կարևոր դեր ունեցող այս մարդու մասին արժե պատմել։ Կվինտոս Արիոսը (մ. թ. ա. 112 թ.—52 թ. հետո) ծնվել էր Էտրուրիայում, գավառական շատ ծիծաղելի առոգանություն ունենալով և ինքն էլ չնկատելով այդ բանը, նա դարձել էր Ցիցերոնի կիսաթշնամի-կիսաբարեկամներից մեկը։ Իր գրագրությունների մեջ մեծ հռետորը բազմիցս

անվանում է նրան «անհավատարիմ ընկեր», հիշելով նրա կործանիչ խորհուրդները և գործողությունները։ Կվ. Արիոսն իր ժամանակի երևելի զորապետներից էր և արտասովոր հռետոր։ Սկզբում նա հանդես էր գալիս որպես Մ. Կրասոսի կողմնակից, հետո՝ Գն. Պոմպեոսի, ապա կրկին՝ Մ. Կրասոսի։ Ըստ այդմ էլ փոփոխվում էին նրա՝ քաղաքական դրության վերաբերյալ գնահատականները և խորհուրդները։ Այդ բանը Ցիցերոնի վրա շատ թանկ նստեց, և հռետորը նրան հիշելիս ծայր աստիճանի թշնամական բնութագրում է տալիս. «Նույն բանը (ինչը Գ. Կոսկոնիոսի մասին էր — Վ. Լ.) կարելի է ասել Կվինտոս Արիոսի մասին, որը, կարծես, Մարկոս Կրասոսի ձայնակիցը լիներ։ Այդ մարդը կարող է օրինակ ծառայել, թե մեր քաղաքում ինչքան հեռուն կարելի է գնալ, եթե մարդ կարողանա շատերին սիրաշահել և շատերին ծառայություններ մատուցել նրանց գործերում և օգնել փորձանքի պահին։ Հենց նման ճանապարհով, չնայած ստորին ծագմանը, Արիոսը հասավ պատվավոր պաշտոնների, հարստության, ազդեցության և, չունենալով ո՛չ ընդունակություններ, ո՛չ էլ դիտելիքներ, դատապաշտպանի կոչում ձեռք բերեց։ Բայց ինչպես անբավարար մարզված, սակայն օլիմպիական պարզևների ծարավի կուռամարտիկը կարողանում է դիմանալ բռունցքների հարվածների տարափին, մինչդեռ չի կարողանում տանել արևի տապը, այնպես էլ Արիոսը, հաջողությամբ անցնելով բոլոր պաշտոնները, չնայած մեծ ջանքերին, չկարողացավ դիմանալ վերափոխված դատարանի (մ. թ. ա. 70 թ.) խիստ պահանջներին, որը և նրա համար դարձավ կեսորվա արև»։

Հռոմում նոր արշավանքի նախապատրաստությունն ավարտվեց։ Սենատը, դիտակցելով դրության վտանգավորությունը, եռանդուն կերպով օժանդակում էր իր հեղինակությամբ։ Կոնսուլները հանդիստ չէին տալիս ո՛չ իրենց, ո՛չ ուրիշներին։ Հելլեոսի լրտեսները տեղեկացնում էին սպարտակների յուրաքանչյուր քայլի մասին։ Նրանք կարողացել էին թափանցել նույնիսկ Կրիքսոսի ճամբարը և այնտեղից շատ հետաքրքիր լուրեր էին հաղորդում։ Կոնսուլներին երջանիկ հույսեր ներշնչող վերջին տեղեկություններն հետևյալն էին. սարուկների ճամբարում (վերջապե՜ս) լիակատար պառակտում էր առաջացել։ Կարևոր մանրամասներ էին հաղորդվում։ Ընդհանուր առմամբ պատկերն

Խրախճանողները

Գաարիկուճի

Հռոմի Ֆորումը

Կելտերի աստվածը

Կելտերի մարդակեր
սարսափելի հրեշը

Պաշտամունքի կաթսայիկ



Կելտական սրեր և դաշույններ (V դ. մ. թ. ա.)

Լեգեոներ

Գերման

Գերմանների կայարանը



Հռոմեացի զորավար



Գուշակման ցարդ

Հռոմեական ռազմական ճամբարի պլանը





Սպարտակի արշավանքների երթուղին

Արևմտյան Միջերկրայքը

Սերտորիոսի սպանությունը

Հոմերոս

Քսենոֆոն

Եվրիպիդես

Սոֆոկլես

Պլատոն

Արիստոտել



Զենոն



Էպիկուր

Գրակխոս Եղբայրներ

Սկիպիոն Աֆրիկացին՝
Հաննիբալին հաղթողը

Էմիլիոս-Լեպիդոսների
տոհմի ներկայացուցիչ

Գրակխոս Եղբայրներ

Սկիպիոն Աֆրիկացին՝
Հաննիբալին հաղթողը

Էմիլիոս-Լեպիդոսների
տոհմի ներկայացուցիչ

Դենոս Պոմպեոս–հաղթանակողը

Մարկոս Կրասսոս (ենթադրաբար)

Գայոս Հուլիոս Կեսար

Դենոս Պոմպեոս–հաղթանակողը

Մարկոս Կրասսոս (ենթադրաբար)

Գայոս Հուլիոս Կեսար

Մարկոս Տուլլիոս Ցիցերոն

Կեսարի լեգեոները՝ Գալլիան նվաճողը

Մարկոս Գայոս Կատոն Կրտսեր

Կապիտոլիումը՝ Հռոմի ամրոցը, նրա հավերժության խորհրդանիշը

Զինված գալլ

Վեստալուհի



Սպարտակի հուշարձանը Բուլղարիայում

այսպիսին էր Սպարտակը և Կրիքսոսը, որոնք առաջ էլ բազմաթիվ հարցերում լիովին համակարծիք չէին, վերջնականապես պատակտվել են գործողությունների հետագա ծրագրի խնդրում։ Սպարտակը գործողությունների միանգամայն խելամիտ ծրագիր էր առաջարկում. զորքն անցկացնել Ալպերի վրայով և այնտեղից, աղատ տարածքներով ցրվել գնալ իրենց հայրենիքները. ոմանք՝ Թրակիա, մյուսները՝ Գալլիա, ոմանք էլ՝ Գերմանիա։ «Մենք ավելի լավ ծրագիր չունենք,— ասում էր նա։— Մենք Հռոմից Թույլ ենք։ Մեր զորքում չկա կարգապահություն, այն խախտում են նույնիսկ բարձրագույն հրամանատարները։ Ջնայած բոլոր ջանքերին, ռազմիկների պատրաստականությունը ցածր մակարդակի վրա է։ Զինվածության մասին էլ խոսք լինել չի կարող։ Ինչի՞ վրա կարելի է հույս դնել... Մի՞թե որևէ մեկը լրջորեն ենթադրում է, թե հաղթանակները հետագայում էլ մեր կողմը կլինեն... Մի՞ն հույսեր... Հռոմեացիներն Իտալիայում միշտ էլ ճնշել են բոլոր ժողովուրդներին, ովքեր համարձակվել են նրանց դեմ պայքարել, իսկ նրանք ավելի բազմամարդ բանակներ են ունեցել, քան մենք, ավելի լավ պատրաստված և տեղական պայմանները հիանալի իմացող բանակներ։ Հռոմեացիները Պո գետի հովտում պարտության մատնեցին գալլերի՝ հաղթանակներով փառաբանված զորքին, հաղթեցին հզոր էտրուսկներին, ընկճեցին Աֆրիկայի, Իսպանիայի, Հունաստանի, Փոքր Ասիայի բնակչությանը։ Նրանք հաղթեցին Պյուրոսին և պատմության մեծագույն զորավար Հաննիբալին։ Հռոմեացիները երկու անգամ հաղթեցին Պոնտոսի արքա Միհրդատին և հիմա էլ, երրորդ պատերազմում կործանիչ հարվածներ են հասցնում։ Հենց որ նրա հաշիվը մաքրեն, դա, դատելով ըստ ամենայնի, շուտով կլինի, Փոքր Ասիայից զորքերը կվերադառնան Իտալիա։ Ո՞չ։ Սպասելը և հապաղելը, անհեթեթ ծրագրեր կազմելը, հաջողության պատրանքներով սնվելը մեծագույն անմտություն է։ Մեզ չի հաջողվի հաղթել Հռոմին։ Դա չհաջողվեց նույնիսկ Հաննիբալին, որ 16 տարի մարտնչեց Իտալիայի հողում և այստեղ բազմաթիվ փառահեղ հաղթանակներ տարավ»։

Սպարտակին կատաղորեն հակաճառում էին Կրիքսոսը և նրա կողմնակից գերմաններն ու գալլերը։ Կրիքսոսը առանձնահատուկ մեծամտություն էր ցուցաբերում։ Բերանը եկածն ասելով, նա ծաղրում էր գերագույն առաջնորդի առաջարկը։ Նրա բազմաթիվ ելույթների իմաստը հետևյալն էր. «Օ՜, մեծագո՜ւյն

աստվածներ, լսվա՞ծ բան է։ Ո՞վ է տեսել, որ հաղթողները լքեն մարտի դաշտը և փախչեն, ասես, պարտվածներ։ Եթե այնպես վարվենք, ինչպես առաջարկում է Սպարտակը, ապա բոլորս կդառնանք ծաղրի առարկա և միանգամայն արժանի կլինենք անարգանքի։ «Վախկոտնե՞ր...» — կասեն մեզ և արդարացի կլինեն։ Ո՛չ, պետք չէ փախչել Իտալիայից... Երբեք և ոչ մեկին փախուստը դեռ չի փրկել։ Փրկում են միայն ուժն ու քաջությունը, փրկում է թշնամու նկատմամբ լիակատար հաղթանակը։ Զուր է Սպարտակը դատարկ հույսեր փայփայում. հռոմեացիները թույլ չեն տա իրենց ստրուկներին փախչել Ալպերի վրայով։ Սենատը դեռևս բավականաչափ զորք ունի, նա կարող է փակել Ալպեր տանող ճանապարհը։ Ուրեմն, միևնույն է, ստիպված ենք կռվել, արյուն թափել։ Բայց եթե նույնիսկ Սպարտակի մտածածը հաջողվի, ինչի՞ վրա է նա, ըստ էության, հույս դնում։ Ո՞վ է նրան սպասում։ Որտե՞ղ է գտնվում նրա ասած փառավոր հայրենիքը։ Հիմա պատերազմ է աշխարհով մեկ. պատերազմ է Իսպանիայում, Անդրալպյան Գալլիայում, Թրակիայում, Փոքր Ասիայում, սահմանակից թագավորություններում։ Պատերազմը փոթորկում է ծովում և նույնիսկ պրովինցիաներում։ Հիմա աշխարհում խաղաղ ու անվտանգ անկյուններ չկան։ Փախչելու տեղ չկա, այո՛, չկա՛... Բայց եթե լիներ էլ, ո՞ր ժողովուրդը կուզենա ընդունել վախկոտ փախստականներին։ Նրանք իրենք իրենց չեն կարողացել զենքով պաշտպանել և հիմա հույսները դնում են այլ ժողովուրդների հյուրընկալության վրա, որոնք նրանց պատճառով պետք է գժտվեն հռոմեացիների՝ ժողովուրդներին հաղթողների հետ, վտանգի ենթարկեն իրենց տունը, կյանքը, աղատությունը... Ո՛չ, դատարկ հույսեր են։ Վախկոտ փախստականներին փրկություն չկա։ Ինքը՝ Կրիքսոսը, այլ բան է առաջարկում. Իտալիայից չփախչել, այլ շարունակել կատաղաբար մարտնչել։ Հարկավոր է նոր բանակներ հավաքել, ամրապնդել կարգապահությունը, ռազմիկներին զինել, սովորեցնել նրանց, Իտալիայի նոր շրջաններում ապստամբություններ բարձրացնել, Հռոմին սեղմել երկաթյա օղակի մեջ, նրան սովի մատնել, ինչպես Մարիոսը վարվեց սուլլայականների հետ վերջին պատերազմի ժամանակ։ Եվ հենց որ հարմար պահը ներկայանա, պետք է անմիջապես հարված հասցնել բուն Հռոմին։ Միշտ հաջողվում է հենց այն, ինչին ոչ մեկը չի սպասում։ Եվ իրենք, անկասկած, կկարողանան հաղթել, եթե հարվածն ուղղեն ճիշտ Հռոմին։ Հարկ չկա

Հաննիբալից օրինակ վերցնել. 16 տարի կռվեց Իտալիայում, իսկ Հռոմին զարկել չհամարձակվեց և այդ պատճառով էլ պատերազմը տանուլ տվեց։ Ճիշտ է ասել նրա մասին կարթագենցի Մագոնը։ «Դու կարողանում ես ճակատամարտում հաղթել, բայց հաղթանակի պտուղներից չես կարողանում օգտվել»... Սպարտակը խիզախ մարդ է, նա, անկասկած, նման է Հաննիբալին. նույնպես կարողանում է հաղթել և նույնպես չի կարողանում օգտվել հաղթանակի պտուղներից։ Այսպիսով, անհրաժեշտ է մերժել Իտալիայից խայտառակ փախչելու նրա սխալ և վնասակար ծրագիրը... Հարկավոր է մտքի և ոգու բոլոր ուժերը կենտրոնացնել մի բանի վրա. պայմաններ նախապատրաստել Հռոմին ուղղակիորեն հարվածելու համար»։

Ահա թե խստագույն գաղտնապահության պայմաններում ինչի մասին էին վիճում խռովարար ստրուկների առաջնորդներն փրկնց խորհուրդներում։ Փոքրամասնությունը Կրիքսոսի կողմն էր։ Այդ բանը չափազանց գրգռում էր նրան։ Ամեն կերպ նա լուտանք էր թափում հակառակորդների վրա, ասելով. «Սպարտակն իր թրակացիներից փոքրոգությամբ է վարակվել։ Նրանք մեզ՝ քաջարի գալլերիս և գերմաններիս, հաղթանակների փառքով պսակված մեր զորքերին ընդունակ համարում են։ Նա ասում է, իբր թե մենք ամեն ինչով զիջում ենք հռոմեացիներին։ Ճիշտ չէ, մենք մեկ անգամ չէ, որ հաղթել ենք հռոմեացիներին և դեռ շատ անգամներ կկարողանանք նրանց հաղթել... Մենք կգրավենք Հռոմը՝ անիծյալ քաղաքը, և կկործանենք հիմնահատակ, քարը քարի վրա չենք թողնի... Ասենք, եթե Սպարտակն այդքան վախենում է իր կյանքի համար, ինչո՞ւ իր լիազորությունները վայր չի դնում։ Թող իր վախկոտների փոքրաքանակ խմբով փախչի Ալպերից այն կողմ։ Իսկ նա, ով ցանկանում է, որպեսզի սերունդների համար փառք ու պատիվ վաստակի, ով հռոմեացիներից ցանկանում է վրեժ լուծել անհամար ստրացումների, հարազատների ու մտերիմների, ոտնահարված հայրենիքի համար, թող մնա այստեղ։ Մենք քարուքանդ կանենք ամբողջ Իտալիան, եթե համարձակվի մեր դեմ կռվել։ Մի՛ մոռացեք, Իտալիան լի է ստրուկներով, նրանք ծարավի են ազատության, նրանք մեր դաշնակիցներն են, նրանք մեզ կօժանդակեն, օր օրի ապրստամբությունը գնալով ուժեղանում է, իսկ մեր թշնամիները թուլանում են։ Աստվածները մեզ հետ են, նախախնամությունը մեզ հաղթանակ է գուշակում։ Այդ պատճառով ես չեմ ցանկա-

նում Սպարտակի ամոթաբեր փախուստի ուղեկիցը դառնալ... Ես մնում եմ Իտալիայում և մինչև վերջ կպայքարեմ Հռոմի դեմ»։

Այսպես խոսեց Կրիքսոսը զինվորական վերջին խորհրդում։ Եվ Սպարտակն իրեն չզսպելով, ցասումնալից ասաց. «Դու զուր տեղը կկործանես ամբողջ զորքը։ 30 հազար քաջարի այրեր առանց որևէ օգուտ տալու կզոհվեն, և միայն դու մեղավոր կլինես»։ Կրիքսոսը նրան պատասխանեց. «Բոլորս էլ մահկանացու ենք և վաղ թե ուշ մեռնելու ենք։ Իսկ քաջ ռազմիկին, ընդհանրապես վիճակված չէ սեփական մահճում մեռնել։ Մենք էլ, եթե անհաջողության մատնվենք, կզոհվենք մեծ փառքով պսակված և սերունդները կգովերգեն մեր գործերը։ Իսկ ինչպիսի՞ փառքի կարժանանան նրանք, ովքեր վախկոտաբար կփախչեն Ալպերից այն կողմ, ովքեր իրենց օրերը կմթնեցնեն խղճուկ ծերության մեջ, աստվածներից և մարդկանցից մոռացված աշխարհի մի ինչ-որ անկյունում»։

Այսպիսով, ապստամբության առաջնորդները համաձայնության չկարողացան հասնել։ «Ալպերն անցնե՞լ, թե՞ ոչ» հարցը դրվեց ամբողջ զորքի ժողովի քննարկմանը։ Զորքի երկու երրորդը՝ թրակացիներն ու գալլերը, այնուամենայնիվ, արտահայտվեցին Սպարտակի առաջարկության օգտին, մեկ երրորդը՝ բոլոր գերմանները, գալլերի մի մասը և տեղացի իտալիկական ընիկները Կրիքսոսի օգտին քվեարկեցին։ Տեսնելով, որ ոչինչ անել չի կարող, Սպարտակը թույլ տվեց նրանց անջատվել։ Գերմանները և գալլերը դառնության և վշտի զգացումներով բաժանվեցին նրանից։ Սրանք սիրում էին Սպարտակին, հարգում, նրա վախկոտության մասին ասեկոսեներին չէին հավատում։ Բայց գերմանները և գալլերը փորձառու և անվախ ռազմիկներ էին, սիրում էին կռվել։ Նրանք չէին վախենում արյուն թափելուց, դա համարում էին մեծագույն քաջություն և ուզում էին Հռոմի դեմ պայքարը շարունակել Իտալիայի հողում։ Միաժամանակ նրանց տանջում էին ղանազան կասկածներ։ Բայց Կրիքսոսը հանգստացնում էր նրանց։ Վկայակոչելով նախանշանակները ու աստվածների կամքը, նրանց անխուսափելի հաղթանակ էր խոստանում։

Ահա թե ինչ հայտնեցին հռոմեական կոնսուլին նրա լրտեսները։ Հանգամանորեն կշռադատելով իրադրությունը և հաշվի առնելով Կրիքսոսի բնավորությունը, Հելիոսը հրամայեց

ամենուրեք լուրեր տարածել նախանշանի մասին, ըստ որի Կրիքոսի ամբողջ գերմանա-գալլական բանակը դատապարտված է աստվածների Մեծ մորը զոհ լինելու։

Հանկարծ դրա մասին սկսեցին խոսել բոլորը միանգամից. և՛ Սիպոնտոսի շրջակայքի ազատ բնակչությունը (անտառահատներ, որսորդներ, ձկնորսներ, հողագործներ և այլն), և՛ Կրիքոսի մոտ եկող ստրուկները, այդ մասին պարսպի վրայից ապստամբներին գոռալով ասում էին քաղաքում պաշարված սուլլայականները։

Տարածված այս խոսակցությունները խիստ շփոթեցրին ապստամբներին։ Իաղմիկները, իսկ հետո նաև հրամանատարները գերմանական և գալլական սովորության համաձայն սկսեցին հմայախոսություններով զուշակություններ անել փայտիկներով, փորձելով իմանալ իրենց ճակատագիրը։

Ամենց նախանշանները լավ բան էին խոստանում, ոմանց՝ հակառակը։ Այն ժամանակ նշանավոր գերմանա-հրամանատարների կանայք, որոնք հայտնի զուշակներ էին (նրանք ապստամբների համար վտանգավոր ձեռնարկների ժամանակ բազմիցս նպաստավոր վախճան էին զուշակել), կրկին, ինչպես առաջ, սկսեցին վիճակ գցել։ Երեք անգամ նրանք կրկնեցին վիճակը և ամեն անգամ ստացան նույն պատասխանը։ «Մոտակայքում ձեզ սարսափելի վտանգ է սպառնում, հետո՝ մահ»։ Այստեղ արդեն շփոթը համատարած դարձավ։ Այլայլված հրամանատարները խորհրդակցելուց հետո եկան իրենց զորավարի մոտ և աղնվորեն խոստովանեցին, որ վախը սկսել է սողոսկել զինվորների սրտերը։ Նրանք հիշեցրին, որ մոտերքում, Ադրիատիկ ծովի մեջ իրված Գարգանոս լեռան մոտ, գտնվում է ամբողջ Իտալիայում հայտնի, Տրոյական պատերազմում հույների նշանավոր զուշակ, լիկիացի հերոս Կալխանտոսի[1] (Կալխասի) արձանը և պատգամախոսարանը։ Հրամանատարները Կրիքոսին խնդրեցին դիմել այդ պատգամախոսարանի ծառայություններին, ապագան իմանալու համար, վերջ տալ ասեկոսեներին և տարածվել սկսող սարսափին, նրանք հայտնեցին նաև, որ կելտերը տենչում են արշավել դեպի իրենց ազգային սրբավայրը՝ Գարգանոսը («Երկնային լեռ»), որը նվիրված է մեծ աստված հսկա Գարգանոսին՝

---

[1] Հետագայում նախագուշակային վիճաբանության ժամանակ Ապոլլոնի պուրակում պարավեց Մոպսից-և վշտից մեռավ։

Նրանց հնագույն նախահայրենիքի աստվածությանը, կելտերի մեծագույն աստված Բելի որդուն և միայն Գարգանոսը կարող է գուշակել ապագան։

Կրիքսոսը խիստ տատանվում էր, նման արշավը Սպարտակի հետ համաձայնեցված չէր։ Կրիքսոսը հավատում էր աստվածներին (թեև Սպարտակն ամեն կերպ ջանում էր սասանել նրա հավատը) և պատանեկության տարիներից միստիկ էր, ինչը հենց վկայում է նրա անունը (Կրիքսոս նշանակում է «նա, ով ապարանջան է կրում», հին հունարեն krikos՝ ապարանջան, «օղակ»[1])։ Նա հավատում էր նաև կանխագգացողությանը և նախանշաններին, ճիշտ համարելով հռոմեական «Կանխագգացողությունները նախագուշացնում են ճակատագիրը» ասացվածքը։ Ճիշտ է, նա գիտեր, որ Սպարտակը և՛ հավատին, և՛ նախանշաններին վերաբերվում է բացասականորեն, թեև որոշ «նախանշաններից» խելամտորեն օգտվում է մասսային հանդգնստացնելու համար։

Երկար մտածեց Կրիքսոսը և վերջապես համաձայնեց։ Սիպոնտոսի պաշարումը շարունակելու համար քաղաքի մոտ թողնելով 10 հազար հոգի, մնացած բանակը նա տարավ Գարգանոսի ուղղությամբ։ Լեռան մոտ ճամբար խփելով, Կրիքսոսը բարձրագույն հրամանատարների ուղեկցությամբ բարձրացավ բլուրը, որտեղ գտնվում էր պատգամախոսարանը։ Ճանապարհին մահացածի ոգուն ուրախացնելու համար նա հեղում[2] կատարեց հերոս Պոդալիրիոսի՝ իրեն Ասկլեպոս աստծո որդին համարող, Տրոյայի մոտ պատերազմող հույների բժիշկ թեսալացու, արձանին։ Հետո բարձրանալով բլուրը՝ դեպի պատգամախոսարանը, Կրիքսոսը խոսեց քրմերի հետ, սովորության համաձայն սև ցուլ զոհաբերեց։ Հետո պառկեց քնելու սև խոյի մորթու վրա, սպասելով, որ երազում Կալխանտոսը կբացահայտի իր՝ Կրիքսոսի ու նրան ենթակա զորքի ճակատագիրը։

Նա վատ քնեց։ Նրան տանջում էր հազար ու մի երկյուղ և 30 հազար մարդու կյանքի նկատմամբ պատասխանատվության

---

[1] Իսկ ընդհանրապես դա գալլական սովորույթ էր։ Սարաբոնն ասում է. գալլերը «ոսկյա զարդամանյակ են կրում պարանոցին և ձեռքերին ու դաստակներին ապարանջաններ»։

[2] Համարվում էր, որ գետնին հեղած գինին և այրվող մոմի բույրը կերակրում են ոգիներին, որոնք հողի տակից դուրս են գալիս դրանք ճաշակելու։

գցացումը։ Միայն առավոտյան կողմ կարճատև քուն ունեցավ, իսկ երբ արթնացավ, պայծառացած դեմքով ընդառաջ գնաց ընկերներին և հայտարարեց, որ հերոս Կալխանտոսը նրանց բոլորին հաղթանակ է խոստանում։

Հրամանատարները թևթևացած շունչ քաշեցին և գոհ շտապեցին հետ՝ զորքի մոտ, ցանկանալով ռազմիկներին ուրախացնել։ Երբ վերադարձան, սաստիկ զարմացան. նրանց հայտնեցին, որ Հռոմի կողմից նրանց վրա է շարժվում թշնամին՝ պրետորական բանակը Կվ. Արիոսի գլխավորությամբ, առնվազն 10 հազար հոգի։

Բոլորը միաձայն որոշեցին, որ աստվածները Կվ. Արիոսին առաջնորդում են դեպի կործանում։ Կրիքսոսը բերկրալի գրգռվածության պայմաններում անմիջապես հրամայեց զորքը դուրս բերել ճամբարից և շարժվել թշնամուն ընդառաջ, որպեսզի օգտվելով ուժերի գերակշռությունից՝ ոչնչացնի նրան։

Սկսվեց կատաղի ճակատամարտ։ Կրիքսոսը և նրա հրամանատարներն արդեն իրենց հաղթանակած էին համարում, բայց հանկարծ, ասես երկնքից, նրանց գլխին թափվեցին նոր թշնամիներ։

Դա Լ. Հելիոսն էր։ Կվ. Արիոսի հետ ամեն ինչ փայլուն կերպով հաշվելով, նա իր լեգատին որպես խայծ առաջ էր մղել, իսկ ինքը 30 հազարանոց զորքով կարողացել էր սրընթաց և դաղտնի տեղաշարժում կատարել և հայտնվել ապստամբների թիկունքում։ Ահա թե ինչ նատեց Կրիքսոսի ճանապարհորդությունը դեպի Կալխանտոսի պատգամախոսարանը...

Այդ հանկարծակի հարվածին ապստամբների զորքերը չդիմացան, թեև կռվում էին արիաբար և համառորեն։ Կրիքսոսը հնարավոր ամեն ինչ արեց, որպեսզի զորքի մի մասը ճակատով դեպի նոր թշնամին դարձներ, բայց վերադասավորությունը՝ տեղանքի պայմանների և անխուսափելի շփոթության պատճառով շափազանց ուշացավ։ Ապստամբների զորքերը գլխովին ջախջախվեցին։ Գրեթե ամբողջ բանակը՝ 20 հազար հոգի ընկավ ռազմի դաշտում։ Կրիքսոսն ինքը մարտում քաջության հրաշքներ ցույց տվեց՝ փորձելով շեղել մարտի ընթացքը։ Տեսնելով, որ պարտությունը լիակատար է, նա, հիշելով իր նախկին քաջագործությունները, արժանապատվությամբ նետվեց թշնամիների ամբոխի մեջ և բազմաթիվ սրերից խոցոտված ընկավ։

Սարսափելի և անսպասելի պարտության լուրը ստիպեց

մնացած զորքին (դրանք հիմնականում Կրիքսոսի ցեղակիցներն էին՝ օսկերեն խոսող ռազմիկներ, Լուկանիայից և Բրուտիումից, ինչպես իլլիրիացիներին մոտ կանգնած յապիգներ՝ Ապուլիայից և Կալաբրիայից) վերացնել Սիպոնտոսի պաշարումը։ Բաժանվելով ջոկատների՝ նրանք ցրվեցին շրջակայքում։ Շատերը շարժվեցին դեպի հյուսիս՝ Սպարտակին հասնելու։ Նրանք իրենց հետ տանում էին անսպասելի պարտության տխուր լուրը և առաջնորդի դին, որ Կրիքսոսի վահանակիրները կարողացել էին դուրս բերել ռազմի դաշտից։

Իսկ հաղթական կոնսուլը, հաղթանակի մասին ուղերձն ուղարկելով Հռոմ, միացավ Սիպոնտոսի ցնծացող կայազորի հետ։ Փոքր դադարից հետո, նա նույնպես շարժվեց դեպի հյուսիս։ Լ. Հելիոսը շտապում էր Գն. Լենտուլոսին օգնության։ Իր հետ տանում էր 45 հազարանոց հետևազոր և 3 հազարանոց հեծելազոր։

VI

Գնեոս Լենտուլոս Կլոդիանոսը (ծնվ. մ. թ. ա. 114-մեռ. մինչև 45 թ. մ. թ. ա.) բարևտես արտաքինով, դեմքի խելոք և նշանակալից արտահայտությամբ մի մարդ, պատկանում էր Հռոմի ամենամեծազարմ ընտանիքներից մեկին, որը տվել էր բազմաթիվ նշանավոր քաղաքագետներ, զորավարներ, ամենապատվավոր քրմական կոլեգիումների անդամներ։ Գն. Լենտուլոսի նախապապը հռչակվել էր հատկապես նրանով, որ Հռոմում իր ձեռքերով ընդունել էր աստվածների մեծ Մայր Կիբելեի արձանը (Ցիցերոն), Պուբլիոս Կոռնելիոս Լենտուլոսը՝ պապը, սենատի պրինցեպսը, 162 թվականի կոնսուլը, մեռել էր Գայոս Գրակքոսի (121 թ.) շարժումը ճնշելու ժամանակ ստացած վերքից։ Ինքը՝ Գն. Լենտուլոսը, օժտված և կրթված մեկը, Սուլլայի հրամանատարությամբ կռվել էր Միհրդատի և մարիոսականների դեմ, Հռոմի ֆորումի նշանավոր դործիչ էր, դատարանում՝ բազմաթիվ համաքաղաքացիների կյանքն ու կայքը փրկած պերճախոս փաստաբան։ Նրա պերճախոսության հռչակը, իհարկե, Ցիցերոնի պահանջները ոչ լիովին բավարարող, թնդում էր Հռոմով մեկ։ Հետագայում նրա մասին Ցիցերոնն ասում էր. «Վարպետորեն դադարներ տալով, բացականչություններով, հաճելի և հնչեղ ձայնով նա այնպիսի հիացմունք էր վաստակում, որ ոչ մեկը չէր ափսոսում այն հատկանիշների համար, որոնք նրա

մոտ բացակայում էին»։ Սենատում Գն. Լենտուլոսը պատկանում էր արիստոկրատական ռեֆորմատորների (Լ. Կոտա և ուրիշն.) շարքին։ Հռոմում նա մեծ հեղինակություն էր վայելում. «... Նրան բարձրագույն պաշտոնների արժանացնելով,— իր բարեկամի մասին ասում էր Ցիցերոնը,— դուք նրան ճանաչել եք որպես բացառիկ իմաստության և խստաբարո մի մարդու»։

Հենց այս Լենտուլոսն էլ Սպարտակի դեմ արդեն գործողություններ էր վարում։ Իր տրամադրության տակ ուներ 60 հազարանոց հետևակ և 4 հազարանոց այրուձի։ Նա 10 հազարանոց բանակով առանձնացրել էր երկու լեգատների, հանձնարարելով նրանց գործել Սպարտակի թևերում և հիմնական զորախմբի հետ համագործակցելով՝ ապստամբներին սեղմել մտցնել անհարմար տեղանքն ու ջանալ շրջապատել նրանց։

Բայց հռոմեական գորապետները թերագնահատեցին իրենց ուժն ղրված խնդրի դժվարությունը։ Սպարտակը՝ անտիկ շրջանի ամենատաղանդավոր զորավարներից մեկը (Մ. Ֆրոնտոն), շարժվելով Ապենինների վրայով, ձիթենու տունկերի և խաղողի այգիների, հացահատիկի արտերի և արոտավայրերի, կաղնու, շագանակենու և հաճարենու պուրակների, ինչպես և եղևնու անտառների միջով, հսկայական հմտություն ցուցաբերեց։ Ինչպես Պ. Վարինիոսի դեմ կռվելիս, նա կրկին ճարպկությամբ մեկուսացրեց թշնամական ուժերը, հերթով ջախջախեց լեգատների 10 հազարանոց բանակները և զավթեց բանակային ամբողջ գումակը (կոնտուլը, ցանկանալով արագ շարժվել, ամբողջ գումակը թողել էր լեգատներին, ինչով և կաշկանդել էր նրանց շարժունակությունը)։ Հետո Սպարտակը ամբողջ մոլեգնությամբ հարձակվեց հենց Գն. Լենտուլոսի վրա, ջախջախեց նրան և փախուստի մատնեց։

Լ. Հելիոսը և Կվ. Արիոսը մտան ռազմական գործողությունների շրջանը, հույս ունենալով վրեժ լուծել ընկերների անհաջողությունների համար, բայց երկուսն էլ նույն բախտին արժանացան՝ պարտվեցին։

Հանգամանքներից ղրդված՝ պարտվածները զսպեցին իրենց փառամոլությունը և բոլոր ուժերը համախմբեցին մեկ զորքի մեջ, որը կազմում էր 90 հազար հետևակ և 4 հազար հեծելազորային։ Հուսով լի՝ նրանք կրկին շարժվեցին Սպարտակի վրա։ Բայց վերջինս իր զորքի շարքերը համալրելով պարտիզանական

ջոկատներով, կրկին ջախջախեց հռոմեացիներին և, չհետապընդելով նրանց, շարժվեց հյուսիս։

Նոր պարտությունից ընկճված՝ կոնսուլներն, այնուամենայնիվ, չէին ցանկանում հանձնվել։ Արագորեն կարգի բերելով իրենց ծվատված զորամասերը, նրանք հետևեցին հեռացող թշնամուն, սակայն խուսափելով ընդհարումներից։ Նրանց սուրհանդակները, որոնք ուղարկվել էին առաջ, օգնություն էին խնդրում Այսրալպյան և Անդրալպյան գալլիաների կուսակալներ պրոկոնսուլ Գ. Կասիոսից և պրոպրետոր Մ. Ֆոնտեոսից։

Վերջիններս այդ ընթացքում քնած չէին։ Նշանավոր պոմպեացի և փորձառու զորապետ Մ. Ֆոնտեոսը՝ «թշնամիների խիտ խմբերի վրա բազմիցս գրոհած, մարտերում թրծված մի մարտիկ» (Ցիցերոն), տեսնելով, թե որ կողմ է թեքվում իրադարձությունների ընթացքը, եռանդուն նախապատրաստվում էր Սպարտակի դեմ պայքարելու։ Նա նորանոր զորահավաքներ էր կատարում և պատրաստվում էր զորքով շարժվել հարավ, դեպի Այսրալպյան Գալլիա։ Այդտեղ՝ Մուտինայի մոտ գտնվող ճամբարում նրան անհամբերությամբ սպասում էր կուսակալը։

Կ. Կասիոս Լոնգինոս Վարոսը (մ. թ. ա. 115—43 թթ.), Այսրալպյան Գալլիայի 72 թվականի կուսակալը, պատկանում էր պատրիկական ծագում ունեցող հռոմեական հնագույն գերդաստաններից մեկին։ Լինելով հարուստ, մեծ կապեր ունեցող և բոլորի կողմից հարգված մի մարդ, նա հաջողությամբ վեր էր բարձրանում (77 թ.՝ էդիլ, 75 թ.՝ պրետոր, 73 թ.՝ կոնսուլ)։

Ընդհանուրի կարծիքով, Կ. Կասիոսն ավելի շատ օրենսգետ էր, քան զորավար։ Այդ պատճառով հրամանատարությունը հանձնելով պրետոր Գն. Մանլիոսին՝ Սուլլայի հայտնի զորապետին, որը սենատի կողմից հանձնարարություն էր ստացել ուղարկել պրովինցիա զորքերը գլխավորելու, նա անհամբերությամբ սպասում էր իր կրտսեր զորձընկերոջը՝ Անդրալպյան Գալլիայի կուսակալին։

Բայց Մ. Ֆոնտեոսն ուշացավ։ Գործողությունները զարգանում էին սարսափելի արագությամբ։

Սպարտակի զորքերը մտան Այսրալպյան պրովինցիայի տարածքը և տեղական բնակչության կողմից, առանձնապես ստրուկների, որոնք մեծ խմբերով սկսել էին փախչել նրա մոտ, խանդավառ ընդունելության արժանացան։ Ապստամբների զորքերն առանց դիմադրության հասան Մուտինա՝ Պո գետը տանող ճա-

նապարհի վրա գտնվող ուժեղ ամրոցը (առաջ քաղաքը պատկանում էր Լատրուսկներին, իսկ մ. թ. ա. 189 թվականից՝ հռոմեական գաղութ էր) և սկսեցին Գ. Կասիոսի զորքին մարտի հրավիրել։

Լ. Հելիոսը և Գն. Լենտուլոսը, շրջանցելով Սպարտակի ռազմարշավի արագությանը, հետ էին մնացել։ Իսկ Գ. Կասիոսը, սպարտակյանների կողմից վախկոտության մեջ մեղադրվելով և վախենալով, որ հետագա հապաղումը կարող է իր պրովինցիայում ստրուկների և գալլ-ինսուբրների[1] ապստամբություն առաջացնել, դուրս եկավ ճամբարից։ Նա 20 հազարանոց բանակով (կեսից ավելին կազմում էին գալլական օժանդակ ջոկատները, որոնց մի մասն անմիջապես անցավ ապստամբների կողմը) Սպարտակի հետ ճակատամարտ տվեց և կործանիչ պարտություն կրեց։

Խուճապը հոմանկց հռոմեացիներին։ Ճամբար փախածներից շատերը երդմամբ հաստատում էին, որ, իբր, պրոկոնսուլը պոմպել է (իրականում միայն վիրավորվել էր և նրան հասցրել էին փրկել)։ Ոմանք առաջարկում էին հանձնվել հաղթական թշնամուն, ուրիշները՝ ճեղքել-անցնել։ Մեծ դժվարությամբ հաջողվեց կարգ հաստատել ռազմիկների շարքերում և ստիպել նրանց պաշտպանելու ճամբարը փախչող հռոմեացիներին կրընկակոխ հետապնդող ստրուկներից։ Ասենք, պաշտպանությունը երկար չտևեց։ Լ. շուտով ապստամբները ներխուժեցին ճամբար և հռոմեացիները խմբերով սկսեցին գերի հանձնվել։ Ապստամբներին մեծ ավար բաժին ընկավ։

Նոր պարտության լուրը Հռոմում խիստ ընկճեց բոլորին։ Կոնսուլները ծայրաստիճան ճնշված էին։ Նրանք զորքը կանգնեցրին Այսրալպյան Գալլիայի սահմանի մոտ, արդեն սիրտ չունենալով թշնամուն մարտի կոչել։

Իսկ Սպարտակը հաղթելով Գ. Կասիոսի զորքին և գրավելով պրովինցիան, անմիջապես ցամաքով ու ծովով պատգամա-

---

[1] Ինսուբրներ — Պո գետից այն կողմ ապրող գալլական ամենաուժեղ ու մեծաթիվ ժողովուրդը։ Մայրաքաղաքը Մեդիոլան է, որ հիմնադրվել է այստեղ ներխուժած Բելովեզի ղեկավարած գալլերի կողմից։ 222 թվականին հռոմեացիները գրավեցին գալլական մայրաքաղաքը և այն դարձրին խիստ ամրացված քաղաք։ Դժգոհ գալլերը տեղափոխվեցին Ագատ Գալլիա՝ Ակվիտանիա։ Մնացողներն աստիճանաբար ընդունեցին լատինական լեզուն և սովորությունները։

վորություն ուղարկեց գալլերի և գերմանների տարբեր ցեղերի մոտ։ Նա նրանց առաջարկում էր մասնակցել Իտալիայի դեմ մղվող արշավանքին։

Իսկ Սպարտակի հարևանների մոտ դրությունը այսպիսին էր։

Գլուխ տասնվեցերորդ

ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՆԴՐԱԼՊՅԱՆ ԵՎ ԱԶԱՏ ԳԱԼԼԻԱՆԵՐՈՒՄ

I

Սպարտակի ապստամբության ժամանակ Անդրալպյան Գալլիա պրովինցիան գոյություն ուներ ընդամենը մի 50 տարի։ Այն գոյացել էր պոպուլյարների կուսակցության զորավարներ՝ Գ. Գրակքոսի ընկեր Մ. Ֆուլվիոս Ֆլակոսի (125—124 թթ), Գ. Սեքստիոս Կալվինոսի (123—122 թթ.), Գ. Դոմիցիոս Ահենոբարբոսի (122 թ.) և Սցիպիոն Էմիլիանոսի հարազատ եղբայր Կվ. Ֆաբիոս Մաքսիմոսի (121 թ.) հաղթանակների շնորհիվ։

Նոր պրովինցիան անհանգիստ դուրս եկավ։ Գալլերը հաճախակի խռովություններ և ապստամբություններ էին բարձրացնում։ Այդ պատճառով հռոմեացիները գալլերին դիմագրավելու համար աջակցում էին Մասիլիայի՝ հարուստ ու կուլտուրական քաղաքի (Մասիլիա սովորաբար գալիս էին դաստարանի կողմից արտաքսված հռոմեացի արիստոկրատները) ազատ և դաշնակցային համայնքին, ինչպես և տուրքերից ազատված հռոմեական քաղաքացիների գաղութ հանդիսացող Նարբոնին ու Սեքստինյան Ակվային։ Նարբոնը, Մասիլիայի նման, համայնքային կառուցվածք ուներ, իսկ Սեքստինյան Ակվան ռազմական ամրոց էր։

Բուն գալլական մարզը բաժանվում էր չորս մասի՝ 1. գայլատեքտոսագների հողը (մայրաքաղաքը՝ Տոլոզա), 2. ալոբրոգների հողը (մայրաքաղաքը՝ Վիեննա և Գենավա), 3. վոկոնտիացիների հողը (մայրաքաղաքը՝ Արաուզիոն), 4. լիգուրիական ցեղերի հողը (մայրաքաղաքը՝ Ճենովա) (Լիգուրիոն)։

Այդ հարուստ պրովինցիայի տնտեսության մասին Ստրաբոնն արտահայտվում է այսպես. «Ամբողջ Նարբոնիդա պրո-

Վինցիան արտադրում է նույն այն պտուղները, ինչ որ ամբողջ Իտալիան։ Դեպի հյուսիս և դեպի Կեմլեոնա լեռան կողմը շարժվելիս երևում է, թե ինչպես է վերջանում ձիթենու պուրակների ու թզենիների երկիրը, բայց մնացած պտուղներն այստեղ աճում են։ Ավելի հյուսիսում խաղողի որթը նույնպես դժվարությամբ է հասունանում։ Մնացած ամբողջ երկիրը տալիս է մեծ քանակությամբ հացահատիկ, կորեկ, խոզակաղին և ամեն տեսակի անասուն։ Երկիրն ամբողջովին մշակվում է, բացառությամբ այն վայրերի, որտեղ ճահիճներ ու մացառուտներ կան։ Սակայն այդ վայրերն էլ խիտ բնակեցված են, բայց ավելի շատ բնակչության բազմաձնության, քան թե նրա փութաջանության պատճառով։ Կանայք աշխի են ընկնում բեղունությամբ և լավ ստնտուներ են, ապամարդիկ ավելի շատ ոչխիկներ են, քան հողագործներ»։

Այսպիսին էր Անդրալպյան Գալլիա պրովինցիան, որի գլխավոր քաղաք Նարբոն 73 թվականի սկզբին ժամանեց նոր կուսակալ Մ. Ֆոնտեոսը, երեք տարի մնալու պայմանով (73—71 թթ.)։

Այդ ժամանակ պրովինցիայում իրադրությունը լարված էր։ Մ. Ֆոնտեոսի համար դա, ճիշտն ասած, նորություն չէր, քանի որ 74 թվականի հունվարին սենատում հրապարակված Պոմպեոսի վերջին նամակում ասված էր հետևյալը. «Բացի ծովեզրյա քաղաքներից, Մերձավոր Իսպանիան, որը գրավված չէ թշնամիների կողմից, ի վնաս և դժվարություն մեզ, մենք կամ Սերտորիոսը անանկացրել ենք խսպառ։ Անցյալ տարի Գալլիան պահում էր Մետելլոսի զորքը, իսկ հիմա վատ բերքի պատճառով հազիվ է պաշտպանում իր գոյությունը» (Սալյուստիոս)։ Դրան ավելանում էր պրովինցիայի հզոր ցեղերի՝ դալտարևկոմիկների և ալոբրոգների, ծայրահեղ դայրույթը։ 77 թվականին Իսպանիա ուղևորվելիս, Պոմպեոսը ճնշելով նրանց ապստամբությունը, որպես պատիժ, խլել էր նրանց հողերի մի մասը և, որպես հավատարմության պարգև, նվիրել էր Մասիլիային։ Մատնանշված պատճառներից ելնելով՝ պրովինցիայի ազգային կուսակցությունը բազմաթիվ ծանրակշիռ փաստարկներ ուներ նոր ապստամբություն բարձրացնելու համար։

Այսպիսով, նոր կուսակալը շատ բարդ խնդիրների լուծման անհրաժեշտության առջև էր կանգնած։ Մի կողմից անհրաժեշտ էր իր պրովինցիայի հաշվին կազմակերպել Իսպանիայում մարտընչող Պոմպեոսի ու Մետելլոսի բանակների մատակարարումը

(ուրիշ ճար չկար, որովհետև 73 և առանձնապես 72 թվականին պետական գանձարանը միանգամայն դատարկ էր), փոխադրել Պոմպեոսի ու Մետելլոսի բանակները ձմեռային դադարների ընթացքում և միաժամանակ գալլերին հետ պահել նոր ապստամբություն բարձրացնելու մտքից։

Այս խնդիրները գրեթե անլուծելի էին, և Իսպանիայում գտնվող Պոմպեոսին մնում էր միայն հույսը դնել Մ. Ցիցերոնի դիվանագիտական ճարպկության, անձնական անշահախնդրության, եռանդի, զորավարական հեղինակության և պոմպեոսական կուսակցության շահերին նրա նվիրվածության վրա, որի երևելի անդամներից էր Մ. Ցիցերոնը։

Գալլերը նոր կուսակալին (նախորդը Գ. Վալերիոս Ֆլակոսն էր եղել, 74 թ.) ընդունեցին թշնամաբար։ Բերնեբերան տարածվում էին նրա անցյալի վերաբերյալ լուրերը։ Մ. Ցիցերոնի հայրը պրոպրետոր Գ. Սերվիլիոսի լեգատն էր եղել (97 թ.) և նրա հետ միասին զոհվել էր Ասկուլա քաղաքի ապստամբների ձեռքով։ Այդ սպանություններն էլ ազդանշանը դարձան Դաշնակցային պատերազմի (90—88 թթ.)։

Մ. Ցիցերոնը (ծնվ. 114 թ.) հոր սպանության ժամանակ 24 տարեկան էր։ Նա սերում էր Հռոմում բավականին հայտնի ընտանիքից. հռոմեական պատմության էջերում նրա նախնիները (ծնունդով Տուսկուլա քաղաքից) հայտնվում են Երկրորդ փյունիկյան պատերազմի ժամանակներից (218—201 թթ.)։

Հոր վրեժը լուծելու նպատակով Մ. Ցիցերոնը պատանի հասակից մասնակցում է Դաշնակցային պատերազմին։ Քաղաքականության մեջ նա հանդես է գալիս որպես Գ. Մարիոսի մոլի երկրպագու։ Այդ հանգամանքը նրան մտերմացնում է երիտասարդ Ցիցերոնի հետ, որը հպարտանում էր բոլոր «նոր» մարդկանց կուռք Գ. Մարիոսի հետ համաքաղաքացի (արպինացի) լինելով։

Վերջինիս մահից հետո Մ. Ցիցերոնն իրեն առաջնորդ ընտրեց Լ. Ցինային և բազմաթիվ ծառայությունների համար նրանից քվեստորի պաշտոն ստացավ։ Երբ խռովարար զինվորների կողմից Լ. Ցինան սպանվեց (84 թ.), Մ. Ցիցերոնն իր բարեկամ Գն. Պոմպեոսի հետ անցավ Սուլլայի կողմը (83 թ.) և սկսեց մասնակցել կուսակցական նախկին ընկերների դեմ պայքարին։ Իր ծառայությունների համար նա անմիջապես պարգևատրվեց

Հետագայում Իսպանիայում կուսակալություն ստացած պրոպրետոր Կ. Անիոս Լուսկայի լեգատի պաշտոնով (82 թ.)։

79 թվականին Մ. Ֆոնտեոսը վերադարձավ Հռոմ։ Որպես իրեն լավ դրսևորած զորապետ նա նոր, կարևոր նշանակում ստացավ՝ կոնսուլ Ապպիոս Կլավդիոսի լեգատ Մակեդոնիայում։ Վերջինիս հետ միասին Մ. Ֆոնտեոսը համառորեն մարտնչում էր թրակացիների դեմ 78—76 թվականների ընթացքում։

Իր երիտասարդությունը և հասուն տարիները արշավների ու ճակատամարտերի մեջ անցկացրած Մ. Ֆոնտեոսը, պրովինցիայից վերադառնալուց հետո, Պոմպեոսի օգնությամբ հեշտությամբ պրետորի պաշտոն է ստանում Գ. Վերեսի հետ միաժամանակ (74 թ.), որից հետո նրա առջև, որպես պրովինցիայի կուսակալի, գործունեության լայն հնարավորություն է բացվում։

Մ. Ֆոնտեոսը Հռոմում հոյակ ուներ և մեծ հեղինակություն էր վայելում (նրա հարազատ քույրը վեստալուհի էր)։

Ահա թե ինչպիսի փաստերով նշանավորվեց Մ. Ֆոնտեոսի գործունեությունը Անդրալպյան Գալլիայում նրա կուսակալության տարիներին։ Նախ, ավարտվեց Իտալիան Իսպանիային կապող Պոմպիցիոսյան «պետական կարևորություն ունեցող» (այսպես էր սահմանում Ցիցերոնը) ճանապարհը։ Գալլական յուրաքանչյուր համայնք ճանապարհ կառուցելու որոշակի հատված էր ստացել։ Քայլ դիտակցելով, որ այդ շինարարությամբ իրենց համար շղթաներ են կառուցվում, գալլերն սկզբում լեգատներին կաշառելու միջոցով ջանում էին խուսափել շինարարական պարհակից։ Երբ դրանից բան դուրս չեկավ, նրանք սկսեցին դիտավորյալ վատ կառուցել։ Բայց իրենց աղնվությամբ «ամենայն կասկածից վեր» (Ցիցերոն) կանգնած լեգատներ Լ. Անիոս Բելիննոսը և Գ. Ֆոնտեոսը անմիջապես գուշակեցին նրանց թաքուն մտադրությունները։ Նրանք ամենուրեք խստագույն ստուգումներ էին անցկացնում և գալլերին ստիպում էին վերակառուցել ճանապարհի ոչ պիտանի հատվածները։ Այդպիսի անողոք պահանջկոտությունը գալլերի սարսափելի զայրույթն առաջ բերեց։

Իսկ այդ ընթացքում Մ. Ֆոնտեոսն անձամբ զբաղվում էր դատարանով և տնտեսական բնույթի միջոցառումներով։ Կապալառու հեծյալների հետ համատեղ նա մշակում էր սահմանամերձ տարածքներն առաքվող գինու վրա մաքսային հարկ դնե-

լու միջոցով դրամական խոշոր եկամուտներ ստանալու ծրագիրը։ Համաձայն այդ ծրագրի նրա նշանակած գործակալները մեկ ամֆորա գինու դիմաց պահանջում էին չորսական դինար Տոլոզում, երեքական՝ Սեզոդունայում, երկուական՝ Վոլկալոնայում և այլն։ Ազատ Գալլիա ուղևորվող դիմեվաճառներից նրանք վերցնում էին նույնիսկ վեցական դինար։

Գալլերն այդքան խորամանկամիտ միջոցառումից պարզապես կատաղել էին։ Լինելով գինու մեծ սիրահարներ, գինու զանազան տեսակների ստեղծողներ, որոնք հաճույքով միմյանց հետ փոխանակում էին նոր տեսակներ պատրաստելու եղանակները, նրանք գտնում էին, որ Մ. Ֆոնտեոսը սարսափելի չարաշահումներ է թույլ տալիս, քանի որ իրենք ստիպված են լինում սահմանափակել իրենց սովորությունները և հռոմեացիների նման ջրով խառնված գինի խմել, ինչը նրանց համար զզվելի էր թվում։

Մ. Ֆոնտեոսի ձեռնարկած մյուս միջոցառումներից էին. հացահատիկի պարհակը, հռոմեական զորքերին օթևան տալու և պատերազմող բանակին անընդմեջ հետևակ ու ձիավոր օժանդակ զորամասերով ապահովելու պարտականությունը։

Այս պարհակները գալլերը կատարում էին ծայր աստիճանի տհաճությամբ։ Փոխարենը Մ. Պոմպեոսը և նրա ընկեր Կվ. Մետելլոսը, Մ. Ֆոնտեոսից չափազանց գոհ էին։ «Հացի սարեր էր մատակարարում Գալլիան, բազմաքանակ հետևակ զորքեր՝ Գալլիան, մեծ թվով հեծյալներ՝ Գալլիան» (Ցիցերոն)։ Ընդհանուր առմամբ Մ. Ֆոնտեոսի ժամանակ Անդրալպյան Գալլիան խրվեց պարտքերի մեջ, մարդիկ սկսեցին մասսայաբար ստրկության մատնվել, պրովինցիան հեծեծում էր հռոմեական ադմինիստրացիայի չարաշահումների և անտանելի հարկերի ճնշման տակ (Ցիցերոնն ասում էր, որ «ամբողջ Գալլիան հեղեղված էր հռոմեական քաղաքացի մեծածախ առևտրականներով, Գալլիայում ոչ մի սեստերց չէր կարող տեղաշարժվել առանց հնաբ թողնելու հռոմեական քաղաքացիների դրամարկղի մատյաններում»)։ Պրովինցիան եռում էր զայրույթից։ 72 թվականին վերջապես բռնկվեց գալլ-վոկոնտիացիների ապստամբությունը, որի ներկայացուցիչները դաշտնի բանակցություններ էին վարում Սերտորիոսի և Սպարտակի գործակալների հետ և փոխադարձ օգնության համաձայնության էին եկել։ Վոկոնտիացիների ապրատամբությանն ուշակցեցին արորոգներն իրենց առաջնորդներ

Ինգուտիոմարոսի և Կատուգնատոսի գլխավորությամբ։ Գալլական ջոկատները պաշարեցին Մասիլիան ու Նարբոնը և, տարածվելով երկրով մեկ, սկսեցին ջարդածեծ տալ հռոմեական «գործարար մարդկանց»։

Մ. Ֆոնտեոսը ստիպված էր ամբողջ եռանդով պայքարել ապստամբների դեմ։ Ցիցերոնը հետագայում հիշում է. «Մ. Ֆոնտեոսը կուսակալն էր Գալլիայի, այսինքն այն պրովինցիայի, որի ժողովուրդները (անցյալը չեմ հիշատակում) մասամբ մեր հայրերի օրոք դաժան և երկարատև պատերազմներ էին մղում հռոմեական ժողովրդի դեմ, մասամբ միայն վերջերս էին հնազանդեցվել մեր զորավարների կողմից, վերջերս էին սանձվել զենքի ուժով, վերջերս էին մեզ առիթ տվել տրիումֆների և հաղթական հուշարձանների, վերջերս էին սենատի հրամանով պարտվել և զրկվել հողերից ու քաղաքներից, մասամբ նույնիսկ կտրել էին հենց Մ. Ֆոնտեոսի հետ և շնորհիվ դժվարությամբ ու զրկանքներով լի նրա գործունեության, ընդունել էին հռոմեական ժողովրդի տիրապետությունն ու իշխանությունը։ Մյուս կողմից նույն այդ պրովինցիայում է գտնվում Մարսյան Նարբոն քաղաքը, մեր քաղաքացիության իրավունքներ ունեցող գաղութը, հռոմեական ժողովրդի առաջավոր պահակակետը, հաստատուն պատվարը, որի պատերին պետք է փշրվեր այդ ցեղերի հարձակումները, վերջապես, հենց այդտեղ է գտնվում Մասիլիա քաղաքը, որի մասին վերը խոսք գնաց, բնակեցված մեր հավատարիմ դաշնակիցներով, որոնց օգնությունը և՛ օժանդակ զորքերով, և՛ ռազմական այլ միջոցներով հավասարակշռում էր գալլերի կողմից մեզ սպառնացող վտանգը։ Հենց այդպիսի տարտեսա մասերից է բաղկացած այն պրովինցիան, որի կուսակալը, ինչպես ասացի, Մ. Ֆոնտեոսն էր։ Ներկա թշնամիներին հաղթեց նա ինքը, երեկվա թշնամիներին ստիպեց հեռանալ այն մարզերից, որտեղից հանձնարարված էր քշել, մնացածներին (որոնք դաժան և բազմիցս կրկնվող պատերազմներից հետո այնպես պարտվեցին, որ առհավետ մնացին հռոմեական ժողովրդի հպատակության տակ) նա հրամայեց բազմաթիվ հեծյալ ջոկատներ հատկացնել այն պատերազմների համար, որոնք այն ժամանակ հռոմեական ժողովուրդը մղում էր աշխարհով մեկ, հրամայեց շատ դրամ տալ մեր զորքերին վճարելու համար, շատ մեծ քանակությամբ հաց մթերել իսպանական պատերազմի պետքերի համար»։

Մ. Ֆոնտեռոսի վարած գալլական այս պատերազմը (առաջին նշանները հայտնվել էին դեռևս 73 թվականին պարտիզանական բաղմաթիվ ջոկատների գործողությունների տեսքով) ձգվեց մինչև 71 թվականը և ավարտվեց միայն սպարտակյան պատերազմից հետո։

II

Բայց Սպարտակի տեսադաշտում գտնվում էր ոչ միայն Այսրալպյան և Անդրալպյան Գալլիաների գործերի վիճակը, այլև Ապատ Գալլիայի և նույնիսկ Գերմանիայի (այստեղ նրան հետաքրքրում էին Գերմանիայի ամենամեծ և ռազմաշունչ սվևների ցեղերը, վարք ու բարքով գերմաններին շատ նման ուբիները, ինչպես ուղիպետները և տենկտերները)։ Բայց առաջին հերթին նրա ուշադրությունը գրավում էին Անդրալպյան Գալլիայի մերձավորագույն հարևանները՝ արվերնները (մայրաքաղաքը՝ Գերգովիա), էդուները (մայրաքաղաքը՝ Բիբրակտե), սեկվանները (մայրաքաղաքը՝ Վեսոնտիոն), հելվետները (մայրաքաղաքը՝ Հելվետ) և ակվիտանները (մայրաքաղաքը՝ Բուրդիգալա) — Ապատ Գալլիայի հարավի ցեղերը։ Սպարտակը հենց նրանց թագավորների և ժողովրդական ժողովների մոտ էր ուղարկում իր հետախույզ գալլերին և գերմաններին, իսկ հետո՝ նամակներ, դեսպաններ ու նվերներ։ Իտալական ստրուկների պարագլուխը թագավորներին և առանձին ռազմական առաջնորդներին եռանդագին համոզում էր հարձակվել Անդրալպյան Գալլիայի վրա։ Բացառված չէ, որ նա առաջարկում էր նաև գալլական նոր արշավանք կազմակերպել Իտալիայի վրա։

Սպարտակի նամակներն ու առաջարկները գալլական համայնքներում կուսակցական սուր պայքար էին առաջ բերում։

Դրությունը, սակայն, այն աստիճան շահեկան չէր, ինչպես ուզում էր Սպարտակը։ Դաշնակիցների շարքին նա կարող էր դասել միայն արվերններին և հելվետներին։ Հակառակորդների թվին՝ էդուներին, սեկվաններին և ակվիտաններին։ Արվերնների իշխանությունն իր ձեռքում էր պահում ականավոր գինվորական առաջնորդ Կելտիլան, հետագայում Կեսարի դեմ համագալլական ապստամբության առաջնորդ Վերցինգետորիքի

հայրը։ Կելտիլային աջակցում էին բազմաթիվ երևելի առաջնորդներ, որոնցից էր նաև նշանավոր Կրիտոգնատը, հետագայում՝ նույնպես Կեսարի հակառակորդը։ Հռոմամետ կուսակցությունը գլխավորում էր Կելտիլայի հարազատ եղբայր Գոբանիտիոնը։

Ուժեղ էր հելվետների ազգային կուսակցությունը, որը գլխավորում էր հռոմեացիների երդվյալ թշնամի, 107 թվականի կոնսուլ Լ. Կասիոսին հաղթող և հռոմեական զորքը անարգանքի լծի տակով անցկացրած Դիվիկոնը (այն ժամանակ կոնսուլի հետ միասին զոհվեց նաև Կեսարի ապագա աներոջ պապը՝ Լ. Պիզոնը)։ Դիվիկոնին շրջապատում էին ռազմատենչ պատանիներ։ Նրանցից ամենափայլունը ջահել Օրգետորիգն էր։ Հռոմամետ կուսակցության մեջ նշանակալի դեր ունեին Նամեոսը և Վերուկլետիոսը՝ Կեսարի հետ ապագա բանակցությունների ժամանակ հելվետների դեսպանները։

Կայուն հռոմամետ քաղաքականություն էին վարում էդուները, որոնք հռոմեացիների հետ կապված էին բազմապան տնտեսական և քաղաքական կապերով, բարեկամության և հյուրընկալության հարաբերություններով։ Հռոմամետ կուսակցության գլուխը կանգնած էր Էպորեդորիգ-ավագը, իսկ հետագայում՝ Դիվիտիակը և Լիսկը։ Հակահռոմեական կուսակցությունը թույլ էր և նշանավոր ղեկավարներ չուներ, բացառությամբ երիտասարդ Դումնորիգի (հետագայում՝ Կեսարի թշնամին)։

Նման պատկեր էին ներկայացնում և սեկվանները, որոնց հռոմամետ կուսակցության գլուխ կանգնած էր Կատամանլեդոս թագավորը, նրա որդին՝ Կաստիկոսը, հետագայում դարձավ Կեսարի հավատարիմ դաշնակիցը։

Նույն ձևով ակվիտանների հռոմամետ կուսակցության գլուխ կանգնած էր հռոմեական Պիզոնների արիստոկրատական գերդաստանի հետ հյուրընկալությամբ կապված Պիզոն թագավորը։ Այս Պիզոնի թոռը, նույնպես Պիզոն անունով, հետագայում Կեսարի մոտ կդառնա ակվիտանական հեծելազորի հրամանատարը և կստանա Հռոմի ժողովրդի բարեկամ ու դաշնակից տիտղոսը։ Նա կզոհվի 55 թվականին մարտերից մեկի ժամանակ։

Բոլոր մատնանշվածները, ինչպես և գալլական մյուս ցեղերը, մինչև Կեսարի Գալլիա մտնելը, գրեթե ամեն տարի պա-

տերազմում էին միմյանց դեմ։ Արվերները, հարձակվելով էդուների վրա, ձգտում էին նրանցից խլել Գալլիայում գրաված նրանց առաջնային դիրքը և ջանում էին սեկվաններին դաշնակից դարձնել էդուների դեմ։ Էդուները իրենց դաշնակիցների և առանձնապես բելովակների օգնությամբ եռանդուն հակահարված էին հասցնում թշնամուն և հաճախակի ասպատակում էին ավելի թույլ սեկվանների հողերի վրա։ Վերջիններս, ուժ չունենալով կասեցնելու այդ ասպատակությունները, օգնության էին կանչում Հռենոսից այն կողմ գտնվող սվևների երիտասարդ առաջնորդ Արիովիստի 15 հազարանոց բանակը։

Սպարտակը ջերմորեն ողջունում էր գերմանների հայտնվելը Գալլիայում (72 թ.)։ Հռենոսի ափերից եկած զորքերի հարձակումը իր թշնամի էդուների վրա թեթևացնում էր Սպարտակին համակրող ցեղերի վիճակը և մեծացնում էր Անդրալպյան Գալլիայում ապստամբած հելվետների և գալլ-տեքտոսագների հաղթանակի հնարավորությունը։

Ե՛վ գալլերը, և՛ գերմանները շատ էին լսել Սպարտակի և նրա հաղթանակների մասին՝ շնորհիվ նրանից ստացած նամակների, ճանապարհորդների և վաճառականների պատմածների, Իտալիայում եղած իրենց լրտեսների բերած տեղեկությունների, բոլոր կարևոր նորությունների մասին փոխադարձ արագ հաղորդակցության։

Ընդհանուր առմամբ Սպարտակը կարող էր գոհ լինել Աղատ Գալլիայի գործերի ընթացքից։ Նրան թշնամի էդուների վրա երկու կողմից հզոր հարվածներ էին տեղում։ Գերմանսվևները բարեհաճությամբ էին ունկնդրում Իտալիայի դեմ արշավանքին մասնակցելու նրա առաջարկները։

Չնայած Կրիքսոսի՝ գերմաններից կազմված բազմաթիվ զորամասերի կործանմանը, Սպարտակը կարող էր հույս ունենալ, որ շուտով նրանց փոխարինողներ կստանա, ընդ որում այնպիսիք, որոնցից հռոմեացիների սիրտն ու հոգին կդողա։

Այսպես էր ծրագրում Սպարտակը։ Բայց... «Բախտն ամեն ինչում մեծ դեր է խաղում, և առանձնապես պատերազմի գործերում» (Կեսար)։ Ահա թե ինչ ստացվեց իտալիկական ստրուկների առաջնորդի մտահղացումներից...

Գլուխ տասնչորսերորդ

ՍԵՐՏՈՐԻՈՍԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I

72 թվականի գարնանը սերտորիոսական սենատի անդամների միջև հարաբերությունները ծայրահեղորեն սրվեցին։ Դա, իհարկե, պատահական չէր։

Այդ ժամանակ Իտալիայի ստրուկների ապստամբությունը հսկայական չափեր ընդունեց։ Երկրի հարավը փաստորեն ամբողջովին անջատվել էր Հռոմից, և ստրուկներն այնտեղ իրենց պետությունն էին ստեղծել։ Ստրկատերերը ենթարկվել էին սարսափելի ջարդերի, ում բախտը բերել էր, փախել էր Հռոմ։ Մեծ եռանդով գործող Սպարտակը ստեղծել էր 70 հազարանոց բանակ և պատրաստվում էր գործողությունները տեղափոխել կենտրոնական Իտալիա։ Այսպիսով, սպառնալիք էր ստեղծվում անմիջապես Հռոմի համար։

Դրա հետ կապված սերտորիոսական սենատի տարբեր խմբավորումների միջև (Իտալիայի իրադրության նկատմամբ խիստ հակասական վերաբերմունքի պայմաններում) կոմպրոմիսը գնալով դառնում էր անհնար։

Իսկ 72 թվականի գարնանը Պոմպեոսն ու Մետելլոսը կրկին անցան էբրո գետը և վերսկսեցին ռազմական գործողությունները թշնամական քաղաքների դեմ։ Սերտորիոսական սենատի ձախ թևի նշանավոր գործիչները, գաղտնի համաձայնության գալով նրանց հետ, սկսեցին բացահայտ պարտվողական քաղաքականություն վարել։ Ղեկավարելով զորքերի գործողությունները՝ նրանք Պոմպեոսին և Մետելլոսին թույլ էին տալիս ջարդել իրենց ուժերը, գրեթե անընդմեջ նահանջելով հանձնում էին քաղաքները։

Իսկ ի՞նչ էր անում Սերտորիոսը։ Տառապանքի մտորումներից հետո նա այն եզրակացությանը հանգեց, որ իրադրությունն իր համար բարենպաստ չի դասավորվում, և նա գործնական ոչինչ չէր ձեռնարկում։

Այս ամենը հաշվի առնելով, Սերտորիոսը «առանց որևէ պատճառի» (Ապպիանոս) հանկարծ դադարեց զբաղվել գործերով, սկսեց կանանց ընկերակցությամբ ժամանակ վատնել կերուխումներում և գինարբուքներում, իրեն շրջապատեց շքեղու-

թյամբ և, ասես, ոչնչի վրա ուշադրություն չէր դարձնում, մինչ-դեռ նրա գործերը հաճախակի պարտություններ էին կրում։

Սերտորիոսի այդպիսի վարքագիծը խիստ զայրացրեց մարիոսական կուսակցության ձախ թևին (սկսեցին խոսել, որ «նա այլևս այն չէ, ինչ առաջ»)։ Սերտորիոսի դեմ դավադրություն կազմակերպվեց։

Սակայն դավադրությունը բացահայտվեց։ Սերտորիոսը սարսափելի բռնությունների ենթարկեց մարիոսական կուսակցության ամբողջ ձախ թևին։ Բացահայտված դավադրությունից և իր նկատմամբ արտահայտված անվստահությունից չափազանց զայրացած, Սերտորիոսն սկսեց դավաճանության մեջ կասկածել իր աջակիցների մեծ մասին։

Մարիոսական սենատում ծայրահեղ լարված դրություն ստեղծվեց։ Անարդարացի պատիժների հանդեպ վախը, Սերտորիոսի երկդիմի քաղաքականության նկատմամբ ատելությունը շուտով նոր դավադրություն ծնեցին. այս անգամ աջ թևի առաջատար գործիչների և «կենտրոնի» մեծ խմբի կողմից՝ Պերպերնայի գլխավորությամբ։

Մ. Լեպիդոսի նախկին զինակից Մ. Պերպերնան, պատվախնդիր և ազնվատոհմիկ մի մարդ (նրա հայրը՝ կոնսուլ Պերպերնան, 130 թվականին ճնշեց Արիստոնիկոսի ապստամբությունը), չնայած իտալական ստրուկների նկատմամբ իր ատելությանը, դեռևս տառապում էր վիրավորված փառատենչության պատճառով։ Նրա կարծիքով, ինքը Սերտորիոսից պակաս արժանիքներ չուներ բարձրագույն իշխանության համար։

Տոգորված այս մտքով և վերջին իրադարձություններից էլ գործելու մղում ստացած՝ Պերպերնան սկսեց դավադիրների խումբ հավաքել, ամեն կերպ հրահրելով համապատասխան մարդկանց։ Նա ասում էր. «Ի՞նչ շար ուժ է պարուրել մեզ և տանում է վատից վատթարը։ Մենք արժանավոր չհամարեցինք մնալ Հայրենիքում և կատարել ամբողջ ցամաքի և ծովերի տիրակալ Սուլլայի հրամանները, այլ եկանք այստեղ, որտեղ մեզ անխուսափելի կործանում է սպասում, քանզի, ազատ ապրելու հույս ունենալով, կամովին դարձանք փախստական Սերտորիոսի շքախմբի անդամներ։ Մենք այստեղ սենատ կազմեցինք, և այդ անվանումը քմծիծաղ է առաջացնում բոլորի մոտ, ովքեր լսում են մեր սենատի մասին, իսկ դրա հետ միասին մեր գլխին թափում են հայհոյանք, հրամաններ և պարտավորություններ,

ասես ինչ-որ իսպանացիներ և լուզիտանցիներ լինենք»։ (Պլուտարքոս)։

Պերպերնայի խոսքերն ընկնում էին պարարտ հողի վրա։ Սև շուտով դավադիրների երկու խմբերը սերտ հարաբերությունների մեջ մտան և միմյանց ձեռք սեղմեցին ընդհանուր նպատակի՝ Սերտորիոսի սպանության համար։

Իսպանիայի առջև Սերտորիոսին վարկաբեկելու համատեղ խորամանկ ծրագիր մշակվեց։ Դրանից հետո դավադրության բոլոր մասնակիցները հաստատակամությամբ անցան գործի։ «Օրինակ, վկայակոչելով Սերտորիոսի շինծու հրամանը, նրանք նեղացնում էին բնիկներին, դաժանորեն պատժում էին և ծանր պարհակներ էին դնում նրանց վրա։ Դրա պատճառով առանձին քաղաքներում ապստամբություններ կամ հուզումներ էին առաջանում։ Նրանց հանդստացնելու և անհամաձայնությունները հարթելու նպատակով ուղարկված մարդիկ վերադառնում էին, ավելի շատ բորբոքելով թշնամության ոգին և ուժեղացնելով չնթարկվելու ցանկությունը, որի հետևանքով Սերտորիոսի նախկին մեղմ, մարդասիրական բնավորության մեջ այնպիսի կտրուկ փոփոխություն կատարվեց, որ նա անարդարացի վարվեց Օսկայում դատարակվող իսպանացի երեխաների նկատմամբ. ոմանց հրամայեց մահապատժի ենթարկել, մյուսներին ստրկության վաճառեց» (Պլուտարքոս)։

Սերտորիոսի այս քայլը ճակատագրական սխալ եղավ։ Իսպանացիները չարացած էին, դավադիրները թաքուն ծափահարում էին։ Հաջողությունը շատ մոտ էր երևում։ Սերտորիոսի լուզիտանական պահակախումբը բռնեց դավադրության հետքը և կարևոր ապացույցներ ձեռք գցեց։ Ծանոթանալով դրանց, կատաղած զորավարը հրամայեց բռնել իր թշնամիներին։

Ձերբակալվածների մեծ մասը մերկացվեցին դավադրությունը կազմակերպելու մեջ և մահապատժի ենթարկվեցին։ Այնուամենայնիվ, ոմանց հաջողվեց փախչել։

Պերպերնան արդեն մտածում էր ինքնասպանության մասին. նրա դեմ էլ լուրջ ապացույցներ կային։ Բայց Սերտորիոսը, նրան իր բարեկամը համարելով, հերքեց նրա դեմ եղած մեղադրանքները։

Արդեն հուսահատված Պերպերնան կրկին ոգի առավ։ Ողջ մնացած համախոհների հետ խորհուրդ անելուց հետո նա գոր-

ծունեության նոր ծրագիր մշակեց և մի շարք նոր երևելի մարդկանց ընդգրկեց գործի մեջ։

Մի անգամ երեկոյան դավադիրները սուրհանդակի անվան տակ Սերտորիոսի մոտ բերեցին իրենց մարդուն։ Սա զորավարին ուրախ լուրերով նամակներ հանձնեց, որոնց մեջ գրված էր Թշնամու դեմ տարած խոշոր հաղթանակի մասին։ «Այդ նորությունից ուրախացած, Սերտորիոսը աստվածներին շնորհապարտական զոհ մատուցեց։ Այդ պահին Պերպերնան հայտարարեց, որ խնջույք է կազմակերպում Սերտորիոսի և մյուս ներկաների (բոլորն էլ դավադրության մասնակիցներ էին) համար, և երկար թախանձանքներից հետո Սերտորիոսին համոզեց մասնակցել։ Այն խնջույքները, որին մասնակցում էր Սերտորիոսը, աչքի էին ընկնում շափավորությամբ և կարգ ու կանոնով. նա թույլ չէր տալիս ոչ անամոթ տեսարաններ սարքել, ոչ անպարկեշտ շատախոսություններ անել և սեղանակիցներին սովորեցնում էր բավարարվել բարեկիրթ կատակներով ու համեստ զվարճություններով։ Բայց այս անգամ, երբ արդեն խրախճանքը թեժացել էր, հյուրերը, ընդհարման առիթ որոնելով, լեզվի կապերն արձակել էին, խիստ հարբած ձևացնելով, անպարկեշտ բաներ էին խոսում, ձգտելով Սերտորիոսին ափերից հանել։ Սակայն Սերտորիոսը, գուցե անկարգությունից դժգոհ, գուցե թե հանդուգն խոսքերից ու իր նկատմամբ անսովոր քամահրանքից դավադիրների մտադրությունը կռահելով, միայն շուռ եկավ մահճի վրա և պառկեց բերանքսիվայր՝ ջանալով ոչինչ ո՛չ նկատել, ո՛չ էլ լսել։ Պերպերնան բարձրացրեց անխառն գինու թասը, մոտեցրեց շրթունքներին և զրնգոցով գցեց գետնին։ Դա պայմանանշան էր։ Սերտորիոսի կողքին պառկած Անտոնիոսը սրով անմիջապես հարվածեց նրան։ Սերտորիոսը շրջվեց նրա կողմը և ուզում էր վեր կենալ, բայց Անտոնիոսը ցատկեց նրա կրծքին և ձեռքերը բռնեց։ Պաշտպանվելու հնարավորությունից զրկված Սերտորիոսը մեռավ դավադիրների բազմաթիվ սրերի հարվածներից» (Պլուտարքոս)։

Այսպես 72 թվականի հուլիսի սկզբին Իսպանիայում ավարտվեց սերտորիոսական հերոսապատումը։ Քաջարի ռազմիկ և հերոս Սերտորիոսն ընկավ սեփական երկիմաստ քաղաքականության պատճառով։

Նրա զորքերի մեջ եղած իսպանացիների մեծ մասն անմիջապես փոխավ-ցրվեց։ Մնացած փոքրամասնությամբ և հոռ-

մեական լեգեոններով Պերպերնան (Նա ցանկանում էր ապացուցել, որ սպանված զորավարն իզուր չէր կտակով իրեն փոխանորդ կարգել) Պոմպեոսին Եակատամարտ տվեց և, իհարկե, պարտվեց։ «Ընդհանուր խուճապահար փախուստի ժամանակ Պերպերնան թաքնվեց խիտ մացառուտի մեջ, սեփական զինվորներից ավելի շատ վախենալով, քան թշնամուց։ Մի քանի հեծյալներ բռնեցին Պերպերնային և քարշ տվեցին Պոմպեոսի մոտ։ Նրան հայհոյում էին, մեղադրելով Սերտորիոսի սպանության մեջ, իսկ Պերպերնան աղաղակում էր, թե շատ բան ունի Պոմպեոսին պատմելու Հռոմում երկպառակտիչ վեճերի մասին։ Զգիտեմ, նա ճի՞շտ էր ասում, թե՞ ցանկանում էր, որ իրեն կենդանի հասցնեն Պոմպեոսի մոտ։ Սակայն Պոմպեոսն իր մարդկանց ուղարկեց նրան ընդառաջ և հրամայեց Պերպերնային սպանել մինչև իր մոտ բերելը։ Նա վախենում էր, թե Պերպերնան հանկարծ կարող է անսպասելի մի զաղանիք հայտնել, որը Հռոմում նոր դժբախտությունների ազդակ կդառնա։ Պարզվեց, որ այս դեպքում Պոմպեոսը շատ խելամիտ վարվեց, ինչը և ամրապնդեց նրա բարի համբավը» (Ապպիանոս)։

II

Մեծ շարշարանքների և հանդամանքների բարեհաջող ընթացքի շնորհիվ հաղթանակով ավարտելով դժվարագույն պատերազմը, Պոմպեոսը սկսեց պատրաստվել արշավանքի դեպի Իտալիա, ուր նրան կանչում էր սենատը։ Իսպանիայում մնալու էր Մետելլոսը, որպեսզի մինչև վերջ հնազանդեցներ երկիրը։ Պոմպեոսն իրենից առաջ (զինվորական և քաղաքական անհրաժեշտ իրադրությունը նախապատրաստելու համար) անմիջապես Իտալիա ուղարկեց իր օգնականներին՝ Լ. Աֆրանիոսին, Ա. Գաբինիոսին և Մ. Պետրեոսին։ Նրանք մեկնեցին, իրենց հետ տանելով պրետորական կոհորտաներ, իսպանացի հեծյալներ, մեծ քանակությամբ դրամ և մանրակրկիտ հրահանգներ։

Այս երեքն էլ հսկայական դեր էին խաղում Պոմպեոսի քաղաքականության իրականացման գործում, և արժե նրանց մասին, թեկուզ համառոտակի, պատմել։ Տարիքով նրանցից ամենամեծը Մ. Պետրեոսն էր (մ. թ. ա. 112—46 թթ.), Պոմպեոսի զորքի ձախ թևի հրամանատարը։ Նա ստորին ծագում ուներ։ Զինվորական ծառայությունն սկսել էր 95 թվականին։ Դաշնակ-

ցային պատերազմին մասնակցել էր Պոմպեոս-հոր զորքերում։ 82 թվականին զինվորական տրիբուն էր։ 77 թվականին՝ Պոմպեոս-որդու զորքերում լեգեոնի հրամանատար, 75 թվականին, Սերտորիոսի դեմ պատերազմի ժամանակ լեգատ էր (37 տարեկան), 72 թվականին՝ պրետոր, 62 թվականին պրոպրետորի իրավունքներով կոնսուլ Մ. Անտոնիոսի լեգատն էր (Պիստորիայի մոտ Կատիլինայի պարտության մատնեց)։ Ցիցերոնը գովեստով է խոսում Կատիլինայի ապստամբության ճնշման գործում նրա կատարած դերի մասին։ Նա Պետրեոսին գովաբանում է «ոգու բացառիկ արիության», «պետությանը նվիրվածության», «պետական գործերում ակնառու արիություն ցուցաբերելու», «զինվորների շրջապատում արտասովոր հեղինակություն ունենալու», «զինվորական բացառիկ փորձի» համար։

Իր հառաջադիմության համար Պոմպեոսին պարտական, նրա մտերիմ ընկեր, քաղաքական և ռազմական գործիչ Լ. Աֆրանիոսը (մ. թ. ա. 102—46 թթ.) Պոմպեոսի զորքերի կենտրոնի հրամանատարն էր։ 74 թվականին քվեստոր էր, 62 թվականին՝ պրետոր, 60 թվականին՝ կոնսուլ։ Կոնսուլ դարձավ ազնվատոհմիկների և Կրասոսի ամբողջ կուսակցության խիստ դիմադրությունը հաղթահարելուց հետո։

Աֆրանիոսը նշանակալի դեր խաղաց Միհրդատի դեմ Պոմպեոսի մղած պատերազմում, հետագայում՝ Կեսարի դեմ մղվող քաղաքացիական պատերազմում։

Քաղաքական և ռազմական գործիչ, ճարպիկ հռետոր և քաջարի զորապետ Ա. Գաբինիոսը (մ. թ. ա. 101—47 թթ.) իր հառաջադիմությամբ պարտական էր Պոմպեոսին և Կեսարին։ Սերտորիոսի դեմ մղվող պատերազմում նա փոխարինեց այրուձիի հրամանատարին՝ Պոմպեոսի քրոջ ամուսին Կ. Մեմիոսին։ 67 թվականին ժողովրդական տրիբուն էր, օրենք անցկացրեց, որով Պոմպեոսը նշանակվեց ծովահենների դեմ պատերազմող զորքերի հրամանատար, 61 թվականին՝ պրետոր, 58 թվականին՝ կոնսուլ։ Առանց սենատի թույլտվության, հարստանալու նպատակով, Եգիպտոսի վրա արշավելու համար դատի տրվեց և արտաքսվեց։ Քաղաքացիական պատերազմին մասնակցեց Կեսարի կողմում և զոհվեց Սալոնքում՝ պարտվելով դարդաններից (Իլիրիա)։ Պլուտարքոսը Գաբինիոսին բնութագրում է որպես Պոմպեոսին ամենազզվելիորեն քծնող անձնավորություններից մեկին։ Իր հերթին, Ցիցերոնը Կլոդիոսի բարեկամ և իր թշնամի

Գաբինիոսի վրա կատաղի լուտանքներ էր թափում։ Դատի ժամանակ (56 թ.) նա թունոտ ծաղրում էր նրա երիտասարդությունը, հայտարարելով, որ Գաբինիոսն իր ողջ կարողությունը մսխել է կերուխումների, այլասերվածության և աներևակայելի պերճանքի մեջ, որ շատերը «օգտվում էին նրա թաբմ պատանեկությունից», որ, վերջապես նա ընկավ Կատիլինայի գիրկը և երկար ժամանակ «անուշահոտությունների մեջ լող տալով» և «պանդրացված խոպոպներով» ման գալով ծառայից նրան որպես «հաճույք»։ Պարտքերի մեջ խրված Գաբինիոսին վաշխառուները հանգիստ չէին տալիս։ Նա նրանց նայում էր կատաղի ատելությամբ և դատական հետապնդումից փրկվելու համար ստիպված եղավ ապաստան որոնել «նավահանգստի տրիբունատի ապաստարանում»։

Գլուխ տասնութերորդ

ՍՊԱՐՏԱԿԸ ԱՅՍՐԱԼՊՅԱՆ ԳԱԼԻԱՅՈՒՄ

I

Սպարտակի գրաված պրովինցիան աչքի էր ընկնում բացառիկ հարստությամբ։ Պոլիբիոսը, բնութագրելով այն, գրում է. «Դժվար է թվարկել այդ հողի բոլոր արժանիքները։ Այսպես, օրինակ, այնքան հացառատ է, որ մեր ժամանակներում մեկ մեդիմն (52,53 լիտր) սիցիլիական ցորենն արժե չորս օբոլ, մեկ մեդիմն գարին՝ երկու օբոլ, նույնքան արժի մեկ մետրետ (39, 39 լիտր) գինին, հնդկացորենը և կորեկը այդտեղ աճում են անհավատալի առատությամբ։ Այդ հարթավայրերում իրար կողք կողքի տարածված կաղնու անտառներում թե որքա՜ն շատ խոզակաղին է լինում, յուրաքանչյուրը կարող է ամենից լավ հետևություն անել հետևյալից. ընտանեկան օգտագործման և զորքի պարենավորման համար մորթվող խոզերի մեծ մասը տալիս են այդ հարթավայրի անտառները։ Մթերքի առատության և էժանության մասին կարելի է ամենից շատ դատել այն բանից, որ այդ երկրում պանդոկ մտած ճանապարհորդը չի հարցնում այս կամ այն ուտելիքի գինը, այլ վճարում է պանդոկապանի պահանջածը։ Սովորաբար այդ պանդոկների տերերը առատ կերակրելուց հետո վերցնում են կես ասա, որը կազմում է օբոլի

քառորդ մասը, միայն հազվագյուտ դեպքերում նրանք ավել գին են պահանջում»։

Այդ հարուստ պրովինցիայում՝ Այսրալպյան Գալլիայում, Սպարտակը մնաց մոտ մեկուկես ամիս։ Նոանդուն գործունեության շնորհիվ նրա բանակի թիվը հասավ մինչև 120 հազար հետևակի և 8 հազար հեծյալի (լեգատների թիվը 14-ից, որքան որ արշավանքի սկզբում էր, հասավ 24-ի, նրանցից շատերը այդ պաշտոնին հասել էին վերջին մարտերի ընթացքում)։ Զարմանալի ոչինչ չկար։ Սպարտակի տարած փայլուն հաղթանակներից հետո, նրա մոտ ամեն օր «մեծ քանակությամբ ստրուկներ էին հոսում»։ (Աթենեոս)։ Միաժամանակ կոնսուլների պարտությունների հետևանքով հռոմեական բանակում, ինչպես Վարինիոսի օրոք, վերստին սկսվեց խմբակային դասալքությունը։ Իսկ Սպարտակը պարտիզանական ջոկատներ էր կազմավորում և նրանց ուղարկում էր գործելու Լ. Հելիոսի հրամանատարության տակ միավորված երկու կոնսուլական բանակների գործողությունների շրջաններում։

Բայց Սպարտակն իր համար անդառնալի կորուստ էր համարում 20 հազար փորձառու ռազմիկների, ինչպես նաև Կրիքսոսի ու ևս երեք հրամանատարների մահը, որոնք զոհվեցին Լ. Հելիոսի և Կվ. Արիոսի դեմ տրված ճակատամարտի ժամանակ։ Հրամանատարների դիակները, որ բերել էին ամրացված Սիպոնտոսի մատույցներից նահանջած երկու լեգեոնները, Սպարտակի հոգում ցավ ու զայրույթ էին առաջացրել, ցավ՝ այն բանի համար, որ այդքան շուտ ընդհատվել էր նրա ընկերությունը զոհվածների հետ, որոնց հետ միասին էր ծրագրել ամբողջ գործը, զայրույթը անարդար ճակատագրի նկատմամբ, որը նրանից խլել էր ամենահեղինակավոր օգնականներին և իսկական առաջնորդներին հենց այն ժամանակ, երբ նրանց կարիքն առանձնապես էր զգում։

Ամբողջ զորքի ներկայությամբ Կրիքսոսի և նրա ընկերների մարմինները պատվավոր դիակիզման ենթարկվեցին։ Ընկած առաջնորդների թաղման խարույկների շուրջը կոնսուլների դեմ տրված մարտերի ժամանակ գերի ընկած հռոմեացիները Սպարտակի հրամանով ստիպված եղան մենամարտել որպես գլադիատորներ։ Այդ կապակցությամբ հռոմեացի պատմաբան Ֆլորոսը չի կարողանում թաքցնել իր զայրույթը. «Նա (այսինքն՝ Սպարտակը — Վ. Լ.) գերիներին հրամայում էր թաղման խա-

բույկի շուրջը մենամարտել, կարծելով, թե դրանով լիովին կհարթեր անցյալի ամեն մի անարգանք, եթե միայն ինքը՝ նախկին գլադիատորը, որպես մի երեքի իշխան թաղում կատարեր գլադիատորական մենամարտով»։

Ամբողջ զորքի որոշմամբ Կրիքսոսը դասվեց կիսաստված-հերոսների շարքը։ Նրա աճյունը թաղեցին շտապ կառուցված դամբարանում, ծածկեցին հողով, իսկ վրան զոհասեղան կառուցեցին։ Այսուհետև Կրիքսոսի հոգին ապրելու էր այդ դամբարանում, միջնորդ էր դառնալու աստվածների և մարդկանց միջև, պաշտպանելու էր իր ընկերներին, կանխելու էր ամեն մի դժբախտություն, նրանց հայտնելու էր թշնամիների գաղտնի մտադրությունները։

II

Նոր համալրումների հաշվին ապստամբների բանակի կորստանները քանակական տեսակետից փոխհատուցվեցին։ Բայց նոր ռազմիկները դեռևս վատ էին զինված և թույլ վարժեցված։ Սպարտակն ամբողջ եռանդով ձգտում էր վերացնել այդ թերությունները։ Նա ուժգնորեն զինում և վարժեցնում էր նորակոչիկներին, ուժերի մի մասը նախապատրաստում էր արշավանքի դեպի Անդրալպյան Գալլիա՝ պրովինցիան կուսակալ Ցոնտեոսի զորքերից ազատագրելու, իսկ այնտեղից, հաջողության դեպքում, Իսպանիա անցնելու և Գոմպեոսի դեմ պայքարելու համար։ Այս քայլը Սպարտակը ծրագրում էր մի կողմից որպես հոգեբանական գործոն (դժվար չէր պատկերացնել, թե Իսպանիայում ինչ տպավորություն կգործեր Իտալիայում սուլլայական զորքերի դեմ հաղթանակներով պսակված ապստամբների լեգեոնների հայտնվելը), մյուս կողմից՝ որպես ռազմական։ Այսրալպյան և Անդրալպյան Գալլիաներում համալրված ջոկատներով փորձաշատ լեգեոնների հայտնվելը, իսկապես, կարող էր մեծ ազդեցություն ունենալ Իսպանիայում մղվող պատերազմի վրա, գուցե նույնիսկ հաղթանակ բերեր Սերտորիոսին։ Միաժամանակ ստրուկների պարագլուխը ամբողջ ուժով ձգտում էր սենատին թյուրիմացության մեջ գցել իր իսկական ծրագրերի կապակցությամբ։ Այդ նպատակով նա կոնսուլների միջոցով սենատի հետ բանակցություններ էր վարում և առաջարկում էր խաղաղության պայմանագիր կնքել՝ փոխարենը

իրեն զիջելով գալլական երկու պրովինցիաներն իբրև բնակավայր։

Իհարկե, սենատի փորձված քաղաքագետները չէին վստահում հաղթական թշնամու առաջարկներին։ Ստրատեգիական տեսակետից կարևորագույն պրովինցիաները ապստամբներին զիջելը համարում էին մեծագույն հիմարություն։ Նրանք տեղյակ էին նաև Սպարտակի արտասահման ուղարկած դեսպանների մասին և վախենում էին հնարավոր հաջողությունից, առանձնապես գալլերի և գերմանների մոտ՝ իրենց վաղեմի թշնամիների, որոնցից հռոմեացիները բազմիցս սարսափելի պարտություններ էին կրել։ Նման վերջին պարտությունը մ. թ. ա. 105 թվականին եղավ, երբ Կվ. Ցեպիոնի և Գն. Մանլիոսի երկու բանակները միանգամից ջախջախվեցին։ «Սարսափն ստիպեց դողալ ամբողջ Իտալիային։ Այն օրվանից մինչև այսօր,— գրում է Սալյուստիոսը,— հռոմեացիները միշտ այն կարծիքն ունեին, թե ամեն ինչ պետք է հնազանդորեն խոնարհվի իրենց խիզախության առջև, բայց գալլերի հետ հարկ կլինի կռվել ոչ թե փառքի, այլ սեփական փրկության համար»։

Հակառակորդի ծրագրերը խորտակելու նպատակով, սենատն իր հերթին, դեսպանություններ էր ուղարկում Ալպերից այն կողմ, հեռու և մոտիկ ցեղերին համոզելու, որ գայթակղիչ խոսքերին ականջ չդնեն, այլ՝ պատերազմի, իր խաբուսիկ օգուտներով հանդերձ, վտանգներից գերադասեն անվտանգ չեզոքությունն իր պարգևներով՝ ներկայումս և սերտ հարաբերությունների օգուտներով՝ ապագայում։

Դրա հետ միասին սենատը Սպարտակին էլ բացասական պատասխան չէր տալիս և ամեն կերպ ժամանակ էր ձգում, կոնսուլներին հնարավորություն տալով իրենց բանակները վերակազմավորելու և օժանդակ ուժեր հավաքագրելու։

Սպարտակը հեշտությամբ գուշակեց սենատի գաղտնի մտադրությունը, բայց փոքր իսկ չշփոթվեց։ Նրա վիճակը բավականաչափ ամուր էր ու հաստատուն։ Ամեն կողմ տարածված ապըստամբների ջոկատների հարվածներից պրովինցիայում հռոմեացիների իշխանությունը օր օրի կործանվում էր։

Թվում էր, թե ամեն ինչ հիանալի է ընթանում։ Եվ հանկարծ... և հանկարծ նախկին բոլոր ծրագրերը ի դերև ելան...

ՀՌՈՄԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՍՊԱՐՏԱԿԻ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

I

72 թվականի հուլիսի կեսերին Սպարտակը ցնցող լուր ստացավ. հռոմեացի իր սպանների ձեռքով սպանվել էր Սերտորիոսը։ Անմիջապես պարզ դարձավ, որ ռազմական և քաղաքական իրադրությունը արմատապես փոխվել է։ Ասպարեզից դուրս էր եկել թշնամական երկու ուժեղ բանակները կուշկանդող փայլուն մի զորավար։ Սպարտակը հույսեր չէր կապում Պերպերնայի հետ որպես Սերտորիոսի փոխանորդ և ենթադրում էր, որ, նույնիսկ լավագույն դեպքում, Պոմպեոսը կարող է Իսպանիայում մնալ ամենաշատը կես տարի, իսկ հետո կշարժվի դեպի Իտալիա սենատի դորբերին օգնության հասնելու համար։

Սպարտակի մոտ գումարված ռազմական խորհրդում բարձրագույն զորապետները հանգամանորեն քննարկեցին ստեղծված իրավիճակը։ Ջայների գերակշռող մեծամասնությամբ վճռվեց. հարկավոր է մինչև Պոմպեոսի Իտալիայում հայտնվելը հարված հասցնել բուն Հռոմին։ Հաշվի առնելով, որ առաջիկա մարտերն առավել հաջող կլինեն ռազմական բախտի տատանումներով, անհրաժեշտ է զորքն ապահովել կասկածելի տարրերից՝ փախստականներից, բանակ չընդունել նրանց։ Եթե Հռոմին հարվածելն անհաջողություն կրի, պետք է հեռանալ դեպի Իտալիայի հարավը, ամեն գնով դեսանտ իջեցնել Սիցիլիա և այնտեղ ապստամբություն բարձրացնել, եռանդագին շարունակել բանակցությունները գերմանների և գալլերի հետ՝ նրանց Իտալիա ներխուժելու մասին։

Հրամանատարների հետ նոր ծրագիրը և դրանից բխող հանգամանքները մանրամասնորեն քննարկելուց հետո Սպարտակը հրամայեց Այսրալպյան Գալլիայում ցրված բոլոր ջոկատներին հավաքվել Մուտինայի մոտ գտնվող կենտրոնական ճամբարում։

Մի քանի օր անց ապստամբական բոլոր 24 լեգեոնները հավաքվեցին։ Շարժվելու նախօրյակին հրամանատարները կրկին հավաքվեցին Սպարտակի մոտ խորհրդի։

Խորհրդից հետո Սպարտակը հրամայեց Մեծ զոհաբերություն կատարել։

II

Վրա հասավ երեկոն։ Հերոս Կրիքսոսի պատվին կառուցված զոհասեղանի շուրջը հավաքվեց ամբողջ զորքը՝ լեգեոնները քառանկյուն դասավորած։ Զոհասեղանի մոտ կանգնած էին Սպարտակը, բարձրագույն հրամանատարները, գերագույն քրմուհին՝ Սպարտակի կինը, քրմական խորհրդի մեջ մտնող քրմուհիները՝ բոլորն սպիտակազգեստ և գլխներին սպիտակ պսակներ, մոնթերը, զոհաբերվող անասունները և վերջին մարտերում գերի ընկած 300 երիտասարդներ՝ հռոմեական ագնվատոհմիկներից։ Հռոմեացիները կանգնած էին լուռ, գլխահակ, ձեռքներն հետևներին կապված։ Ընդհանուր ակնածալից լռության մեջ գերագույն քրմուհին սկսեց սրբազան խարույկի վրա ծծումբ, խունկ, անուշաբույր խոտեր ցանել։ Անախորժ քաղցրավուն ծուխ բարձրացավ։ Ծուխը պարուրում էր զորքին, մաքրագործում, նախապատրաստելով Մեծ զոհաբերությանը։ Մոնթերն արձակեցին անասուններին՝ ցուլին, խոզին և խոյին։ Բարձրագույն հրամանատարների խմբից անջատվելով, Սպարտակը սկսեց նիզակով քշել կենդանիներին, որոնք նիզակի սուր ծայրից խույս տալով, սկսեցին աշխուժորեն վազել՝ խստաշունչ առաջնորդի կամքին հնազանդ։ Այսպես երեք անգամ, ըստ սովորույթի, նրանք պտտվեցին ամբողջ զորքի շուրջը և վերադարձան զոհասեղանի մոտ։ Այստեղ մոնթերը կենդանիներին մաքրեցին աղաջրով, նախապես այդ ջրի մեջ հանդցնելով այրվող ջահեր՝ նրա մաքրագործող ուժն ավելացնելու համար, հետո զոհերի գլխին պսակներ դրեցին և նրանց վրա զոհաբերության գարի շաղ տվեցին։ Գերագույն քրմուհին, ձեռքը հողին կպցրած, սահմանված աղոթքն ասաց՝ ուղղված ստորերկրյա աստվածներին։ Հետո ծառաները մեկը մյուսի հետևից զոհասեղանի մոտ քշեցին զոհաբերվող կենդանիներին (նախ ցուլին, հետո խոզին և խոյին)։ Քրմուհին նրանց ճակատներից մի քանի մազ պոկեց և նետեց խարույկի մեջ, իսկ մոնթերը ծանր տապարներով հարվածեցին կենդանիների գլխներին, շշմեցրին և հստակ ու սովոր շարժումներով սուր դորբական դանակներով կտրեցին կոկորդները։ Զոհաբերված կենդանիների արյունը և սև գինու, ջրի ու մեղրի խառնուրդից պատրաստված զոհաբերական հեղուկը, որ գերագույն քրմուհին հատուկ հեղման սափորից լցրեց, զոհասեղանի արևմտյան կողմի հատուկ փողրակով հոսեց գետնին...

Զոհաբերված կենդանիները, քերթելուց հետո, անմիջապես մասմաս արեցին։ Դրանց մեծ մասը մի կողմ քարշ տվեցին, փոքր մասը՝ սրտերը, լյարդերը և թոքերը նետեցին զոհասեղանի կրակի մեջ։ Գերագույն քրմուհին ուշադրությամբ զննեց փորոտիքը, ցանալով գուշակել աստվածների կամքը։ Այրվող զոհերի ծխի բուլաները բարձրացան երկինք։ Ապստամբները, գլուխները երկարեցնելով, ագահությամբ նայում էին երկնի կապույտին. յուրաքանչյուրը ցանկանում էր անձամբ տեսնել, թե ինչպես են ման-աստվածները, ասես ճանճեր, թռչում գալիս զոհաբերական ծխի վրա, համտես անելու, ըմբոշխնելու... Ընդհանուր լարվածությունը հասավ գագաթնակետին, երբ ավագ քրմուհին գիմելով դերի հռոմեացիներին, հանդիսավոր ասաց.

— Հռոմեացիներ։ Այսօր մեծ օր է։ Կրիքսոսի հոգին մարդկային զոհ է պահանջում։ Դուք բոլորդ, մեր երդվյալ թշնամիներ, կզոհաբերվեք համաձայն նրա ցանկությանը։ Թող Կրիքսոսի հոգին ուրախ ու խաղաղ լինի։ Քրմուհիներ, հռոմեացիներին զոհաբերական պսակներ հագցրեք։

Մեծ քրմուհու հրամանին ենթարկվելով, նրա կրտսեր ընկերուհիները սկսեցին շրջել հռոմեացիների մեջ, ջուր ցողել նրանց վրա և պսակներ դնել գլխներին, իսկ մոնթերը նրանց դյուրին զոհաբերական գարի շաղ տվեցին։ Հռոմեացիները, ծանր շնչելով, ասես երկարատև վազքից հետո, ատելությամբ նայում էին իրենց շուրջը կուռ շարք կազմած և զենքերն ամուր սեղմած ապստամբներին։ Պսակներ բաժանելուց հետո հռոմեացիներին ցողեցին զոհաբերված կենդանիների արյունով։ Այնուհետև մոնթերը հերթով բռնում էին նրանցից յուրաքանչյուրի ձեռքը, մոտեցնում Կրիքսոսի գերեզմանաքարին, որով ծածկված էր հատուկ ձև ունեցող փոսը (սրա միջից պետք է Կրիքսոսի հոգին դուրս գար), շոքեցնում այդտեղ։ Հատուկ մոնթը դանակով կայծակնային հարված էր հասցնում զոհի պարանոցին։ Սպանված հռոմեացիները գետին էին ընկնում, իրենց արյամբ ներկելով շիրմաքարը։ Զոհերի մարմինները քարշ էին տալիս մի կողմ և դարսում նախօրոք պատրաստված հսկայական խարույկի փայտերի վրա։ 300 ամենաազնվազարմ հռոմեացիներ, ատամները սեղմած, վախից, սարսափից և անզոր կատաղությունից դունաթափ, ամբողջ ուժով զսպելով բարձրաձայն ճչալու, ողորմածություն աղերսելու ցանկությունը և զզվելի դողը, մեկը մյուսի հետևից լուռ ծնկի էին իջնում գերեզմանաքարի մոտ,

ճակատով ղեալով քարի ջերմությունը և կոշտությունը։ Մահացու հարված ստանալով՝ լուռ ընկնում էին գետին, հողն ու քարը իրենց արյունով ներկելով...

Երբ մոնթերը վերջին հռոմեացու դին դրեցին խարույկի փայտերի վրա, իսկ լարվածությունը հասավ բարձրագույն կետին, գերագույն քրմուհին բարձրաձայն հրամայեց...

— Քարը բարձրացրե՞ք։

Ճարպիկ մոնթերը վազ տվեցին քարի մոտ, համերաշխորեն ընկան վրան և քարը մի կողմ շրջեցին։ Անմիջապես լսվեց տարօրինակ մի ձայն, կարծես գլխավերևում մի լար աղերսագին զնգաց։ Միաբերան աղաղակ դուրս թռավ հազարավոր կոկորդներից.

— Կրիքսոսի հոգի՞ն է։ Նա մեզ հե՞տ է։

Սպարտակը բարձրացրեց ձեռքը։ Բոլորը լռեցին, և նա ասաց.

— Դա մեր հովանավոր-աստծո՝ Կրիքսոսի հոգին է։ Կրիքսոսը մեզ հետ է։ Նա մեզ կանչում է իր հետևից, կանչում է արշավել Հռոմի վրա։

Միահամուռ աղաղակը նորից դուրս թռավ հազարավոր կոկորդներից.

— Դեպի Հռո՞մ։ Դեպի Հռո՞մ։ Կործանե՞նք այն։

Սպարտակը կրկին ձեռքը թափահարեց։ Նրա նշանով բազմաթիվ ջահակիրներ ջահերը մոտեցրին խարույկին, որի վրա դարսված էին արնաշույն կտորով ծածկված սպանված հռոմեացիների մարմինները, յուղերով լի սափորներ, ճարպի կտորներ, անուշաբույր խոտեր և այլ վառվող նյութեր։ Մի ակնթարթում խարույկը կատաղի բռնկվեց։ Փայտերը ճարճատեցին, կայծեր թռան, կրակի բազմաթիվ լեզվակներ վեր խոյացան... Սպարտակը նորից ձեռքով նշան արեց։ Շեփորահարներն իսկույն աղդանշան տվեցին. «Շարժվե՞լ»։ Ապստամբների շարքերը բացվեցին, շարվեցին երթային շարասյունով։ Սպարտակի ու նրան շրջապատած զորապետների ձիերը մոտեցրին։ Նրանք հեծան ու վարգեցին՝ յուրաքանչյուրն իր տեղը։ Հռոմի վրա արշավանքը սկսվեց։

Ապստամբների վեր պարզած դրոշակների վրա նոր լոզունգներ հայտնվեցին. ոչնչացնե՞լ Հռոմը և նրա բոլոր բռնակալական կարգերը, ստեղծել համընդհանուր արդարության նոր պետություն՝ «Արևի Պետություն»։ Դրա մասին էին խոսում բոլոր իտա-

լիկներին հայտնի խորհրդանշանները.. ցուլը ամբակներով տրոտում է հռոմեական էգ գայլին, վրիժառության աստվածուհի Նեմեզիսյան գրիֆոնները՝ առյուծի մարմին ունեցող արծվագլուխ առասպելական հրեշներ լծած երկանիվով սլանում է երկնքում, կարճ փոսփոսացող հագուստով և ազատություն խորհրդանշող փոյուգիական թասակով լույսի և բարության անպարտելի աստված Միթրան սրով ոտանում է ցուլին։

III

Էմիլիոսի ճանապարհով ապստամբների բանակը շարժվում էր դեպի հարավ։ Ջորքի շարժման արագությունը կաշկանդող գումակի մեծ մասը այրված էր, գերի հռոմեացիները՝ սպանված, ավելորդ անասունները՝ մորթված։ Նախատեսված էր շարժվել Թեթևարեւ, կայծակնային հարվածով ջախջախել կոնսուլներին և հարձակվել Հռոմի վրա։

Քաղաքի վրա գնալու Սպարտակի մտադրության մասին լուրը խուճապ առաջացրեց հռոմեական ճամբարում։

Միկենումի մոտ կոնսուլները փորձեցին Սպարտակի առաջն առնել, բայց հաջողություն չունեցան։

Կոնսուլների անընդմեջ պարտությունները ամբողջ Իտալիայում, ամբողջ Միջերկրականում շատ խոր տպավորություն էին թողել։ Այդ են վկայում պանաղան աղբյուրները։ Այսպես, նույնիսկ մ. թ. V դարում տարբեր հեղինակներ գրում են այդ մասին.

«Թե՞ դու, ո՞վ Սպարտակ, սովոր ես կոնսուլների ջոկատները ցրելու։ Քո դանակը նրանց սրից զորեղ էր»,— ասում է նրանցից մեկը (Ապոլինարիոս Սիդոնիոս), իսկ մյուսը.

«... Խոսե՞մ ես արդյոք Սպարտակի մասին։
Հրով ու սրով մրրկում էր, անցնում Իտալիայով մեկ։
Շատ անգամ էր նա բաց մարտի մտնում կոնսուլների հետ,
Թույլ ու ապիկար տիրակալներից ճամբարներ խլում։
Եվ իրենց արծվի արիությունը անարգ պարտությամբ կորցրածներին
Հաճախ հաղթ ղենքով ապստամբների ջախջախում էր նա...»

(Կլավդիանոս)

Կոնսուլների կռիվների մասին Կատոն Կրտսերի կենսագրության կապակցությամբ հետաքրքիր մանրամասներ է ավելացնում Պլուտարքոսը։ «Ստրուկների դեմ պատերազմի կամ Սպարտակի դեմ պատերազմի ոկզբում,— գրում է նա,— բանակի հրամանատարն էր Հելիոսը։ Կատոնն արշավանքին մասնակցում էր կամավոր, հանուն եղբոր. Ցեպիոնը զինվորական տրիբուն էր։ Պատերազմն անհաջող էր մղվում, այդ պատճառով Կատոնը իր ջանասիրությամբ ու քաջության չափով էր կարողանում դրսևորել իր ուժերը։ Այդուհանդերձ, չնայած այն ժամանակ բանակում տիրող փափկակեցությանը և շքեղությանը, նա արտահայտել է իր սերը կարգ ու կանոնի, քաջության, ոգու արիության նկատմամբ բոլոր պայմաններում, այնպես որ, կարծես թե, չէր գիջում Ավագ Կատոնին։ Հելիոսը նրան տարբեր պարգևներ և փայլուն կոչումներ էր առաջարկում, բայց Կատոնը հրաժարվում է դրանցից, պատճառաբանելով, թե պարգևի արժանի ոչինչ չի արել։ Դրա համար նա տարօրինակ մարդու համբավ վաստակեց» (Կատոն Կրտսեր, VIII)[1]։

Կոնսուլների դեմ նոր հաղթանակից հետո, Սպարտակը, սակայն, չհետապնդեց նրանց։ Հանկարծակի փոխեց շարժման ուղղությունը և առաջացավ դեպի հարավ, նպատակ ունենալով մխրճվել Լուկանիա։

Ստրուկների առաջնորդի ծրագիրը փոխվեց երեք պատճառով, նախ՝ նոր լեգեոնների զինվածությունը և պատրաստականությունը, նրա կարծիքով, բավարար չէր, երկրորդ՝ Պիկենում և Էտրուրիա մարդերի խոշոր քաղաքները, որոնց հետ հույսեր էր կապում, չաջակցեցին ապստամբներին՝ հռոմամետ կուսակցություններն ամենուրեք հաղթանակել էին, երրորդ՝ Ֆլամինիական ճանապարհով կոնսուլներին օգնության էր շտապում նոր գլխավոր հրամանատար նշանակված Մ. Կրասոսը՝ Հռոմում հավաքած իր վեց թալմ լեգեոններով։

Այդ ժամանակ հռոմեացիների մայրաքաղաքում դրությունը հետևյալ կերպ էր։

---

[1] Մ. Կատոն (մ. թ. ա. 95—46 թթ.) հանրապետության վերջին շրջանի ականավոր քաղաքական գործիչ, նշանավոր զորապետ, Կեսարի թշնամին։ Մ. Կատոնի ավագ եղբայրը՝ Ցեպիոնը (մ. թ. ա. 102—70 թթ.) նրա մտերիմ ընկերն էր և համախոհը։

Գլուխ քառասներորդ

ԿՈՆՍՈՒԼՆԵՐԻ ԾԱՌԱՆԳՈՐԴ Մ. ԿՐԱՍՈՍԸ

I

Հռոմում ամբողջ 72 թվականի ընթացքում կուսակցությունների պայքարը շարունակում էր սրվել։ Տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ մեծագույն դայրույթով հետապնդում էին միմյանց դատարանում և ֆորումում, և հռետորներն այնտեղից վերադառնում էին «վիճաբանություններից հոգնած» (Ցիցերոն)։ Ժողովրդական արիրությունները փողոցներում հավաքներ էին անում՝ միմյանց մեղադրելով խռովություն սերմանելու և համաքաղաքացիների իրավունքները ոտնահարելու մեջ։

Պոմպեոսականները դրգռելով սերտորիոսականների մի-ջամտությունը տարաձայնություններ և պառակտում սերմանելու հարցերով, ցանասիրաբար ապիտացիա էին մղում տվյալ պահին Իսպանիայում Սերտորիոսի բանակում պատերազմող Մ. Լեպիդոսի նախկին համախոհների նկատմամբ ներում կիրառելու օրինագծի օգտին։ Այդ օրինագիծը սենատում հաճույքով պաշտպանեցին Ցետեգոսի, Կրասոսի և Լ. Կոտայի կողմնակիցները, Լ. Կոտան փոխարինում էր Կ. Կոտային՝ իր մահացած եղբորը (73 թ.), արիստոկրատական ռեֆորմատորների նշանավոր առաջնորդին։ Այսպիսով, դեռևս մինչև Սերտորիոսի սպանությունը հաջողությամբ իրագործված օրենքի շնորհիվ, Իսպանիայից և այլ վայրերից սկսեցին վերադառնալ Մ. Լեպիդոսի նախկին փախստական կողմնակիցները։ Միաժամանակ, Պոմպեոսի ցանկությամբ ընդունվեց մյուս կարևոր օրենքը՝ Հելիոս-Կոռնելիոսի օրենքը (72 թ.), որով Պոմպեոսի և Մետելլոսի բանակների ռազմական հավաքների որոշմամբ Սերտորիոսի դեմ պատերազմում կարևոր ծառայություններ մատուցած իսպանացիներին հռոմեական քաղաքացիություն էր տրվում։ Անցկացնելով այդ օրենքը՝ Պոմպեոսը և Մետելլոսը ցանկանում էին Իսպանիայում ընդլայնել իրենց սոցիալ-քաղաքական հենարանը և հռոմեական բանակն ապահովել իսպանացի նորակոչիկներով (նրանց մտադրությունը լիովին հաջողվեց), ինչպես նաև նվազեցնել դեպի Սերտորիոսի բանակը գնացող ուժերի հոսքը։

Այդ ժամանակահատվածում սենատի բոլոր խմբավորումներին խիստ անհանգստացնում էր ծայրաստիճան աղքատացած

պետական գանձարանը դրամական նոր միջոցներով համալրելու անհրաժեշտության խնդիրը։ Նկատի ունենալով, որ Սիցիլիայից, երկու Գալլիաներից, մասամբ Աֆրիկայից և Փոքր Ասիայից բացի, մնացած գրեթե բոլոր եկամուտների աղբյուրները սպառվել են, կոնսուլ Գն. Լենտուլոս Կլոդիանոսը Պոմպեոսի և Ցեսեգոսի խմբավորումների աջակցությամբ օրենք անցկացրեց, ըստ որի օրենքից դուրս հայտարարվածների ունեցվածքը վերցրած անձինք, որոնք Սուլլայի շնորհիվ դրա դիմաց ոչինչ չէին վճարել, պարտավոր էին դրամական հատուցում վճարել[1]։

Կվ. Կատուլոսի և Մ. Կրասոսի խմբերի անդամները, որոնք առանձնապես հարստացել էին օրենքից դուրս հայտարարվածների հաշվին, ծայր աստիճանի վրդովված էին Գն. Լենտուլոսի՝ իրենց գրպանին խփող օրենքի դեմ։

72 թվականից բոլոր նախկին սուլլայականներն առանձնապես սրությամբ զգացին, թե ինչքա՜ն անհուսալի են ապօրինի ձեռք գցած իրենց հարստությունները, որոնք ցանկացած պահին կարող են հետ պահանջվել։ Հենց այդ ժամանակվանից նրանց շրջապատում սկսեցին հայտնվել մարդիկ, որոնք առաջարկում էին պետությանը վաճառելու միջոցով ազատվել անհուսալի սեփականությունից։ Բայց ոչ բոլոր սուլլայականներն էին ցանկանում հրաժարվել իրենց հարուստ հողատարածություններից, անտառներից, եկամտաբեր կալվածքներից և այլն։ Ամեն կերպ ռեֆորմատորներին հայհոյելով, նրանք երդվում էին առաջին իսկ հարմար առիթով վրեժ լուծել Գն. Լենտուլոսից իր նոր կալի օրենքի համար։ Այդպիսի առիթ նրանց ներկայացավ մեկ տարի հետո (70 թ.)։ Մ. Կրասոսի կողմնակից ժողովրդական տribուններից մեկը, առանց դատական արարողության, միայն սենատարի ներկայությամբ և անուշաբույր խոտեր ծխարկելով, Գն. Լենտուլոսի կարողությունը ենթարկեց գաղտնագրկման՝ բռնագրավման հօգուտ տաճարի։ Այդ գործը մեծ աղմուկ և խայտառակություն առաջացրեց, թեև գործնական ոչ մի հետևանք

---

[1] Յուրաքանչյուրը, ով համաձայնում էր գնել օրենքից դուրս հայտարարվածների գույքը, դառնում էր համաքաղաքացիների ատելության առարկան։ Սուլլան քաջ գիտեր այդ բանը և, ավելի շատ կողմնակիցներ գրավելու նպատակով, առանց տատանվելու իր սպանված կուսակցական հակառակորդներից շատերի ունեցվածքը բաժանում էր միանգամայն ձրի կամ «պարտքով», որը հետագայում զիջում էր նրանց։

յունեցավ, բայց Գն. Լենտուլոսին՝ այն ժամանակ արդեն ցենսորին, շատ ահռելի թյուններ պատճառեց (Ցիցերոն)։

Սենատում սուր պայքարի առիթներ էին ներկայացնում նաև արևելյան կարևորագույն գործերն ու արևելյան քաղաքականության ընդհանուր ուղղությունը՝ վերաբերմունքը Միհրդատի, Տիգրանի, ինչպես և Ասորիքի, Հրեաստանի, պարթևների, Եգիպտոսի նկատմամբ և այլն։

Միհրդատի գործերը բուռն քննարկման ենթարկվեցին Հռոմ ժամանած Լ. Լուկուլլոսի կողմը փախած երկու զորավարների՝ Լ. Ֆանիոսի և Մենոֆանեսի, պոնտական արքայի դեմ հետագա պայքարի հնարավորությունների մասին զեկուցման ժամանակ (Պլյուտարքոս)։

Սուր վիճաբանությունների ընթացքում սուլլայականներն ամեն կերպ գովաբանում էին Լ. Լուկուլլոսին, պահանջում էին ընդլայնել և երկարաձգել նրա լիազորությունները։ Նրանց դեմ բարձրանում էին գորավարի գործողությունները քննադատող պոմպեոսականները և Լ. Լուկուլլոսին մեղադրում էին պատերազմը դիտավորյալ ձգձգելու մեջ։

Բոլորին հետաքրքրող մյուս հարցը կապված էր Ասորիքի Սելևկյանների թագավորության ճակատագրի հետ։ Հայկական զորքերից փախած Անտիոքոս Բարեպաշտ թագավորից հետո արդեն 11 տարի էր (83 թվականից), ինչ Ասորիքը «բարձիթողի վիճակում էր»։ Այնտեղ տիրում էր անիշխանություն և խառնաշփոթ։ Առավել ազդեցություն ունեին ծովամերձ քաղաքները, որոնց կառավարում էին. Տրիպոլիի տիրակալ Դիոնիսիոսը, Բիբլոսի տիրակալ Կինիրոսը, Լիզիայի տիրակալ Սիլան։ Ասորիքի հյուսիսում իր հզորությամբ բոլորին ճնշում էր իտուրեացիների տիրակալ, մշտական 8 հազարանոց հեծյալ զորագունդ ունեցող Մենեոսի որդի Պտղոմեոսը։ Ասորիքի Արևելքում կարևոր դեր էին խաղում արաբ տիրակալները, Եդեսիայում՝ Աբգարը, Հեմեսայում (Անտիոքի ու Դամասկոսի միջև) Սամպսիկերամը, Արեթուսայում՝ Ազիզը, ռամբեացիների մարզում՝ Ալկավդոնեոսը։ Բոլոր այդ տիրակալները՝ «անապատի զավակները», անընդմեջ կռիվներ էին մղում Ասորիքի ծովամերձ քաղաքների դեմ, միաժամանակ զբաղվելով առևտրով և ավազակությամբ։

Ազիզը և Սամպսիկերամը առանձնապես շատ էին խառնվում Ասորիքի գլխավոր քաղաք Անտիոքի գործերին, մասնակից էին քաղաքացիների բոլոր խառնակություններին։

Ասորիքին իշխելու իր նկրտումներն էր ցուցաբերում նաև հրեական Ալեքսանդր Յաննեոս արքայի (մահ. մ. թ. ա. 91 թ.) որդի Արիստոբուլոս թագավորը։ Ասորիքի գործերին էր խառնվում նաև նաբատեացոց Արետաս արքան։ Սինայի թերակղզում հարուստ (նրա մայրաքաղաք Պետրան հռչակված էր իր շքեղ պալատներով և դամբարաններով) թագավորության տեր Արետասը փառատենչական դիտավորություններ ուներ և դրամ չէր խնայում Ասորիքում կողմնակիցներ ձեռք բերելու համար, որոնք նրան ցանկանում էին տեսնել որպես Սելևկյանների ժառանգորդ։

Սակայն Սելևկյան օրինավոր արքայազունները չէին ուզում հրաժարվել իրենց իրավունքներից։ Մեծ շքախմբերով և թանկարժեք նվերներով 74 թվականին Հռոմ ժամանեցին Անտիոքոս Բարեպաշտի ջահել որդիները։ Նրանք սենատից խնդրում էին իրենցից մեկին վերադարձնել Ասորիքի, իսկ մյուսին՝ եգիպտական գահերը, այն հիմունքով, որ Ասորիքի նկատմամբ նրանց հավակնությունները միանգամայն օրինական են հոր կողմից, իսկ Եգիպտոսինը՝ մոր (նա Պտղոմեոս Եվերգետ II-ի դուստրն էր)։

Արքայազունները Հռոմում մնացին գրեթե երկու տարի։ Նրանք բուռն կերպով հորդորում ու թախանձում էին երևելի սենատորներին, հսկայական գումարներ ծախսում, բայց հաջողության չէին հասնում։ «Մեր պետության համար անբարենպաստ քաղաքական հանգամանքների պատճառով,— ասում էր Ցիցերոնը,— նրանք սենատից չկարողացան ստանալ այն, ինչ սպասում էին, և մեկնեցին հետ՝ իրենց հայրենիքը, ասորական թագավորությունը»։

Ասորիքի հարևան Պարթևստան պետության մեջ գնալով ուժ էր հավաքում Հռոմի դեմ Միհրդատի պատերազմը շարունակելու կողմնակից կուսակցությունը։ Պոնտոսի արքայից Հրահատ III-ին ուղղված նամակն ուշադրությամբ քննարկվում էր։ Պարտություններից գաղափած Միհրդատը շափազանց խիստ էր գրում. «Այդ խաժամուժը (այսինքն՝ հռոմեացիները — Վ. Լ.), որ մի ժամանակ անհայրենիք էր, անտոհմ, այժմ դարձել է ամբողջ աշխարհի պատուհասը։ Ոչ մի մարդկային կամ աստվածային օրենք չի կարող նրանց հետ պահել իրենց հեռու կամ մոտիկ, թույլ կամ հզոր դաշնակիցներին գավաճանելուց և կոտրելուց, որոնք իրենց ստրկությունից դուրս մնացած բոլորին՝ առանձ-

Նապես թագավորությունները, համարում են թշնամական։ Չէ՞ որ քլերն են ձգտում ազատության, շատերը ցանկանում են արդարության տեր ունենալ. մենք նրանց համար կասկածելի ախոյաններ ենք, որ ժամանակին դառնալու ենք վրիժառուներ» (Սալյուստիոս)։ Միհրդատն իր նամակն ավարտում էր հետևյալ հորդորանքներով. «Քեզ փառք է սպասում, եթե օգնելով թագավորներին, ցախջախես ավազակներին, բոլոր ժողովուրդների հարստահարիչներին։ Թախանձագին խնդրում եմ անես այդ բանը և չկերպասես մեր կործանման գնով երկարաձգել միայն քո թագավորության գոյությունը, այլ մեզ հետ դաշնակցած պատնես հպիրոդ»։

Միհրդատի այս նամակի հետ հռոմեական սենատը ծանոթացավ ժամանակին՝ լրտեսների ձեռք գցած պատճենի շնորհիվ։ Նամակը տպագրեց։ Հանդիսացնում էր միայն Լ. Լուկուլլոսի հավատիրը, որ Հրահատը վախենում է հռոմեական հզորությունից և չի համարձակվի պատերազմի մեջ մտնել։ Ամենք, սենատորները գտնում էին, որ նման գրությունը պարտադիր չէ, որ երկար տևի և զինվորական կուսակցությունը կամակոր արքային կարող է ասպարեզից հանել դաշույնի հարվածով կամ թույնի գավաթով։

Բավականաչափ երերուն էր նաև դրությունը Եգիպտոսում։ Այստեղ, արքունիքում, բացահայտորեն իշխում էր վարձկաններից կազմված արքայական գվարդիան։ Այն մինիստրներ էր պաշտոնապրկում և նորերին նշանակում, իրավունք էր վերապահում թագավորին իր պալատում պաշարել, երբ վերջինս հրաժարվում էր ավելացնել ռոճիկը, և ամեն կերպ խոչընդոտում էր հռոմամետ կուսակցությանը, որը ցանկանում էր Եգիպտոսը պրովինցիայի իրավունքներով միացնել Հռոմեական հանրապետությանը, ինչպես կտակել էր Ալեքսանդրիայում իր գահ բարձրանալուց մի քանի օր հետո սպանված Ալեքսանդր II-ը (81 թ.)։

Իրենց հերթին սուլլայականները ցանկանում էին, որպեսզի Լ. Լուկուլլոսը հայտնվի Եգիպտոսում։ Բայց սենատի մնացած խմբավորումները դեմ էին, որ Միջերկրական ծովի ամենահարուստ թագավորությունը վերածվի իրենց քաղաքական հակառակորդների կալվածքի, վճռականորեն բողոքում էին բարեկամ Պտղոմեոս արքայի իրավունքների ոտնահարման դեմ։

Սենատի տարբեր խմբավորումների մեջ եղած արմատական

տարաձայնությունների պատճառով եգիպտական նոր թագավորին հաջողվեց կաշառքի միջոցով պահպանել իր տիտղոսը։ Բայց սենատի որոշումը ժողովրդական ժողովը դեռևս չէր հաստատել, այդ պատճառով Պտղոմեոսն իրեն լիովին հանգիստ չէր կարող զգալ։

Հանգստության ավելի քիչ հիմքեր ուներ նաև մյուս Պտղոմեոսը՝ Կիպրոսի արքան։ Առաջին հերթին նրա փոքր տիրապետությունն էր Հռոմից կլանվելու վտանգի տակ։ Արքան այդ բանը լավ էր հասկանում և չէր համաձայնում հռոմեացիների հետ բացահայտ պատերազմի մեջ մտնել, ջանում էր վնաս տալ Հռոմին՝ ծովահեններին գաղտնաբար օժանդակելով։

Վերջիններս էլ 72 թվականին գտնվում էին իրենց հաջողությունների գագաթնակետին, և Պ. Սերվիլիոսը ոչ մի կերպ չէր կարողանում ջախջախել նրանց։ Ծովահենների դեմ պայքարի հարցը կրկին ու կրկին բարձրանում էր սենատի նիստերի ժամանակ։ Բայց հակառակորդ խմբավորումների կատաղի պայքարը հնարավորություն չէր տալիս դրականորեն լուծել այդ դժվարին խնդիրը։

Ինչ վերաբերում է Աֆրիկային, ապա դրությունն այնտեղ բավականաչափ անմխիթար էր։ 74 թվականից Կիրենայում չէին դադարում ապստամբների գործողությունները։ Կիրենայից արևմուտք մավրիտանական թագավորներ՝ երկուսն էլ Սերտորիոսի կողմնակիցներ (արևմտյան և արևելյան Մավրիտանիաների տիրակալներ) Բոքխը և Բոգուդը համառ, բայց ապարդյուն պայքար էին մղում Պոմպեոսի դաշնակից, Նումիդիայի արքա Հիեմպսալ II-ի դեմ։ Մավրիտանացիների դիմադրությունը դադարեցնելու սենատի բոլոր ջանքերն արդյունք չէին տալիս։

Վերջապես սենատն իր նիստերի ժամանակ արտաքին քաղաքական հարցերի կողքին քննարկում էր ներքաղաքական բնույթի խնդիրներ, առաջին հերթին Սպարտակի դեմ մղվող պատերազմի հարցը։ Առանձնապես սուր վիճաբանություններ էր առաջացնում երկու Գալլիաների զիջողության գնով Սպարտակի հետ հաշտություն կնքելու հնարավորության հարցը։ Սենատի բոլոր խմբավորումները միահամուռ դեմ էին ապստամբ ստրուկների առաջնորդի հետ որևիցե հաշտության։

II

72 թվականի հունիսի վերջին, ինչպես սովորաբար լինում էր, Հռոմում տեղի ունեցան հաջորդ՝ 71 թվականի, մագիստրատների ընտրությունները։ Քանի որ երկու կոնսուլները գտնվում էին ռազմական գործողությունների թատերաբեմում, ընտրությունները ղեկավարում էր միջթագավոր, սենատի պրինցեպս, Սուլլային դիկտատոր կարգող, Միհրդատի դեմ պատերազմելիս (86 թ.) դինվորական խռովության ժամանակ սպանված մարիոսական կոնսուլ Ֆլակոսի եղբայր Լ. Վալերիոս Ֆլակոսը (Ավագը)։

Կուսակցությունների սուր պայքարից հետո կոնսուլներ դարձան Պ. Կոռնելիոս Լենտուլոս Սուրան և Գն. Անֆիդիոս Օրեստեսը։ Երկուսն էլ սուլլայական մարտական սպաներ էին, Միհրդատի և մարիոսականների դեմ պատերազմի մասնակիցներ։ Նրանցից առաջինը սենատում պատկանում էր Կվ. Կատուլոսի խմբին, երկրորդը՝ Լ. Կոտային Օրեստեսը, որպես քաղաքական գործիչ, այնքան շուտ դուրս եկավ ասպարեզից (71 թվականին գլխավորելով հռոմեական նավատորմը, ծովահեններից պարտություն կրեց և Օստիայի մոտ զոհվեց), որ նույնիսկ նրա անունը չի արձանագրված Ցիցերոնի շատ ընդարձակ նամակագրությունում։ Այլ եղավ նրա գործընկերը, շքեղ ապրելու սիրահար, ժողովրդական շատյլ առնախմբություններ կազմակերպող Լենտուլոս Սուրայի հակառակորդը։ Նրան վիճակված էր մոտ ապագայում ամենաակտիվ մասնակցություն ունենալ խոշոր իրադարձություններին։ Ինը տարի հետո նա հանդես կգա որպես այսպես կոչված. «Կատիլինայի դավադրության» նշանավոր կազմակերպիչ և մասնակից ու իր շրջ ընկերների, նույնիսկ դավադրության ղեկավարների, հետ միասին մահապատժի կենթարկվի այն ժամանակվա կոնսուլ դարձած Ցիցերոնի կողմից։

Կոնսուլներից հետո 71 թվականի համար ընտրվեցին նաև տասը ժողովրդական տրիբուններ (նրանց մեջ էր Պոմպեոսի քաջարի սպաներից Մ. Լոլիոս Պալիկանեսը՝ սուլլայական վերնախավի ատելին, որը և հետագայում խանդաբեց նրան կոնսուլ դառնալ), ութ պրետորներ (նրանց մեջ ամենաազդեցիկներն էին Պոմպեոսի ախոյան Մ. Կրասոսը և Պոմպեոսի լեգատ, Իսպանիայից ժամանած Մ. Պետրեոսը), ինչպես և շորս էդիլներ։

Կրասոսը, որին դուր չէր եկել Իսպանիայից հանկարծակի

ժամանած Պոմպեոսի երկու ազդեցիկ զորապետների՝ Պետրեոսի և Աֆրանիոսի (երկրորդը ղեկավարում էր առաջինի նախընտրական կամպանիան, որը և չհաջողվեց խափանել) ներկայությունը, վախով սպասում էր, թե Պետրեոսն անմիջապես իր թեկնածությունը կառաջարկի Սպարտակի դեմ մղվող պատերազմում գլխավոր հրամանատարի պաշտոնի համար։ Բայց Պետրեոսը հապաղում էր։ Շուտով Կրասոսը հասկացավ, թե բանն ինչ է. Պոմպեոսը լեգատներին պատվիրել էր մինչև իր վերադարձը նախապատրաստել ռազմական և քաղաքական դիրքերը և սպասել մինչև բացարձակ ճգնաժամային իրադրության ստեղծվելը։

Մագիստրատների ընտրությունների ավարտից հետո, կոնսուլների պարտությունից դժգոհ սենատը հայտարարեց հրամանատարությունը մեկ զորապետով փոխարինելու իր մտադրության մասին և ցանկացողներին առաջարկեց թեկնածուներ առաջ քաշել։ Յուրաքանչյուր կուսակցություն ջանասիրաբար քննարկում էր իր հնարավորությունները և իր ամենանշանավոր սպաների թեկնածությունն էր առաջադրում։ Սակայն բոլոր հնարավոր թեկնածուները կտրականապես հրաժարվում էին։ Ոչ մեկը չէր ցանկանում ռիսկի ենթարկել իր ռազմական վարկը, մտնելով այնպիսի անշնորհակալ գործի մեջ, ինչպիսին ստրուկների տաղանդավոր առաջնորդի դեմ պատերազմելն էր։

Սենատը, հրամանատարի պաշտոնի համար թեկնածու չգտնելով, մեծ դժվարությունների դեմ կանգնեց։ Հենց այդ ժամանակ Սպարտակը հանկարծ թողեց Այսրալպյան Գալլիան և շարժվեց հարավ՝ Հռոմի վրա արշավելու մտադրությամբ։ Քվիրիտների քաղաքին համակեց խուճապը, որն առավել սաստկացավ կոնսուլների նոր պարտության լուրն առնելուց հետո։ Իրադրությունը դարձավ ճգնաժամային, և «պետությանը պակաս չէր պատել վախը, քան այն ժամանակ, երբ Հաննիբալը սպառնագին կանգնած էր Հռոմի պարիսպների մոտ» (Օրոզիոս)։

Վտանգավոր դրության պատճառով սենատն անմիջապես հայտարարեց զորակոչային տարիք ունեցող բոլոր քաղաքացիների զորահավաք։ Քաղաքի բոլոր մասերում քաղաքային պրետորների հրամանատարությամբ կոհորտաներ տեղաբաշխվեցին, մի քանիսը՝ պարիսպների վրա, մյուսները՝ պաշտպանելու համար Յանիկուլյան բլուրը, որտեղ գտնվում էր պետական գանձարանը, Տիբր գետի փայտյա կամուրջի մոտ և այլն։ Պրետորների մի մասը շտապ ուղարկվեց նավահանգիստ կարգի բերե-

լու նավատորմն ու նավակներն այն ծայրահեղ պարագայի համար, որ երբ թշնամին, այնուամենայնիվ, ներխուժի քաղաք, սենատը ստիպված ծովով փախչի Փոքր Ասիա՝ Լ. Լուկուլլոսի կամ էլ Իսպանիա՝ Պոմպեոսի և Մետելլոսի մոտ։ Ուժեղացվեց բոլոր դարպասների՝ Կապենյան, Կոլինյան, Վիմինալյան, Տիբուրյան, Էսքվիլինյան, ինչպես և արիստոկրատական թաղամասի՝ Պալատինումի պահպանությունը։ Այդ թաղամասը, որտեղ ապրում էին ամենաազնվատոհմիկ և ամենահարուստ քաղաքացիները (Սուլլան, Մ. Կրասոսը, Հորտենզիոսը, Մետելլոսները, Կուրիոն-հայրը և ուրիշն.), միշտ նշանակալի դեր էր խաղում Հռոմի կյանքում։ Այն գտնվում էր Հռոմի յոթ բլուրներից ամենափոքրի վրա և անասունների հովանավորող Պալես դիցուհու պատվին ստացել էր իր անունը։ Այստեղ էր գտնվում հինավուրց «քառակուսի Հռոմը» և քվիրիտների ժողովրդի հպարտության առարկան՝ վաղնջագույն հնության սրբազան մնացորդները։ Սենատների կողմից դարեր շարունակ այդ ամենը խնամքով պահպանվում էր. ըստ ավանդության, Հռոմուլոսին և Հռեմոսին կերակրող էգ գայլի քարանձավը, աղբյուրն ու այն թզենին, որի մոտ նրանց հայտնաբերեցին դամբյուղի մեջ, նրանց դաստիարակ հովիվ Ֆաուստուլոսի քոլիկը, Հռոմուլոսի խրճիթը՝ բլրի հենց գագաթին, Պանի զոհասեղանը, «քառակուսի Հռոմի» զոհասեղանը, սալլի քրմերի կուրիան (նրանք էին պահպանում Հռոմուլոսի հավահմայող գավազանը և Մարսի՝ Հռոմուլոսի և Հռեմոսի «հոր», 12 վահանները), հսկա Կակուսի սանդուղքը (Հերկուլեսը դրանով էր քարշ տալիս պարտված սարսափելի ավազակին) և մեծ զոհասեղանը, որն այդ քաջագործության պատվին կառուցել էր իրեն Հերմեսի որդի կոչող, սրբազան էվանդրոս թագավորը։ Այդտեղ էին գտնվում նաև Վեստայի, Ֆորտունայի, Պրիվատեի (ընտանիքի հովանավորող), աստվածների Մոր տաճարները։ Վերջապես Յուպիտեր-Ստատորի (Պահապանի, Փրկիչի) հինավուրց տաճարը, որի կողքին ժամանակին ապրում էր էտրուրիացի Տարկվինիոս թագավորը։

III

Հռոմում շփոթություն էր տիրում։ Բերններբերան ասվածվում էին պատգամախոսների զանազան գուշակություններ, յուրաքանչյուր տուն ու տաճար լիքն էին նախանշանակներով ու հրաշք-

ներով, քաղաքում ամենուր ուխտ էին անում, զոհեր մատուցում, աստվածներին օգնության աղոթքներ էին հղվում։ Ամենատարբեր առաջարկություններ էին արվում. կրկին, ինչպես Կանի սարսափելի պարտությունից հետո, Դելֆիք պատգամավորության ուղարկել իմանալու, թե ինչ է խոստանում ապագան և ինչպես խուսափել նոր դժբախտություններից։ Վերստին դիմել Ճակատագրի Դրքի ցուցումներին, մոգությանը, էտրուսկների կանխագուշակումներին, արտակարգ զոհաբերություններին՝ Յուլի շուկայում, որտեղ Հաննիբալի պատերազմի ժամանակ մարդկային զոհեր էին մատուցվում աստվածներին, այնպես էլ այժմ անհրաժեշտ է երեք զույգ տղամարդ ու կին՝ թրակացիներից, գալլերից ու գերմաններից՝ ողջ-ողջ թաղել հողի մեջ...

Քաղաքացիների վախեցած բազմությունները անմիջապես վազեցին դեպի Կապիտոլիում, որի գագաթին էր գտնվում հռոմեական միջնաբերդը, ինչպես և ոսկեզօծ կտուրով շողշողացող Յուպիտերի տաճարը։ Այս տաճարի ճակատը զարդարում էին վեց սլացիկ սյուներ, որոնց արանքներում շղթաներով կախված էին երեք սկավառակներ, իսկ դռան վերևի եռանկյունաձև տարածության մեծ վահանների վրա նստած էր Հռոմուլոսը, դիմացը՝ էգ գայլը։ Շենքի տանիքի վրա սլանում էր Յուպիտերի քառաձի երկանիվ ռազմակառքը։ Յուպիտերի մի ձեռքում շանթ կար, մյուսում՝ գավազան։ Նրա երկու կողմերում տեղադրված էին Միներվայի և Հունոնայի արձանները։

Այդ հինավուրց և պատկառելի տաճարի ներսում գտնվում էին շքեղ հագուստներով կինաբարիսով ներկված Յուպիտերի կավե արձանը, ինչպես և Միներվայի ու Հունոնայի արձանները։ Յուպիտերի արձանը շատ հին էր համարվում, Հռոմին բաժին էր ընկել բարեհաջող նվաճումների ժամանակ. ոմանք ասում էին, որ Վեայից, մյուսները՝ Ֆրեգելլայից։

Յուպիտերի տաճարը միաժամանակ հանդիսանում էր պետական գանձարան. այստեղ պահվում էին Առաջին միհրդատյան հաջող պատերազմի ժամանակ Սուլլայի հափշտակած գանձերը։ Տաճարի նկուղներում էին գտնվում նաև հասարակական և մասնավոր նվիրատվություններից դուրս եկած գանձերը (ամաններ, ոսկե պսակներ, ոսկե և արծաթե զանազան առարկաներ, զինապարդեր, մարտական քաջագործություններ պատկերող վահաններ և այլն, որոնք պարբերաբար վերածում էին ոսկու ձուլածո կտորների)։

Ահ՛, հենց այսպես էին վազում գալիս Հռոմի քաղաքացիները, պատրաստվելով քավության զոհաբերության։ Մեծապույն հուպմունքի և վախի դղրդումով էին նրանք վազում-անցնում դեպի Յուպիտերի տաճարը տանող ճանապարհին շարված ատամոնների և նշանավոր մարդկանց արձանների կողքով, ոտքերը ու հմայախոսքեր շշնջալով։ Ոմանք բարեպաշտությունից դրդված ճանապարհին կանգ էին առնում Կապիտոլիումի բլրի մյուս տաճարներում՝ Հավատարմության, Պատվի և Արիության, Յուպիտերի, որտեղ բերվում էր ռազմատավարը (հռոմեական զորավարների տաճարը), Յուպիտեր-պահապանի, Վիներա-հուպիանակոչի, Կապիտոլիումի Վեներայի, Բարության, հունձի աստվածուհի Օպսի տաճարներում։

Ճանապարհին քաղաքացիները նորություններ էին փոխանակում։ Լուրերը տարբերվում էին։ Ասում էին, որ որոշ զինվորների նիզակների ծայրերը բռնկվել են բոցով, ոմանց վահանների վրա, Մարսի արձանի և Սալիական ճանապարհին գտնվող դայլերի արձանների վրա արյուն քրտինք է երևացել, երկնքից հրե քարեր են թափվել, գետերով արյուն է հոսել, հավը դարձել է աքլոր, անհայտ սեռի մի երեխա է ծնվել։ Տիբրի երկայնքով փռված այգիներում լսվել են փողերի ձայն ու զենքերի շառաչ...

Կանխատեսումներին խրատիչ մարդիկ վշտաբեկ ճոճում էին գլուխները և ասում. «Վատ նշաններ են... Հավերժական քաղաքի վերջին ժամանակներն են...»

Մյուսները նրանց տաք-տաք հակաճառում էին. «Գործերն այնքան էլ վատ չեն... Ինչպես հավատիորեն հայտնի է, Հռոմը կմնա այնքան ժամանակ, քանի դեռ քվիրիտների ձեռքում են յոթ սրբազան առարկաները՝ Պեսինունտոսից բերված Կիբելեի պատկերով քարը, Վեայից բերված Թրծակավից մարտակառքը, Օրեստեսի աճյունը, Պրիամոսի դայլիսոնը, Իլիոնից բերված ծածկոց-պալադիումը, երկնքից ընկած արձանը, Նումա արքայի ժամանակաշրջանի սալիական քրմերի սրբազան վահանները[1]։

---

[1] Դրանցից մեկն, ինչպես ասում էին, ընկել էր երկնքից։ Հավերժահարս Էգերիայի ասելով, դրա պահպանությունից էր կախված Հռոմի բախտը։ Նուման հրամայել էր ևս 12 այդպիսի վահաններ պատրաստել, որպեսզի ոչ ոք չկարողանար գուշակել, թե որն է դրանցից իսկականը և հափշտակել։ Վահանները սկզբից պահվում էին Վեստայի տաճարում, իսկ մ. թ. ա. 191 թ. հրդեհից հետո՝ Ֆորումի մոտ՝ վեստալուհիների տանը, Պալատինյան բլուրի ստորոտում, հատուկ գաղտնարանում։

Քաջարի քաղաքացիների աշխատությամբ և պետության զորությամբ պահպանվող այդ մասունքների երեսը Սպարտակը չի տեսնի։ Եվ աստվածները Հռոմի կողմն են, չնայած նրանք փորձության են ենթարկում քաղաքը բազմաթիվ մեղքերի համար։ Նշանակում է, հաղթանակը, միևնույնն է, մերը կլինի»։

IV

Ֆորումում և սենատում այդ ժամերին կրքերը եռում էին։ Սենատը հավաքվել էր Կապիտոլիումում՝ Դիոսկուրների տաճարում (պահի վտանգավորության ապացույց)։ Խռովարար ստրուկների բանակի հետ դատաստան տեսնել չկարողանալու համար կոնսուլները խիստ հարձակումների ենթարկվեցին։ Պոմպեոսականները պահանջում էին Պոմպեոսին անհապաղ Իտալիա կանչել և ամբողջ ռազմական գերագույն իշխանությունը հանձնել նրան՝ Սպարտակի դեմ պայքարելու համար։ Պոմպեոսի հակառակորդները կատաղի հակաճառում էին։ Նրանք գտնում էին, որ ռազմական գերագույն իշխանությունը ծայրահեղ դեպքում պետք է ստանա սենատի ներկա անդամներից որևէ մեկը, ինչպես և դեռևս ուժ ու զինվորական ոգի պահպանած բոլոր վետերաններին անհրաժեշտ է զորակոչել։

Ժողովրդական ժողովում նույնպես միաբանություն չկար։ Ազատագիրների և պլեբեյների մի մասը (ազատ մասնագիտությունների տեր մարդիկ), բոլոր պարտապանները, քրեական հետապնդության վախի տակ գտնվողները, մի խոսքով, նրանք, ովքեր կորցնելու ոչինչ չունեին, ովքեր ոչ մի հույս չունեին, հայհոյում էին պաշտոնյա անձանց, սենատին՝ որպես արյունախումների։ «Սպասե՞ք, ուր որ է գալի՞ս է Սպարտակը... Ձեզ ցո՞ւյց կտա»— այսպիսին էր նրանց ճառերի տրամադրությունը։ Ժողովրդի և ազատագիրների մյուս մասը, որոնք սենատորների և հեծյալների հետ կապալային կամ գործարար կապեր ունեին, որոշակի կայք և հառաջադիմության հավակնություններ ունեին, Հռոմի վրա Սպարտակի արշավանքի լուրը թշնամանքով ընդունեցին։ Նրանք հայտարարում էին, որ մտադիր են զենքը ձեռքներին դիմավորել «խելահեղ ստրուկների ներխուժումը»։

Ֆորումում այս երկու կուսակցությունների միջև թեժ կռիվներ էին գնում։ Որպես օրենք, դրանք ավարտվում էին ծեծ ու կռիվով, փայտերի և զենքի դիմելով։ Մի քանի օր շարունակ սե-

Սենատի հակառակորդները՝ աղքատների, ազատագիրների և ասորիների բազմությունները («կորած, աղքատ և լկտի մարդիկ», ինչպես նրանց մասին ասում էր Ցիցերոնը), իրենց առաջնորդներ Լենտիդիոսի, Պլագուլոսի ու Միմոս Սերգիոսի և ուրիշների ղեկավարությամբ փորձում էին ուժով գրավել Ֆորումը։ Ընդ որում պաշտոնյա անձանց քշում էին տաճարներից, ուրիշներին թույլ չէին տալիս Ֆորում մտնել։ Սենատի կողմնակից ժողովրդական արիբուններին գոռոցով ու հայհոյանքով իջեցնում էին ամբիոններից։ Ամեն ինչ լուծում էր ուժն ու ծեծը։ Հաճախակի Ֆորումից սպանվածներ էին դուրս բերում։ Բայց սենատը, քանի որ այդ տուրուդմփոցներն ավելի հաճախ իր օգտին էին ավարտվում, անկարգությունների համար արտակարգ դատավարություն[1] չէր նշանակում։

Ակտիոնի ծայրահեղ տապնապալի իրադրությունում Կվինկցիոսը, Մակրոսը, Հելիոս-կրասսը, Հիպսեոսը, Ֆիրմիդիոսը, Տիբիոսը («մարդկանցների ավազակախմբերի պարագլուխներն ու ղեկավարները»,— ինչպես անվանում էր վերջին երկուսին Ցիցերոնը) և ժողովրդական կուսակցության մյուս հռետորներն իրենց կգում էին, ինչպես ձուկը՝ ջրում։ Օրվա ընթացքում մի քանի անգամ, տարբեր ժողովրդական հավաքներում մինչև ձայնը խզելու աստիճան վիճաբանում էին իրենց հակառակորդների հետ։ Նրանք պնդում էին, որ տվյալ ճգնաժամային պահին պետք է մի կողմ դնել արիբունների իշխանությանը վերաբերող նախկին վեճերը և միահամուռ հակահարված տալ խռովարար ասորիներին՝ պաշտպանել հայրենիքն ու տնային աստվածներին։

Ժողովրդական կուսակցությունը տատանվում էր։ Բայց երբ ասպարեզ ելավ Կրասսոսը (իսկ նա բոլորից շատ էր տուժել

---

[1] Ցիցերոնը բացահայտ անկեղծությամբ խոստովանում է, որ Հռոմի և Իտալիայի պլեբեյական մասսաները, չխոսելով արդեն ասորիների և ազատագիրների մասին, բոլոր ժամանակներում խիստ դժգոհ են եղել սենատից։ «Պետությանը պաշարող զինված ուժերը և ջոկատները ավելի բազմաթիվ են, քան դրան պաշտպանողները, քանզի բավական է գլխով անել կորած ու հանդուգն մարդկանց, և նրանք կսկսեն շարժվել, նրանք իրենց ցանկությամբ էլ ապրստամբում են պետության դեմ, իսկ ազնիվ մարդիկ, չդիտես ինչու, դանդաղաշարժ են, բաց են թողնում իրադարձությունների սկիզբը և միայն անհրաժեշտությունից դրդված, երբ գործը գնում է դեպի վախճան, սկսում են գործել»։

ապստամբ ստրուկների կատարած ավերածություններից, այդ պատճառով էլ մտահոգվելու առավել հիմքեր ուներ), պլեբեյներին գրաված և հաց՝ բաժանեց (իսկ հաց շատ քիչ էր մթերվում, հիմնականում Սիցիլիայից վերեն էր ուղարկում, իսկ Աֆրիկայում և Սարդինիայում՝ «հռոմեական ժողովրդի մյուս շտեմարաններում» գործում էին պարտիզանները) և մոտ ապագայի վերաբերյալ ավելի դայթակղիչ խոստումներ տվեց, մասսաների բարեհաճությունը թեքվեց Սպարտակի հակառակորդների կողմը։ Կրասոսը բոլորին լավ հայտնի, հարուստ և ազդեցիկ մարդ էր, որը միշտ կատարում էր իր խոստումները և ժողովրդի միջից շատերին էր կարևոր ծառայություններ մատուցել։ Նրա խոստումներին չհավատալու ոչ մի հիմք չկար[2]։

Հենվելով ժողովրդական ժողովի, հասարակական լայն աջակցության վրա՝ Կրասոսը, որ մինչև այժմ գործում էր քողարկված՝ իրենից կախում ունեցող մարդկանց միջոցով, այժմ նպատակահարմար գտավ բացահայտ իր թեկնածությունն առաջարկել գլխավոր հրամանատարի պաշտոնի համար։ Նա գիտեր, որ պոմպեոսականները չեն ցանկանում իր ձեռքը դորք տալ, բայց հույս ուներ, որ ծայրահեղ անհրաժեշտությունը ուժեղ կդտնվի մյուս բոլոր նկատառումներից։ Նրա հաշվարկը ճիշտ դուրս եկավ, որպես նոր գլխավոր հրամանատարի ընտրեցին պրետորի թեկնածությունը պաշտպանվեց սենատի ճնշող մեծամասնության կողմից։

Կրասոսը շատ եռանդուն գործի անցավ։ Բուն Հռոմում

---

[1] Դա միանգամայն համապատասխանում էր հռոմեական ավանդույթներին։ Էգիլ եղած ժամանակ հռետոր Հորտենզիոսը (76 թ.) թանկության տարին ձրի հաց էր բաժանել (1,5 մոդի յուրաքանչյուրին)։ Ցիցերոնի ընկեր, հեծյալ Մ. Սեռոսը, 74 թվականի էդիլը, նույնպես հացի թանկության ժամանակ ժողովրդին հացահատիկ էր բաժանել շատ ցածր գնով (1 մոդին՝ 1 ասա)։

[2] Ցիցերոնը նշում է, որ Հռոմում «անտեղյակ ամբոխի ամենամեծ թերությունը, անկայունությունը, դյուրափոխությունը և եղանակի նման իր կարծիքը հաճախակի փոխելու հակվածությունն է», իսկ Սալյուստիոսը իր «Հարձակում Մ. Ցիցերոնի վրա» ճառում (54 թ.) ասում է, որ հռոմեական ժողովուրդն այնքան այլասերված է, որ պատրաստ է վաճառել իրեն և իր սեփականությունը»։

քառապ կարգով կազմվեցին վեց լեգեոններ[1] (30 հազար մարդ)։ Գլխավոր հրամանատարի պրետորական կոհորտայի մեջ մտավ հռոմեական արիստոկրատիայի ծաղիկը (շատերը գնում էին պատերազմի Կրասոսի ընկերը լինելու պատճառով, շատերը՝ անհրաժեշտությունից դրդված)։ Այդ բանը պարզ բացատրություն ուներ։ Կրասոսը ոչ միայն քաղաքական գործիչ էր և ռազմական, այլև՝ վաշխառու։ Նա իր երկաթյա ձեռքերի մեջ պահում էր շատերին (այդ թվում և՝ սենատորներին), առանձնապես արիստոկրատական երիտասարդության ընտրանուն։ Ուստի նրա հետ պատերազմ գնալուց հրաժարվել ոչ մեկը պարզապես չէր համարձակվում. դա կնշանակեր նրա աչքին դառնալ վախկոտ, զրկվել վարկից և սեփական պարտամուրհակները տեսնել պատական կատարածների մոտ։ Կրասոսը շատ խնամքով իր համար օգնականներ ընտրեց իր վաղեմի ընկերներից և աշխատակիցներից։ Ահա այդ անձանց ցուցակը.

1. Պուբլիոս Կոնսիդիոս Լոնգոս (ծնվ. մոտ. մ. թ. ա. 122—57 թթ.), կոնսուլ Հելիոսի ժամանակ, արդեն մարտերին մասնակցած մի մարդ, «որը համարվում էր ռազմական գործի գիտակ և ժամանակին ծառայել էր Սուլլայի բանակում» (Կեսար)։ Կրասոսը նրան էր հանձնել ռազմական խորհրդատուի դերը և նշանակել էր զորքերի աջ՝ պատվավոր, թևի հրամանատար։ Ե՛վ Պ. Կոնսիդիոսն ինքը, և՛ նրա Գայոս ու Լուցիոս եղբայրները հանդես էին գալիս որպես Կրասոսի կողմնակիցներ։ Գայոսը կապեր ուներ նաև Պոմպեոսի հետ, Լուցիոսը մինչև վերջերս հայտնի էր որպես Մ. Լեպիդոսի և Մ. Բրուտոսի կողմնակից։ Նրա՝ ագրարային դեմոկրատական օրենքի համաձայն Կապուայում (77 թ.) գաղութ հիմնադրողներից մեկի, գործունեության մասին Ցիցերոնը ծայրաստիճան անբարյացակամ է հիշատակում (նա միշտ թշնամական վերաբերմունք ուներ նման նախագծերի նկատմամբ)։

2. Մարկոս Մումիոս (մ. թ. ա. 110—? թթ.) — փորձառու

---

[1] Դա դրության ծայրահեղ վտանգավոր լինելու ապացույց էր։ Սովորաբար պատերազմ ուղարկվում էր հռոմեական 4 լեգեոն (մնացածը դաշնակիցներ էին)։ Միայն Կանի պարտությունից հետո պատերազմ ուղարկվեց 8 լեգեոն, «ինչն առաջ երբեք չէր պատահել հռոմեացոց մոտ» (Պոլիբիոս)։ Այսինքն՝ Կրասոսի նշանակման ժամանակ Սպարտակի դեմ գործում էին 10 հռոմեական լեգեոններ (6-ը՝ Կրասոսինը, 4-ը՝ կոնսուլներինը)։

մի սպա, պլեբեյական երևելի տոհմի[1] ժառանգ, որը 70 թվականին Կրասոսի օգնությամբ դարձավ պրետոր։ Նա նշանակված էր զորքի ձախ թևի հրամանատար։

3. Պուբլիոս Սուլլա (մ. թ. ա. 107—45 թթ.)։ Դիկտատորի եղբոր՝ Սերվիոս Սուլլայի որդին, հետագայում՝ Պոմպեոսի դեմ Կրասոսի դավադրության մասնակիցը և Կեսարի զինակիցը քաղաքացիական պատերազմի ժամանակ (49—46 թթ.), նրա զորքերի աջ թևի հրամանատարը Փարսալեսի վճռական ճակատամարտում։ Կրասոսը սրան ժամանակավորապես նշանակեց կենտրոնի զորքերի հրամանատարի պաշտոնակատար (ենթադրվում էր, որ կենտրոնի զորքերի հրամանատար կդառնա Կվ. Արիոսը՝ կոնսուլական բանակի ամենահաջողակ սպան)։

4. Լուցիոս Կատիլինա (մ. թ. ա. 108—62 թթ.)— ռազմական մեծ փորձ ունեցող մարտական սպա, սուլլայականների միջավայրում ազդեցիկ մեկը, Կվ. Կատուլոսի առաջին ամուսնությունից ունեցած դստեր ամուսինը, հետագայում նա կբարձրանա մինչև պրետորի աստիճանի (68 թ.), Կրասոսի և Կեսարի ընկերակցությամբ կփորձի իշխանությունը զավթել և Պիստորիայի մոտ կզոհվի կառավարական զորքերի դեմ ճակատամարտի ժամանակ։ Այդ խռովարարական նկրտումների պատճառով հետագայում կխուսափեն հիշել նրա նախկին ծառայությունները։

5. Պուբլիոս Ավտրոնիոս Պետոս (մ. թ. ա. 107—62 թթ.)— սենատական խավից էր, Ցիցերոնի դպրոցական ընկերը, նրա հետ 75 թվականին Սիցիլիայում քվեստորի պաշտոն էր կատարում։ 65 թվականին ընտրված լինելով կոնսուլ և ընտրողներին կաշառելու համար Պ. Սուլլայի հետ միասին հեռացվելով պաշտոնից, նա, ինչպես ասում էին, իր գործընկերոջ հետ դավադրություն էր ծրագրել, որի համար ենթարկվեց դատական հետապնդման, արդյունքն այն եղավ, որ արտաքսվեց։

6. Լուցիոս Վարգունտեոս (մ. թ. ա. 106—53 թթ.)— սուլլայական հրամանատար էր եղել, սենատոր։ 76 թվականին Ցիցերոնի հետ քվեստոր էր, 63-ին, ինչպես և Պ. Սուլլան, մասնակցեց սենատի դեմ դավադրությանը։ Հեծյալ Գ. Կոռնելիոսի

---

[1] Տոհմի ամենանշանավոր անդամներից էին՝ հարուստ Կորնելիոսի կործանող Լ. Սումիոսը և Տ. Գրակքոսի կողմնակից Կվ. Սումիոսը, որը 133 թվականին ժողովրդական արիբուն Մ. Օկտավիոսի պաշտոնազրկությունից հետո գրավեց նրա տեղը։ Նա զոհվեց Տ. Գրակքոսի հետ միասին, և նրա դին նետեցին Տիբր գետը։

Գետ մահափորձ կազմակերպեց Պոմպեոսի աջակից և նրա քաղաքական ներկայացուցիչ Ցիցերոնի դեմ, բայց վերջինիս զգուշության պատճառով խափանվեց։ Հետագայում մասնակցեց պարթևների դեմ Կրասոսի արշավանքին, որի ժամանակ էլ զոհվեց։

7. Գնեոս Տրեմելիոս Սկրոֆա (մ. թ. ա. 99—44 թթ.) — սերում էր Հռոմում հայտնի մի տոհմից, հպարտանում էր իր նշանավոր նախնիով՝ 142 թվականի քվեստոր Լ. Տրեմելիոս Սկրոֆայով, որը հաղթել էր Կեղծ Փիլիպոս Մակեդոնացուն։ 87-ամյա Գն. Սկրոֆային իր առավել փորձառու սպաներից նախապատվություն տալով՝ Մ. Կրասոսը նշանակել էր քվեստոր՝ հանուն նրա հոր հետ ունեցած իր վաղեմի բարեկամության։

Սկրոֆա-ավագը (մոտ մ. թ. ա. 129—68 թթ.) մինչև մարիոսականների դեմ մղված քաղաքացիական պատերազմը և առանձնապես դրանից հետո մեծ եռանդով զբաղվում էր գյուղատնտեսությամբ և ժամանակակիցների շրջանում համարվում էր «առաջինը գյուղատնտեսության բոլոր բնագավառներում» (Մ. Վարոն)։ Նրա գյուղատնտեսական գործունեության մասին Մ. Վարոնը, որն ինքն էլ նշանավոր գյուղատնտեսական գրող էր, արտահայտվում է հետևյալ կերպ. «Նրա կալվածքները մշակված են այնպես, որ շատերի համար ավելի հաճելի է պրանց նայել, քան որոշ արքայավայել զարդարված շենքերի։ Նրա ագարակը կալիս են, որպեսզի ոչ թե նկարների հավաքածուներ տեսնեն, ինչպես Լուկուլլոսի մոտ, այլ պտուղների պահեստներ։ Նրա այգիները, հավատացեք ինձ, պոկված են Սրբազան մայրուղու վերին մասից, որտեղ պտուղների համար ոսկով են վճարում»։

Բայց Սկրոֆա-հայրը ոչ միայն այգիներով էր զբաղվում։ Նա շատ խոշոր մասնագետ էր նաև անասնապահության բնագավառում։ Անասնապահությամբ զբաղվող իր բարեկամներին Սկրոֆան ասում էր. «Վաղ հասակից ես ջանասիրաբար զբաղվել եմ տնտեսությամբ, իսկ խոզերը և՛ ինձ, և՛ ձեզ համար, մեծ անասնապահներ, միանման կարևոր առարկա են։ Մեզնից ո՞ր մեկն է տնտեսությամբ զբաղվում, որ խոզեր չունենա, և ո՞վ չի լսել, թե մեր հայրերը ինչպես էին ծույլ ու վարանող կոչում նրան, ով իր մառանում ոչ թե սեփական կալվածքից, այլ մսավաճառից գնած խոզապուխտ էր պահում»։

Ի տարբերություն հոր, Սկրոֆա-կրտսերը կյանքը նվիրել էր

քաղաքականության և ֆորումում հանդես էր գալիս որպես Մ. Կրասոսի կողմնակից։ 70 թվականին Սկրոֆա-կրտսերը, լինելով «հին օրենքների տեր մի մարդ», «վերին աստիճանի պարտաճանաչ և իրաձամիտ անձնավորություն» (Ցիցերոն), հանդես է եկել Գ. Վերեսի դատավորների շարքում և ձայնը տվել նրան դատապարտելու օգտին։

8. Լուցիոս Կվինկցիոս (մ. թ. ա. 125—49 թթ.) — 74 թվականի ժողովրդական տրիբուն, քաղաքականության բնագավառում դեմոկրատական ուղղության կողմնակիցը, նշանավոր ընտանիքից սերված։ Նրա տոհմի ամենահայտնի անձնավորությունը, տոհմակիցների պարծանքի առարկան 198 թվականի կոնսուլ Տ. Կվինկցիոս Ֆլամինինոսն էր, Երկրորդ մակեդոնյան պատերազմի ժամանակ Մակեդոնիայի հաղթողը և «Հունաստանն ազատագրողը», հաջողակ դեսպանը Բիթանիայում (184 թ.), որը արքայի հետ ճարպիկ բանակցությունների միջոցով ոչընչացրեց մեծ Հաննիբալին։

Կրասոսի կողմից այրուձիի հրամանատար նշանակված Լ. Կվինկցիոսը, չնայած բուռն ապրած կյանքին և տարիքին, նա 53 տարեկան էր, պարմանալիորեն ամուր էր, քաջ, տաքարյուն և հմուտ էր բոլոր խորամանկությունների ու բանսարկությունների մեջ։ Փորձով լավ դիտեր հեծելազորային ծառայությունը. մասնակցել էր Միհրդատյան 1-ին պատերազմին՝ կռվելով մարիոսականների դեմ (նա Սուլլայի հեծելազորի հրամանատար Գ. Անտոնիոսի աջ բազուկն էր եղել)։

Այսպիսի օգնականներով, 30 հազար հետևակից և 2 հազար հեծյալներից բաղկացած բանակով, Մ. Կրասոսը շտապում էր միանալ կոնսուլների զորքերին։ Ենթադրվում էր, որ նա կարգի կբերի զորքերը, անհրաժեշտության դեպքում գյուղերից նոր կոհորտաներ կհավաքագրի և վերջապես դատաստան կտեսնի անիծյալ Սպարտակի հետ, որն այժմ բոլոր հարուստ հռոմեացիներին դաժան վախ և դառն զգացումներ էր ներշնչում (Ավգուստինիոս Երանելի)։

V

Երեք օրվա եռանդուն երթից հետո Կրասոսը միացավ երկու կոնսուլների բանակներին։

Կոնսուլներին ներկայացնելով Սպարտակի դեմ մղվող պատերազմում գլխավոր հրամանատարի պաշտոնը իրեն հանձ-

Նիկու մասին սրբությունը, Կրասոսը լսեց իր ավագ գործընկերների պնդումները։ Լուծը ուրախություն չէր պատճառում։ Ե՛վ զինվորները, և՛ սպաները անընդմեջ պարտությունների պատճառով վարակվել էին խուճապային տրամադրություններով։ Հակառակորդը հրաշալի իրազեկ էր հռոմեական ճամբարում տեղի ունեցող ամեն ինչին, հրամանատարության յուրաքանչյուր քայլին, նրա դիտավորություններին և ծրագրերին։ Սպարտակի պատանի գործակալները կարողացել էին ներթափանցել լեգեոնների մեջ և ագիտացիայի միջոցով քայքայիչ գործունեություն էին ծավալել։ Առաջն առնելու բոլոր փորձերն անհաջողություն էին կրել։

Կոնսուլներին հայտնելով անմիջապես Հռոմ վերադառնալու սենատի հրահանգը (որին տանջահար, իրենց նկատմամբ հավատը կորցրած և ամոթից ճնշված կոնսուլները ենթարկվեցին առանց դիմադրության), Կրասոսն սկսեց կարգ ու կանոն հաստատել կոնսուլական զորքերում։ Մարտիկներին ժողովի կանչելով, նա սկսեց զինվորներին խիստ հանդիմանել բազմաթիվ ժողովուրդների տիրակալ Հռոմին խայտառակող փոքրոգության և վախկոտության համար։ Խոսքն ավարտեց հետևյալ հայտարարությամբ.

— Ես որոշել եմ անընդմեջ պարտությունների համար, որը դուք թույլ եք տալիս կրել ձեր սեփական ստրուկներից, դիմել հնագույն պատժին՝ դեցիմացիային, յուրաքանչյուր տասներորդին մահապատժի ենթարկելուն։

Կրասոսի հայտարարությունը կոնսուլական բանակների սպաներին սարսափեցրեց։ Նման պատիժ արդեն շատ վաղուց չէր գործադրվում և համարվում էր բացարձակորեն ժամանակավրեպ գործողություն։ Նրանք իզուր էին խնդրում զորավարին հրաժարվել այդքան դաժան և անցանկալի պատժամիջոցից, որը ոչ թե քաջություն է սերմանում, այլ տանջություն իր դեմ, բայց Կրասոսն անհողդողդ մնաց։

Այդժամ կոնսուլական երկու լեգեոնների մարտիկները քառանկյուն դասավորված ամբողջ զորքի առաջ սկսեցին վիճակ գցել։ Հազարավոր հռոմեացիներ, որոնք արագավազ ոտքերի շնորհիվ բազմիցս փրկվել էին մարտի դաշտերում, այս անգամ, այնուամենայնիվ, չկարողացան խուսափել ճակատագրից։ Ամբողջ զորքի հեծնածանքների ուղեկցությամբ լիկտորների կողմից նրանք մտրակածեծի ենթարկվեցին, ապա գլխատվեցին։

Ամբողջ զորքին նման դաժան և ուսանելի դաս տալուց հետո, Կրասոսը մարտիկներին տեղաբաշխեց հանգստի։ Նա ինքը ոչ մի ցանկություն չուներ Սպարտակին ընդառաջ գնալու և նրա հետ մարտի բռնվելու, մինչև որ իր սպանների կողմից հավաքվող պահեստային կոհորտաները մոտենային։

VI

Իսկ ապստամբների պարագլուխը որոշ ժամանակ տատանվում էր. հարձակվե՞լ Կրասոսի վրա և փորձել ջախջախելու նրան, թե՞ Հռոմի արշավանքը համարել ձախողված և անմիջապես սկսել շարժումը դեպի հարավ։

Հանգամանորեն կշռադատելուց հետո, նա, այնուամենայնիվ, որոշեց փորձության ենթարկել Կրասոսի մտադրությունները և շարժվել նրան ընդառաջ։

Իմանալով թշնամու առաջխաղացման մասին, Կրասոսն առանձնացրեց երկու 10 հազարանոց բանակ, հանձնեց Կրիքսոսին հաղթող Կվ. Արիոսին և Մ. Մումիոսին։ Նրանց պատվիրեց շարժվել Սպարտակի զորքերի թևերով, մասնակի բախումներ ունենալ, բայց առանց հրամանի ճակատամարտ չտալ։

Ապստամբներից դաժան սպիներ հիշատակ ստացած Կվ. Արիոսը սկսեց գործել մեծ զգուշությամբ։ Նա ճշտորեն կատարեց իր հրամանատարի հրամանը։ Բայց Մ. Մումիոսը, դեռևս սեփական տխուր փորձ չունենալով, այրվում էր աչքի ընկնելու ցանկությամբ։ Հենց դա էլ նրան Սպարտակի ծուղակը գցեց։

Հակառակորդի ջոկատների կեղծ փախուստով հրապուրված՝ Մ. Մումիոսը ոգևորությամբ տոգորվեց ու ճակատամարտ տվեց։ Արդյունքը եղավ այն, որ նրա լեգեոնները գլխովին ջախջախվեցին և փախուստի դիմեցին։ Ապստամբ-ստրուկների ձեռքն ընկավ հռոմեական գումակը և մեծ քանակությամբ զենք։

Մ. Մումիոսը սրտի դողով վերադարձավ գլխավոր զորակայանը։ Նա ամենասարսափելի հետևանքների էր սպասում անձամբ իր համար, բայց ի զարմանս իրեն, միայն խիստ դիտողություն ստացավ։ Իսկ մարտիկներից զորավարը երաշխավորներ պահանջեց, որ նրանք հետայսու կպահպանեն այն զենքը, որ կրկին կբաժանվի իրենց։ Իրեն՝ զորավարին խաբած երաշխավորներին և նրանց, ովքեր երաշխավորներ չեն ներկայացնի

ու նոր փախստականներին Կրասոսն ապառնաց երկրորդ անգամ դեցիմացիայի ենթարկել։ Նրա սպառնալիքին և հավատում էին, և ոչ։

Մ. Մումիոսի զինվորները մեծ դժվարությամբ իրենց ընկերների մեջ մարդիկ գտան, որոնք երաշխավորություններ տվեցին զորավարին և դարձան պատանդ։ Իսկ 500 մարտիկներ երաշխավորողներ չկարողացան գտնել։ Այնժամ ամբողջ զորքի առջև Կրասոսը նրանց բաժանեց հիսուն հասնյակի և յուրաքանչյուր հասնյակից մեկական մարդու դարձյալ մահապատժի ենթարկեց։

Նոր դեցիմացիան, թվում էր, թե կոտրեց սպարտակյանների հանդեպ ունեցած վախը։ Բայց Կրասոսը լիովին չէր վստահում մարտիկների հրամադրությանը։ Նա վճռականություն և թշնամու վրա հարձակվելու ուժ կրկին ձեռք բերեց միայն այն ժամանակ, երբ ժամանեցին նոր զորակոչված կոհորտաները։

Իսկ Սպարտակը փախուստի մատնված սաբիններին, մարսերին, հիրպիններին հողերով գնում էր հարավ, Լուկանիայի կողմը։ Ճանապարհին նա կանդ էր առնում, հռոմեական առաջապահ զորքերի հետ բախումներ էր ունենում և փորձում էր Կրասոսի լեգատ Կվ. Արիոսին ճակատամարտի մեջ ներգրավել, բայց ապարդյուն։

Վերջ ի վերջո այդ մանր բախումների հաջողություններից և ապստամբների անընդհատ դեպի հարավ շարժվելուց (Կրասոսը դա «փախուստ» էր կոչում) հռոմեացիները սիրտ առան։ Մի անգամ հետախույզները Կրասոսին հայտնեցին, որ 10 հազար ստրուկներ, չգիտես ինչու, անջատվել են յուրայիններից և ինքնուրույն ճամբար են խփել։ Ուրախացած Կրասոսը շտապեց դեպի ոչ մեծ ճամբարը ապստամբների հետ ճակատամարտ տալու մտադրությամբ։

Վերջիններս առանց վարանելու ընդունեցին մարտը։ Կռիվը բորբոքվեց։ Ամենաթեժ պահին հայտնվեց Սպարտակը, հռոմեացիներին պարտության մատնեց և ստիպեց նահանջել դեպի իրենց ճամբարը։

Դրանից հետո ապստամբական բանակն առանց խոչընդոտների շարժվեց հարավ, դեպի ծովը։

Կրասոսը չնայած 10 հազար սպարտակյանների երկու երրորդին ոչնչացրեց և նույնիսկ 900 հոգու գերի վերցրեց (դրա

մառին անմիջապես Հռոմ հայտնեց), բայց սեփական կորուստներն էլ շատ զգալի էին։

Սակայն զորավարին բոլորից շատ զայրացնում էր իր լեգեոնականների վախկոտությունը, երբ լուր տարածվեց, որ Սպարտակը մարտի դաշտում է։ Մարտիկների այդպիսի անվայել վարքի դեմ Կրասոսը անհրաժեշտ էր համարում անողոք պայքար մղել։ Սակայն իտալիկական ժողովուրդներից կազմված իր դաշնակից զորքերին պատժելը, մանավանդ Սուլլայի տեսած հաշվեհարդարից հետո, համարում էր վտանգավոր։ Պատժամիջոցները կարող էին առիթ դառնալ Հռոմի դեմ նոր զայրույթի, ինչն առանց այն էլ բավականաչափ ուժեղ էր և արտահայտվում էր դասալքությամբ։ Ուստի այլ քաղաքների և գյուղերի մարտիկների հետ անհրաժեշտ էր վարվել դիվանագիտորեն։ Բայց իր համաքաղաքացի-հռոմեացիների փոքրոգությունը Կրասոսը համարում էր բացարձակորեն անհանդուրժելի։

Եվ այսպես, նա պրետորիայում կրկին հավաքեց ամբողջ բանակը։ Կենտրոնում, բոլորի աչքի առաջ կանգնեցրեց Հռոմում հավաքած 40 հազար զինվորներին (10 հազարը՝ կոնսուլների զորքից, 30 հազարը՝ իր հետ բերած զորքից)։ Իր ճառում Կրասոսը կրկին նրանց խայտառակությամբ նշավակեց վախկոտության համար։

— Ես չեմ հանդուրժի,— հայտարարեց Կրասոսը,— որ այն մարդիկ, որոնք ուրիշներին պարտավոր են քաջության օրինակ ցույց տալ, վախկոտության օրինակ դառնան։ Ես վճռել եմ, հռոմեացինե՛ր, ձեզ կրկին դեցիմացիայի ենթարկել և կենթարկեմ ամեն անգամ, քանի զորքը կհամարձակվի նահանջել թշնամու առաջ։

Այդպիսի սպառնալիքից բոլորի արյունը սառեց երակներում։ Կրասոսի օգնականները փորձեցին միջամտել։ Նա ստիպեց նրանց լռել։ Եվ հռոմեական 8 լեգեոններ ստիպված եղան դառը վիճակը գցելու։ Եվ ապա մոտ 4 հազար հռոմեացիներ ճիպոտահարվեցին ու գլխատվեցին։

Երրորդ դեցիմացիան վճռորոշ եղավ և խնայեց կոտրեց ամբողջ բանակի տրամադրությունը։ Այդ պահից, ինչպես նկատում է Պլուտարքոսը, Կրասոսն իր մարտիկների համար ավելի սարսափելի դարձավ, քան նրանց հաղթող թշնամիները։

Գլուխ քառասունկերորդ

ՍՊԱՐՏԱԿԸ, ԿՐԱՍՈՍԸ ԵՎ ՇՈՎԱՀԵՆՆԵՐԸ

I

Սեփական զինվորների հետ Կրասոսի տեսած հաշվեհարդարի լուրը Հռոմում և սենատում սարսափելի աղմուկ բարձրացրեց։ Պոմպեոսականները բացատրություն էին պահանջում։

Գործի էությունը քողարկելու մի քանի անհաջող փորձերից հետո Կրասոսը հերթական նամակում ստիպված էր մի շարք շատ տհաճ խոստովանություններ կատարել. գործերը ծայրաստիճան վատ են ընթանում, ապստամբ ստրուկների կողմից սպառնալիքն ավելացել է, քան երբևէ, Սպարտակը բացահայտորեն մտադրված է անցնել Սիցիլիա և այնտեղ ստրուկների նոր ապստամբություն բարձրացնել։ Իր նամակի վերջում զորավարը պահանջում էր ընդլայնել իր լիազորությունները և օգնության կանչել Մ. Լուկուլլոսին Թրակիայից և Գն. Պոմպեոսին՝ Իսպանիայից։

Կրասոսի առաջարկությունները, ինչպես և նրա խոստովանությունները, սենատում սուր պայքար առաջ բերեցին։ Պոմպեականները հարձակվում էին զորավարի վրա, մեղադրելով անտապանության, պատերազմ վարելու անկարողության համար, պահանջում էին նրան հանել և ամբողջ գործերը հանձնել իրենց լիդերին։

Երկարատև վիճաբանություններից և փոխադարձ վիրավորանքներից հետո Կրասոսի առաջարկությունները կոմպրոմիսային ձևով, այնուամենայնիվ, ընդունվեցին։ Կրասոսին պրոկոնսուլի աստիճան շնորհվեց (Եվտրոպիոս)։ Պոմպեոսին և Մ. Լուկուլլոսին սենատը կարգադրություններ ուղարկեց՝ շտապ վերադառնալ Իտալիա «անիծյալ» Սպարտակի դեմ պատերազմին մասնակցելու համար։

Սենատից չափազանց լայն լիազորություններ ստանալով, Կրասոսն սկսեց առավել վճռականությամբ գործել։ Նա շարժվում էր Սպարտակի հետևից և անընդհատ բախումներ պարտադրում նրան։

Իր հրամանատարների խորհրդում Կրասոսը անընդմեջ մի հարց էր քննարկում՝ ինչպե՞ս հասնել առավելության ահարկու թշնամու նկատմամբ, որն անպարտելի է բաց մարտում։ Հրա-

մանատարները ի պատասխան ծանր հոգոց էին հանում, ոչ մեկը, նույնիսկ հաջողակ Կվ. Ալիոսը, որևէ հարմար բան չէին կարողանում հուշել։ Ի վերջո բոլորը միացան Պ. Կոնսիդիոսի՝ նրանց մեջ ռազմական գործում բոլորից գիտակ զորապետի, կարծիքին. ծայրաստիճան զգուշություն պահպանել և ձգտել Սպարտակին հաղթել ոչ թե զենքով, այլ՝ քաղցով։ Եվ Կրասոսը, քանի որ ուրիշ ճար չուներ, ստիպված եղավ ընդունել այդ խորհուրդը։

II

72 թվականի օգոստոսի երկրորդ կեսին Սպարտակն իր զորքի հետ դուրս եկավ Լուկանիայի ծովեզրը։ Իր կողմից Մեսինյան նեղուց նախօրոք ուղարկված միջնորդները (նրանք նեղուցին հասել էին ձկնորսական նավակներով) հանդիպեցին ծովահենական ռազմանավերին և առաջնորդի անունից բանակցություններ սկսեցին նավախմբի պարագլուխ Հերակլեոնի հետ։ Ըստ նրանց, Սպարտակը ցանկանում էր ծովահենների նավերի օգնությամբ, պայմանագրով հաստատված որոշակի վճարով, մի քանի զինված ջոկատներ ուղարկել Սիցիլիա։

Հերակլեոնը չէր առարկում։ Համապատասխան վճարով, որի վերաբերյալ կողմերն անմիջապես պայմանավորվեցին, նա պարտավորվեց պայմանավորված ժամանակ նավեր հատկացնել և Սպարտակի ջոկատները հասցնել Սիցիլիայի հյուսիսային ափերը՝ Պանորմ, Ապոլոնիա, Մեսանա ծովեզրյա քաղաքները, հարավային ափերը՝ Լիլիբեումի Հերակլեա և Ագրիգենտե քաղաքները, արևելյան ափերը՝ Տավրոմենիոս և Սիրակուզա քաղաքները։ Սիրակուզայի՝ Սիցիլիայի ամենախոշոր և ազդեցիկ քաղաքի, նվաճելուն Սպարտակը մեծ կարևորություն էր տալիս։ Սիրակուզայում էր գտնվում համասիցիլիական բանտը՝ սիրակուզյան քարհանքերը, որտեղ տանջվում էին հռոմեական կարգերից դժգոհները և կուսակալի անձնական թշնամիները։

Սիցիլիայի ծովափում՝ ստրուկների առավել կուտակումներ ունեցող վայրերում, հենակետային տարածքներ նվաճելով, Սպարտակի դեսանտային բանակները պետք է շարժվեին դեպի երկրի խորքը, ջանալով ստրուկների համընդհանուր ապստամբություն առաջացնել։

Բայց Սպարտակի ծրագիրն անսպասելիորեն փուլ եկավ։ Հերակլեոնը, Սերտորիոսի սպանության լուրից և Միհրդատի (նա գտնվում էր Հայաստանում, իր փեսա Տիգրանի մոտ, որպես

պատվավոր գերի) անհաջող գործերից ընկճված, հանկարծակի փոխեց մտածելակերպը։ Նա Սպարտակի վարած պատերազմի վախճանը համարեց կանխորոշված։ Այդ պատճառով հարմար դատավ ստեղծված իրադրությունում մտածել ոչ թե պարտավորությունները կատարելու, այլ միայն մեկ բանի մասին՝ փողի, նոր ջահի։

Այդ նկատի ունենալով, ծովահենների «ադմիրալը» խախտեց պայմանավորվածությունը, իհարկե, չվերադարձնելով ստացած նվերները։ Միաժամանակ շփման մեջ մտավ Լուկանիա ժամանած Կրասոսի հետ և նրան հայտնեց ծովահենների նավերի միջոցով Սիցիլիա զինված ջոկատներ փոխադրելու Սպարտակի մտադրությունը։

Կրասոսին սարսափը պատեց։ Հերակլեոնը հռոմեական զորավարին խնդրեց չհուզվել։ Նա Կրասոսին առաջարկեց ավելի թանկ գումարով գնել Սպարտակի կողմից մտադրված գործողությունը։

Երկար սակարկելուց հետո կողմերը համաձայնության եկան։ Մի մեծ գումարի դիմաց Հերակլեոնը հանձն առավ Կրասոսի երկու լեգեոններ տեղափոխել Սիցիլիա։

Տագնապած սրտով Կրասոսը շոշափելի կանխավճար տվեց Հերակլեոնի պատգամավորներին։ Նա հրաշալի հասկանում էր, որ ծովահենների հետ կնքած համաձայնության «աղնիվ» կատարումը կախված է վաղօրոք չկանխատեսվող բազմաթիվ հանգամանքներից։

Բայց ստիպված էր ռիսկի դիմել։ Սիցիլիայում որպես լեգատներ Կրասոսն ընտրեց Լ. Կատիլինային և Պ. Ավտրոնիոսին՝ իրեն մոտիկ, հեղինակավոր, միմյանց հետ հաշտ, հուսալի զորապետներ։ Պ. Ավտրոնիոսը համակողմանիորեն ծանոթացել էր Սիցիլիայի հետ, երբ Սիրակուզայում քվեստոր էր (75 թ.)։ Երկու լեգատների բարեկամության աստիճանի մասին Ցիցերոնը, ի դեպ, հիշատակելով նաև նրանց երրորդ «եղբայրակցին», այսպես է արտահայտվել. «... կա՞ մեկը, որ ավելի կապված լիներ Կատիլինայի և Լենտուլոսի հետ, քան Ավտրոնիոսը։ Աղնվագույն գործերի առնչությամբ մարդկանց միջև ավելի սերտ դաշինք երբևէ եղե՞լ է, քան այն, որ կար Ավտրոնիոսի և նրանց միջև՝ ոճիրներ, կամայականություններ, անպատկառություններ գործելիս։ Իր մտադրած ո՞ր նողկալի գործը Լենտուլոսը չի կատարել Ավտրոնիոսի հետ միասին։ Ո՞ր չարագործու-

մանատարիներն ի պատասխան ծանր հոգոց էին հանում, ոչ մեկը, նույնիսկ հաջողակ Կվ. Ալիոսը, որևէ հարմար բան չէին կարողանում հուշել։ Ի վերջո բոլորը միացան Պ. Կոնսիդիոսի՝ նրանց մեջ ռազմական գործում բոլորից գիտակ զորապետի, կարծիքին. ծայրաստիճան զգուշություն պահպանել և ձգտել Սպարտակին հաղթել ոչ թե զենքով, այլ՝ քաղցով։ Եվ Կրասոսը, քանի որ ուրիշ ճար չուներ, ստիպված եղավ ընդունել այդ խորհուրդը։

II

72 թվականի օգոստոսի երկրորդ կեսին Սպարտակն իր զորքի հետ դուրս եկավ Լուկանիայի ծովեզրը։ Իր կողմից Մեսինյան նեղուց նախօրոք ուղարկված միջնորդները (նրանք նեղուցին հասել էին ձկնորսական նավակներով) հանդիպեցին ծովահենական ռազմանավերին և առաջնորդի անունից բանակցություններ սկսեցին նավախմբի պարագլուխ Հերակլեոնի հետ։ Ըստ նրանց, Սպարտակը ցանկանում էր ծովահենների նավերի օգնությամբ, պայմանագրով հաստատված որոշակի վճարով, մի քանի զինված ջոկատներ ուղարկել Սիցիլիա։

Հերակլեոնը չէր առարկում։ Համապատասխան վճարով, որի վերաբերյալ կողմերն անմիջապես պայմանավորվեցին, նա պարտավորվեց պայմանավորված ժամանակ նավեր հատկացնել և Սպարտակի ջոկատները հասցնել Սիցիլիայի հյուսիսային ափերը՝ Պանորմ, Ապոլոնիա, Մեսանա ծովեզրյա քաղաքները, հարավային ափերը՝ Լիլիբեումի Հերակլեա և Ագրիգենտե քաղաքները, արևելյան ափերը՝ Տավրոմենիոս և Սիրակուզա քաղաքները։ Սիրակուզայի՝ Սիցիլիայի ամենախոշոր և ազդեցիկ քաղաքի, նվաճելուն Սպարտակը մեծ կարևորություն էր տալիս։ Սիրակուզայում էր գտնվում համասիցիլիական բանտը՝ սիրակուզյան քարհանքերը, որտեղ տանջվում էին հռոմեական կարգերից դժգոհները և կուսակալի անձնական թշնամիները։

Սիցիլիայի ծովափում՝ ստրուկների առավել կուտակումներ ունեցող վայրերում, հենակետային տարածքներ նվաճելով, Սպարտակի դեսանտային բանակները պետք է շարժվեին դեպի երկրի խորքը, ջանալով ստրուկների համընդհանուր ապստամբություն առաջացնել։

Բայց Սպարտակի ծրագիրն անսպասելիորեն փուլ եկավ։ Հերակլեոնը, Սերտորիոսի սպանության լուրից և Միհրդատի (նա գտնվում էր Հայաստանում, իր փեսա Տիգրանի մոտ, որպես

պատվավոր գերի) անհաջող գործերից ընկճված, հանկարծակի փոխեց մտածելակերպը։ Նա Սպարտակի վարած պատերազմի վախճանը համարեց կանխորոշված։ Այդ պատճառով հարմար դատավ ստեղծված իրադրությունում մտածել ոչ թե պարտավորությունները կատարելու, այլ միայն մեկ բանի մասին՝ փողի, նոր ջահի։

Այդ նկատի ունենալով, ծովահենների «ադմիրալը» խախտեց պայմանավորվածությունը, իհարկե, չվերադարձնելով ստացած նվերները։ Միաժամանակ շփման մեջ մտավ Լուկանիա ժամանած Կրասոսի հետ և նրան հայտնեց ծովահենների նավերի միջոցով Սիցիլիա զինված ջոկատներ փոխադրելու Սպարտակի մտադրությունը։

Կրասոսին սարսափը պատեց։ Հերակլեոնը հռոմեական զորավարին խնդրեց չհուզվել։ Նա Կրասոսին առաջարկեց ավելի թանկ գումարով գնել Սպարտակի կողմից մտադրված գործողությունը։

Երկար սակարկելուց հետո կողմերը համաձայնության եկան։ Մի մեծ գումարի դիմաց Հերակլեոնը հանձն առավ Կրասոսի երկու լեգեոններ տեղափոխել Սիցիլիա։

Տագնապած սրտով Կրասոսը շոշափելի կանխավճար տվեց Հերակլեոնի պատգամավորներին։ Նա հրաշալի հասկանում էր, որ ծովահենների հետ կնքած համաձայնության «աղնիվ» կատարումը կախված է վաղօրոք չկանխատեսվող բազմաթիվ հանգամանքներից։

Բայց ստիպված էր ռիսկի դիմել։ Սիցիլիայում որպես լեգատներ Կրասոսն ընտրեց Լ. Կատիլինային և Պ. Ավտրոնիոսին՝ իրեն մոտիկ, հեղինակավոր, միմյանց հետ հաշտ, հուսալի զորապետների։ Պ. Ավտրոնիոսը համակողմանիորեն ծանոթացել էր Սիցիլիայի հետ, երբ Սիրակուզայում քվեստոր էր (75 թ.)։ Երկու լեգատների բարեկամության աստիճանի մասին Ցիցերոնը, ի դեպ, հիշատակելով նաև նրանց երրորդ «եղբայրակցին», այսպես է արտահայտվել. «... կա՞ մեկը, որ ավելի կապված լիներ Կատիլինայի և Լենտուլոսի հետ, քան Ավտրոնիոսը։ Աղնվագույն գործերի առնչությամբ մարդկանց միջև ավելի սերտ դաշինք երբևէ եղե՞լ է, քան այն, որ կար Ավտրոնիոսի և նրանց միջև՝ ոճիրներ, կամայականություններ, անպատկառություններ գործելիս։ Իր մտադրած ո՞ր նողկալի գործը Լենտուլոսը չի կատարել Ավտրոնիոսի հետ միասին։ Ո՞ր չարագործու-

թյան ժամանակ է Կատիլինան յուրա գնացել առանց հենց նույն Ավտրոնիոսի մասնակցության։ Ինքը՝ Ցիցերոնն, Ավտրոնիոսին լավ էր ճանաչում, մանուկ հասակում միասին էին սովորել, պատանի ժամանակ մտերիմներ էին եղել, քվեստորության ընթացքում՝ գործընկերներ (Ցիցերոնը քվեստոր էր Լիլիբեումում)։ Նա Ցիցերոնին ծառայություններ էր մատուցում, քանի որ պետության մեջ առաջնակարգ մարդկանց շրջանում բազմաթիվ բարեկամներ ուներ, ինքն էլ օգտվում էր նրա ծառայություններից։ Ավտրոնիոսը կրքոտ, անհողդողդ, բացառիկ փառատենչ մարդ էր՝ միշտ պատրաստ գործելու, ազդեցիկ սպա էր բանակում։ Ցիցերոնը Կատիլինայի գործով իր երդվյալ թշնամու մասին արտահայտվում էր այսպես. «Նա միշտ հանդուգն էր, լկտի և անառակ։ Մենք գիտենք, որ սանձարձակ վարքի համար մեղադրանքից պաշտպանվելով, նա սովոր էր ոչ միայն ամենաանպարկեշտ բառերն օգտագործել, այլև ազատություն տալ բռունցքներին ու ոտքերին, գիտենք նաև, որ մարդկանց քշում էր իրենց կալվածքներից, կոտորում էր հարևաններին, դաշնակիցների տաճարներն էր թալանում, զինված ուժով ցրում էր դատարանները, երջանիկ հանգամանքներում արհամարհում էր բոլորին, դժբախտ հանգամանքներում կռվում էր ազնիվ մարդկանց հետ, չէր ենթարկվում պետական իշխանությանը, չէր խոնարհվում նույնիսկ ճակատագրի անակնկալների առջև»։

Գլուխ քսաներկուերորդ

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ ԹՈՒՐԻՔՈՒՄ

Կրիքսոսի պարտությունից և Սպարտակի բանակի դեպի հյուսիս հեռանալուց հետո հարավում ապստամբների իշխանությունը նշանակալիորեն թուլացավ։ Հռոմեացիները կրկին հետ գրավեցին մի շարք քաղաքներ, այդ թվում և ծովափնյաները (Մետապոնտոսը, Կրոտոն, Թուրիքը և այլն) ու այնտեղ ուժեղ կայազորներ թողեցին։

Ծովահենների դավաճանությունը խափանեց Սպարտակի զորքերի մի մասը Սիցիլիա ուղարկելու ծրագիրը, բայց չստիպեց հրաժարվել այդ գաղափարից։ Նոր իրադրության մեջ նա որոշեց այլ կերպ իրականացնել այն. շարժվել դեպի ծով, գրավել ծովափնյա քաղաքներից մեկը, Տարենտական ծովախորշի

ափին նավեր կառուցել, դրանցով Սիցիլիա դեսանտ հանել։ Միաժամանակ ապստամբների գերագույն առաջնորդը պատրաստվում էր վերակառուցել անընդհատ համալրվող բանակը։

Զանազան տարբերակներ քննարկելուց հետո, Սպարտակն ընտրեց Թուրիք քաղաքը։ Ընտրությունը հետևյալ նկատառումներն ուներ. 1) Թուրիքը հարավային Իտալիայի աղդեցիկ քաղաքն էր, խառը բնակչություն ուներ, խոշոր նավահանգիստ, Հունաստանի և Իտալիայի միջև միջնորդական առևտրի կենտրոններից մեկն էր։ Կործանված Կրոտոնի և հին աթենական գաղութ նշանավոր Սիբարիսի՝ վիթխարի այդ քաղաքի կողքին առաջացած արիստոկրատական այդ հանրապետությունը խոշոր մշակութային կենտրոն էր[1]։ Անցյալում Թուրիքի բնակիչները բազմիցս կռվել էին աթենացիների կողմում, մարտնչել էին բրուտիացիների, Սպարտայի, Հռոմի դեմ, եղել էին Հաննիբալի կողմնակիցը, իրենց նավերով ծառայել էին Սպարտային որպես նրա ռազմական նավատորմը։ Հետո քաղաքը դարձել էր Կատրում Ֆնրենտինում հռոմեական գաղութը, իսկ Դաշնակցային պատերազմից հետո՝ հռոմեական մունիցիպիում, այսինքն՝ ներքին ինքնավարությամբ քաղաք։ Թուրիքի բնակիչները ազգակցական կապեր ունեին Տարենտոսի և Մետապոնտոսի քաղաքացիների հետ։

Իտալիայի հարավում Տարենտոսը և Թուրիքն ամենանշանավոր հունական քաղաքներն էին։ 2) Անհրաժեշտ էր գրավել հարևան արծաթահանքերը և հսկողություն սահմանել Թուրիքի և Հունաստանի ու Փոքր Ասիայի միջև առևտրական կապերի վրա։ 3) Սիլայի լեռներում գտնվող անտառից մեծ նավատորմիզ կառուցել։ 4) Ջենքի ու պարենի հզոր բազա ստեղծել, քանի որ Թուրիքի մարդն աչքի էր ընկնում բացառիկ բերքառատ հողերով, հիանալի զարգացած գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ։

Այսպիսով, Թուրիքի վերաբերյալ կարևոր վճիռ կայացնելով, Սպարտակն իր զորքով շորս օր հետո հասավ (ապստամբների բանակը շարժվում էր Պեստոսից, Լուկանիական ծովափից, որտեղ նախատեսված էր հանդիպել ծովահեններին) Թուրիքի

---

[1] Թուրիքի հիմնադրմանը (մ. թ. ա. 443 թ.) մասնակցել էր «պատմահայր» Հերոդոտոսը, այստեղ ապաստան էր գտել թշնամիներից փախած Ալկվիադեսը։

շրջակայքը և անսպասելի հարվածով գրավեց քաղաքը։ Մեկ լեգեոն մնաց պարիսպներից ներս որպես կայազոր, իսկ մնացածները ճամբարներ խփեցին շրջակա լեռներում։

Համաձայն Սպարտակի ցուցումների, ապստամբներն իրենց հրամանատարների գլխավորությամբ, հսկայական եռանդով գործի կպան։ Նրանք լեռնալանջերին անտառը սղոցում ու տապալում էին, գերանները տեղափոխում ծովափ և չորանալու համար շար-շար դարսում։ Սպարտակի զորքում եղած նավաշինարար վարպետները քաղաքի նավաշինարանում իրենց ենթակա մարդկանցով հաշված օրերի ընթացքում փորձնական նմուշներ կառուցեցին։ Նավերի փորձարկումը լիովին բավարարեց ապստամբներին։ Մնում էր միառժամանակ սպասել մինչև գերանները չորանային և ավելի հարմար դառնային սղոցման համար։

Քանի դեռ նավատորմ կառուցելու նախապատրաստական աշխատանքներ էին գնում, Սպարտակը մեծ եռանդով զբաղված էր զորքի վերակառուցմամբ, այն վարժեցնելով ու զինելով։ Մեծ ուշադրություն էր դարձնում նաև ճամբարային կյանքի ճիշտ կազմակերպմանը։ Նրան անհանգստացնում էին տհաճ ու վտանգավոր անկարգությունները, որոնք ժամանակ առ ժամանակ երևան էին գալիս լեգեոններում. գեղ գործերում ցեղական նեղ խմբակային միավորումների գոյացումը, հռոմեացիներից ամեն գնով վրեժ լուծելու ցանկությունը, թալանի, ցոփության և անձնական հարստացման նկատմամբ զուտ հռոմեական կրքերի դրսևորումը։ Կողոպուտները խիստ չարացնում էին իտալիկական բնակչությանը և մեծ վնաս էին հասցնում Սպարտակի քաղաքականությանը։ Հարստանալու և ցոփ կյանք վարելու անհաղորդ ձգտումը, նրա կարծիքով, ծնում էին հակասություններ, քայքայում զորքի ուժն ու միասնությունը։

Քաղաքական բնույթի բարդ ու դժվարին խնդիրների լուծման անհրաժեշտությունը Սպարտակին ստիպում էր շատ ժամանակ հատկացնել փիլիսոփայական զանազան ուսմունքների ու դպրոցների ուսումնասիրությանը։ Նրա կողմից մեծ ուշադրության էին արժանանում հարավիտալիկական փիլիսոփաները՝ էլեականները (Քսենոփանես-Պարմենիդես-Զենոնի դպրոցը) և հույն հայտնի փիլիսոփաները՝ կրտսեր սոփեստները (Անտիսթենես, Ալկիդամես, Կրիտիոս և ուրիշն.), որոնք շատ էին զբաղվել էթիկայի և բարոյականության, «բնական իրա-

վունքիս հիմնավորման, բոլոր մարդկանց հավասարության և սարկության վերացման հարցերով։ Քանզի դեռևս հին ժամանակաշրջանում մարդիկ կային, որոնք մտածում և գրում էին, ինչպես փիլիսոփա Անտիֆոնտեսը. «Մենք մարդկանց բաժանում ենք բարբարոսների և հույների, ազնվատոհմիկների և հասարակների։ Ազնվատոհմիկներին մենք հարգում ենք, հասարակ ժողովրդին՝ արհամարհում։ Ընդ որում ինքներս վարվում ենք որպես բարբարոսներ, քանի որ ոչ մի տեղ այդպես չեն արհամարհում հասարակ ժողովրդին, ինչպես բարբարոսների մոտ. օրինակ, եգիպտացիները միայն եգիպտացիներին են մարդ համարում, իսկ մնացած մարդկանց՝ բարբարոսներ, այդ թվում և՝ հույներին։ Իսկ իրականում մարդկանց մեջ ոչ մի տարբերություն գոյություն չունի. բոլորը ծնվում են մերկ, բոլորը օդ են շնչում, ձեռքերով ուտում»։

Ստրկական երևույթների դեմ Սպարտակը պայքարում էր գոնեպան միջոցներով։ Նախ՝ ամեն կերպ ամրապնդում էր դերապետն առաջնորդի և մյուս հրամանատարների (կորպուսների և լեգեոնների) հեղինակությունը։ Դրան շատ էին նպաստում մի չարք հանգամանքներ. բանակում գրեթե բոլոր դլխավոր պաշտոնները գրաղեցնում էին Սպարտակի զինակիցները՝ նախկին գլադիատորներ, դավադրության մասնակիցներ, որոնք սերտորեն կապված էին միմյանց հետ ընդհանուր վտանգի գգացողությամբ և անձնական մտերիմ հարաբերություններով, այդ պատճառով էլ ամբողջ պատերազմը ստացավ «գլադիատորական պատերազմ» անվանումը։ Հաճախակի հաղթանակները խիստ բարձրացրել էին հրամանատարների ազդեցությունը, առանձնապես Սպարտակինը, քանզի, ինչպես հնում ասում էին, «հաղթանակները զորավարի նկատմամբ համակրանք, իսկ անհաջողություններն՝ ատելություն են առաջացնում»։ Երկրորդ՝ զորքի մեջ կանոնավոր և համառորեն ներմուծվում էր հերոսության և ինքնազոհողության պաշտամունքը, ընդ որում խնամքով քաջալերվում էր ցեղային սովորույթներից արժեքավոր այն ամենը, ինչը նպաստում էր այդպիսի քաղաքականությանը։ Գերագույն առաջնորդի շուրջը համախմբված երգիչների և ասացողների առանձին խմբեր գովերգում էին մարտիկների ու հրամանատարների քաջագործությունները, ամենաթունավոր խոսքերով խարազանում էին փոքրոգության, անվճռականության, անձեռներեցության նվազագույն արտահայտությունները։ Այդ երգա-

սացությունները, ինչպես նաև օրվա հրատապ խնդիրների մասին սեփական դերասանական ուժերով տրվող թատերական ներկայացումները (դրանք Թուրքում ներկայացվում էին զուտ ապստամբների համար, առանց կողմնակի մարդկանց) մեծ ուժ դարձան։ Ընդհանուրի ծաղրի առարկա դառնալ ոչ մեկը չէր ուզում։ Եվ, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, ապըստամբները պատրաստ էին կռվել մինչև արյան վերջին կաթիլը, միայն թե ընկերների մոտ ամոթ ու խայտառակություն չվաստակեին։ Երրորդ՝ ապստամբության պարագլուխը ձգտում էր իր գործին ի սպաս դնել իտալիկական և հունական այն փիլիսոփաներին, որոնք դալիս էին նրա մոտ։ Այս բանում նա օրինակ էր վերցնում Ալեքսանդր Մեծից։ Չէ՞ որ Մակեդոնացին պարսկական արշավանքի ժամանակ իր մոտ շատ փիլիսոփաներ ուներ՝ Օնոսիկրատեսը և ուրիշներ։ Օնոսիկրատեսը Դիոգենեսի կինիկների դպրոցի փիլիսոփա էր։ Իսկ Ալեքսանդրը Դիոգենեսին անձամբ ճանաչում էր և շատ էր հարգում նրան հոգու անկեղծ մաքրության համար։

Զորքի՝ աստվածներին հավատացող մասի հոգեկան պահանջմունքները պետք է բավարարեին Արևի աստծո քրմուհիները (գալլերի մոտ՝ Բելենոսի, գերմանների մոտ՝ Տուիստոնի (Սոլ), իտալիկների մոտ՝ Սոլի, թրակացիների մոտ՝ Դիոնիսիոսի՝ Կանդաոնոսի, Զիբելսուրդոսի, Փոքր Ասիայի բնակիչների մոտ՝ Միհրի և այլն)։ Արևի աստվածը, որպես ճշմարտության, արդարության մարմնացում, Սիցիլիայի ապստամբ ստրուկների օրինակով, հայտարարվել էր ապստամբների գերագույն աստված։ Իսկ Սպարտակը, թեև ինքը չէր հավատում աստվածներին, փաստորեն քրմական կոլեգիայի գլխավորի դերն էր ստանձնել, որի շնորհիվ քրմուհիները կատարում էին նրա կամքը։

Ամենադժվար լուծելի հարցը ավարի և կանանց հարցն էր։ Սկզբնական շրջանում ապստամբները դժվարությամբ էին հանձնում գավթած ավարը՝ հետագայում հավասարաչափ բաշխելու համար (յուրաքանչյուրը ցանկանում էր սեփականել այն, ինչը գավթել էր, և այդ ցանկությունը թալանի ու անզուսպ հարստանալու կիրք էր բորբոքում)։ Դրա դեմ համառորեն պայքար էր մղվում։ Սակայն նոր մարդկանց չընդհատվող հոսքի պատճառով ոչ մի կերպ չէր հաջողվում կայունացնել դրությունը։ Շատ ապստամբներ անմիջական շփման մեջ էին մտնում ապըստամբների ճամբարը եկած առևտրականների հետ՝ նրանց վա-

Ճանկով թշնամիներից խլած ավարը։ Սպարտակը նման շփումներն անցանկալի էր համարում, վախենալով լրտեսությունից, ռազմական գաղտնիքների արտահոսքից։ Նա հակված էր ավարի կենտրոնացված վաճառքի կողմը, ստացված դրամը զորքին որպես ռոճիկ բաժանելու պայմանով, ինչը և վերջ ի վերջո իրագործվեց։ Ընդ որում դրամի մի մասը մտնում էր բանակային գանձարան և օգտագործվում բանակի ընդհանուր կարիքների համար։

Երկրորդ դժվարին հարցը կանանց էր վերաբերում։ Ապըստամբների բանակը, հասկանալի է, կազմված չէր ճգնավորներից։ Այնտեղ հավաքվել էին ջահել, ծաղկուն մարդիկ։ Թոթափելով ստրկության ատելի լուծը, նախկին ստրուկները բոլոր միջոցներով ցանկանում էին վրեժխնդիր լինել նախկին տերերից։ Ով հարավում իրենց տիրապետության ընթացքում, երբ ապստամբները գրոհով քաղաքներ էին գրավում, նրանցից շատերը բռնում ու պատվազուրկ էին անում թշնամիների՝ իտալիկական և հռոմեական գոռոզ արիստոկրատների կանանց ու դուստրերին։ Դա նույնպես քաղցր վրիժառության մի ձև էր. իրենց տանջանքների և ստորացումների, քարուքանդ տրված տների, դավթած երկրներում հռոմեացիների նույնպիսի բռնությունների դիմաց, որպես վրեժ, այժմ նրանք պատվազրկում էին նրանց կանանց ու դուստրերին, անհայտ ստրուկ հայրերով ապստրինի երեխաների տեր դարձնում, մի բան, որն, ըստ հռոմեական պատկերացումների, խայտառակություն էր յուրաքանչյուր հայտնի ընտանիքի անվան համար։

Բանը դրանով, սակայն, չէր սահմանափակվում։ Պատերազմի առաջին երկու տարիների ընթացքում ապստամբների բոլոր կարգի հրամանատարները ձգտում էին ճակատամարտերի միջոցով, ծովահենների կամ ավազակախմբերի միջնորդությամբ ձեռք բերել հռոմեական և իտալիկական արիստոկրատիայի դուստրերին։ Սրանց, մեկական կամ նույնիսկ մի քանիսին միաժամանակ, պահում էին որպես հարճեր։ Սպարտակը դրան վերաբերվում էր բացասականորեն։ Նրա կարծիքով, այդպիսի արարքները վատ օրինակ էին ծառայում զինվորների համար, յուրաքանչյուր հրամանատարի շուրջը լրտեսության հոգ էին ստեղծում, վերջապես, որերիմ թշնամություն էին ծնում և գանազան բանսարկությունների աղբյուր դառնում հրամանատարների նախկին կողակիցների մեջ, որոնք նախկինում կիսել

էին ստրկության դառը լուծը, իսկ այժմ ազատություն էին ստացել։ Ուստի, որքան էլ տհաճ լիներ բոլոր աստիճանների հրամանատարների համար, նրանք ստիպված էին հրաժարվել իրենց հարճերից և վերականգնել նախկին կողակիցների իրավունքները։

Շարքային ռազմիկների գործն ավելի դժվար էր. նրանց կողակիցները չէին կարողանում իրենց տղամարդկանց հետևից հասնել. չէ՞ որ նրանց մի մասը գնում էր գումակի հետ, մի մասն էլ զինվորները ճաքում էին տարբեր հանգամանքների բերումով ապստամբների մշտական ճամբարների շրջակայքում հայտնված կանանց միջավայրից ձմեռային դադարների ժամանակ, երբ համեմատական դադար էր տրվում և արշավանքներ չկային։ Հետևաբար, նման կապերն արդեն կանխահայտորեն ժամանակավոր էին և մեծ ընդմիջումներով էին լինում։

Զմռանը կարգապահությունը անխուսափելիորեն ընկնում էր (Սպարտակը դա բնական էր համարում)։ Ռազմիկները և հրամանատարները դեմ չէին՝ քեֆեր անելու, քանզի ոչ մեկը չգիտեր վաղը ողջ մնալո՞ւ է, թե՞ ոչ, նրանք շռայլորեն ծախսում էին վաճառված ավարի գրամը, գնում էին զանազան զարդեր ու գինի, որը խմում էին ոսկյա ու արծաթյա գավաթներով։

Ազատագրումից հետո սկզբնական շրջանում ապստամբների հրամանատարները չափազանց հրապուրված էին իրենց ճակատագրի մեջ տեղի ունեցած երջանիկ փոփոխությամբ։ Նրանք ցանկանում էին հնարավորին չափ շուտ իրենց համար ստեղծել այն ճոխ կյանքի նմանությունը, որ տեսել էին ազնվազարմ հռոմեացիների մոտ։ Ցանկացած պատեհ առիթով նրանք միմյանց պատվին շքեղ խնջույքներ էին կազմակերպում, հագնում էին գույնզգույն հունական և բարբարոսական զգեստներ, ձեռք էին բերում (մարտի ժամանակ խլում էին թշնամուց) որսորդական ցանցեր, ցեղական շներ, բազմաթիվ նժույգներ (հռոմեացիների երամակներից ընտրված), թանկարժեք զենք, կենցաղի թանկարժեք առարկաներ և այլն։ Նրանք ուրախ կլինեին նաև ձեռք բերել բաղնիսպաններ ու ննջարանապետներ, եթե առաջնորդը նրանց թույլ տար։ Ընդ որում նա մեղմորեն և ընկերավարի հանդիմանում էր նրանց, հիշեցնում, թե ինչով վերջացավ շռայլությունը սուլորած Հաննիբալի գործը Կապուայում՝ լիակատար պարտությամբ։

Առաջնորդի հանդիմանանքներից պաշտպանվելով, հրամա-

Նատարները իրենց հերթին դիմում էին փիլիսոփաների փաստարկներին և պատասխանում էին այնպես, ինչպես հետագայում ասում էր ստոիկ Էպիկտետոսը (մ. թ. ա. մոտ 50-մոտ 138 թթ.). «Ազատ նա է, ով ապրում է այնպես, ինչպես ցանկանում է, ով հնթակա չէ ո՛չ հարկադրանքի, ո՛չ բռնության, ո՛չ արգելքների, ում ձգտումները խոչընդոտներ չեն ունենում. ցանկություններ հաջողության են հասնում, խուսափումները անհաջողություն չեն կրում»։ Առաջնորդն ի պատասխան առարկում էր. «Ազատություն՝ դա մարմնամարզական վարժություններն է, որոր, վագքի մրցությունը, պայքարը բռնացողների դեմ, գողերի վնասազերծումը, վիրավորվածների պաշտպանությունը։ Միայն նա, ով գնում է այդ ճանապարհով, կարժանանա ժողովրդից վաստակած փառք ու պատվին»։ Ազատության սահմանների մասին վեճերը վերջ չէին ունենում։

Վերջ ի վերջո, պատերազմի երկրորդ տարվա ավարտին, հենվելով ձեռք բերված մեծ փորձի վրա՝ (իսկ ապստամբության պարտությունը հակամետ էր դատիարակության զինվորական համակարգին և զորապետներին ընտելացնում էր պարզ ու զուսպ կյանքի) Սպարտակը մարդկային առահությունը և շվայտությունը սանձելու համար որոշեց դիմել ծայրահեղ մեջքի՝ ճամբարում ընդհանրապես արգելեց օգտվել ոսկյա և արծաթյա գավաթներից ու սպասքից, իսկ այնուհետև՝ ոսկուց և արծաթից ընդհանրապես, մինչև իր հատուկ կարգադրությունը։ Այսուհետև ոսկին ու արծաթը կարելի էր շրջանառության մեջ օգտագործել միայն ճամբարից դուրս՝ իտալիկական վաճառականներից զենք պատրաստելու համար պղինձ ու երկաթ գնելիս։

Սպարտակի այս կարգադրությունն անմիջապես հայտնի դարձավ ամենուրեք և խիստ զարմացրեց հռոմեացիներին։ Պլինիոս Ավագը, հիշելով այդ մասին, հետագայում գրել է. «Ամոթ է, նայել մեր ժամանակին, երբ ոսկով զարդարված կամ ոսկեզօծ արծաթյա առարկաներին հունարենից վերցված նոր անուններ են տալիս։ Հապա մի մտածեք, թե ինչպիսի քնքուշ բաների համար են վաճառում ոսկեզօծ և նույնիսկ ոսկյա անոթները։ Իսկ միաժամանակ, մենք լավ գիտենք, որ Սպարտակն իր ճամբարում արգելել էր որևէ մեկին արծաթ կամ ոսկի ունենալ։ Այս ինչպիսի բարձր ազնվություն ունեն մեր փախստական տարուները»։

Սպարտակի ներդրած արգելքները հետևանք չունեցան նրա և իտալիկական վաճառականների հարաբերությունների վրա։ Վերջիններիս հետ նա ամեն կերպ լավ հարաբերություններ էր հաստատում, ձգտում էր նրանց ներգրավել օգտավետ գործարքների մեջ։ Նրա ջանքերը դրական արդյունք ունեցան։ Իտալիկական վաճառականները հաճույքով գնում էին ապստամբների զորքի ռազմաավարը, մեծ քանակությամբ պղինձ և երկաթ էին մատակարարում և արժեքավոր տեղեկություններ էին հաղորդում Հռոմում ու պրովինցիաներում կատարվող գործերի մասին։

Գլուխ քսաներեքերորդ

ՍՊԱՐՏԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարց. Ձեր սիրած հերոսը։
Պատասխան. Սպարտակը, Կեպլերը։
(Ռ. Մարքս, խոստովանություն, 1865 թ.)

Պատերազմի հենց սկզբից Սպարտակը հանգիստ չուներ ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը. ռազմական հոգսեր, միջազգային հարաբերություններ, որոնց բարդությունները նա շատ լավ էր հասկանում, կրոնական խնդիրներ, զինվորական գրագրություն, Հռոմի ներքաղաքական իրադրության ուսումնասիրություն, իտալիկական տարբեր ցեղախմբերի հետ հարաբերություններ...

Պրովինցիաներում, Հռոմում և Իտալիայի մյուս քաղաքներում տիրող իրադրությանը նրա քաջատեղյակությունը շատ զգալի էր։ Լինելով փառաբանված գլադիատոր, Սպարտակը ծանոթ էր բազմաթիվ մարդկանց, ներառյալ և սենատորների (հնարավոր է, որ նրանցից մի քանիսի հետ նա անձնական հարաբերություն ուներ, որը, բնականաբար, չէր ցուցադրում)։ Հավանորեն, առանձնահատուկ ուշադրությամբ էր հետևել հռոմեական զորապետներին, հանդամանորեն ուսումնասիրելով նրանց որպես ապագա թշնամիների։

Նրա առաջին հոգսը բանակն էր, որովհետև բանակն էր որոշում ամեն ինչ։ Նա շատ ժամանակ էր անցկացնում զինվորների, ինչպես քնքշությամբ կոչում էր, իր «զինակիցների» շրջապատում, մերթ սովորեցնում էր նրանց, մերթ պրուցում նրանց

Զեռ կենցաղային ու զինվորական գործերի մասին, ջանալով ամրապնդել նրանց ոգին, ուժն ու արիությունը։ Անցած արշավանքների ժամանակ ձեռք բերած բազմաթիվ լեզուների ու սովորույթների իմացությունը նրան դարձնում էր յուրային ցանկացած միջավայրում։

Մասսաների վրա նրա անընդհատ աճող նշանակալի ազդեցության աղբյուրներից մեկը համոզելու հիանալի ունակությունն էր։ Նրա պերճախոսությունը, իհարկե, նման չէր հռետորական պաճուճանքներով զարդարված սոփեստների կամ հռոմեական ֆորումի շատախոս հռետորների ճառերին. այն, թերևս, կոպտավուն էր, ինչպես միջավայրը, որտեղ մշտապես լինում էր նա։ Բայց այդ պերճախոսությունը դիպուկ էր ու վառ, կարողանում էր դիպչել մարդկային հոգու ամենազգայուն լարերին, բորբոքել հաղթանակի ու պայքարի ծարավը, խանդավառել։

Նա խորաթափանց էր և ճշգրիտ գնահատական էր տալիս մարդկանց, նույնիսկ մի քանի բառ լսելուց հետո։ Նաև զգույշ էր իր գնահատականներում, իրեն հետաքրքրող մարդկանց մասին շատերին էր հարցուփորձ անում. ինչպիսի՞ հոչակ են ունեցել նրա ծնողներն ու ազգականները, հռոմեական սենատի և ազնվատոհմիկների հետ որևէ անձնական հարաբերություններ ունեցե՞լ են, որտե՞ղ և ումի՞ց են դաստիարակվել, ո՞ր պատերազմներին են մասնակցել, զինվորական գործը գիտեն անձնական փորձով, թե՞ ուրիշներից են լսել, ինչպիսի՞ն են նրանց անձնական հատկությունները. խելո՞ք են, թե՞ հիմար, ժուժկա՞լ են, թե՞ հեշտասեր, ազնի՞վ են, թե՞ ձեռնաքաշ, ուղղամի՞տ են, թե՞ խորամանկ և այլն։

Սպարտակը բանակում մեծ հեղինակություն ձեռք բերեց։ Այդուհանդերձ, բարձրագույն հրամանատարները՝ նրա գլադիատոր-զինակիցները, զինվորական խորհուրդների ժամանակ ոչ միշտ էին համաձայնում նրա հետ, քանի որ և՛ ռազմական, և՛ քաղաքական իրադրությունը միշտ խճճված էր լինում և միանշանակ գնահատության ենթակա չէր։ Բացի այդ, նրանք բոլորն էլ ինքնուրույն կարծիք ունեցող համարձակ մարդիկ էին, շատերին դեռևս ճնշում էին ցեղային ավանդույթները։ Սպարտակը համոզում էր համբերությամբ, առանց ղայրույթի՝ դիմելով նրանց սենեական փորձին։ Եվ շատ անգամ իրավացի էր դուրս գալիս։ Նրա իրավացիությունը, տարած հաղթանակների հետ

միասին, ապստամբության առաջնորդի համար ստեղծել էր հրաշալի հեղինակություն։ Նրան հավատում էին նաև այն բանի համար, որ երբեք առաջնորդի խոսքը գործից չէր տարբերվում և երբեք անձնական շահ չէր փնտրում։

Սպարտակն անշահախնդրության մարմնացում էր։ Ավարի իր բաժինը ստանում էր բոլորի նման, ըստ վիճակահանության, հագնվում էր պարզ, մյուսներից տարբերվում էր միայն բարձր հասակով և դյուցազնական կազմվածքով, համոզիչ խոսելու և խելացի հրամայելու ունակությամբ։ Լիովին համաձայն էր այն հայտնի կարծիքին, որն ասում էր.

Եվ արծաթը, և ծիրանին
Բնում լավ են, կյանքում, սակայն, պետք չեն բնավ ոչ մի բանի։

Հետագայում, ռազմիկների ցանկությամբ, նա ընդունեց հռոմեացիներից գավթած լիկտորական կապուկներ, պատվավոր պահակախումբ և սկսեց մարտիկների մեջ հայտնվել Կրիքսոսի հետ միասին (մինչև սրա վոհվելը) կոնսուլական հագուստով (Ֆլորոս)։ Ընկերները նրա համար հրաշալի մի նժույգ գտան, ցանկանալով, որ իրենց պարագլուխը նույնիսկ արտաքինով չզիջի հռոմեացիներին։

Նա, սակայն, պահպանել էր նախկին պարզությունը։ Նրան հաճախ կարելի էր տեսնել զինվորական կաթսայից ուտելիս և Հաննիբալի նման, հասարակ թիկնոցի մեջ փաթաթված, զինվորների հետ շոր գետնի վրա քնած։ Հաճոխակի անձամբ էր ստուգում պահակակետերը։ Արշավանքների ժամանակ հաճախ գնում էր ոտքով, բոլորի հետ միասին տանելով տապն ու ցուրտը, գեղադասելով սովորեցնել ոչ թե խոսքով, այլ անձնական օրինակով։ Հենց դա էր պատճառը, որ երբ մարտի ժամանակ սպառնագին դրություն էր ստեղծվում, դուրս էր գալիս առաջին գիծ, ամեն կերպ քաջալերում էր ռազմիկներին, մարտնչում էր բոլորի հետ միասին, թեև հրամանատարները բազմիցս համոզում էին իզուր ռիսկի չդիմել։ Սպարտակը, սակայն, չէր համաձայնում և մինչև վերջ էլ մնաց իր այն համոզմանը, թե զորավարի տեղն այնտեղ է, որտեղ ամենասպառնալի իրադրությունն է ստեղծվում։ Սիրում էր կրկնել Դեմոսթենեսի խոսքերը. «Զարագործը պետք է մեռնի դատարանի դատավճռով, իսկ զորավարը՝ թշնամիների հետ մարտում»։ Նրա օրինակը վճռական նշանակություն էր ունենում։ Հիմա ինքնատիրության հասկանալի

էր պատնում, որ բոլոր աստիճանների հրամանատարները պարտավոր են ընկերներին քաջության և արշավներում դժվարությունների հաղթահարման օրինակ ծառայել, իսկ պարտության ժամանակ բոլորի հետ կիսել նրանց ճակատագիրը։

Առաջնորդի վրանը սպարտական պարզության օրինակ էր ծառայում։ Բոլորը տեսնում էին, որ ամանեղենը հասարակ կավից է, կահկարասին՝ սովորական փայտից։ Փոխարենը, ամենուրեք զանազան գրքերի դաթեթներ կային, առաջին հերթին զինվորական գործին վերաբերող։ Այդ գրքերը,— նրա սիրած գրքերից էին Քսենոֆոնի աշխատությունները, Ալ. Մակեդոնացու, Պյուռոսի, Հաննիբալի արշավանքների մասին պատմական երկերը և այլն,— գնում էին վաճառականներից կամ ձեռք էին բերվում որպես ավար հռոմեական ռազմական ճամբարների, կալվածքների և քաղաքների գրավման ժամանակ։ Կային, սակայն, փիլիսոփաների և բանաստեղծների գրքեր էլ։

Սպարտակը հնչեղ ու հստակ բանաստեղծությունների սիրահար էր, ինչպես վայել է իսկական թրակացիներին, իսկ նրանք միշտ հպարտանում էին իրենց բանաստեղծներով, նրանով, որ հենց իրենց հողն էր ծնել մեծ արքա և երաժիշտ Օրփեոսին, որը կարողացել էր իր երաժշտությամբ հմայել նույնիսկ ստորերկրյա մութ տիրակալ Հադեսին, Ապոլլոնի հետ նվագածության մեջ մրցելու համարձակություն ունեցած քաջ սատիր Մարսիասին, մեծ թատրոնի ու երգիչ Թամիրասին, որը հանդգնել էր մրցության հրավիրել երգեցողության և արվեստների հովանավորուհի Մուսաներին և պատժվել էր դրա համար։ Դժգոհների հետ վիճելիս կամ խիստ կարգապահությանը ենթարկվել չցանկացողների հետ գժտվելիս գերագույն առաջնորդը կարող էր ըստ պատահության դիմել Հոմերոսի պոեմներին։

Սպարտակն ինքը շեշտում էր թրակացի առաջնորդների այն քաջագործությունները, որոնց Հոմերոսն անդրադարձել է համառոտակի՝ «թրակացիներից ամենաքաջ՝ Ակիդամանտոսի (նրան սպանեց Այաքսը) մասին, Պեյրոսի, Իֆիդամանտասի, Կոոնի՝ «տկանավոր զորականի», Ռիգմոսի (ընկավ Աքիլլեսի ձեռքով), մեծ արքա Ռեզոսի և նրա եղբայր Հիպոկոնտոսի, Պեոնների նշանավոր առաջնորդներ Պիրքեմասի, Աստրոպեսի, Ապիսաոնի մասին։

Ընդհանրապես, կուլտուրական պահանջներով և դրանց բավարարման մակարդակով Սպարտակը միանգամայն իր ժա-

մանակի մարդ էր։ Վեպերգակներից նա բոլորից բարձր գնահատում էր Հոմերոսին, ողբերգուներից՝ Սոֆոկլեսին և Եվրիպիդեսին, քնարերգուներից՝ Արքիլոքոսին, պատմագիրներից՝ Հերոդոտոսին, Թուկիդիդեսին և Քսենոֆոնին, հռետորներից՝ Դեմոսթենեսին։ Փիլիսոփայության մեջ գերադասում էր ստոիկներին, որոնք ձգտում էին իրենց հետևորդներին ամուր հենարան տալ հեղհեղուկ կյանքում, քարոզում էին հավասարություն ու եղբայրություն բոլոր մարդկանց միջև, սովորեցնում էին խստորեն հետևել պարտականություններին։ Սպարտակը գնահատում էր նաև շատ հռոմեական գրողների և իրեն ժամանակակից փիլիսոփաների։ Ծանոթ էր և բուն թրակական գրականությանը։

Ռազմիկների ու հրամանատարների դաստիարակության նպատակով առաջնորդի ցանկությամբ կազմակերպվում էին թատերական ներկայացումներ։ Դրանցում ապստամբները ծաղրում էին հռոմեացի ձախողդ զորավարներին, գովերգում էին իրենց հերոսների քաջագործությունները։ Հաղթողը պատվավոր պարգև էր ստանում, որով հպարտանում էր ոչ միայն ինքը, այլև նրա ամբողջ կոհորտայի ռազմիկները։

Մարտիկները սիրում էին նաև երաժշտություն, քանի որ նրանց առաջնորդն էլ երաժշտության սիրահար էր, ինչի մասին վկայում էին նրա վրանում կախված բազմաթիվ երաժշտական գործիքները, որոնց վրա ժամանակ առ ժամանակ նվագում էր Սպարտակը։

Ձմռանը, մարտական դադարների պահին, երբ ազատ ժամանակ շատ էր լինում, Սպարտակն արթնանալով, աստվածներին զոհեր էր մատուցում, նախաճաշում էր, գորքին վերաբերող հրահանգներ արձակում, տեղեկանում էր նորություններին, զրուցում ընկերների հետ, կարդում էր, զբաղվում նետաձգությամբ, նիզակ նետելով, ծանրություն բարձրացնելով, սուսերամարտով։ Նա աչքի էր ընկնում ֆիզիկական մեծ ուժով, իսկ դիմացկունությամբ գերազանցում էր իր բանակի ցանկացած ռազմիկին։ Սպարտակը զենքին ու նժույգին տիրապետում էր հիանալիորեն, շատ լավ լողում էր։ Սիրում էր գնդակ խաղալ։

Օրվա երկրորդ կեսին ապստամբների առաջնորդը սովորաբար զբաղվում էր դատական գործերով. քննարկում էր առաջնության համար ավար բաժանելու վրա կամ կանանց առիթով մարտիկների միջև տեղի ունեցած վեճերը, ինչպես և բնակավայրերի

Իրեն ծաղած վնասները, երբ նրա միջնորդությանն էին դիմում, խանգիսպում էր հոգատրածների ու բատրակների հետ, քննում տեղական գործերը, անասնապահությանը, հացահատիկ աճեցնելուն վերաբերող հարցեր։

Մարդկանց համար հաճելի բան կատարելու նպատակով նա ընդունում էր իրեն, որպես առաջնորդի, բերած նվերները և ինքն էլ շատ լավ պարգևներ էր բաժանում։

Երեկոյան նրա վրանում ճաշկերույթ էր տրվում։ Խնջույքի սեղանի շուրջը, որտեղ պարզ կերակրատեսակներ էին մատուցվում, նա միշտ հետևում էր, որ կողմնապահություն չլինի և ոչ մեկը չվիրավորվի։ Նա պահանջում էր, որ սեղանակիցները՝ և՛ յուրայինները, և՛ հյուրերը, ինքնագովությամբ չզբաղվեն և չլարախոսեն, որ կատակները չանցնեն շափավորության ու պարկեշտության սահմանները։

Սպարտակը տանել չէր կարողանում կեղծավորներին և անմիջապես ընդհատում էր սնթեթ, հաճկատակ խոսակցությունները։ Նա միանգամայն ընդունում էր կինիկ-փիլիսոփա Կրատետեսի խոսքերը. «Ով շրջապատված է կեղծավորներով, նա միայնակ է, ինչպես հորթը՝ գայլերի մեջ. ո՛չ այստեղ, ո՛չ այնտեղ՝ շուրջբոլորը և յուրաքանչյուրի մեջ, աջակցություն չկա, միայն թշնամանք»։

Մարտիկներին իր հետ ավելի սերտ կապելու նպատակով, Սպարտակը ջանում էր կրոնական հարցերում անհրաժեշտ տակտը պահպանել։ Նա հաճախ զորքի դիմաց հայտնվում էր կնոջ՝ դուշակուհու, ուղեկցությամբ, որը սպիտակ զգեստ էր հագած լինում, ոսկեպսակը՝ գլխին։

Ընկերների ու զինակիցների հետ Սպարտակը հաճախ երազում էր այն հրաշալի ժամանակները, երբ հնարավոր կլիներ անմասնագ ցած դնել զենքը, երբ Իտալիայում և ամբողջ աշխարհում կկործանվեր Հռոմի բռնակալական իշխանությունը, երբ բոլոր ժողովուրդները կկարողանային ապրել նախնիների պատգամների համաձայն և զբաղվել միայն խաղաղ գործերով։

Աղատ ժամանակ, որը, որպես կանոն, կարճատև էր լինում, քանզի նրան միշտ սպասում էին գործեր ու մարդիկ, Սպարտակն ընկերների հետ որսի էր գնում։ Գլխապատառ սլանում էր փախչող աղվեսների հետևից, թռչուններ էր նետահարում, սիրում էր դիտերում և լճերում եռաժանիով ձուկ որսալ։ Դա էր նրա հան-

դիտը։ Միաժամանակ ուսումնասիրում էր լեռնային վայրերի կիրճերը և հարթությունների զառիթափները, ճանապարհին ուղեկիցներին տակտիկական խնդիրներ էր առաջարկում, սովորեցնելով նրանց օգտվել տեղանքի հնարավորություններից։

Ամբողջ պատերազմի ընթացքում ջանասիրաբար բարելավում էր իր շտաբը, իր հրամանատարական կազմերը։ Հրամանատարների հետ մշակում էր խոշորագույն զորավարների պատերազմական տակտիկայի և ստրատեգիայի խնդիրները։ Բծախնդրությամբ էին ընտրում բոլոր աստիճանների հրամանատարներին (առանձնապես՝ բարձրագույններին). քաջությունից ու խելքից բացի, պարտադիր պայման էր զորապետի շրջահայացությունը, գինվորական գործի տեսության իմացությունը, հրամանատարական պաշտոններով մյուս պատերազմներին մասնակցությունը, կուլտուրական մտահորիզոնի լայնությունը, գործին նվիրվածությունը, ենթարկվելու և գործընկերների հետ համերաշխ աշխատելու ունակությունը։ Վերջին հանգամանքին Սպարտակը ժամանակի ընթացքում սկսեց առանձնապես մեծ նշանակություն տալ (պատերազմի սկզբում, բնականաբար, մարդկանց կարիք ունենալով, ստիպված էր նվազ պահանջկոտ լինել)։

Ապստամբության առաջնորդը մեծ ուշադրություն էր հատկացնում իր հետախուզությանը՝ բանակի աչքերին ու ականջներին, որը կեղծ դավաճանների փախուստներ կազմակերպելով, ճարպկորեն տաբածելով հակասական լուրեր, բազմիցս շփոթության մեջ էր գցում թշնամուն։

Ապստամբական բանակի մարտիկները, չնայած մարդկային սովորական թերություններին, այրվում էին փառատենչությամբ, աչքի ընկնելու ցանկությամբ։ Քաջագործություն կատարած, խելքով, ընդունակություններով, գիտելիքներով օժտված յուրաքանչյուր ռազմիկ զիտեր, որ կնկատեն իրեն, կպարգևատրեն, պատվով կպսակեն, արագորեն առաջ կքաշեն ու կնշանակեն հրամանատարական պաշտոնի, որ վիրավորվելիս կամ հիվանդանալիս զորավարն անձամբ կխնամի իրեն՝ զինվորին, իսկ զոհվելու դեպքում շքեղ ու փառավոր թաղում կկազմակերպի, որից հետո իր ամբողջ կյանքը կգովաբանվի երգերում, իսկ իր օրինակով կսովորի ամբողջ զորքը։

Սպարտակը լավ էր ճանաչում մարդուն, նրա անկատարելությունը, ինչպես նաև հերոսություն կատարելու նրա հակումը։

Նա միանգամայն կիսում էր Քսենոֆոնի գրությունը. «Մարդիկ ամենից շատ սիրում են այն, ինչը բորբոքում է մրցությունը։ Ուստի գարկավոր է նրանց ներշնչել, որ ենթարկվեն իրենց պետերին, լինեն աշխատասեր, համարձակ՝ հանդգնության աստիճանի, ճարպիկ, լավ գենքի սիրահար, իսկ ամենից առաջ՝ զոհեստի ծարավ։

Ասացնորդի իմաստունությունը, արդարությունը, մարդասիրությունը, պարզությունը, մատչելիությունը զուգորդվելով մեծագույն հաջողակությանը հետ, Սպարտակի նկատմամբ մեծ սեր ու վստահություն առաջացրին ամբողջ բանակում։

Միշտ առույգ, թեև քիչ էր քնում, եռանդուն, թեև չափավոր էր ուտում, շքեղության ամեն մի դրսևորումից զերծ, գործին նվիրվածության օրինակ ծառայող, խաղաղ օրերին և մարտի պահին հավատարիմ ընկեր Սպարտակը հրաշալի օրինակ էր ծառայում ապստամբական բանակի յուրաքանչյուր մարտիկի և հրամանատարի համար։

Գլուխ քսանչորսերորդ

ՍՊԱՐՏԱԿԻ ԼԱՍՏԵՐԸ ԵՎ ԿՐԱՍՈՍԻ ՊԱՐՏՈՒԹԸ

I

Օգոստոսի վերջին Կրասոսն իր զորքով նույնպես մոտեցավ Բուրիքին։ Հիմա նա առաջվա նման համարձակ չէր և սիրտ չէր անում ապստամբներին ճակատամարտի կանչել։

Սպարտակն էլ, իր հերթին, չէր անհանգստացնում նրան և իր լեգատների հրամանատարությամբ տարբեր ուղղություններով ուժեղ ջոկատներ էր ուղարկում հռոմեացիների անցած տարածքները՝ պարեն հավաքելու և ավերելու։ Կրասոսը հեղինակությունը փրկելու համար ստիպված էր դաշնակիցներին օգնություն ուղարկել։ Բայց նրա բախտը հետևողականորեն չէր բերում։ Ամեն անգամ սպարտակյանների հետ բախվելիս, նրա ջոկատները պարտություն էին կրում (Ապպիանոս)։ Այդ նոր անհաջողությունները չէին կարող հռոմեացիների քաջությունն ավելացնել։ Բայց Կրասոսը ջանում էր թույլ չտալ իր մարդկանց հոգնակս ընկճվել։ Սպարտակի օրինակով նա անընդհատ մարդում էր ռազմիկներին. ատիպում էր լեգեոնների պետերի և ավագ

հրամանատարների ներկայությամբ գործով ապացուցել, որ իզուր չեն մարտիկները ցորենախաշիլի իրենց օրապահիկն ստանում (ըստ հռոմեական սովորության զինավարժությունների ընթացքում իրենց վատ դրսևորած ռազմիկները ցորենի փոխարեն ստանում էին գարու խաշիլ), որ ընդունակ են կատարելու այն ամենը, ինչ պահանջում է ռազմական արվեստը։ Մարդկային կորուստները նա աշխատում էր ժամանակին համալրել Կամպանիայում հավաքագրված նոր զորակոչիկների հաշվին։ Այդ հարցում Կապուան հսկայական օգնություն էր ցույց տալիս Կրասուսին։

Հռոմին ցուցաբերած Կապուայի այդ բացառիկ օգնությունը հիշելիս, տասը տարի անց, Ա. Հռուլոսի առաջարկած ագրարային օրինագծի (63 թ.) հետ կապված բանավեճի ժամանակ Ցիցերոնն ասում էր. «Ուշադրություն դարձրեք խոսքիս. Կամպանյան հողերը բաժանելու դեպքում աղքատ հողատերերը կվտարվեն և կհողազրկվեն, ոչ թե դրանք կբնակեցվեն և նոր հողաբաժիններ կտրվեն։ Ամբողջ Կամպանյան հողերը կազմում են համեստ ու աշխատող մանր գյուղացիների կողմից մշակվող հողատարածությունները, և այդ ազնիվ մարդկանց, այդ աշխատասեր հողագործներին և քաջարի զինվորներին արտաքսում է մեր ժողովրդական տրիբունը, հռոմեացի աղքատների այդ բարեկամը։

...Իսկապես, դեռևս Կվ. Ֆուլվիոսի և Կվ. Ֆաբիոսի (212 թ.) կոնսուլության ժամանակներից, երբ Կապուան պարտվեց և գրավվեց, այդ քաղաքի կողմից ոչ միայն թշնամական գործողություններ, այլև մեր դեմ վատ դիտավորություններ չեն նկատվել։ Այդ ժամանակից մենք շատ պատերազմներ ենք մղել Փիլիպոս, Անտոնիոս, Պերսևս, Կեղծ Փիլիպոս, Արիստոնիկոս, Միհրդատ և այլ թագավորների ու դրանցից ոչ պակաս վտանգավոր Կարթագենի, Կորնթոսի, Նումանտիայի դեմ։ Մեր պետության ներսում շատ են եղել ներքին խառնակություններ, որոնք չեմ ցանկանում հիշատակել, պատերազմներ են եղել դաշնակիցների հետ՝ Ցրեգելանյան, Մարսիական, և ի՞նչ։ Այս բոլոր ներքին ու արտաքին արշավանքների ժամանակ Կապուան մեզ ոչ միայն չէր վնասում, այլև մեծագույն պատրաստակամությամբ օժանդակում էր, մեր զորքերին մատակարարելով անհրաժեշտ ամեն ինչ, երբեմն տուն ու ապաստան հատկացնելով»։

Այս հովվերդական պատկերը, իհարկե, այնքան էլ չէր հա-

պատասխանում իրականությանը։ Սպարտակյան պատերազմի ժամանակ Կամպանիայի սահմաններից ներս էլ եռում էր սոցիալական պայքարը և աղքատների մի մասը կանգնած էր ապստամբ սարուկների կողմը։ Բայց անվիճելիորեն մնացած մասը Հռոմի կողմն էր և նրան զինվորներ էր տալիս։ Հենց այդ պատճառով Սպարտակը չկարողացավ նվաճել Կապուան և ամբողջ Կամպանիան իր կողմը գրավել։

II

Մոտենում էր սեպտեմբերի կեսը։ Թվում էր, թե արդեն երկար ժամանակ է անցել, ինչ Կրասոսը բոլոր գործերն առել էր իր ձեռքը, բայց պատերազմի վերջը չէր երևում։ Զորավարի սրամտությունն էլ լավ չէր։ Նրան մտատանջում էին թշնամիների մեքենայությունների մասին Հռոմից ստացվող լուրերը, Պոնտոսից, Իսպանիայից և Սիցիլիայից հասած անբարենպաստ տեղեկությունները։

Սերտորիոսի սպանությունից հետո Մ. Կրասոսին և Պ. Ցետեգոսին հայտնի դարձավ, որ իրենց գաղտնի գրագրությունը խռովարար զորապետի հետ ընկել է Պոմպեոսի ձեռքը։ Ճիշտ է, ասում էին, որ վերջինս այրել էր Սերտորիոսի ռազմակայանում հայտնաբերված բոլոր նամակները։ Բայց հնարավոր վտանգից վախեցած Պոմպեոսի հակառակորդներն այդ խոսակցությունները համարում էին սուտ, իրենց թյուրիմացության մեջ գցելու մի հնարանք։ Պոմպեոսից վախենալով, ինչպես նաև նրա զինակից Մետելլոսից զգուշանալով, Կրասոսը և Ցետեգոսը որոշեցին նրանցից ազատվել նույն ձևով, ինչպես նրանք Սերտորիոսից՝ դաշույնի սովորական հարվածով։

Այդ նպատակով Իսպանիա, իբր գործով, ուղարկվեց երիտասարդ Գ. Ցետեգոսը՝ Մ. Ցետեգոսի որդին, հավատարիմ մարդկանց խմբով։ Պոմպեոսի՝ շափազանց զգույշ մի մարդու, դեմ մահափորձ կատարելու հնարավորություն, ի ցավս նրանց, չներկայացավ։ Բայց Մետելլոսի դեմ մահափորձը քիչ մնաց հաջողությամբ պսակվեր։ Խնջույքի ժամանակ Գ. Ցետեգոս-կրասոսը դաշույնով վիրավորեց զառամյալ զորապետին։ Բայց խառնաշփոթության մեջ նրա զինակիցներին, այնուամենայնիվ, հաջողվեց պաշտպանել նրան և փրկել։ Գ. Ցետեգոսը ստիպված էր իր խմբով հապշտապ փախչել Իսպանիայից։ Հետագայում

հիշելով այս պատմությունը Ցիցերոնը (այն ժամանակ Ցետեգոսը նրա հակառակորդն էր, Կատիլինայի դավադրության մասնակիցը) խիստ խոսքեր էր նետում նրա հասցեին.

«Եթե որևէ մեկը մտածի Գայոս Ցետեգոսի, նրա Իսպանիա կատարած ուղևորության և Կվինտոս Մետելլոս Պիոսին վիրավորելու մասին, ապա նա, իհարկե, կմտածի նաև, որ բանը կառուցված է այն բանի համար, որպեսզի Ցետեգոսն այնտեղ կրի իր պատիժը»։

Կրասոսին քիչ մխիթարական լուրեր էին հասնում նաև արևելքից։ Այդ պահին Լ. Լուկուլլոսը բացահայտորեն չէր ցանկանում պատերազմի մեջ մտնել Տիգրանի հետ։ Դրանով իսկ նա պահպանում էր իր ձեռքերի ազատությունը և ցանկացած պահին կարող էր օգնության հասնել Իտալիայում գտնվող իր կողմնակիցներին, որպեսզի Կրասոսի ձեռքից խլեր Սպարտակին հաղթողի գափնիները։

Մեծ դժգոհությամբ Կրասոսն ընդունեց նաև Իսպանիա, Պոմպեոսի մոտ Միհրդատի դեսպանություն ուղարկելու լուրը։ Թագավորությունից ղրկված պոնտոսյան արքան հաղթական զորավարից խնդրում էր հովանավորություն և իրենց՝ Միհրդատի ու հռոմեական սենատի միջև միջնորդական դատավարություն։ Երիտասարդ զորավարին տրված այդ գերադասությունը, բնականաբար, Պոմպեոսի բոլոր հակառակորդներին դուր չեկավ։ Եվ նրանք անմիջապես դեսպանության գլխավորին հայտարարեցին Միհրդատի գաղտնի լրտես, չնայած Պոմպեոսը նրան դեսպան ճանաչեց և խոստացավ կատարել այն ամենը, ինչ կներեն իր ուժերը (Ցիցերոն)։

Վերջապես, այնքան էլ ուրախալի չէին նաև Սիցիլիայից եկած լուրերը։ Գ. Վերեսը (նա արդեն չէր կասկածում, որ իր նկատմամբ դատավարությունն անխուսափելի է) չափից դուրս լկտիացել էր։ Նա, ինչպես սովորական մահկանացուի, կողոպտեց Հռոմից հայրենիք վերադարձող սիրիական արքայազն Անտիոքոսին։ Վերեսը նրանից խլեց ամենագեղեցիկ սկահակները, գունագեղ քարից շերեփը, Յուպիտերի տաճարին նվիրված, թանկարժեք քարերով զարդարված հրաշալի պատրաստված աշտանակը (Անտիոքոսի Հռոմ կատարելիք երկրորդ այցելության ժամանակ այն պետք է դրվեր վերակառուցվող տաճարում)։ Թագավորին կողոպտելու և նրան պրովինցիայից կոպտորեն ար-

տաքսիլու լուրը մեծ աղմուկ բարձրացրեց... սակայն, կուսակալի համար ոչ մի հետևանք չունեցավ։ Եվ մեկ տարի անց Ցիցերոնը ստիպված էր դատավորներին ապացուցել նման արարքների անխուսափելիությունը, անհնարինությունը։ «Դատավորնե՞ր, պիտի՞ք,— բացականչում էր նա,— ձեր և հռոմեական ժողովրդի անունը օտարերկրյա ժողովուրդների համար կդառնա ատելության ու անեծքի առարկա, եթե այս մեծագույն վայրագությունն անպատիժ մնա։ Բոլորը կսկսեն մտածել,— առանձնապես այն ժամանակ, երբ մեր համաքաղաքացիների ագահության և ժլատության լուրը կհասցնի տարածվել ամենուրեք,— որ այդ արարքի մեղավորը ոչ միայն նա է, այլև նրանք, ովքեր դրան վերաբերվել են անտարբերությամբ»։

Արքաների հետ այդքան սանձարձակորեն վարվելով, կուսակալն առավել ևս չէր քաշվում հասարակ սիցիլիացիների հետ շփվելիս։ Նա այնպիսի կատաղությամբ էր բռնանում նրանց վրա, որ Սիցիլիայի ամենաերևելի մարդիկ՝ սենատը և Հռոմի նշանավոր քաղաքական գործիչներին հեղեղել էին խնդրանքներով ու աղաչանքներով, որպեսզի շուտափույթ ուղարկվեր Պ. Վերեսի փոխանորդը, որն արդեն վիճակահանությամբ որոշվել էր, դա պրետոր Կվ. Արիոն էր՝ Կրիքսոսին հաղթողը, ներկայումս՝ Սպարտակի հակառակորդը։

Կրասոսը գիտեր, որ պրովինցիան Կվ. Արիոսին սպասում է մեծ անհամբերությամբ (Ցիցերոն)։ Բայց պարտությունների և անհաջողությունների մեջ խրված Կրասոսն ամենևին էլ չէր ցանկանում բաժանվել իր ամենահաջողակ սպաներից մեկից։ Այդ պատճառով 72 թվականի վերջին ամիսներին սենատում Արիոսի հարցի հետ կապված սուր պայքար էր գնում։ Կրասոսը պահանջում էր նրան թողնել Իտալիայում։ Պոմպեոսականները պնդում էին, որ նա մեկներ Սիցիլիա։ Իրենք՝ սիցիլիացիները, շունչները պահած հետևում էին այդ պայքարին։ Վերջ ի վերջո Կրասոսին, այնուամենայնիվ, հաջողվեց հաղթել։ Բայց և այնպես նա շատ տհաճ պահեր ապրեց և այնպիսի օրեր եղան, երբ նա սենատի հերթական նամակը բաց էր անում նողկալի զգացումով. չլինի՞ թե պոմպեոսականները հաղթել են և սենատը հրաման է արձակել, որ ինքը Կվ. Արիոսին դիջի Սիցիլիան...

Նկատի ունենալով բոլոր անբարենպաստ հանգամանքները և առաջիկայում սպասվող Պոմպեոսի վերադարձը Իտալիա, Կրասոսը հանգում էր ամենամոտ ժամանակներում Սպարտակի

հետ վճռական ճակատամարտ տալու անհրաժեշտության մասին։ Սակայն Պ. Կոնսիդիոսն ամեն կերպ համոզում էր նրան և համառորեն պնդում առավելագույն զգուշություն պահպանել։

III

Այդ ընթացքում Սպարտակն, ավարտելով զորքի վերակազմումը, վերազինումը և վարժեցումը, պատրաստվում էր վճռական ռազմական գործողությունների դիմել, նպատակ ունենալով ոչնչացնել Կրասոսին և թափանցել Սիցիլիա։ Անցած շաբաթների ընթացքում նրա վարպետները կառուցել էին մի քանի տասնյակ հնաձուղական ռազմամակույկներ։ Դրանցից յուրաքանչյուրը տանում էր 50-ական մարդ (այդպիսի նավակներում թիավարների դերը կատարում էին իրենք ռազմիկները)։ Սիցիլիա արշավելու համար հանդերձավորված էին նաև թուրիացիների մեծ նավակները։ Առաջիկա ռազմարշավի համար Սպարտակն ընտրել էր լավագույն ռազմիկներին և հրամանատարներին։

Սեպտեմբերի 12-ին, ստանալով վերջին հրահանգները, հրամանատարներն իրենց մարտիկներին (ընդամենը 2 հազար հոգի) նստեցրին նավակները, դուրս եկան ծով և ուղղություն վերցրին դեպի Սիցիլիա։ Երկու օրվա ընթացքում նրանք պետք է կտրեին 440 կիլոմետր, հանկարծակի հարձակվեին Սիրակուզայի վրա, գրավեին քաղաքը, տիրեին սիրակուզյան քարհանքերին, ազատեին կալանավորներին, նոր ջոկատներ կազմակերպեին, զինեին նրանց և սկսեին նոր հարձակում դեպի կզզու խորքը, ապստամբության նախապատրաստված ստրուկներով առավել բնակեցված շրջանները։

Իսկ այդ ընթացքում Սպարտակն ինքը կշռադատելով զանազան հնարավորությունները, կրկին սկսեց ջանք թափել Կրասոսին ծուղակ գցելու համար, ինչի փայլուն վարպետներից մեկն էր...

Վերջապես հռոմեական զորավարը ընկրկեց հերթական հաճելի յուրի հանդեպ։

Հետախույզների ասելով, ապստամբների գլխավոր ուժերից տարաձայնությունների պատճառով նորից բաժանվել էր 10 հազարանոց մի ջոկատ։ Կրասոսն ուրախացավ։ Գիշերով դուրս գալով ճամբարից, գաղտնի մոտեցավ թշնամու բանակատեղին և տեղավորվեց նրա կողքին։ Լուսաբացին Կրասոսը թշնամին-

թին ճակատամարտ առաջարկեց։ Վերջիններս, հույս դնելով իրենց ամուր դիրքի վրա, անհապաղ ընդունեցին առաջարկը։ Մարտը բորբոքվեց, և հռոմեական զորավարն արդեն կանխավայելում էր հաջողությունը։ Դժբախտաբար, Սպարտակը շուտով ոգևորության հասավ յուրայիններին։ Մասնավոր ընդհարումը անմիջապես փոխվեց ամենադաժան ճակատամարտի։ Տեսնելով, որ գործերը դեպի վատն են գնում, Կրասոսը հրամայեց նահանջել դեպի ճամբար։

Ճակատամարտից հետո կողմերը գնում էին դեմ դիմաց։ Ապստամբ ստրուկների պարագլուխը ձգտում էր հռոմեացիներին համարձակություն ներշնչել նոր մեծ ճակատամարտի համար, բայց ապարդյուն։ Կրասոսը, նա մի ծանր դաս առնելով, վճռականորեն չէր ցանկանում ռիսկի դիմել։

IV

Իսկ այդ ընթացքում, երբ երկու բանակները՝ ստրուկների և հռոմեացիների, Թուրիքի շրջակայքում մարտեր էին մղում, Սպարտակի դեսանտը, համեմատաբար նպաստավոր եղանակին (նավարկության համար նպաստավոր ժամանակը վերջանում էր) կտրելով ծովը, հռոմեացիների համար անսպասելի ափ ելավ Սիրակուզայի մոտ։

Սիցիլիական մայրաքաղաքի պարիսպների մոտ թշնամու հայտնվելուն՝ Սիցիլիա ուղարկած Կրասոսի լեգատներ Լ. Կատիլինան (մ. թ. ա. 105—62 թթ.) և Պ. Ավտրոնիոսը (մ. թ. ա. 107—62 թթ.) ոչ մի կերպ չէին սպասում։ Համոզված լինելով, որ հակառակորդը նավեր չունի և Կրասոսի համաձայնությունն ստանալով, նրանք որոշել էին սկզբում պահպանել Մեսանա քաղաքը՝ «Սիցիլիայի դարպասը»։

Պելորյան հրվանդանում՝ կղզու ամենախոցելի վայրում, Գ. Վերեսի կառուցած (Սալյուստիոս) ամրությունների հետևում գտնվող Մեսանան հարավային Իտալիայից բաժանվում էր ոչ այնքան լայն մի նեղուցով (ամենանեղ տեղում ընդամենը 3,5 կիլոմետր էր)։ Այդ նեղուցն անցնելու համար (հոսանքի արագությունը ժամում 9 կիլոմետր էր) պահանջվում էր ընդամենը 25 րոպե։

Կղզի ժամանելուց միառժամանակ անց, երկու լեգատները

որոշել էին ուժերը բաժանել։ Պելորյան հրվանդանի պաշտպանությունն ուժերի գերակշիռ մասով սահանձնել էր Կատիլինան։ Սիրակուզայի պաշտպանությունը՝ նկատի ունենալով ծովահենների հայտնի ուխտադրժությունը և քաղաքը գրեթե գրաված Հերակլեոնի նախկին հաջողությունը, իր վրա էր վերցրել Ավարոնիոսը։

Ուժերի բաժանման այդպիսի շրջահայեցությունն էլ հենց վրկեց հռոմեացիներին։ Սպարտակի դեսանտը, բարեհաջող հասնելով Սիցիլիա, փորձեց Հերակլեոնի հետքերով ներխուժել Սիրակուզայի նավահանգիստը, բայց հետ շպրտվեց։

Միմյանց հաջորդող մի քանի անհաջող փորձերից հետո սպարտակյանները ստիպված հաշտվեցին անհաջողության հետ։ Նրանք հեռացան քաղաքից, բաժանվեցին ջոկատների և ցրվեցին Սիրակուզայի մարզով մեկ, հրդեհելով ստրկատերերի վիլլաները և ստրուկներին ապստամբության կոչ անելով։ Ամենուրեք լուրեր տարածվեցին սիրակուզյան ամբողջ մարզի ավերման և բազմաթիվ ստրուկների ապստամբության մասին։

Այդ լուրերը սովորական չափազանցություններ չէին։ Իսկապես, սիցիլիական ստրուկները ամենուրեք, որտեղով անցնում էին ապստամբները, հաճույքով արձագանքում էին հռոմեական տիրապետության դեմ զինվելու և համատեղ ապստամբելու նրանց կոչին։ Եվ կրկին, ինչպես 35 տարի առաջ, սիցիլիական ստրուկների երկրորդ ապստամբության ժամանակ (մ. թ. ա. 104—101թթ.) ստրկատերերի գլխին կախվեց վտանգի մռայլ ստվերը։ «Առանց որևէ հրամանի բազմահազար ստրուկներ հավաքվեցին, որպեսզի կործանեին իրենց տերերին»,— սիցիլիական այն ապստամբության մասին գրում էր Դիոդորոսը։

Երկու լեգատները ծայր աստիճանի մտահոգված էին պատահածից։ Այսպիսով, խորվարարներն, այնուամենայնիվ, ներխուժել էին Սիցիլիա։ Ի՞նչ էր լինելու հետագայում։ Ինչպե՞ս խափանել թշնամիների երկրորդ և երրորդ այսպիսի ներխուժումները։ Ինչպե՞ս դիմագրավել նրանց։

Եվ լեգատները, իրենց հպարտությունը կոտրելով, ստիպված եղան գնալ խոնարհվել Հերակլեոնի առջև և իրենց պատվիրակների միջոցով նրան խնդրել, որ ծովահենն իր ուժերով կազմակերպեր Սիրակուզայի շրջանում սիցիլիական ծովափի պաշտպանությունը։ Խոշոր գումարի դիմաց ծովահեն-ադմիրալը

Բայց ավելց իրեն համոզել և Սիցիլիայի արևելյան ափի երկայնքով դասավորել նավերը պարեկային ծառայության համար։

Ակսամարների դեսանտային զորքերի հրամանատարի համար դա անակնկալ չէր։ Առնելով ծովահենական նավատորմի Սիրակուզայի կողմը շարժվելու լուրը, նա իր նավերն անմիջապես հետ ուղարկեց Թուրիք։ Միաժամանակ նավապետներից մեկի միջոցով Սպարտակին նամակ ուղարկեց, հայտնելով Սիրակուզան գրավելու անհաջող փորձի, քաղաքի շրջակայքը ավերածության ենթարկելու և դեպի կղզու խորքը շարժվելու մասին։ Նամակն ավարտվում էր օգնություն ուղարկելու խնդրանքով։

Լեգատի նամակն ստանալով, Սպարտակը զինվորական խորհուրդ գումարեց։ Բոլորի համար պարզ էր, որ Սիրակուզան չգրավելու դեպքում, մեկ ջոկատի ուժերով հնարավոր չէ կրկնում արագ և վճռական հեղաշրջում կատարել և որ համալրումը վճռականորեն անհրաժեշտ է։ Սակայն, երկու ահռելի «բայցեր» կային։ Նախ՝ Պելորյան հրվանդանը հուսալիորեն պաշտպանում էին Կրասոսի ուղարկած կոհորտաները, իսկ Սիցիլիայի արևելյան ափը՝ ծովահենների նավերը։ Երկրորդ՝ նավարկության համար անբարենպաստ եղանակներն սկսվել էին։

Հրամանատարները երկար քննարկեցին հնարավոր տարբերակները։ Վերջապես հանգեցին հետևյալ եզրակացության. 1) այնուամենայնիվ, հարկավոր է ռիսկի դիմել և ուշադրություն չդարձնելով եղանակի վրա, երկրորդ դեսանտ ուղարկել ծովով, 2) Սիցիլիայում գտնվող թշնամական բոլոր ուժերի (այդ թվում և ծովահենների նավերի) ուշադրությունը շեղել Պելորի կողմը։ Դրա համար պետք է ամբողջ բանակով շարժվել Ռեգիում քաղաքի կողմը (Բրուտիյան թերակղզու հարավային ծայրը) և լաստերի ու բեռնանավերի միջոցով ծովանցման սպառնալիքի պատրանք ստեղծել, իսկ հանդամանքների բարեհաջող ընթացքի դեպքում նաև Սիցիլիայի ափը դուրս գալ։

Այդպես որոշվեց։ Երեկոյան կողմ զորքերը ղենքով ու պարենի պաշարով կրկին նստեցին նավակները, դուրս եկան ծով և ուղղություն վերցրին դեպի հարավ։ Նրանց հրահանգ էր տրված գրավել Հերկուլեսի հրվանդանի հետևում գտնվող ծովախորշը և այնտեղ սպասել Սպարտակի հետագա կարգադրություններին։ Իսկ ամբողջ բանակը հինգ օր հետո պատրաստվում էր շարժվել Ռեգիումի կողմը։

Այսպիսով, ի զարմանս հռոմեացիների, Սպարտակը հանկարծ թողեց ճամբարը և շարժվեց դեպի հարավ։ Կրասոսի համար ապստամբների հեռանալը շատ ձեռնտու էր. մեկ անգամ ևս նա ամբողջ զորքի առջև իրեն հաղթող հայտարարեց նախորդ ճակատամարտում, իսկ Հռոմ նամակ ուղարկեց, որով սենատին հայտնում էր, թե ինքը «կրնկակոխ հետապնդում է դեպի ծովը նահանջող Սպարտակին և պատերազմը մոտենում է ավարտին»։

Այդքան հաճելի նորություն սենատին հաղորդելով, Կրասոսն այդուհանդերձ ձգտում էր մեծագույն զգուշություն պահպանել, խուսափել նոր մեծ ճակատամարտ առաջացնող բախումներից։

Հինգ օր անց Սպարտակի զորքերը հասան Բրուտիումի մարզի հարավային ծայրամասը՝ Ռեգիական թերակղզի։ Մովսիին լեգեոններ դասավորելով, Սպարտակը ուժերի մի մասն ուղարկեց շրջապատելու Ռեգիումը, որպեսզի այնտեղ գտնվող հռոմեական կայազորը չանհանգստացներ հանկարծակի գրոհներով։ Միաժամանակ նա հրամայեց կրկին անտառանյութ պատրաստել։

Ապստամբները եռանդուն գործի կպան։ Շրջակա լեռների անտառներից նրանք ծառեր կտրեցին, ճյուղերից մաքրելով և երկու կես անելով գերանները, բերեցին Սիցիլիայի հրվանդանի ծովափը (Բրուտիումի ծովափի հրվանդանը մխրճված է ծովի մեջ, ալիքներն ափին զարնվելով շան հաչոց հիշեցնող ձայներ են հանում)։ Այստեղ նրանք լաստեր պատրաստեցին՝ լողունակությունը ավելացնելու նպատակով լաստակոզերին դատարկ տակառներ կապելով։

Աշխատում էին օր ու գիշեր։ Սպարտակը շտապում էր. եղանակն անընդհատ վատանում էր, լողանցման հնարավորությունը օր օրի նվազում էր։

Սպարտակի հետևից Ռեգիական թերակղզի հասնելով, Կրասոսը վճռեց, որ ոչ մի իմաստ չունի ռիսկի դիմել նոր ճակատամարտ տալով։ Իր խորհրդական Պ. Կոնսիդիոսի հետ շրջակայքը զննելուց հետո, նա համաձայնվեց վերջինիս հետ, որ բնությունն ինքը հուշում է որոշումը՝ ծովից ծով ամրապատնեշ անցկացնել, խուսափարար ստրուկներին կտրել արտաքին աշխարհից։ Ցամաքով և ծովով պարեն հայթայթելու հնարավորու-

թյունից գրկվելով, նրանք անպատճառ սովամահ կամ անձնատուր կլինեն։

Զորավարն այս ծրագիրը ներկայացրեց իր սպաներին։ Այն ոչ բոլորին դուր եկավ։ Շատերը գտնում էին անիրագործելի, պատրվակ բերելով աշխատանքի այն հսկայական ծավալը, որը, նրանց կարծիքով, հնարավոր չէր այդքան կարճ ժամանակամիջոցում կատարել։ Բացի դա, ասում էին, որ Սպարտակը տեսնելով սպառնալիքը, անմիջապես կթողնի վտանգավոր գիրքերը և դրանով ի չիք կդարձնի հռոմեացիների ամբողջ աշխատանքը։

Դրան Կրասոսն այսպիսի պատասխան տվեց. ինչպես էլ որ վարվելու լինի Սպարտակը, զորքին անհրաժեշտ է զբաղմունք տալ, որպեսզի անգործությունից չփչանա, բացի դա, փորձից հայտնի բան է, որ մեծ ծավալի հողային աշխատանքները զորքին առանձին քաջություն են տալիս մարտում ավելի վճռական լինելու համար։

Թեժ վիճաբանություններից հետո վերջ ի վերջո ռազմական խորհուրդը համաձայնեց Կրասոսի կարծիքի հետ։ Այսպիսով, տեղավորվելով Պ. Կոնսիդիոսի նշած գծի երկայնքով, լեգեոնականները ձեռքներն առան բահերն ու քլունգները։ Նրանք պետք է 4,5 մետր խորությամբ ու լայնությամբ խրամ փորեին, որի պռնկին պետք է կառուցեին ցցապատնեշներով 4,5 մետրանոց պարիսպ և թշնամուն հետևելու համար ամբողջ ամրապատնեշի երկայնքով աշտարակներ բարձրացնեին։

Ամրապատնեշի շինարարությունում շրջելիս, Կրասոսը դրժգոհությամբ կնճռոտվում էր. լեգեոնականները չափից ավելի ջանասիրությամբ էին աշխատում, ասես թե դարձել էին խաղաղ հողագործներ։

Ասենք, Կրասոսը հիանալի հասկանում էր, թե որն էր նման չտեսնված ջանասիրության պատճառը. պատի միջոցով լեգեոնականները հույս ունեն խուսափել նոր դաժան ճակատամարտից։ Բայց հնարավո՞ր է դա։ Այս հարցին զորավարն ինքն էլ չէր կարող հաստատ պատասխան տալ...

VI

Մինչ հռոմեացիները մեծագույն ջանասիրությամբ կառուցում էին իրենց պարիսպը, ապստամբները ոչ պակաս եռանդով լաստեր էին պատրաստում։

Երեք օր անց աշխատանքներն ավարտված էին։ Ընտիր ռազմիկներով լաստերի և շրջակայքից ձեռք բերած բեռնանավերի միջոցով Սպարտակը սկսեց ծովանցի փորձեր կատարել։ Այդ փորձերին խիստ խանգարում էին փոթորկոտ ծովը և Մեսինյան նեղուցի անբարենպաստ ստորջրյա հոսանքները։ Բայց և այնպես, ամեն օր, երբ եղանակը թույլ էր տալիս, սպարտակյանները դուրս էին գալիս ծով և մոտենալով Սիցիլիային, աշխատում էին Պելորյան հրվանդանի ափը դուրս գալ։

Կրասոսի ուղարկած կոհորտաները, Վերեսի օժանդակ զորքերը և Սիրակուզայի մոտից շտապ կանչված ծովահենների նավերը նետերով և «կարիճներից», պարսատիկներից, «ցիռերից» ու բալիստներից նետված քարերով եռանդագին հետ էին մղում նրանց։ Եվ ամեն անգամ, հերթական անհաջողությունը կրելուց հետո, սպարտակյանները կորուստներ տալով նահանջում էին և վերադառնում Իտալիա, այդպես էլ չհասնելով ցանկալի Պելորյան հրվանդանին։

Մեծ էր նրանց դառնությունը։ Միակ մխիթարությունն այն էր, որ երկրորդ դեսանտը, օգտվելով ծովահենների նավատորմի Պելոր հեռանալուց, Հերկուլեսի հրվանդանի իրենց դարանից հանկարծակի հարված հասցրեց և բարեհաջող դուրս թռավ Սիցիլիա։ Ճիշտ է, Սիրակուզան գրավել կրկին չհաջողվեց և դեսանտն ուղղվեց դեպի կղզու խորքը, ճանապարհին ավերելով ստրկատերերի կալվածքները։

Ապստամբական նոր ջոկատի Սիցիլիա ափհանման լուրը սարսռեցրեց հռոմեացիների սրտերը։ Սիցիլիական ստրուկների նոր պատերազմի ուրվականը սպառնագին սավառնում էր ստրկատերերի գլխավերևում։

Այն, որ Սիցիլիայում ամեն ինչ չէ բարեհաջող, հայտնի դարձավ նաև Հռոմում։ Սենատից Կրասոսի համար տհաճ հարցումներ էին գալիս։ Բայց վերջինս, վճռելով մինչև վերջ դիմանալ, պատասխանում էր ամեն ինչ կտրականապես հերքելով. իրեն՝ Կրասոսին, ոչինչ հայտնի չէ Սիցիլիա ափհանված խռովարար ստրուկների մասին։ Նման բան հնարավոր չէ, քանի որ թշնամին գտնվում է նրա ամուր ձեռքերում և շուտով ստիպված կհանձնվի։ Սպարտակի դեսանտների Սիցիլիայում հաջող ափհանման մասին լուրերը տարածվել են նրա թշնամիների կողմից՝ վարկաբեկելու նպատակով։ Իրականում ամեն ինչ լավ

ընթանում և պատերազմը բացահայտորեն մոտենում է ավարտին։

Այսպիսի ոգով էր Կրասոսը գրում սենատին։ Միևնույն ժամանակ դիտակցելով գործերի իրական վիճակը, նա շտապեց Սիցիլիան և նրա սարկատերերին պաշտպանելու համար ծովափնյա նավերով օժանդակ ուժեր ուղարկել կղզի, նրանց հանձնարարելով համալրել եղած ուժերը և եռանդուն պայքար սկսել թշնամու դեմ[1]։

Միաժամանակ Կրասոսը անընդհատ շտապեցնում էր սեփական մարտիկներին՝ ստիպելով ավելի եռանդուն և արագ աշխատել։ Լեգեոնականներն աշխատում էին ամբողջ ուժով, բայց պարապարին թվում էր, թե գործն առաջ է ընթանում սարսափելի դանդաղությամբ։

Իսկ Սպարտակը սկզբում ուշադրություն չէր դարձնում հռոմեացիների աշխատանքների վրա։ Նա գիտեր, որ շուտով ժամանելու է Պոմպեոսը և Կրասոսը, չցանկանալով նրան զիջել հաղթողի փառքը, անպայմանորեն ստիպված է լինելու քանդել սեփական ամրապատնեշը և վճռական ճակատամարտի համար դուրս է թողնելու հակառակորդին։ Ինչ վերաբերում է պարենին, ապա ապստամբների առաջնորդը, նախ՝ հույսը դրել էր նախօրոք պատրաստված պաշարի վրա, և երկրորդ՝ Ռեգիական թերակղզուց և Բրուտիումից ծովով սպասում էր պարենի։

Մինչդեռ եղանակը խիստ վատացավ։ Մի անգամ առավոտյան, երբ ապստամբները սովորականի պես ծովափ իջան, իրենց լաստերը չտեսան՝ գիշերային փոթորիկը նրանց լաստերը վերածել էր տաշեղների։

Շատերն այդ բանը վատ նախանշան համարեցին։ Սպարտակն աշխատում էր նրանց հանգստացնել. լաստերի ոչնչացումը մեծ դժբախտություն չէ, իսկ փոթորիկների ժամանակ՝ սովորական բան։

Առաջնորդի հրամանով ապստամբները նորից գործի անցան՝ սկսեցին անտառ հատել, բերել ափ և նոր լաստեր պատ-

---

[1] Սիցիլիայում Կրասոսի համար անբարենպաստ գործերի իրական վիճակի մասին լուրերն, այնուամենայնիվ, հասել էին սենատին։ Հենց դրանք ի նկատի ուներ Աքիլլեոսը (մ. թ. 3-րդ դար), երբ գրում էր. «... եթե Սպարտակը չզսպվեր Լիցինիոս Կրասոսի դեմ բաց մարտում, ապա նա մեզ (այսինքն՝ Սիցիլիայում գտնվող հռոմեացիներին) անհավատալի դժվարության առաջ կկանգնեցներ, ինչպես էվնոսը՝ Սիցիլիայում»։

բաստել։ Միաժամանակ, Կրասոսի աշխատանքները կատեցնելու նպատակով, որոնք նրա ընկերներից շատերին վտանգավոր էին թվում, Սպարտակը սկսեց թեթևազեներին ուղարկել հռոմեացիներին ընդհարումների մեջ ներքաշելու։

Եվ այդ պահից սկսած ամեն օր՝ և առավոտյան, և՛ կեսօրին, և՛ երեկոյան, ապստամբները հաճախակի հարձակումներով անհանգստացնում էին հռոմեացիներին։ Նրանք խրամի մեջ, հակառակորդի գլխին քարեր, խանձողներ, վառվող խծուծ էին թափում, նետահարում էին նրանց, ռազմական մեքենաներով քարկոծում։

Վերջի ի վերջո Կրասոսը ստիպված զորքերի մի մասը կտրեց աշխատանքից և խրամի պոնկին կանգնեցրեց հակառակորդի բոլոր արտագրոհները ժամանակին հետ մղելու համար։

Այդ պայքարում երկու կողմերն էլ եռանդուն աշխատում էին։ Սպարտակը, նոր լաստեր պատրաստելով, կրկին վերսկսեց Սիցիլիա ափհանման փորձերը, բայց այդպես էլ, հաջողություն չունեցավ։ Իսկ Կրասոսը, յուրայիններին անընդհատ քշելով,— շտապեցնելով, վերջապես ավարտեց իր ձեռնարկած գործը։ Սեպտեմբերի 30-ին, մեկ շաբաթ տևած աշխատանքի վերջում, պարսպի վրա (53 կիլոմետրից ավելի) խփեցին վերջին ցցապատնեշները։

Ապստամբներն, ի վերջո, պաշարվեցին և արտաքին աշխարհից լիովին կտրվեցին։ Պ. Կոնսիդիոսը և Կրասոսը հրճվում էին։ Սպարտակն այժմ անվերապահորեն անձնատուր էր լինելու։

Գլուխ քսանհինգերորդ

ԳՆԵՈՍ ՊՈՄՊԵՈՍԸ՝ ՍՊԱՐՏԱԿԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՈՐ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

I

Իր փառահեղ քաջագործության՝ շտեսնված պարսպի մասին Կրասոսը հպարտությամբ տեղեկացրեց Հռոմին։ Նրա նամակում հատկապես շեշտված էր այն, որ ինքը, հակառակ ընդհանուրի սպասումների, այսպիսի մեծ աշխատանքը կատարել է կարճ ժամանակամիջոցում։

Բայց Հռոմում, չգիտես ինչու, ոչ մեկը չէր բաժանում նրա հիացմունքը։ Ժողովրդական հավաքներում բացահայտորեն տեր

ա տիրական էր Պոմպեոսի կողմնակից Մ. Լոլիոս Պալիկանոսը, որի պերճախոսությունը Ցիցերոնը կոչում էր «ավելի հարմար ոգեշնչերի լսողության համար»։ Հենց այս Պալիկանոսն ուղղակիորեն խոսում էր զորավարի անընդունակ լինելու մասին և մատնանշում, թե ինչքան վտանգավոր է նորաթուխ Ֆաբիուս Կունկտատորի տակտիկայով վարվող պատերազմի հետագա երկարաձգումը։ Նրա բառերով ասած, պետության ֆինանսական դրությունը շարունակում է անմխիթար վիճակում մնալ, Սպարտակի յուրաքանչյուր հաղթանակի կամ նրա պարտվելու անընդմեջ վերականգնվող հույսերի հետ կապված բաշնեռումների դինը մերթ բարձրանում, մերթ կտրուկ ընկնում է, սնանկացնելով մեծ քանակությամբ անհատ մարդկանց։

Պալիկանոսը ճիշտ էր ասում։ Առկա էր նաև այն դրությունը, որը Ցիցերոնը հետագայում (66 թ.), Միհրդատի դեմ մղված պատերազմի կապակցությամբ, այսպես է բնութագրել. «Այն ժամանակ, երբ Ասիայում բազմաթիվ քաղաքացիներ կորցրին խաչոր դումարներ, Հռոմում վճարումները դադարեցվեցին, և բոլոր գներն ընկան։ Այլ կերպ չի էլ կարող լինել։ Անհրաժեշտ է, որ մի պետության մեջ շատ քաղաքացիներ կորցնեն իրենց կարողությունը, առանց իրենց կործանման մեջ ներքաշելու բազմաթիվ այլ անձանց։ Պահպանեցե՛ք մեր պետությունն այդ վտանգից,— բացականչում էր հռետորը, - և եթե ոչ ինձ, ապա ձեր սեփական աչքերին հավատացեք. հռոմեական կուրսերը, այստեղ ֆորումում կատարվող հռոմեական դրամական գործողությունները սերտորեն, օրգանապես կապված են Ասիայում կատարվող դրամական շրջանառությունների հետ, վերջինների կործանումը չի կարող անդունդը չքաշել առաջիններին»։

Սպարտակի դեմ մղվող պատերազմի հետ կապված հենց այդ նյութի շուրջ շատ էր խոսում նաև Պալիկանոսը։ Նա մատնանշում էր նաև Կրասոսի զորքի ծայրահեղ դաժան վերաբերմունքը իտալիկական բնակչության նկատմամբ։ Եվ դա հռետորական չափազանցություն չէր։ Կրասոսը որպես արդարացում կարող էր ասել միայն,— նրա կողմնակիցները հենց այդպես էլ ասում էին,— որ վարվում է նախորդներից ոչ վատ։ Հետագայում (66 թ.) Ցիցերոնը հիշել է նաև այդ մասին. «Հիշեցե՛ք,— ասում էր նա,— թե ինչպիսի իրադարձություններով էին նշանավորվում մեր զորավարների վերջերս կատարած երթերը

Իտալիայով, հռոմեական քաղաքացիների քաղաքներով ու գյուղերով, այն ժամանակ հեշտ կլինի գլխի ընկնել, թե ինչ է կատարվում օտարերկրյա ժողովուրդների մոտ։ Հավատացեք ինձ, վերջին ժամանակներս մեր զինվորների ղենքով այնքան թշնամական քաղաքներ չեն կործանվել, ինչքան դաշնակից քաղաքներ՝ մեր զորքերի ձմեռելու պատճառով»։

Չնայած դժվարին դրությանը, ժողովրդական ժողովում Կրասոսին համառորեն պաշտպանում էին նրա գործակալները և երիտասարդ բարեկամները, որոնց մեջ նշանակալից դեր էր խաղում Հ. Կեսարը։ Այդ 31 տարեկան, սնանկացած արիստոկրատական ընտանիքում ծնված երիտասարդը, որի ծագումը հասնում էր մինչև վեներայի թոռ Հուլոսը և հռոմեական թագավոր Անկոս Մարցիոսը, Գ. Մարիոսի զարմիկը և Լ. Ցինայի փեսան, համարվում էր մեծ հույսեր ներշնչող դեմոկրատական առաջնորդներից մեկը։

Բայց Հռոմում իրադրությունը Կրասոսի համար գնալով ավելի անբարենպաստ էր դառնում։ Իր ախոյան Պոմպեոսի կողմից Կրասոսի հեղինակությանը սպառնացող սարսափելի վտանգն անընդհատ աճում էր։

II

Պերպերնայի հետ հաշիվները մաքրելուց հետո, Պոմպեոսը երեք ամսվա ընթացքում կարգի էր գցում Մերձավոր Իսպանիայի գործերը՝ սահմանում էր համայնքների իրավունքներն ու պարտականությունները, լուծում էր մասնավոր անձանց ունեցվածքի հետ կապված խնդիրները (Մետելլոսն այդ ընթացքում գնացել էր Հեռավոր Իսպանիա՝ ավարտելու լուզիտացիների հնազանդեցումը)։ Պրովինցիայի համար «շատ բարիքներ» կատարելով, այնտեղ «բազմաթիվ ազդեցիկ գլխեներ» (Կեսար) թողնելով, Պոմպեոսը հոկտեմբերի 30-ին բանակով վերադարձավ հետ՝ Իտալիա, ուր կոչում էր նրան Կրասոսի ձեռնարկած պաշարումից դժգոհ սենատը։

50 օրվա ընթացքում Պոմպեոսը կարեց-անցավ 1500 կիլոմետր ճանապարհ, ալպիական լեռնագագաթների վրա իր իսպանական հաղթանակների պատվին հուշարձաններ կանգնեցրեց և դեկտեմբերի 18-ին զորքի հետ հասավ Հռոմի մատույցներն՝ արժանանալով համաքաղաքացիների խանդավառ ընդունելության։ Նրա տրամադրության տակ կային վեց հռոմեական լե-

[illegible]ներ, մեկ՝ «ընիկների» (ծառայությունների համար հռոմեական քաղաքացիության իրավունք ստացած իսպանացիներից կազմված), ինչպես և 5 հազարանոց այրուձի։

Պոմպեոսի հակառակորդները դողում էին։ Ինչպես Պլուտարքոսն է ասում. «բարեկամական ողջույններով նրան դիմավորելու էին ելել դրեթե նույնքան մարդիկ, որքան և նրանք, ովքեր գա անում էին վախից»։ Պոմպեոսը շատ ազդեցիկ քաղաքացիների հայտարարեց, որ կօգնի ժողովրդական տribունների ամբողջ ծավալով վերադարձնելու իրենց նախկին իշխանությունը։ Այս հայտարարությունը սուլլայականներին անսահման կատաղության հասցրեց։ Այդ ընթացքում Պալիկանոսը, Պոմպեոսի թիկունքում իրեն անվտանգ զգալով, դեն նետելով ամենայն զսպվածություն, ծայրաստիճան կարուկ հարձակումներ գործեց Կրասոսի վրա։ Նա պահանջում էր Կրասոսին հեռացնել Սպարտակի դեմ կռվող զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնից և նոր ընտրություններ հայտարարել։

Պալիկանոսի պահանջը դուր չեկավ ո՛չ Կվ. Կատուլոսին, ո՛չ Պ. Ցետեգոսին, ո՛չ էլ մյուս նշանավոր քաղաքագետներին։ Ոչ մի կասկած չէր հարուցում, թե ում նկատի ուներ նա որպես փոխանորդ։

Այսպիսով, Պոմպեոսի հակառակորդ ուժերի շրջանում կարճատև շփոթությունից հետո, պայքարը նոր կատաղությամբ բորբոքվեց։ Պոմպեոսականները վճռական հարված էին նախապատրաստում և ամեն կերպ փառաբանում էին իրենց հաղթական առաջնորդին։ Այդ բանը հեշտ էր անել։ Քանզի Ցիցերոնի բառերով ասած, Գնեոս Պոմպեոսն «իր քաջությամբ ստվեր էր գցել ոչ միայն իր ժամանակակիցների փառքի վրա, այլև նրանց, ում մասին պատմում են հինավուրց ավանդությունները», որի շնորհիվ նա կարող է «օրինակ ծառայել այն ամենին, ինչը լավ է համարվում այս աշխարհում»։

Այսպես խոսելով, իր հռետորական ներկապնակի բոլոր գույներով Պոմպեոսին գունազարդելով,— ինչով Ցիցերոնը միշտ շատ էր հպարտանում[1],— նա այս կերպ էր բնութագրում Սեր-

---

[1] Մինչև իր կոնսուլությունը Ցիցերոնը Պոմպեոսին փառաբանում էր որպես պոմպեոսական կուսակցության հավատարիմ անդամ։ Նա ինքը բաղմիցս խոստովանել է այդ բանը, հայտարարելով, որ Պոմպեոսի հետ նրան կապում է «ոչ թե պատահական ինչ-որ հանգամանքները, այլ իմ վաղեմի, դրանից շատ առաջ մտածած ու ձևակերպված ջանքերը»։

տորիոսին հաղթողի կարևորագույն հատկանիշները. «Սկսենք զինվորական գործի քաջատեղյակությունից։ Ճանաչո՞ւմ եք այնպիսի մի մարդու, որն ավելին ունենա այդ հատկությունից կամ որի մեջ հնարավոր լինի ավելի մեծ չափով ենթադրել դրանից։ Չէ՞ որ նա դեռևս պատանի հասակում, թողնելով դպրոցն ու ուսումը, գնաց հոր զորքը և ռազմական ծառայության դպրոցն անցավ կատաղի թշնամու դեմ (դաշնակիցների — Վ. Լ.) դժվարագույն պատերազմի ամենաթեժ պահին։ Նա իր պատանեկության վերջում ռազմիկ էր նշանավոր մի զորավարի զորքում, իսկ ջահելության առաջին օրերից արդեն մեծ զորքի զորավար էր։ Նա ռազմի դաշտում ավելի շատ է մարտնչել թշնամիների դեմ, քան որևէ մեկը դատարանում՝ հակառակորդի դեմ, ավելի շատ պատերազմների է ծանոթ անձնական փորձով, քան ուրիշները գրքերի նկարագրությամբ, հաղթական արշավանքներով նա ավելի շատ է շրջել պրովինցիաներում, քան ուրիշները ուղևորությունների ընթացքում։ Պատանի ժամանակ ռազմական արվեստ սովորել է ո՛չ թե ուրիշի խրատով, այլ անձամբ իշխելով, ո՛չ թե անհաջողություններով, այլ հաղթանակներով, իր ծառայությունը հաշվելով ո՛չ թե տարիներով, այլ տրիումֆներով։ Հետագայում եղե՞լ են այնպիսի պատերազմներ, որոնց ժամանակ մեր պետության դժբախտությունները նրա ծառայությունների կարիքը չեն զգացել։

... Ինչ վերաբերում է Գնեոս Պոմպեոսի բնատուր շնորհներին, ապա մարդկային ոչ մի խոսք չի կարող դրանց հետ համեմատվել։ Դրանում չկան նրան արժանի և միաժամանակ ձեզ համար նոր, որևէ մեկին անհայտ արտահայտություններ։ Հիրավի, եթե նույնիսկ սովորական, այսպես կոչված, «զորավարական արժանիքները» — տոկունություն, քաջություն, գործունություն, արագություն, շրջահայեցություն — զորապետի համար միակ անհրաժեշտ արժանիքները լինեն, ապա դրանցով նա կգերազանցեր բոլոր հին ու նոր ժամանակների զորավարներին միասին վերցրած։ Այդ բանը գիտի Իտալիան, որի ազատագրումը (մարիոսականներից — Վ. Լ.) հենց իր՝ հաղթանակող Սուլլայի խոստովանությամբ, տեղի ունեցավ Պոմպեոսի քաջարի աջակցության շնորհիվ։ Այդ բանը գիտի Սիցիլիան, որին բոլոր կողմերից շրջապատող վտանգներից ազատեց ոչ թե ռազմական գործողությունների սպառնալիքով, այլ ձեռնարկած

[illegible]ոգ և նպատակասլաց միջոցներով։ Այդ բանը գիտի Աֆրիկան, որից թոթափեց թշնամական անհամար հրոսակախմբերի լուծը, հակառակորդին խեղդելով սեփական արյան մեջ։ Այդ բանը գիտի Գալլիան, որի միջով սպանված գալլերի վրայով մեր լեգեոնների համար ճանապարհ հարթեց դեպի Իսպանիա։ Այդ բանը գիտի Իսպանիան, որն այնքան հաճախ պարտություններ և կոտորածներ է տեսել բազմաթիվ թշնամիներից։ Այդ բանը գիտի դարձյալ նույն այս Իտալիան, որն ստրուկների պատերազմի վտանգների և սարսափների լծի տակ նրան օգնության էր կանչել օտարությունից և շուտով տեսավ, թե ինչպես նրա թշնամիները, նրան սպասելուց իսկ ընկճված ու վհատված, ոչընչացվեցին և սրբվեցին երկրի երեսից նրա գալուստից հետո...

... Քվիրիտնե՛ր, ձեր գործը ցանկալն ու պահանջելն է, ինչպես, ասենք, և անում եք, որպեսզի աստվածային այդ ողորմությունը հաստատորեն ու հավերժ հովանի դառնա նրան, ի երջանկություն մեզ և մեր տերության, ի պատիվ նրան անձամբ»։

Այսպես և այս ոգով էին խոսում պոմպեոսականները, փառաբանելով իրենց երիտասարդ առաջնորդին։ Իսկ Կրասոսի կողմնակիցները իրենց գլխավորի նկրտումները հիմնավորելու բան չէին գտնում։ Այդ պատճառով էլ նրանք և՛ ժողովրդական ժողովում, և՛ սենատում անհաջողություն կրեցին. աշխույժ վիճաբանություններից հետո սենատը որոշում ընդունեց, որ նոր ընտրություններ անցկացնելու ժողովրդի պահանջն արդարացի է և անհրաժեշտ է այն բավարարել ամենակարճ ժամանակում։

Այս որոշումով ամբողջ գործի արդյունքը կանխորոշվեց։ Ոչ մեկը չէր կասկածում, որ Պոմպեոսը (հարկ եղած դեպքում դեմ բվեարկողների վրա ճնշում գործադրելով) այժմ ձեռք կբերի իրեն անհրաժեշտ լիազորությունները։ Իրականում այդպես էլ եղավ։ Ուժեղ ագիտացիայից և Կրասոսի ձեռնարկած պաշարումից առաջացած ժողովրդի խիստ դժգոհության հետևանքով Պոմպեոսի հակառակորդները լիակատար պարտություն կրեցին։ Կրասոսին զրկեցին նրա արտակարգ (պրոկոնսուլական) լիազորություններից։ Որոշվեց, որ նա կարքը հանձնի նույնպես պրոկոնսուլական լիազորությամբ օժտված նոր գերագույն հրամանատար Պոմպեոսին, վերադառնա Հռոմ, իր անմիջական՝ պրետորական պարտականությունները կատարելու։

Ընտրությունների արդյունքները Կրասոսի համար լիակա-

տար կործանում էին նշանակում։ Այժմ նա մեն-մի հնարավորություն ուներ՝ Սպարտակին ստիպել մինչև Պոմպեոսի ժամանելը ճակատամարտ տալ, և ինչ գնով էլ լինի հաղթել նրան։

Ընտրություններից անմիջապես հետո, նույնպիսի մտքով, Հ. Կեսարը լավ գինված իրեն հավատարիմ գլադիատորների փոքրիկ մի ջոկատով դուրս եկավ Հռոմից։ Զիերին չխնայելով, նա սլանում էր դեպի Ռեգիական թերակղզի, Կրասոսի ռազմակայանը, զեկուցելու գործերի հուսահատական վիճակի մասին և Սպարտակին դիմավոր ճակատամարտ տալու առաջարկությամբ։

Իրենից առաջ Կեսարը ընտրությունների արդյունքի մասին հայտնող նամակներով արագագնաց սուրհանդակներ էր ուղարկել՝ մեկին ծովով, մյուսին ցամաքով...

Գլուխ քսանվեցերորդ

ՍՊԱՐՏԱԿԻ ԶՈՐՔԵՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ՌԵԳԻԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ

I

Երկու օր անց (ծովով Հռոմից մինչև Կրասոսի ռազմակայանը մոտ 500 կիլոմետր էր) Կեսարի նամակներից մեկը հասավ հասցեատիրոջը։ Հավաքելով լեգատներին, Կրասոսը նրանց ներկայությամբ կարդաց նամակը, որտեղ հայտնվում էր ընտրությունների արդյունքների, Պոմպեոսի՝ զորքի հետ հարավ շարժվելու և ընտրությունների ժամանակ եղած խոսակցությունների մասին, որ հենց Պոմպեոսին է պատկանում պատերազմի ավարտը, որ նա, գալով, անմիջապես ճակատամարտ կտա Սպարտակի հետ և միանգամից կոչնչացնի նրան։

Կարդալով Կեսարի կարճ նամակը[1], Կրասոսի լեգատները, նրանց հետ և զորավարը, մռայլ մտորումների մեջ ընկան։ Բո-

---

[1] Կեսարի ընդարձակ նամակագրությունից մեզ է հասել մեկ տասնյակից ոչ ավել նամակներ, որոնք բոլորն էլ վերաբերում են քաղաքացիական պատերազմի (մ. թ. ա. 49—48 թթ.) ժամանակաշրջանին։ Ահա դրանցից մեկը.

«Ճանապարհին, մարտ, 49 թ.

Իմպերատոր Կեսարը ողջույն է հղում իմպերատոր Ցիցերոնին։ Թեև հենց նոր տեսա մեր Ֆուրնիոսին և չկարողացա ոչ խոսել նրա հետ, ոչ լսել նրան,

որի ուղղակի ծառայել էր մի տանջալից հարց. ի՞նչ անել։ Անիծյալ Սպարտակը, չնայած պարենի պակասին (այդպես էին ասում փախստականները), ոչ մի կերպ չի ցանկանում հանձնվել։ Ի՞նչ անել։ Քանդե՞լ սեփական պարիսպը, որի վրա այդքան ուժ ու աշխատանք է վատնված։ Մարտի՞ գնալ ընդդեմ Սպարտակի — ա՛յս է պահանջում իրադրությունը... Իսկ եթե լեգեոնները կրկին փախչե՞ն թշնամուց, ինչպես փախել են բազմիցս... Բայց հո չի՞ կարելի ձեռքները ծալած սպասել։ Թե՞, այնուամենայնիվ, Պոմպեոսին զիջել հաղթողի փառքը...

Իրենց մտքերի մեջ խորասուզված՝ լուռ նստել էին լեգատները։ Լսված էին դեմքերը Պ. Կոնսիդիոսի, Կվ. Արիոսի, Մ. Մումիոսի, Գն. Սկրոֆայի... Շատ մեծ էր զորավարի վրանը։

Իսկ Կրասոսը կրկին, ամենասկզբից, վերհիշում էր իր կյանքը։ Այս ի՞նչ է կատարվում... Թե՞ ինքն իզուր է իրեն տանջում փառասիրական մտքերով... Իզո՞ւր է պայքարում Պոմպեոսի դեմ։ Իզո՞ւր չի ցանկանում հաշտվել Հռոմում երկրորդ մարդը լինելու դիրքի հետ...

Զիջե՞լ... Այդ դեպքում ինքը ռիսկի չի ենթարկի սեփական կյանքը, այդքան սիրելի կնոջ և երկու թանկագին որդիների՝ Պուբլիոսի ու Մարկոսի ճակատագրերը։ Այդ դեպքում կապրի մինչև իսոր ծերություն ու կխուսափի սարսափելի վտանգներից...

Բայց ո՛չ, Հանդիսան ու Կրասոսն անհամատեղելի են, ինչպես անհամատեղելի են իշխանության ցանկությունը և վախկոտությունը... Նա չի կարող իրեն դավաճանել, չի կարող նա-

---

ինչպես կցանկանայի, քանզի արդեն ուղարկել էի լեգեոնները, ճանապարհի վրա էի և շտապում էի, այդուհանդերձ չէի կարող բաց թողնել քեզ գրելու ասելիք և ուղարկել նամակս ու շնորհակալություս հայտնել քեզ, թեև հաճախ եմ արել այդ բանը և, ինձ թվում է, ավելի հաճախ կանեմ, այնպիսի՞ ծառայություններ ես մատուցում ինձ։

Քանի որ վստահ եմ, որ շուտով կժամանեմ Հռոմ, նախ և առաջ խնդրում եմ հնարավորություն տաս քեզ տեսնելու այնտեղ, որպեսզի կարողանամ ողջույնս քո խորհրդից, աղոթությունից, արժանապատվությունից, օգնությունից ամեն ինչում։

Վերադառնամ վերևում ասածին, ներիր շտապողականության և կարճ նամակի համար։ Մնացածը կիմանաս Ցուրնիոսից»։ Ցուրնիոսը (մ. թ. ա. 81 — ? թթ.) Պոմպեոսի ընկերն էր, հետո՝ Կեսարի և Անտոնիոսի, «մեծ բարության և արժանիքների տեր» (Ցիցերոն) մի մարդ։ Եղել էր ժողովրդական տribուն (50 թ.) էդիլ, պրետոր, կոնսուլ, Անտոնիոսի ժամանակ՝ Ասիայի կուսակալը։

հանչել Պոմպեոսի և Սպարտակի առաջ... Ինչ էլ խոստանալու լինի ապագան, պետք է համարձակորեն դիմավորել նրան... Եվ, իրոք, ո՞ւմ է ստույգ հայտնի, որ փառատենչությունն իրեն ողբալի վախճանի կհասցնի... Իսկապես, ո՞ւմ։

Մի պահ բարձրացնենք Կրասոսի և նրա սպաների համար փակ ճակատագրի քողը։ Տեսնենք, թե նա ինչ ապագա կնախապատրաստի իր համար կյանքի մայրամուտին...

II

... Եվ այն ժամանակ, երբ ավնվաղարմ ունկնդիրներն սկսեցին ծափահարել փառավոր Տրալոս քաղաքի ծնունդ Յասոնի պերճախոս արտասանությանը, դահլիճ մտավ պարթևների քաջարի զորավար Սկիլակոսը։ Իր հաղթական զինակիցների ուղեկցությամբ, նա հարգալից մոտեցավ իր թագավորին և նրանց հետ միասին բերանքսիվայր ընկավ Օրոդես արքայի դիմաց։ Երբ բոլորը լռեցին, նա ասաց.

— Օ՜, արքայից արքա։ Քեզ եմ բերել չարագործ Կրասոսի գլուխն ու աջը։ Նա, որ ուղարկված էր ուխտադրուժ հռոմեացիների կողմից, համարձակվել էր ձեռք բարձրացնելու քո տիրապետությունների վրա։ Իր հանցանքի համար նա կյանքով վճարեց։ Տիրակալ, հավատարիմ զինվորներիցդ ողորմածաբար ընդունիր մարտական ավարը...

Եվ Սկիլակոսը կանգնեց ու արքային տվեց Կրասոսի աջը, այն ձեռքը, որով հռոմեական զորավարը վիրավորական նամակներ էր գրում, իսկ նրա գլուխը պարթևների խնդալից գոչյունների ուղեկցությամբ, պարթևների, որ խնջույքի սեղանի շուրջ հայերի հետ տոնում էին խաղաղության դաշնագիրը և Պարթևացոց Օրոդես արքայի որդու և Հայոց Արտավազդ արքայի քրոջ նշանադրությունը, նա՝ Կրասոսին հաղթող մեծն Սուրենի զինակից, քաջարի զորավար Սկիլակոսը, հռոմեացու գլուխը շպրտեց դահլիճի կենտրոնը։

Հյուրերը խնդագին գոռում էին և ծափահարում։ Իսկ արքան, վերցնելով Կրասոսի աջը և հյուրերին փոխանցելով, ասաց. «Ես գոհ եմ, իմ Սկիլակոս...»

Եվ արքան ծառային հրամայեց հարգանքով հրավիրել Սկիլակոսին բազմելու արքայի բարեկամների կողքին և տեղավորել նրա զինակիցներին ըստ իրենց կարգի։ Եվ ծառաները հոգ տարան արքայական պատվավոր հյուրերի մասին։ Բազ-

Ֆոցի վրա Սկիլակոսի հետ միասին ընկողմանեցին նրա բոլոր փառաբանված զինակիցները։

Իսկ Յասոնը՝ Տրալոս քաղաքի ողբերգակ դերասանը, խանդավառ մոլուցքով բռնված, խլեց Կրասոսի գլուխը և սկսեց այսպիսի բանաստղեր արտասանել.

Մեր ոսի երջանիկ ավարը
Լեռներից դեպի պալատ ենք տանում...

Իսկ երբ հասավ այս տողին,

Իսկ ո՞վ է սպանել նրան...

փառաբանված զորապետ էքսատորոսը՝ Կրասոսի շուրջը տեղի ունեցած վերջին գոտեմարտի մասնակիցը և նրա ձեռքն ու գլուխը կտրողը, արագությամբ վեր թռավ տեղից, Յասոնի ձեռքից խլեց գլուխը, բարձրացրեց վեր և բոլորի առջև հայտարարեց.

Ե՛ս։ Իմն է սխրանքն այս...

Եվ հավաքվածները բուռն ծափահարեցին, իսկ հիացած արքան, նախնիների սովորության համաձայն, պարգևատրեց նրան։ Եվ հաղթանակն էր տոնում հայոց հինավուրց մայրաքաղաք Արտաշատը։

Հռոմեական նռապետ և զորավար Կրասոսի անունը, նրա, ով ցանկանում էր նվաճել Պարթևների պետությունը և թափանցել Հնդկական օվկիանոսի ափերը, նոր ստորացումների ենթարկվեց մայրաքաղաքի նշանակություն ունեցող պարթևների հարուստ ու փառավոր Սելևկիա քաղաքում։

Քաղաքով մեկ անցնում էր հաղթական երթը։ Առջևից ուղտերի վրա ճոճվում էին գերի փողհարները և լիկտորները՝ սրանց տապարների վրա տնկված էին հռոմեացիների կտրված գլուխներ, իսկ ճիպոտներից կախված էին քսակներ, որոնք հռոմեական հրամանատարները ցանկանում էին լցնել պարթևական ոսկով։ Հետևից գնում էին դերասանուհի-հետերաներ, նրանք ծաղրական երգեր էին երգում Կրասոսի փոքրոգության և նրա ռազմական անճարակության մասին։ Նրանց հետևից ձիու վրա ցնցվում էր Կրասոսին շատ նման կանացի հագուստ հագցրած հռոմեական մի զինվոր՝ Գ. Պակցիանոսը։ Պարթև զինվորները մտրակներով ծեծում էին նրան, նա ցավից ջղաձգվում էր և նրանց այն հարցին, թե՝ «Ո՞ւր ես, Կրա՞սոս։ Որտե՞ղ ես,

իմպերա՞տոր»,— նա դողալով պատասխանում էր, ինչպես հրամայված էր. «Այստե՞ղ եմ... Ես Կրա՞սոսն եմ... Ես իմպերա՞տորն եմ...»։

Եվ խնդագին պարթևների մեջ կանգնած շատ հույներ, որոնք անհամբերությամբ սպասում էին Կրասոս-աղատարարին, չէին կարողանում թաքցնել իրենց դառը ծիծաղը։ Բայց նրանց ժպիտն անմիջապես սառչում էր շուրթերին, երբ տեսնում էին փոշեծածկ ռազմիկներին, պարթևների սարսափելի հեծելազորը, որի և՛ մարդիկ, և՛ ձիերը պատված էին արևի տակ կուրացուցիչ փայլող երկաթյա և պղնձյա զրահով։

Այո՛, Լ. Դոմիցիանոսի և Մ. Վալերիոս Մեսալայի կոնսուլության օրոք (մ. թ. ա. 53 թ.) մեծագույն խայտառակությամբ ծածկվեցին հռոմեական զենքն ու դրոշները։ Եվ այդ ամենի մեղավորը դարձավ Կրասոսը, հռոմեական արիստոկրատներից ամենահարուստը, Գալլիայի կուսակալ Կեսարի պատրոնը, փառքի և Հռոմին լիակատար տիրելու հարցում Պոմպեոսի վաղեմի ախոյանը, մի մարդ, որ «Սպարտակին հաղթողի» կոչման հավակնություն ուներ...

Իսկ ինչպե՞ս պատահեց, որ այդքան մեծ կենսական և քաղաքական փոչՃ կուտակած վաթսունամյա Կրասոսը նման անարժան և խշճուկ վախճան ունեցավ։

Թե՞ նրա ճակատագիրն էր այդպես ի սկզբանե...

III

Մարկոս Կրասոսի մանկությունը անամպ չէր, բայց երջանիկ էր։ Նա ծնվել էր շատ ազնվագարմ ընտանիքում (մ. թ. ա. 113 թ.)[1], ապրել էր ինչպես իր շրջապատի բոլոր տղաները, զույգ ավագ եղբայրների հետ գնդակ, ընկույզներ, մարտակառք, զույգ թե կենտ, դատարան-դատարան, պատերազմ-պատերազմ էր խաղացել, հիացմունքով լսել էր հոր պատմությունները նախնիների փառավոր քաջագործությունների մասին։ Սովորել էր

[1] *Նրա նախնիներից մեկը՝ Պ. Լիցինիոս Կրասոս «Հարուստը» Հաննիբալի գեմ պայքարի ժամանակաշրջանում գերագույն պոնտիֆիկոս էր, մյուսը՝ Պ. Լիցինիոս Կրասոս Մուցիանոսը կոնսուլ էր, գերագույն պոնտիֆիկոս, Փոքր Ասիայում Արիստոնիկոսի ապստամբությունը ճնշելու համար ուղարկված բանակի հրամանատարը։ Պարտվելով Լեկտրիքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, ընկավ թրակացու ձեռքով և հաղիվ գերի չընկավ (մ. թ. ա. 131 թ.)։ Նա նշանավոր հռետոր էր, իրավունքի գիտակ, Տիբերիոս Գրակքոսի բարեկամը և ռեֆորմների ձրագրման մասնակիցներից մեկը, Գայոս Գրակքոսի անները։*

Հռոմեական դպրոցում, որտեղ խստադույն կարգապահություն էր տիրում, և ուրիշների նման քանոնի հարվածներ էր ստացել ձեռքերին, ուսերին, գլխին։

Ստոյին ուժեղ ցնցումը, որը երբեք չմոռացավ, նա ճաշակեց տասը տարեկանում։ 104 թվականին Սիցիլիայում սկսվեց ստրուկների երկրորդ ապստամբությունը։ Ապստամբները կոտորեցին պրետոր Պուբլիոս Լիցինիոս Ներվայի (Կրասոսների ընտանիքի ազգականն էր) ջոկատը, կղզու զգալի հատվածում ոչնչացրին հռոմեական ադմինիստրացիան և սեփական պետություն ստեղծեցին, որի գլուխը կանգնեց թագավորը՝ սիրիացի Սալվիոսը։ Նա ընդունեց արևելքում ժողովրդականություն վայելող ուզուրպատոր, նախկին ստրուկ-թագավոր Տրիֆոնի անունը։

Ապստամբ ստրուկներին աջակցում էր սիցիլիական չքավոր դասը։ Հարուստները կորցնելով հողերն ու կարողությունը, խուճապահար փախչում էին Հռոմ՝ օգնություն աղերսելու։ Չորս տարի լարված պայքար էր գնում։ Հռոմեական զորավարները հուսահատ ջանքեր էին գործադրում, ձգտելով ոչնչացնել ապստամբների պետությունը, որն ամենուրեք հուզումներ և խռովություն էր տարածում։

Բուն Հռոմում, որպես սիցիլիական անցքերի առձապանք, կրկին բորբոքվեց պոպուլյարների և սենատի սուր պայքարը։ Պոպուլյարների առաջնորդներ Լ. Սատուրնինը և Գ. Գլավցիոսը միանալով նշանավոր զորապետ, հեծյալների դասի ազդեցիկ առաջնորդ Գ. Մարիոսին՝ ձգտում էին վերականգնել Գրակքոս եղբայրների պարտությունից և զոհվելուց հետո սասանված իրենց դիրքերը։

101 թվականին նրանք կարողացան մեծ հաջողության հասնել. 100 թվականի համար կոնսուլ ընտրել Գ. Մարիոսին (վեցերորդ անգամ), Լ. Սատուրնինին՝ տրիբուն, Գ. Գլավցիոսին՝ պրետոր։

Այս իրադարձությունները երեխա Կրասոսի վրա անմիջական ազդեցություն թողեցին։ Բազմիցս նա ականատես էր լինում թեժ վիճաբանությունների, որոնք տեղի էին ունենում տանը՝ ճաշի սեղանի շուրջը, երբ հավաքվում էին հայրը, երկու ավագ եղբայրները, բազմաթիվ ազգականներ և բարեկամներ։ Հաճախակի նրանց մեջ էր լինում նաև սենատի պրինցեպս էմիլիոս Սկավրոսը՝ Հռոմի ամենահարգարժան դեմքը։

13 տարեկանում Մ. Կրասոսն առաջին անգամ անձամբ տեսավ պոպուլյարների և սենատի վայրենի պայքարը։ Նախ, բախումներ առաջացան Սատուրնին տրիբունի օրենքների պատճառով (մեկ մոդի հացի գինը 5/6 ասայի իջեցնելու, պրովինցիաներում գաղութներ հիմնելու, Մարիոսի վետերաններին հողեր հատկացնելու։ վերաբերյալ), հետո, Սատուրնինի՝ կրկին տրիբուն դառնալու, իսկ Գլավցիոսի՝ կոնսուլ դառնալու ցանկությունների պատճառով։

Ինչպես Գրակքոսների ժամանակ, պայքարը կրկին վերածվեց անօրինականությունների շղթայի՝ ժողովրդական հավաքի ցրում ուժ գործադրելով, թշնամի կուսակցությունների անցանկալի թեկնածուների սպանություններ (առաջինն ընկավ սենատի կողմնակից Գ. Մեմիոսը, նրանից հետո՝ պոպուլյարների առաջնորդներ Գլավցիոսը և Սատուրնինը)։

Մարիոսը վճռական պահին, ինչպես ասում էին, նահանջեց իր դաշնակիցներից։ Համայն հասարակության աչքին իրեն խիստ վարկաբեկելով երկիմաստ քաղաքականությամբ, նա ստիպված եղավ Հռոմից հեռանալ դեպի արևելք, իբր թե աստվածների Մայր Կիբելեին երկրպագելու ցանկությունից դրդված։

Հաղթողներն անմիջապես վերացրեցին ժողովրդական ժողովի միջոցով Սատուրնինի անցկացրած ատելի օրենքները։ Դատարանի նրա կողմնակիցներին մասսայաբար աքսորեցին։

Հեծյալների դասը չէր խոչընդոտում դրան։ Զբաղված լինելով առևտրով ու վաշխառությամբ, այն մտածում էր միայն ամենամոտիկ պահի շահութաբերության մասին։ Իրենց ենթակա դատարանների միջոցով հեծյալները վերացնում էին պրովինցիաների բոլոր կուսակալներին, որոնք խանգարում էին նրանց իրագործել իրենց «գործարար», այսինքն՝ թալանչիական գործողությունները։

Հեծյալների սանձարձակությունը ծայրաստիճան զայրացրեց սենատին և նոր դրամատիկական բախում նախապատրաստեց՝ երկու դասերի ուղղակի ընդհարում։

Սենատական կուսակցության շափավոր տարրերը տեսնում էին այդ բանը։ Նրանք ջանասիրաբար զանազան նախագծեր էին մշակում, որոնց իրագործումը պետք է որ կանխեր պայքարը և հետագայում էլ անհնարին դարձներ։

Այդ տարիները Մ. Կրասոսի պատանեկության տարիներն էին։ Երբ լրացավ նրա տասնվեց տարին, հայրը, որ հայտնի

զորավար էր, օժտված ու հարգված, իր մեջ արդարամտությունը խստության և գթասրտության հետ զուգակցած մի անձնավորություն, դարձավ հանրապետության բարձրագույն դեմքը՝ կոնսուլ։

Մեկ տարի անց տասնյոթամյա Կրասոսը, հաճույքով թողնելով իր դաստիարակ հռետորին, հոր հետ մեկնեց Հեռավոր Իսպանիա պրովինցիան։ Այստեղ Պ. Կրասոսը որպես կուսակալ հաջող պատերազմ էր մղում ապստամբած լուզիտացիների դեմ (96—94 թթ.), իսկ որդին զինվորական ծառայություն էր անցնում, մասնակցելով արշավանքներին, ռազմական գործի առաջին դասերն էր առնում։

93 թվականին, դիվանագիտությամբ և զենքով հնազանդեցնելով լուզիտացիներին, Պ. Կրասոսը որդու հետ վերադարձավ Հռոմ։ Իսպանական հաղթանակների պատվին նա արժանացավ տրիումֆի, որին ըստ հռոմեական սովորության, մասնակցեցին նաև նրա ընտանիքի անդամները։

Տրիումֆի ռազմակառքի մեջ հոր հետևը կանգնած քսանամյա Կրասոսը, հիացմունքով լսելով հռոմեական խայտաբղետ ամբոխի ողջույնի բացականչությունները, մտովի տեղափոխվել էր այն վայրերը, որտեղ դժվարին, բայց հրաշալի տարիներ էր անցկացրել, որտեղ բազմաթիվ նոր ընկերներ էր թողել... Եվ նա երազում էր այն օրը, երբ ինքը, հոր նման, կդառնա նշանավոր զորավար, փայլուն հաղթանակներ տարած տրիումֆատոր։

Երիտասարդ Կրասոսը տրիումֆից հետո կրկին խորասուզվում է հռոմեական առօրյա և հոգսաշատ կյանքի մեջ։ Նա շփվում է ընտրագույն հասարակության հետ, ուսումնասիրում պատմություն և փիլիսոփայություն։ Առանձնահատուկ եռանդով զբաղվում է հռետորական արվեստով, ինչը մշտապես խրախուսում է հայրը, որն ինքն էլ ականավոր հռետոր էր և երիտասարդության դաստիարակ։

Այո՛, հայրը սիրում էր երիտասարդներին, որոնց համար միշտ լայնորեն բաց էին նրա տան դռները։ Հոր փորձառու ղեկավարությամբ հռետորական մարտերի են բռնվում ապագայի փայլուն հռետորները, քաղաքագետներն ու զորավարները, որոնց ճանապարհները հետագայում խիստ կբաժանվեն, որոնց վիճակված կլինի թշնամություն անել միմյանց դեմ. Կվ. Հորտենզիոսը (21 տարեկան), Դեցիմոս Բրուտոսը (26 տարեկան), երկու Լեպիդոսները՝ Մարկոսը և Մամերքոսը (26 տարեկան),

Կվ. Սերտորիոսը (30 տարեկան) և տակավին պատանյակները, դեռևս ամաչկոտ Մ. Տիցերոնը (13 տարեկան), Գն. Պոմպեոսը (13 տարեկան), Լուկուլլոս եղբայրները (13 և 12 տարեկան) և ուրիշներ։

Մ. Կրասոսի կյանքում սկսվում է ամենաերջանիկ, ամենաանամպ ժամանակաշրջանը։ Ոչնչով դեռ երևան չի գալիս ապագայի Կրասոսը, այն Կրասոսը, որին Պոմպեոսի հետ կապված դեմագոգ-տրիբուն Լ. Սիցինիոսը քաղաքական պայքարում ցուցաբերած կատաղության համար կոտա «ցուլ՝ ծղոտը եղջյուրների վրա» մականունը։

Այո՛, պատանի, զվարթ, գեղեցկադեմ, վայելչակազմ, բարեհամբույր, քաղաքավարի և բարյացակամ Մարկոս Կրասոսը միշտ պատրաստ է բոլորին օգնել։ Նա սիրված է ընկերների, հոր, ավագ եղբայրների և նրանց ջահել կանանց կողմից։ Առաջվա պես, ամեն օր հավաքվում են համերաշխ հայրական տանը, միասին ճաշելու։

Տարեցտարի Կրասոսն ավելի վստահորեն է ներգրավվում Ֆորումի գործերի մեջ։ Մեծ հաջողությամբ անցկացնում է առաջին դատական գործերը, հայրական տանը նորանոր աղդեցիկ մարդկանց հետ է շփվում։ Դրանց մեջ ամենահետաքրքիր մարդը՝ նոր անվախ ռեֆորմատոր Լիբիոս Դրուզոսն է (Մ. Կատոն Կրասերի հորեղբայրը)։ Երիտասարդ Կրասոսին դուր են գալիս նրա կրակոտ, անկեղծ համոզմունքով լի ճառերը։ Դրուզոսը մտադիր է վերափոխել ամբողջ պետական կառուցվածքը և վերացնել դասային սուր պայքարը՝ սենատի մեջ մտցնել 300 հեծյալների և դրանով հավասարեցնել հակառակորդ դասերի իրավունքները, դատարանը նորից դարձնել սենատական, ժողովրդի համար ընդլայնել հացի էժանացված վաճառքը։ Կամպանիայում և Սիցիլիայում գաղութներ հիմնել, Հռոմի դաշնակիցներին քաղաքացիական իրավունքներ տալ։

Պարզ, բայց պետության համար օգտակար օրինագծեր։ Կրասոսի համար հեշտ է դա հասկանալը և է՛լ ավելի հեշտ ընտրություն կատարելը. չէ՞ որ 34-ամյա Դրուզոսի՝ աղնվագույն սենատորի և քաղաքացու, ջերմագին կողմնակիցներն են հայրը և ավագ եղբայրները։

Որպես ժողովրդական տրիբուն, Դրուզոսի 91 թվականին առաջ քաշած օրինագծերը խիստ դիմադրության են հանդիպում սենատի ծայրահեղ պահպանողական տարրերի կողմից։ Իր գա-

գանձարանները կյանքի կոչելու նպատակով, Դրուզոսը օրինագծերի ընդունումը հանձնում է ժողովրդական ժողովին։ Այստեղ, բուռն վիճաբանություններից հետո, դաշնակիցների խնդրից բացի, մնացած բոլոր հարցերում նրան հաջողվում է հասնել հաջողության։ Այնժամ կատաղած հակառակորդները, լիակատար պարտությունից վախենալով, նրա մոտ մարդասպան են ուղարկում...

Դրուզոսի, որին քսաներկուամյա Կրասոսը գրեթե իր հասակակիցն էր համարում, ողբերգական վախճանը խորապես ընկնց նրան։ Կրասոսին առավել ցնցեց դրան հաջորդած Դաշնակցային պատերազմը։

Հուսախաբ լինելով, դաշնակիցները (լեգեոններում ծառայող ոչ հռոմեական քաղաքացիները) որոշեցին քաղաքացիական իրավունքներ ձեռք բերել զենքի օգնությամբ։ Հենվելով գաղտնի կազմակերպության վրա, որի պարագլուխը կենդանության օրոք Դրուզոսն էր, նրանք ապստամբություն բարձրացրին, հայտարարեցին «Իտալիա» անունով նոր պետության ստեղծման մասին և օգնության խնդրանքով դիմեցին պոնտական արքա Միհրդատին։

Դաշնակիցների բացահայտ ելույթը Հռոմում իշխանության գլուխ դրեց ռազմական կուսակցությանը։

Շուրջ երկու տարի (մ. թ. ա. 90—88 թթ.) համառ ու դաժան պայքար էր գնում։ Հռոմեական զորքը բազմաթիվ անհաջողություններ կրեց։ Հանրապետությանը ճգնաժամային իրադրությունից փրկեց Միհրդատի խոշոր անհաջողությունը. նրան չհաջողվեց պոնտական բանակը Իտալիայի ափերը դուրս բերել։ Ռազմական բոլոր գործողություններն ընթանում էին բացառապես միայն ծայրամասերում՝ Մակեդոնիայում, Հունաստանում, Փոքր Ասիայում, Եգեյան ծովի կղզիներում։

Ռազմական կուսակցության փայլուն հաղթանակների բացակայությունը հնարավորություն տվեց ռեֆորմատորների կուսակցությանը կրկին ոտքի կանգնել։ 89 թվականի մի շարք օրենքներով (դրանց անցկացմանը շատ օգնեց Կրասոսի հայրը, որն այդ ժամանակ ցենզոր էր) հաջողվեց իտալիկական շատ ցեղերի համոզել դադարեցնելու պայքարը։ 88 թվականին ապըստամբների ամենափայլուն զորապետ Պոմպեդիոս Սիլոնի զոհվելուց հետո, հռոմեացիներին հաջողվեց ճնշել դիմադրության վերջին օջախները։

Արյունահեղ պայքարն ավարտվեց։ Իտալիայի ազատ բնակչությանը, բացառությամբ լուկանիների և սամնիտների, հռոմեական քաղաքացիության իրավունքներ տրվեցին, նրանց հատկացնելով ութ տրիբներ (դրանով նկատի էր առնվում թուլացնել նրանց ազդեցությունը պետության քաղաքական գործերի վրա)։

Դաշնակցային պատերազմը երիտասարդ Կրասոսի համար դարձավ երկրորդ պատերազմը, որին մասնակցեց։ Այդ պատերազմը նրա վրա ծանր տպավորություն թողեց բազմաթիվ մարդկանց մահերով, մարդիկ, որոնք մինչև պատերազմը հաճախ էին լինում նրանց տանը, որոնց նա անձամբ ջերմորեն էր վերաբերվում... Այն ժամանակ Կրասոսը դեռևս չգիտեր, որ ամենավատթարը, ամենադժվարինը իր համար դեռ առջևում է...

Դաշնակիցների «Իտալիա» պետությունը վերացնելուց հետո հռոմեացիների համար մնաց մեկ թշնամի՝ Միհրդատը։ Նրա դեմ մղվելիք պատերազմում գլխավոր հրամանատարի պաշտոնին հաղորդում էին դաշնակցային պատերազմում իրենց ամենից լավ դրսևորած երկու զորավարներ. հեծյալների ներկայացուցիչ Մարիոսը և սենատի ներկայացուցիչ Սուլլան։ Մարիոսը կարողացավ նոր դաշինք կնքել պոպուլյարների կուսակցության ներկայացուցիչ, ժողովրդական տրիբուն Պ. Սուլպիցիոս Ռուֆուսի և նրա ընկերների հետ։ Մարիոսի զինվորների օգնությամբ անցկացվեցին նրանց կողմից առաջարկված օրենքները (Սատուրնինի գործով Հռոմից արտաքսվածների վերադարձ, ամենաշարանենգ պարտապանների հեռացում սենատից, իտալիկների տեղաբաշխում ոչ թե 8, այլ 35 տրիբների միջև), և այսպիսի ծառայության համար Մարիոսը ստացավ հրամանատարի պաշտոնը։ Բայց Սուլլան և նրա արևելյան շահութաբեր արշավանքին անհամբերությամբ սպասող բանակը չենթարկվեցին ժողովրդական ժողովի որոշմանը։ Բորբոքված բանակն արշավեց Հռոմի վրա և գրավեց, կարծես թշնամու քաղաք էր գրավում։ Պ. Սուլպիցիոսը և նրա երևելի կողմնակիցները սպանվեցին։ Մարիոսը հասցրեց փախչել։ Սուլլան վերացրեց նոր օրենքները, ուրիշներն անցկացրեց Հոգուտ սենատի, կոնսուլական ընտրություններ կազմակերպեց և գործերն ավարտելով, բանակով շարժվեց դեպի արևելք։

Նրա բացակայության ժամանակ բացահայտ և գաղտնի մարիոսականները կոնսուլներից մեկի՝ Հ. Կեսարի ապագա աներ, Լ. Ցինայի գլխավորությամբ փորձեցին փոխել սահման-

ված նոր կարգերը, բայց պարտվեցին և փախան Հռոմից։ Միառժամանակ անց, Ցինային, այնուամենայնիվ, հաջողվեց ուժ հավաքել։ Աֆրիկայից վերադարձած Մարիոսի հետ նա գրավեց Հռոմը և սենատական կուսակցության անդամների վայրենի կոտորած սարքեց։ Փախստականների հետևից հետապնդողներ ուղարկեց։ Հետապնդողներին հաջողվեց նախ բռնել և սպանել Կրասոսի եղբայրներից մեկին, իսկ հետո հայր-Կրասոսին ու նրա հետ փախած ավագ որդուն, որին Ցինան առանձնապես ատում էր։ Համոզվելով, որ փրկություն չկա, հայր-Կրասոսը իր ձեռքով սպանեց որդուն, որին թշնամիները դաժան տանջանքներ էին նախապատրաստել, իսկ հետո ինքնասպան եղավ։

Կրտսեր Կրասոսին (ճակատագրական պահին նա Հռոմում չէր) հաջողվեց խուսափել անմիջական վտանգից։ Քանի որ նրան ամեն կողմից շրջապատում և հետամտում էին, իսկ ընտանիքի բարեկամները վախից հապճեպ երես էին թեքել, ապա նա որոշեց թողնել Իտալիան։ Իսպանիայում միասին ծառայած երեք ղինակից ընկերների հետ, որոնց մարիոսականները նույնպես հետապնդում էին, և տասը ծառաների ուղեկցությամբ Կրասոսը փախավ պրովինցիա, հույս ունենալով այնտեղ թաքնվել թշնամիների սպառնալիքից։ Ճանապարհին շատ դժբախտությունների և արկածների հանդիպեց։

Մեծագույն դժվարությամբ 27-ամյա Կրասոսը հասավ այնտեղ, որտեղ, իր կարծիքով, երեք տարվա ընթացքում բավականաչափ բարեկամներ էր ձեռք բերել։ Բայց, ավա՜ղ, բարեկամության մասին ո՞վ է հիշում ճակատագրի նման փոփոխությունների ժամանակ։ Յուրաքանչյուրը, ում օգնության համար դիմում էր Կրասոսը, մերժում էր, վախենալով Մարիոսից։ Հին ծանոթներից միայն մեկը՝ Վիբիոս Պացիանոսն, իսկական բարեկամ և տղամարդ դուրս եկավ։ Անտեսելով վտանգը, նա ութ ամսվա ընթացքում ծովամերձ քարայրում թաքնված Կրասոսին ու նրա ընկերներին ուտելիք էր մատակարարում և քաղաքական նորություններն էր հաղորդում երկու գեղեցիկ աղախինների միջոցով, որոնց նա ուղարկել էր Կրասոսի մոտ՝ քարանձավում ապրելու։

Այդ ժամանակամիջոցում, երբ Կրասոսն ու նրա ուղեկիցները աշխարհից կտրված, մահվան մշտական վտանգի տակ, գտնվում էին քարանձավում, կեցության բարդությունների մասին խորհելու շատ ժամանակ ունեին։ Եվ նրանք միմյանց դրժ-

վարին փիլիսոփայական խնդիրներ էին առաջադրում. ի՞նչ բան է փառքը և ի՞նչ է մարդը։ Ինչի՞ համար է ապրում։ Աշխարհում աստվածներ իսկապես գոյություն ունե՞ն և նրանք արդյոք խառնվո՞ւմ են մարդկային ճակատագրին։ Աշխարհում արդյոք գոյություն ունի՞ բարեկամություն։ Ո՞րն է կյանքի և մահվան դինը։ Ինչպե՞ս բարձրանալ պաշտոնի սանդուղքով։ Թույլատրելի՞ է շահի համար դավաճանել սկզբունքներին և սեփական կուսակցությանը։

Խնդիրները տանջալիորեն բարդ էին, և խմբակի մասնակիցների միջև կատաղի վիճաբանություններ էին ծավալվում։ Կրատոսը մնացածներից շուտ հանգեց միանգամայն որոշակի եզրակացությունների, որոնք հերքում էին հռոմեական բազմաթիվ ավանդություններ։ Նա ամեն կերպ ծաղրում էր «աստվածների կամքի» վերաբերյալ խոսակցությունները։ Ամենաուժեղ փաստարկը, որ նա բերում էր ի պաշտպանություն իր հայացքների, նույնն էր, ինչ հետագայում Լուկիանոսն էր վկայակոչում։ «... Ինչո՞ւ այդ Թոկիոնի պես առաքինի մարդը մահավ աղքատության մեջ, ամենաանհրաժեշտ բաների կարիքը զգալով, նրանից առաջ նաև Արիստիդեսը՝ ճիշտ նույն կերպ, իսկ սանձարձակ պատանիներ Կալիոսը և Ալքիբիադեսը լողում էին հարբստության մեջ հանդուգն Միդիասի և նազկալիագույն անառակ, սեփական մորը սնվատանջ արած էգինացի Քիրոպսոսի հետ միասին։ Եվ ինչո՞ւ, այնուհետև, Սոկրատեսը հանձնվեց Տանտալի ճակատը, իսկ Մելետոսը՝ ոչ։ Ինչու Սարդանապալը՝ իսկական մի կնիկ, թագավոր էր։ Իսկ ինչքա՞ն հրաշալի և աղնիվ պարսիկ ոչխարներ խաչվեցին նրա հրամանով այն բանի համար, որ հավանություն չէին տալիս տիրող կարգերին»։

Վերն ասածից Կրատոսը հետևյալ կարևոր եզրակացությունն արեց. առաքինությունը քիչ նշանակություն ունի, «աստվածների կամքի» մասին, որոնք ավելի շուտ գոյություն չունեն, ծիծաղելի է խոսելը, ժամանակակից աշխարհում իշխում են հարբստությունը և ուժը, աղնիվ, բայց հարստությունից զուրկ մարդիկ արժանանում են համընդհանուր արհամարհանքի, մեռնում են աղքատության ու անհայտության մեջ։ Ուստի անհրաժեշտ է ամեն գնով, առանց միջոցների խտրության, հարստություն նվաճել։ Միայն այդ դեպքում կարելի է հաճելի ապրել, իսկ եթե համաձակությամբ էլ ես օժտված, ապա կարելի է դառ-

նալ նաև նշանավոր, անունը գրել պատմության տարեգրության մեջ։

Կրասոսի ընկերների փաստարկները շատ ավելի թույլ գտնվեցին։ Շփոթված իրար նայելով, նրանք չգիտեին էլ ինչպես հակաճառեին, որպեսզի չդառնային Կրասոսի կրքոտ և թունոտ պերճախոսության թիրախը։

Այսպես՝ էլ նրանք ապրում էին, փիլիսոփայական վեճերն ընդմիջելով այլևս անկրկնելի երջանիկ անցյալի հիշողություններով, քաղաքական իրադրության քննարկումներով և ապագայի վերաբերյալ վիհերում հույսերով։

Վերջապես ճակատագիրը ժպտաց նրանց, և բախտի անիվը հանկարծակի շրջվեց։ 84 թվականին Սուլլայի դեմ դեպի Հունաստան արշավանքի նախապատրաստվող Ցինային սպանեցին խռովություն բարձրացրած իր զինվորները (Մարիոսը մեռել էր դրանից առաջ)։ Զարանենգ թշնամու մահվան լուրը ամբողջ սենատական կուսակցությունն ընդունեց խնդությամբ։

Քարանձավում նստելուց ծայրաստիճան հոգնած Կրասոսը անմիջապես դուրս եկավ այնտեղից։ Իսկ երբ նրան հայտնեցին, որ Աֆրիկայում սենատի նշանավոր զորավար Մետելոս Պիոսը (Իսպանիայում Սերտորիոսի դեմ մղվելիք պատերազմում Գնեոս Պոմպեոսի ապագա գործընկերը) հաջողությամբ պայքար է մղում մարիոսականների դեմ, Կրասոսն անհապաղ վճռեց միանալ նրան։ Իր նման փախստականներից և զանազան արկածախնդիրներից կազմված ջոկատով նա նավեց անցավ Աֆրիկա։

Սակայն Կրասոսը Մետելոսի հետ լեզու չգտավ և իր մարդկանց հետ ճանապարհվեց Հունաստան՝ Սուլլայի մոտ։ Վերջինս համալրումը հաճույքով ընդունեց։ Կրասոսը, որպես սպա, բազմիցս կատարեց զորավարի զանազան հանձնարարությունները և կարողացավ արժանանալ Սուլլայի պատվին ու հարգանքին։

30-ամյա Կրասոսը Սուլլայի հետ վերադարձավ Իտալիա և մասնակցեց մարիոսականների դեմ պատերազմին։ Նա արդեն կենսական մեծ փորձ էր կուտակել, զիտեր խոսքերի, ընկերների և դրամի իսկական արժեքը։

Սուլլայի հանձնարարությամբ Կրասոսը սկզբում զորք էր հավաքում, իսկ հետո նրան զորամասերի հրամանատարություն վստահվեց։ Ամբողջ ուժերով նա ձգտում էր չափվել 28-ամյա Պոմպեոսի հետ, երիտասարդ, չափազանց հաջողակ մի զորա-

վարի, որին փայլուն հաղթանակների համար Սուլլան «իմպերատոր» պատվավոր զինվորական կոչում էր շնորհել։

Պոմպեոսի հետ մրցակցությունը Կրասոսին բազմաթիվ անքուն գիշերներ էր բերում։ Հոգու խորքում նա գիտակցում էր, որ զինվորական պատրաստությամբ զգալիորեն զիջում է Պոմպեոսին, որ ինքը խոշոր ռազմական գործողություններ վարելու փորձ չունի։ Վերջին հաշվով դա բնական էր. Պոմպեոսի հայրը փայլուն զորավար էր եղել, մանուկ հասակից նրան նախապատրաստել էր զինվորական գործին և այդ արվեստի բազմաթիվ գաղտնիքներ հաղորդել որդուն։ Իսկ Կրասոսի հայրը որդուն ցանկանում էր տեսնել որպես մեծ հռետոր և քաղաքագետ...

Մ. Կրասոսը տառապելիորեն փոխվում էր աչքի առաջ։ Հանկարծ նա ասես թե մեկեն դարձավ նախանձոտ, ագահ ու ժլատ, ընկղմվեց կեղծավորության ու երեսպաշտության մեջ։ Նախանձը նրա մեջ ծնում էր անհաջող մրցակցությունը Պոմպեոսի հետ, կեղծավորությունն ու երեսպաշտությունը՝ իրենից բարձր կանգնածների հետ ունեցած հարաբերությունները. նա դրանք ցանկանում էր օգտագործել իր հառաջադիմության համար։ Վերջապես, ագահությունն ու ժլատությունն ծնեց ունեցվածքի կորուստը, ունեցվածք, որ բռնագրավել էին մարիոսականները։

Պատերազմի հետևանքով առաջացած անօրինականության մթնոլորտը շուտով նաև նոր արատներ ավելացրեց։ Ռազմական գործողությունների ընթացքում Կրասոսն սկսեց գործնական խնդիրներով զբաղվել, տուգանքներ նշանակել, ինքնակամ բռնագրավումներ կատարել, պատեհ առիթով յուրացնելով ավարի մի մասը։ Դրանով նա իր հասցեին շատ դժգոհություններ առաջացրեց։

Բայց և այնպես նրան գնահատում էին կուսակցությանը նվիրված լինելու, քաջության և վճռականության համար, Հռոմի պարիսպների մոտ վերջին մարտի ժամանակ ցուցաբերած հերոսության համար, երբ բանակն արդեն փախուստի էր դիմել, իսկ նա թշնամուն Կոլինյան դարպասի մոտ հետ շպրտեց և դրանով փրկեց ամեն ինչ...

Մտնելով Հռոմ, Սուլլան անխնա հաշվեհարդար տեսավ սենատոր-համաձայնողականների (90 հոգի) և հեծյալների դասից իր թշնամիների հետ (2600 հոգի)։ Նրանց դույքը աճուրդի հանեց։ Ցանկանալով ֆորուսների դիմաց ինքն իրեն փոխհատուցել, Կրասոսն, առանց ուշադրություն դարձնելու ասեկոսե-

նեցի և անեծքների վրա, առաջիններից մեկն սկսեց դնել նրանց ունեցվածքը։ Հասավ այն բանին, որ հետ ստացավ նաև տոհմական ունեցվածքը (300 տաղանդ գումարի չափով)։ Ընտանիքի հարստությունից ոչինչ չկորցնելու համար նա ամուսնացավ սպանված եղբոր կնոջ՝ Տերտուլայի հետ (այդ որոշումը նա հնչությամբ կայացրեց, որովհետև նրան վաղուց էր հավանում)։

Տերտուլայից, որը հետագայում Կեսարի սիրուհին դարձավ, Կրասոսը երկու որդի ունեցավ՝ Պուբլիոս և Մարկոս։ Առաջինը հետագայում դարձավ Կեսարի հեծելազորի հայտնի սպա (Հռոմում խոսում էին, թե Պուբլիոսը, իբր, Կեսարի իսկական որդին է)։ Երկրորդը, հոր նման, զբաղվում է ֆինանսական գործունեությամբ և Գալլիայում Կեսարի մոտ քվեստորի պաշտոն ստացավ։ Նրան էլ զանց չառան քաղաքի բամբասողները. պընդում էին, թե նա իրականում սենատոր և բանկիր Ակվիլիոսի որդին է, որին, իսկապես, դեմքով նման էր։

Ընտանեկան կյանքում Կրասոսը հոգատար ամուսին էր, ուշադիր հայր և հիանալի դաստիարակ։ Նրա որդիները Հռոմում հռչակված էին որպես զուսպ, խելոք և համեստ երիտասարդներ։ Դրա վրա զարմանում էին, որովհետև արքայական այդ հարստության մեջ դժվար էր հոգևկան լավ արժանիքներ պահպանել, այն էլ Հռոմում, որտեղ աղնվատոհմիկ երիտասարդությունը պատանի հասակից լողում էր գինու և խնջույքների մեջ (Կվ. Արիոսի որդիներն, օրինակ, հայտնի էին որպես քեֆշիներ, նոր տեսակի՝ սոխակի տապակայի հորինողներ)։

Հռոմից ռեպրեսիաների ալիքը տարածվեց Իտալիայով մեկ։ Ջինված ջոկատների ուղեկցությամբ շրջիկ դատարաններն ամենուրեք փնտրում էին պարտված կուսակցության կողմնակիցներին և անխնա կոտորում։ «Մեղադրության առիթ կարող էր լինել հյուրընկալությունը, բարեկամությունը, դրամ փոխ տալը կամ առնելը։ Դատի կարող էին ենթարկել սովորական ծառայություն մատուցելու կամ ճանապարհորդության ժամանակ ընկերության համար։ Բոլորից շատ վայրագություն ցուցաբերում էին հարուստ մարդկանց հանդեպ» (Ապպիանոս)։

Նման իրադրության մեջ Կրասոսի նոր ձեռք բերած արատները երևան եկան իրենց ամբողջ փայլով։ Նա վախեցնում էր հարուստ մարդկանց և «նվերներ» էր շորթում։ Ստիպում էր իրեն մտցնել առաջնահերթ ժառանգորդների թվի մեջ։ Վերջա-

պես, նա հասավ այն աստիճանի ամբարտավանության, որ օրենքից դուրս հայտարարվածների ցուցակի մեջ մտցրեց Սուլլայի կողմնակիցներից մի քանիսին, որոնք իր թշնամիներից էին։

Նրա վերջին արարքը լցրեց ահեղ դիկտատորի համբերության բաժակը, և նա Կրասոսին հեռացրեց հասարակական գործեր վարելուց։

Կրասոսը վիրավորված էր։ Նա իրեն համարում էր անմեղ տուժած։ Առանձնապես վշտացած էր այն բանից, որ այդպես էլ ռազմական փառքի ասպարեզում չէր կարողացել հավասարվել Պոմպեոսին։

Երեսունմեկ տարեկան Կրասոսն ամբողջովին խորասուզվեց առևտրական և քաղաքացիական գործերի մեջ։ Քառասուն տարեկանում, չխորշելով ոչ մի միջոցից, նա դառնում է Հռոմի ամենահարուստ մարդը։

Եվ այդ բոլոր տարիներին Կրասոսը ջանասիրաբար զբաղվում էր փիլիսոփայությամբ։ Առանձնապես գնահատում էր Արիստոտելին, բայց պնդում էր, թե հավանում է նաև ստոյիկների ուսմունքը։ Ցիցերոնի «Ինչո՞ւ» հարցին նա պատասխանել է. «Ի հաստատումն այն բանի, որ հարուստն առաքինի է»։ «Թե՞ այն բանի համար,— ծիծաղելով հարցրել է Ցիցերոնը,— որ առաքինին հարստության տեր է» (Պլուտարքոս)։

Ավելի մեծ եռանդով, քան փիլիսոփայություն ուսումնասիրելիս, Կրասոսը զբաղվում էր հռետորական արվեստի կատարելագործմամբ, որը դեռ երիտասարդ տարիներին սովորեցնում էր մեծ հռետոր հայրը։ Կրասոսը հաճախակի դատական գործեր էր վարում։

Մի շարք տարիների ընթացքում նա համարվում էր լավագույն փաստաբաններից մեկը։ Ցիցերոնն այսպես է գնահատում նրա ինքնազարգացման համառ աշխատանքի արդյունքները. «Նրա լատիներենը մաքուր էր, բառերը ծեծված չէին, խոսքի կառուցվածքը՝ խնամքով, սակայն առանց կայծկլտումների ու պաճուճանքի, հոգեկան մեծ լարում և ձայնի ոչ մի ճիգ։ Համարյա ամբողջն արտասանում էր նույն տոնայնությամբ և նույն կերպ»։ Չկար այնպիսի մի գործ, որ Կրասոսը չափազանց մանր կամ չնչին համարեր։ Այնպիսի գործ էլ չկար, որից նա շփոթվեր։ Ցիցերոնն իր բարեկամ Ատիկոսին գրած նամակներից մեկում վառ ձևով նկարագրում է, թե ինչ միջոցներով էր նա պայքա-

ռում արդարացնելու համար Պ. Կլոդիոսին, որը դատի էր տրված սրբապղծության համար (Պ. Կլոդիոսը բռնվել էր Կեսարի տանը Բարի աստվածուհու կրոնական տոնի ժամանակ, երբ գաղտնի սողոսկել էր նրա կնոջ մոտ). «Երկու օրվա ընթացքում, մի ստրուկի և գլադիատորների դպրոցի այդ մարդու օգնությամբ նա գլուխ բերեց ամեն ինչ՝ կանչեց, խոստացավ, ձեռ ու ոտ ընկավ, տվեց։ Դեռ ավելին, օ՜ ամենազոր աստվածներ։ Ինչպիսի՜ անկում։ Նույնիսկ որոշակի կանանց մոտ գիշերային այցելությունները և աղնվազարմ պատանիների մոտ մուտք ունենալը ի սպաս էին դրված մի քանի դատավորների, որպես նրանց վճարի հավելում։ Այսպիսով, աղնիվ քաղաքացիների լիակատար բացակայությամբ, երբ ֆորումը լեփ-լեցուն էր ստրուկներով, քսանհինգ դատավորներ այնուամենայնիվ այնքան քաջ գտնվեցին, որ անտեսելով ծայրահեղ վտանգը, գերադասեցին նույնիսկ զոհվել, քան ամեն ինչ կործանել։ Բայց երեսունմեկերորդ դատավորի վրա քաղցն ավելի ազդեց, քան գեշ համբավը։ Կատուլլոսը, նրանցից մեկին տեսնելով, հարցրեց. «Ինչո՞ւ էիք մեզնից պահակախումբ պահանջում։ Գուցե վախի՞ց, որ ձեր փողերը կխլեն»։

Ահա ամենահակիրճ բառերով, թե ինչպիսին էր այդ դատավարությունը և որն էր արդարացման պատճառը։

Դատարաններում նման (շա՜տ հաջող) պաշտպանությունների, սիրալիրությամբ և մատչելիությամբ, հռոմեացի յուրաքանչյուր քաղաքացու դեմքով ճանաչելու և նրան անպայմանորեն անունով դիմելու ունակության օգնությամբ, Կրասոսը ձգտում էր դուր գալ համաքաղաքացիներին և փառքով հավասարվել Պոմպեոսին, որն արդեն Մեծ մականունն էր ստացել։

Դրան ավելացրած՝ Կրասոսը ոչ մեկին չէր մերժում դրամ փոխ տալ, իհարկե, ոչ առանց տոկոսի։ Բացառություն անում էր միայն բարեկամների համար, բայց նշված ժամկետում պարտքը վերադարձնելը պահանջում էր անվերապահորեն։

Կրասոսը զուտ գործարար բարեկամներ շատ ուներ։ Ժամանակ առ ժամանակ դրանց շարքն էր ընկնում նաև Ցիցերոնը, չնայած ընդհանրապես նրանք բաղմաթիվ տարաձայնություններ ունեին, առանձնապես «Կատիլինայի դործով»։ 63 թվականին Ցիցերոնը,— իսկ նա կոնսուլության ժամանակաշրջանի իր ծառայությունների վերաբերյալ չափազանց բարձր կարծիքի էր և դրա մասին արտահայտվում էր հետևյալ վերամբարձ

պես, նա հասավ այն աստիճանի ամբարտավանության, որ օրենքից դուրս հայտարարվածների ցուցակի մեջ մտցրեց Սուլլայի կողմնակիցներից մի քանիսին, որոնք իր թշնամիներից էին։

Նրա վերջին արարքը լցրեց ահեղ դիկտատորի համբերության բաժակը, և նա Կրասոսին հեռացրեց հասարակական գործեր վարելուց։

Կրասոսը վիրավորված էր։ Նա իրեն համարում էր անմեղ տուժած։ Առանձնապես վշտացած էր այն բանից, որ այդպես էլ ռազմական փառքի ասպարեզում չէր կարողացել հավասարվել Պոմպեոսին։

Երեսունմեկ տարեկան Կրասոսն ամբողջովին խորասուզվեց առևտրական և քաղաքացիական գործերի մեջ։ Քառասուն տարեկանում, չխորշելով ոչ մի միջոցից, նա դառնում է Հռոմի ամենահարուստ մարդը։

Եվ այդ բոլոր տարիներին Կրասոսը ջանասիրաբար զբաղվում էր փիլիսոփայությամբ։ Առանձնապես գնահատում էր Արիստոտելին, բայց պնդում էր, թե հավանում է նաև ստոիկների ուսմունքը։ Ցիցերոնի «Ինչո՞ւ» հարցին նա պատասխանել է. «Ի հաստատումն այն բանի, որ հարուստն առաքինի է»։ «Թե՞ այն բանի համար,— ծիծաղելով հարցրել է Ցիցերոնը,— որ առաքինին հարստության տեր է» (Պլուտարքոս)։

Ավելի մեծ եռանդով, քան փիլիսոփայություն ուսումնասիրելիս, Կրասոսը զբաղվում էր հռետորական արվեստի կատարելագործմամբ, որը դեռ երիտասարդ տարիներին սովորեցնում էր մեծ հռետոր հայրը։ Կրասոսը հաճախակի դատական գործեր էր վարում։

Մի շարք տարիների ընթացքում նա համարվում էր լավագույն փաստաբաններից մեկը։ Ցիցերոնն այսպես է գնահատում նրա ինքնազարգացման համառ աշխատանքի արդյունքները. «Նրա լատիներենը մաքուր էր, բառերը ծեծված չէին, խոսքի կառուցվածքը՝ խնամքով, սակայն առանց կայծկլտումների ու պաճուճանքի, հոգեկան մեծ լարում և ձայնի ոչ մի ճիգ։ Համարյա ամբողջն արտասանում էր նույն տոնայնությամբ և նույն կերպ»։ Չկար այնպիսի մի գործ, որ Կրասոսը չափազանց մանրակրկիտ չնչին համարեր։ Այնպիսի գործ էլ չկար, որից նա շփոթվեր։ Ցիցերոնն իր բարեկամ Ատիկոսին գրած նամակներից մեկում վառ ձևով նկարագրում է, թե ինչ միջոցներով էր նա պայքա-

ռում արդարացնելու համար Պ. Կլոդիոսին, որը դատի էր տրված սրրապղծության համար (Պ. Կլոդիոսը բռնվել էր Կեսարի տանը Բարի աստվածուհու կրոնական տոնի ժամանակ, երբ գաղտնի սողոսկել էր նրա կնոջ մոտ). «Երկու օրվա ընթացքում, մի ստրուկի և գլադիատորների դպրոցի այդ մարդու օգնությամբ նա գլուխ բերեց ամեն ինչ՝ կանչեց, խոստացավ, ձեռ ու ոտ ընկավ, տվեց։ Դեռ ավելին, օ՜ ամենազոր աստվածներ։ Ինչպիսի՜ անկում։ Նույնիսկ որոշակի կանանց մոտ գիշերային այցելությունները և ազնվազարմ պատանիների մոտ մուտք ունենալը ի սպաս էին դրված մի քանի դատավորների, որպես նրանց վճարի հավելում։ Այսպիսով, ազնիվ քաղաքացիների լիակատար բացակայությամբ, երբ ֆորումը լեփ-լեցուն էր ստրուկներով, քսանհինգ դատավորներ այնուամենայնիվ այնքան քաջ գտնվեցին, որ անտեսելով ծայրահեղ վտանգը, գերադասեցին նույնիսկ զոհվել, քան ամեն ինչ կործանել։ Բայց երեսունմեկերորդ դատավորի վրա քաղցն ավելի ազդեց, քան գեշ համբավը։ Կատուլոսը, նրանցից մեկին տեսնելով, հարցրեց. «Ինչո՞ւ էիք մեզնից պահակախումբ պահանջում։ Գուցե վախի՞ց, որ ձեր փողերը կխլեն»։

Ահա ամենահակիրճ բառերով, թե ինչպիսին էր այդ դատավարությունը և որն էր արդարացման պատճառը։

Դատարաններում նման (շա՜տ հաջող) պաշտպանություններ, սիրալիրությամբ և մատչելիությամբ, հռոմեացի յուրաքանչյուր քաղաքացու դեմքով ճանաչելու և նրան անպայմանորեն անունով դիմելու ունակության օգնությամբ, Կրասոսը ձգտում էր դուր գալ համաքաղաքացիներին և փառքով հավասարվել Պոմպեոսին, որն արդեն Մեծ մականունն էր ստացել։

Դրան ավելացրած՝ Կրասոսը ոչ մեկին չէր մերժում դրամ փոխ տալ, իհարկե, ոչ առանց տոկոսի։ Բացառություն անում էր միայն բարեկամների համար, բայց նշված ժամկետում պարտքը վերադարձնելը պահանջում էր անվերապահորեն։

Կրասոսը զուտ գործարար բարեկամներ շատ ուներ։ Ժամանակ առ ժամանակ դրանց շարքն էր ընկնում նաև Ցիցերոնը, չնայած ընդհանրապես նրանք բազմաթիվ տարաձայնություններ ունեին, առանձնապես «Կատիլինայի գործով»։ 63 թվականին Ցիցերոնը,— իսկ նա կոնսուլության ժամանակաշրջանի իր ծառայությունների վերաբերյալ չափազանց բարձր կարծիքի էր և դրա մասին արտահայտվում էր հետևյալ վերամբարձ

խոսքերով. «Պետությունը կործանվում էր, և ես հասա օգնության։ Հայրենիքը ջրահեղձ էր լինում, և ես փրկեցի»,— իր արբանյակներին թույլ տվեց հրապարակայնորեն հայտարարել, թե Կրասոսն էլ է դավադիրների շարքերում եղել։ Իհարկե, Կրասոսը դուրս պրծավ նեղ վիճակից, բայց երկար ժամանակ Ցիցերոնին չէր ներում այդ բանը։ Բայց և այնպես, հրապարակայնորեն, երբ նրանց հարաբերությունները լավացան, Ցիցերոնը Կրասոսի մասին արտահայտվում էր որպես «քաջագույն մի մարդու», որի հետ ինքն «ամուր կապված է եղել բարեկամական սերտ հարաբերություններով»։ Ուրիշ ժամանակ նրա մասին ավելի վատ էր խոսում, ասելով, թե կան մարդիկ, որոնք «պատրաստ են հնարավոր ամեն ինչ տանել, յուրաքանչյուրին զիջել, միայն թե հասնեն այն բանին, ինչին ձգտում են։ Այդպիսին, ինչպես մենք տեսել ենք, Սուլլան է եղել և Մարկոս Կրասոսը», և ապա. «Նրա (այսինքն՝ Կրասոսի) հետ ես շատ վեճեր եմ ունեցել, ընդ որում շատ խիստ»։

Կրասոսն առանձին թափով էր գործում պրովինցիաներում։ Այնտեղ նա զբաղվում էր սպեկուլյացիայով և վաշխառությամբ (հաճախ դրածո մարդկանց միջոցով)։ Իսպանիայում նա ձեռք բերեց արծաթահանքեր։ Հռոմում անընդհատ տներ էր գնում և վարձով տալիս։ Ամենուր Իտալիայում նա արգավանդ հողեր ուներ, հարուստ կալվածքներ, մեծ նախիրներ։ Վերջապես նա, կենարի նման, գնում էր գեղեցիկ ստրուկներ, շահութաբեր մասնագիտություններ էր սովորեցնում և նույնպես վարձով տալիս։

Կյանքն անցկացնելով անընդմեջ հոգսերի մեջ, Կրասոսը հոր օրինակով լայնորեն բացել էր իր տան դռները ազնվատոհմիկ երիտասարդության առջև։ Նրանք օգտվում էին Կրասոսի հրաշալի գրադարանից, վարկեր էին ստանում, սեղանի շուրջը հետաքրքիր զրույցներ լսում։

Ընդհանրապես Կրասոսը հաճույքով ճաշկերույթներ էր տալիս, առանձնապես սիրում էր հրավիրել ժողովրդի ծոցից ելած աղքեցիկ մարդկանց։ Նրա սեղանի պարզությունը, ինչպես և անվերապահ սրտաբացությունը, բարյացակամությունն ու սիրալիրությունը բոլորի վրա ուժեղ տպավորություն էին գործում...

IV

Վերջապես զորավարն ընդհատեց մռայլ լռությունը և ասաց, որ իրենք ուրիշ ելք չունեն, բացի մեկից՝ շտապ ճակատամարտ տալ Սպարտակին և հաղթել նրան. եթե մտածեն ճակատա-

մարտից խուսափել, ամբողջ փառքը բաժին կընկնի Պոմպեոսին...

Լեգատները չէին առարկում։ Լուռ վեր կացան և շտապ ցրվեցին իրենց վրանները՝ համենայն դեպս կտակներ կազմելու։

V

Հռոմում նոր գլխավոր հրամանատարի ընտրությունների և Պոմպեոսի հաղթանակի մասին Սպարտակն իմացավ գրեթե Կրասոսի հետ միաժամանակ։ Կատարվածի մեջ նրա համար ոչ մի անակնկալ բան չկար։ Հանգամանորեն ուսումնասիրելով իրադրությունը, ապստամբների գերագույն առաջնորդը, Սերտորիոսի սպանությունից անմիջապես հետո եզրակացրեց, որ գլխավոր հրամանատարի պաշտոնում Պոմպեոսը կփոխարինի Կրասոսին։

Հիմա, երբ դա տեղի էր ունեցել, հարկավոր էր անցնել այդ պարագայի համար նախատեսված ծրագրի իրագործմանը, այն է՝ ճեղքել Կրասոսի ամրապատնեշի գիծը և վճռական ճակատամարտ տալ նրա հետ։ Որ նման ճակատամարտն անհրաժեշտ էր երկու կողմերի համար էլ, Սպարտակը չէր կասկածում։

Կրասոսն, իր հերթին, շտապից հաստատել նրա կարծիքը։ Նույն երեկոյան, երբ հասավ Հռոմի ընտրությունների լուրը, զորավարի հրամանով թուլացվեցին պահակակետերը, որոնք շարված էին ամբողջ ամրապատնեշի երկայնքով։

Իմանալով այդ մասին, Սպարտակի ռազմակայանում հավաքված հրամանատարները համերաշխորեն ծիծաղեցին. առաջնորդի կանխագուշակումը կատարվել էր ճշգրտորեն, Կրասոսի պատնեշը բացարձակորեն անպետք դուրս եկավ և ոչ մի օգուտ չտվեց։

Եվ այսպես, առջևում ճակատամարտն էր։ Վերջնական հաջողության վրա ոչ մեկը չէր կասկածում։ Կրասոսը նրանց համար քաջածանոթ և քանիցս պարտված հակառակորդ էր։ Այդ պատճառով ապստամբներն այս անգամ էլ հաղթելու հույս ունեին։ Ամբողջ գիշեր Սպարտակի ռազմակայանում գործողությունների զանազան ծրագրեր էին քննարկվում...

Առաջարկություններից որպես գլխավորներ քննարկման համար առանձնացրել էին հետևյալները. 1) ամբողջ զորքը տեղափոխել Սիցիլիա, 2) տեղափոխել Աֆրիկա, 3) Իլլիրիա

և Թրակիա, 4) Սատրիք, 5) Սև ծովի ափ՝ սկյութների մոտ, 6) գալլերի և գերմանների մոտ, 7) Փոքր Ասիա, 8) պատերազմը շարունակել Իտալիայում։

Սիցիլիայի և Աֆրիկայի տարբերակը, չնայած որոշ հրամանատարների պաշտպանությանը, մերժվեց անմիջապես և ճնշող մեծամասնությամբ։ Սիցիլիան Հռոմի համար անվտանգ ծայրամաս էր։ Ինչքան էլ Հռոմը պարտություններ կրեր այստեղ, դրանք չէին կարող վճռական ազդեցություն գործել նրա ճակատագրի վրա։ Ստրուկների սիցիլիական երկու ապստամբություններն անվիճելիորեն հաստատում էին այդ բանը։ Չէր կարելի հաշվի չառնել նաև հետևյալ հանգամանքը. Պոմպեոսը Իսպանիայում Սերտորիոսին հաղթելով՝ արդեն ազատել էր ձեռքերը, հետևաբար նա կարող էր իր բանակով (անհրաժեշտության դեպքում միացնելով նաև Կրասոսի զորքերը) անմիջապես հնտապնդել ապստամբներին Սիցիլիայում։ Այսպիսով, պատերազմից խուսափելը, միևնույն է, անհնար կլիներ։ Բացի դա, ռազմական գործողություններ վարելու համար սիցիլիական թատերաբեմը Պոմպեոսին լավ ծանոթ էր, քանի որ նա այստեղ արդեն կռվել էր մարիոսականների դեմ և շատ անձնական կապեր ուներ։

Մերժեցին նաև աֆրիկյան տարբերակը։ Աֆրիկա պրովինցիան նույնպես լավ ծանոթ էր Պոմպեոսին, այնտեղ էլ էր նա կռվել մարիոսականների դեմ։ Այդ պրովինցիան իրենից ներկայացնում էր ծովի և անապատի մեջ սեղմված մի նեղ շերտ և նպաստավոր չէր մեծ բանակների գործողությունների համար։ Ջոր, շատ շոգ կլիման բարենպաստ չէր կարող լինել չափավոր ու մեղմ կլիմա ունեցող Գալլիայից, Գերմանիայից, Թրակիայից եկածների համար։ Կային նաև այլ անբարենպաստ հանգամանքներ. Աֆրիկայի բնակչությունը միշտ ատելությամբ էր վերաբերվում օտարականներին, այքի էր ընկնում իր նենգությամբ։ Տեղական արքայիկները, ինչպես և ծովամերձ խոշոր քաղաքները, Հռոմի կողմն էին։ Հետևաբար, այստեղ պատերազմ վարելու հեռանկարները չէին կարող այլ կերպ դիտվել, քան ծայրաստիճան կասկածելի։ Անհաջողության դեպքում նահանջի տեղ չէր լինի. մի կողմում ծովն էր, մյուսում՝ անապատը։ Եվ եթե հռոմեացիների դեմ մղվող մարտերում ապստամբների նավատորմը ցախջախվեր, ապա ամբողջ բանակն ընկնելու էր ծուղակը...

Հավանության չարժանացավ նաև Իլլիրիայի և Թրակիայի վերաբերյալ առաջարկը։ Հավաքվածների մեծամասնությունը գտնում էր, որ Թրակիան ավերված է Մ. Լուկուլլոսի դեմ մղված պատերազմից, ծանր պարտություններից խիստ թուլացել է, կորցրել է մարտունակությունը և մարտական ոգին։ Իլլիրիան մերժվեց որպես քիչ բնակչություն և ռեսուրսներ ունեցող աղքատ երկիր, որտեղ ռազմական գործողությունների համար լայն ասպարեզ չկար։ Իտալիայի մոտ գտնվելու հանգամանքը հնարավորություն կտար արագորեն զորք տեղափոխել այստեղ։ Հետևաբար, Իտալիայից Իլլիրիա հեռանալ միևնույն ռազմական գործողությունները վարելու համար, ոչ մի իմաստ չէր ունենա։

Մերժեցին նաև «Ասորիք փախչելու» տարբերակը, չնայած ոմանք դրան առավելություն էին տալիս։ Իսկապես, մեծ հեռավորության պատճառով հռոմեացիների համար ավելի դժվար կլիներ այնտեղ զորքեր ուղարկել։ Կարելի էր մի քանի տարվա խաղաղություն շահել։ Բայց մի քանի տարի անց հռոմեացիների դեմ պատերազմը, այսպես թե այնպես, պետք է վերսկսվեր. սենատն, իհարկե, չէր կարող թույլ տալ, որ Իտալիայից զինված ստրուկների վիթխարի ջոկատներ փախչեին, այն էլ զենքը ձեռքներին։ Թվացյալ դադարը կարող էր միայն վնասակար պատրանքներ ծնել և հարձակման նախաձեռնությունը տալ հռոմեացիներին։ Բայց նախորդ պատերազմների փորձը անվիճելիորեն ապացուցում էր մի բան. ով որ հռոմեացիների դեմ պատերազմելիս միայն պաշտպանվում է սեփական տարածքում, նա անխուսափելիորեն պարտվում է (այդպիսին էր Փիլիպոս Մակեդոնացուց, Պերսևսի, հույների և մյուսների ճակատագիրը)։ Հաղթանակի հույս կարող է ունենալ նա, ով պատերազմում է անպայմանորեն Իտալիայի տարածքում, արշավներով կտրում անցնում է երկիրը երկարությամբ ու լայնությամբ, ամենուրեք ապստամբություն է բարձրացնում, ամայացնում է թշնամու մարդերը, Հռոմը պաշարելով կամ գրոհելով գրավելու հաճախակի փորձեր է կատարում։ Այդպես էր վարվում Մեծ Մարիոսը՝ 87 թվականին Սուլլայի դեմ պատերազմելիս։ Ինչպես հայտնի է, նա այն ժամանակ հաղթեց, գրավեց Հռոմը և կոտորեց իր թշնամիներին։ Ասորիքի տարբերակում այլ բացասական բաներ էլ կային։ Ասորիքը «կռվախնձոր» էր ուժեղ հարևանների միջև. Հայաստանի, Պարթևական պետության և Եգիպտոսի։ Եթե ապը-

տամբների զորքերն այնտեղ հայտնվեին էլ, ապա այդ պետությունները, ելնելով իրենց շահերից, անմիջապես զորք կուղարկեին Ասորիք (ինչ վերաբերում է հզոր Պարթևստանին, որը համենայն դեպս չէր վախենում հռոմեացիներից էլ, դրանում ոչ մի կասկած չկար)։ Հետևաբար, մի քանիսի համար ցանկալի խաղաղության փոխարեն, միևնույն է, մի նոր պատերազմ կբստացվեր. առաջին փուլում՝ Պարթևստանի, դուցե նույնիսկ եռյակ միության, երկրորդում՝ հռոմեացիների դեմ։ Ավարտական փուլում խառնվելով պատերազմին, հռոմեացիները հեշտությամբ կռվելով ծանր պատերազմից թուլացած հաղթողի հետ, իրենք կճաշակեին հաղթության պտուղները։

Ջերմեռանդությամբ էին պաշտպանում իրենց առաջարկը իսպանական տարբերակի կողմնակիցները։ Նրանք հենվում էին միանգամայն անհերքելի առավելությունների վրա. հռոմեացիներից թույլ յուրացված և շատ հարուստ արծաթահանքեր ունեցող հսկայական տարածք, հռոմեացիների դեմ սաստիկ թշնամանքով լցված ռազմաշունչ բնակչություն. 80 տարի էլ չկա, ինչ այստեղ լուսիտները հովիվ- և զորավար Վիրիատոս թագավորի գլխավորությամբ ինը տարի կռվում էին Հռոմի դեմ (մ. թ. ա. 149—139 թթ.)։ Տեղական բնակչությունն իր անհաշտ թշնամանքը սենատի նկատմամբ ցուցաբերեց նաև Սերտորիոսի օրոք, որի դրոշի տակ ութ տարի մարտնչեց (մ. թ. ա. 80—72 թթ.)։ Պայքարը դադարեց Սերտորիոսի չարաննենգ սպանության և նրա թույլ տված սխալների պատճառով։ Իսպանիան մոտ է Գալլիային և Գերմանիային, նշանակում է, հեշտ կլինի նրանց հետ կապ պաշտպանել, նրանց հրահրել Հռոմի դեմ նոր պատերազմի։

Իսպանական տարբերակի արժանիքները Սպարտակն ընդունում էր։ Հեռանկարային էր համարում նաև մյուս տարբերակը. զորքով Եվքսինյան Պոնտոսի ափերը, սկյութների մոտ հեռանալը։ Սպարտակը չէր կասկածում, որ ոչ մեկին չենթարկվող, ոչ մեկից չընկճված, անվախ սկյութները, դրա հետ միասին՝ թրակացիներին արյունակից, սիրով կընդունեն ամբողջ ապըստամբական զորքը։ Բայց այս տարբերակը Սպարտակը համարում էր որպես ծայրահեղ ելք...

Վերջապես, գերմանա-գալլական տարբերակը։ Ապստամբների առաջնորդը դա շատ կասկածելի էր համարում. ո՛չ Գալլիայում, ո՛չ էլ Գերմանիայում բնակության համար ազատ հողատարածություններ չկային։ Հենց միայն դրա պատճառով տեղա-

կան ցեղախմբերը հպիվ թե ցանկանային նրանց ընդունել։ Բայց ուրիշ ծանրակշիռ հանգամանք էլ կար. Ազատ Գալլիայում ապրում էին Հռոմին դաշնակից շատ ցեղեր։ Հետևաբար, եթե հաջողվեր էլ երկու զինված հռոմեական պրովինցիա (Այսրալպյան և Անդրալպյան Գալլիաները) կտրել-անցնելով հասնել Ազատ Գալլիա, ապա այնտեղ էլ անխուսափելի կլիներ զինված պայքարը հռոմեական դաշնակիցների դեմ։ Պայքարի ելքն անհնար էր կանխատեսել, քանի որ հռոմեացիները գտնվում էին մոտակայքում։

Հաշվի առնելով այս ամենը, Սպարտակն առաջարկեց պայքարի ծայրահեղ հանգամանքների դեպքում բանակով անցնել Փոքր Ասիա։ Նման գործողության նպատակը հետևյալն էր. 1) շրջափակել Լ. Լուկուլլոսի բանակը, ապահովել հռոմեացիների անհաշտ թշնամի Միհրդատի օժանդակությունը, 2) տիրել անսահմանափակ ֆինանսական պաշարներին։ Պատերազմի անհաջողության դեպքում նահանջել դեպի Սկյութիա։ Այնտեղ կարելի կլինի նորից ուժ հավաքել, օժանդակ զորամասեր հավաքագրել, ինչպես բաղմիցս վարվել էր Միհրդատը, համաձայնության գալ սկյութների առաջնորդների և թագավորների հետ միանգամայն որոշակի ուղղություններով պատերազմ մղելու համար...

Սպարտակի առաջարկությունը ճնշող մեծամասնության կողմից ընդունվեց որպես լավագույնը։ Ապստամբների ռազմական խորհուրդը հանձնարարեց գերագույն առաջնորդին բոլոր անհրաժեշտ գործնական միջոցները ձեռք առնել այդ տարբերակը նախապատրաստելու համար որպես պահեստային միջոց՝ Իտալիայում պատերազմի անհաջող ընթացքի դեպքում, քանզի հարավային և կենտրոնական Իտալիայում պատերազմը ընդունվել էր որպես ամենագլխավոր տարբերակ։ Ապստամբների ռազմական խորհուրդը որոշեց ոչ մի թիզ չզիջել թշնամուն և Հաննիբալի նման մնալ Իտալիայում մինչև վերջին ծայրահեղությունը, քանի որ միայն այդպիսի պատերազմն է հաջողությամբ Հռոմին հաղթելու հույսեր ներշնչում։

VI

Հաջորդ առավոտյան, ամրապատնեշի մեծ հատվածում սպարտակյանների ճեղքումից հետո, սկսվեցին թեթևազեն ռազմիկների առաջին բախումները։ Կրասոսը չէր շտապում և զգու-

շավոր Պ. Կոնսիդիոսի պնդումով ցանկանում էր լեգեոնականներին նորից հանգեցնել այն մտքին, որ հաղթողների փառքի համար նրանք մեկ անգամ ևս պետք է խաչաձևեն իրենց զենքերը ապստամբ ստրուկների հետ։

Իսկ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 21-ին, իր պահակախմբի հետ հռոմեական ճամբար ներս սուրաց Կեսարը։ Հազիվ թոթափած ճանապարհի փոշին (Իտալիայի հարավում ամենացուրտ ամսին ջերմաստիճանը — 10°-ից չի իջնում), նա Կրասոսի և նրա լեգատների առջև հանգամանորեն զեկուցեց նոր գլխավոր հրամանատարի Հռոմում տեղի ունեցած ընտրությունների և ընդհանուր քաղաքական իրադրության մասին։ Ինչպես իր նամակում, հիմա էլ կրակոտ արտահայտվում էր անմիջապես ճակատամարտ տալու կողմ։

Կեսարին առաջարկում էր Պ. Կոնսիդիոսը։ Նա ավելի զգուշավոր տակտիկայի՝ նախնական մանր ընդհարումների միջոցով զինվորներին աստիճանաբար նոր ճակատամարտի միտք ներշնչելու կողմնակից էր։

Իր հերթին, Կրասոսը, երկու կողմերի փաստարկներն էլ բավականաչափ համոզիչ էր գտնում և խիստ տատանվում էր՝ հերթականությամբ հակվելով մերթ այս, մերթ այն կողմը։ Նա քաջ գիտակցում էր ռիսկի մեծությունը։

Վերջ ի վերջո, շնորհիվ իր ճանաչված զինվորական հեղինակության, Կոնսիդիոսը այնուամենայնիվ հաղթանակեց։ Դեկտեմբերի 21-ի այս խորհրդակցությունից հետո ընդհարումները տեղի էին ունենում ամեն օր առավոտյան, կեսօրին և երեկոյան։ Իսկ լեգեոնի հրամանատարություն ստացած Կեսարը ցանկություն ուներ ամբողջ բանակով անցնել արգելապատնեշը, շարժվել ուղիղ դեպի Ռեգիում և քաղաքի պարիսպների մոտ ճակատամարտ տալ։ Բայց Կրասոսը վտանգավոր համարելով այդ առաջարկությունը, չէր համաձայնում։

Իրենց հերթին, ապստամբները (առաջնորդի հրամանով բանակի կեսը Գանիկոսի հրամանատարությամբ մոտեցրել էին արգելապատնեշին) հաջողությամբ հետ էին մղում թշնամու հարձակումները և ձգտում էին նրանց ստիպել նահանջել։

Մի շատ հաջող ընդհարումից հետո, երբ հռոմեացիները, բաղմաթիվ սպանված և գերի զինվորներ թողնելով, փախուստի դիմեցին, Գանիկոսը հրամայեց խաչել ջոկատի հրամանատա-

ին՝ ազնվատոհմիկ մի հռոմեացու խաչը կանգնեցրին երկու գորքերի միջև միջանկյալ տարածությունում, հռոմեացիներին ի ցույց։

Գերի հռոմեական զորապետը, ըստ հռոմեական սովորության, մահապատժի վայրը գնում էր սեփական խաչն ուսած։ Նա սարսափելի լուտանք ու անեծք էր թափում, իսկ նրան շրջապատած ապստամբների խառնիխուռն ամբոխը, իր հերթին, պատասխանում էր նրան հայհոյանքներով և ծաղրով։

Խաչվածին տեսնելով՝ լեգեոնականները և հռոմեական ճամբարի հրամանատարները անզոր զայրույթից կծում էին շրթունքները։ Կրասոսը ջանում էր նրանց հանգստացնել, ասելով.

— Այդ բարբարոսը դրանով ցանկանում է բարձրացնել իր մարտիկների ընկած ռազմական ոգին։ Նա ցույց է տալիս, թե ինչ է իրենց սպասվում պարտությունից հետո։ Հռոմեացիներս պետք է ընդունենք այս խաչելությունը որպես նախանշան։ Նման խայտառակ մահապատիժը շուտով կլինի բոլոր խռովարար ստրուկների ճակատագիրը։ Նրանցից ոչ մեկը չի խուսափի հատուցումից, և նրանք՝ աշխարհին հաղթողները, խաչի վրա կբարձրանան Կապուայից մինչև Հռոմ ամբողջ ճանապարհի վրա։

Կրասոսի ճառից հետո լեգեոնականների դեմքերը բացվեցին։ Բայց մի քանի առավել փորձառու հրամանատարներ բաղմանշանակ իրար նայեցին։ Այդ մահապատիժը նրանք ընդունեցին որպես գերմաններին բնորոշ զոհաբերության սովորույթ, որով հայտարարվում էր անհաշտ պատերազմի սկիզբ[1]։

Եվ դա, իրոք, այդպես էր։ Ապստամբների ճամբարում լեգատները և զինվորական տրիբունները եռանդագին մաքրում էին զինվորներին։ Ազատ ժամերին, գլխավորապես երեկոյան, նրանք և հերոսներին փառաբանող երգիչները նախապատրաստում էին ռազմիկներին նոր քաջագործության՝ ճեղքմանն ու թշնամու դեմ վճռական ճակատամարտին։

Իսկ ապստամբների գերագույն առաջնորդն անդադրում

---

[1] Ցլորոսի (II դար) բառերով ասած, նման պատկեր նկատվել է նաև Օգոստոս կայսեր օրոք։ Նախապատրաստվելով Օգոստոսի զորավար Դրուզոս Ավագի (Գերմանիկոս) դեմ պատերազմի, գերմանական խերուսկների, սվեւների, սուգամբրների ցեղերը խաչելով մահապատժի ենթարկեցին հռոմեական 20 ցենտուրիոնների, «զոհաբերության այդ գործողությամբ սկսեցին պատերազմը»։

ուսումնասիրում էր տեղանքը, որտեղ նախատեսում էր տալ առաջիկա մարտերը։ Նա հանգամանորեն կշռադատում էր Պոմպեոսի հնարավոր երթուղիները։ Սպարտակը ձգտում էր այնպիսի տարբերակ ընտրել, որպեսզի հռոմեական երկու զորավարների տարաձայնություններից առավելագույն օգուտը քաղեր։

Գիշերները թշնամու պաշտպանական գծից այն կողմ նրա պատվիրակներն էին ուղարկվում։ Նրանք առաջնորդի հրամաններն էին տանում հեծյալ պարտիզանական ջոկատներին, որպեսզի շուտափույթ ճեղքեն գան և միանան իր զորքին։ Միաժամանակ լրտեսները և կեղծ փախստականները թափանցում էին հռոմեական ճամբար և այնտեղ Սպարտակի ծրագրերի և գործերի իրական ընթացքի վերաբերյալ հնարովի պատմություններ էին անում՝ Կրասոսին թյուրիմացության մեջ գցելու նպատակով։

Պարտիզանական ջոկատներում առաջնորդի հրամանը ընդունեցին հաճկանալով։ Մարտերի առաջին իսկ երեկոյան Բրուտիումից սկսեցին Սպարտակի ճամբարը ժամանել հեծյալ ջոկատները։

Մարտերի վերսկսումից երեք օր հետո Սպարտակը Կրասոսին բանակցությունների առաջարկով նամակ ուղարկեց։ Նա խորհուրդ էր տալիս Կրասոսին միջնորդի պարտականություններ ստանձնել իր և սենատի միջև խաղաղություն կնքելու հարցում։ Որպես խաղաղության պայման, առաջվա նման, առաջարկում էր իրեն զիջել երկու պրովինցիաները՝ Այսրալպյան և Անդրալպյան Գալլիաները։ Կրասոսը, գիտենալով սենատի դիրքորոշումը, որը մինչև այժմ լռությամբ էր պատասխանում Սպարտակի բոլոր նամակներին, արհամարհանքով մերժեց նրա առաջարկը։ Հռոմեական զորավարին թվում էր, թե փախստականներից միանգամայն հուսադրող լուրեր է ստանում, այն է, որ ապստամբները պարենի խիստ կարիք են զգում, Սպարտակը ուր որ է ստիպված կլինի դիմելու հռոմեական զորավարի մեծահոգությանը։

Կրասոսի ռազմակայանում ագահությամբ էին ունկնդրում նման խոսքերը։ Առաջին անգամ՝ բազմաթիվ անհաջողություններից հետո, լեգատների դեմքին բերկրալի ժպիտ էր հայտնվել։ Կրասոսը և Պ. Կոնսիդիոսը հրճվում էին, որ պարիսպն իզուր դուրս չեկավ, իզուր չէր, որ իրենք այդքան հայհոյանք ստացան իրենց քաղաքական հակառակորդներից և այդպիսի տոկունու-

թյուն ցուցաբերեցին։ Կասկածից վեր է, որ իրենց մեծ ծրագիրը ահա ուր որ է անարյուն հաջողություն կբերի, ոչ պակաս նշանակալի, քան Կիզիկոսի պատերի տակ Լ. Լուկուլլոսի ձեռք բերած հաջողությունը։

Հռոմեական ճամբարում խնդալից և անհամբեր սպասում տիրեց...

VII

Իսկ այդ ընթացքում, երբ Կրասոսի ենթակաները շրջապատում բարձր տրամադրություն էր տիրում և ապագա հաղթանակի պատվին արդեն խնջույքներ էին կազմակերպվում, հռոմեական ամրությունների մոտ ուղարկված Սպարտակի հստակ ջոկատները դեկտեմբերի լույս 24-ի գիշերը անարգել մոտեցան արգելապատնեշին, խրամատվի մի մասը լցրին հողով չի պարկերով, գերաններով և ջախի կապոցներով։ Դրանից հետո 50 հազար հետևակ և չորս հազար հեծելակ («Զորքի մեկ երրորդ մասը»,— ինչպես ասում է Պլուտարքոսը) Սպարտակի գլխավորությամբ դուրս եկան ճամբարից, խիտ ձյան քողի տակ անցան հռոմեական ամրությունների գիծը և երկարատև երթով շարժվեցին դեպի հյուսիս... Ռեգիումի մոտ՝ ապստամբների ճամբարում գերագույն առաջնորդի հրամանով մնաց ևս 90 հազարանոց մի զորք...

VIII

Վիթխարի բազմության միաձույլ դոփյունը, որն սկզբում քայլող, ապա վազող մարտիկների ոտնաձայնն էր, ոտքի հանեց հռոմեական պահակակետերը։

Խարույկների մոտ նստոտած լեգեոնականները խռպոտ ձայներ արձակելով և հայհոյանքով վեր թռան տեղերից, վազեցին դեպի ձիերը։ Նրանք անմիջապես գլխի ընկան՝ թշնամին հսկայական չափերի ճեղքում է կատարում...

20 րոպե անց հռոմեական ճամբարը տակնուվրա եղած մրջնանոց էր հիշեցնում։

Լեգատները, ռազմական տրիբունները, ցենտուրիոնները դուրս թռչելով իրենց վրաններից, միմյանց հրմշտելով, վազում էին դեպի գլխավոր հրամանատարի վրանը։ Կրասոսը իմանալով թշնամու միանգամայն անսպասելի ճեղքման մասին, քանի

որ նա սպասում էր Սպարտակի հանձնվելուն, սփրթնեց։ Նրա շուրջը խռնված լեգատները, որոնց հետևում զորականների բազմություններ էին կանգնած, Կրասոսին հարցախեղդ էին անում. «Ո՞վ է կատարում ճեղքում՝ Սպարտակն փ՞նքը, թե՞ նրա ենթակա հրամանատարները։ Թշնամու զորքի ո՞ր մասն է դուրս գրծել ծուղակից։ Ո՞ւր են մտադիր գնալ փախստական ստրուկները։ Ի՞նչ անել հիմա...»

Այս հարցերին Կրասոսը չէր կարող պատասխանել։ Եվ մինչև լուսաբաց (նա հեռացող ստրուկների հետևից հետախույզներ ուղարկեց, հրամայելով գերիներ կամ փախստականներ բերել) զորավարը վրանում դեսուդեն էր նետվում։ Ջայրույթն ու վախը խեղդում էին նրան։

Կրասոսը աստիճանաբար գլուխը կորցնում էր։ Նման սարսափելի պահերից մեկի ժամանակ նա նստեց երթային սեղանի մոտ և երկու բացառիկ կարևորության նամակներ գրեց։ Մեկն ուղղված էր սենատին, նամակում զորավարը հայտնում էր ապստամբների ճեղքման մասին, սրտի ցավով նախազգուշացնում, որ ստրուկների կողմից սպառնալիքը ավելի է մեծացել և պահանջում էր դիկտատոր նշանակել։ Մյուս՝ Մ. Լուկուլլոսին ուղղված նամակում, Կրասոսը նրանից օգնություն էր աղերսում և խնդրում էր Թրակիայից Իտալիա վերադառնալ նամակը ստանալուց հետո երկու շաբաթից ոչ ուշ...

IX

Լուսաբացին հետախույզները վերադարձան հռոմեական ճամբար և իրենց հետ բերեցին մի քանի փախստականների։ Կրասոսը հարցաքննեց նրանց և իմացավ, որ իր կառուցած արգելապատնեշից այն կողմ մնացել է թշնամու զորքի երկու երրորդը Գանիկոսի գլխավորությամբ։ Վերջինիս հանձնարարվել է, ինչպես տրտահայտվել է Սպարտակը «Կրասոսին հսկել»։ Սպարտակն ինքը զորքի մեկ երրորդով շարժվում է Պոմպեոսին ընդառաջ, նպատակ ունենալով կայծակնային հարձակումով ջախջախել նրան։ Դրանով, ըստ Սպարտակի, Կրասոսը անհրաժեշտությունից դրդված կվերացնի մնացած զորքի պաշարումը, որը հնարավորություն կտա Սպարտակին միանալ իր ուժերին, Կրասոսի դեմ պայքարը վերսկսելու նպատակով։

Այդպես ասում էին փախստականները։ Հեռացնելով նրանց,

զորավարը լսեց իր հետախուզների զեկույցը։ Նրանք երկար ժամանակ գնացել էին Կրասոսի ամրություններից դուրս պրծած ապստամբների զորամասերի հետքերով։ Հետախուզների տվյալները համապատասխանում էին փախստականների տվյալներին։

Երբ վերջիններս նույնպես հեռացան, զորավարը և ռազմական խորհրդի անդամները երկար ժամանակ լուռ էին։ Բոլորին մի միտք էր տանջում. եթե հանկարծ անիծյալ Սպարտակն իսկապես հաղթի Պոմպեոսին, այդա Հռոմն անպաշտպան կմնա... Իսկ եթե պարտվի՞։ Անկասկած հաղթողի փառքը բաժին կընկնի Պոմպեոսին... Դուրս է գալիս, որ ելքը միակն է. թողնել արդեն՝ անօգուտ ամրությունները և շտապել Սպարտակին հասնելու։ Չի կարելի թույլ տալ, որ նա Պոմպեոսի հետ մարտի բռնվի...

Դա էլ հենց որոշեցին։ Ռազմական խորհրդի փակվելուց անմիջապես հետո հռոմեական բանակը հապճեպ հավաքեց իր գումակը և դուրս եկավ ճամբարից։ Հռոմեացիները շարժվեցին հեռացող ապստամբների հետքերով, առջևից ուղարկելով հեծելազոր, որին Կրասոսը հրամայել էր հասնել հակառակորդին և ջանալ կասեցնել նրանց առաջխաղացումը։

X

Հռոմեացիների ճամբարից հեռանալու լուրը Գանիկոսը ստացավ անմիջապես։ Ապստամբները հրճվում էին և Կրասոսին ծաղրում էին կատարած անօգուտ աշխատանքի համար։

Այսպիսով, խնդրի կեսը բարեհաջող լուծվել էր՝ պաշարումը վերացված էր։ Առանց որևէ ռիսկի և հանկարծակի հարձակման վտանգի, իրական հնարավորություն էր բացվում մնացած զորքերը դուրս բերելու թշնամու ամրապատնեշից։

Պրետորիայում ելույթ ունենալով ռազմիկների առջև, Գանիկոսը վառվռուն ճառով բացատրեց նոր իրադրությունը. այժմ իրենք էլ դուրս են գալու արշավի։ Ճամբարում մնում է 10 հազար հոգի՝ Պուբլիպորեսի հրամանատարությամբ։ Նրանք պետք է շարունակեն պայքարը Ռեգիումի մոտ, ձգտելով քաղաքը գրավել հռոմեական կայազորից, և փորձեն անցնել Սիցիլիա այնքան ժամանակ, մինչև որ հասնեն հաջողության։ Մնացածները պետք է գնան Սպարտակին միանալու։ Առջևում սպասվում են դաժան մարտեր, որոնց ժամանակ անհրաժեշտ է վերջնականապես

ջախջախել և ոչնչացնել Կրասոսին։ Ոչ մի խաղաղություն, ոչ մի համաձայնություն հռոմեացիների հետ չի կարող լինել։ Դա են վկայում մեզ ոչ երկու, ոչ էլ մեկ գալլիական պրովինցիա զիջել չցանկացող սենատի լռությունը և Կրասուսի կողմից բանակցություններ վարելու մերժումը։ Այսուհետև որպես անհաշտ պատերազմի գրավական կլինի վերջին մարտերի ժամանակ գերի ընկած բոլոր հռոմեացիների մահը։ Հարկ կլինի նաև հրաժարվել ավելորդ բեռնակիր անասուններից և ավելորդ իրերից։ Առջևում սրընթաց երթ է սպասվում դեպի հյուսիս։

Այսպես խոսեց Կրիքսոսի մահից հետո Սպարտակի մերձավորագույն զինակից Գանիկոսը։ Նրա ճառը զորքն ընդունեց խանդավառությամբ։

Մեկ ժամվա ընթացքում վրանները հավաքված էին, զորասայունները՝ երթային մարտակարգով շարված։ Ավելորդ ջորիները ու ձիերը, որոնք բանակի ավարը և բեռներն էին կրում, խանդակի մոտ բերված, սպանված էին։ Նույն բախտին արժանացան հռոմեական գերիները։ Հավերժական քաղաքի ընակիչներին առանձնապես ատող գլադիատոր ու ստրուկ կամավորները շեշտակի հարվածով սպանում էին նրանց և նետում խանդակի մեջ։

Երբ ամեն ինչ ավարտվեց, շեփորները շարժվելու ազդանշան տվեցին։ Հռոմեացիների դիակների վրայով հետևակն անցավ խանդակը, որը յուրաքանչյուրի համար հիմա հռոմեացիների հետ հաշտվելու անհնարինության խորհրդանիշ էր (Ս. Տրոնտինոս)։

Ռեգիական լեռակողում մնալու երկար ու հոգնեցուցիչ օրերից հետո բանակը հաճույքով էր հեռանում այնտեղից։ Առջևում ճակատամարտերով, քաջագործություններով, պարգևներով և ավարով հարուստ նոր արշավանք էր սպասվում, հենց այն կյանքը, որը միակ արժանավորն է իսկական տղամարդկանց համար։ Այդպես էին մտածում գալլ, գերման, թրակացի և մյուս ռազմիկները, առույգ քայլելով իրենց հրամանատարների հետևից։ Այն, որ նրանց հաջողություն է սպասվում, որ հաղթելու են Կրասուսին և Պոմպեոսին, ոչ մեկը չէր կասկածում։

XI

Դեկտեմբերի 26-ին Սպարտակի ճեղքման և դեպի հյուսիս նրա շարժվելու մասին պատմող Կրասոսի նամակը հասավ Հռոմ, և անմիջապես, շտապ լինելն ի նկատի առնվելով, հրապարակվեց սենատում։

Զորավարի նամակը ցնցող տպավորություն գործեց։ Պոմպեոսականները մեկը մյուսին ընդհատելով՝ կատաղի չարությամբ հարձակվեցին Կրասոսի վրա, նրան անարգելով որպես զորավարի, պահանջեցին, պետության փրկության համար, ամբողջ իշխանությունը կենտրոնացնել մեկ անձնավորության ձեռքում և այդ նպատակով Պոմպեոսին նշանակել դիկտատոր։

Կրասոսի կողմնակիցները եռանդագին առարկում էին։ Նրանք մատնանշում էին, որ մինչև այժմ Հռոմի մոտ ճամբար խփած և անհասկանալի դանդաղկոտություն ցուցաբերած Պոմպեոսը շափազանց հեռու է գտնվում, որպեսզի կարողանա որևէ իրական ձևով խանգարել Սպարտակի գործողությունները։ Այդ բանը կարող է անել միայն ապստամբներին անդուլ հետապընդող Կրասոսը։ Հետևաբար, դիկտատորությունը անհրաժեշտ է հանձնել Կրասոսին։

Նման առաջարկին պոմպեոսականները չէին ցանկանում համաձայնել։ Ծավալվեց փոխադարձ մեղադրանքներով և վիրավորանքներով լի թեժ վիճաբանություն։ Սենատի որոշ նշանավոր դեմքեր ընդհանրապես դեմ էին դիկտատոր նշանակելուն։ Սպարտակի նկատմամբ վախն այնքան մեծ էր, որ ճգնաժամային վիճակի նկատառումով, սենատը միանգամից երկու գլխավոր հրամանատար նշանակեց՝ Պոմպեոսին և Կրասոսին։ Ճիշտ է, երկրորդ զորավարի հրամանատարությունը սահմանափակված էր ամենակարճ ժամանակամիջոցով՝ մինչև Պոմպեոսի միանալը նրա բանակին։ Դրանից հետո Սպարտակի ճախորդ հակառակորդը պետք է հրամանատարությունը հանձներ ախոյանին և վերադառնար Հռոմ պրետորի պարտականությունները կատարելու։

Սենատի նիստի փակվելուց անմիջապես հետո արագընթաց սուրհանդակները մեկնեցին Կրասոսի ռազմակայանը, իրենց հետ տանելով սենատի որոշման պատճենը և նրա բարեկամների նամակները։

Իսկ Պոմպեոսը (մինչև այժմ նա հրաժարվում էր անմիջա-

պես մեկնելուց, պատրվակ բռնելով, թե անհրաժեշտ է Իսպանիայից վերադարձի երկար ճանապարհից հոգնած զորքին կարճատև հանգիստ տալ) ստանալով իրեն գլխավոր հրամանատար նշանակելու մասին սենատական որոշումը, անհապաղ վճռեց, որ բանակն այդին բավականաչափ հանգստացել է։ Ամեն ինչ նախօրոք պատրաստ էր։ Այդ պարզ դարձավ, երբ սենատի որոշումը նրան հասնելուց մեկ ժամ անց՝ նրա բանակը ցողեց ճամբարը։

Համաքաղաքացիների բարի մաղթանքներն առնելով, Պոմպեոսը մեկնեց արշավանքի, որը նրան և զորքին նոր փառք ու պատիվ էր բերելու...

Գլուխ քսանչորսերորդ

ԳԱՆԻԿՈՍԻ ԵՎ ԿԱՍՏՈՍԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ ԱՐԻՈՍԻ ԵՎ ՍԿՐՈՖԱՅԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

I

Երրի հինգերորդ օրը Սպարտակի 40 հազարանոց բանակը դուրս գալով Կապուան Ռեգիումին կապող ճանապարհից, հասավ Սիլարոս գետի վերին հոսանքները և ճամբար խփեց։ Հետևում մոտ 180 կիլոմետր ճանապարհ էր մնացել։ Կրասոսը շատ էր հետ ընկել, քանի որ նրան ծանրաբեռնել էր գումակը։ Բացի դա, հռոմեական բանակի պոչից կախ էր ընկել Գանիկոսի գլխավորած ապստամբական երկրորդ զորքի հինգ հազարանոց այրուձին։ Շարժվելով իր հետևակի առջևից, անընդհատ հարձակվում էր թշնամու վրա, ճիշտ այնպես, ինչպես Կրասոսի հեծելագորի մեծ մասը գրեթե ամբողջ ժամանակ ընդհարվում էր Սպարտակի վերջապահ զորքերի հետ։

Տեղավորվելով Կոնսենտիայի շրջակայքում, որտեղ Սպարտակը դեռևս հարավ շարժվելիս կայազոր էր թողել, ապստամբների առաջնորդը վճռեց Կրասոսի նկատմամբ հերթական, ճեղքումից հետո առաջին, խորամանկությունը փորձել։ Այդ նպատակով իր ուժերից անջատեց 10 հազարանոց մի ջոկատ, որն առանց շտապելու շարժվեց դեպի Պոմպեոսը տանող ճանապարհով և ճամբար խփեց Սպարտակից ընդամենը տասը կիլոմետր հեռավորության վրա։

Կեղծ փախստականները և որոշ հրամանատարներ (առաջնորդի կարգադրությամբ նրանք խաբեական դաշնի կապ էին պահպանում հռոմեացի զորավարի հետ) անմիջապես Կրասոսին հայտնեցին հետևյալը. ապստամբների բանակում պառակտում է ընկել։ Սպարտակը մտադիր է ամենակարճ ճանապարհով գնալ Բրունդիզիում, հանկարծակի գրավել այնտեղի նավերը և, միանալով Գանիկոսի զորքերին, բոլորին անցկացնել Սիցիլիա։ Հռոմեացիների դեմ կռվելու նրա անձնական ծրագրերը հանկարծակի փոխվել են։ Բայց ոչ բոլորն են նրա հետ համաձայն։ Ռազմական խորհուրդների ժամանակ կատաղի վեճեր են լինում։ Անջատված 10 հազարանոց ջոկատի հրամանատարները հայտարարել են, որ չեն ենթարկվում առաջնորդի նոր ծրագրին և ցանկանում են, ինչպես առաջ նա էր ցանկանում, արշավել Պոմպեոսի վրա։ Նրանք սուրհանդակներ են ուղարկել Կրասոսի հետևից եկող Գանիկոսի և մյուս լեգատների մոտ, համոզելու, որ միանան իրենց։ Նրանք հույս ունեն, որ Սպարտակը, տեսնելով, որ իրենք փոքրամասնություն են կազմել, կենթարկվի մեծամասնության ցանկությանը և բոլորի հետ միասին կշարժվի Պոմպեոսի վրա, ինչպես առաջ ինքն էլ էր ցանկանում։

Թշնամիների մեջ ընկած երկպառակության հաճելի լուրն առնելով՝ Կրասոսը քաջալերվեց և արդեն պատրաստակամությամբ բանակատեղ ընտրեց ապստամբների փոքր ճամբարի կողքին։ Նա հաղթանակի մեծ հույսեր ուներ և հիմա չէր պատրաստվում խույս տալ մարտից։ Ասենք, խուսափելը շատ դժվար էր, առջևում թշնամիների 10 հազարանոց ջոկատն էր, հետևում՝ Գանիկոսի գլխավորած ավելի մեծաթիվ զորքը, ձախից՝ ծովը, աջից՝ ընդամենը 10 կիլոմետր հեռավորության վրա, Սպարտակն էր՝ իր 30 հազարանոց բանակով։ Նման դրությունում, կարծես օղակի մեջ գտնվելով, նախընտրելի էր թվում մարտի մեջ մտնել ամենաթույլ հակառակորդի հետ։ Բայց քանի որ Կրասոսը բնավ չէր կասկածում, թե անջատվածները կարող են ս ;նություն ստանալ, ապա նա, իր հերթին, զորքը բաժանեց երեք մասի. Սպարտակի 30 հազարանոց բանակի դեմ նա առանձնացրեց 40 հազարանոց ընտիր զորք և հանձնեց իր առավել վաստակաշատ լեգատին՝ Կվ. Արիոսին, սպարտակյան «խոովարարների» 10 հազարանոց ջոկատի դեմ ինքը կանգնեց 15 հազարանոց զորքով (նրա հրամանատարության տակ էր նաև Կեսարի լեգեոնը), մնացած ուժերը հանձնեց Պ. Կոնսիդիոսի

հրամանատարությանը Գանիկոսին դիմակայելու համար։ Կրասոսն իր օգնականների որևէ հաջողության հույսը չուներ և հանձնարարեց նրանց միայն ամբողջ ուժով դիմադրել, ժամանակ շահել և իրեն անջատ ջոկատը ոչնչացնելու հնարավորություն տալ։

Այդ ընթացքում Գանիկոսը, որն ընդամենը 12 կիլոմետր հեռավորության վրա էր, մոտեցավ հռոմեացիների բանակատեղին և սկսեց խրամատավորվել, պատրաստվելով ուժեղ ճամբար կառուցել։

Բայց Կրասոսը չցանկացավ նրան ամրանալու հնարավորություն տալ և մարտի ազդանշան տվեց։ Կվ. Արիոսն ու իր լեգատներն առայժմ անգործության էին մատնված։ Բայց ոչ մեկը չէր կասկածում, որ ճակատամարտի լուրն առնելով՝ Սպարտակն անմիջապես կհայտնվի։

Իրականում այդպես էլ եղավ։ Հռոմեական ճամբարի երկու կողմերում անողոք մարտ ծավալվեց։ Կրասոսը և Կեսարը կատաղորեն հարձակվում էին «խռովարարների» վրա, երկուսն էլ քաջ գիտակցում էին, որ մարտնչում են հանուն իրենց ազդեցության և ապագա փառքի։ «Խռովարարները» եռանդուն դիմադրում էին։

Իրենց հերթին, Գանիկոսի և Կաստոսի ղեկավարած ապըստամբները մոլեգնաբար ճնշում էին հռոմեացիներին և սեղմում նրանց։ Երեք ժամ հետո հռոմեացիների մարտակարգը բացարձակորեն խախտվել էր։ Պ. Կոնսիդիոսն ապարդյուն սուրհանդակներ էր ուղարկում զորավարի մոտ, խնդրելով թույլ տալ, որ իրեն օժանդակելու համար վերցնի Արիոսի ուժերի մի մասը։ Կրասոսը նրա բոլոր խնդրանքները մերժում էր. ուր որ է Սպարտակը յուրայիններին կհասնի օգնության, նա արդեն ճանապարհին է, դիմացեք ամբողջ ուժով, մի քիչ էլ համբերեք, հակառակորդիս ոչնչացնելուց հետո ինքս կհասնեմ օգնության։

Եվ Պ. Կոնսիդիոսը դիմանում էր։ Աղաչելով և հայհոյելով՝ նա հայտնվում էր ամենավտանգավոր տեղերում, բռնելով փախչող զինվորների օձիքներից, դեմքով շրջում էր ապստամբների կողմը և գոռում. «Թշնամին այնտեղ է»։ Կոնսիդիոսը կարողացավ դիմանալ մինչև Կրասոսի մոտենալը։

Բայց երբ հայտնվեց Սպարտակը և հենց ընթացքից մարտի բռնվեց Արիոսի հետ, սկսելով նեղել նրան, ամենուրեք լեգեոն-

ներում տրամադրությունը կտրուկ ընկավ։ Կրասոսը և Կոնսիդիոսն արագորեն հասկացան այդ բանը։ Համոզվելով, որ հաղթանակի հույսեր չկան, զորավարը հրամայեց դեպի ճամբարները ընդհանուր նահանջի ազդանշան տալ, ինչը և կատարվեց.

Նոր խոշոր ճակատամարտի մասին Կրասոսը հայտնեց սենատին, առանձնապես շեշտելով իր հաղթանակը. սպարտակյան «խռովարարների» 10 հազարանոց ջոկատից նա մարտի դաշտում թողել է 6 հազարին, իսկ 900 հոգու գերի է վերցրել։ Այն մասին, թե ինչ արդյունք ունեցան Արիոսի և Սպարտակի, Կոնսիդիոսի և Գանիկոսի մարտերը, Կրասոսը գերադասեց լռել։

Նույն օրը երեկոյան Կրասոսը Հռոմից ստացավ սենատի որոշման պատճենը և մայրաքաղաքում տիրող իրադրության վերաբերյալ իր բազմաթիվ բարեկամների նամակները։ Սենատի որոշումը Կրասոսին ուրախացրեց։ Բայց նույն որոշումը Կրասոսին նաև վշտացրեց. հրամանատարությունը գտնվելու էր իր ձեռքում մինչև Պոմպեոսի հետ հանդիպելը...

Հռոմից դուրս եկող ամբողջ ճանապարհով մեկ սփռված Կրասոսի գործակալները հայտնում էին, որ Պոմպեոսն անցել էր Տերացինան։ Դա նշանակում էր, որ նա գտնվում է իրենից մոտավորապես 360 կիլոմետր հեռավորության վրա, այսինքն՝ ընդամենը ինը օրվա ճանապարհ։ Եվ հիմա օրավուր այդ տարածությունն արագորեն կրճատվելու է, չէ՞ որ սպարտակյան հրամանատարները, ինչպես Կրասոսին հայտնում էին նրա գաղտնի լրտեսները, ճակատամարտից հետո գումարված ռազմական խորհրդում կարողացել էին համոզել իրենց առաջնորդին շարժվել Պոմպեոսին ընդառաջ։

Այդ երեկո և գիշերը Կրասոսը և նրա լեգատները մտածելու շատ բան ունեին...

II

Այսպիսով, Կրասոսին գլխավոր ճակատամարտ տալու և լիովին ոչնչացնելու նպատակով «խռովարարների» 10 հազարանոց ջոկատի անջատման հետ կապված խորամանկությունը Սպարտակին ցանկալի արդյունք չտվեց։ Հռոմեացիները կռվում էին քաջաբար, նրանց զորավարները մարտական գործողությունները ղեկավարում էին շրջահայեցորեն, մյուս կողմից, թշնա-

մուն հաջողությամբ դիմադրելու համար 10 հազարանոց ջոկատը բացահայտորեն անբավարար դուրս եկավ։

Հրամանատարների հետ իրադրությունը քննարկելուց հետո Սպարտակը որոշեց նոր խորամանկության դիմել. այս անգամ բանակից անջատել 35 հազարանոց ջոկատ իր մերձավորագույն օգնականներ Գանիկոսի և Կաստոսի գլխավորությամբ։ Նրանք սեփական ուժերով կռվելու պատրվակով պետք է հեռանային և շարժվեին դեպի Հյուսիս՝ Պոմպեոսին ընդառաջ, իրենց հետևից տանելով Կրասոսին։ Սպարտակն ինքը պետք է մեկ օր մնար Սիլարոսի վերին հոսանքներում և դբանով Կրասոսին ապստամբական բանակից անջատված ջոկատին անարգել ոչնչացնելու հույս ներշնչեր։

Սպարտակը նախատեսել էր մեկ օր հետո դուրս գալ ճամբարից և շարժվել դեպի Լուկանյան լիճը, որտեղ մտադիր էր Կրասոսի հետ նոր գլխավոր ճակատամարտ տալ։ Գանիկոսը պետք է սկսեր այն, իսկ Սպարտակը ավելի ուշ մոտենար և ընթացքից մտներ ճակատամարտի մեջ։

Ապստամբների առաջնորդի հաշվարկով այդ ճակատամարտը Կրասոսին հաղթելու վերջին հնարավորությունն էր տալիս. հաջորդ օրը մարտերի դոտին էր մտնում Պոմպեոսը։ Դրանից հետո Կրասոսը արդեն պետք է մտածեր ոչ թե ստրուկների դեմ հաղթանակ տանելու, այլ գլխավորապես այն մասին, թե ինչպես խուսափեր նրա հետ հանդիպելուց (Պոմպեոսին հանդիպելիս Կրասոսը պետք է հանձներ հրամանատարությունը)։

Համաձայն ընդունված որոշման, 72 թվականի դեկտեմբերի 29-ի առավոտյան 35 հազար հետևակ և 2 հազար հեծելակ Գանիկոսի և Կաստոսի գլխավորությամբ թողեցին ճամբարը և շարժվեցին դեպի Հյուսիս։

Միաժամանակ Սպարտակի մոտից Կրասոսի ճամբարը փախան նոր կեղծ փախստականներ, իսկ հռոմեական զորավարի «կողմնակից» ապստամբական հրամանատարները նրան նոր շտապ նամակներ ուղարկեցին։

Կրասոսն իր լեգատների հետ անհամբերությամբ կարդաց այդ նամակները և հարցաքննեց «փախստականներին»։ Պատկերը հետևյալն էր ներկայացնում։

Սպարտակի ռազմական խորհրդում ընդհարումը անընդհատ ծավալվում էր։ Ռեգիումի մոտ ճեղքումից առաջ ապստամբական լեգատների գումարած վերջին խորհրդակցության ժամանակ

Պոմպեոսի դեմ շարժվելու համար կողմ քվեարկեցին երկու ձայն (նրանք ներկայացնում են 10 հազար հոգի), Սիցիլիա անցնելու նպատակով Բրունդիզիում շարժվելու կողմ՝ վեց ձայն (30 հազար հոգի)։ Տասնհինգ հոգի քվեարկությունից ձեռնպահ մնաց (իսկ նրանք ներկայացնում էին 75 հազար հոգի), գլուխ-նելով, որ հարցը բավականաչափ պարզ չէ։

Կրասոսի հետ 10 հազարանոց ջոկատի տված անհաջող ճակատամարտից հետո գումարված խորհրդակցության ժամանակ պատակտումը խիստ խորացավ. Բրունդիզիում շարժվելու օգտին առաջվա նման արտահայտվում էին վեց հոգի, Պոմպեոսի վրա արշավելու կողմնակիցների թիվն արդեն հասել էր յոթի, ձեռնպահների քանակը տասնհինգից կրճատվել էր մինչև ինը։ Քանի որ Սպարտակի՝ որպես գերագույն առաջնորդի, ձայնի գումարումը ոչ մի կողմին առավելություն չբերեց, որոշվեց նոր քվեարկություն կատարել առավոտյան։

Ամբողջ գիշեր կողմերի ներկայացուցիչները համառորեն համոզում էին չեղոքներին։ Գանիկոսը կուրծք էր ծեծում և վստահեցնում, որ հաղթանակը մոտ է. մնում է շարժվել Պոմպեոսի վրա և իրենք կհաղթեն։ Այդպես է ներշնչում իրեն իր ներքին ձայնը, որը երբեք իրեն չի խաբել։ Թող ինքը չորանա անեղում, եթե իր կանխագուշակումը սուտ է։ Եվ այնժամ թող խայտառակվի նրա իսկական փառավոր Կանիկիոս («Հաղթանակ կանխագուշակող») անունը և թող մոռացվի նրա հռոմեական Գանիկոս («Հաղթանակներով փայլող») անունը։ Այդպես էր խոսում Գանիկոսը, և նրան ամեն կերպ քաջալերում էր Կաստոսը։ Եվ չնայած երկուսն էլ իրենց խելքի, քաջության, զուսպ ապրելակերպի համար, ինչի մասին խոսում էր հենց Կաստոսի անունը (Կաստոս նշանակում է «Անբիծ, անշահախնդիր»), մեծ ճանաչում և հեղինակություն ունեին, այնուամենայնիվ, չկարողացան վեճի ժամանակ դիմադրել գերագույն առաջնորդին։ Բոլոր միջոցներով նրանց ճնշելով, Սպարտակը հաղթեց։ Ի վերջո 16 ձայներով (բոլոր տատանվողները միացան նրան) ընդդեմ 7-ի նա անցկացրեց Բրունդիզիում շարժվելու առաջարկը։ Ի պատասխան Գանիկոսը և Կաստոսը հատուկ խորհրդակցություն գումարեցին և որոշում կայացրին չենթարկվել մեծամասնությանը, անջատվել զորքից և շարժվել Պոմպեոսի վրա, սեփական պատասխանատվությամբ պատերազմ սկսել։ Նման որոշումը Սպարտակի կողմնակից հրամանատարների մեջ խ-

կական փոթորիկ առաջացրեց։ Գերագույն առաջնորդը, օլիմպիացու նման, պառակտիչների գլխին շանթ ու որոտ էր թափում։ Նա պահանջում էր խռովարարներին ձերբակալել և նրանց աջակցող լեգեոնները զինաթափել։ Նրան եռանդուն հակաճառում էին նախկին շեզոք հրամանատարները, որոնք ամենից շատ վախենում էին ներքին երկպառակտչական զինված պայքարից։

Տվյալ պահին վիճաբանություններն այնքան էին թեժացել, որ նույնիսկ դժվար էր գուշակել, թե ինչով կվերջանան. կդնա՞ն արդյոք լեգեոնները միանգամից դեպի Բրունդիզիում, Գանիկոսին և նրա գործընկերոջը բախտի քմահաճույքին թողնելով, թե՞ Սպարտակը վերջ ի վերջո կհաղթի հակառակվողներին և կհետապնդի անջատված խռովարարներին՝ պատժելու նպատակով...

Ահա թե ինչպիսի կարծիք էին ստեղծել իրենց համար Կրասոսն ու նրա լեգատները ստացված նամակների և «փախստականների» հարցաքննության հիման վրա։

Նրանց միջև էլ, իր հերթին, անմիջապես կատաղի վեճ ծագեց։ Կվ. Արիոսը, Կեսարը և մի խումբ ջահել հրամանատարներ, որոնք ձգտում էին ինքնուրույն գործողություններով աչքի ընկնել, Կրասոսին առաջարկում էին զորքը բաժանել երկու մասի. մի մասն ուղարկել Գանիկոսին և Կասոսին հետապնդելու, հրամայելով, որ մինչև Պոմպեոսի հետ հանդիպելը ոչընչացնեն նրանց, երկրորդ մասը սեփական հրամանատարությամբ ուղղել Սպարտակի դեմ, հարմար առիթը ներկայանալու դեպքում նոր գլխավոր ճակատամարտ տալու պայմանով։

Նման առաջարկը Կրասոսին դուր չեկավ։ Նրա կարծիքով զորքը կիսելը նշանակում էր թուլացնել։ Այդ պատճառով զորավարն առաջարկեց, հակառակորդի մտադրությունը պարզելու համար մինչև երեկո մնալ տեղում, ուշադրություն չդարձնելով ապստամբական ուժերի մի մասի հեռանալու վրա։ Եթե Սպարտակն օրվա ընթացքում չկարողանա համաձայնության գալ յուրայինների հետ, ապա ուշադրությունը շեղելու նպատակով երկու լեգեոն թողնել ճամբարում, իսկ մնացած զորքով գաղտնի հեռանալ ճամբարից, հետապնդել խռովարարներին և հանկարծակի հարձակումով ջախջախել նրանց, ինչպես արեց Արիոսը Կրիքսոսի հետ։

Կրասոսի առաջարկը շատերի սրտովը չէր, և նրանք փորձեցին վիճարկել։ Բայց անարդյունք։ Զորավարը համառորեն պնդում էր իրենը, իսկ Պ. Կոնսիդիոսը լիովին պաշտպանում էր նրան։

Օրը տանջալիորեն երկար էր ձգվում։ Սպարտակը տեղից չէր շարժվում... Վերջապես վրա հասավ անհամբերությամբ սպասված գիշերը։ Զորավարի կարգադրությամբ բանակը անաղմուկ դուրս եկավ ճամբարից՝ դումակը պաշտպանելու համար տեղում երկու լեգեոն թողնելով (իրենց հետ վերցրել էին միայն ամենաանհրաժեշտ բաները), ապստամբների պահակակետերը շրջանցող նախօրոք հետախուզված ճանապարհով շարժվեց դեպի հյուսիս։

Երկու օրվա ընթացքում՝ դեկտեմբերի 30-ին և 31-ին, հռոմեական զորքերը մեծ անցումներով շտապում էին անջատված ապստամբական լեգեոնների հետևից և վերջապես նրանց հասան Լուկանյան լճի մոտ։

Այդ ընթացքում հռոմեացի զորավարի անհանգստությունը հասավ ծայրակետին։ Նախ, Պոմպեոսից բաժանող տարածությունն արդեն կրճատվել էր մինչև նվազագույնը, և այժմ այն կազմում էր ինչ-որ 100 կիլոմետր։ Երկրորդ, ինչպես հաղորդել էին հետախուզները ու փախստականները, Սպարտակը և նրա լեգատները, հայտնաբերելով հռոմեական բանակի հեռացումը, անմիջապես դադարեցրել էին բոլոր վիճաբանությունները և շարժվում էին իրենց խռովարար ընկերներին օգնության։

Դանդաղել չէր կարելի։ Լուկանյան լճին հասնելուն պես Կրասոսը հրամայեց երկու ճամբար կառուցել, փոքրը Կաստոսի և Գանիկոսի դեմ, այն զբաղեցրեց Արիոսը 40 հազար հետևակով և 3 հազար հեծյալով, և մյուսը՝ մեծը, Սպարտակի դեմ, որտեղ տեղավորվեց ինքը զորքի մեծ մասով։

Նոր էին հողային աշխատանքներն ավարտել, երբ Կրասոսն Արիոսին հրամայեց սկսել ճակատամարտը։

Վերջինս, առանց հապաղելու, հետևազորն ու այրուձին դուրս բերեց դաշտ, մոտեցրեց թշնամու ճամբարին և սկսեց ապստամբներին ճակատամարտի կոչ նետել։ Գանիկոսը բնավ չշփոթվեց։ Իր հերթին, 35 հազարանոց հետևակը, 2 հազարանոց հեծելազորը դուրս բերելով ճամբարից, մարտակարգով շարեց։ Զախ թևը, շրջանցելու հնարավորությունից զրկելու նպատակով,

միացրեց լճին, իսկ ամբողջ հեծելազորը կենտրոնացրեց հակառակ թևում։

Սպարտակյանների հին թշնամի Արիոսը, Կրիքսոսի դեմ տարած հաղթանակով հպարտ, հաղթողի նոր դափնիներ վաստակելու ուժեղ հույսեր ուներ։ Բայց գործն այնպես հասարակ չեղավ, ինչպես կանխատեսել էր։

Մի քանի ժամ շարունակ համառ մարտ էր գնում։ Երկու կողմերի զորավարները հոգնածներին փոխարինում էին թարմ ուժերով, վտանգավոր պահերին անձամբ հայտնվում էին մարտական դիրքերում։ Թիկնապահներով շրջապատված, նրանք մոլեգին կռվում էին սրերով։

Օրը թեքվում էր դեպի երեկո, իսկ Արիոսը դեռ չէր կարողանում հաջողության հասնել։ Ապստամբների ամուր դիրքերը բացառում էին շրջանցելու հնարավորությունը և նաև հնարավորություն չէին տալիս ճակատով մեկ ծավալել ավելի շատ ուժեր, քան իրենք կարող էին հետ մղել։

Վերջապես, անհաջողությունից կատաղած Կրասոսը փողհարներին հրամայեց թշնամու հեծյալների հետ ապարդյուն մարտնչող իր հեծյալներին «դադար» ազդանշանը տալ։ Ենթարկվելով զորավարի հրամանին, Լ. Կվինկցիոսը իր մարդկանց հետ սկսեց հետ քաշվել։ Ապստամբները նրան չէին հետապնդում։ Գանիկոսը ցանկացավ իր հեծելազորին նույնպես հանդիստ տալ։ Այդ բանը, սակայն, Կրասոսի հաշվարկների մեջ չէր մտնում։ Իր մոտ մնացած 7 հազար հեծելակից (նրա մոտ անընդմեջ համալրումներ էին ժամանում) նա նոր ընտիր հեծելազոր մտցրեց մարտի մեջ։

Թարմ ուժերի հարվածին Գանիկոսի այրուձին չդիմացավ և սկսեց նահանջել։ Նրանցից հետո ապստամբների լեգեոնները էլ ցնցվեցին և, իրենց հերթին, լճի մոտից սկսեցին նահանջել թիկունքում գտնվող Կալամատիա լեռան ուղղությամբ։

Ճակատամարտի ամենաճակատագրական պահին (Կրասոսն արդեն հույս ուներ, որ ևս մեկ ուժեղ հարձակմամբ կհաջողվի տապալել հակառակորդին) իր լեգեոններով հայտնվեց Սպարտակը։ Լայն բացված մարտաշարքով նա հարձակվեց Կրասոսի հրամանատարության տակ գտնվող հռոմեական զորքի մեծ մասի վրա։

Դրանից հետո կողմերի հնարավորություններն արագորեն

հավասարվեցին, քանի որ Արիոսը շուտով ստիպված եղավ ուժերի մի մասն ուղարկել Կրասոսին օգնության։

Ճակատամարտն անողոք կատաղությամբ մի քանի ժամ ևս շարունակվեց։ Երկու կողմերն էլ ուժերի հուսահատ լարումով պայքարում էին հաղթանակի համար։ Բայց ապարդյուն։ Մութը ստիպեց զորավարներին ճակատամարտը դադարեցնելու և ելման դիրքերը հետ քաշվելու ազդանշաններ հնչեցնել[1]։

III

Հաջող ճակատամարտից բորբոքված լեգեոնները հավաքվեցին Կրասոսի վրանում։ Յուրաքանչյուրը պարծենալու բան ուներ։ Կրասոսը և Արիոսը, չնայած կորուստներին, միանգամայն գոհ էին կրկնակի ճակատամարտի արդյունքից. նախ՝ լեգեոնականները կռվում էին քաջաբար, երկրորդ՝ թշնամու կորուստները քիչ չէին, եթե ոչ շատ, երրորդ՝ ըստ լուրերի, Սպարտակը ղրկվել էր իր ամենանշանավոր զինակից՝ Գանիկոսից, որն ընկել էր մարտում։

Հռոմեացիներին հասած լուրը ճիշտ դուրս եկավ։ Շուտով այդ բանը հաստատեցին նոր «փախստականները»։ Ապստամբների ճամբարը ընկղմվեց սգի մեջ։ Մարտում ընկած Գանիկոսի և մյուս հրամանատարների թաղման խարույկների մոտ Սպարտակը և նրա զինակիցներն ամբողջ զորքի առաջ ճառեր էին ասում՝ փառաբանելով զոհված ընկերների քաջությունը։

Բոլորը միաձայն առանձնահատուկ գովեստով էին խոսում Գանիկոսի մասին՝ հրաշալի ընկերոջ, հեռատես զորավարի, քաջարի մարտիկի և կրթված մարդու, որը չնայած կելտական ծագմանը, Գայոս լատինական անունն էր ընդունել։

Սգո ճառերից հետո թաղման խարույկները վառվեցին։ Եվ կրկին, ինչպես առաջ, գերի հռոմեացիները սարսափելի անեծքներով պետք է գլադիատորական զորքի աչքի առաջ զենքով կռվեին միմյանց դեմ, ի հիշատակ զոհված ապստամբական հրամանատարների...

Այդպես ավարտվեց օրը։ Զոհվածների աճյունները լցրեցին սափորների մեջ, որոնք զոհվածների առավել մտերիմ ըն-

---

[1] Այն, որ առաջին ճակատամարտի ժամանակ Կրասոսին այդպես էլ չհաջողվեց ջախջախել Գանիկոսին, վկայում է Պլուտարքոսը։

կերները վրիժառության երդում տալով, պահեցին իրենց մոտ որպես մասունքներ։

Հետո բոլորը ցրվեցին իրենց վրանները։ Վաղը նոր ճակատամարտ էր սպասվում։ Իսկ Կաստոսը և փոքր զորքի էլի մի քանի լեգատներ մինչև կեսգիշեր գտնվում էին Սպարտակի վրանում։ Նրանք գինի էին խմում և հիշում իրենցից առհավետ հեռացած մարտական ընկերների ամենափայլուն քաջագործությունները։

Հետո նրանք քննարկում էին ցերեկվա իրադարձությունները և առաջիկա նոր, Պոմպեոսի գալստից առաջ վերջին, ճակատամարտը։

Հրաժեշտ տալով, Սպարտակը պինդ գրկեց Կաստոսին և եղբայրաբար համբուրեց նրան։ Ո՞վ կարող էր հաստատ գիտենալ, թե ի՞նչ է թաքցնում վաղվա օրը։

IV

Գիշերը հանդիստ անցավ։ Կաստոսն ընկերների հետ վերադարձավ փոքր ճամբար։ Մարտիկները հանգստանում էին, և Գանիկոսի (նախորդ ճակատամարտում Գանիկոսը գլխավորում էր աջ թևը, իսկ Կաստոսը՝ կենտրոնի զորքերը) փոխանորդը նույնպես պառկեց քնելու, վաղվա ճակատամարտից առաջ անհրաժեշտ էր լավ հանգստանալ։

Իսկ Կրասոսը, յուրայիններին հետ խորհրդակցելով, բավականին դժվարությամբ նրանց մի կարծիքի հանգեցրեց։ Արիոսի և նրա սպաների համար հարցը միանգամայն պարզ էր թվում. բոլորը պետք է մնան իրենց տեղերում։ Այդպիսով, իրեն վերապահելով Կաստոսի հակառակորդը լինելու հանգամանքը, փառասեր Արիոսը հույս ուներ դառնալու Սպարտակի նաև երրորդ մերձավորագույն օգնականի հաղթողը։ Կրասոսը հիանալի հասկանում էր նրա այդ գաղտնի հույսը և դժվարությամբ էր թաքցնում իր դժգոհությունը. նա ամենևին էլ չէր ցանկանում, որ իր օգնականը քաջագործություններով ստվեր գցեր իր վրա։

Խորաթափանց Պ. Կոնսիդիոսը հեշտությամբ որսաց զորավարի թաքուն դժգոհությունը և նրան խորամանկ խորհուրդ տվեց. հարկավոր է զորքերը փոխել։ Թող Արիոսը կանգնի Սպարտակի դեմ, իսկ նա՝ Կրասոսը, Կաստոսի դեմ։ Կրասոսի վրանը թող առաջվա նման մնա մեծ ճամբարում, Կրասոսի

դրոշն էլ թող մնա մեծ զորքի մեջ, որը կղեկավարի Արիոսը։ Դրանով խաբված Սպարտակը կմտածի, թե նրա դիմաց Կրասոսն է, այնինչ ստիպված կլինի կռվել Արիոսի դեմ։ Իսկ Կրասոսը, Կաստոսին խաբելով, կկռվի նրա դեմ և, իհարկե, կոչնչացնի նրան։ Այսպիսով, փառքը բաժին կընկնի Կրասոսին, իսկ Արիոսը չի կարողանա խլել այն, քանի որ նրա դեմ կկռվի ինքը Սպարտակը։

Պ. Կոնսիդիոսի խորամանկ խորհուրդը Կրասոսին դուր եկավ, և զինվորական խորհրդի ժամանակ նա խոսեց զորքերը փոխելու անհրաժեշտության մասին։ Արիոսն անմիջապես հասկացավ, թե բանն ինչ է, և սկսեց առարկել, ապացուցելով, որ նման փոխանակությունը նպատակահարմար չէ և կարող է տարօրինակ թվալ ամբողջ զորքին։ Երկարատև վեճից հետո, նա, այնուամենայնիվ, ստիպված եղավ դիջել։

Ռազմական խորհրդից հետո անմիջապես Կրասոսը նախկինում Արիոսին ենթարկվող լեգեոնների հետ գնաց փոքր ճամբար։ Վիրավորված Արիոսը մնաց մեծ ճամբարում։ Նրա տրամադրությունը մռայլ էր։ Ձայրույթից շրթունքները կրծոտելով և խորամանկ Պ. Կոնսիդիոսին անիծելով, նա ինքն իրեն խոստացավ Կրասոսից վրեժ լուծել այդ օրվա վիրավորանքի համար, որ խլել էր նրանից անկասկած Կաստոսին հաղթելու փառքը և նշանակել էր Սպարտակի դեմ դժվարադույն ճակատամարտը վարելու՝ առանց սեփական դրոշը բարձրացնելու իրավունքի։

V

Մոտենում էր երկար սպասված առավոտը։ Արևածագից վաղ արթնացած Կրասոսը և Արիոսը հուզված քայլում էին իրենց վրաններում։ Արիոսը կորցրել էր իրեն. կրկին ստիպված էր Սպարտակի հետ զենքերը խաչաձևել։ Կրասոսը մտահոգված էր իր կողմից դարանելու ուղարկված լեգեոնի ճակատագրով։

Արևածագից մի քանի ժամ առաջ հռոմեական զորավարը Կեսարի հրամանատարությամբ 6 հազար հոգու ուղարկել էր ենթադրվող մարտադաշտից ոչ հեռու գտնվող բլուրն զբաղեցնելու։ Դարանակալողներին հրամայված էր հարվածել թշնամու թիկունքին այն ժամանակ, երբ կսկսվի ճակատամարտը և հռոմեացիները կսկսեն առերես նահանջել, իսկ գլադիատորները կսկսեն նրանց հետապնդել։

Կրասոսն այդ ծրագրի հետ մեծ հույսեր էր կապում, բայց, ի տհաճություն նրա, դա անմիջապես խափանվեց։ Բանն այսպես պատահեց։

Դեռ լուսաբացից առաջ (71 թ. հունվարի 1-ին) երկու կին՝ մեկը Թրակուհի, իսկ մյուսը գալատուհի (երկուսն էլ Սպարտակի կնոջ[1] կողմից գլխավորած Արևի աստծո քրմական խորհրդի քրմուհիներ էին և գորքում կրոնական ծեսեր էին կատարում), գնացել էին Կալամատիա լեռը նոր տարվա պատվին զոհեր մատուցելու. այդպիսի զոհաբերություններ կատարվում էին ամեն տարի։

Զոհեր մատուցելիս, լեռան վրայից նրանք տեսան բլրին դարան մտած հռոմեացիներին, որոնք իրենց զրահները և սաղավարտները ծածկել էին կանաչով։ Թշնամուն հայտնաբերելով, անմիջապես վազեցին ճամբար։

Նրանց դիմավորեց առույգ, հանգստացած, վստահություն և համբերություն ճառագող Կաստոսը։ Հետախույզներով շրջապատված՝ նա սրանց հրահանգներ էր տալիս ենթադրվող մարտադաշտի շրջակայքը դննելու համար։

Քրմուհիների տեղեկությունը ճիշտ ժամանակին հասավ։ Կաստոսն անմիջապես լրտեսներ ուղարկեց՝ հրամայելով գտնել թշնամու դարանին մոտենալու առավել հարմար ուղիները։ Միաժամանակ կարգադրեց արթնացնել լեգեոններին, կերակրել մարդկանց և նախապատրաստել մարտի։

Նրա կարգադրությունները կատարվեցին ամբողջ եռանդով։ Շուտով վերադարձան հետախույզները։ Նրանց հետ խոսելուց հետո Կաստոսը լեգատներից մեկին հրամայեց, որ իր լեգեոնն

---

[1] Սպարտակի կինը ծագումով Թրակուհի էր, «գուշակուհի և դիոնիսոսիոսական նեբշնանքներով մոլագար» (Պլուտարքոս), միաժամանակ հանդես էր գալիս նաև որպես Դիոնիսիոս-Սալմոկսիս Թրակական աստծո քրմուհի։ Նա Սպարտակի մտածած գործի ակտիվ մասնակիցն էր և հոգ էր տանում մասսաների մեջ նրա հեղինակության բարձրացման համար։ Մի անգամ նա երազում տեսել էր, որ օձը փաթաթվել է Սպարտակի գլխին, երազը նա մեկնաբանում էր որպես կանխանշան «մեծ ու ահեղ զորության», որն աղաղակում նրան է վիճակվելու (Սպարտակի զոհվելուց հետո այդ «կանխագուշակմանն» ավելացրին, որ դա «դժբախտ վախճանի» կանխանշան է եղել)։

Երբ դավադրությունը բացահայտվեց, Սպարտակի կինը նրա հետ փախավ Վեզուվ և ամբողջ պատերազմի ժամանակ երևելի դեր էր խաղում ապստամբների գործերում։

առնի և գտնված ճանապարհով գաղտնի մոտենա Թշնամուն ու հանկարծակի գրոհի նրա վրա։

Եվ ահա այնպես ստացվեց, որ ապստամբների վրա անսպասելիորեն հարձակվելու փոխարեն, Կեսարն ինքը դարձավ հանկարծակի հարձակման զոհ։ Հուսահատորեն հետ-հետ քաշվելով, նա անմիջապես մարդ ուղարկեց Կրասոսից օգնություն խնդրելու։

Պատահածի լուրն առնելով, Կրասոսը կոպտորեն հայհոյեց. բավական չէ, որ դարանակալումն ի չիք էր եղել, դեռ նախաձեռնությունն էլ անցել է Թշնամու ձեռքը։ Բայց հապաղել չէր կարելի. Կեսարը դժվար դրության մեջ էր գտնվում։

Զորավարի կարգադրությամբ բուկցինարիուսներն իրենց փողերով լեգատներին կանչեցին նրա վրանը։ Նրանք եկան ծայր աստիճանի բորբոքված։ Բոլորն այն կարծիքին էին, որ դարանի խափանման համար մեղավորը Կրասոսն է, որն անշնորհք հրամանատար է նշանակել, Արիոսի օրոք նման բան չէր պատահի։

Կրասոսը, սակայն, ձեացրեց, թե չի նկատում լեգատների վրդովմունքը։ Սառնասրտորեն յուրաքանչյուրին ցույց տվեց իր տեղը շարքում, հրամայեց ուժերի մի մասն ուղարկել Կեսարին օգնության, իսկ Կվինկցիոսին հրամայեց ճամբարների միջև բաժանած հեծելազորը ուղարկել Թշնամիների բանակատեղերը և սկսել սորուկներին մարտի կանչել։

Կվինկցիոսն առանց հապաղելու կատարեց հրամանը։ Հռոմեական հեծելազորի մի մասը մոտեցավ Սպարտակի ճամբարին և հայհոյելով ու վիրավորանքներ տեղալով սկսեց հողաթմբից ներս քարեր ու նիզակներ շպրտել, մյուս մասը նույն բանը կատարեց Կաստոսի ճամբարի մոտ։

Սպարտակն ու Կաստոսը պատասխանեցին միանման. երկուսն էլ սկսեցին լեգեոնները դուրս բերել ճամբարից։ Առաջ ուղարկված այրուձին մարտի բռնվեց Թշնամու հետ և սկսեց նրան հետ ճնշել։

Համոզվելով, որ ապստամբները մտադիր են ճակատամարտ տալ, Կվինկցիոսը հրամայեց յուրայիններին նահանջել։ Եվ երբ ապստամբների հետևակը, արագաքայլ հետևելով հեծելազորին, մոտեցավ մարտակարգով շարված Կրասոսի լեգեոններին, հռոմեական այրուձին բացվեց, քաշվեց դեպի թևերը, իսկ հռոմեացիների հետևակը գոչյունով հարվածեց Թշնամուն։ Այսպես սկսվեց այս պատերազմի ամենամեծ ճակատամարտը (Պլուտարքոս)։

Երկու ժամ շարունակ ապստամբները և հռոմեացիները, միմյանց չզիջելով, կատաղորեն կռտորում էին իրար։ Հետո նախկին պատկերը նորից կրկնվեց. Սպարտակը սկսեց ճնշել Արիոսին, ստիպելով նրան նահանջել դեպի ճամբարը, իսկ Կրասոսը և Կոնսիդիոսը սկսեցին ճնշել Կաստոսի լեգեոններին։

Տեսնելով իր զինվորների նահանջը, Կաստոսը նետվեց նրանց առաջն առնելու։ Ենթարկվելով նրա տիրական խոսքին և անձնական օրինակին, ապստամբները կրկին խտացրին շարքերը և սկսեցին մոլեգնաբար հետ մղել թշնամու հարձակումը։

Կարծես թե արդեն բոլորովին կռտրված հակառակորդի համառ դիմադրությունը Կրասոսին համբերությունից հանեց, և նա Արիոսին հրաման ուղարկեց, որ իր տրամադրության տակ եղած պահեստային զորքը իրեն՝ Կրասոսին, հանձնի։

VI

Զորավարից այսպիսի կարգադրությունը ստանալով, Արիոսը կուչուձիգ եղավ։ Նրա վիճակն էլ ծանր էր։ Գիտենալով, որ այս ճակատամարտը վերջինն է Պոմպեոսի մոտենալուց առաջ և որ վաղը նա այստեղ է լինելու, Սպարտակը անձամբ էր վճռական գրոհի տանում իր լեգեոնները։ Այդ սարսափելի ճընշմանը դիմադրելու ուժ չունենալով, հռոմեացիները քայլ առ քայլ հետ էին նահանջում։

Բոլոր կողմերից Արիոսի մոտ տագնապած բանբերներ էին թռչում և օգնություն խնդրում։ Բայց արդեն զորավարի ձեռքում էր պահեստային զորքերը հանձնելու Կրասոսի հրամանը։

Արիոսի շքախմբի ռազմական տրիբունների դեմքերը նյարդային սարսափելի լարումից սմքել էին։ Արիոսի դեմքը, կարծես, քարացել էր։ Տաղանդավոր զորավարը, այդ քաջարի մարդը Կրասոսի որոշումը սխալ էր համարում. նրա կարծիքով, գլխավոր մարտը տեղի էր ունենում այստեղ, և անմտություն էր պահեստի վերջին ուժերն օգտագործել երկրորդական ճակատում։ Զորավարի առողջ բանականությունը Արիոսի ներսում պայքարում էր յուրաքանչյուր հռոմեացու մեջ դաստիարակված հնազանդության սովորության հետ։ Վերջինս դժվարությամբ, բայց հաղթանակեց։

Գրագրի ձեռքից վերցնելով մաքուր մի սալիկ, Արիոսն արագորեն մի քանի նախադասություն գրեց, սալիկը կնքեց

անձնական կնիքով, հանձնեց պահեստի հեծելազորի հրամանատարին և ասաց նրան. «Ամբողջ այրուձին՝ Մարկոսի մոտ»։

Պահեստազորի հրամանատարը շրջվեց իրեն ուղեկցող դեցուրիոնների կողմը, նրանց նշան տվեց և ձիու գլուխը թեքելով, արշավեց աջ թևի հետևում կանգնած հեծյալների կողմը։ Մի քանի րոպե անց գետինը ծանրորեն ցնցվեց՝ սկսեցին շարժվել հեծելազորի «ընտիր» չոկատները։

Հայացքով ուղեկցելով նրանց, Արիոսը սովոր շարժումով ձեռքն առավ վահանը և շրջվելով շքախմբի տրիբունների կողմն, ասաց.

— Բոլո՞ր ձիերը, սկսած իմից, տանել թիկո՞ւնք։ Բոլորս ի մա՞ռ։

Մոտակայքում կանգնած ձիապանները, բռնելով ձիերի սանձերից, նրանց տարան հետ, մարտական գծերից դուրս, իսկ բոլոր տրիբունները վերցնելով վահանները՝ զորավարի հետևից շարժվեցին առաջ։ Այստեղ, շարք կանգնելով լեգեոնականների հետ՝ նրանք արիաբար դիմավորեցին ապստամբների սարսափելի գրոհը...

VII

Ստանալով Արիոսի երկտողը, որով նախազգուշացվում էր, որ եթե մեկ ժամվա ընթացքում «ընտիր» զորամասերը չվերադառնան, ապա ինքը գլխովին կջախջախվի, Կրասոսը ցնցվեց։ Նրա մտքերը սկսեցին տատանվել։ Նա արդեն պատրաստվում էր պահեստային զորքին հրամայել անհապաղ վերադառնալ։ Կոնսիդիոսը մեծ դժվարությամբ կարողացավ համոզել նրան հետ կանգնել այդ անմտությունից և գոնե մեկ անգամ գրոհել։ Կրասոսը համաձայնեց և փոքր-ինչ տատանվելուց հետո նույնիսկ վճռեց անձամբ գլխավորել այդ հուսահատական գրոհը։

Կրկին խոպոտ հնչեցին շեփորները։ Կրասոսի և նրա թիկնապահների գլխավորությամբ հռոմեացիների հեծելազորի 5 հազարանոց զորասյունը վարդով շրջանցեց մարտնչողների աջ թևը և տարածվելով թիկունքից հարձակվեց ապստամբների հեծելազորի վրա։

Կաստոսի դիտորդները նոր թշնամու հայտնվելուն պես պայմանանշանով իրենց զորավարին անմիջապես տեղեկացրին վտանգի մասին։

Կաստոսի սիրտը ճմլվեց։ Կայծակի նման այրեց մի միտք. «Մի՞թե Պոմպեոսի այրուձին է։ Անհնա՞ր է...»

Թիկնապահների հետ մարտից դուրս պրծնելով, Կաստոսը նետվեց դեպի 2 հազարանոց պահեստի հեծյալ զորքը, իր հերթին արագորեն տարածելով այն, սլացավ հռոմեացիներին ընդառաջ, նպատակ ունենալով հակառակորդի առաջն առնել և աջ թևին հնարավորություն տալ նահանջելու դեպի ճամբար՝ շրջանցելու հնարավորությունը կանխելու համար։

Սկսվեց հեծելազորի մի նոր դաժան ու անողոք մարտ։ Եվ բախտը Կրասոսի նկատմամբ ոգորված գտնվեց։ Ջնայած իրեն «խելահեղ ռիսկի» (Պլուտարքոս) ենթարկեց, բայց և այնպես հաղթեց թշնամուն։

Կասեցնելով հռոմեացիներին և իր հետևազորին հնարավորություն տալով կարգով նահանջել, ապստամբների գերմանա-գալլիական այրուձին չկարողացավ դիմադրել, հռոմեացիների գերակշռող ուժերից տապալվեց և գլխովին ջախջախվեց։ Խիզախորեն մարտնչող Կաստոսն էլ ընկավ ճակատամարտում։

Կատարելով իր գործը և հակառակորդի հեծելազորի մնացորդներին վերջ տալը թողնելով Կվինկցիոսին, Արիոսի այրուձին շրջվեց և շտապեց հետ։

Այն տեղ հասավ ճիշտ ժամանակին. հռոմեացիների հետևակն այլևս դիմադրելու ուժ չունենալով, պատրաստվում էր արդեն խուճապահար փախուստի դիմել։ Հեծելազորի վերադարձը նրան ստիպեց կրկին ոգեշնչվել։

Բայց Սպարտակն էլ, իր հերթին գործի դրեց վճռական պահի համար ինամքով պահպանված իր պահեստային այրուձին...

VIII

Սուրհանդակից իմանալով, որ Արիոսն այլևս դիմադրելու ուժ չունի և նահանջում է դեպի ճամբար, Կրասոսը հրամայեց «դադար» ազդանշանը փոշհարել։ Իր հերթին, դեպի փոքր ճամբար նահանջել սկսելով, նա Կնեարի մոտ սուրհանդակ ուղարկեց, հրամայելով հետ դառնալ իրեն միանալու համար։

Բայց վերջինիս չհաջողվեց կատարել հրամանը։ Սպարտակը, Արիոսին ստիպելով դեպի ճամբար նահանջել, անմիջապես հեծելազորի մի մասն ուղարկեց Կնեարի դեմ։ Անհաջողությամբ

կռվող լեգեոնականները չկարողացան դիմանալ մեծ ուժերով հարձակվող հեծելազորին, խախտեցին շարքերը և փախուստի դիմեցին։

Հետագայում «Գալլական պատերազմում» Կեսարը հպանցիկ կարտահայտի գրեթե փիլիսոփայական խրատական մի ասացվածք. «Այնպիսի քաջ մարդ չկա, որին տագնապի մեջ չդցի անսպասելիությունը»։

Նա Կրասոսի ճամբարը եկավ մի բուռ հեծյալների և թիկնապահների խմբով, ամոթից և գայրույթից իրեն կորցրած. արդյոք կարո՞ղ էր մտածել, որ իր՝ անտարակույս քաջարի մարդու, հետ նման բան կկատարվի։

Տեսնելով նրան անզորք վերադարձած, Կրասոսը բոլոր լեգատների ներկայությամբ նրան, ինչպես նաև Մումիոսին, հանդիմանություն արեց։ Միաժամանակ բոլորին ընդօրինակման համար մատնացույց արեց Արիոսին, որն ամենադժվար պահին հրամայել էր, որ բոլոր ձիերը, իրենն էլ հետը, թիկունք տանեն, և որն իր շքախմբի հետ թշնամու գրոհը դիմավորել էր առաջին շարքերում և արիության շնորհիվ կարողացել էր անձեռնմխելի պահել ամբողջ բանակը։

Կեսարը Կրասոսին լսում էր լուռ, գլխահակ։ Զորավարի հանդիմանությունն արդարացի էր։ Ինքնասիրության համար ծանր այդ օրը Կեսարին կարևոր դաս եղավ։ Արիոսի տված օրինակը ապագա մեծ զորավարն իր համար կդարձնի պարտադիր կանոն...

IX

Հունվարի 1-ի օրը մոտենում էր ավարտին։ Հոգնած զորքերը ընթրիքից հետո գնացին հանգստանալու։

Իսկ Սպարտակի ռազմակայանում հրամանատարները կրկին հավաքվեցին ռազմական խորհրդի, նրանք ամփոփում էին վերջին անողոք ճակատամարտերի արդյունքները։ Ընդհանուր արդյունքը ուրախացնող չէր. չնայած Կրասոսը զգալի կորուստներ էր կրել՝ ոչ քիչ, քան ապստամբների զորքերը, նրան ոչընչացնել չէր հաջողվել, դեռ ավելին. երկու ճակատամարտերի ընթացքում կորցրել էին մի շարք ականավոր զորավարներ, այդ թվում նաև Սպարտակի երկու տեղակալները։ Էլ ավելի վատն այն էր, որ Գոմպեոսը գտնվում էր մոտակայքում, ընդամենը

20 կիլոմետր հեռու, և վաղը պետք է հայտնվեր մարտի դաշտում։

Սպարտակը երկար ժամանակ խորհրդակցում էր իր լեգատների հետ...

Վերջապես ծրագիր կազմվեց. գիշերով սկսել նահանջը դեպի մարտի դաշտից արևելք ընկած Պետիլյան լեռները։ Ճակատամարտում Կաստոսի ողջ մնացած 23 հազարանոց բանակի հնարավոր հետապնդումը դժվարացնելու համար, այդ բանակը բաժանել ջոկատների և հնարավորություն տալ նրանց զանազան ճանապարհներով (դրանք նշվեցին անմիջապես) հասնել պայմանավորված վայրը վերամիավորվելու համար։

Կեսգիշերին մոտ հրամանատարներն արթնացրին իրենց մարտիկներին։ Երկրորդ շտապ ընթրիքից հետո (ծանր գիշերային երթ էր նախատեսվում) ապստամբները հավաքվեցին պրետորիայում։ Այստեղ զոհված հրամանատարների պատվին (Կաստոսի և նրա ընկերների) նախապատրաստել էին թաղման խարույկներ։

Եվ կրկին, ինչպես մեկ օր առաջ, ցասումից բռունցքները սեղմած ռազմիկները լսում էին իրենց առաջնորդների թաղման ճառերը, տեսնում էին, ինչպես է ամենամաքրագործիչ կրակը լափում իրենց ընկերների մարմինները, ինչպես են գերի հռոմեացիները որպես գլադիատորներ միմյանց դեմ կռվում թաղման խարույկների մոտ։

Վերջապես ավանդույթի բոլոր ծեսերը կատարվեցին և թաղման որոշակի արտահայտություններն ասվեցին։ Զոհվածների աճյուններն իջեցրին գերեզման և հողով ծածկեցին։ Հետո բոլորը միաբերան ասացին. «Ո՞ղջ մնացեք, հոգինե՛ր։ Թող հողը թեթև լինի ձեզ վրա»։ Գերեզմանների պռնկին զոհասեղաններ դրեցին, որոնց վրա, դրանում նրանք չէին կասկածում, ապրստամբները շուտով զոհաբերման կերակուր պետք է դնեին իրենց համար թանկ էակների՝ նոր աստված-հովանավորների համար։

Շեփորի ձայնն ազդարարեց, որ թաղման վերջին արարողությունն ավարտված է, իսկ այնուհետև փողերը շարժվելու ազդանշան տվեցին։

Մեկ ժամ հետո նախօրոք հետախուզված ճանապարհով ապստամբները հարթավայրից գնում էին դեպի արևելք՝ լեռների կողմը...

Ճակատամարտից հետո, երեկոյան Կրասոսը հռոմեական ծեսով թաղեց զոհվածներին և հաշվեց հակառակորդի կորուստները։ Վերջին բանը նրան շատ ուրախացրեց՝ 12300 հոգի։ Այդպիսի հաջողություն նա անցյալում երբեք չէր ունեցել։ Բայց զորավարին տհաճ զարմանք պատճառեց այն, որ այդքան մեծ թվով սպանվածներից միայն երկուսն էին վերք ստացել թիկունքից...

Զոհված համաքաղաքացիների հոգիների համար ստորերկրյա կացարան[1] ապահովելուց հետո, Կրասոսը կրկին սկսեց խորհրդակցել լեգատների հետ։ Բոլորը նույն կարծիքին էին, չի կարելի Սպարտակին թույլ տալ, որ հեռանա, անհրաժեշտ է անդադար հետապնդել նրան, նեղը գցել, քշել նոր ճակատամարտի համար անբարենպաստ դիրքեր։ Այդ նպատակով հարկավոր է երկու փոքրաքանակ բանակ առանձնացնել, ստրուկների շարժունության հնարավորությունները նվազեցնելու համար։ Պոմպեոսի հետ հանդիպումից պետք է ամեն կերպ խուսափել։

Կրասոսը համաձայն էր իր սպանների հետ։ Կեսդիշերից հետո իմանալով, որ Սպարտակը ճամբարից դուրս է եկել, նա անմիջապես իր մոտ կանչեց Արիոսին և Սկրոֆային (վերջինս խիստ աշքի էր ընկել Կաստոսի դեմ տրված ճակատամարտում), հրամայեց վերցնել 10 հազար հետևակ և 2 հազար հեծյալ ու հետապնդել Սպարտակին։ Երկուսին էլ կարգադրված էր հակառակորդի հետ փոքր ընդհարումների մեջ մտնել, բայց առանց հրամանի ճակատամարտ չտալ։ Կրասոսն ինքը մտադիր էր 80 հազար հետևակով և 5 հազար հեծյալով փոքր-ինչ ուշ դուրս գալ, շրջանցել ապստամբներին, զրկելով նրանց Պոմպեոսին ընդառաջ նետվելու հնարավորությունից։

---

[1] Հռոմեական հավատալիքի համաձայն ֆիզիկական մահը սոսկ սկիզբն էր նոր կյանքի՝ հոգու ինքնուրույն կյանքի անդրշիրիմյան աշխարհում։ Հոգին, սակայն, ուտելիքի և խմիչքի կարիք էր զգում, ինչն անհրաժեշտ էր պարբերաբար բերել։ Եթե այդ բանը չէր արվում, հոգին լքում էր դերեզմանը և ամեն կերպ ձգտում էր պատժել իր մերձավորներին անփութության համար՝ հիվանդություններ էր ուղարկում, վնասում էր, նրանց անասուններին և հողը դարձնում անբերրի։

Կրասոսի ծրագիրը խափանվեց արդեն հաջորդ առավոտյան։ Սպարտակը, հմտորեն մանևրելով լեռներում, իր հետևում դարաններ թողնելով, հետապնդողներին զգալի հարվածներ էր տալիս։ Ապստամբների թեթևազեն ռազմիկները հարձակվելով փախչող հռոմեացիների վրա՝ շոշափելի կորուստներ էին պատճառում։ Փախչող լեգեոնականներին կանգնեցնելու ապարդյուն փորձ կատարող Սկրոֆան էլ վիրավորվեց, և նրան հազիվ փրկեցին։

Սարսափից գլուխները կորցրած լեգեոնականները զենքերը շպրտում և գերի էին հանձնվում։ Կեսօրին մոտ ամեն ինչ վերջացած էր. Արիոսի և Սկրոֆայի-ջոկատները դադարեցին գոյություն ունենալուց։ Սպարտակի ճամբար բերվեցին մեծ քանակությամբ զենք, հռոմեական դրոշներ և 3 հազար գերի (Օրոզիոս)։

XI

Արիոսի և Սկրոֆայի պարտության լուրը հասավ Կրասոսի ղորքին։ Վերջին երկու ճակատամարտերից հետո բթացած սարսափը բորբոքվեց նոր ուժով։ Ամբողջ ճամբարով մեկ փոքրոգի շշուկներ տարածվեցին։

Կրասոսի մոտ հրավիրված նրա լեգատները չէին կարողանում թաքցնել իրենց վհատությունը։ Արիոսը նստած էր սփրթնած դեմքով՝ նա քիչ էր մնացել գերի ընկներ ոխերիմ թշնամու ձեռքը։ Զորավարը, մռայլ մտքերից տանջվելով, վրանում դեսուդեն էր նետվում։

Վերջապես Կրասոսը որոշում կայացրեց։ Նա կանչեց ազատագիր-քարտուղարին և երկու նամակ թելադրեց։ Զորավարը սրտի ցավով ստիպված եղավ զսպել իր փառամոլությունը...

Կես ժամ հետո սուրհանդակները Կրասոսի նամակները տանում էին Բրունդիզիում։ Նամակներից մեկը հասցեագրված էր Մակեդոնիա՝ Մ. Լուկուլլոսին (ըստ վերջին տվյալների, նա գտնվում էր Թեսալոնիկեում, Դիրաքիումից 160 կիլոմետր հեռու), մյուսը՝ Պոնտոս. Լ. Լուկուլլոսին։ Կրասոսն առաջինին աղաչում էր արագացնել Իտալիա ժամանումը։ Երկրորդին խնդրում էր իրեն շուտափույթ օգնության հասնել։

Գլխահակ լեգատները լուռ լսում էին, թե ինչպես էր զորավարը թելադրում իր նամակները և կարգադրություններ անում սուրհանդակներին։ Բոլորին տանջում էր ամոթը, չարությունը և

անզոր ցասումը։ Մի՞թե, մի՞թե իզուր էր այսքան արյուն թափվել։ Մի՞թե կորան այսքան ջանքերը և փառքը խլելու են Պոմպեոսը կամ Լուկուլլոսը։ Անիծյա՜լ Սպարտակ... Մի՞թե նա անպարանելի է, ինչպես ասում են սեփական լեգեոնականները։

Լեգատների դեմքերը մթնել էին։ Նրանց բոլորի վրա պարզորոշ դրված էր հուսահատության կնիքը...

Գլուխ քսաներեքերորդ

ՍՊԱՐՏԱԿԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ Է ՊՍԱԿՎՈՒՄ

I

Հունվարի 1-ին երեկոյան կողմ Պոմպեոսը դանվում էր Սպարտակի և Կրասոսի մարտադաշտից ընդամենը 20 կիլոմետր հեռավորության վրա։ Իր ռազմիկներին ճամբարում հանգիստ տալով, Իսպանիայի հաղթողը ճարպիկ լրտեսներ և հետախույզներ ուղարկեց Կալամատիա լեռը՝ իրադրությունը պարզելու համար։

Մի քանի ժամ հետո հետախույզները վերադարձան նորություններով։ Նրանք տեղեկություններ էին բերել ստրուկների և հռոմեացիների ճակատամարտի արդյունքների վերաբերյալ և նամակներ Կրասոսի մի քանի լեգատներից, որոնք բարեկամությամբ կապված էին Պոմպեոսի հետ։

Մինչև կեսգիշեր, քանի լեգեոներները հանգստանում էին, Պոմպեոսի վրանում խոսակցություն էր գնում Սպարտակի և Կրասոսի, վաղվա օրվա, ապագա ճակատամարտի մասին։ Տեղանքի քարտեզների վրա կռացած՝ ռազմական գործերում փորձառու լեգատները ջանում էին հաշվարկել, թե մարտից հետո որ ճանապարհով կսկսեն նահանջել ապստամբների զորամասերը։

Գիշերվա ժամը երկուսին Կալամատիա լեռան մոտից սլացան եկան սուրհանդակները. այնտեղ մնացած լրտեսները հայտնում էին, որ ստրուկները թողել են իրենց ճամբարը և շարժվում են դեպի արևելք, լեռների կողմը։

Ստացված լուրերը Պոմպեոսին չզարմացրին. նա համարում էր, որ այդպես էլ պետք է լիներ։ Նրա կարգադրությամբ տագնապի աղդանշանով բանակն անմիջապես ոտքի հանեցին։

Ամբողջ գիշերը, առավոտը և մինչև կեսօր գնում էին փոքրիկ դաղարներով։ Կեսօրին հեծյալ հետախույզները տեղեկացրին. առջևում հակառակորդն է՝ մեկ լեգեոնի չափ։

Պոմպեոսը անմիջապես հրամայեց բանակին կանգ առնել։ Նա իր յոթ լեգեոններից երկուսը շարեց մարտակարգով, իսկ առջևում՝ ամբողջ 5 հազարանոց այրուձին, մնացած լեգեոններին Պոմպեոսը հրամայեց աջից ու ձախից շրջանցել թշնամուն և վերցնել սեղմ օղակի մեջ։

Հռոմեացիների հայտնվելուն պես ապստամբների լեգեոնը դուրս եկավ ճանապարհից և նահանջեց դեպի բլուրները։ Պոմպեոսը չէր ցանկանում գործը հասցնել մարտի և արյունահեղության, այլ պարզապես մտադիր էր թշնամիներին գերի վերցնել։ Բայց հանձնվելու առաջարկին սպարտակյանները պատասխանեցին մերժումով։

Հարկ եղավ հարձակման ուղարկել այրուձին, բայց այն հետ շպրտվեց։ Մի քանի անհաջող փորձերից հետո Պոմպեոսի լեգատներ Աֆրանիոսը և Պետրեոսը երեք կողմից հարձակման տարան հետևակազորը։

Մարտը սարսափելի և արյունահեղ էր... Երկու ժամ անց մոլեգին ճակատամարտն ավարտվեց. ապստամբները մինչև վերջին մարդը կոտորվեցին։ Քայլելով մարտի դաշտում և շրջելով սպանվածների դիակները, Պոմպեոսը դժվարությամբ էր թաքցնում դառնությունը. նա չար մարդ չէր, չնայած ճակատագիրը նրան երես չէր տալիս (Պոմպեոսի հոր՝ հռոմեական պլեբսին շատ տհաճություններ պատճառած նշանավոր այդ զորավարի դիակը Հռոմի ժողովուրդը ատելությամբ ոտնակոխ էր արել), եթե կարողանում էր, սիրով խնայում էր թշնամուն, իսկ տվյալ պարագային հաշվի առնելով որոշ քաղաքական հանգամանքներ և ժամանակ խնայելով, նա ամենևին չէր ցանկանում ժամանակ կորցնել և անցանկալի արյունահեղություն թույլ տալ։

Այդուհանդերձ, արդեն ոչինչ չէր կարելի փոխել։ Մնում էր միայն օգտվել դիպվածից, որը պարգևում էր նրան ճակատագիրը։ Հենց դա էլ արեց Պոմպեոսը։ Մարտադաշտում տեղնուտեղը նամակ գրելով տարած հաղթանակի մասին և հույս հայտնելով, որ պատերազմի վերջն արդեն մոտ է, վրան դնելով թաթերի մեջ սուր բռնած առյուծի պատկերով իր կնիքը, նա նամակն անհապաղ ուղարկեց սենատին։

Հաղթողները մի քանի ժամ հանգստանում էին իրենց ճամբարում։ Երեկոյան կողմ Կրասոսից սուրհանդակ եկավ և զորավարից նամակ բերեց։ Հպարտությունը կոտրելով, Կրասոսը հայտնում էր Սկրոֆայի և Արիոսի պարտության մասին և օգնություն էր խնդրում։

Պոմպեոսի վրանում հավաքվեցին նրա կողմնակիցները՝ ավագ սպաները։ Այստեղ էին հեծելազորի պետ Ա. Գաբինիոսը, կենտրոնի, աջ և ձախ թևերի հրամանատարներ Լ. Աֆրանիոսը, Մ. Պետրեոսը և Կ. Մեմիոսը, զորավարի թիկնապահների պետ, նրա գաղտնի հանձնարարությունները կատարող Հեմինիոսը և ուրիշներ։

Ախոյանի նամակը բարձրաձայն կարդալուց հետո Պոմպեոսն այն դցեց երթային սեղանի վրա և ժպտալով արտասանեց բանաստեղծի տողերը, ակնարկելով Կրասոսին. «Տաղանդավոր է ամեն ինչում, բայց զորավար չէ...»

Բոլոր սպաները ժպտացին (միայն Աֆրանիոսը և Պետրեոսը լուրջ մնացին), իսկ Գաբինիոսը ցածրաձայն, բայց բավականաչափ լսելի, Պոմպեոսի հասցեին շոյիչ հաճոյախոսություն արեց։ Բոլորը նորից ժպտացին (Գաբինիոսը հայտնի էր որպես նուրբ շողոմախոս), իսկ Աֆրանիոսը՝ պատերազմի ժամանակ Պոմպեոսի աջ ձեռքը (նա խիստ անհանգստացած էր Կրասոսի պարտությամբ), մռայլորեն ուղղեց իր զորավարին.

— Դնե՛ս, իրականում բանաստեղծությունն այսպես է հնչում. «Հաջողակ է նա ամենուր, որտեղ զենք չկա...»

Եվ Պոմպեոսը, բնավ չղայրանալով, գլխով արեց և կրկին ժպտաց։ Ի տարբերություն Աֆրանիոսի, Կրասոսի անհաջողությունը նրան ամենևին չէր դառնացրել։ Ընդհակառակը, նա համարում էր, որ այդ պարտությունն ավելի շատ փայլ կտա սեփական հաղթանակին։

Դեռ պատանի հասակում մարիոսականների դեմ տարած հաղթանակի համար տրիումֆով զարդարված, ֆիզիկապես և բարոյապես ուժեղ, Սերտորիոսի դեմ մղված պատերազմի դրժվարին փոփոխություններով անցած, ջահել և հաջողակ 34-ամյա զորավարն իրեն հրաշալի էր զգում։ Նա վստահ էր, որ ամոթով չի մնա և ժողովրդի մեջ կավելացնի իր փառքն ու ժողովրդականությունը՝ վերջապես հաղթելով պրետորների, երկու կոնսուլների, մեկ տասնյակից ավելի լեգատների բազմիցս հաղթած Սպարտակին։

Պոմպեոսի մեծ հույսերն այնքան էլ չարդարացան։ Բայց և այնպես Սպարտակի դեմ մղված պատերազմում ևս ոչ պակաս փառք չվաստակեց, քան Իսպանիայում ունեցած հաջողություններ համար։ Եվ Ցիցերոնը (նկարագրվող իրադարձություններից շորս տարի հետո նրան կվիճակվի դուրս գալ լայն ասպարեզ, որպես Հռոմում հռչակված քաղաքական հռետոր), գովաբանելով իր բարեկամին՝ հաղթական զորավարին, ջանալով մեծարել նրա ծառայությունները Սպարտակի դեմ մղված պատերազմում, ասելու է. «Ինչ վերաբերում է, այնուհետև, Գնեոս Պոմպեոսի բնատուր արժանիքներին, ապա... այդ բանը գիտի Իսպանիան, որն այնքան հաճախ պարտություններ և կոտրածներ է տեսել բաղում թշնամիներից։ Այդ բանը կրկին անգամ գիտի և այն Իտալիան, որը ստրուկների պատերազմի վտանգների և սարսափների ճնշման տակ նրան օգնության կանչեց օտարությունից և շուտով տեսավ, թե ինչպես նրա թշնամիները, նրան սպասելուց իսկ արդեն խաղաղված ու վհատված, ոչընչացվեցին և սրբվեցին երկրի երեսից նրա գալուստից հետո...»

Այսպես էր խոսում Ցիցերոնը։ Սակայն, նրա խոսքի մեջ հռետորական մեծ չափազանցություն կար։ Իրականում ամեն ինչ այս կերպ էր...

II

Արիոսի և Սկրոֆայի դեմ Սպարտակի տարած հաղթանակից մեկ օր հետո երեք բանակներ Պետելիյան լեռների վրայով սրընթաց գնում էին դեպի արևելք. առջևից՝ Սպարտակը, նրա հետևից՝ Կրասոսը, վերջում՝ Պոմպեոսը։

Հունվարի 4-ին, ձիերին ուժասպառ անելով, Կրասոսի ճամբարը սրարշավ մտան նրա հետախույզները և իրենց հետ բերեցին նոր փախստականներ։ Վերջիններս բացառիկ կարևորություն ունեցող նորություն հայտնեցին (Կրասոսի լրտեսներն էլ հաստատեցին այդ բանը որպես բացարձակապես արժանահավատ). Սպարտակի ճամբարում վերջապես տեղի ունեցավ երկար ժամանակ և մանրակրկիտ նախապատրաստված պայթյունը. նախկինում տատանվող լեգեոնները, Արիոսի և Սկրոֆայի դեմ տարած հաղթանակից ոգևորված, վճռականորեն հրաժարվել են ենթարկվել Սպարտակին ու նրա զինակիցներին։ Ճանապարհին նրանք գենքը ձեռքին շրջապատել են իրենց զորապետնե-

ին, ստիպել են նրանց իրենց հետ միասին շարժվել դեպի Լուկանիա և Սամնիում, որտեղից նպատակ ունեն, Կրասոսին և Պոմպեոսին թիկունքում թողնելով, հանկարծակի հարձակվել Հռոմի վրա։

Սպարտակի բանակում կատարված խռովության լուրն անմիջապես տարածվեց հռոմեացիների ճամբարում և հուզեց բոլորին։ Ե՛վ Կրասոսը, և՛ նրա լեգատները հասկացան, որ ճակատագիրն իրենց վերջին հնարավորությունն է տալիս՝ կամ հիմա պետք է հասնեն հաղթանակի, կամ երբեք...

Իրադրության կարճատև քննարկումից հետո որոշվեց երթուղին փոխել։ Ռազմիկներին կոչ անելով տոկունությամբ տանել արագացված երթի դժվարությունները, Կրասոսը կտրուկ շրջվեց դեպի հյուսիս և զորքը շարժեց դեպի Սամնիում տանող ճանապարհով...

Այսպիսով, ոչինչ չիմանալով, Կրասոսն ընկավ Սպարտակի սարքած նոր ծուղակի մեջ։ Սամնիումի կողմը հեռացող հակառակորդին (դրանք պարտիզանական ջոկատներ էին, որոնք Սպարտակի հրամանով գաղտնաբար հավաքվել էին պայմանավորված վայրում և շարժվում էին հյուսիս, իբր ապստամբների զորք) հետապնդելով, Կրասոսը բաց թողեց իսկական թշնամիներին և Սպարտակին հնարավորություն տվեց անարգել հեռանալ դեպի արևելք՝ Բրունդիզիումի կողմը[1]։

III

Սպարտակի բանակում ծագած նոր «խռովության» և նրա դեպի Սամնիում շարժվելու լուրը Պոմպեոսը ստացավ Կրասոսից մի քիչ ուշ։ Վերջինիս նման, ո՛չ Պոմպեոսը, ո՛չ էլ նրա լեգատները չկասկածեցին ստացված տեղեկության արժանահավատության վրա, ինչն այնքան լավ համապատասխանում էր նախկին լուրերին և հաստատվել էր «փախստականների» ու սեփական հետախույզների պատմություններով։

Եվ Պոմպեոսը, Կրասոսի նման, նույնպես հրամայեց ուղղությունը փոխել և շարժվել հյուսիս, Սպարտակի ենթադրվող ճանապարհը կտրելու։

---

[1] Պոլիբիոսն ասում է. «Զինվորական գործում ուժով բացահայտ գործողություններն այնպիսի նշանակություն չունեն, ինչպես ժամանակին կիրառած խորամանկ միջոցները»։

Այսպիսով, հռոմեական երկու զորավարներն էլ ընկնելով վարպետորեն սարքված որոգայթի մեջ, միևնույն սխալը գործեցին. երկուսն էլ իրենց զորքերը տարան Սպարտակի շարժման ճիշտ հակառակ ուղղությամբ։

Սարսափելի խայտառակություն էր սպասվում ձեռքից հակառակորդին բաց թողած երկու զորավարներին։ Բայց... Պոմպեոսի հիրավի այն «մեծ բախտը», որի մասին Ցիցերոնն ասում էր. «որը ուղեկցում էր նրա մեծամեծ գործերին և՛ Հռոմում, և՛ ռազմի դաշտում, և՛ ցամաքում, և՛ ծովում», այս անգամ էլ երես չթեքեց նրանից։ Եվ Ցիցերոնն, իմանալով, թե ամեն ինչ ինչպես է ստացվել, լիովին հիմք ուներ դեռ այն ժամանակ ասելու, ինչպես որ ասաց մի քանի տարի անց. «Այո՛, ես հավատում եմ բախտին, այդ աստվածային պարգևին, որն ուղարկված է որոշ ընտրյալներին սեփական մեծության ու փառքի համար և դրժվար ձեռնարկումների հաջող կատարման համար»։

Գլուխ քսանչորրորդ

ՄԱՐԿՈՍ ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԶՈՐՔԻ ԱՓՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

I

Բրունդիզիումը, Ադրիատիկ ծովի հռոմեական խոշորագույն նավահանգիստը, ըստ ավանդության, հիմնել էր Տրոյական պատերազմի մասնակից, հունական հերոս Դիոմեդեսը։ Նավահանգիստը մեծ և ուժեղ ռազմական թիավարվող նավատորմ ուներ, որի քանակը, սակայն, մշտական չէր (լավագույն ժամանակներում նավերի թիվը հասնում էր 200-ի), ուներ նաև մեծ քանակությամբ բեռնատար առևտրական նավեր[1]։

Բրունդիզիումի նավահանգիստը շատ լավ համբավ ուներ։ Այն համարվում էր ավելի հարմար, քան հարևան Տարենտոսը[2],

---

[1] Պոմպեոսի տրամադրության տակ, երբ նա Կեսարի հարձակումից փրկվելու համար (մ. թ. ա. 49 թ.) ցանկանում էր Բրունդիզիումով Իտալիայից փախցնել իր հինգ լեգեոնները, կային 80 նավեր։

[2] Ցիցերոն. «Լակեդեմոնացիների ստեղծած Տարենտոսը, Կալաբրիայի, Ապուլիայի և ամբողջ Լուկանիայի երրեմնի մայրաքաղաքը, հռչակված էր իր մեծությամբ, պարիսպներով և նավահանգստով, ինչպես և իր զարմանալիորեն հարմար դիրքով։ Տեղադրված լինելով Ադրիատիկ ծովի մուտքի մոտ, նավեր էր ուղարկում բոլոր երկրները՝ Իստրիա, Իլիրիկոն, Էպիրոս, Աքայա, Ասիա, Սիցիլիա»։

որովհետև մեկ գետաբերանով միացնում էր ծովի ալիքներից պաշտպանված մի քանի նավահանգիստներ և դիմացը կղզի ուներ։ Նավահանգիստը քաղաքի հետ միանալով՝ ուրվագծով նմանվում էր եղջերվի գլխի։

Հենց այստեղ՝ դեպի նավերն էր շտապում Սպարտակը, Կրասոսին և Պոմպեոսին մոլորեցնելով։ Ապստամբների բանակի առջևից սլանում էր 2 հազարանոց հեծյալ մի ջոկատ՝ կազմված ապուլիացիներից, որոնք խաղաղ օրերին զանազան առիթներով բազմիցս եղել էին Բրունդիզիումում։ Գերադույն առաջնորդը նրանց հետևյալ խնդիրն էր առաջադրել. շարժվելով բանակի առջևից, հասնել քաղաք, փոքր խմբերով թափանցել նեղս և, օգտվելով համախոհների աջակցությունից, գիշերվա քողի տակ գրավել բոլոր կարևոր ստրատեգիական կետերը, փակել նավահանգստի ելքը և թույլ չտալ նավատորմին հեռանալու։ Նման խնդիր դրված էր նաև Տարենտոսը գրոհող մեկ այլ ջոկատի առջև։

Հատուկ նշանակության ջոկատները շտապում էին դեպի Բրունդիզիում և Տարենտոս, ոչ մի կասկած չունենալով իրենց հաջողության վրա։ Եվ հանկարծ... և հանկարծ պայթեց անսպասելի աղետը։ Հունվարի 5-ին հանկարծակի Բրունդիզիում մտան Մ. Լուկուլլոսի նավերը, որոնք ժամանում էին Դիրաքիումից (Իլլիրիա)[1]։ Բանակը սկսեց ափ իջնել։ Առաջինը շտապելով ափ դուրս եկավ հեծելազորը։ Կրասոսի ճակատագրով անհանգստացած՝ զորավարն անմիջապես նրան ընդառաջ ուղարկեց իր հետախույզներին։

Հենց այս հետախույզներն էլ ընկան սպարտակյան այն ջոկատի ձեռքը, որին հանձնարարված էր գրավել Բրունդիզիումը։ Նրանց անմիջապես հասցրին Սպարտակի մոտ։

Նրը հռոմեացիներին հարցաքննեցին և տարան, հրամանատարները երկար ժամանակ լուռ նստած խորհում էին։ Մ.

---

[1] Մ. Լուկուլլոսը Թրակիայում չափազանց եռանդուն և անողոք պատերազմ էր մղում։ Նա կաշառում էր առաջնորդներին, հրկիզում էր գյուղեր, թալանում քաղաքներ և սրբավայրեր (Ապոլլոնիա քաղաքի Ապոլլոնի սրբավայրից նա տարավ քանդակագործ Քալամիդեսի կերտած աստծո հսկայական արձանը և, օծելով, կանգնեցրեց Հռոմում, Կապիտոլիումի բլրի վրա գտնվող Ցուպիտերի տաճարում)։ Թրակացիներին վախեցնելու նպատակով նա հրամայում էր կտրել գերիների ձեռքերը և այդպես խեղանդամ ուղարկում էր յուրայիններին մոտ։ 72 թվականի վերջին նա հեռացավ Թրակիայից։

Լուկուլլոսի Բրունդիզիումում հանկարծակի հայտնվելու պատճառով (ոչ ոք չէր կասկածում, որ նրա նավատորմի և զորքերի մի մասը Տարենտոսը նույնպես գրավել էր) դրությունը միանգամից հուսահատորեն ծանրացավ. նավատորմ ձեռք բերելու հույսը կորավ, որով հնարավոր կլիներ անհրաժեշտության դեպքում զորքը Սիցիլիա կամ Փոքր Ասիա անցկացնել։ Պայքարի մեջ ընդգրկվեցին նոր ուժեր, 40 հազար հետևակ և 3 հազարանոց այրուձի՝ բոլորն էլ հիանալի վարժեցված, բազմաթիվ մարտերում և արշավներում կոփված, հրամանատարությամբ մեկի, որը հանրապետության նշանավոր զորավարների մեջ երրորդն էր։ (առաջինը Լ. Լուկուլլոսն էր համարվում, իսկ երկրորդը՝ Գնեոս Պոմպեոսը)։

«Ի՞նչ անել»,— այսպիսի հարց դրեց Սպարտակը ռազմական խորհրդի քննարկմանը։ Երբեք հավաքվածներին չէր վիճակվել այդքան դժվարին մի խնդիր լուծել։ Շարունակել ճանապարհը դեպի Բրունդիզիում (մինչև այնտեղ 200 կիլոմետր էր մնացել) բոլորը համարում էին անիմաստ. Լուկուլլոսը պարզապես դուրս չի գա քաղաքից, չի ընդունի անշահեկան ճակատամարտը և կսպասի մինչև Կրասոսը և Պոմպեոսը օգնության հասնեն։

Մնալ տեղո՞ւմ։ Մարտի համար շահավետ դիրք չկար, մինչև Պոմպեոսի մոտենալը չէին հասցնի Կրասոսին ջախջախել։

Հետևաբար, մնում էր միայն մի ելք, հետ դառնալ, հարմար դիրք գրավել և մարտի կանչել Կրասոսին, մի թշնամու, որին բոլոր կողմերից ուսումնասիրել էին և բազմիցս ջարդել։ Կրասոսը ստիպված կլինի ընդունել վերջին ճակատամարտը, քանի որ չի ցանկանում ախոյանին զիջել հաղթողի փառքը։

Այն, որ սպարտակցիները կկարողանային հաղթել նրան, կասկած չէր հարուցում. նրանք բազմիցս հաղթել էին Կրասոսին, քաջ ծանոթ էին նրա զինվածությանը, վարժվածությանը, հաճախակի պարտությունների պատճառով լեգեոնականները վստահ չէին ո՛չ իրենց, ո՛չ զորավարի վրա, որով էլ բացատրվում էր հռոմեացի դասալիքների մեծ թիվը։ Իսկ զորավարին չվստահող բանակը կիսով չափ պարտված էր։

Սպարտակի նկատառումները բոլորը համարեցին հիմնավոր և միաձայն համաձայնեցին նրա որոշմանը, գնալ Կրասոսին ընդառաջ, գերազանց դիրք ընտրել, ճամբար կառուցել,

ռազմիկներին հանգիստ տալ և Կրասոսին այդտեղ կանչելով, հարձակվել երթից հոգնած նրա զորքի վրա ու ջախջախել։

Եվ այսպես, ապստամբների բանակը շրջվեց հետ Բրունդիզիում և Տարենտոս ուղարկված ջոկատներին կարգադրություն ուղարկեցին հետ վերադառնալ վերջին ճակատամարտին մասնակցելու համար։

II

Հունվարի 4-ի ամբողջ օրը Պոմպեոսն ու Կրասոսը եռանդուն շարժվում էին Սամնիումի ուղղությամբ։ Ծամ առ ժամ նրանց տարակուսանքը մեծանում էր. դեպի հյուսիս-արևմուտք ընթացող ապստամբական բանակի հետքերը գնալով դառնում էին ավելի անորոշ և մի տեսակ նման չէին այն հետքերին, ինչպիսիք մինչ այդ տեսնում էին ամեն օր։

Գիշերը երկու զորավարներն էլ չէին քնել։ Իրենց լեգատների հետ նրանք նոքից ու նորից ուսումնասիրում էին տեղանքի քարտեզները, համադրում էին օրվա ընթացքում հետախույզների բերած տվյալները և անհամբերությամբ նոր տեղեկությունների էին սպասում։

Առավոտյան խաբուսիկ հանգարտությունը և վստահությունը փուլ եկան։ Հետախույզները գլխապատառ ճամբար ընկան և հայտնեցին սարսափելի լուրը Սպարտակի նենգ խաբեության, որի զոհն էին դարձել բոլորը։

Երկու զորավարներն էլ զարհուրելի անեծքներ թափեցին. այդպիսի ստորացուցիչ արդյունքի նրանցից ոչ մեկը չէր սպասում։ Հապճեպորեն դուրս եկան ճամբարներից և տեղում թողնելով ամբողջ գումակը, շտապեցին հետ, հարավ-արևելք, դեպի Բրունդիզիում։

Հոդու խորքում երկու զորապետները իրենց կշտամբում էին թերեռամտության համար։ Երկուսն էլ գիտեին՝ ծայրաստիճան տհաճ բացատրություններ են տալու սենատին։ Իսկապես, ինչպե՞ս կարող էր պատահել, որ երկուսն էլ միաժամանակ աչքից բաց թողնեին հակառակորդին։ Դուցե երկուսն էլ կաշառ՞ք են ստացել ստրուկներից։

Միայն դրա մասին մտածելն արդեն տհաճություն էր պատճառում Կրասոսին և Պոմպեոսին։ Իսկ որ այդպիսի մեղադրանք անձնական թշնամիներից նրանց կհասներ՝ երկուսն էլ չէին կասկածում։

Բավականաչափ հեռացած Սպարտակին հասնելը գործնականում հնարավոր չէր, և այդ պատճառով Կրասոսն ու Պոմպեոսը մտովի արդարացման հնարավոր տարբերակներ էին հնարում։

Հանկարծ... օ՜, անհավատալի երջանկություն։ Կրասոսի առաջ ուղարկված հետախույզները հունվարի 6-ի լուսաբացին վերադարձան և պատմեցին. Բրունդիզիումում ափ է իջել Թրակիայից ժամանած Մ. Լուկուլլոսը։ Այդ բանը հայտնի է դարձել Սպարտակի հետախույզներին հանդիպելուց հետո, վերջիններս Սպարտակի նամակն են հանձնել ուղղված Կրասոսին։

Հռոմեացի զորավարը հապճեպորեն կոտրեց կնիքը։ Նամակը կարճ էր։ Ապստամբների պարագլուխը Կրասոսին հայտնում էր նրա նոր ախոյանի ժամանման մասին, առաջարկում էր լուծել հանուն փառքի մղվող իրենց վեճը, հայտնում էր իր գտնվելու տեղը և զգուշացնում էր չհապաղել։ Նրա ասելով, նույնպիսի մարտակոչ ուղարկվել էր Պոմպեոսին մի քանի ժամ ուշ։

Նամակը հրապարակելուց հետո Կրասոսի լեգատները երկար ժամանակ ընկճված լռել էին։ Դրությունը շատ նողկալի էր թվում։ Վերջապես զորավարն սկսեց անուն առ անուն հարցնել իր զորապետներից. ճակատամարտ տա՞լ Սպարտակի հետ, գնա՞լ նրան ընդառաջ։

Լեգատների պատասխանը միաբան էր. այո՜, գնալ։ Եվ Կրասոսը վճռեց պրետորիայում մեծ ու համոզիչ ճառ արտասանել, ձգտելով զինվորներին ներշնչել խռովարար սարուկների նկատմամբ ատելություն և վճռականություն՝ ախոյանին չզիջելու հաղթանակը, մի հաղթանակ, որը մեծ փառք ու պարգևներ էր խոստանում, դուրս եկավ ճամբարից և զորքով շտապեց այնտեղ, որտեղ նրան սպասում էր Սպարտակը։

Գլուխ երեսուներորդ

ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԵՐԸ

I

Ճակատամարտից առաջ վերջին օրերի ընթացքում մարտի նախապատրաստության հետ կապված բազմաթիվ առօրյա հոգսերի մեջ Սպարտակը մի քանի աղատ ժամեր կարողացավ գրտ-

նել և առանձնացավ իր վրանում խորհրդածելու։ Նա քաջ գիտակցում էր, որ պատերազմի տարատեսակ պատահականությունների պայմաններում անկարելի է որևէ երաշխիք տալ առաջիկա ճակատամարտի ելքի վերաբերյալ։ Առանձնապես հիմա, երբ բազմաթիվ պարտություններից դասեր առած հռոմեացիների դիմադրողական ուժերը լրջորեն մեծացել են։ Եվ նա նորից ու նորից անդրադառնում էր միևնույն հարցին. «Ի՞նչ կլինի, եթե...»

Ինչ վերաբերում էր իրեն, իր կնոջը, հրամանատարներին, ամբողջ բանակին, նա որևէ կասկած չուներ։ Այդ հարցը նա շատ վաղուց լուծել էր միանգամայն որոշակիորեն. ճակատամարտը տանուլ տալու դեպքում բոլորի ճակատագիրը մեկ է լինելու՝ խիզախ, հերոսական մահ։

Բայց ճակատագիրը սկսած գործի, որը նա դիտում էր որպես հռոմեական բռնակալության դեմ ժողովուրդների վիթխարի պայքարի մի մասը, խիստ անհանգստացնում էր նրան։

Կրկին քննության ենթարկելով իրադրությունը և կշռադատելով բոլոր հնարավորությունները, զորավարն անձամբ (սովորաբար նա թելադրում էր) մի շարք կարևոր քաղաքական նամակներ գրեց բարեկամներին և համախոհներին։

Հետո Սպարտակը կանչեց վստահելի մարդկանց, նրանց հանձնեց կնքված նամակները և հրամայեց անմիջապես հեռանալ բանակատեղից, հասնել պայմանավորված վայրը և այնտեղ սպասել ճակատամարտի ավարտին։ Եթե մարտում ապստամբները պարտվեն, և նրանք լուր ստանան Սպարտակի մահվան մասին, ապա անմիջապես պետք է ճանապարհ ընկնեն և անպատճառ նամակները հասցնեն հասցեատերերին։ Իսկ եթե ճակատամարտը նրանց համար բարենպաստ ավարտվի՝ սպասեն տեղում՝ մինչև իրենից նոր կարգադրություններ ստանալը։

Ստանալով նամակները, վստահելի նամակատարները անմիջապես թողեցին ապստամբների ճամբարը։ Սպարտակը, ռազմակայանից առավել կարևոր փաստաթղթերը գաղտնի դուրս տանելու կարգադրություն անելուց հետո, հրամայեց բոլոր հրամանատարներին հրավիրել ճաշի, իսկ ինքը գնաց ռազմիկների մոտ։

Մարտիկներն արդեն ճաշում էին. տոնական ճաշ էր։ Նա հերթով մոտենում էր զանազան խմբերի, հավաքվածների հետ կատակներ փոխանակում, զինվորական կաթսաներից համտես

անում։ Ռազմիկների տրամադրությունը, դատելով նրանց դեմքերից, շարժ ու ձևից, խոսք ու ծիծաղից, հանգիստ էր։ Խուճապի կամ շփոթության և ոչ մի նշույլ։ Հանգստացած Սպարտակը վերադարձավ իր վրանը։

II

Երեկոյան, վճռական ճակատամարտից առաջ, Սպարտակի վրանում հավաքվել էին բարձրագույն հրամանատարները՝ թրակացիներ, գալլեր և գերմաններ։

Սառը քամին ալիք-ալիք դարնվում էր վրանին, և պիրկ ձգված կաշվե պատերը խուլ բվվում էին նրա հարվածներից։ Վրանի ներսում բաղմամարդ էր և տաք։ Նավակաձև ճրագները վառ լուսավորում էին բոլոր անկյունները։ Ջահել պահապանները (Սպարտակի պահակախումբն ընտրում էին առավել փառաբանված մարտիկներից, որոնք աչքի էին ընկնում խելքով ու քաջությամբ։ Սպարտակը նրանց հետ էր կապում ապագայի իր հույսերը) ուտելիք էին բաժանում։ Սեղանի շուրջ ավագ ընկերներին՝ նշանավոր զորապետներին, ծառայելը պատիվ էր համարվում, և ոչ մեկը դրանում ստորացուցիչ բան չէր տեսնում։

Ուտելիքն առատ էր, ճաշը, հակառակ Սպարտակի սովորության, գրեթե ընտիր։ Հասարակ, թխկենու փայտից պատրաստված ընդհանուր սեղանի վրա կավե մատուցարաններով և կճուճներով դրվեցին տապակած տավարի միս և ձուկ, գեռ խոտի համ չտեսած խորոված՝ ուլ՝ կտոր-կտոր արած, եփած ու տապակած թռչուններ, որսի ժամանակ սպանված վայրի վարազ, որը Սպարտակին նվեր էր բերել հրամանատարներից մեկը, պանիր, եփած ձվեր, ձիթապտուղ, մեծ շշերով ձիթայուղ, եփահյութեր ու թանձր կերակրահյութեր, զանազան բանջարեղեն՝ կաղամբ, կաթնուկ, շաղգամ, բողկ, նեխուր, մսով կարկանդակներ և բլիթներ։

Հրամանատարները, միմյանց ողջունելով, տեղեր գրավեցին։ Աստվածներին մեծարեցին կարճ աղոթքով, մի պատառ կերակրով և զոհաբերական գինի հեղեցին։ Հետո անցան հացկերույթի։ Ուտում էին լուռ։ Յուրաքանչյուրը խորասուզված էր իր մտքերի մեջ...

Վերջապես անուշեղեն բերեցին՝ խորիսխամեղր, խաղող,

կարմրաթուշ խնձորներ և հրաշալի գինի՝ ֆալերնյան, քիոսյան և իսմարիական, որոնք հեռավոր Թրակիան էին հիշեցնում։ Գավաթները լցվեցին։ Սպարտակն առաջին գավաթը բարձրացրեց ի պատիվ զոհված հերոս-ընկերների՝ նոր աստվածների, պատերազմում զորքի պահապանների։ Բոլորը ոտքի ելան, խմեցին, հետո նստեցին։

Ըմպած գինուց խոսակցություններ ծայր առան։ Հրամանատարներից մեկը, խիզախությամբ հռչակված գալլ Ատլանտն ասաց.

— Սպարտա՛կ, մեր քա՛ջ առաջնորդ։ Հիմա ես ահա թե ինչի մասին եմ մտածում։ Համարյա երկուս ու կես տարի է, բոլորս ազատ ենք, չենք ենթարկվում հռոմեական իշխանությանը, չենք տեսնում ո՛չ էրգաստուլներ, ո՛չ մտրակ, ո՛չ գլադիատորական մենախցեր, ո՛չ արյունոտ արենաներ և հանդիսատես հռոմեացիներ, որոնք կատաղի տոնում են, մարտի վրա գրաղ բռնում, պարտվածին սպանելու պահանջով իրենց բութ մատն իջեցնում։ Հիմա մեր օրենքներով ենք ապրում։ Յուրաքանչյուրիս, կարծում եմ, քիչ հաճույք բաժին չի ընկել։ Անարդարացի կլիներ դժգոհել...

— Բայց և այնպես մեր կորուստները մեծ են,— կտրուկ ընդհատեց նրան մեկ ուրիշ հրամանատար՝ գալլ Էլևտերոսը,— Բատիատոսի դպրոցից յոթանասունութ գլադիատորներ փախան։ Նրանք մեր արդարացի պատերազմի ղեկավարությունը ստանձնեցին։ Եվ ահա արդեն մեկ երրորդից պակասն են ողջ մնացել, իսկ կռիվը դեռ նոր է սկսվում իսկապես ծավալվել։

Նրա հարևան գալլ Վիտուլուսն անմիջապես ավելացրեց.

— Այո՛, յոթանասունութից այժմ մնացել են միայն քսանհինգը։ Հենց այսօր հաշվեցի և ինքս ինձ հարց տվեցի. «Իսկ քանի՞սը կնստեն Սպարտակի մոտ հաջորդ ճաշի ժամանակ»։ Այլևս չկան մեր ամենանշանավոր զինակիցները՝ Կրիքսոսը, Էնոմայոսը, Գանիկոսը և Կաստոսը։ Իսկ նրանք բոլորն էլ, չէ որ, Սպարտակի տեղակալներն էին։

Անմիջապես ուրիշ ձայներ լսվեցին.

— Ո՞րն է մեր այդպիսի անհաջողությունների պատճառը։

— Հռոմեացիները մեզ վրա գալիս են իրենց պետության ամբողջ հզորությամբ։

— Սպարտակ, առջևում ի՞նչ է մեզ սպասվում։

— Ինչո՞վ կավարտվի մեր գործը։

— Հաջողությունը կուղեկցի՞ մեզ, թե՞ ոչ...

Սպարտակը, խորհելով, փոքր-ինչ լռեց, հետո ասաց.

— Իմ թանկագի՜ն բարեկամներ, քա՜ջ զինակիցներ, խիզա՜խ զորավարներ, փառաբանվա՜ծ հերոսներ։ Շատ դժվար հարցեր եք տալիս։ Դրանց դժվար է պատասխանելը, բավարարելով բոլորին, քանզի ճիշտ դատելու մարդկային ընդունակությունը սահմանափակված է հենց բնության կողմից։ Զգտելով պատկերացնել ապագան, մարդը միայն ենթադրում է, մնացած ամեն ինչը կախված է աստվածների, դիպվածի կամ Ճակատագրի ողորմածությունից։ Եվ քաղդեացիները, և իմաստուն փիլիսոփաները նույնն էին կարծում. Ճակատագիրը առեղծվածային է, աստվածների ողորմածությունը՝ անհուսալի, կյանքը պայքար է, դեգերումներ օտարության մեջ, մարդկային կյանքի ժամանակը՝ ակնթարթ։ Ոչ մի շնչավորի կյանք այնքան փխրուն չէ, որքան մարդունը, ոչ մի շնչավոր այդքան անսահման կրքեր, զգացմունքների այդպիսի կատաղի շիկացում չունի։ Միայն մարդը մարդուն կարող է աներևակայելի վնասներ պատճառել։ Շատերն, իսկապես, հիմք ունեին մտածելու, որ լավ կլիներ, որպեսզի մարդ արարածը չծնվեր կամ, գոնե, հնարավորին չափ արագ դադարեր գոյություն ունենալուց։ Վաղ թե ուշ բոլորը մեռնում են։ Մենք ևս, ինչպես յուրաքանչյուրիս սահմանել է Ճակատագիրը, մեռնելու ենք։ Մեզանից յուրաքանչյուրը դերասան է կյանքի դրամայում, ամեն մեկս պետք է խաղանք Ճակատագրի կողմից նախանշված մեր դերը։ Այդ դերն էլ պետք է խաղալ հնարավորին չափ լավ։

Այդ պահին մեկը կծու հարցով ընդհատեց առաջնորդի խոսքը.

— Իսկ եթե Ճակատագիրը քեզ ստրուկ է դարձրել կամ գլադիատո՞ր։ Ուրեմն այդպես էլ պետք է մնա՞լ։

Սպարտակը սևեռուն նայեց հարցնողին և ժպտալով պատասխանեց.

— Իհարկե ո՜չ, իմ թանկագի՜ն բարեկամ, օ՜խիզախ Դոնատոս։ Ստրկությունը մարդկային չարիքներից վատթարագույնն է։ Դրանից պետք է ազատվել ոչ միայն պատերազմով, այլև կյանքի գնով։ Ստրկությունը մեծագույն անարդարացիությունից ծնված անօրինական վիճակ է։ Բոլոր մարդիկ ծնունդով միատեսակ են։ Նրանց ընդհանուր ծնողն աշխարհն է։ Առավել երևելի է նա, ով բնությունից ազնիվ է, ով մարդկության բարօրու-

թյան համար առավել փառավոր գործեր է կատարել։ Այդպես է սովորեցնում փիլիսոփայությունը։ Այդ կարծիքին եմ և ես։ Ստրկությո՞ւն։ Կյանքում ավելի սարսափելի ի՞նչ կարող է լինել։ Ոչ մի մարդ կամովին չի ուզենա մյուսի ստրուկը լինել, ենթարկվել ամենօրյա սարսափելի ստորացումների։ Այդ ստորացումները քայքայում են լյարդը, դրանք ամենածանր աշխատանքից դառն են։ Հիշում եմ, ինչպես ինձ որպես ստրուկ առաջին անգամ բերեցին Հռոմ... Ինչպիսի՜ տանջանքներ ապրեցի, ի՜նչ ասես չտեսա։ Օ՜, ի՜նչ ստոր ու նողկալի են հռոմեացիները, ինչքա՜ն են թաղվել արատների մեջ։ Այլասերությունը որկրամոլությամբ ու անհոգ պարապությամբ հերթագայելով, իրենց գարշելիությունները նրանք թաքցնում են, ամոթ է ասել, փիլիսոփայության դիմակի տակ։ Խուռներամ վազում են այնտեղ, որտեղ հաճույքը փառաբանող խոսքեր են լսվում։ Խե՜ղճ Էպիկուր։ Եթե իմանար, թե ինչպե՜ս են օգտագործում հռոմեացիները իր փիլիսոփայությունը...

— Բայց և այնպես հռոմեացիները ապրելու համը գիտե՜ն,— երազկոտ բացականչեց գալլ Դեկորատոսը։— Ճաշկերույթի սպասելիս նրանք պառկում են վարդեր շաղ տված բազմոցների վրա, լսողությունը շոյում են երաժշտությամբ, տեսողությունը՝ տեսարաններով, հոտառությունը՝ ասորական և եգիպտական անուշահոտություններով, քիմքը՝ նուրբ համերով...

— Նախանձելու ի՞նչ կա,— առարկեց Սպարտակը,— Ճիշտ է, նրանք թաղված են հաճույքների և արատների մեջ, բայց նրանց տանջանքներ են սպասվում. այն, ինչով նրանք այդպես ուրախանում են, բարիք չէ։

— Բայց ի՞նչ բան է բարիքը, Սպարտա՜կ,— Դեկորատոսին ջերմորեն պաշտպանեց գերման Ցերուլեոսը։— Ամեն ոք դա յուրովի է հասկանում։

— Սխալվում ես, Ցերուլե՜ոս,— պատասխանեց Սպարտակը։— Բարիքի միայն երկու հասկացություն գոյություն ունի։ Մեկը. բարիքը՝ դա հարստությունն է և դրանից ծնվող հաճույքները։ Մյուսը. բարիքը՝ դա լավագույն բարոյական արժանիքների տեր լինելն է. այս դեպքում հարստության առկայությունը կամ բացակայությունը էական ոչ մի նշանակություն չունի։ Յուրաքանչյուրը, ենթադրում եմ, բազմաթիվ օրինակներից հնարավորություն է ունեցել համոզվելու, որ այն կարծիքը, թե հարստությունը մեծագույն բարիքն է, կրծում է մարդկային

հոգին, դուրս է բերում հավասարակշռությունից, գրկում է քնից, համակում է այրուցքով ու նախանձով, մղում ստոր ընչաքաղցության, ստորության և դավաճանության, կախաղանի թոկն է վիզը գցում, ժայռից ցած է հրում, չի թողնում ազատ ապրել և խոսել։ Մյուս կողմից, հարստություն չունեցող մարդիկ, օրինակ, Դիոգենեսը, Արիստիպեսը, Էպամինոնդասն, անտարակույս, երջանիկ են եղել։

— Սպարտա՜կ,— վշտացած բացականչեց գալլ Դեկորատոսը,— դու ցանկանում ես մարդկանցից խլել բոլոր հաճույքները, սահմանափակել նրանց ցանկությունները, նրանց սպարտացիների պես կապել անհամ, գյուղական սնունդի։

— Ինչո՞ւ ես այդպես կարծում, Դեկորա՜տոս,— ժպտալով հարցրեց Սպարտակը։— Ես երբեք նման բանի կոչ չեմ արել։ Ես ցանկանում եմ ձեր մտածելակերպի մեջ այլ բան ներդնել. որպեսզի հարստությունից օգտվեք, առանց նրա ստրուկը դառնալու։ Ցանկությունները սահմանափակել պետք է ոչ թե միշտ, հասարակ սնունդ ընդունելու համար, այլ դրանից չվախենալու համար։ Պարզ սնունդը,— դա ապացուցված բան է,— նպաստում է առողջությանը։ Այն մարդուն դարձնում է գործունյա, պատահականություններից չվախեցող, մեզ լավագույն տրամադրություն է տալիս, երբ մենք, երկար ընդմիջումից հետո, հնարավորություն ենք ունենում մոտենալու պերճանքի առարկաներին։ Կարճ ասած, մարդիկ խղճալի են, եթե զուրկ են հաճույքներից, համաձայն եմ, բայց ավելի խղճալի են, եթե մինչև մազերի արմատները խրված են հաճույքների մեջ։ Առաջին հերթին խոսքս վերաբերում է նրանց, ովքեր պատերազմի մեջ են։ Փափկասուն, ցոփության մեջ խրված մարդը միշտ,— և արագորեն,— պարտվում է թշնամուց։ Հիշեք Հաննիբալին և նրան անառակացրած Կապուան։ Հիշեք Պյուռոս արքային։ Մարդուն երջանիկ է դարձնում ոչ թե հարստությունը, փողը, ոչ էլ նույնիսկ ֆիզիկական ուժը...

— Իսկ ի՞նչը։ Ի՞նչը, Սպարտա՜կ,— առաջնորդին ընդհատեց գալլ Ամիկոսը, լեգեոնների հրամանատարներից ամենաերիտասարդը, որը, սակայն, արդեն հասցրել էր աչքի ընկնել մարտերի ժամանակ։

— Ասեմ քեզ, Ամի՜կոս,— պատասխանեց Սպարտակը։— Անկասկած, մարդուն երջանիկ են դարձնում երեք բան. նախ՝ իրավացիությունը այն գործի, որին ծառայում է, երկրորդ՝ այն

իմաստությունը, որը թույլ չի տալիս առօրյա կյանքում սխալներ գործել, երրորդ՝ բնությանը համապատասխան ապրելը։ Իզուր են մի քանիսը ժպտում։ Բնությանը համապատասխան ապրելն ամենևին էլ հեշտ չէ։ Այդպիսի կյանքի համար որոշակի արժանիքներ են անհրաժեշտ. սթափ միտք, խիզախություն, եռանդ, աշխատություն, դիմացկունություն և ամենն մի փոփոխության համար նախապատրաստվածություն, որ կարող է հանդիպել կյանքում։ Ինձ համար, անկասկած, շատ կարևոր է օգտվել բախտի պարգևներից, առանց դրանց ստրուկը դառնալու։ Այլ կերպ ասած, երջանիկ կյանքը կազմում են՝ ազատությունը, աննկուն տոկունությունը, քաջությունը, առույգությունը, քաջ գիտակցությունն այն բանի, որ միակ բարիքը արժանապատվությունն է, հոգու անպարտելի ուժը, փորձով իմաստնացած մեծ մարդասիրությունը և հոգատարությունը շրջապատողների նկատմամբ, իսկ միակ չարիքը՝ ազատության բացակայությունն է, ստոր ընչաքաղցությունը, ամոթաբեր արատավորությունը...

— Իսկ փա՞ռքը, Սպարտա՛կ,— առաջնորդին ընդհատեց Թրակացի Աստերոպեոսը։

— Ես կարող եմ,— պատասխանեց Սպարտակը,— նորից կրկնել, թե որն է մեզ համար ամենակարևորը, չկա ավելի կարևոր բան, քան փառքի ձգտումը, բայց՝ ազնվությամբ և պատվով լեցուն փառքը։ Փառքի տենչում են բոլորը, բայց ոչ բոլորն են արժանի դրան։ Հարկավոր է ձգտել անսահման փառքի, բայց միայն ազնիվ հարստության։ Կյանքի վերջին բոլորս էլ հասնելու ենք, թող, ով կարող է, փառք վաստակի մինչև մեռնելը, փառքն ամենալավ բանն է, որ մնալու է մեզանից հետո։ Իսկ հիմա մեր կորուստների մասին։ Այո՛, դրանք մեծ են։ Ինչ կարող ես անել։ Բոլոր պատերազմների ժամանակ, այնպես է եղել միշտ, որ մեկը մյուսին սպանել է։ Պատերազմը ծանր բան է։ Պատերազմի ժամանակ հաճախ ստիպված ենք լինում խմել արյունով ներկված գետերի ջուրը, անցնել դիակներից առաջացած կամուրջների վրայով, կորցնել լավագույն ընկերների և զինակիցների, հացի փոխարեն խոտ ուտել, նվաճել խոր ձյունների մեջ թաղված ցեղեր, դրավել հողի տակ թաքնված քաղաքներ, լողալ-անցնել վտանգավոր, փոթորկոտ ծովեր, չիմանալ ինչ բան է մեղմ ձմեռ, բարեբեր ամառ, տոն, ուրախություն, հանդիսավոր երթ, թատերական ներկայացում։ Այս ամենն է պատերազմը, և ռազմական փառքը ձեռք չի բերվում առանց

արյան և քրտինքի, առանց բարեկամներ կորցնելու, առանց մեծագույն ռիսկի, դժվարությունների ու տանջալի աշխատանքների։ Իսկ մահը. ի՞նչ բան է մահը։ Այն բնության օրենք է և մեծ խորհուրդ։ Մահը հավասարեցնում է Ալեքսանդր Մեծին և հասարակ ջորեպանին։ Էնոմայոսը, Կրիքսոսը, Գանիկոսը, Կաստոսը և մերոնցից շատերը զոհվեցին, ճիշտ է։ Բայց մի՞թե նրանցից որևէ մեկը զղջում էր իր կատարած ընտրության համար։ Գուցե Կրիքսոսը, Էնոմայոսի մահն իմանալով, զղջացի՞լ է, որ մասնակցել է մեր դավադրությանը։ Գուցե նա ասե՞լ է, իսկ որևէ մեկը լսել է, որ «Ախ, ինչո՞ւ Էնոմայոսը չմնաց Բատիատոսի գլադիատորական դպրոցում։ Մնար, ի՞նչ իմանաս, գուցե մի քանի տարի էլ ապրեր։ Բայց նա այլ ճանապարհ ընտրեց և անմիջապես զոհվեց։ Ես էլ երևի, նրա հետևից գնամ»։ (Ընդհանուր ծիծաղ)։ Դուք ծիծաղո՞ւմ եք։ Իրավացի եք։ Նման փոքրոգի խոսքեր Կրիքսոսը չէր կարող ասել։ Մեր քաջ ընկերն այլ սկզբունք ուներ. «Ուժին հարկավոր է հաղթել խիզախությամբ, իսկ Ճակատագրին՝ հանդգնությամբ։ Քաջի համար ո՛չ մի արդելք չկա, իսկ վախկոտի համար՝ ո՛չ մի հենարան»։ Ամբողջ կյանքում, պատանությունից սկսած, Կրիքսոսը ղեկավարվել է խիզախ ոգով և Ճակատագրով։ Նա երբեք չէր հնազանդվում և միշտ մոլեգնաբար կռվում էր թշնամիների դեմ հանուն արդարության։ Այդպես էին վարվում նաև Էնոմայոսը, Գանիկոսը, Կաստոսը և մեր բոլոր զոհված ընկերները։ Ուրեմն մենք էլ այդպես անենք մինչև մեր կյանքի վերջը։ Զինակիցնե՛ր, մի բան բացարձակորեն անկասկած է, վախկոտությունը ոչ մեկի կյանքը դեռ չի փրկել, սարսափելին մահը չէ, քանզի բոլորս մահկանացու ենք, սարսափելին անփառունակ ապրելն է։ Ես այդպես եմ մտածում։ Այդպես են միշտ մտածել մարդկության պատմության մեջ հետք թողած բոլոր փառապանծ այրերը։ Գուցե ձեզնից որևէ մեկն ա՞յլ կերպ է մտածում։ Բատիատոսի մենախցերը ցանկացող կա՞։ Գո՞ւցե ուզում է արցունքն աչքերին վերադառնալ նրա դպրոցը, իսկ հետո՝ արենա։

Ընդհանուր ծիծաղ առաջացավ և բացականչություններ.

— Ո՛չ մեկը։

— Մեր մեջ փոքրոգիներ չկա՞ն։

— Այստեղ վախկոտներ չկա՞ն։

— Կատակո՞ւմ ես, Սպարտա՛կ։

— Օ՜, այդ գլադիատորությո՜ւնը,— մոթմոթաց գերման Կվարտիոնը։— Ամենաստոր և նողկալի գյուտն է դա։ Երբ մեռած հռոմեացի Բրուտոս Պերայի որդիները հորինեցին գլադիատորական մարտերը (ընդամենը երեք զույգ էին հանդես գալիս), ո՞վ կմտածեր, թե ինչ է դուրս գալու դրանից։

— Այնքա՜ն էլ իրավացի չես, Կվարտիո՜ն,— առարկեց Սպարտակը։— Նախ՝ արիստոկրատների թաղման խարույկների մոտ գերիների մենամարտերը գոյություն ունեին հռոմեացիներից դեռ շատ առաջ (օրինակ, էտրուսկների մոտ)։ Բայց Բրուտոսի որդիները առաջինը հանգուցյալի պատվին հոգեհիշատակի մենամարտերը վերածեցին հանդիսատեսին հաճելի արյունալի խաղերի։ Երկրորդ՝ խաղերն ամֆիթատրոններ տեղափոխվեցին շատ ավելի ուշ։ Բայց, անտարակույս, արագորեն արմատավորվեցին հռոմեական հողում, քանի որ լիովին համապատասխանում էին հռոմեացիների ճաշակին և դիտվում էին որպես դաստիարակության կարևոր միջոց։ Արյունալի մարտերի տեսարանները պետք է սովորեցնեին անվախություն, արհամարհանք մահվան նկատմամբ, ուրիշին անվարան սպանելու վճռականություն։ Մարտնչող զույգերի քանակն արագորեն սկսեց աճել։ Եվ ահա ամֆիթատրոններում արդեն տեսնում ենք ըստ զենքի տեսակների մարտնչողների՝ սամնիտների և դիմաքերների, նրանց, ովքեր կռվում են երկու սրերով, անդաբատների, որոնք շոշափելով են շարժվում[1], տավրոցենտների, որոնք թռչում են դաշտի մեջքին, կամ կատերվարիուսների, որոնք ջոկատներով են կռվում, ռետիարիուսների՝ գալլերի և մուրմիլոնների մշտական թշնամիների, որոնք հակառակորդին որսում են ցանցով։ Եռ ինքս սկզբում պատկանում էի «փոքր վահանակիրների» շարքին, այսինքն՝ թրակացիների, իսկ հետո դարձա մուրմիլոն։ Դուք այդ ամենը գիտեք։ Գլադիատորներից, իհարկե, ամենահամբավավորները՝ ռետպարիուսները և մուրմիլոններն են։ Հենց նրանց միջից են ամենից շատ փառաբանված մարտիկներ հայտնվում։

— Բայց, ախր, եթե գլադիատորի բախտը լավ բերի,— հանկարծակի աշխուժացավ մինչև այժմ լուռ մնացած գալլ Ֆլամման,— կարող է ազատություն ստանալ, մեծ գումար ձեռք բերել, տներ, առանձնատներ, թանկարժեք կահկարասի, մտնել,

[1] Անդաբատների սաղավարտներն այդպիսի կառուցվածք ունեին։

թեկուզև երկրորդ սերնդից, հեծյալների դասի մեջ, դառնալ Հռոմի քաղաքացի։

— Երբեմն այդպես պատահում է,— համաձայնեց Սպարտակը։ Բայց նման բախտին արժանանում են շատ քչերը։ Այդ երջանիկներին կարելի է մատների վրա հաշվել։ Մնացածների բախտը բոլորովին այլ է՝ մահ երիտասարդ, քսան-քսանհինգ տարեկան հասակում։ Կամ՝ խեղանդամ դարձած, գողություն են անում, քարշ են գալիս գինետներում, կոկորդ կտրում, ապրում աղքատության մեջ, իրենց հարբեցողության տալիս... Տղամարդու համար ամոթալի և սարսափելի վախճան։ Ո՞չ, ավելի լավ է կյանքը զոհել ազատության, ազնիվ գաղափարների համար, իսկ բոլոր հռոմեացիներին՝ մեր երդվյալ թշնամիներին, այդ մոլի արյունախումներին, հարկավոր է կոտորել։ Նրանց փոխել անհնար է։ Տերենտիոսը, հռոմեացի բանաստեղծն ու դրամատուրգը, սենատոր Տերենտիոս Լուկանոսի ազատագիրը, նշանավոր զորավար Սկիպիոն Էմիլիանոսի խմբակի անդամը, ճշմարտացի է պատկերել մարդկային կերպարանքով այդ գազանների ընդհանուր տրամադրությունը։ Այսպես է նա գրել իր «Սկեսուրը» պիեսի երկրորդ բեմականացման մասին (առաջին բեմադրությունը տապալվեց).

Փորձում եմ նորից բեմադրել այն։ Արարն առաջին
Դուր եկավ մարդկանց, քանի որ հանկարծ լուր է տարածվում։
Թե գլադիատորներ պիտի հանդես գան։ Ժողովուրդն ահա վազում է գալիս,
Աղմկում, գոչում, և տեղի համար կռիվ է շուրջը։
Այնժամ ես բեմում ինքս ինձ պահել չէի կարենում...

Ահա հռոմեացիների վերաբերմունքը գլադիատորական մարտերի նկատմամբ, դա նրանց համար ամենասիրելի տեսարանն է, որից հետո երկրորդ տեղում լորերի կռիվն է։

— Բայց այնուամենայնիվ, հռոմեացիները մեզ հարգում են,— կրկին միջամտեց Ֆլամման։— Ո՞վ ավելի մեծ համբավ ունի Հռոմում, քան գլադիատորը։ Բանաստեղծները փառաբանում են մեզ, մեր տեսքն ու մեր դեմքերը զարդարում են կրպակները, քանդակվում և դաջվում են սկահակների ու սափորների, ապակյա անոթների և լամպերի վրա։ Նկարիչները և անդրիադործները մեզ պատկերում են պալատների, տաճարների, թատրոնների պատերի վրա։ Փառաբանված մարտիկների անունները շրջում են բերնեբերան, նրանք շատ հավատարիմ երկրպագուներ և մեծարողներ ունեն բարձր հասարակության երի-

տասարդների շրջանում։ Ամենաերևելի մարդիկ մեզ հետ վարվում են շատ ընտանեվարի։ Եվ քիչ արիստոկրատ կանայք չկան, որ գլադիատորներից են ընտրում իրենց սիրեկաններին։

Այդտեղ ընդհանուր ծիծաղ բարձրացավ, կոպիտ սրախոսություններ տեղացին... Երբ բոլորը հանգստացան, Սպարտակն ասաց.

— Չեմ ժխտում, դա էլ է ճիշտ։ Բայց գլխավորն այնուամենայնիվ դա չէ. մենք նրանց համար զվարճանքի առարկա ենք։ Մեր կյանքը ոչինչ է։ Մեր արյան հաշվին լանիստը՝ գլադիատորական դպրոցի տնօրենը, կարող է հարստանալ։ Նշանավոր արիստոկրատները չեն քաշվում սեփական գլադիատորներ պահելուց և նրանց վարձով տալուց։ Շահավետ գործ է. երկու ներկայացումից կարելի է հետ ստանալ ծախսված դրամը։ Իսկ տրամադրության տակ ունենալ բացարձակորեն քեզնից կախում ունեցող ամուր մկաններով, ճարպկորեն սուր ու դաշույն բանեցնող կտրիճների, մի՞թե վատ է։ «Եթե գլադիատորը սպանվեց՝ մեծ դժբախտություն չէ, միշտ կարելի է նորը գնել»։ Օ՜, այդ հռոմեացինե՜րը, մարդկանցից ամենավատթարնե՜րը։ Նրանք կցանկանային մեզ պահել անթափանց տգիտության մեջ և դարձնել իրենց գազանային զվարճանքների անվնաս առարկաներ։ Բայց ոչինչ չի ստացվի։ Մենք ամեն ինչ գիտենք, գիտենք նրանց պատմությունն ամենաակզբից, թե ինչպես կռվեցին հարևան ժողովուրդների հետ և նվաճեցին նրանց, ինչպես փառամոլությունից դրդված Հռոմուլոսը սպանեց իր Հռեմոս եղբորը, ինչպես էին հռոմեացիները Սիցիլիայում պատերազմում սեփական ստրուկների դեմ։ Մենք ամեն ինչ գիտենք։ Արյունով են սկսել իրենց պատմությունը հռոմեացիները, արյան մեջ էլ կավարտեն։

— Ես համաձայն եմ քեզ հետ, Սպարտա՜կ,— ասաց գերման հսկա Կվարտիոնը,— իրոք, այնքան էլ ճիշտ չարտահայտվեցի Բրուտոսի որդիների մասին։ Ճիշտ է, հռոմեացիներն արյունախում են նույնիսկ ոչ փոխաբերական իմաստով, այլ բացարձակապես տառացիորեն։ Ինչպիսի՜ վայրագությամբ է աչքի ընկնում հռոմեական արիստոկրատիան, ինչպիսի՜ վայրագությամբ է աչքի ընկնում ժողովուրդը։ Այդ ամենը ճիշտ է։ Իրոք այդպես է։ Նրանք խմում են մեր արյունը՝ ընկած գլադիատորների արյունը, իրենց հանցավոր խրախճանքների ժամանակ գինու հետ խառնելով։

— Դա դեռ ամենավատը չէ,— զայրույթով ձայնակցեց Թրակացի հրամանատար Օվկիանոսը։— Մի՞թե չգիտեք. Հռոմուլոսի նողկալի սերունդները,— օ՜, հռոմեական էգ գայլից ծնված արյունռուշտ գայլեր,— ընդունակ են պատռել տպանված գլադիատորի կուրծքը, պոկել լյարդը, ինը մասի բաժանել և տեղնուտեղը, բոլորի աչքի առաջ խժռել։

— Վրե՜ժ դրանցից։ Վրե՜ժ սրիկաներից...— Սպարտակի ամրոզջ վրանը ցնցվեց հավաքվածների ցասումնալի գոչյուններից։

Սպարտակը ձեռքը բարձրացրեց.

— Հանգստացե՛ք, բարեկամնե՛ր։ Նրանց հերթը կգա։ Աշխարհի ամենահանցավոր քաղաքը մարդկանց և աստվածների պատիժից չի խուսափի։ Մեզանից ոչ մեկը, քանի դեռ ողջ է, չի մոռանա գլադիատորության ամոթն ու սարսափները. էրգաստուլը գլադիատորության հետ համեմատած՝. մանկան զվարճալիք է։ Ամեն ինչի համար հռոմեացիներից վրեժ կլուծենք՝ մեր ավերված տների, մեր զոհված ընկերների և մտերիմների, մեր սեփական ամոթի և ստորացումների համար։ Մահից մենք չենք վախենում։ Քանի անգամ ենք նայել մահվան աչքերին։ Կրասոսին էլ, նրա աստվածներն ու բարեհաճ ճակատագիրը մեզ օգնեն, կհաղթենք։

— Սպարտա՛կ,— հանկարծ խոսակցության մեջ մտավ մինչև այժմ լուռ մնացած գալլ Աքիլլեսը,— դու հաճախ խոսում ես աստվածների և աստվածների կամքի մասին։ Քո Լրինը՝ մեր գերագույն քրմուհին է։ Ասա՛, իսկ ինքդ հավատո՞ւմ ես աստվածներին։

Սպարտակն ուշադիր նայեց գալլին, փոքր-ինչ հապաղելով, ասաց.

— Իմ բարեկա՛մ Աքիլլես, դու ամենաբարդ հարցն ես տալիս։ Չգիտեմ, ինչպես պատասխանել... Մեր Թրակացիներն անկեղծորեն հավատում են աստվածներին։ Բայց ոչ բոլորը։ Նույնիսկ Օրփեոս արքայի (կամ նրանց, ովքեր հետագայում գրում էին նրա անունից) բազմաթիվ գրվածքներում զգացվում է, որ աստվածներին շատերը չեն հավատացել։ Իսկ ես պատանի հասակից փիլիսոփայություն եմ ուսումնասիրել։ Լավ ծանոթ եմ Եվհեմերեսի* «Սուրբ գրություն» ստեղծագործությանը։ Նա սի-

* Մահացել է մ. թ. ա. III դարի սկզբին։

ցիլիացի էր, Մեսենայից։ Եթե կարդացել ես նրա փիլիսոփայական վեպը, պետք է որ գիտենաս նման ականավոր մարդու կարծիքը՝ աստվածները, որպես գերբնական էակներ գոյություն չունեն, երբեք չեն էլ եղել, աստվածներին հորինել են քրմերը՝ քաղաքական շահից ելնելով։ Առաջին աստվածները եղել են մեծագույն սխրանքներ կատարած մարդիկ։ Սերունդները նրանց կյանքը զարդարել են նոր առասպելներով, վերջնականապես անջատելով մարդկանցից...

— Ուրեմն դու բոլորին չե՞ս հավատում աստվածներին,— դառնացավ գալլը։

— Ո՛չ,— պատասխանեց Սպարտակը։— Ես բավական շատ եմ ուսումնասիրել փիլիսոփայությունը, և իմ սթափ ու գործնական միտքը չի կարող հիմնվել հնարանքների ու հեքիաթների վրա։ Դու, գուցե, ասես. «Իսկ ինչո՞ւ ես միշտ աստվածների մասին խոսում»։ Որովհետև, թանկագի՛ն Աքիլլես, ես հասարակ մարդ չեմ, մասնավոր անձ չեմ։ Ես առաջնորդ եմ, զորքի հրամանատար, իսկ զորքում շատ-շատերն են հավատում աստվածներին։ Ես չեմ կարող վիրավորել նրանց կրոնական զգացմունքները։ Ես պարտավոր եմ հաշվի առնել, հարգել նրանց կարծիքը, եթե նույնիսկ այլ կերպ եմ մտածում։ Համեմատելու համար վերցնենք հռոմեացիներին։ Ի՞նչ ես կարծում, կոնսուլներ Լուցիոս Լուկուլլոսը, Մարկոս Լուկուլլոսը, Լուցիոս Հելիոսը և մնացած բոլորը, հավատո՞ւմ են աստվածներին։

Բազմաթիվ ձայներ լսվեցին.

— Հավատում են։

— Դժվար է ասել։

— Չեն հավատում։

— Նրանք մեզ բան չեն ասել։

— Ո՛չ, իմ բարեկամնե՛ր,— Սպարտակը ձեռքը կտրուկ թափ տվեց,— նրանք բոլորը չեն հավատում աստվածներին։ Իրականում աստվածներին չեն հավատում ո՛չ Պոմպեոսը, ո՛չ էլ Կրասոսը։ Իսկ ինչո՞ւ նրանք բոլորը պետության անունից զոհեր են մատուցում և խոսում աստվածների կամքի մասին։ Պատճառը պարզ է. այդպիսին է սահմանված պետական կարգը։ Լինելով պետական գործիչներ, նրանք, ռազմիկների հետ շփվելիս, պարտավոր են պահպանել սահմանված կարգը, սեփական կարծիքը մի կողմ թողնելով։

— Սպարտա՛կ, իսկ եթե հռոմեացիներն, այնուամենայնիվ,

հաղթեն մեզ,— հանկարծ մտահոգված հարցրեց գերման Կալլիսթենեսը։— Ի՞նչ ես կարծում, դա հռոմեացիների խելքի վկայությո՞ւնը կլինի։

— Եթե նման բան կատարվի, ապա ավելի շուտ նրանց երջանիկ ճակատագրի վկայությունը կլինի,— հապաղելով պատասխանեց Սպարտակը։— Ասենք, խելքի և երջանիկ ճակատագրի հարաբերությունը՝ ամենաբարդ, ըստ էության, փիլիսոփայական հարց է։ Հանդուցյալ Սուլլան, ինչպես բոլորին է հայտնի, բացառիկ խելոք մարդ էր։ Բայց իր բազմաթիվ հաջողություններն ու հաղթանակները վերագրում էր երջանիկ ճակատագրին։ Նա իրեն միշտ աստվածների սիրեցյալի տեղ էր դնում։ «Բոլոր իմ ձեռնարկումները,— ասում էր նա,— որոնք սկսում էի անսպասելիորեն, առանց երկար ծանրութեթև անելու, հույսս դնելով աստվածների վրա, միշտ լավագույն արդյունքն էին ունենում, քան նրանք, որոնք երկար կշռադատում էի»։ Նա սիրում էր իրեն կոչել Էպաֆրոդիտ, այսինքն՝ «Վեներա աստվածուհու սիրելի»։ Արդյոք լիովին անկե՞ղծ էր։ Ո՞վ գիտե...

— Սպարտա՛կ, իսկ ի՞նչ է նշանակում քո անունը,— հետաքրքրվեց գալլ Սերվանդեսը։— Վաղուց էի ուզում հարցնել...

— Թանկագին Սերվանդես։ Մեր լեզվով՝ Թրակերեն, Սպարտակ անունը նշանակում է «Նիզակակիրների առաջնորդ»։ Նման անուն կրում են միայն արքայական պահակախմբի անդամները, որոնցից ժամանակին խոշոր զորապետներ են աճում։ Ջահել ժամանակ նրանք ծառայում են թագավորին, նրա տանը և արշավանքի ժամանակ. ուտելիք ու խմելիք են մատուցում, ձին են մոտ բերում, երբ նա պատրաստվում է հեծնել, զորավարների հետ մասնակցում են խորհուրդներին. գիշերը պահպանում են թագավորին, կարճ ասած՝ միշտ անբաժան են լինում նրանից։

— Սպարտա՛կ, իսկ դու երջանի՞կ ես,— հանկարծ հարցրեց գերման Նիտիմոսը։

Սպարտակը նայեց նրան, ժպտաց և պատասխանեց.

— Կարող ես չկասկածել, Նիտիմոս. Սպարտակը երջանիկ է։ Ես արդեն երկար մի կյանք եմ ապրել և շատ հետաքրքիր բաներ եմ տեսել։ Մասնակցել եմ մեր ժամանակի ամենախոշոր իրադարձություններին։ Եղել եմ շատ երկրներում և ճանաչել եմ բազմաթիվ նշանավոր մարդկանց, իսկ շատերի հետ բարեկամություն եմ արել։ Ամենուրեք մարդկանց հարգանքին եմ արժանացել, և ինքս էլ շատերին օգտակար եմ եղել։ Ընկերնե-

Ինչ հավատարիմ եմ եղել, թշնամիներին պատժել եմ ըստ արժանվույն։ Ճակատագրիս փոփոխությունները շատ զարմանալի են եղել։ Պատանի ժամանակ ծառայել եմ հռոմեական բանակում, երկու տարի հետո դասալքել եմ (իմ ցեղակից մեդերը նորից պատերազմ էին սկսել հռոմեացիների դեմ, և ես ցանկանում էի կռվել նրանց կողքին, ոչ թե նրանց դեմ)։ Ես մեր ապստամբների շարքերում կռվել եմ հռոմեացիների դեմ լեռներում, բայց՝ անհաջող։ Հետո գտնվել եմ օտարության մեջ՝ Պոնտոսում։ Երկար ժամանակ ծառայել եմ Միհրդատի մոտ։ Ամեն տարի հարկ էր լինում կռվել հարևան ցեղերի դեմ։ Հետո մասնակցել եմ Միհրդատյան առաջին պատերազմին հռոմեացիների դեմ։ Ոմանք կարծում են, որ միշտ ապրել եմ կամավոր խստակեցությամբ, ո՛չ, բոլորի նման ճաշակել եմ ջահելություն, շքեղություն, սեր... Իսկ հիմա գլխավորում եմ ամենաարդարացի գործն աշխարհում։

— Սպարտա՛կ,— առաջնորդին ընդհատեց Նիտիմոսը։— Դու կռվել ես հարևան ցեղերի դեմ։ Հանուն ինչի՞։ Եթե նրանց հաղթել ես, ապա նրանց ստրկություն ես բերել։

— Այնքան էլ իրավացի չես, թանկագի՛ն Նիտիմոս,— առարկեց Սպարտակը։— Պոնտոսի հարևանությամբ բնակվող բոլոր ցեղերն ապրում են վաղեմի թագավորական իշխանության պայմաններում։ Նրանք ազատ երբեք չեն եղել և ազատություն չեն տեսել։ Միհրդատի իշխանությանը ենթարկվելը նրանց համար նշանակում էր սոսկ տիրակալի փոփոխություն, այդքանը միայն։ Միհրդատին ենթարկվելը նրանցից ոչ մեկը չէր համարում ազատության կորուստ։ Այդ հպատակությունը նրանց համար նշանակում էր մերձեցում Պոնտոսի բարձր մշակույթին, լայն հեռանկարներ էր բացում առաջ գնալու և դիրք ձեռք բերելու համար։ Ինքս այդ բանը զգացել եմ, երբ թրակական թագավորությունից,— թեև դա այնքան նշանավոր էր, որքան մեդերի թագավորությունը,— ընկա մեծ Պոնտոս։ Ասածիս ավելացնեմ նաև հետևյալը. ես այն ժամանակ շատ ջահել էի, այնպիսի հայացքներ չունեի, ինչպես հիմա, իսկ մարդու հայացքները կյանքի փորձի հետ անընդհատ փոփոխվում են։ Այն ժամանակ, բոլորի նման, ես էլ հրապուրվում էին փայլուն պաշտոնով, պարգևներով, առավելություններով...

— Ինչպես հիմա մե՞նք,— մեղմ ժպտալով միջամտեց գալլ Ատլանտը։

— Այո՛,— համաձայնեց Սպարտակը։— Բայց դրանում վատ բան չեմ տեսնում։ Յուրաքանչյուրը ուժերի ծաղկման շրջանում տենչում է փառքի և առավելության, բայց ոչ բոլորին են դրանք բաժին ընկնում։ Մի՞թե Պոմպեոսը ծարավի չէ փառքի։ Կա՞մ Կրասոսը։ Կամ, գուցե, Մարկոսը և Սուլլան հրաժարվո՞ւմ էին փառքից։

Բոլորը միահամուռ համաձայնեցին, որ փառքն ու պատիվը բոլորի համար ցանկալի են և անհրաժեշտ։

— Իմ թանկագի՛ն զինակիցներ,— իր խոսքն ավարտեց Սպարտակը,— ցրվելու ժամանակն է։ Դուք պետք է մի կուշտ քնեք։ Վաղը վերջին ճակատամարտն է Կրասոսի դեմ, վերջինը նրա և մեզ համար։ Բարեկամնե՛ր, կռվե՛ք մեծագույն խիզախությամբ, ո՛չ մի քայլ մի նահանջեք։ Մի՛ մոռացեք ձեր նախկին փառքը։ Մի՛ մոռացեք. Պոմպեոսը և Մարկոս Լուկուլլոսը՝ նոր ուժեղ թշնամիները, մեր կողքին են։ Թույլ շտաք, որ արդարանան բանաստեղծի տողերը.

Եվ կախված ամպից ծնվում է ձյունամրրիկը,
Կայծակի վառ փայլը որոտ է բերում։

Վերջում, օ՜ զինակիցներ, ձեզ բոլորիդ ուզում եմ ասել. միշտ միմյանց հետ մրցե՛ք խիզախության, մեծահոգության, արիության և արդարացիության, փառքի և սկսած գործը մինչև վերջ տանելու ասպարեզում։ Միայն այդպիսի ձգտումն է պատերազմում հաջողություն բերում, զորքը դարձնում անպարտելի։ Բարեկամնե՛ր, ահա թե ինչու եմ ձեզ այդպիսի խորհուրդ տալիս. վաղվա ճակատամարտում հարկավոր է ամեն գնով հաղթել։ Եթե պարտվենք, ես մարտից կենդանի չեմ դուրս գա և դուք ստիպված կլինեք նոր առաջնորդ ընտրել։ Հաստատ որոշել եմ. ոչ մի քայլ չնահանջել։ Որպես վերջին պատգամ,— ո՞վ գիտե, ի՞նչ է թաքցնում մութ ճակատագիրը,— ուզում եմ ասել. միշտ հետևեցե՛ք, որ ձեր գլխավոր առաջնորդն արքայական հոգի ունենա,— դա շատ կարևոր արժանիք է մարդկանց ներգրավելու համար։ Արքայական հոգի ունենալ նշանակում է. շռայլ լինել մարդկանց նկատմամբ, վերականգնել ավերված տներ և քաղաքներ, թեթևացնել մեծ ու փոքր, հեռավոր ու մոտ ժողովուրդների վիճակը, մեծ քաղաքների համար ձգտել անել այնպիսի բան, ինչին արժանի է նրանց փառքն ու հին ծագումը։ Իսկ ամենավերջին և ամենակարևոր խոսքերս,— քանզի բոլորս էլ

զինվոր ենք,— հետևյալն է. ՊԵՏՔ Է ՄԵՌՆԵԼ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՄԲ, ՈՐՊԵՍԶԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՀԻՇԵՆ ԵՎ ՀԻԱՆԱՆ: Խմենք, բարեկամնե՛ր, վերջին գավաթը վաղվա ճակատամարտի և հաղթանակի կենացը։ Եվ թող աստվածները, եթե նրանք գոյություն ունեն, ինչպես ոմանք կարծում են, մեզ հետ լինեն։

Բոլոր հավաքվածները պատրաստակամորեն նորից լցրին գավաթները, բարձրացրին և միահամուռ խմեցին.

— Սպարտա՛կ, մեր խիզա՛խ առաջնորդ և բարեկամ, երկա՛ր ապրես։

— Բոլորիցս շա՛տ ապրես։

— Եթե ողջ մնաս, մեր գործն, անկասկած, կհաղթանակի՛։

— Ամեն ինչ կանե՛նք, որպեսզի հաղթենք։

71 թվականի հունվարյան այդ երեկոն վերջին բարեկամական երեկոն էր, որ բարձրագույն հրամանատարներն անցկացրին Սպարտակի ընկերակցությամբ։ Կրասոսի դեմ տրված վերջին ճակատամարտից հետո ով ողջ մնաց, մինչև կյանքի վերջը սրտում պահեց Սպարտակի խոսքերը...

III

Կեսգիշերին մոտ բոլորը հիանալի տրամադրությամբ ցրվեցին իրենց վրանները։ Սպարտակը, ըստ սովորության, ստուգելով ճամբարի պահակությունը և լրացուցիչ պահակակետերը, նույնպես գնաց հանգստանալու։

Այն, ինչ ճակատամարտից առաջ կախված էր մարդկային շրջահայեցությունից և գորավարի ռազմական տաղանդից, նա կատարեց։ Մնացած ամեն ինչ ռազմիկների ձեռքին էր,— յուրային և հռոմեացի,— նրանց գրոհից, մոլեգնությունից և խիզախությունից, որ ցուցաբերելու էին վաղվա ճակատամարտում։

Գլուխ երեսունմեկերորդ

ՍՊԱՐՏԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

I

Վերջին ռազմական օպերացիան Սպարտակը ծրագրել էր հանգամանորեն։ Կրասոսին ընդառաջ ճանապարհի մի մասն անցնելով, նա ինչպես որ պատրաստվել էր, ամուր գիրք ընտ-

րեց, ճամբար կառուցեց, խրամ փորեց, թիկունքում ու թևերին հատուկ ծառափակոցներ դրեց և ամբողջ շրջանով մեկ դիտակետ-պահակակետեր տեղաբաշխեց։ Սպարտակոսի գերագույն առաջնորդը մտադրվել էր հռոմեացիներին դիմավորել թարմ և կուշտ զինվորներով, թիկունքում հուսալի ամրություններ ունենալով։ Իսկ թշնամին ստիպված կլիներ մարտի բռնվել չկերակրված, երթից հոգնած, հետևում չունենալով ամրություններ, որտեղ ճակատամարտի անհաջող ելքի դեպքում հնարավոր լիներ թաքնվել։ Ուստի Սպարտակը հաստատ հույս ուներ իր զորքի առավել մարզվածության և հրամանատարների վարպետության շնորհիվ առավելության հասնել հռոմեացիների նկատմամբ և, վերջապես, վճռական հաղթանակ տանել։

Ամեն ինչ սկսվեց այնպես, ինչպես հաշվարկել էր Սպարտակը։ Ցերեկվա ժամը մեկի մոտ (71 թ. հունվարի 6-ին) երևացին հռոմեական այսպես կոչված «ընտրովիները»՝ մոտ 6 հազար հեծյալները և 10 հազար դաշնակից հետևակայիններ։ Նրանց հետևից երեք զորասյունով (սրանցից յուրաքանչյուրը մի մարտական դիծ էր կազմում) գալիս էին դաշնակիցների աջ թևը, հետո՝ հռոմեական լեգեոնները և վերջապես՝ դաշնակիցների ձախ թևը։ Զորասյուների երկու կողմից, պահպանելով նվազագույն դումակը, ընթանում էր հռոմեական հեծելազորի մնացած մասը։

«Ընտիր» այրուձիու առաջին շարքերում, ճամբարի կառուցումը հոգացող տրիբունների և ցենտուրիոնների խմբով շրջապատված, արշավում էր Պ. Կոնսիդիոսը։ Մոտենալով հակառակորդի ռազմակայանին, փորձառու աչքով դիտեց շրջակայքը և ընտրեց ճամբար կառուցելու համար առավել հարմար տեղը։

Նրա կարգադրությամբ Լ. Կվինկցիոսը բացաղատեց հեծելազորը ճակատով մեկ՝ թշնամու հնարավոր գրոհները հետ մղելու համար, իսկ տրիբունները և ցենտուրիոնները զորավարի վրանի տեղը որոշելով՝ շտապ գետնի մեջ խրեցին Կրասոսի դրոշը, սահմանված հեռավորության վրա գիծ անցկացրին, որի երկայնքով պետք է տեղադրվեին տրիբունների, լեգատների, «ընտիր» հեծելազորի և հետևակի հրամանատարների վրանները, որից հետո նշեցին դաշնակից զորքերի մնացած մասի, հեծելազորի և հռոմեական լեգեոնների տեղերը։ Մի կողմ դնելով զենքերը, վահաններն ու ուղեբեռը դրոշի շուրջը կիտելով,

ռազմիկներն առուցդորեն ձեռքներն առան բահերն ու քլունգները։

Բայց Սպարտակը բնավ մտադիր չէր հռոմեացիներին ամբռնալու հնարավորություն տալ։ Այդ պատճառով անմիջապես թշնամու դեմ ուղարկեց հեծելազորի և թեթևազեն հետևակի մի մասը։ Նրանք հեշտությամբ տապալեցին Կրասոսի դաշնակցային հեծելազորին, ստիպեցին փախուստի դիմել և հարձակվեցին աշխատող հետևակի վրա։

Բահերն ու քլունգները դեն նետելով՝ լեգեոնականները վերցրին նիզակներն ու վահանները։ Մարտն սկսեց ծավալվել ճակատագծով մեկ։ Երկու կողմերից էլ մարտնչողներին անընդմեջ մոտենում էին նոր համալրումներ։

Ճամբարի հողաթմբի վրա կանգնած Սպարտակն ուշադրությամբ հետևում էր։ Վերջապես նա տեսավ, թե ինչպես հռոմեական ամբողջ զորքը մարտադաշտ դուրս եկավ և սկսեց մարտակարգով շարվել։ Այդժամ Սպարտակն իջավ հողաթմբի վրայից, հեծավ ձին և անձնական պահակախմբի ուղեկցությամբ ուղղվեց դարպասների կողմը։ Նրա հրամանով շեփորահարները համապատասխան ազդանշաններ տվեցին. նախ Կոնսիդիոսի նախատեսած ճամբարի խանդակի մոտ մարտնչող ապստամբներին կարգադրվեց հետ քաշվել, ապա ամբողջ զորքին հրամայվեց դուրս գալ ճամբարից։ Ամբողջ ճամբարն իսկույն սկսեց շարժվել։ Առաջացան զրոշակակիրները, նրանց հետևից՝ այրուձին և հետևազորը։

Քիչ անց հեծելազորն ու լեգեոնները հետ քաշված զորամասերի հետ միասին շարվեցին մարտակարգով. դրանք կազմում էին 90 հազար հետևակ և 10 հազար հեծելակ։

Առաջին շարքերում կանգնած էին ամենափառաբանված ռազմիկները՝ մանյակները։ Բոլորն ասես ջոկված լինեին. բարձրահասակ, ամրակազմ, շիկահեր, խարտյաշ ու շիկակարմիր, արևից ու քամուց պղնձակարմրավուն դեմքերով, բեղիկներով և գանգուր մորուքներով։ 20—25 տարեկան ջահելներ էին։ Մանյակները հագել-կապել էին այնպես, ինչպես սովորաբար լինում էին մարտից առաջ. գլխներին սաղավարտներ էին դրել, մինչև ծնկները հասնող զրահը պաշտպանում էր նրանց մարմինը և թիկունքը, ոտքերը ծածկված էին երկաթյա զանգապանների տակ։ Նրանց ձեռքերին պիլում- նիզակներ էին և ձվաձև վահան-

ներ, իսկ աջ կողքից յուրաքանչյուրը պատյանով՝ կախված ուներ կարճ սուր։ Մանյակների պարանոցները զարդարում էին ոսկյա մանյակներ (այստեղից էլ՝ նրանց անունը) — նրանց հպարտության առարկան, պարգևները, որ բազմաթիվ մարտերի ժամանակ ակնառու խիզախության համար ստացել էին։ Մանյակները կանգնած էին հանգիստ, սեփական արժանապատվության զգացումով։ Այդ ռազմաշունչ երիտասարդների դեմքերին վարանման և վախի նշույլ չկար։ Միծաղելով նրանք կատակում էին միմյանց հետ և ծաղրական խոսքեր շպրտում հռոմեացիների հասցեին։

Ճերմակ զգեստով, ոսկյա պսակը գլխին քրմուհու ուղեկցությամբ, ծառաները Սպարտակին մոտեցրին սպիտակ նժույգը։ Բարբարոս շատ ժողովուրդների սովորության համաձայն, վճռական ճակատամարտից առաջ պահանջվում էր ձին զոհաբերել Արևի աստծուն։

Նրա գործողություններին ուշադրությամբ հետևող զինվորների աչքերի առաջ Սպարտակը այրվող ծծումբով մաքրագործեց զոհաբերական թասը, հետո Արևի աստծո պատվին դինի հեղեց՝ կտրուկ շրջելով թասը, որպեսզի գինին արագորեն թափվի։ Հետո շրջվեց նժույգի կողմը։ Ձին հանգիստ կանգնած սպասում էր (ծեսի համաձայն զոհի վարքը մեծ նշանակություն ուներ)։ Սպարտակը, աջ ուսից ցած նետելով քամուց ծածանվող կարմիր թիկնոցը, պատյանից հանեց սուրը և մեկ հատու հարվածով սպանեց զոհին։ Նժույգը խռխռաց, ընկավ ծնկների վրա և դանդաղորեն փլվեց կողքի։

Զինվորների շարքերի միջով հավանության թեթև աղմուկ անցավ։ Իսկ Սպարտակը բարձր ձայնով աղոթք հղեց աստվածներին. «Օ՜, Ապոլլոն և դո՜ւք, արևային մյո՜ւս բոլոր աստվածներ։ Ձեզ եմ դիմում։ Ձեր կամոք գնում եմ Կրասոսի վրա, որպեսզի ոչնչացնեմ նրան։ Եթե հաղթող մնամ, խոստանում եմ ձեզ նվիրաբերել ավարի մեկ տասներորդ մասը»։

Զոհաբերությունը կատարված էր, սահմանված աղոթքը արտասանված։ Սպարտակին մոտեցրին իր ձին։ Նա սուրը դրեց պատյանը, հեծավ սիրելի նժույգին և արշավեց մարտագծի երկայնքով։

Լեգեոնների մոտով անցնելիս, Սպարտակը կարճ ճառեր արտասանեց, ձգտելով զինակիցներին ոգևորել ճակատամարտի

համար։ Ռազմիկները բարձրաձայն գոչյուններով և նիզակները վահաններին զարկելով ողջունում էին իրենց սիրելի ընկերոջը և փառաբանված զորավարին։

II

Հակառակ կողմում Կրասոսը պոնտիֆիկոսներով և ավգուրգուշակներով շրջապատված, աուսպիցիաներ էր կատարում (թռչունների ճախրանքի միջոցով գուշակություն անել), զոհեր էր մորթում, աղոթքներ էր հղում աստվածներին՝ Յուպիտերին և այլոց, նրանցից օգնություն խնդրելով Սպարտակին ոչնչացնելու համար։

Հետո Կրասոսը, Կոնտիդիոսը և Արիոսը նույնպես շրջայց կատարեցին լեգեոններով մեկ։ Նրանք կոչ էին անում բոլոր ուժերը լարել, որպեսզի ձեռքից բաց չթողնեն այն օգուտները, որոնք կապված են հաղթանակի հետ։

Երբ անհրաժեշտ ճառերն արտասանվեցին, երկու կողմերում հնչեցին սովորական ազդանշաններն ու հրահանգները, և բանակները շարժվեցին միմյանց ընդառաջ։ Հռոմեացիները մարտի էին գնում մեծագույն տագնապով, պարանոցներին սուրբ թալիսմաններ կախած, աղոթքի ու նզովքի խոսքեր շշնջալով։

Մինչ թշնամիները համաչափ քայլով մոտենում էին իրար, մարտագծի առջևից ընթացող թեթևազեն մարտիկները և այրուձին արդեն կռվի էին բռնվել։ Այն կես ժամից էլ պակաս տևեց։ Հռոմեացիները ապստամբների կատաղի ճնշման տակ դուրս շպրտվեցին իրենց դիրքերից և հետ մղվեցին։

Նահանջելով, հռոմեացի թեթևազեն մարտիկներն ու հեծյալները մոտեցող կոհորտաների արանքներով թաքնվեցին ծանր հետևակի թիկունքում։ Արագորեն իրենց կարգի բերելով, նրանք բաժանվեցին երկու մասի և գնացին դեպի զորքի թևերը։

Իսկ այդ ընթացքում հռոմեական կոհորտաները խիտ շարքերով հարձակվեցին սպարտակյան թեթևազեն մարտիկների վրա։ Նրանք հեշտությամբ հետ շպրտեցին վերջիններիս, իսկ սրանց հետևից՝ ապստամբների հեծելազորին, և դրանց էլ, իրենց հերթին, ստիպեցին ծանր հետևակի արանքներով նահանջել թիկունք, որտեղ դրանք նույնպես բաժանվեցին երկու թևերի միջև։

Փողերի ու շեփորների անընդմեջ հնչյունների ներքո, որոնք

միմյանց «Ի մա՞ռ» ազդանշանն էին տալիս, մարտադծերը մոտեցան իրար և անցան վազքի։ Մարտական կատաղի գոչյուններով երկու կողմերի մարտիկները միմյանց վրա նիզակներ նետեցին, իսկ հետո վահանները միացնելով, խտացրած շարքերով բախվեցին դեմառդեմ։ Կատաղի մոլեգնությամբ ապստամբներն ու հռոմեացիներն սկսեցին սրեր բանեցնել։

Հետևակից հետո շարժման մեջ մտավ հեծելազորը։ Շարժվելով իրենց բանակների թևերով, հեծյալ զորամասերը հարձակվում էին հակառակորդի վրա և մարտի բռնվում։

Այսպես սկսվեց պատերազմի ամենակատաղի վերջին ճակատամարտը։ (Ապպիանոս)։

Մեկ ժամ հետո դրությունը միանգամայն որոշակի դարձավ։ Ապստամբների երկաթյա բազուկի տակ ճնշված հռոմեացիներն սկսեցին աստիճանաբար նահանջել։ Հաջողությունից ոգևորված սպարտակյանները սկսեցին կրկնակի եռանդով վրա տալ թշնամուն։

Սկզբում Կրասոսը, Կոնսիդիոսը և Արիոսը ջանում էին զորքը պահել աղաչանքներով և հայհոյանքներով։ Բայց ոչինչ չէր օգնում։ Անհրաժեշտությունից դրդված՝ նրանք սկսեցին գործի դնել պահեստի ուժերը։

Բայց Սպարտակը (նա ժամանակին հոգնած զինվորներին փոխարինում էր թարմ ուժերով) շարունակում էր ավելացնել ճնշումը։

Առաջինը չդիմացավ հռոմեական հեծելազորը։ Թիկունքը թշնամուն դարձնելով, փախուստի դիմեց։ Վախկոտներին կանգնեցնելու Լ. Կվինկցիոսի բոլոր փորձերն ապարդյուն եղան։

Տեսնելով հեծելազորի փախուստը, Կրասոսը և Արիոսը (նրանք թևերի հրամանատարներն էին, Կոնսիդիոսը՝ կենտրոնի) անմիջապես սկսեցին շուտ տալ թևերը, ջանալով կանխել թշնամու հայտնվելը թիկունքում։ Մեծ դժվարությամբ և խոշոր կորուստների գնով նրանց հաջողվեց զորքերը շարել քառանկյունաձև։

Բոլոր կողմերից շրջապատված հռոմեացիները, ենթարկվելով կատաղի ճնշման, աստիճանաբար հասան հուսահատության։ Ճակատամարտը պսակվում էր անհաջողությամբ։ Միակ հույսը մնում էր, եթե Պոմպեոսը կամ Լուկուլլոսը չօգնեին, դիմանալ մինչև մութն ընկնելը և գիշերվա քողի տակ նահանջել մարտադաշտից։

Սպարտակը հիանալի հասկանում էր Կրասոսի հույսերը։ Նա գիտեր, որ մինչև մութն ընկնելը դեռևս երկու երեք ժամ ունի իր տրամադրության տակ հռոմեացիներին վերջնականապես ջարդելու համար։ Եթե դա չհաջողվի, կգա կհասնի Մ. Լուկուլլոսի այրուձին (հետախուզությունը տեղեկացրել էր, որ այն արդեն ճանապարհ էր ընկել), իսկ հետո նաև Պոմպեոսի հեծելազորը կմոտենա։

Զորավարի կարգադրությամբ շեփորահարները հատուկ աղդանշանով ռազմիկներին հետ կանչեցին։ Կարճատև դադար տիրեց։ Հռոմեացի լեգեոնականները դեմքներից տաք քրտինքը սրբելով՝ շունչ առան, կարճ խոսքեր փոխանակելով կապեցին վերքերը։ Բոլորը սարսափով մտածում էին, որ չեն դիմանա մինչև մութն ընկնելը։

Քանի դեռ հռոմեացիները հանգստանում էին, Սպարտակի հաղթական հեծելազորը վերադասավորվեց, տեղ դրավելով հետևակի առջևում։

Շեփորահարները կրկին աղդանշան տվեցին, և ծանր հեծելազորը, փոշի բարձրացնելով, գրոհի նետվեց հռոմեական հետևակի վրա։ Նիզակների միահամուռ հարվածով ապստամբները փորձեցին տապալել թշնամուն։

Սվա երկու ժամ շարունակվեց կատաղի մարտը։ Գիտակցելով, որ փախուստի դիմելով փրկություն չկա, հռոմեացիները պատի պես կանգնել էին և խիզախորեն հետ էին մղում հարձակումը։

Համոզվելով, որ այդ կերպ թշնամուն հնարավոր չէ տապալել, Սպարտակը հեծելազորը հետ կանչեց։ Առաջ բերվեցին նետաձիգները և պարսատիկավորները, ինչպես նաև մարտական մեքենաները՝ բալիստներ, կատապուլտներ, «ցիռեր», «կարիճներ», որոնք հռոմեացիների գլխին նետերի և քարերի տարափ տեղացին։

Սկսվեց հռոմեական շարքերի եռանդագին քարկոծումը։ Ապստամբների հակառակորդները դրան պատասխանում էին թեթևազեն հետևակի գրոհներով, բայց ամեն անգամ հետ էին շպրտվում։

Հռոմեացիների դրությունը դառնում էր հուսահատական։ Կրասոսը, Կոնսիդիոսը և Արիոսը այն կարծիքին էին, որ խիզախորեն զոհվելուց բացի, ուրիշ ելք չկա։

Եվ ճիշտ այն պահին, երբ հռոմեացի զորավարն արդեն ինքն իրեն հարց էր տալիս, թե ժամանակը չէ՞ ինքնասպան լինելու, Սպարտակի աջ թևի թիկունքում մռնչացին հռոմեական շեփորները։

Ե՛վ Կրասոսը, և՛ նրա զինակիցները, և՛ բոլոր շարքային լեգեոնականները ցնծագին գոչեցին. մարտադաշտին մոտենում էր Մ. Լուկուլլոսի 6 հազարանոց հեծյալ կորպուսը։ Կրասոսը կրկին ոգեշնչվեց, հույս ծագեց, որ թարմ հեծելազորը թշնամու թիկունքից հարձակվելով, կջախջախի նրա թևերից մեկը։

Բայց Սպարտակի դետքայիններն աչալրջորեն հետևում էին այն ճանապարհին, որով կարող էր հայտնվել թշնամին, ու ժամանակին տագնապի ազդանշան տվեցին։ Եվ Սպարտակն անմիջապես հրամայեց հռոմեացիների ձախ թևի դեմ կանգնած իր հեծելազորին շրջան կատարել, շարժվել նոր թշնամուն ընդառաջ և նրա հետ մարտի բռնվել։

Միաժամանակ նա կարգադրեց հետ քաշել թեթևազեն հետևակն ու հեծելազորը և ամենուրեք մարտի մեջ մտցնել ծանր հետևակը։ Ճակատամարտը կրկին բորբոքվեց իր ողջ մոլեգնությամբ։ Այդ ընթացքում Լ. Կվինկցիոսը մեծ դժվարությամբ նորից հավաքեց մարտի դաշտից փախած իր հեծելազորի մի մասը։

Տեսնելով Մ. Լուկուլլոսի հեծյալ կորպուսի հայտնվելը, Լ. Կվինկցիոսը ջանք թափեց հնարավորին չափ խիզախություն ներշնչել ընկերների թուլացած հոգիներում և նրանց մարտադաշտ վերադարձրեց։ Իր ջոկատը բացազատելով մարտական գծով մեկ, նա հարձակվեց հաղթողի աջ թևի վրա։ Ապստամբները կատաղորեն հետ էին մղում հարձակումը...

Եվս երկու ժամ անցավ... Ճակատամարտի սկզբից արդեն անցել էր հինգ ժամ, բայց մարտի ելքը դեռևս անորոշ էր։

Յոթերորդ ժամվա մեջ հռոմեական բանակի թիկունքում հանկարծ կրակե ազդանշաններ բռնկվեցին. սպարտակյան դետքերն իրենց զորավարին տեղեկացնում էին նոր թշնամու հայտնվելու մասին։ Դա Գնեոս Պոմպեոսի 5 հազարանոց հեծյալ կորպուսն էր, որին զորավարն առաջ էր նետել՝ ինքնուրույն մարտարշավի։

Հիմա ճակատամարտի ելքը շոշափելի չափով կարող էր վճռել պատահականությունը՝ կողմերի ուժերը հավասարակշռո-

վել էին, սակայն, մի քանի ժամից հետո կարելի էր սպասել նաև Պոմպեոսի հետևակին։

Լիովին հասկանալով այդ, Սպարտակը իր 4 հազարանոց պահեստային հեծելազորին հրամայեց կտրել պոմպեոսականների ճանապարհը և թույլ չտալ նրանց մտնել մարտի մեջ։

Սպարտակի պահեստային հեծելազորը վարգով անհապաղ սլացավ Պոմպեոսի հեծելազորին ընդառաջ, բախվեց նրան և մարտի բռնվեց։

Իսկ զորավարն ինքը (բացահայտորեն վրա էր հասել ճակատամարտի վճռական պահը) շեփորահարներին հրամայեց ձախ թևի հետևակը հետ քաշելու ազդանշան տալ։ Կարգադրության համաձայն հետևակը հետ քաշվեց։ Այնժամ Սպարտակը հեծելազորի գլուխն անցնելով, անձամբ վճռական հարձակման տարավ հեծյալներին։ Հռոմեացիներին ջարդելով, ապստամբների առաջնորդը հույս ուներ հասնել Կրասոսին, շարքից հանել նրան և թշնամիներին փախուստի մատնելով, վճռել ճակատամարտի ելքը։

Սպարտակի գլխավորած ապստամբների հեծելազորի նոր ճնշումը այս անգամ ճեղքում առաջացրեց։ Մխրճվելով հռոմեական հետևակի շարքերի մեջ, ապստամբներն սկսեցին լայնացնել ճեղքվածքը։

Թիկնապահներով շրջապատված Սպարտակը մոլեգնաբար նետվում էր դեպի Կրասոսը։ Բայց հռոմեական թիկնապահ կոհորտան կիպ խտանալով իր զորավարի շուրջը, ոչ պակաս մոլեգնությամբ հետ էր մղում նրա գրոհը։

Սպարտակը չհասցրեց իրականացնել իր մտահղացումը։ Հեծյալ առաջապահ զորամասը չկարողացավ դիմանալ Պոմպեոսի հեծելազորի սարսափելի գրոհին, սկսեց նահանջել և վերջապես փախուստի դիմեց։

Իսկ Պոմպեոսի հեծելազորի հրամանատար Ա. Գաբինիոսը ոչ մի վայրկյան չվարանեց, որ հաջորդ հարվածը հարկավոր է հասցնել Սպարտակի գլխավորած հեծելազորին, որը կատաղաբար ջախջախում էր հռոմեացիների հետևազորի աջ թևը, որտեղ գտնվում էր Կրասոսն ինքը։ Ենթարկվելով Գաբինիոսի հրամանին՝ պոմպեոսական այրուձին մխրճվեց Սպարտակի հեծյալ ջոկատի թիկունքից։

Ապստամբների առաջնորդն ապարդյուն ջանքեր էր թափում ընկերների մի մասին դեմքով նոր թշնամու կողմը դարձնելու

համար։ Ամեն ինչ վճռում էին բոպենները, բայց ժամանակ այլևս չկար...

Կամպանացի երիտասարդ արիստոկրատ, պոմպեյցի Ֆելիքսը (ճակատագրի հեգնանքով նա, ինչպես և Կրիքսոսը, ծագումով օսկ էր) հետևից հարձակվեց Սպարտակի վրա և հեծելազորային դորատիոն-նիզակով ծակեց նրա ազդրը։ Զորավարի թիկնապահներն անմիջապես հարձակվեցին նրա վրա և հետ մղեցին։

Ազդրից ծանր վիրավորված Սպարտակն այլևս չէր կարող ձիու վրա մնալ և շարունակել պայքարը։ Նա ցատկեց գետին, զինակրին տվեց հեծելակային բոլորաձև վահանը։ Նրան շուտափույթ վիրակապեցին։ Սպարտակի թիկնապահ զինվորական տրիբունները փորձում էին նրան համոզել, որ թիկունք գնա. «Ոչ ոք,— ասում էին նրանք,— չի կասկածի քո քաջության վրա»։ Սպարտակը ցասումով հրաժարվեց. «Այս ճակատամարտը,— ասաց նա,— վերջինն է։ Պետք է հաղթել Կրասոսին կամ մեռնել»։— «Իսկ ձի՞ն,— հարցրին տագնապած զինակիցները։— Եթե ձին ընկնի հռոմեացիների ձեռքը, ապա կիսամբեցնի քո փառքը, Սպարտա՜կ։ Չի կարելի այդ բանը թույլ տալ։ Ձին հարկավոր է ուղարկել թիկունք»։

Ի պատասխան Սպարտակը զայրույթով ասաց. «Թիկունք ոչ մեկը չի համարձակվի գնալ։ Բոլորը պարտավոր են շարունակել կռիվը։ Ձիու մասին հոգ տանել չարժե, չի ընկնի թշնամու ձեռքը»։

Եվ նորից պատյանից հանելով սուրը, Սպարտակը մի հարվածով սպանեց մարտական իր հին ընկերոջը։ Նայելով ցնցված զինակիցներին, ավելացրեց. «Հաղթանակի դեպքում թշնամու շատ հրաշալի ձիեր կլինեն ինձ համար, իսկ պարտության դեպքում սա էլ պետք չի գա»։

Եվ բոլորը հասկացան, ճակատամարտն իսկապես կլինի վերջինը...

Սպարտակի հրամանով նրա շուրջը համախմբվեցին ամենաքաջ զինակիցները։ Եվ նրանց հետ, հեծյալի բոլորաձև վահանը ձեռքին, Սպարտակը նորից զրոհի նետվեց Կրասոսի վրա։

Բայց ճակատամարտին պոմպեոսական հեծելազորի խառնվելու շնորհիվ բախտը բացահայտորեն երեսը դարձրել էր Հռոմեացիների կողմը։ Պոմպեոսի հեծյալները ձիերից ցած թռչելով,

գերմանական սովորության համաձայն, ճարպկորեն կռվում էին հետիոտն։ Գոռալով և միմյանց քաջալերելով, նրանք եռանդով ճնշեցին Սպարտակին շրջապատողներին և ի վերջո փախուստի մատնեցին նրանց։

Փորձելով կանգնեցնել փախչող ընկերներին, նրանց պատիվը վկայակոչելով, Սպարտակը, որպեսզի իրեն հեշտ ճանաչեին, գլխից պոկեց սաղավարտը, բայց դրանով միայն ավելի գրավեց թշնամու ուշադրությունը։ Եվ պոմպեյցի Ֆելիքսը, որն արդեն հասցրել էր իր շուրջը հավաքել առավել քաջ և աչքի ընկնել ցանկացող մարտիկների, սկսեց հարձակվել Սպարտակի վրա՝ գերի վերցնելու նպատակով։

Բայց ապստամբների առաջնորդը չէր պատրաստվում հանձնվել։ Մարտական կյանքի 30 տարում Սպարտակը բազմիցս նայել էր մահվան աչքերին, գիտեր, որ այն յուրաքանչյուրի համար անխուսափելի է և դրանից չէր վախենում։

Ընկերներին բարձրաձայն օգնության կանչելով, Սպարտակը եռանդուն շարունակում էր հարձակվել և հետ մղել հարվածները։ Ազդրից նոր վերք ստանալով, նա ծնկի իջավ և վահանն առաջ պարզելով, շարունակեց հետ մղել վրա տվող թշնամիներին։

Ջինակիցները շտապեցին նրան օգնության։ Եվ այն ժամանակ, երբ Ֆելիքսը խաբուսիկ շարժում անելով հասցրեց վերջին՝ Սպարտակի համար ճակատագրական հարվածը, Սպարտակի ջինակիցների ալիքը վրա տվեց հաղթողին։ Եվ ընկած առաջնորդի մարմնի վրա տեղնուտեղը կատաղի կռտորած սկսվեց։ Հռոմեացիները ձգտում էին տիրանալ իրենց երդվյալ թշնամու մարմնին, ապստամբները ցանկանում էին ամեն գնով փրկել նրա դին՝ իրենց զորքում ընդունված կարգի համաձայն թաղելու համար։ Եվ հիշելով Պատրոկլեսի դիակի մոտ մղված մարտը, մալտիկներն ու հրամանատարները միմյանց քաջալերելով գոռում էին.

Թե վիճակված է, որ բոլորս ընկնենք այստեղ՝ կողքին քաջի,
Նույնիսկ այդժամ մեզնից ոչ ոք մարտադաշտը թող չլքի...

Մութն արագորեն խտանում էր։ Ամբողջ մարտադաշտը ծածկված էր միմյանց վրա թափված պոհված մարտիկների մարմիններով։

Ֆելիքսի հետ կողք կողքի մարտնչողներից շատերը, որոնք

ցանկանում էին գրավել Սպարտակի մարմինը, կատաղի մարտում զոհվեցին։ Ավելի ուշ մոտեցածներն արդեն չգիտեին, թե քանի՞ ինչ է, ինչու՞ են բոլորը նման կատաղությամբ մարտի նետվում միևնույն տեղը։

Վերջապես մարտը Սպարտակի զոհված տեղից հեռացավ մի կողմ։ Ապստամբները կռվելով նահանջում էին, հռոմեացիները հետապնդում էին...

Իմանալով առաջնորդի մահվան մասին, ապստամբական բանակի կենտրոնի և աջ թևի հրամանատարները սկսեցին լեգեոնները հետ քաշել դեպի ճամբար։ Կրասոսի դեմ կռվող և հեծելազորին աջակցող ձախ թևը, զրկվելով հրամանատարից, հսկայական կորուստներ կրեց, բայց կենտրոնի և աջ թևի զորքերին հաջողվեց համեմատաբար կանոնավոր նահանջել։

Ապստամբների հրամանատարները հույս ունեին ամրանալ ճամբարում։ Սակայն հռոմեացիները հաղթանակից արբեցած անցան հարձակման և մի քանի փորձից հետո գրոհով գրավեցին ճամբարը։ Ամրություններից դուրս մղված ապստամբները ստիպված էին փրկվել՝ խումբ առ խումբ տարբեր կողմեր նետվելով։ Մութը խանգարեց նրանց հետագա հետապնդմանը։

Գրավելով հակառակորդի ճամբարը, հռոմեացիներն ազատեցին իրենց երեք հազար գերի ընկերներին, որոնց Սպարտակը վերցրել էր Արիոսին և Սկրոֆային հաղթելու ժամանակ։

Կրասոսը, Արիոսը և Կոնսիդիոսը հավաքվեցին Սպարտակի վրանում, համբուրվեցին և միմյանց շնորհավորեցին Հիանալի հաղթանակի համար։ Այդ ժամերի ընթացքում ապրված վախը (առանձնապես ծանր էր Կրասոսի վիճակը, նրա վրա հարձակվելիս Սպարտակը սպանել էր երկու ցենտուրիոնի և մեծ թվով լեգեոնականների, այնպես որ, ինչպես ասում է Սալյուստիոսը, նա «ընկավ ոչ առանց վրիժառության») մոռացրել էր նրանց և ստիպել միաժամանակ մոռանալ նախկին տարաձայնությունները։

Նրանք հետաքրքրությամբ նայում էին ապստամբների առաջնորդի վրանի խիստ կահավորությանը, զննում էին տարբեր առարկաներ, բացում էին գրքերի գլանափաթեթները։ Սպարտակի վրանում եղած բոլոր իրերը հետագայում բաժանվեցին հռոմեացի հրամանատարների միջև, որպես թանկ ձեռք բերված հաղթանակի հիշատակ։

Հետո Կրասոսը կարճատև խորհրդակցություն հրավիրեց.

նա անհրաժեշտ էր համարում Պոմպեոսի և Լուկուլլոսի հեծելազորների պետերի հետ ընդհանուր լեզու գտնել՝ շահած ճակատամարտի վերաբերյալ սենատին հայտնելու միասնական գիծ մշակելու համար։ Կրասոսը նրանցից խնդրում էր իրեն զիջել, իհարկե, ոչ առանց փոխհատուցման, սպարտակների դեմ տարած հաղթանակի պատիվը և իրենց զորավարներին տեղեկացնել, որ ինքը՝ Կրասոսը Սպարտակին հաղթել է ինքնուրույն։ Մ. Լուկուլլոսի հեծելազորի հրամանատարը արագ համաձայնեց, իսկ Գաբինիոսը երկար ժամանակ առարկում էր։ Երկար համոզելուց հետո, նա, այնուամենայնիվ, խոստացավ «ինչ հնարավոր է անել»։

Խորհրդակցությունից անմիջապես հետո Գաբինիոսը և նրա գործընկերները Սպարտակի ճամբարի կողքին ինքնուրույն ճամբարներ խփեցին և նստեցին իրենց զորավարներին զեկույցներ գրելու, որոնցում տեղեկացնում էին, թե իրենք «ժամանակին չկարողացան հասնել ճակատամարտի դաշտը»։

Իսկ Կրասոսն Արիոսի և Կոնսիդիոսի հետ խորհրդակցելով՝ սենատին նամակ գրեց իր նշանավոր հաղթանակի մասին, նաև այն մասին, թե բանակն իրեն «իմպերատոր» է կոչել։ Ճակատամարտում զորավարն իր կորուստները հաշվում էր ընդամենը մեկ հազար, իսկ Սպարտակի կորուստների մասին գրում էր, որ «նույնիսկ հնարավոր չէ հաշվել»։ Սենատին հայտնելով Սպարտակի մահվան մասին, Կրասոսը խոստանում էր նրա մարմինը բերել Հռոմ և արագորեն ոչնչացնել փախած ապստամբական զորքի «մնացորդները»։

Գլուխ երեսուներկուերորդ

ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԻ ԱՎԱՐՏԸ։ ԵՐԵՔ ՏՐԻՈՒՄՖ

I

Ճակատամարտից փրկված բազմաթիվ ապստամբներ նահանջեցին հարևան լեռները։ Երեկոյից մինչև խոր գիշեր նրանք գնում էին՝ ձգտելով հնարավորին շատ հեռանալ և խուսափել հետապնդումից։

Հաջորդ առավոտյան Կրասոսի լեգեոնականները շրջում էին մարտի դաշտում, հաշվելով սպանվածներին, թաղելով յուրայինների դիակները (մոտ 10 հազար մարդ զոհվել էր, բայց Կրասոսն, իր հաղթանակն ավելի տպավորիչ դարձնելու համար, սենատին ուղղված նամակում հայտարարել էր հազար մարտիկների կորստի մասին)։

Սպարտակի մարմինը, երկարատև և մանրակրկիտ փընտրելուց հետո, չկարողացան գտնել։ Կրասոսը սրտնեղած էր. նրան չհաջողվեց կատարել Սպարտակին ողջ կամ մեռած Հռոմ տանելու սենատին տրված խոստումը։

Թշնամու պարագլխի դիակի անհայտացման առիթով զանազան ենթադրություններ արվեցին։ Ոմանք ասում էին, թե նրա մարմինը մարտից հետո յուրայինները փնտրել գտել են ու գաղտնի թաղել։ Մյուսները վախվորած պնդում էին, որ Սպարտակը բոլորովին էլ սպանված չէ, կարողացել է փրկվել և շուտով կրկին իրեն ցույց կտա։ Ոմանք էլ վերջիններիս տաքտաք առարկելով, ականատեսներ էին գտնում, որոնք հաստատում էին, որ անձամբ տեսել են, թե ինչպես են սարսափելի գլադիատորին «կտոր-կտոր արել»։

Պոմպեյցի Ֆելիքսը իմանալով, թե ինչպիսի փութաջանությամբ է Կրասոսը հետաքրքրվում Սպարտակի ճակատագրով, ընկերների հետ անմիջապես գնաց նրա մոտ։ Նա պարգև էր պահանջում և հայտարարում, որ ապստամբ ստրուկների առաջնորդն ընկել է իր ձեռքով, որպես ապացույց հենվում էր ընկերների վկայության վրա։

Կրասոսը ծայրաստիճան զայրացած էր պոմպեյցու «անպատկառ հավակնություններից»։ Միմյանց հետ կծու խոսքեր փոխանակելուց հետո, նա հրամայեց իր վրանից Ֆելիքսին դուրս վռնդել։ Այդ ընթացքում Կրասոսի լեգատները աղմուկով դժգոհում էին. բոլորն անհանդստացած էին հաղթողի իրենց փառքի նվազեցման հնարավորությունից։ Զորավարի նշանով նրանք հաճույքով բռնեցին պոմպեոսական հեծելազորի պնդերես դեկուրիոնի անութներից և, վզակոթին հասցնելով, դուրս շպրտեցին վրանից։ Ֆելիքսից հետո վռնդեցին նաև նրա ընկերներին։

Դրանից հետո լեգատները կրկին հավաքվեցին Կրասոսի մոտ։ Իրադրությունը բուռն քննարկման ենթարկվեց։ Երկարատև վեճերից հետո վերջապես որոշվեց Սպարտակին անձնապես հաղթողի կոչումը ոչ մեկին չշնորհել և սենատի առաջ պնդել այն վարկածը, որ մարտի ժամանակ նա «կտոր-կտոր է արվել»։

Լեգատների ներկայությամբ Կրասոսը ազատագիր-քարտուղարներից մեկին այս ոգով խսկույն նոր նամակ թելադրեց, ուղղված սենատին։ Միաժամանակ հայտնեց, որ սպանված

թշնամիների ճիշտ հաշվարկ է կատարվել, ըստ որի Կրասոսը «Սպարտակի հետ միասին 60 հազար մարդ է կոտորել»[1]։

Նոր նամակը սենատին ուղարկելուց հետո Կրասոսը բանակը բաժանեց երկու մասի և հանձնելով իր ամենանշանավոր լեգատներին՝ ուղարկեց շրջակայքը սանրելու։ Նա հրամայեց անդադար հետապնդել սպարտակյան զորքի «մնացորդներին» և անխնա ոչնչացնել նրանց։ Կրասոսն անձամբ շարժվեց դեպի լեռները, որտեղ, ինչպես հաղորդում էին հետախույզները, նահանջել էր ապստամբների հիմնական մասը։

Բաժանվելով ջոկատների, ապստամբները սրընթաց փախչում էին հետապնդումից։ Կրասոսի հեծելազորը հետապնդում էր նրանց և ձգտում էր բռնել։ Հեծելազորի հետևից շտապում էին չորս բանակի բաժանված հռոմեական ուժերը Կրասոսի, Կոնսիդիոսի, Արիոսի և Սկրոֆայի գլխավորությամբ։

Սպարտակյան չորս խոշոր ջոկատների հաջողվեց բռնել։ Դաժան մարտերում ապստամբները «բոլորը կոտորվեցին, բացի 6 հազարից» (Սպպիանոս), որոնք գերի ընկան, համենայն դեպս, այդպես էր պնդում նաև Կրասոսը։

Սակայն փոքրիկ ջոկատներին հաջողվեց լեռնային կածաններով հեռանալ և փրկվել։

Պոմպեոսը հետևակորի հետ մարտադաշտ հասավ մեծ ուշացումով և չկարողացավ անձամբ մասնակցել ճակատամարտին։ Նա դառնացած էր, որ ամեն ինչ կատարվել էր իր բացակայությամբ։ Եվ երբ Ֆելիքս պոմպեյցին եկավ նրա մոտ գանգատվելու Կրասոսից, որը չէր ցանկանում իրեն՝ Ֆելիքսին, Սպարտակին հաղթող ճանաչել, Սերտորիոսի հաղթողը միայն ցավակցեց իր դեկուրիոնին։

Կրասոսի հետ հանդիպման ժամանակ (որպես հաղթող վերջինս հիմա անհրաժեշտություն չուներ այդպիսի հանդիպումից խուսափելու) Պոմպեոսն ամեն կերպ դովաբանում էր իր հեծելազորի գործողությունները և ռազմիկների խիզախությունը։ Նա Կրասոսից պահանջեց իր զինակիցների վաստակը հաստատող պաշտոնական նամակ ուղարկել սենատ, իսկ ապա իրեն

---

[1] Այս պնդումը կասկածելի է։ Մյուս խոշոր ճակատամարտերին վերաբերող որոշ փաստեր Կրասոսի և Սպարտակի վերջին ճակատամարտի արդյունքների հետ համեմատելիս մեզ զգաստացնում են ու ստիպում կասկածել Սպարտակի զորքից զոհվածների թվի արժանահավատությանը։

հանձնել հրամանատարությունը, քանի որ Կրասոսի լիազորությունները ավարտվել էին։

Կրասոսը և նրա լեգատները զայրացած էին։ Պոմպեոսի նկրտումները, որը նրանց կարծիքով հաղթողի փառքը իրեն վերագրելու դիտավորություն ուներ, նրանք համարում էին անխղճություն։ Բանն ավարտվեց վիճաբանությամբ։ Կրասոսը վճռականորեն հրաժարվեց հրամանատարությունը հանձնել Պոմպեոսին, հայտարարելով, որ դա սենատը կվճռի։

Իր ախոյանից Պոմպեոսը բաժանվեց ծայրաստիճան բորբոքված։ Նա ամենևին չէր սպասում այդպիսի ընդունելության և չէր կարծում, որ Կրասոսի բանակը կաջակցի իր զորավարին։

Իրադրությունը հանգամանորեն կշռադատելով և սպաների հետ քննարկելով, Պոմպեոսը սենատին ճարպիկ և դիվանագիտական նամակ գրեց։ Իրական դրությունը սթափ գնահատելով՝ նա խոստովանում էր, որ հենց Կրասոսն է հաղթել գլադիատորներին բաց մարտում, իսկ իրեն վերագրում էր հեծելազորի սխրանքը, որ պոկել էր պատերազմի հիմնարմատը, համաքաղաքացիներին ազատելով Սպարտակից (Պլուտարքոս)։

Կրասոսի ու Պոմպեոսի նամակները, ինչպես և լեգատների ու ռազմիկների՝ իրենց սխրանքները հիացմունքով գովաբանող բաղմաթիվ նամակներն իրենց մոտիկներին, սենատում խիստ վիճաբանությունների առարկա էին դարձել։ Կրասոսի, Ցետեգոսի և Կատուլլոսի կողմնակիցները Պոմպեոսի հավակնությունները ծայրաստիճան թշնամանքով ընդունեցին։ Սերտորիոսի դեմ հաղթանակի հսկայական փառքին եթե գումարվեր նաև Սպարտակին հաղթելու փառքը, ապա Պոմպեոսը կարող էր նոր Սուլլա դառնալ։ Բայց սենատի բոլոր խմբավորումները, հիշելով մեռած դիկտատորի ծանր բնավորությունը, սարսափելիորեն վախենում էին մոտիկ անցյալի կրկնությունից։

Սենատում Պոմպեոսի դեմ կատաղի հարձակումներն առանձնապես ցայտուն էին երևում հռոմեական ժողովրդի մեջ նրա անզուսպ փառաբանման ֆոնի վրա։ Պլեբեյներին հրապուրում էր հաղթական զորավարի խոստումը, թե նրանց կվերադարձնի տրիբունների պաշտպանությունը՝ իրենց իշխանության ամբողջ ծավալով, ինչպես և կբարեփոխի դատարանը, որն արատավորված է սարսափելի չարագործություններով։

Բացի այդ, Պոմպեոսը ժողովրդին դուր էր գալիս նաև որպես մարդ, քանզի նա հաճելի, տրամադրող արտաքին ուներ,

աշխույժ արտահայտիչ հայացք, բարեհամբույր էր, կարողանում էր համոզիչ խոսել։ Բոլորը լավ գիտեին նրա ազնվությունը, զգացմունքներ արտահայտելու զսպվածությունը, անձնական կյանքում ցուցաբերած չափավորությունը,— այդ էր վկայում նրա պարզ ու համեստ տունը,— ժողովրդից ելած մարդկանց օդնելու նրա մշտական պատրաստակամությունը, զինվորների անսահման սերը նրա նկատմամբ, նրա կյանքի գլխավոր օրենքը. «Ամենից թանկ գնահատիր փառքը և բարեկամներիդ ու ժողովրդի հարգանքը»։

Ահա հենց այս պատճառներով էլ ժողովրդական ժողովում հաճույքով էին լսում Պոմպեոսի կողմնակիցների ճառերը և ժողովրդին ուղղված նրա անձնական նամակների ընթերցումները։ Հրապուրված պլեբեյները պատրաստակամությամբ կրկնում էին պոմպեոսականների պնդումները վերջին ճակատամարտի ժամանակ՝ Պոմպեոսի հեծելազորի վճռական վաստակի վերաբերյալ։

Կրասոսը և նրա լեգատները շարացած էին Պոմպեոսի բանսարկությունների և պատասխանում էին նրա հասցեին ուղղված կոպիտ հայհոյանքներով[1]։ Նրանք փորձում էին իրենց կողմը գրավել Բրունդիզիումում գտնվող Մ. Լուկուլլոսին։ Բայց վերջինս, լինելով, չափավոր փառասիրության տեր մարդ և լավ քաղաքացի, «ազդեցիկ, պարտաճանաչ և ազնիվ այր», իսկական «հռոմեական ժողովրդի ներկայացուցիչ», «նրա տերության հեղինակությունը պահպանող» անձնավորություն, ինչպես նրա

---

[1] Հինգ տարի անց, վիրավորված Լ. Լուկուլլոսը (Պոմպեոսը նրա հաղթանակները ծաղրում էր, համարելով դրանք «վաղանցիկ» և «թատերային») Միհրդատի դեմ մղվող պատերազմի ժամանակ (մ. թ. ա. 66 թ.) Պոմպեոսին հանձնելով հրամանատարությունը, այդ հայհոյանքները փոխ առավ հակառակորդին թունոտ պատասխանելու համար։ Նա ասում էր. «... Պոմպեոսը հայտնվել է այստեղ պատերազմի ստվերի հետ կռվելու համար, նա սովոր է գիշանգղի նման հարձակվել ուրիշի ձեռքով սպանվածների վրա և ծվատել պատերազմի թերմացքները։ Պոմպեոսն այդպես իրեն վերագրեց հաղթանակները Սերտորիոսի, Լեպիդոսի և Սպարտակի նկատմամբ, որոնք իրականում պատկանում էին Կրասոսին, Մետելլոսին և Կատուլլոսին։ Ուստի զարմանալի չէ, որ կարողացավ միանալ փախստական ստրուկների նկատմամբ տրվող հաղթահանդեսին, հիմա ամեն կերպ ձգտում է իրեն վերագրել պոնտական և հայկական պատերազմների փառքը» (Պլուտարքոս)։

մասին պաշտոնապես արտահայտվում էր Ցիցերոնը, նախընտրեց խուսափել ախոյանների մեջ ծագած վեճը լուծելուց։ Նա ամենևին էլ չէր ցանկանում Պոմպեոսի ատելությունը վաստակել և թունավորել իր ապագան։ Այդ պատճառով Մ. Լուկուլլոսը չմիացավ Պոմպեոսի դեմ կատարվող հարձակումներին։ Հունվարի 8-ին իմանալով Սպարտակի մահվան մասին, նա ստրուկների դեմ մղվող պատերազմը ավարտված հայտարարեց և անմիջապես ցրեց իր զորքը։ Դրանից հետո մի քանի մերձավորների ուղեկցությամբ Լուկուլլոսը վերադարձավ Հռոմ։

Նա բավականին լավ ընդունելություն գտավ սենատում, իր կուսակալության և թրակացիների դեմ մղած պատերազմի վերաբերյալ զեկույց ներկայացրեց։ Դրանից հետո, համարելով, որ լիովին վաստակել է պատվավոր հանգստի իրավունք, Լուկուլլոսն ամբողջովին տրվեց անձնական կյանքին, ջանալով կարգի բերել ընտանեկան գործերը, որոնք վաղուց անմխիթար վիճակում էին։

Մ. Լուկուլլոսի հետ կապված վրդովեցուցիչ անհաջողությունից հետո, Կրասոսն այնուամենայնիվ շհրաժարվեց Պոմպեոսի դեմ մեքենայություններից և բանսարկությունների մենամարտում հաղթելու փորձերից։ Որպես հաղթող իր հեղինակությունն ամրապնդելու և ստրուկներին սարսափ ներշնչելու համար Կրասոսը որոշեց խաչել բոլոր գերիներին։ Այդ նպատակով նա Կապուայից մինչև Հռոմ վեց հազար խաչեր տնկեց (այն բանից հետո, երբ նրա և Պոմպեոսի ջոկատները մեկ ամիս շարունակ սանրել էին Ապուլիան, Լուկանիան, Բրուտիումը, Կալաբրիան, Սամնիումը և Էտրուրիան, բռնել սպարտակյան զորքի «մնացորդներին» և հաջողության դեպքում ոչնչացրել)։ Կրասոսը հենց դրանց վրա խաչեց բոլոր գերի ապստամբներին և նրանց, ում համարեց այդպիսին։

Ավելի զգուշավոր Պոմպեոսը նման քայլը վտանգավոր համարեց ապագայի և իր համբավի համար և նախընտրեց գերեվարած ստրուկներին վերադարձնել նախկին տերերին։

Սպարտակի դեմ մղված պատերազմի ժամանակ շատ հուզումներ ու սարսափներ ապրած սենատորները ողջունեցին Կրասոսի՝ իրենց կարծիքով խիզախ արարքը, իսկ Պոմպեոսին դատապարտեցին։ Խմբերով և մերձավորներով նրանք դուրս էին գալիս Ապիական ճանապարհը, թեթևացած հոգոցներով նայում

խաչված ստրուկներին, որոնց գլխավերևում պտտվում էին որսի հոտ առած ագռավները...

Այսպիսով, ինչպես որ սենատին խոստացել էր, Կրասոսն արագորեն ավարտեց պատերազմը Սպարտակի դեմ, նրա վրա վեց ամիս ժամանակ ծախսելով (Ապպիանոս)։ Նա սպասում էր տրիումֆի՝ բաղձալի պարգևի։ Բայց անշնորհակալ սենատորները, որոնք դեռ վերջերս դողում էին Սպարտակի առաջ, հիմա սկսեցին խոսել, թե պատերազմը «իսկական հակառակորդի դեմ չէր մղվում» (Ա. Հելիոս), թե թշնամու անունը «ստոր էր և անհամապատասխան» և թե «նման հեշտ հաղթանակին ավելի է համապատասխանում վեներայի կանաչը» (այսինքն մրտենու, ոչ թե դափնու պսակ)։ Այդ պատճառով, ի դառնություն Կրասոսի, նախանձոտ սենատը նրան մեծ տրիումֆ չպարգևեց, այլ փոքր՝ հեռիոտն, մրտենու պսակով և օվացիաներով։

Պոմպեոսը հրճվանքի մեջ էր։ Կրասոսին խեղդում էր չարությունը։ Հունվարի վերջին երկու հակառակորդներն էլ որոշեցին վերադառնալ Հռոմի մոտ։ Նրանցից յուրաքանչյուրը մյուսի մասին անբարենպաստ լուրեր էր տարածում։ Պոմպեոսին արատավորելու համար Կրասոսը մեծ հմտություն բանեցրեց։ «Այդ պատճառով բարեկամական ողջույններով (Պոմպեոսին — Վ. Լ.) դիմավորողների քանակն այնքան էր, ինչքան նրանցը, ովքեր վախից էին դուրս եկել։ Եվ երբ Պոմպեոսը ցրեց նաև այդ կասկածը (թե նա կսկսի մենիշխանության ձգտել — Վ. Լ.), հայտարարելով, որ տրիումֆից անմիջապես հետո ցրելու է իր զորքը, նրա շկամների մոտ դժգոհության միայն մեկ առիթ մնաց, այն է, որ Պոմպեոսն ավելի շատ ժողովրդի կողմն է պահում, քան սենատի և որոշել է վերականգնել ժողովրդական տրիբունների՝ Սուլլայի կողմից վերացված իշխանությունը, շահել ժողովրդի համակրանքը։ Եվ դա իրավացի էր, քանզի հռոմեական ժողովուրդը ոչ մի բանի այնպես մոլեգնորեն չէր ձգտում, ոչինչ այնպես կրքոտությամբ չէր ցանկանում, քան տեսնել ժողովրդական տրիբունների իշխանության վերականգնումը։ Ուստի Պոմպեոսը մեծ հաջողություն էր համարում, որ ներկայացել է հարմար առիթը կյանքի կոչելու այդ միջոցառումը։ Նա ենթադրում էր, որ քաղաքացիների սիրո դիմաց երախտահատույց լինելու ուրիշ միջոց չի գտնի, եթե այդ հնարավորությունը մեկ ուրիշն օգտագործի։

Հետո Պոմպեոսին երկրորդ տրիումֆը պարգևվեց, և նա կոնսուլ ընտրվեց։ Սակայն այդ պատիվները չէին, որ զարմացրին բոլորին և մեծ դարձրին նրան ժողովրդի աչքում։ Նրա փառքի ապացույցն այն էր, որ Կրասոսը՝ հրաշալի հռետոր, ժամանակի պետական գործիչներից ամենահարուստ և առավել ազդեցիկ մարդկանցից մեկը, որ վերևից էր նայում հենց Պոմպեոսի վրա և մյուս բոլորի, չհամարձակվեց այնուամենայնիվ կոնսուլության հավակնել, առանց Պոմպեոսի համաձայնությունը խնդրելու։ Պոմպեոսը սակայն, հաճույքով ընդունեց Կրասոսի խնդրանքը, որովհետև արդեն վաղուց էր ցանկանում նրան որևէ ծառայություն ու սիրալիրություն մատուցել, և նա դիմեց ժողովրդին, համառորեն երաշխավորելով Կրասոսին։ Նա բացահայտորեն հայտարարեց, որ քաղաքացիներին նույնքան շնորհապարտ կլինի պաշտոնակից ընկերոջ համար, որքան որ հենց իր պաշտոնի համար» (Պլուտարքոս)։

Այսպիսով, անհրաժեշտությունից դրդված հաշտվելով (հակառակ դեպքում երկուսին էլ չէր հաջողվի հասնել պետական ամենաբարձր պաշտոնին. Պոմպեոսը մինչ այդ ոչ մի պաշտոն չէր զբաղեցրել և օրենքով պահանջվող տարիքը՝ 42 տարեկան[1], չէր), երկու մրցակիցները ընտրվեցին կոնսուլներ։ Կրասոսը հենվելով Պոմպեոսի աջակցության վրա, «հակառակ սովորության մերժեց մրտենու պսակը և իր ազդեցության շնորհիվ հասավ այն բանին, որ սենատը նոր որոշում կայացրեց, նրան դափնեպսակով մեծարել, և ոչ թե մրտենու» (Ա. Հելիոս)։

71 թվականի դեկտեմբերին, ընտրություններից հետո նորից վիճել հասցրած ախոյանները տոնեցին իրենց տրիումֆները։ Ժողովրդի ցնծալի ողջույնների ուղեկցությամբ Պոմպեոսը և Մետելլոսը կինաբարիսով ներկված դեմքերով (սովորույթն այդպիսին էր), գլխներին՝ դափնեպսակներ, պատվավոր մարտակառքերի վրա, զորքի հետ միասին անցան քաղաքով մեկ և Կապիտոլիումում երախտագիտության զոհեր մատուցեցին Յուպիտերին։

---

[1] Պոմպեոսը 34 տարեկան էր, իսկ Կրասոսը, թեև արդեն 42, սակայն Պոմպեոսին հակառակվելու դեպքում հաջողության հույս չէր կարող ունենալ։

II

Պոմպեյցի Ֆելիքսը ուրիշների հետ միասին անցնում էր հաղթական հեծելազորի շարքերում։ Նա Պոմպեոսից պարգև ստացել էր, բայց այդպես էլ չէր կարողացել իր ծառայության դիմաց սենատից «Սպարտակին հաղթողի» կոչումն ստանալ։ Նա վերադառնում էր Պոմպեյ, հարազատ տնային աստվածների՝ պենատների մոտ, շարացած ամբողջ աշխարհի վրա իր նկատմամբ թույլ տրված անարդարության համար։ Այդուհանդերձ, չցանկանալով իր հավակնությունները ոչ մեկին զիջել, նկարիչ հրավիրեց և նրան պատվիրեց իր նոր տան ճակատին պատկերել պոմպեոսական հեծելազորի մարտը ապստամբների հետ և ապա իր անձնական մարտը Սպարտակի դեմ՝ ձիու վրա և հետիոտն։ Նկարիչը կատարեց նրա ցանկությունը։ Այդ նկարները, ցավոք, վնասված հասան մինչև մեր ժամանակները և 1927 թվականին հայտնաբերվեցին Մայուրիի՝ Նեապոլի թանգարանի տնօրենի կողմից։

III

Պոմպեոսի տրիումֆի հաջորդ օրը Կրասոսը տոնեց իր տրիումֆը՝ հետիոտն, բայց դափնու, ոչ թե մրտենու պսակով։ Նրա ինքնասիրությունը ոտնահարված էր, և նա տանջալիորեն նախանձում էր ախոյանին, որը միանգամայն ստվեր էր գցել իր փառքի վրա։

Երկու մրցակիցների վերստին վատացած հարաբերությունները Հռոմին մեծ անախորժություններ, գուցե և նոր քաղաքացիական պատերազմ էին սպառնում։ Բայց այդ բանը ոչ ոք չէր ցանկանում, առանձնապես դեմոկրատիան, որը քիչ թե շատ ոտքի էր կանգնել շնորհիվ Պոմպեոսի խոստումների կատարման՝ ժողովրդական տրիբունների իշխանության լրիվ ծավալով վերականգնման, իսկ ավելի ուշ՝ դատարանների վերակազմման։ Դեմոկրատական կուսակցության կողմնակիցները վախենում էին, որ հաղթողը որպես նոր դիկտատոր կրկին կվերադարձնի Լ. Սուլլայի վատ ժամանակները։ Վճռական միջոցներ ձեռնարկվեցին, որպեսզի գործը խաղաղությամբ ավարտվի։ Սկզբում Պոմպեոսն ու Կրասոսը հրաժարվում էին հաշտվել։ «Այն բանից հետո, երբ որոշ գուշակներ սկսեցին կանխատեսել նոր սարսափների սկիզբը, եթե կոնսուլները չհաշտվեն միմյանց

հետ, ժողովուրդը լացով ու նվաստացումով խնդրեց նրանց հաշտվել, օրինակ բերելով այն դժբախտությունները, որոնք տեղի ունեցան Սուլլայի և Մարիոսի օրոք։ Այնժամ Կրասոսն առաջինը վեր կացավ իր բազկաթոռից, գնաց Պոմպեոսի մոտ և ձեռքը մեկնեց նրան ի նշան հաշտության։ Պոմպեոսն էլ վեր կացավ, իր հերթին, ու մոտ վազեց Կրասոսին։ Երբ միմյանց ձեռք տվեցին, նրանց գլխին զանազան բարեմաղթություններ տեղացին, ժողովուրդը հեռացավ հավաքատեղից միայն այն ժամանակ, երբ երկու կոնսուլներն էլ հայտարարեցին, որ ցրում են իրենց զորքերը» (Ապպիանոս)։

Հռոմում այսպես ավարտվեց 71 թվականը, և դրա հետ միասին նաև ապարտակյան հերոսապատումը։

ՍՊԱՐՏԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՊՍՏԱՄԲ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ՋՈՐԱՎԱՐ, ՄԱՐԴ

Պատմության մեջ Սպարտակի բախտը բերել է։ Շատ քաղաքագետներ, որոնք բավականին խոշոր դեր են խաղացել պատմության մեջ, մոռացվել են, նրանց անունները և գործունեությունը ուսումնասիրում են սոսկ մասնագետ-պատմաբանները, հանգամանորեն համադրելով զանազան փաստագրական նյութեր, իսկ Սպարտակի անունը և նրա կյանքի հիմնական ուղենիշները հիմա հայտնի են գրեթե յուրաքանչյուր դպրոցականի, ամեն մի ընդգետ մարդու։

Ի՞նչն է պատճառը։ Ինչո՞ւ Սպարտակի անունը և գործերը վառ ասուպի նման փայլատակեցին և անջնջելի հետք թողեցին պատմության մեջ, իսկ, օրինակ, հռոմեական այնպիսի խոշոր քաղաքագետներ, ինչպիսիք են Լուտացիոս Կատուլլոսը, Էմիլիոս Լեպիդոսը, Կվինտոս Սերտորիոսը, Գնեոս Պոմպեոսը հայտնի են միայն մասնագետներին։ Ինչո՞ւ մոռացվեցին ապստամբած սիցիլիական ստրուկների այնպիսի փառաբանված առաջնորդների անունները, ինչպիսիք էին Էվնոսը և Կլեոնը, Սալվիոսը և Ափինոնը, թեև Սիցիլիայի ստրուկների և՛ առաջին ապստամբությունը (մ. թ. ա. 138—132 թթ.), և՛ երկրորդ սիցիլիական ապստամբությունը (մ. թ. ա. 104—101 թթ.) երկարատև են եղել (նույնիսկ ավելի երկարատև, քան սպարտակյան ապստամբությունը), և իրենց դրոշի տակ ոչ պակաս ապստամբներ են համախմբել, քան Սպարտակի բանակը։

Ինչո՞ւ։ Մենք սխալված կլինենք, եթե համաշխարհային պատմության մեջ Սպարտակի զարմանալի ճակատագիրը վերագրենք միայն նրա անձնական ակնառու արժանիքներին, նրա զորավարական և կազմակերպչական տաղանդին, նրա կուլտուրական մտահորիզոնին, մարդասիրությանը և ազնվությանը, խիզախությանը և մարդկային անհատականության ազատության համար պայքարի վեհ գաղափարներով ոգեշնչվածությանը։ Անվիճելիորեն Սպարտակն այդ բոլոր արժանիքներն ուներ, և այդ հանգամանքը նրա անձնավորությունը դարձնում է ամենահմայիչներից մեկը համաշխարհային պատմության մեջ։ Բայց բանը միայն դա չէ։ Մեծ անհատականությունը բացահայտվում է ողջ լիակատարությամբ, իր մեջ պարունակվող արժանիքները դրսևորում է միայն պատմական որոշակի իրադրության մեջ, պատմական կոնկրետ պայմաններում։

Հենց մեր թվարկությունից առաջ վերջին դարում Հռոմի պատմական ընդհանուր իրադրության մեջ էր, որ պայմաններ ստեղծվեցին հեղափոխական այնպիսի մի հզոր պայթյունի համար, որպիսին իտալիկական ստրուկների մ. թ. ա. 74—71 թթ. ապստամբությունն էր և որի առաջնորդը դարձավ Սպարտակի նման անձնավորությունը։ Այլ կերպ ասած, Սպարտակը երկնքից իջած հերոս չէր, այլ իր ժամանակաշրջանի, իր դասակարգի, իտալիկական (լայն,

այսինքն՝ միջերկրածովային իմաստով) ստրուկների դասակարգի միս ու արյունը, այսպես ասած, իր ժամանակի զավակը։

Ահա թե ինչու Սպարտակի ֆենոմենը, այդ արտասովոր անձնավորության առանձնահատկությունները, նրա գործերի մեծությունն ու նրա պատմական նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է գիտենալ պատմական առանձնահատկություններն այն ժամանակի, որի ընթացքում ծավալվեց այդ հիանալի պատմական գործչի հերոսական գործունեությունը։

Եվ այսպես, ի՞նչ էր իրենից ներկայացնում հռոմեական հասարակությունը մեր թվարկությունից առաջ II դարի վերջում և I դարի առաջին քառորդում։ Ինչո՞ւ հենց այդ ժամանակ պայմաններ հասունացան և՛ ստրուկների վիթխարի ապստամբության բռնկման, և՛ ստրուկների դասակարգի ակտիվ ներկայացուցիչների հանդես գալու համար, որոնք ըստ արժանվույն գլխավորեցին իրենց ժամանակի այդ խոշորագույն հեղափոխական շարժումը։

Մ. թ. ա. II դարի վերջի և I դարի առաջին քառորդի հռոմեական հասարակությունը նախ բուռն զարգացող հասարակություն էր, Հռոմում ստրկատիրական ֆորմացիան մոտենում էր իր գագաթնակետին, իր բարձունքին։ Առանձնապես նկատելի էր տնտեսական զարգացումը, բարդ և համեմատաբար արդյունավետ ստրկատիրական տնտեսության ստեղծումը։ Դա ենթադրում էր առաջին հերթին անտիկ տնտեսության գլխավոր ճյուղի՝ գյուղատնտեսության զարգացումը։ Հենց մ. թ. ա II—I դարերում հռոմեական գյուղատնտեսության մեջ ձևավորվում էր նոր կառուցվածք, որը ենթադրում էր առավել ինտենսիվ ճյուղերի՝ ձիթագործության, խաղողագործության, պտղարտադրության և բանջարաբուծության զարգացում։ Մեծ հաջողությունների է հասնում հացահատիկի մշակությունը։ Ավանդական անասնապահությունը փոխարինվում է շահութաբեր մսուրային անասնապահությամբ, որը ենթադրում է ունենալ կայուն անասնակերի բազա, անասունների բոման ռացիոնալ մեթոդներ, անասունների ընտրասերում և խոշոր շահույթների ստացում։ Անասնապահության մեջ առանձնանում է թռչնաբուծությունը, դառնում նրա շահութաբեր ճյուղերից մեկը։ Յուրացվում են նախկինում անհարմար համարվող նոր հողատարածություններ, արմատախիլ են արվում անտառներ, և թփուտներ, չորացվում են ճահիճները, ընդլայնվում գյուղատնտեսական տարածությունները։

Մ. թ. առաջ II—I դարերը քաղաքների և քաղաքային կյանքի բուռն զարգացման, գոյություն ունեցող քաղաքների ընդլայնման և բարեկարգման, ցեղային նոր կենտրոնների ու բնակավայրերի առաջացման ժամանակներ էին։ Կտրուկ աճում է քաղաքային բնակչության թիվը, որը համալրվում է գյուղական վայրերի սնանկացած շինականների, պրովինցիաներից ներհոսող զանազան մարդկանց և առաջին հերթին Իտալիա բերվող բազմաթիվ ստրուկների հաշվին։ Խիստ աճող քաղաքային բնակչությունը բնականաբար կորցնում է կապը հողագործության հետ, ակտիվորեն ներգրավվում արհեստավորական արտադրության մեջ, առևտրական և այլ գործարար գործարքների մեջ կամ էլ պարզապես վերածվում է անգործունք, աշխատանք չունեցող բնակչության՝ անտիկ լյումպեն-պրոլետարիատի։ Այդ մարդկանց անհրաժեշտ էր կերակրել և այդ պատճառով պահանջ է առաջանում լուծել պարենային խնդիրներ։ Պահանջվում է շատ ավելի մեծ քանակությամբ պարենամթերք, քան եղել էր մինչ այդ։ Այդ հարաճուն պահանջարկը կարող էր լուծել միայն

գյուղատնտեսության դինամիկ զարգացումը՝ առաջին հերթին բուն Իտալիայում, ինչպես նաև նվաճված պրովինցիաներում, որտեղից հռոմեացիները պարեն էին դուրս բերում։

Իտալիայի բուռն ուրբանիզացիան նպաստավոր պայմաններ ստեղծեց արհեստավորական արտադրության, առևտրի և ամեն կարգի առևտրական գործունեության զարգացման համար, որոնց բնական կենտրոնակետը նախ և առաջ քաղաքներն էին։ Հռոմեական հասարակության տնտեսական զարգացման հիմքը ամենից առաջ հռոմեական տնտեսության մեջ ստրկական աշխատանքի լայնորեն օգտագործումն էր և պրովինցիաներից հռոմեացի զավթիչների կորզած զանազան նյութական միջոցների ներդրման հնարավորությունը։ Վ. Ա. Լեսկովի գրքում Սիցիլիայի օրինակով լավ են ցույց տրված հռոմեացի կուսակալների կողմից պրովինցիաների կառավարման մեթոդները։ Այդ հարուստ և տնտեսական տեսակետից զարգացած պրովինցիայի կուսակալ Գայոս Վերեսը, օգտվելով հսկողության բացակայությունից անամոթաբար շորթում էր, պարզապես դրաղվում էր անթաքույց կողոպուտով՝ սկսած պարենից և վերջացրած հունական արվեստի առարկաներով։ Ըստ Ցիցերոնի տեղեկությունների, Վերեսն իր կառավարման երեք տարիների ընթացքում հսկայական՝ 40 միլիոն սեստերցի, ունեցվածք է կողոպտել։ Կողոպտված այդ արժեքները, պատերազմում գերեվարված կամ պարտքերի դիմաց ստրկացված մարդկային մեծաքանակ խմբերը հիմնականում ուղարկվում էին Իտալիա, որոշակի չափով ներդրվում էին գյուղական վայրերում ստրկատիրական կալվածքների կազմակերպման մեջ և քաղաքային ստրկատիրական արհեստանոցներում։

Հռոմեական տնտեսության վերելքը, ստրկատիրական վիլլաների և արհեստանոցների արդյունավետության բարձրացումը հնարավոր էր միայն ստրկական աշխատանքի ավելի ճկուն, ավելի հմուտ կազմակերպման և այդ աշխատանքի ավելի բազմապիսի շահագործման հաշվին, անխնա շահագործման ենթարկվող ստրուկների առատորեն հոսող արյուն-քրտինքի հաշվին։ Ստրուկների շահագործման չափի և աստիճանի ավելացումը, բնականաբար, սոցիալական մեծ լարվածության աղբյուր էր, դա էր անում հիմնական անտագոնիստական դասակարգերի՝ ստրուկների և ստրկատերերի միջև եղած անհաշտ հակասությունները։ Միայն այդպիսի արմատական հակասությունների պայմաններում էին հնարավոր դասակարգային պայքարի բռնկումների կոնկրետ արտահայտությունները, որոնցից բարձրագույնը եղավ սպարտակյան ապստամբությունը։

Սակայն սուր դասակարգային հակասությունները, սոցիալական մեծ լարվածությունը հռոմեական ստրկատիրական հասարակության մեջ միայն հիմք էին ստեղծում բացահայտ դասակարգային ընդհարումների համար։ Որպեսզի այդ հիմքի վրա զարգանար դասակարգային բացահայտ բախումը և դա մարմնավորվեր կոնկրետ զինված ապստամբության մեջ, անհրաժեշտ էին նաև այլ գործոններ, մասնավորապես հռոմեական հասարակության մյուս դասակարգերի փոխհարաբերությունների բնույթը և ստրկատիրական պետության քաղաքական իշխանության վիճակը, բռնության այն ապարատը, որն ապահովում է իշխող դասակարգի, տվյալ դեպքում՝ ստրկատերերի պարազիտային գոյության հնարավորությունը։

Այս դեպքում էլ գրությունը բավականաչափ էր հեղափոխական հզոր պայթյուն առաջանալու համար։ Մ. թ. առաջ II—I դարերի հռոմեական հասարակության ազատ բնակչության ներսում չի էին սոցիալական ընդհարումները, որոնք լրացնում և ընդլայնում էին ստրուկների և ստրկատերերի դասակարգերի միջև եղած հիմնական դասակարգային հակասությունը։ Նախ և առաջ պետք է նշել, որ հռոմեական ստրկատիրական հասարակության ազատ բնակչությունը միատարր չէր, այլ բաժանվում էր տարբեր դասերի և սոցիալական շերտավորումների։ Հռոմեացի ստրկատերերի, հողատերերի, վաճառականների, արհեստանոցների սեփականատերերի, նավատերերի դասակարգին հակադրված էր մանր արտադրողների, ազքատ հողագործների, արհեստավորների, առևտրականների, ստրուկների աշխատանքը չօգտագործող և սեփական ձեռքերի միջոցով դժվարությամբ ապրող քաղաքացիների դասակարգը։ Այս մանր արտադրողների դասակարգը տանջվում էր ստրկատերերի անօրինականություններից և ատում էր նրանց, չնայած այդ հակասությունների բնույթն այլ էր, քան ստրուկների դասակարգինը որպես այդպիսին։ Սնանկացող հողագործները, հազիվ ծայրը ծայրին հասցնող արհեստավոր-ազքատները, վարձակալները, բատրակները, իրենց խղճուկ գոյությունը քարշ տվող մանր առևտրականները պահանջում էին իրենց գոյությունը պահպանելու ավելի հաստատուն պայմաններ, երաշխավորված հողակտորներ, տնտեսական կարգ ու կանոն, պետության հովանավորություն։ Ստրկատեր-ազատ մանր արտադրող հակասությունների գիծը հստակորեն երևում է հռոմեական հանրապետության վերջին հարյուրամյակներում։ Այն, իր հերթին, բարդացնում էր Հռոմի ընդհանուր սոցիալական իրավիճակը մ. թ. ա. II դարի վերջում և I դարի առաջին քառորդում։

Ստրկատիրական տնտեսությունների զարգացումը որոշակի վնաս էր հասցնում մանր արտադրության գոյությանը, դարձնում էր անկայուն, և այդ բանն, ամբողջությամբ վերցրած, սնունդ էր տալիս չունևոր ազատ մարդկանց դժգոհությանը։ Իրենց գոյության պայմաններից դժգոհ ազատ մանր արտադրողների մի մասը նման պայմաններում կարող էր ստրուկների հեղափոխական շարժումն օգտագործել սեփական նպատակների համար, մի մասն էլ նույնիսկ կարող էր մասնակցել բուն շարժմանը, ինչի մասին տեղեկացնում են աղբյուրները։ Այսուհանդերձ ճիշտ չէր լինի ենթադրել, թե մ. թ. ա. II դարի վերջում և I դարի առաջին քառորդում սոցիալական հակասությունների սրման հիմքի վրա պայմաններ էին ստեղծվել հռոմեական ստրուկների և ազատ ազքատության՝ հռոմեական պլեբսի միջև յուրատեսակ դասակարգային դաշինքի համար։ Սովետական պատմագրության մեջ նման տեսակետ առաջ էր քաշվել երեսնական թվականներին (մասնավորապես այն զարգացնում էր սովետական գիտնական «Սպարտակյան ապստամբությունը» հայտնի մենագրության հեղինակ Ս. Վ. Միշուլինը)։ Սակայն, 50—70-ական թվականների սովետական մասնագետների հետազոտությունները ցույց տվեցին, որ ստրկատերերի դեմ ստրուկների և սնանկացող հռոմեական պլեբսի հանուն իր իրավունքների մղած պայքարի գծերը քիչ էին հաբվում միմյանց հետ և դասակարգային պայքարի այդ գծերը միավորելու համար որևէ լուրջ հիմք Հռոմում գոյություն չուներ։

Ընդհանուր իրադրությունն էլ հռոմեացի ստրկատերերի շրջանում ամբողջ-

ջությամբ առած բավականին բարդ էր. Հռոմեական ստրկատերերի դասակարգը միատարր և միաձույլ չէր, այն բաժանված էր տարբեր սոցիալական շերտավորումների։ Նոբիլիտետը, հեծյալ դասը, իտալիկական քաղաքների տեղական ավագանին, պրովինցիաների ստրկատերերը ստրկատիրական հարաբերությունների զարգացման միասնական վերաբերմունքի հետ միաժամանակ ունեին նաև տարբեր շահեր, որոնք չէին համընկնում միմյանց, հետագա զարգացման տարբեր սոցիալ-քաղաքական ծրագրեր ունեին և այդ ծրագրերի իրականացման համար անողոք քաղաքական պայքար էին մղում, որը հաճախակի վերաճում էր զինված արյունալի ընդհարման։

Տիրապետող դասակարգի տարբեր ֆրակցիաների այդ ներքաղաքական պայքարը ընդհանուր առմամբ թուլացնում էր հանրապետական պետական ապարատի ուժն ու հզորությունը, խոցելի տեղեր էր ստեղծում, որոնց միջով կարող էր ճեղքել-դուրս գալ ճնշված դասակարգերի դժգոհությունը։ Դեռ ավելին. ստրկատերերի առանձին քաղաքական խմբավորումներ փորձում էին օգտագործել արտադրողների հիմնական դասակարգերի հարաճուն դժգոհությունը, այդ թվում և՝ ստրուկների, իրենց նեղշահադիտական նպատակների համար։ Դրանով իսկ նրանք նպաստավոր պայմաններ էին ստեղծում ոչ միայն հասունացման, այլև այդպիսի դժգոհությունների բռնկման համար, զինված ապստամբության տեսքով սոցիալական լարվածության դրսևորման համար։

Ընթերցողին առաջարկվող Վ. Ա. Լեսկովի գրքում այդ հանգամանքը ցույց է տրված բավականաչափ համոզիչ և մանրամասն։ Իհարկե, ասվածը ոչ մի կերպ չի կարելի հասկանալ որպես յուրատեսակ, թեկուզ նույնիսկ ժամանակավոր, դաշնակցություն հռոմեական արիստոկրատիայի քաղաքական առանձին խմբավորումների և ապստամբ ստրուկների միջև, առանձին հռոմեացի քաղաքական գործիչների, լինեն դրանք Էմիլիոս Լեպիդոսը, Կատիլինան կամ թե Սերտորիոսը և, ասենք, Սպարտակի միջև։ Այս հարցում կողմերի դիրքերը բացարձակորեն պարզ են և խիստ անհաշտ։ Խոսքը կարող է լինել սոսկ բռնկված ապստամբության հետևանքով ստեղծված բարդ իրադրությունը այս կամ այն արիստոկրատական խմբավորման շահերին ծառայեցնելու մասին, և ոչ ավելին։

Սպարտակի ապստամբության նախօրյակին Հռոմի սոցիալական ընդհանուր իրադրության մի ոչ պակաս կարևոր հանգամանք էլ դոյություն ուներ. Հռոմի և հռոմեական պրովինցիաներ դարձած հելլենիստական պետությունների կամ առանձին երկրների միջև, հռոմեական արիստոկրատիայի և պրովինցիաների բնակչության միջև փոխհարաբերությունների բնույթը։ Այդ հարաբերությունները բավականաչափ սուր էին և էլ ավելի էին շիկացնում ընդհանուր սոցիալական լարված իրադրությունը։ Հռոմեացիներն իրենց պրովինցիաներին նայում էին որպես հռոմեական ժողովրդի եկամտաբեր կալվածքների, այսինքն՝ մարզեր, որոնք, այսպես ասած, իրենց իրավական դրությամբ նախատեսված են բացահայտ շահագործման համար։ Այդ շահագործումն իրականացվում էր ամենալկտի ձևերով՝ հսկայական հարկեր գնելու, բազմաթիվ պաշտոնական ծանր տուրքերի և բռնագրավումների, կուսակալի, նրա անձնակազմի ու զինվորական քանակակազմի պահելու համար միջոցներ հավաքելու տեսքով, հռոմեացի առևտրական կապալառուների ընկերությունների

կողմից կիսապաշտոնական կողոպուտների, անողոք պարտքային իրավունքի ձևով և այլն։ Հռոմեացի պաշտոնյաների ու մասնավոր անձանց կողմից կողոպտված պրովինցիաների բնակչությունը, ներառյալ տեղի ավագանին, խոր դժգոհություն էր արտահայտում հռոմեական կառավարման տեռորիստական մեթոդների նկատմամբ։ Պրովինցիաների ավագանին ամբողջությամբ աջակցում էր հռոմեական իշխանությանը որպես կայուն սոցիալ-քաղաքական կարգի հիմքի, բայց ձգտում էր հասնել կառավարման դաժան մեթոդների մեղմացման, պահանջում էր թույլ տալ մասնակցելու իր պրովինցիայի պետության, ամբողջությամբ վերցրած, գործերի կառավարմանը, մինչդեռ պրովինցիայի բնակչության ստորին խավերը հանդես էին գալիս հռոմեական նվաճողների իշխանության դեմ, հանուն իրենց երկրի ազատության, հանուն հռոմեական պետությունից նրա անջատման։

Պրովինցիաներում դրությունը շատ բարդ էր, և հռոմեական պետությունը ստիպված էր հանդես գալ պրովինցիաների սեպարատիզմի մշտական բռնկումների դեմ, տեղերում ուժեղ զորամասեր պահել։ Պրովինցիաների բնակչության դժգոհությունները փորձում էին օգտագործել հարևան պետությունների տիրակալները։ Այսպես, ոչ մեծ Պոնտոսյան թագավորության եռանդուն արքա Միհրդատ VI Եվպատորը փորձեց օգտագործել արևելյան պրովինցիաներում հռոմեական իշխանության թուլությունը, այդ իշխանության բռնակալական մեթոդների հանդեպ եղած դժգոհությունը և ռազմական գործողությունների միջոցով տապալել հռոմեական տիրապետությունը Փոքր Ասիայում, ստեղծել սեփական լայնածավալ պետություն։ Բացի այդ, ցանկանալով թուլացնել իր հակառակորդին՝ Հռոմեական հանրապետությունը, Միհրդատը պրովինցիաներում ժողովրդական շարժումներին աջակցելու դեմագոգիական քաղաքականություն էր վարում, իր նվաճած քաղաքներում ստրուկներին ազատություն էր տալիս, օգտագործում էր հռոմեական հաղորդակցական ուղիների վրա գործող միջերկրածովյան ծովահենների նավատորմները, կապեր էր հաստատել Իսպանիայում Սերտորիոսի գլխավորությամբ սենատի դեմ զինված պայքար մղող հռոմեական օպոզիցիայի հետ։ Բացառված չէ (համենայն դեպս, այդ բանը լիովին տեղավորվում էր Հռոմի ցանկացած թշնամու աջակցությունը շարհամարհող Միհրդատի ընդհանուր քաղաքական գծի մեջ), որ Միհրդատը կարող էր կապեր հաստատել Սպարտակի և ապստամբության մյուս ղեկավարների հետ Փոքր Ասիայում գործող Լիցինիոս Լուկուլլոսի գլխավորած հռոմեական բանակի դեմ գործողությունների որոշ փոխհամաձայնեցման համար։ Այդ ամենը շատ հնարավոր է, թեև գիտության տրամադրության տակ այդ ենթադրությունը ուղղակիորեն հաստատող տվյալներ այժմ չկան։ Չնայած դրան, տվյալ աշխատության հեղինակը, օգտվելով անուղղակի վկայություններից, որոշ չափով իրավացի է, ենթադրելով նման համագործակցությունը ապստամբ ստրուկների պարագլխի և արևելյան արքայի միջև։

Ինչևէ, հռոմեական պրովինցիաների դրությունը Հռոմեական պետության մեջ սոցիալական լարվածության ևս մեկ աղբյուր էր և մասն էր կազմում սոցիալ-քաղաքական ընդհանուր այն իրադրության, որի պայմաններում ծաղկվեց սպարտակյան շարժումը։

Այսպիսով, հռոմեական հասարակությունում 70-ական թվականները դասակարգային և սոցիալական հարաբերությունների բարձր լարվածության, դա-

սակարգային և սոցիալական պայքարի տարբեր գծերի խտացման ժամանակներ էին։ Այսպիսին էր ապստամբության սոցիալական միջավայրը։ Սոցիալ-քաղաքական տարբեր հակասությունները որոշակիորեն դրսևորվում էին հռոմեական պլեբսի լարված պայքարում՝ հանուն սուլլայական սահմանադրության վերացման, ժողովրդական ժողովի լիազորությունների և ժողովրդական տրիբունների իրավունքների վերականգնման, պարտքային հարցերի լուծման, վաճառվող հացի նախկին էժան գների վերադարձման, որն իր արտահայտությունը գտավ Էմիլիոս Լեպիդոսի շարժման մեջ։ Իսպանիայում մարիոսականների մնացորդները Սերտորիոսի գլխավորությամբ կարողացել էին սենատի կողմից խրախուսվող կառավարման տեռորիստական մեթոդներին խիստ հակադրվող իրենց լիբերալ քաղաքականությամբ գրավել պրովինցիայի բնակչության բարեհաճությունը, ուժեղ բանակ էին ստեղծել և հռոմեական սենատի իշխանության համար մեծ սպառնալիք էին ներկայացնում։ Վերջապես, 70-ական թվականների երկրորդ կեսին Պոնտոսի արքա Միհրդատը վերստին փորձեց օգտագործել սոցիալական լարվածությունը և արևելյան պրովինցիաների բնակչության ատելությունը Հռոմի նկատմամբ։ Խնամքով նախապատրաստվելուց հետո նա վճռական պատերազմ սկսեց իր շահերի համար։ Հռոմեական և մեկ բանակ Բալկաններում ստիպված էր կռվել Մակեդոնիա պրովինցիայի հյուսիսային սահմաններն ավերող թրակացիների դեմ։ Հռոմեական պատմության մեջ քիչ են այնպիսի ժամանակահատվածները, երբ հռոմեական հիմնական բանակները զբաղված են եղել պրովինցիաներում ծանր պատերազմներ մղելով, այն դեպքում, երբ պետության կենտրոնում՝ Իտալիայում, շիկացած է եղել ընդհանուր սոցիալական մթնոլորտը և հռոմեական արիստոկրատիայի տարբեր խմբավորումների միջև փոխադարձ զզվանք է եղել։ Ընդհանուր բարենպաստ իրավիճակ էր ստեղծվել, որպեսզի իրենց վատթարագույն պայմաններից ստրուկների դժգոհությունը, կուտակված դասակարգային ատելությունը բարենպաստ պատմական հնարավորություն ստանային զինված ապստամբության տեսքով երևան գալու համար։

Մ. թ. ա. 74—71 թթ. ապստամբությունը բոլոր մասնագետների կողմից միաձայնական գնահատականի է արժանացել որպես ստրկական ապստամբություն, իտալիկական ստրուկների ապստամբություն, թեև որոշ աղբյուրներ հիշատակում են ազատ մարդկանց որոշ խմբերի մասնակցությունը ապստամբությանը։ Սակայն վերջիններս, անվիճելիորեն, աննշան փոքրամասնություն էին կազմում և բնավ չեն կարող փոխել ապստամբության ընդհանուր էությունը, որպես բուն ստրկական։ Որքան որ մեզ հայտնի են պատմական աղբյուրներից, սպարտակյան ապստամբությունն իր հիմնական մասնակիցների կազմով առավել վառ արտահայտված դասակարգային բնույթ ուներ։ Մ. թ. ա. 74—71 թթ. ապստամբների մեջ ուրիշ դասակարգերի՝ ազատների կամ կախյալ մարդկանց՝ ստրկական ստատուս չունեցողների ներկայացուցիչներ ավելի քիչ կային, քան օրինակ I և II Սիցիլիական ապստամբությունների ժամանակ, չխոսելով Հին Արևելքի և Հին Հունաստանի որևէ ապստամբության մասին։ Այլ կերպ ասած, սպարտակյան ապստամբությունն ավելի լավ, քան ուրիշ որևէ ապստամբություն, արտահայտում է ստրուկների դասակարգային անտագոնիզմի առանձնահատկությունները ընդդեմ ստրկատերերի, նրա այսպես ասած, թույլ և ուժեղ կողմերը, նրա կազմակերպչական հնարավորությունները, մյուս սո-

ցիալական շերտավորումների և պետության հետ նրա փոխհարաբերությունները, նրա ռազմական հնարավորությունները, նրա ծրագրային գրությունները և նրա պատմական նշանակությունը։

Իտալիկական ստրուկների ապստամբությունը մեր որոշ աղբյուրներ, ու դրանց հետքով նաև ժամանակակից որոշ պատմաբաններ անվանում են գլադիատորական պատերազմ։ Հաղիվ թե հարկ լինի նման բնութագրումը համարել ճիշտ և սպարտակյան հեղափոխական պայքարի էությունն արտացոլող։ Սպարտակյան շարժումը ոչ միայն գլադիատորների, այլև իտալիկական բոլոր կարգի ստրուկների ապստամբություն էր։ Ճիշտ է, ապստամբությունն սկսվեց Կապուա քաղաքի գլադիատորական դպրոցներից մեկում ծագած դավադրությունից, որ Սպարտակն ինքը, նրա մերձավորագույն շրջապատը՝ Կրիքսոսը, Էնոմայոսը, Գանիկոսը, Կաստոսը և մյուսները գլադիատորներ էին։ Ամենայն հավանականությամբ, ապստամբական լեգեոնների բարձրագույն և միջին հրամանատարական կազմը նախկին գլադիատորներից՝ խիզախ, լավ մարզված, զինվորական գործին ծանոթ, անվախ մարդկանցից էր կազմված։ Սակայն ապստամբության ջոկատների կազմավորման վերաբերյալ մեր տրամադրության տակ եղած բոլոր տվյալները վկայում են, որ տարբեր մասնագիտությունների տեր ստրուկները, և առաջին հերթին գյուղական ստրուկները (ապստամբների շարժումը հիմնականում ընթանում էր գյուղական շրջաններում), ապըստամբական բանակի հիմնական մասն էին կազմում, նրանց շարքերում կային և Լուկանիայի ու Ապուլիայի անասնապահական արոտավայրերի հովիվ-ստրուկներ, որոնք կազմում էին հռոմեական լեգեոններին բազմիցս տապալած ստրուկների նշանավոր այրուձին։ Կային նաև քաղաքային ստրուկներ, առանձնապես օգտակար էին արհեստավոր ստրուկները, որոնք արտադրում էին զենք, ինչն ապստամբներին միշտ չէր բավականացնում։

Սպարտակյան ապստամբության մասին գիտական գրականության մեջ մեծ ուշադրություն է հատկացվել ապստամբների ցեղային կազմի հարցին։ Ենթադրություններ էին արվում այն մասին, որ սպարտակյան բանակը կազմված է եղել գերմանների, գալլերի, սամնիտների, թրակացիների, այսպես ասած, առանձին կորպուսներից։ Այդ ենթադրությունները, հավանաբար, հիմնված էին ապստամբության ղեկավարների ցեղային տարբեր ծագումների (նրանցից մեկը թրակացի Սպարտակն էր, մյուսը՝ գերման Էնոմայոսը, երրորդը սամնիտ Կրիքսոսը և այլն), ինչպես և գլադիատորների զանազան խմբերին պայմանական անունների վրա, որոնց սովորաբար զենք ու անուն էին տալիս քմահաճորեն՝ «թրակացի», «սամնիտ», «գալլ» և այլն։ Անվիճելի է, որ մ. թ. ա. I դարի սկզբում Իտալիա բերված ստրուկների հսկայական մեծամասնությունը հիմնականում Միջերկրական ծովի տարբեր երկրներից էր, այդ թվում Գալլիայից, Գերմանիայից, Թրակիայից, Իսպանիայից, Աֆրիկայից, Փոքր Ասիայից, Հունաստանից, Մակեդոնիայից և այլ երկրներից։ Ազգային տարբը պակաս կարևոր դեր չէր խաղում իտալիկական ստրուկների կենցաղում, վարքում, կրոնական հավատալիքների մեջ։

Բայց հաղիվ թե օրինաչափ լինի շեշտել միայն այդ տեսակետը։ Ստրկության մեջ կյանքի երկար տարիների ընթացքում, բնականաբար, ցեղային պատկանելության համահարթեցում էր տեղի ունենում, ծնվում էին նոր, այսպես ասած, ստրկական հոգեբանության, վարքի և ստրկական դասակարգի

ամբողջովին վերցրած կուլտուրայի կայուն տարրեր։ Համենայն դեպս, մեր տրամադրության տակ հուսալի տվյալներ չկան, որոնք կարողանային հաստատել ապստամբների բանակում ցեղային հատկանիշի հիման վրա կազմավորված հատուկ կորպուսների գոյության հիպոթեզը։ Առավել հավանական է մի ուրիշ ենթադրություն, որ սպարտակյան լեգեոնները և այլուրեքին կազմավորվում էին ըստ էության ռազմական պահանջներից ելնելով, զինվածության, մարտիկների վարժվածության, տակտիկական տվյալների սկզբունքով, թեև չի կարելի ամբողջությամբ հերքել նաև կազմավորման ցեղային հատկանիշը։ Համենայն դեպս, ուսումնասիրության ժամանակակից էտապում չի կարելի սպարտակյան բանակի ցեղային բաժանումը գերագնահատել այն աստիճանի, որ նրան ծրագրային կամ այլ կարգի տարաձայնությունների դեր վերագրվի ընդհանուր շարժման շրջանակներում։

Ապստամբության ծրագրի հարցը սպարտակյան ապստամբության ամենահետաքրքրական և ամենավիճելի հարցերից մեկն է։ Պատմական գրականության մեջ այդ առթիվ ամենատարբեր տեսակետներ գոյություն ունեն. Սպարտակին վերագրվող գրեթե անդասակարգ, արդարացի հասարակություն ստեղծելու մշակված և գիտակցված ծրագրից մինչև գերմանական, գալլական կամ թրակական ծագում ունեցող ստրուկներին Իտալիայից դեպի իրենց նախահայրենիքը դուրս բերելու պարզունակ պլանը։ Գիտնականների տրամադրության տակ շատ քիչ տվյալներ կան այս հարցին սպառիչ և միանգամայն հավաստի պատասխան տալու համար։ Այնուհանդերձ, նույնիսկ առանց ենթադրական պատասխանի, առանց հիպոթեզի, անկարելի է բավարարվել։ Բնականաբար, հարցին պատասխան է տրվում նաև ընթերցողին ներկայացվող այս գրքում։ Հեղինակը այդ ծրագրի էությունը տեսնում է Հռոմեական ստրկատիրական պետության կործանման մեջ։ Դրա համար Սպարտակը և նրա մերձավորագույն շրջապատը ձգտում էին օգտագործել հռոմեական սենատին հակադիր բոլոր ուժերը, ներառյալ Սերտորիոսի բանակը, մարիոսական շարժումը Իտալիայում, Միհրդատ VI-ի ռազմական հզորությունը, միջերկրածովային ծովահեններին։ Հռոմեական պետության ոչնչացումը պետք է լրացվեր ստրկության եթե ոչ լրիվ վերացմամբ, ապա գոնե խիստ մեղմացմամբ և «նախնիների ավանդների» ոգով նոր հասարակական կարգի ստեղծմամբ։

Իհարկե, ապստամբների ծրագրի հեղինակային նման ըմբռնումը որոշ չափով խոցելի է։ Բայց որպես ևս մեկ ենթադրություն, նկատի ունենալով հարցի խճճվածությունը, այն գոյություն ունենալու իրավունք ունի։ Համենայն դեպս, հարկ լինա հերքելու սպարտակյան ծրագրի սոցիալական հանգամանքների առկայությունը, թեկուզև ֆանատատիկ-կրոնական տեսքով (ինչպես Արևի պետության և հելիոպոլիտների հասարակության երազանքը, որ գոյություն ուներ Պերգամոնյան արքայությունում մ. թ. ա. 132—129 թթ. Արիստոնիկոսի ժողովրդական ապստամբության ժամանակ)։ Օրինաչափ չէ (փաստեր չկան) ապստամբների ծրագիրը հանգեցնել ստրուկներին նախահայրենիք դուրս բերելու և այնտեղ ապստամբական լեգեոնները ինքնակազմալուծելու պարզունակ մտքին։

Այսպիսին են սպարտակյան ապստամբության, այսպես ասած, մի քանի ընդհանուր առանձնահատկությունները՝ այնպես, ինչպես հասկանում է ժամանակակից պատմագրությունը և ինչպես ներկայացված են այս գրքում։

Վերը նշված իրադարձությունների ֆոնի վրա հասկանալի է դառնում գլխավոր գործող անձի՝ Թրակացի Սպարտակի, գործունեությունը և իտալիկական ստրուկների բուն ապստամբությունը։ Պատմությունը, պատմական պրոցեսը վերացական չեն։ Պատմությունն անդեմ չէ։ Այն ստեղծում են կամքով, խելքով, կրքերով օժտված կոնկրետ մարդիկ։ Մեծ դարաշրջանը ծնում է և մեծ անհատներ։ Ինչպես ասվեց, Հռոմեական հանրապետության վերջին հարյուրամյակը հռոմեական պատմության արտասովոր դարաշրջան էր, երբ պոլիսային տիպի ավանդական կարգը, որն անվանում ենք Հռոմեական հանրապետություն, լուրջ ճգնաժամ էր ապրել, բարդացած սոցիալական կառուցվածք ունեցող հռոմեական հասարակության, զարգացող դասական սրտկության պայմաններում ցուցադրում էր իր պատմական դատապարտվածությունը։ Ավանդական պոլիսային կարգին փոխարինելու էր գալիս նորը, ծնվում էր իմպերիան։ Հետաքրքրական է, որ հռոմեական պատմության հենց այս բեկման ժամանակ մենք հանդիպում ենք կարևոր իրադարձություններով առավելապես հագեցած պատմական պրոցեսի, խոշոր քաղաքական և մշակութային գործիչների այնպիսի առատության, որոնց ընդունված է կոչել մեծ, ինչպիսիք հռոմեական պատմությունը չէր ծնել նախորդ մի քանի դարերի ընթացքում. Գրակքոս եղբայրներ, Մարիոս և Սուլլա, Պոմպեոս, Կատիլինա, Կեսար, Ցիցերոն, Լուկրեցիոս, Կատուլլոս, Վարոն և շատ ուրիշներ։

Նրանց շարքում արժանավոր տեղ է գրավում և իտալիկական ստրուկների հեղափոխական շարժման առաջնորդ, Թրակացի Սպարտակը։ Ընթերցողը, հավանաբար, ուշադրություն դարձրել է, թե ինչպես հաճախ մ. թ. ա. 74—71 թթ. հեղափոխական շարժումը անվանում են Սպարտակի ապստամբություն, սպարտակյան պատերազմ։ Եվ դա, իհարկե, պատահական չէ։ Այնպիսի խոշոր պատմական իրադարձություն, ինչպիսին իտալիկական ստրուկների ապստամբությունն է, իր վրա կրում է նրա առաջնորդ Սպարտակի անձնավորության անջնջելի հետքը, այնպես ինչպես առաջնորդի լավագույն արժանիքները բացատրվում են ստրկական ապստամբության բնույթով և առանձնահատկություններով։ Կ. Մարքսը շատ նրբորեն է նշել Սպարտակի անձնավորության գլխավոր առանձնահատկությունը, անվանելով նրան «իսկական ներկայացուցիչը անտիկ պրոլետարիատի», վերջինիս տակ հասկանալով հռոմեական հասարակության հիմնական արտադրող դասակարգին՝ ստրուկներին։ Դրանով են բացատրվում Սպարտակի անձնավորության առանձնահատկությունները, անձնավորություն, որը, կարծես իր մեջ ընդունել և այնուհետև լիովին դրսևորել է հռոմեական ստրուկների դասակարգի լավագույն գծերը։ Անտիկ, խորապես ստրկատիրական ամբողջ գաղափարախոսության մեջ ընդհանուր տեղ էր գրավում ստրուկների, որպես ոչ-մարդկանց, արհամարհական-քամահրական բնութագիրը, կիսամարդիկ, որոնք զուրկ են բարոյաբանության տարրական հիմունքներից, բարոյականությունից և կուլտուրայից։ Ստրուկն իր բնույթով մարդ չէ, նա մոտ է անասունի, նա զուրկ է առաքինությունից, պարտքի զգացումից, պատվից, նա կոպիտ է, հաղորդակից չէ մարդկային հոգու նուրբ շարժումներին, ստախոս է, խարդախ, դաժան։

Սպարտակի անձնավորությունը բազմակողմանի է, և առաջարկվող գրքում մեծ ուշադրություն է հատկացված հենց Սպարտակի անձնավորությանը, ընդ. որում, Սպարտակի բազմապլան գործունեության պրոցեսում, այսպես

ասած, կյանքում, ոչ թե անշարժության մեջ։ Ցանկալի է ընդգծել որոշ հանգամանքներ և բացատրել նրա բնավորության որոշ գծեր, որոնք կարող են կասկած առաջացնել։ Այդպիսի կասկած կարող է առաջացնել Սպարտակի բնութագրումը որպես լավ կրթություն ստացած, բարձր կուլտուրայի տեր մարդու։ Թվում է, թե այդ առանձնահատկությունը միանգամայն բնորոշ չէ, եթե ոչ անձամբ Սպարտակին, որը, հավանաբար, ծնված է եղել բավականաչափ կուլտուրական թրակական ընտանիքում, ապա հռոմեական ստրուկին որպես այդպիսին։ Այստեղ անհրաժեշտ է որոշ բացատրություն տալ։ Բանն այն է, որ եթե մ. թ. ա. I դարի հռոմեական ստրուկին պատկերացնենք որպես ծեծված, խղճուկ, ընտանի կենդանու պես իր աշխատանքը բթությամբ կատարող, տգետ անձնավորություն, ճիշտ չի լինի։ Հռոմեական դասական ստրկության պայմաններում, երբ ստրկական աշխատանքը լիովին տիրել էր արտադրությանը և խորապես թափանցել էր հռոմեական հասարակության բոլոր ծակոտիները, ստրկատերերը ստիպված են եղել իրենց ստրուկների որոշ մասին հնարավորություն տալ գրագետ լինելու, որոշ հարցերի, օրինակ, օրենքի իրավասությանը տեղյակ լինելու, որպեսզի կարողանային հմտորեն վարել տիրոջ գործերը։ Հենց մ. թ. ա. I դարում Հռոմում ընդհանուր մասսայից առանձնացավ մի շերտ, որը զբաղված էր ինտելեկտուալ աշխատանքով՝ յուրատեսակ ստրկական ինտելիգենցիա, որը սպասարկում էր պարազիտային կյանք վարող ստրկատերերին։ Ստրուկ փիլիսոփաներ, ճարտարապետներ, քանդակագործներ, գրողներ, գրադարանավարներ, գրաբիրներ, խմբագիրներ կային յուրաքանչյուր արիստոկրատական տան մեջ։

Այս առումով Սպարտակը, որ երիտասարդ հասակում լավ կրթություն էր ստացել, հավանաբար, դրականություն և փիլիսոփայություն գիտեր, ծանոթ էր հելլենիստական փիլիսոփայության առաջադեմ հոսանքներին, կարող էր փիլիսոփաների և հռետորների ունկնդրած լինել Հռոմում և Կապուայում։ Նա, իհարկե, գիտեր ատոմիկների ուսմունքը մարդկանց բնական հավասարության մասին, և ստրկության մասին՝ որպես մարդու բնությանը հակառակ հաստատության։ Հավանաբար, նա գիտեր նաև հասարակության վերափոխման վերաբերյալ որոշ ուտոպիստական նախագծերի մասին, որոնք տարածում էին գտել հելլենիզմի ժամանակաշրջանում, մասնավորապես Արևի պետության և հելիոպոլիտների արդարացի հասարակության ստեղծման Արիստոնիկոսի և Տիբերիոս Գրակքոսի բարեկամ Բլոսիոսի ուսմունքի մասին։

Ինչպես ամեն մի կուլտուրական մարդ, Սպարտակն ազնվության և վեհության մարմնացում էր։ Սպարտակի կատաղի թշնամիները, նրանից բազմիցս տուժած մարդիկ, հռոմեացի գրողները գրեթե միաբերան (հազվագյուտ երևույթ մեր աղբյուրներում) նշում են Սպարտակի մարդկային լավագույն գծերը՝ վեհանձնություն, մեծահոգություն, խիզախություն։ Սպարտակն իրեն թագավոր չէր հայտարարում, ինչպես Էվնոսը կամ Սալվիոսը Սիցիլիայում։ Նրան խորթ էին ընչաքաղցությունը և հարստություն կուտակելու տենչը, նա անվախ էր և շրջահայաց, չափավոր և արդարամիտ։ Նա իրեն դրսևորեց որպես հոգատար հրամանատար և հավատարիմ ընկեր։ Հենց այս արժանիքներն էլ հարկավոր է հատուկ նշել որպես աշխատավոր ստրուկների լավագույն գծերի դրսևորում, ստրուկների, որոնց նույնիսկ սովորական մարդ-

կային արժանիքներն էին հերքում ստրկատիրական գաղափարախոսության ներկայացուցիչները։

Սպարտակի անձնավորության ևս մեկ կարևոր հանգամանք՝ նրա զորավարական արվեստը։ Հռոմեացի հեղինակները շատ բարձր են գնահատում Սպարտակի ռազմական արվեստը։ Սպարտակին երբեմն համեմատում են հին աշխարհի ամենաստաղանդավոր զորավարներից մեկի՝ Հաննիբալի հետ։ Հռոմեացի հեղինակավոր հռետոր և գաստատու Ցիցերոնը (մ. թ. II դար) Սպարտակին անվանում է բոլոր զորավարներից ամենաականավորը։ Հակառակորդների նման գնահատականներն, իհարկե, ամենասեռուն ուշադրության են արժանի։ Եվ բանը միայն ընդհանուր գնահատականը չէ (թեև այն հենված է հրապարակային գրականության վրա, ցավոք՝ մեզ չհասած)։ Զինվորական գործողությունների և ապստամբական բանակի կազմավորման մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս Սպարտակի հսկայական զորավարական տաղանդը։ Պատահաբար փախածներից, ռազմական կարգ ու կանոնին չընտելացած (իսկ երբեմն էլ այն չընդունող) խայտաբղետ խմբերից, չունենալով դրամ, զինամթերք արտադրելու որևէ հնարավորություն, ստեղծել մարտունակ բանակ, զինել և անընդհատ ծանր պարտությունների մատնել նշանավոր հռոմեական լեգեոնային հետևակին, կարող էր միայն ականավոր զորավարը և կազմակերպիչը։

Սպարտակն իր բանակը կազմավորեց ժամանակի ամենակատարյալ հռոմեական զինվորական սկզբունքների հիման վրա։ Բայց Սպարտակի հանճարեղությունը նաև կայանում է նրանում, որ նա սրատես աչքով տեսավ հռոմեական ռազմական կազմակերպության թերությունները և մի շարք կատարելագործումներ մտցրեց։ Մասնավորապես, Սպարտակն ուժեղացրեց հեծելազորի դերը, մեծացրեց թեթևազեն զորամասերի նշանակությունը, բանակն ազատեց ծանրաշարժ գումակներից, ինչը ապստամբների բանակը դարձրեց առավել շարժունակ, արագ և անսպասելի տեղափոխումների ընդունակ, որը բազմիցս հաղթանակներ բերեց ավելի ծանրաշարժ լեգեոնների նկատմամբ։ Բարձր մակարդակի վրա էր ապստամբների հետախուզությունը։ Երկու տասնամյակ անց Կեսարն ինքը սկսեց այդ ուղղությամբ բարեփոխումներ մտցնել հռոմեական բանակում։ Բացառված չէ, որ Կեսարն օգտագործեց փորձը ստրուկների առաջնորդի, որը որոշ իմաստով Կեսարի նախորդն էր որպես զինված ուժերի բարենորոգիչ։

Սպարտակն իրեն դրսևորեց նաև որպես հարձակումը և պաշտպանությունը, ռազմական ծուղակները և կործանարար գրոհները հմտորեն զուգակցող փայլուն մարտավար։ Նա հմտորեն տեղաշարժվելու օրինակներ ցույց տվեց։ Պիկենտիայում ընկնելով կոնսուլական երկու բանակների աքցանի մեջ և ճակատագրական դրության հասնելով, Սպարտակը գործողությունների արագությամբ և հակառակորդներին մոլորության մեջ գցելու շնորհիվ կարողացավ ամբողջ հզորությամբ ջախջախել նախ մի կոնսուլին, ապա մյուսին։

Նա փայլուն լուծեց Բրուտիումում Կրասոսի հզոր պաշտպանական ամրությունների ճեղքման բարդ խնդիրը։ Բրունդիզիումի մոտ վերջին ճակատամարտի ժամանակ նա կրկնեց Իսոսի մոտ (մ. թ. ա. 333 թ.) Ալեքսանդր Մակեդոնացու զորաշարժը։

Սպարտակը, որպես իսկական զորավար, հասկանում էր կարգապահության և շարքային ռազմիկների բարոյական բարձր ոգու, զորավարի և շարքային մարտիկի միջև մտերմության ու վստահության կարևորությունը։ Նրա ողջ գործունեությունն ապացուցում է, որ հասել էր իր նպատակներին. նա իր գինվորների հետ մոտ էր, և նրանք, չնայած առանձին դեպքերի, պահպանում էին զինվորական կարգապահությունը պատերազմի բոլոր երեք տարիների ընթացքում, ցուցաբերում էին մասսայական հերոսություն։

Այնպիսի բարդ շարժման, ինչպիսին մ. թ. ա. 74—71 թթ. ստրուկների ապստամբությունն էր, պարագլխի համար անխուսափելիորեն հարկ էր լինում լուծել ոչ միայն ռազմական, այլև քաղաքական հարցեր. հարաբերություններ Իտալիայի տարբեր քաղաքական ուժերի հետ բուն Հռոմում և պրովինցիաներում, Միհրդատի, ծովահենների, Իտալիայում նվաճված քաղաքների և գյուղերի բնակչության հետ։ Մեզ շատ քիչ է հայտնի Սպարտակի գործունեության այդ կողմը։ Այստեղ մենք մտնում ենք ենթադրությունների ոլորտը։ Բայց որքան որ թույլ են տալիս դատելու մեր սկզբնաղբյուրները (օրինակ՝ ապստամբական բանակի շարժման բուն երթուղին, տեղացիների բողոքների բացակայությունը), Սպարտակը հմտորեն էր լուծում նաև այդ բարդ խնդիրները։

Այս գրքի հեղինակը հակված է կարծելու, թե առկա են Սպարտակի շփումները, գաղտնի և բացահայտ, հռոմեական քաղաքական աշխարհի տարբեր ներկայացուցիչների հետ մինչև ապստամբությունը և ապստամբության ժամանակ։ Սակայն առավել արդարացի է թվում այն տեսակետը, որ տարածված է գիտական գրականության մեջ, ըստ որի նման շփումների գործնական հնարավորություն չի եղել կամ, գոնե, եղել է նվազագույն չափով։ Սպարտակի հետ բանակցություններ վարելուց Կրասոսի հրաժարվելը ընդհանուր առմամբ բնութագրում է բոլոր երանգների հռոմեական արիստոկրատիայի, ներառյալ օպոզիցիոն շրջանները, խիստ բացասական վերաբերմունքը ապստամբ ստրուկների առաջնորդի հետ բանակցելու վերաբերյալ։ Կոնֆլիկտն այնքան շատ էր խոր, որ այդ մասին չէին կարող մոռանալ ինչպես Հռոմի քաղաքական բոլոր երանգների արիստոկրատները, այնպես էլ ապստամբած ստրուկների պարագլուխները։

Սպարտակի անձնավորության բնութագիրը որոշ հանրագումարի բերելով՝ կարելի է վկայակոչել Կ. Մարքսի պարզորոշ ձևակերպումները. «Մեծ գեներալ... վեհանձն բնավորություն, անտիկ պրոլետարիատի իսկական ներկայացուցիչ»։ Հարկ է ասել, որ այս գրքում հենց Սպարտակի անձնավորության, նրա կուլտուրական մտահորիզոնի, նրա մարդկային արժանիքների, զորավարական և քաղաքական տաղանդի բնութագիրը տրված է ավելի հանգամանորեն և լիակատար, քան Սպարտակին նվիրված մեկ այլ աշխատության մեջ։

Եվ վերջին հարցը. ինչպի՞սին է, մի կողմից, մ. թ. ա. 74—71 թթ. հեղափոխական շարժման, մյուս կողմից, առաջնորդի՝ հանճարեղ Սպարտակի անձնավորության պատմական նշանակությունը։ Մ. թ. ա. I դարի 70-ական թվականների երկրորդ կեսի իտալիկական ստրուկների ապստամբությունը ծնունդ էր առել ստրկատիրական հասարակության զարգացման խորքային պրոցեսներից, արտահայտում էր այդ հասարակության հիմնական դասակարգային հակասությունը։ Ապստամբությունը ցույց տվեց, որ այդ հակասության սրու-

թյունը հասել էր գագաթնակետին և պահանջվում էր ստրկատիրական դասակարգի կողմից սոցիալական կարգը ապահովելու նոր միջոցներ ձեռնարկել։ Այդ ապստամբությունը ցույց տվեց, որ հռոմեական հանրապետության ավանդական պետական ապարատն այնքան շատ էր թույլ, մասնատված, անարդյունավետ, որ հաջողությամբ չէր կարողանում իրագործել հիմնական անտագոնիստական դասակարգի դժգոհությունը ճնշելու իր գլխավոր ֆունկցիան։ Սոցիալական կարգի և ստրկատիրական պետության ամրապնդման այդ նոր խնդիրները պատմությունը դրեց նոր ծնվող Հռոմեական կայսրության վրա։ Ահա թե ինչու սպարտակյան շարժումը կարող է դիտվել որպես հռոմեական հասարակության բարդ էվոլյուցիայի կարևորագույն դրվագներից մեկը, պոլիսային հանրապետական կառուցվածքներից դեպի միջերկրածովային հռոմեական տիրապետության հասարակական-քաղաքական կարգերը։

Այդ հեղափոխական շարժման առաջնորդ Սպարտակի հերոսական անձնավորությունը ընդմիշտ մտել է պատմության մեջ։ Այն մտավ հռոմեական, իսկ ապա նաև համաշխարհային պատմության մեջ նախ և առաջ որպես այնպիսի վառ պատմական իրադարձության ղեկավարի ու կազմակերպչի անձնավորություն, ինչպիսին իտալիկական ստրուկների հեղափոխական շարժումն էր։ Սպարտակի անձնավորությունը դարձավ բացառիկ որպես հիմնական արտադրող դասակարգի՝ իտալիկական ստրուկների լավագույն արժանիքների մարմնավորում։ Սպարտակը որպես այդ արժանիքների կրող այնպես էր հակադրվում ստրուկների ավանդական բնութագրմանը, որ նրա անձնավորությունը չէր կարող չդրոշմվել որպես յուրատեսակ անկրկնելի երևույթ։

Հռոմեական պատմության այդ բեկման շրջանի մեծ գործիչների շարքում Սպարտակը որպես ուժեղ անձնավորություն, անկախ այն բանից, թե ում դասակարգային շահերն էր արտահայտում, այսպես ասած, լավ էր դիտվում որպես ականավոր զորավար և քաղաքագետ, որը միշտ ուշադրությունն է գրավում ոչ միայն բարեկամների, այլև թշնամիների։

Իսկ հռոմեական ստրուկների աչքին Սպարտակը դարձավ հերոս, մ. թ. ա. 74—71 թթ. ապստամբներին փոխարինելու եկած անհամար սերունդներից խորին ակնածանքով մեծարվող մի անուն, որպես ստրկական վիճակից ազատագրվելու նրանց հույսերի և ակնկալությունների խորհրդանիշ, որպես նրանց մարդկային և մտավոր լավագույն արժանիքների խտացում, որպես աշխատանքի, մարդասիրության և վեհանձնության գաղափարների անսահմանորեն նվիրված օրինակ։ Հռոմեական ստրկատիրական պետության անկումից հետո Սպարտակի նկատմամբ այս վերաբերմունքը քաղաքական առաջադիմական ուղղությունների, ժողովրդական շարժումների ներկայացուցիչների կողմից ընդունվեց որպես մարդկային արժանապատվության, ազատության և ընդհանրապես մարդկային անձնավորության լավագույն արժանիքների համար մղվող պայքարի խորհրդանիշ, և դրանով իսկ օրգանապես հյուսվեց ժամանակակից քաղաքակրթության հենքին։

Վ. Ի. Կազիշին,
պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր

ՍՊԱՐՏԱԿԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

(վերականգնման կարգով)

Մոտ 120 թ. մ. թ. ա. — *Սպարտակի ծնունդը Թրակիայում՝ մեդերի ցեղի երկրում։*

102 թ. մ. թ. ա. — *զինվորական ծառայության սկիզբը Մակեդոնիա պրովինցիայում թրակական օժանդակ զորքերի կազմում որպես ռազմիկ։*

100 թ. մ. թ. ա. — *հռոմեացիների դեմ մեդերի պայքարի վերսկսման կապակցությամբ բազմաթիվ թրակացիների հետ Սպարտակը դասալքվեց հռոմեական բանակը։*

98 թ. մ. թ. ա. — *հռոմեացիների դեմ երկու տարվա անհաջող պայքարից հետո համախոհների ջոկատով գնում է Պոնտոս, Միհրդատի մոտ որպես քաղաքական վտարանդի։*

98—90 թթ. մ. թ. ա. — *զինվորական ծառայություն Միհրդատի մոտ։*

89 թ. մ. թ. ա. — *մասնակցում է Միհրդատի առաջին պատերազմին և գերի է ընկնում հռոմեացիներին։*

89 թ. մ. թ. ա. — *բերվում է Հռոմ և ստրկավաճառական շուկայում որպես ստրուկ վաճառվում։ Հովիվ է դառնում Իտալիայի հարավում։*

87 թ. մ. թ. ա. — *Մարիոսի և Ցինայի կողմից Հռոմը պաշարելու ժամանակ (Հռոմը պատկանում էր Սուլլայի կողմնակիցներին) փախուստ է կատարում անասնապահական լատիֆունդիաներից։*

86—82 թթ. մ. թ. ա. — *Սպարտակի կյանքի անհայտ էջերը, բացառված չէ, որ կարող էր գտնվել մարիոսական բանակում և մասնակցել Սուլլայի դեմ պատերազմին։ Հաղթողի դատավճռով դարձվում է գլադիատոր։*

82—76 թթ. մ. թ. ա. — *գտնվում է գլադիատորական դպրոցում, արենաներում ելույթ է ունենում որպես մուրմիլոն, ազատություն է ստանում, բայց դպրոցից չի հեռանում, զբաղվում է գլադիատորների ուսուցմամբ որպես մարզիչ։*

76 թ. մ. թ. ա. — *ստրուկներին և գլադիատորներին ազատագրելու նպատակով մուրմիլոնների միավորման գլադիատորների և սեփական աշակերտների մասնակցությամբ սկսում է դավադրություն կազմակերպել։*

74 թ. մ. թ. ա., ամառ — *դավադրության բացահայտման պատճառով մի խումբ ընկերների հետ փախուստ է կատարում դեպի Վեզուվ։ Զբաղվում է Իտալիայով մեկ մեծ պատերազմ ծավալելու նախապատրաստությամբ։*

73 թ. մ. թ. ա., ամառ—աշուն — *ռազմական գործողությունների սկիզբը։ Կապուայից ժամանած ջոկատի ջախջախումը, հետո հաղթանակ՝ պրետորներ Կլոդիոսի և Պ. Վարինիոսի բանակների նկատմամբ։ Սպարտակի մերձավորագույն զինակից Էնոմայոսի մահը։ Իտալիայի հարավում ապստամբների կողմից տեղում հռոմեական իշխանության ոչնչացում և նոր կարգերի հաստատում։*

72 թ. մ. թ. ա., ամառ — *Սպարտակի բանակի արշավանքը դեպի հյուսիս։ Կրիքսոսի և նրա բանակի կործանումը պրետոր Արիոսի և կոնսուլ Հելիոսի դեմ տրված ճակատամարտում։ Սպարտակի հաղթանակները կոնսուլներ Հելիոսի և Լենտուլոսի, ինչպես և Այսրալպյան Գալլիայի կուսակալ պրոկոնսուլ Կասիոսի նկատմամբ։*

Դավաճանների կողմից Սերտորիոսի սպանությունը Իսպանիայում, Պոմպեոսի և Մետելլոսի լիակատար հաղթանակը։ Ռազմաքաղաքական իրադրության խիստ փոփոխություն արևմուտքում և արևելքում (Լ. Լուկուլլոսը ծանր պարտության է մատնում Միհրդատին, նրան ստիպում է փախչել Հայաստան)։

Սպարտակը փոխում է գործողությունների ծրագիրը և փորձում է հարձակվել Հռոմի վրա։ Ջախջախիչ պարտություններ է մատնում կոնսուլների բանակներին։ Սենատն ապստամբների դեմ պայքարելու համար նոր գլխավոր հրամանատար է նշանակում պրետոր Մ. Կրասոսին։

Օգոստոս — *Սպարտակը զորքով կրկին վերադառնում է Իտալիայի հարավը, մտադրվելով պատերազմի մեջ ներգրավել Սիցիլիան։ Նա կանգ է առնում Թուրիք քաղաքում և նրա շրջակայքում։ Փոփոխական հաջողություններով պայքար։*

Սեպտեմբեր—դեկտեմբեր — *Սպարտակը իր զորքերը տանում է Ռեգիական թերակղզի։ Ապստամբներն ակտիվ միջոցներ են ձեռնարկում դեսանտ իջեցնելով Սիցիլիա ներխուժելու համար։ Կրասոսը «ծովից ծով» ամրապատնեշ է կառուցում թշնամուն սովամահ անելու նպատակով։*

Դեկտեմբեր — *սենատի պահանջով Իտալիա են վերադառնում Պոմպեոսը Իսպանիայից և Մարկոս Լուկուլլոսը Թրակիայից։ Պոմպեոսը նշանակվում է Սպարտակի դեմ մղվող պատերազմի զորքերի նոր գլխավոր հրամանատար։ Ապստամբների բանակը ճեղքում է Կրասոսի ամրապատնեշը։ Կատաղի մարտեր Կրասոսի և ապստամբների զորքերի միջև։ Գանիկոսի՝ Սպարտակի զինակցի և նրա բանակի հրամանատարներից մեկի մահը։*

71 թ. մ. թ. ա., հունվարի սկիզբ — *Սպարտակի ևս մեկ խոշոր հրամանատարի՝ Կաստոսի մահը։ Ապստամբների հաղթանակները հռոմեացի զորավարներ Արիոսի և Սկրոֆայի նկատմամբ։ Սպարտակի բանակի վերջին ճակատամարտը Կրասոսի զորքերի դեմ։ Սպարտակի մահը ճակատամարտում։*

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ОБЩИЕ ТРУДЫ

Маркс К. Хронологические выписки. М., 1938.
Маркс К., Энгельс Ф. Соч., т. 7, 21.
Ленин В. И. Полн. собр. соч., т. 32.
Ферреро Г. История величия и падения Рима. М., 1915, т. 1.
Моммзен Т. История Рима. М.—Л., 1941, т. 3.
Сергеев В. С. Очерки по истории Древнего Рима. М., 1936, т. 1.
Машкин Н. А. История Древнего Рима. М., 1956.
Ковалев С. И. История Рима. Л., 1948.
Всемирная история в 10 томах. Под ред. С. Л. Утченко, Д. П. Каллистова, Т. И. Павловской, В. В. Струве. М., 1956, т. 2.
История Древнего Рима. Учебник. Изд. 2-е. Под ред. В. И. Кузищина. М., 1981.

ИССЛЕДОВАНИЯ

Велишевский Ф. Ф. Быт греков и римлян. Прага, 1878.
Reinach, Mithridate Eupator, roi du Pont, P., 1890.
Ростовцев М. И. Лекции по истории Рима. Спб., 1901—1902. Литография.
Мотус-Беккер А. А. Из истории восстания Спартака.— Ученые записки педагогического института имени Герцена, 1948, т. 68.
M. Olliver. Spartacus. Der große Skliavenaufstand (mit einem von H. Barbusse). Berlin, 1948.
Сергеенко М. Е. Помпей. М.—Л., 1949.
Артамонов М. И. К вопросу о происхождении бесспорских Спартокидов.— ВДИ, 1949, № 1.
Мишулин А. В. Спартак. М., 1950; Его же. Спартаковское восстание. М., 1936.
Мотус А. А. К вопросу о датировке начала восстания Спартака.— ВДИ, 1957, № 3.
Каждан А. И. Религия и атеизм в древнем мире. М., 1957.
Георгиев В. Тракийският език. София, 1957.
Карышковский П. Восстание Спартака. М., 1958.
Цицерон. Сборник статей. Изд-во АН СССР. М., 1958.
Leonard von Matt. La Sicile antique. Zürich—Paris. 1960.
Pavel Oliva — Vëra Olivova. Spartacus, Povstani, 1960.
Pavel Oliva — Vëra Olivova. Spartacus Povstani, spartacovo a spartacovska tradice. Praha, 1960.

B. Doer, Spartacus.—Das Altertum. 1960. Bd. 6, Heft 4.
Штаерман Е. М. Мораль и религия угнетенных классов Римской империи (Италия и западные провинции). М., 1961.
D. Tudor. Rascoala lui Spartacusa. Budapest. 1963.
Нечай Ф. М. Рим и Италики. Минск, 1963.
Стоилов С. Спартак. София, 1964.
Штаерман Е. М. Расцвет рабовладельческих отношений в Римской республике. М., 1964.
Сергеенко М. Е. Простые люди древней Италии. М.—Л., 1964.
Сергеенко М. Е. Жизнь Древнего Рима. Очерки быта. М.—Л., 1964.
Утченко С. Л. Кризис и падение Римской республики. М., 1965.
Георгиев В. Българска етимология и ономастика. София, 1967.
Велков В. Рабство и Тракия и Мизия. София, 1967.
Данов Хр. М. Древна Тракия. София, 1969.
Утченко С. Л. Древний Рим. События. Люди, Идеи. М., 1969.
Цончева М. Художественното наследство на Трайкиските земи. София, 1971.
Златковская Т. Д. Возникновение государства у фракийцев VII—V вв. до н. э. М., 1971.
Граков Б. Н. Скифы. М., 1971.
Брабич В., Плетнева Г. Зрелища древнего мира. Л., 1971.
Вецківський І. І. До біографії Спартака.—Вісник Львівского ордена Леніна державного Університету им. Івана Франка. Серія исторична. Львів, 1971, вып. 7.
Утченко С. Л. Цицерон и его время. М., 1972.
Михайлов Г. Траките. София, 1972.
Венедиков Ив., Герасимов Г. Тракийското искусство. София, 1973.
Горсков В. Военное искусство Спартака.— Военно-исторический журнал, 1972, № 8.
Кузищин В. И. Римское рабовладельческое поместье в II в. до н. э.— I в. н. э. М., 1973.
Брашинский И. Б. Понтийское пиратство.— ВДИ, 1973, № 3.
Скифский мир. Сб. статей. (А. И. Треножкин и др.). Киев, 1975.
Фракийско-скифские связи. Сб. статей. София, 1975.
Anticky Rim. Bratislava, 1975.
Утченко С. Л. Юлий Цезарь. М., 1976.
Кузищин В. И. Генезис рабовладельческих латифундий в Италии (II в. до н. э.— I в. н. э.). М., 1976.
Токарев С. А. Религия в истории народов мира. М., 1976.
Шелов Д. Б. Махар, правитель Боспора.— ВДИ, 1978, № 1.
Забродский Я. Ю. Некоторые аспекты политической борьбы в римском сенате.— ВДИ, 1977, № 3.
Masaoki Doi. Why did Spartacus stay in Italia? Tokyo, 1978.
R. Günter. Der Aufstand des Spartacus. Berlin. 1979.
M. Grant. Gladiatorzy. Wroclaw—Warszawa—Kracow—Gdansk. 1980.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին. Թրակիան՝ Սպարտակի հայրենիքը . . 3
Գլուխ երկրորդ. Իտալիան Սպարտակի պատերազմից առաջ . 31
Գլուխ երրորդ. Դավադրություն 77
Գլուխ չորրորդ. Հռոմեական գործեր 86
Գլուխ հինգերորդ. Արտասահմանյան գործեր . . . 95
Գլուխ վեցերորդ. Սպարտակյան առաջին հաջողությունները . 134
Գլուխ յոթերորդ. Իրադարձությունները Հռոմում։ Մարկոսը և նրա գործունեությունը 140
Գլուխ ութերորդ. Ինչպես էր պրետոր Վարինիոսը կռվում Սպարտակի դեմ 149
Գլուխ իններորդ. Իտալիայի հարավն անջատվում է Հռոմից . 166
Գլուխ տասներորդ. Հռոմեացիների պետությունը . . 205
Գլուխ տասնմեկերորդ. Խոսք Կրիքսոսի մասին . . 210
Գլուխ տասներկուերորդ. 73 թվականի եզրափակիչ իրադարձությունները Հռոմում 214
Գլուխ տասներեքերորդ. Գ. Վերեսը՝ Սիցիլիայի կուսակալը 218
Գլուխ տասնչորսերորդ. Միհրդատի դեմ պատերազմի երրորդ տարին (72 թ.) 234
Գլուխ տասնհինգերորդ. Սպարտակի պայքարը կոնսուլների դեմ։ Կրիքսոսի և նրա բանակի կործանումը 241
Գլուխ տասնվեցերորդ. Գործերի վիճակը Անդրալպյան և աղատ Գալլիաներում 268
Գլուխ տասնյոթերորդ. Սերտորիոսի սպանությունը . 277
Գլուխ տասնութերորդ. Սպարտակը Այսրալպյան Գալլիայում 283
Գլուխ տասնիններորդ. Հռոմի վրա հարձակվելու Սպարտակի ծրագրի անհաջողությունը 287
Գլուխ քսաներորդ. Կոնսուլների ժառանգորդ Մ. Կրասոսը . 293
Գլուխ քսանմեկերորդ. Սպարտակը, Կրասոսը և ծովահենները 315
Գլուխ քսաներկուերորդ. Ապստամբների բանակը Թուրիքում 318
Գլուխ քսաներեքերորդ. Սպարտակը որպես անձնավորություն 326
Գլուխ քսանչորսերորդ. Սպարտակի լաստերը և Կրասոսի պարիսպը 333
Գլուխ քսանհինգերորդ. Գնեոս Պոմպեոսը՝ Սպարտակի դեմ մղվող պատերազմի նոր գերագույն հրամանատար . . . 346
Գլուխ քսանվեցերորդ. Սպարտակի զորքերը թողնում են Ռեգիական թերակղզին 352
Գլուխ քսանյոթերորդ. Գանիկոսի և Կաստոսի կործանումը։ Արիոսի և Սկրոֆայի դարտությունը 384

Գլուխ քսաներորդ. Սպարտակի խորամանկություններից մեկը հաջողությամբ է պսակվում 405
Գլուխ քսանիններորդ. Մարկոս Լուկուլլոսի դորքի ափհանումը և դրա հետևանքները 410
Գլուխ երեսուներորդ. Մոտենում են վերջին ժամերը . 414
Գլուխ երեսունմեկերորդ. Սպարտակի վերջին ճակատամարտը 431
Գլուխ երեսուներկուերորդ. Հերոսապատումի ավարտը։ Երեք տրիումֆ 443
Սպարտակը որպես ապստամբ ստրուկների առաջնորդ, զորավար, մարդ 453
Սպարտակի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը (վերականգնման կարգով) 467

Վալենտին Ալեքսանդրովիչ Լեսկով

ՍՊԱՐՏԱԿ

Валентин Александрович Лесков
СПАРТАК
(На армянском языке)
Ереван «Айастан» 1987

Խմբագիր՝ Հ. Ա. Հարությունյան
Հրատ. խմբագիր՝ Լ. Ե. Բեկոյան
Նկարիչ՝ Դ. Ա. Պապոյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Բլբուլյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Գ. Ալեքսանյան

ИБ № 5389

Հանձնված է շարվածքի՝ 21. 05. 1987 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 16. 12. 1987 թ.։ Չափսաչ՝ 84×108¹/₃₂։ Թուղթ տպ. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 26,46 պայմ. տպագր. մամ., 26,77 պայմ. ներկ. թերթ., հրատ. 23,96 մամ. + 16 ներդիր։ Տպաքանակ՝ 30 000։ Պատվեր՝ 1646։ Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան փող., 28։
Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. А. Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.

«Հայաստան»